




ՄԵՏԵՆԵԳԼՐԵՆ


ԵՐԵՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



Գ.

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՎԵՃԵՌԵԿԵՆՈՒԹԵԱՆ



Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վ Ա Ճ Ա Ռ Ե Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Յ

Հ Գ Ո Ւ Կ Ա Ս Տ Է Ր Տ Է Ր Ե Ա Ն Յ

Ի Մ Խ Ի Թ Ի Ո Ւ Խ Տ Է Ն

Handwritten blue ink scribbles on the left margin.



Ի Վ Ի Է Ն Ն Ա

Ի Վ Ա Ն Ս Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ս Ե Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի

Հ Յ Ս Ռ Գ Ս


1848 Ռ Մ Գ Կ Ն Ե Տ Ե Գ Ե Լ Զ Ե Ր Ե Լ Ե Ր Ե Ս



1848

134

18



Թէ որ աշխարհքիս վրայ վաճառականի վիճակին պէս ընդարձակ, ամէն բանի վրայ տարածուող ու անբաւ սահման մը ունեցող վիճակ չկայ ըսելու ըլլանք, կարծենք թէ չենք սխալիր: Ա՛ւճառականը չէ թէ միայն երկրիս ու ճարտարութեան ամէն բերքը, հասպա նաեւ իր գիտութիւնն ու ստացած տեղեկութիւնները իր շահին կրնայ ծառայեցընել: Ա՛ւճառականութեամբ բոլոր աշխարհք կը դառնայ, ու վաճառականը ընկերութեան մէջ չէ թէ միայն գործունեայ, հասպա նաեւ պատուաւոր, հմուտ, տեղեակ ու լուսաւորեալ մարդոց կարգ կը դրուի. ինչու որ ինչպէս կ'ըսէ բանաստեղծ մը՝ «Ապրանք փնտռելու համար պատրաստուած նաւին մէջ աննիւթական ապրանքն ալ լեցուած կը գտնուի»,: Պատմութիւնը մեզի յայտնի կը ցուցընէ որ վաճառականութիւնը ազգի մը երջանկութեան ու հանգստութեան գլխաւոր պատճառներէն մէկն է: Անգղիայի մեծութիւնն ու հարստութիւնը իր իմաստուն վաճառականութեանը վրայ հաստատուած է. աս տէրութիւնը ամէն ջանքն ու ճիգը ի գործ կը դնէ որ իր վաճառականութիւնը ծաղկեցընելով ու ընդարձակելով անոր շահովը իր ժողովուրդը երջանկացընէ ու իր քաղաքական իշխանութիւնը հաստատէ ու զօրացընէ: Թէ որ անգամ մը աչուրնիս դարձընենք նայինք,

որ գաւառի մը բնակչաց մէջէն որչափ բազմութիւն
ասոր պատճառաւ գործքի կը զբաղին, ու որչափ
հարիւրաւոր հազարաւոր ընտանիք ասկից կը կերա-
կրին, տարակոյս չկայ որ չհամոզուինք թէ ասի-
կայ ազգի մը չէ թէ միայն օգտակար ու շահաբեր,
հասպանաւ հարկաւոր վիճակ է:

Եւ այց ինչ է որ ասանկ մեծ, օգտակար ու հար-
կաւոր վիճակի մը յառաջացման պատճառ պիտ'որ
ըլլայ: Ա՛նկ կողմէն տէրութեան՝ վաճառականու-
թիւնը պաշտպանելու համար ի գործ գրած զօ-
րաւոր միջոցները, ու մէկալ կողմէն վաճառակա-
նութեան զբաղող անձանց գիտութիւնն ու ու-
սումը: Ա՛նկ վաճառական ըլլալ ուզող պատանի
մը ամէն բանէն յառաջ իր միտքը կրթելէն ու իր
վիճակին վրայ աղէկ ընդարձակ տեղեկութիւն ու
անոր հարկաւոր գիտութիւններն ունենալէն ետքը
աս վիճակիս մէջ մտնելու է: Թէ որ քննելք թէ
ետեւէն եկող Եւրոպացիք ինչով իրենցմէ առջին-
ները (Ասիացիները) եկան անցան, ուրիշ բան չենք
գտներ, բայց եթէ իրենց ուսումն ու գիտու-
թիւնը: Եւրոպացիք Ասիացիներէն կամ Ափրիկե-
ցիներէն մէկ բնածին առաւելութիւն մը չունին,
գուցէ անոնցմէ աւելի վար ալ են, բայց իրենց
իմաստութեամբն ու խելքովը տեսան, որ ասանկ
երեւելի վիճակ մը առանց գիտութեան չկրնար
յառաջանալ, անոր համար վաճառականութեան
ամէն մասերուն վրայ անբաւ գրքեր գրեցին, ու
մինչեւ վաճառականութիւն սորվեցընելու համար
գպրոցներ հաստատեցին: Ա՛ռջի ժամանակները

անանկ կը կարծուէր թէ վաճառականի մը մտաց
կրթութիւն, գիտութիւն ու լուսաւորեալ միտք
հարկաւոր չէ, հասցա միայն մենքենայի մը պէս
գործելն աշխատիլը ու քիչ մը ճարակութիւն
բաւական է: Շատ հայրեր եղած են որ իրենց
զաւկըներէն բթամիտները ու սորվելու փոյթ չու-
նեցողները ընտրած հանած ու վաճառականու-
թեան մէջ խոթած են: Ա՛յ՛ վաճառական մը երբ որ
իր աշկերտներէն մէկը տեսնէր որ պարասպ ժամա-
նակները գիտնական գրքեր կարդալով միտքը լու-
սաւորելու ու լեցընելու աշխատէր, «Դուն գիտ-
նական պիտ'որ չըլլաս, վաճառական պիտ'որ ըլլաս,
ձգէ գիրքը, գնա փողոցները իրիկուան դէմ պը-
տրտէ, ինքը զինքդ ցուցուր, կ'ըսէր»: Շատերը
վաճառականութեան առանց մէկ սկզբունքը գիտ-
նալու վաճառականութեան ձեռք կը զարնէին, ու
երեք չորս հազար դուրուշ մը գոյք ունենալը բաւա-
կան կը սեպէին: Ա՛սով վաճառականութեան ան-
ընդունակ ու անյարմար մարդիկ վաճառական ըլ-
լալով, նախատինք կ'ըլլային թէ աս գեղեցիկ վի-
ճակին եւ թէ ազգին՝ որուն որ կը վերաբերէին:
Իսկ հազար փանօք, որ ժամանակն ու փորձերը՝
ասանկ կարծիքներուն ծնութիւնը ցուցուցին, ու
հիմակուան ատենա ալ Եւրոպացւոց՝ աշխարհքիս
ուրիշ մասերուն բնակիչներէն շատ աւելի յառա-
ջանալին ըսածնիս ամենուն շոշափելի կ'ընէ:
Յայտնի կը տեսնենք որ հիմակուան ժամանակս
վաճառականութիւնը ալ ձեռագործ գործելու
չնմանիր, ու առանց գիտութեան վաճառական մը

չկրնար յառաջ երթալ. ով որ չուզեր որ իւր ընկերները զինքը գան անցնին, ով որ փոշուով միայն ծածկուած գրասեղանին առջեւ նստիլ ու հառաչել չուզեր, պէտք է որ երբ որ բոլոր աշխարհք սորվելով յառաջ կ'երթայ, ինքն ալ սորվի. ու թէ որ հնձել կ'ուզէ, ուրիշներուն պէս յառաջուց ցանելու է: Ավ որ ազատութեամբ ու ուզելով յառաջուց չսորվիր, ետեւէն՝ ունեցածը չունեցածը կորսընցընելէն ետքը, ահամայ կը սորվի, բայց պարապ տեղը: Ա՛՛՛՛ շահառականութեան պէս երեւելի գործք մը կառավարելու համար, կառավարելու սկզբունքն ունենալու է, որոնք սորվելու ժամանակը տղայութեան ու երիտասարդութեան ատենն է, որուն մէջ սորվածը բոլոր կենացը համար է:

Աս ըսածներնուս ճշմարտութիւնը տեսնելով, պէտք է որ չէ թէ մինակ մենք, հապա բոլոր ազգին գիտնականները մտադրութիւննին քիչ մ'ալ աս մասին վրայ դարձընեն: Ազգերնուս վաճառականութեան յարմար բնութիւնը, բնական խելքի սրութիւնը, որ նոյն իսկ Եւրոպացիներէն աւելի է կրնանք ըսել, ճարպկութիւնը եւ ուրիշ կատարելութիւնները մեզի յայտնի են. յայտնի է միանգամայն որ ազգերնուս ասանկ ցրուած վիճակին մէջ վաճառականութիւնը մեր ազգին դայեակ, նեցուկ ու զօրութիւնն է: Ասոյց որչափ որ ասոնք ճշմարիտ են, այնչափ ալ մէկալ կողմանէ ստոյգ է որ վաճառականութեան գիտութեանը վերաբերած գրքեր մեր մէջը պակաս են, որոնք թէ որ ըլլային,

ու վաճառականութեան ուսումնն ու գիտութիւնը
պղտիկուց տղոց սորվեցուէր, աղգերնուս թէ նիւ-
թական եւ թէ ուսումնական վիճակը ուրիշ կ'ըլլար:
Սեր աղգին դպրոցներուն ուսումը ըստ մեծի մասին
բանասիրական է, հազիւ տղաք թուաբանութիւն
մը կը սորվին, բայց ան ալ վաճառականի թուա-
բանութիւն չէ: Բայց ասոր աղգին գլխաւորներն
ու մանաւանդ աղգին Վաճառականները հոգ տա-
նելու են, որոնց գաղափարները ընդարձակ ու աղ-
գին ամէն կողմանէ յառաջանալուն վրայ ըլլալու է:

Աս ամէն բան մտածելով ու մեր սիրելի աղգին
չահն ու օգուտը ամէն բանէ աւելի մեծ սեպելով՝
աս մեր վաճառականութեան գիտութեան գիրքը
հրատարակելու համարձակեցանք: Ասոր մէջ գլխա-
ւորաբար վաճառականութիւն ընելու ամէն սկզբ-
բունքները դրած ենք, ինչու որ մտածեցինք որ
աղգերնուս աս կողմէն ասանկ կարօտեալ վիճակին
մէջ՝ ամենէն յառաջ անանկ գիրք մը հարկաւոր է,
որ վաճառականութեան սկզբունքը տայ, որոնք
գիտնալէն ետքը կու գան ուրիշ մասերը: Ստոյգ
է մեր գիտութիւնը աս մասին մէջ տկար է, ու
ասանկ գրքեր գրել աւելի աղգային վաճառական-
ներուն գործքն է, գուցէ ալ՝ մեր գրքին մէջը
աս պատճառաւ պակսութիւններ գտնուին, բայց
կը յուսանք որ մեր աղգին յառաջացման վրայ
ունեցած փոյթն ու աղգերնուս սէրը ասոնք կը գոցեն,
մանաւանդ թէ աս գիրքը աղգին վաճառականնե-
րուն յորդոր մը կ'ըլլայ աս պակասն ալ լեցընելու:
Աղգերնիս կը յորդորենք որ աս ուսումը դպրոց-

ներու մէջ խոթեն, ու կարծենք թէ աս գիրքը
թէպէտ համառօտ, բայց աս ուսման սկզբունքներն
ու հիմերը տալու բաւական է: Անանկ գրելու աշ-
խատած ենք, որ որչափ կարելի է աս ուսումը զու-
արձայի ընենք. նաեւ ասոր ալ միտ գրած ենք, որ
ամէն կողմ եղած ազգայնոց ծառայէ: Անք իրմէ
կ'ենթադրուի որ վարպետները այլեւայլ սկզբունք-
ներուն իրենց եղած քաղքին կամ տէրութեան
յարմար օրինակներ կրնան տալ:

Ար յուսանք որ ազգին վաճառականներն ալ ասկից
կրնան օգուտ քաղել, բայց աւելի ասիկայ ունե-
նալով իրենց ընտանեացը մէջ ըլլող պատանիներուն
աս ուսումը սորվեցընել, որովհետեւ ասոր մէջ
գրուածներէն շատերը իրենք արդէն փորձով գի-
տեն: Հայրերը ձմեռուան երկայն իրիկունները
տուն դառնալէն ետքը իրենց զաւկրներուն մէկ եր-
կու սկզբունքներ ու կանոններ սորվեցընելու ըլլան,
քիչ ատենի մէջ գիտուն երիտասարդ վաճառական-
ներ կ'ունենանք: Աս էր որ զմեզ յորդորեց ու
քաջալերեց, ու աս յուսով կը մնանք մեր աշխա-
տութեան պտուղը տեսնելու, որ է ազգին յառա-
ջացումն ու օգուտը:



Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Պ Ա Տ Ի Ա Ս Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն կամ առուտուր ըսելով աշխարհքիս վրայ գտնուած զանազան նիւթական բերքեր կամ ապրանքներ առնուլ ու առածին տեղ ուրիշ ապրանք մը տալ, եւ կամ համառօտիւ ըսելու համար Ապրանքներու փոփոխութիւն կ'իմացուի: Որովհետեւ ամէն երկիր նոյն բերքը չունի, եւ ամէն երկրի մարդիկն ալ նոյն ճարտարութիւնը (industrie) չունին, անոր համար միշտ հարկ կ'ըլլայ, որ տեղ մը աւելցած ապրանքը ուրիշ երկիր տարուի, ու մէկ կողմը գործուածը ուրիշ կողմի կարօտութիւնը լեցընէ, որն որ ուրիշ կերպով չկրնար ըլլալ, բայց եթէ ասով որ կարօտութիւն ունեցողներն ալ առածներնուն տեղ, բերողներուն՝ իրենցմէ աւելցածը տան, եւ կամ կերպով մը հատուցում ընեն: Ասով միայն՝ ամէն կողմի կարօտութիւնը կը լեցուի, ամէն կողմ ընդհանուր ճարտարութիւնը մշակելու փոյթ կը տարուի, ու ամէն մարդ մէկ վախճանի, այս ինքն որչափ կարելի է շուտ ու աղէկ ապրանք հանելու կ'աշխատի:

2. Աս տեսակ գործքի միտ դնողները կամ զբաղողները երեք կարգ կը բաժնուին, այս ինքն են Յառաջ բերող, Պատրաստող ու Բաժանող: Ա. Յերող կ'ըսուին ան մարդիկը, որոնք կամ բնութեան տուած բերքերը կը ժողվեն եւ կամ բնութիւնը կը դարմանեն, որ պտղաբերէ, ու անկից առած բերքերնին անգործ եւ կամ շատ քիչ փոփոխելով կը թողուն: Բ. Ոլոր երկրագործութեան անուան տակ գացող գործքերը, ինչպէս են մշակութիւն, կենդանի պահել

սնուցանել, ձկնորսութիւն, հանքեր հանել եւ այլն, ու ասոնց պարապող մարդիկը աս կարգին կը վերաբերին: Բ. Պարապող կ'ըսուին անոնք, որոնք անգործ բերքերը կ'առնուն, կը գործեն, կը փոփոխեն, կը պատրաստեն ու կը բազազրեն, որպէս զի այլեւայլ պէտք եղած բաներու գործածութիւն: Ասոր մէջ կը մանեն արուեստաւորները, ձեռագէտները, գործատուներու ու արուեստանոցներու տէրերը (զոր օրինակ լաթեղէններ գործողները, դարբինները, պղնձագործները) եւ այլն: Գ. Իսկ Բաւանդներու կարգը անոնք են, որոնք յառաջ բերողներուն ու պատրաստողներուն ապրանքը ասդին անդին կը տանին, այսինքն մէկ տեղ մը գտնուած աւելորդ ապրանքը՝ ան ապրանքին կարօտութիւն ունեցող տեղ կը տանին, ու անոր տեղ հոն տեղէն ուրիշ ապրանք կ'առնուն: Ասոնք են որ բուն Վաճառական կ'ըսուին, ու իրենց գործքը կամ զբաղմունքը Առուտուր կը կոչուի: Ապա ուրեմն ասանկ վաճառականը այլեւայլ գաւառներուն, տէրութիւններուն ու ազգերուն մէջ եղած առուտուրին այս ինքն յառաջ բերողներուն ու ապրանքները սպառողներուն մէջ միջնորդ (Ֆէւնճը) է, արուեստները յառաջացրնելու փոյթն ու ջանքը գրգռող, ստակին շրջանը անդադար շարժման մէջ պահող, ու տէրութեան ձեռքը ստակը կարգաւորելու գործիք, ու նաեւ գործքերուն ամենուն հաւասար բաժնուելուն պատճառ է: Ասկից յայտնի կը հետեւի, որ մենք ալ աս գրքիս մէջ վաճառականութեան վրայ կանոններ տալու ատեննիս, ասիկա մեզի պէտք ենք հիմն դնել, եւ ասոր վրայ մեր բոլոր շինուածը կառուցանելու ենք: Տալու կանոննիս պէտք չենք միայն ստորագրութեան ու փորձով իմացուած կանոններու պէս կարգ կարգ բաժնելով գրել, հասպա գիտնական կերպով սկզբունքներէ յառաջ բերելով:

3. Կարգուն փորձով ու վարժութեամբ միայն ստացած տեղեկութիւնը՝ ասդիէն անդիէն պատմու-

թիւն լսող եւ ոչ թէ քննող մարդու մը պէս ժողոված
 ըլլալուն, չէ թէ Գիտութիւն, հապա Պատմական
 տեղեկութիւն կ'ըսուի. բայց երբ որ աս կերպով
 ստացած տեղեկութիւնները իրարու հետ համեմա-
 տելու ըլլայ, անոնք իրարմէ հետեւցնէ ու անոնցմէ
 իր վախճանին համաձայն միջոցներ, ու միջոցներուն
 համաձայն վախճաններ գտնելու ըլլայ, ան ատեն աս
 տեղեկութիւնները Գիտնական կ'անուանին: Ասոնց-
 մով միայն կրնայ մարդ իմանալ թէ աս կամ ան բանը
 աղէկ է, իր վախճանին համաձայն ու իր մտքին յար-
 մար է, թէ չէ: Աս զանազանութիւնը վաճառակա-
 նութեան վերաբերեալ տեղեկութեանց մէջ ալ կը
 տեսնուի: Արբ որ առուտուրին այլեւայլ երկիրներու
 մէջ ինչպէս ըլլալը, անոր վերաբերեալ սովորութիւն-
 ները կամ ապրանքները ստորագրելու ըլլանք, առ-
 ուտուրի վրայ ծանօթութիւն միայն տուած կ'ըլլանք.
 բայց երբ որ առուտուրին ինչ ըլլալը մեկնենք, անոր
 հարկաւոր վախճանը ու վախճանին հարկաւոր միջոց-
 ները մէկիկ մէկիկ սորվեցնենք, ապրանքներուն
 ընդհանուր պահանջուած յատկութիւնները, անոնց
 սպառելուն պատճառները ու անկից յառաջ եկած
 հարկաւոր պայմանները իմացընելու ըլլանք, ան ատեն
 ասոնցմէ հետեւցուցած ծանօթութիւնները Գիտնա-
 կան ծանօթութիւններ կ'ըսուին, եւ թէ որ ասոնք
 ամէնը մէկտեղ կարգաւորեալ ժողովելու ըլլան, Աճա-
 ճառակահանութեան գիտութիւնը կը կազմեն: Ապա
 ուրեմն Գիտութիւն վաճառակահանութեան ուրիշ բան
 չէ, բայց եթէ վաճառակահանութեան վերաբերեալ
 տեղեկութիւններէն յառաջ եկած ընդհանուր օրէնք-
 ներուն, ու միանգամայն գիտնալու ծանօթութիւն-
 ներուն կարգաւորեալ հաւաքումը: Ասիկա փորձով
 ստացուած տեղեկութիւններուն պէս՝ չէ թէ փոփո-
 խական ու փորձի վրայ, հապա իրին բնութեանը ու
 հաստատուն սկզբունքներու վրայ հաստատուած է
 ու անփոփոխ է:

4. Ասանկ մէկ գիտութիւն մը կարգաւորեալ
 կերպով աւանդելու համար կը պահանջուի որ մէկը
 մէկալէն տարբեր նիւթերը իրարմէ զատուին ու ամէն
 մէկ նիւթին վերաբերեալ, եւ կամ մէկը մէկալին հետ
 կապակցութիւն ունեցող օրէնքները կամ կանոնները
 առանձին գլուխներու մէջ խօսուին: — Առուտուրը
 իրեն բան գործք ու արուեստ ընող, ու ապրանքներու
 փոփոխութիւն ընելէն վաստակիլ, այս ինքն տուած
 ապրանքին դիմացը աւելի առնուլ ուզող վաճառա-
 կանը, պէտք է որ Ա. ապրանքներու ու ստակի
 վրայ, որոնք առուտուրի միջոցներ են, տեղեկութիւն
 ունենայ. Բ. ապրանքներուն արժէքն ու գիները կա-
 րող ըլլայ որոշել, մէկը մէկալին հետ համեմատել.
 Գ. զանազան տեղերուն կարօտութեան աստիճանը
 ճանչնալ, ու պատրաստ գտնուած ապրանքին՝ կարօ-
 տութեան հետ ունեցած համեմատութիւնը մտօքը
 չափել գիտնայ, որ անկից ապրանքին աւելի կամ
 պակաս քշուելուն վրայ յառաջուց կարող ըլլայ դա-
 տաստան ընել: Վ. աճառականութեան գիտութեան
 մէջ ասոնց ամենուն վրայ զատ զատ կը խօսուի, առ-
 ջինք կ'ըսուի Առուտուրի միջոցներու ուսում. եր-
 կրորդը՝ Արժէքը որոշելու ուսում, ու երրորդը՝ Գի-
 տողութեան կամ Հնարագիտութեան (Spéculation)
 ուսում կը կոչուին: Վայց վաճառականութեան գի-
 տութիւնը ասոնցմով միայն չլմըննար. շատ նիւթեր
 կան որ ասոնցմէ բոլորովին տարբեր են, որոնց վրայ
 ալ տեղեկութիւն պէտք է ունենալ: Վ. աճառական
 մարդը իր բարեկամներուն հետ ունեցած գործքը միշտ
 չկրնար մէկէն գոցել լմընցընել, երբեմն առնելիք
 կ'ունենայ, երբեմն ալ պարտական կը մնայ, անոր
 համար կը պահանջուի որ բրած առուտուրին գործո-
 ղութիւնները տեղ մը նշանակէ, որ կարող ըլլայ
 ուզած ատենը իմանալ թէ առանձին իր բարեկամնե-
 րուն հետ ինչ յարաբերութեան մէջ է, եւ թէ ընդ-
 հանրապէս իր վիճակը ինչպէս է: Միանգամայն

առուտուրի մէջ շատ գրաւոր գործքեր կան, որոնք
 ինչ կերպով կատարելը վաճառական ըլլող մարդը
 պէտք է որ գիանայ: Ասոնք սորվեցընող մասը Հա-
 շուեգիտութիւն կ'ըսուի: Ա՛յ՝ վաճառական մարդը նաեւ
 գիանալու է, թէ առուտուրը իբրեւ գործք կամ
 զբաղմունք ինչպէս ընելու է, ասոր ալ պահանջուած
 հարկաւոր տեղեկութիւններ կան, որոնց գիտութիւնը
 առանձինն անուամբ Առուտուրի ուսում կ'ըսուի:

5. Ա՛յ՝ վաճառականութիւնը հիմնելու, դիւրացը-
 նելու, յառաջ տանելու, հաստատուն ու կենդանի
 պահելու համար հարկաւոր է որ միջոցներ մտածուած
 ու կարգադրութիւններ եղած ըլլան. որն որ թէ վա-
 ճառականութեան վիճակը եւ թէ ընդհանուր քա-
 ղաքային ընկերութեան բարիքը կը պահանջեն: Ա՛յ
 միջոցներուն գիտութիւնն ալ, Տէրութեան վաճա-
 րականութեան ուսում կ'ըսուի, որն որ ամէն վաճա-
 րական հարկ է որ գիանայ:

Ա՛յ՝ վեց գլխաւոր գլուխներէ կը բաղկանայ Ա՛յ-
 ճառականութեան ուսման գիանական մասը, որոնց
 վրայ մենք ալ աս գործքիս մէջ պիտ'որ խօսինք.

Ա. Առուտուրի միջոցներուն կամ միջնորդներուն
 վրայ,

Բ. Ապրանքներուն գիները որոշելու վրայ,

Գ. Առուտուրի ուսման վրայ,

Դ. Հաշուեգիտութեան կամ համարակալութեան
 վրայ,

Ե. Դիտողութեան վրայ,

Զ. Տէրութեան վաճառականութեան վրայ:

6. Ա՛յ՝ վաճառականութեան պատմական մասին վե-
 րաբերեալ տեղեկութեանց մէջ ալ՝ վաճառականի մը,
 մանաւանդ մեր ազգայնոց շատ օգտակար ու հարկաւոր
 նիւթեր կան, որոնք աս գրքիս անյարմար չենք տես-
 ներ: Ա՛յ՝ վաճառականութեան՝ աշխարհքիս սկիզբէն
 մինչեւ հիմա ինչ կերպով յառաջ գալը, զանազան
 դարերու մէջ կրած փոփոխութիւնները, մէկ կողմ մը

ինկած ատեն մեկալ կողմ բարձրանալը, մէկ խօսքով
 բանք վաճառականութեան պատմութիւնը գիտնալը
 վաճառականի մը ցանկալի բան է: Ասոնց տեղեկա-
 լէն ետքը առանձինն ազգային վաճառականութեան
 պատմութիւնը սորվիլը, մեր նախնի հարցը ասոր մէջ
 երեւելութիւնը ու ինչ կերպով յառաջանալնին տես-
 նելը, ազգային վաճառականի մը չէ թէ միայն զուար-
 ճալի ու հարկաւոր, այլ նաեւ յորդոր ու գրգիռ մըն
 է: Ասոնց պէս վաճառականի մը համար հարկաւոր
 մաս մըն ալ է իր գործքին վերաբերեալ աշխարհա-
 գրական գիտութիւնը, այս ինքն աս կամ ան տե-
 րութեան գլխաւոր քաղաքները, վաճառատեղիները
 գլխաւոր նաւահանգիստները, բերքերը եւ այլն, գիտ-
 նալը: Աս երկու մասին վրայ ալ, որչափ որ մեր գիրքը
 կը տանի, յանձն կ'առնունք խօսիլ: 'Ասխ' վաճա-
 ռականութեան պատմութեան վրայ, որն որ առու-
 տուրի ուսման վրայ խօսելէն ետքը կը դնենք առան-
 ձին գլխու մէջ, ու երկրորդ՝ վաճառականութեան
 աշխարհագրութեան վրայ, որն որ գրքիս ութերորդ
 ու վերջին գլուխը կ'ըլլայ:

Վաճառականութեան պատմական մասին կը վե-
 րաբերի նաեւ Ապրանքներ ճանչնալու ուսումը, բայց
 մենք ասիկա բոլորովին դուրս կը ձգենք, ինչու որ աս
 գրքիս մէջ չկրնալով ընդարձակ խօսիլ, մէկ քանի
 թղթով մեր ընթերցողներուն օգուտ մը չենք կրնար
 ընել: Մեր ազգայինները աս մասին մէջ աղէկ տեղեակ
 ընելու համար աս նիւթիս վրայ առանձին գիրք հար-
 կաւոր է: Աստուած տայ որ թէ ազգը եւ թէ մենք
 աս գիրքն ալ հրատարակուած տեսնելու բաղձանք-
 ներնուս հասնինք:

Ա Ռ Ո Ւ Տ Ո Ւ Ր Ի Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր Ո Ւ Ն Կ Ա Մ Մ Ի -
Զ Ն Ո Ր Գ Ն Ե Ր Ո Ւ Ն Վ Ր Ա Յ

7. Ա Ռ Ո Ւ Տ Ո Ւ Ր Ի տակ ինկող բաները կամ ընդհանրապէս խօսելով Ապրանքները առուտուրի նիւթեր են: Ամէն բան՝ որ մարդուն անձէն զատ է, ու մարդու գործածութեանը կը ծառայէ, իր կամ նիւթ կ'ըսուի, իսկ ան ամէն նիւթը կամ իրը, որ առուտուրի տակ իյնալով արժէք մը կ'ունենայ, Ապրանք կամ Վաճառք կը կոչուի: Ապա ուրեմն նիւթերը Ապրանք ընողը՝ նախ առուտուրն է:

Աս ըսածներնէս կը հետեւի, որ երկրիս բերքերը, կենդանիները եւ այլն Ապրանք կրնան ըլլալ, բայց մարդը ոչ երբէք, ինչու որ մարդու վրայ աննիւթահան մաս մ'ալ կայ:

8. Առուտուրի տակ ինկող նիւթերը իրենց գործածութեան կողմանէ նայելով մէկը մէկալէն շատ կը զանազանին: Ան ապրանքներ, որոնք իբրեւ ապրանք կը գործածուին, ինչպէս են ամէն մասնաւոր ապրանքները. բայց կան ալ, որ իրենք իրենցմէ ինչպէս որ են, ապրանքի պէս բանի մը շէն գործածուիր, հապա ապրանքներուն գինը ցուցնելու համար որոշուած չափի մը պէս, ինչպէս է Ստակը: Ուրեմն երկու տեսակ առուտուրի միջոց կայ, մէյ մը ստակէն գուրս եղած ամէն ապրանքները որ ճիշդ մտօք Ապրանք կամ Առուտուրի մասնաւոր միջոցներ կ'անուանին, մէյ մ'ալ Ստակը՝ որ Առուտուրի ընդհանուր միջոց կ'ըսուի: Ասկից մեր առուտուրի միջոցներուն վրայ խօսելիքն ալ ի հարկէ երկու կը բաժնուի, մէյ մը Ապրանքներու վրայ, մէյ մ'ալ Ստակի վրայ:

9. ԱՊՐԱՆՔՆԵՐԸ, որոնք առուտուրի մասնաւոր միջոցներ են, երկու տեսակ կը բաժնուին, Անդործ (չգործուած) ու Գործուած: Անդործ ապրանքները բնութեան երեք ցեղէն յառաջ գալնուն համար երեք կարգ կը զառուին: Ա. Տնկերու՝ որուն տակ կ'երթան արմատներ, փայտեր, կինամոմնի տեսակ համեմներ, դեղերու գործածուած կեղեւներ (զոր օրինակ գլխաւոր), խոտեր, ծաղիկներ, հունտեր ու ընդեղէններ (ինչպէս ցորեն, խահուէ), խիժեր եւ այլն: Բ. Անասուններու՝ որով կ'իմացուին մորթ, կճղակ, ահուայ՝ ինչպէս փղոսկր, եղջիւր, բուրդ, մազ եւ այլն: Գ. Հանքերու՝ որուն տակն են հանք, մետաղ, քար, հող, ձիւթ, կուպր, սաթ, ծծումբ, աղ եւ այլն: Իսկ Գործուած կամ պատրաստուած ապրանքները երկու կարգ կը բաժնուին, մէյ մը իրենց նիւթին կազմութեան կողմանէ նայելով, ինչպէս են բամբակեղէններ, կտաւեղէններ, մետաքսեղէններ եւ այլն, մէյ մ'ալ իրենց գործուելուն ու պատրաստուելուն կերպէն առնելով: Աս վերջի տեսակին տակ գացող ապրանքները երեք կարգ կը բաժնուին, Մենքենական ապրանքներու, որոնք հասարակ անուամբ Չեռագործք (Manufacture) կ'ըսուին, Մենքենական քիմիական ապրանքներու, որոնք արուեստանոցներու ապրանքներ կը կոչուին ու Գիմիական ապրանքներու:

Ա. Մենքենական ապրանքներ անոնք են՝ որոնք գործելու կամ պատրաստելու համար հարկաւոր եղած աշխատութեան մեծ մասը, մարդու ձեռք կամ մենքենաներ ու գործիքներն են, որ կը կատարեն, որուն մէջ նիւթը գրեթէ բոլորովին կը կրէ քան թէ կը գործէ: Աս կարգին տակ կ'երթան բոլոր փայտի վրայ փորուածներ, ճախարակեայ գործուածներ, տարազներ (ինչպէս մանուած, ստայնանկած, հիւսուած

լաթեր), պղնձի փորուածքներ, ամէն կերպ աղացքներ, մամուլներ, փայտեղէններ (մաղ, տուփ, կողով) եւ այլն: Աս ամէն ապրանքները շինելու ու պատրաստելու համար որոշուած տեղերը Չեռագործներու գործատուն (manufacture) կը կոչուին:

Բ. Մենքենական քիմիական ապրանքներ անոնք են, որոնք շինելու կամ պատրաստելու համար թէ նիւթին եւ թէ աշխատող մարդու զօրութիւն մէկտեղ պէտք է որ ըլլայ, ու նիւթին վրայ թէ քիմիական եւ թէ մենքենական գործողութիւն կը կատարուի: Աս կարգին կը վերաբերին կաշիէ (խաղախորդի) գործուածներ, մետաղէ ապրանքներ, ապակեղէններ, ապագրութիւններ, պատրաստուած ծխախոտ ու ընչախոտ եւ այլն, որոնք շինելու համար պատրաստուած շէնքերը Արուեստանոց (Fabrique) կը կոչուին:

Գ. Իսկ քիմիական ապրանք անոնք կը կոչուին որոնք յառաջ բերելու կամ շինելու համար բնութիւնը կամ թէ ըսենք նիւթին զօրութիւնը միայն կը գործէ, իսկ աշխատող մարդը միայն ան զօրութիւնները իրարու հետ ըստ պաշտօնի հաղորդելու կամ կապելու կը ծառայէ: Ասանկ են զտելով ու խմորելով յառաջ եկած ամէն ապրանքները (ինչպէս գինւոյ սղի, օղի, քացախ, ժանտաջուր, բորակի, ծծմբոյ թթուներ, արջասպի իւղ եւ այլն) ներկեր, սառնացածներ (crystallisation), աղային բաղադրութիւններ (զոր օրինակ անկաղ, բորակ, պաղլեղ, շաքարի զտուածներ, սպաններ եւ այլն: Ասոնք պատրաստելու համար որոշուած շէնքերը Բնալուծական արուեստանոցներ կամ սենեակներ (Laboratoire) կը կոչուին:

Հոս տեղս հարկաւոր կը սեպենք մեր ընթերցողներուն ծանուցանելու որ աս վերջի երեք բաժանումներուն ճիշդ որոշ եզր կամ սահման մը չկրնար մտածուիլ, բայց մենք ապրանքները ըստ մասին մէկը մէկալէն զանազանելու ու դիւրաւ սորվեցընելու համար աս բաժանումները ըրած ենք: Հասարակ խօսակցութեան ու գործածութեան մէջ ասոնք շատ անգամ մէկը մէկալին հետ կը խառնուին, ձեռա-

գործները ու քիմիական ապրանքները՝ արուեստանոցներու ապրանք կ'ըմբռնուին, ու ձեռագործներու գործատուներ արուեստանոցէն չզատուիր: Բայց թէ որ ընդունելի եղած զանազանութիւն մը կայ նէ, աս է, որ արուեստանոց ըսելով հասարակօրէն ան տեղերը կ'իմացուին, ուր որ ապրանքը կրակով, մրճով, եւ ուրիշ ասոնց նման միջոցներով կը պատրաստուի, իսկ ձեռագործներու գործատուներ մարդու ձեռքով կամ մենքենաներով ապրանքներ պատրաստելու տեղերուն կ'ըսուի. ասոր համար մենք ալ աս զանազանութիւնը պահել ուղեցինք: Բայց կան շատեր ալ, որ ձեռագործ ըսելով միայն հիւսուած, մանուած, ոստայնանկած ապրանք կ'իմանան, որոնց մենք հայերէն ընդհանուր անուամբ Տարազ կ'ըսենք:

10. Հոս տեղս ապրանքներու վրայ խօսելիքնիս որ Ապրանքներու գիտութիւն կրնայ ըսուիլ, ապրանքներուն ի հարկէ հարկաւոր եղած հանգամանքները մեր առջեւը կը դնէ. եւ որովհետեւ ամէն ապրանք իր վախճանին գործածական ըլլալէն կամ ծառայելէն իր յարգն ու արժէքը կ'ունենայ, անոր համար աս խօսելու մասին մէջ գլխաւոր ըսելիքնիս՝ ապրանքներուն իրենց վախճանին համաձայն ու գործածական ըլլալու համար ունենալու հարկաւոր պայմաններուն, ուստի եւ ասկից ունեցած արժէքներնուն վրայ պիտ'որ ըլլայ:

11. Ապրանքները իրենց զանազան բաներու ու հարկաւորութիւններու գործածութեանը կողմանէ մտածելու ըլլանք, տեսակ տեսակ բաժնուած կը գտնենք: Ան ապրանքներ որ ուտելու, կան ալ որ հագնելու կը գործածուին: Հատերն ալ հանգստութեան, կամ զարդի, զբօսանքի, զուարճութեան եւ կամ ուրիշ ապրանքներ յառաջ բերելու կը ծառայեն: Ասոնք իրենց գործածութեանը համաձայն անուններ ալ ունին, ուտելու ապրանքները թէ որ սննդեան համար ու կերակրոյ տեղ առնուին Աերակրեղէնք, բայց թէ որ բժշկութեան համար առնուելու ըլլան Գեղորայք կ'ըսուին: Այսպէս կը կոչուին Զգեստեղէնք եւ այլն: Արդ սկսինք ասոնց վրայ մէկիկ մէ-

կիկ խօսելու, որով մեր վախճանին կարող ըլլանք հասնիլ :

12. **Աերակրեղէնք :** Աերակրեղինաց աղէկ ըլլալուն ու իրենց վախճանին ծառայելու համար աս ընդհանուր հանգամանքները կը պահանջուին, որոնք մէկ ապրանքի մը վրայ աւելի կամ պակաս դանուելով, անոր յարգն ու արժէքը կ'աւելցընեն կամ կը պակսեցընեն : Ա. **Պէտք է որ Մենդարար ըլլան :** Աերակրեղէնները սենդարար կամ սնուցիչ կ'ըլլան, երբ որ գործարաններուն անդադար շարժմամբը ու աշխատելովը մարմիններնուս զանգուածէն պակասածը նորէն կը լեցընեն. այս ինքն ուր որ չեն աւելցընել, գոնէ առջի վիճակին մէջ կը պահեն : Բ. **Չօրացուցիչ :** Մենդարարը մարմնոյն զանգուածը, իսկ զօրացուցիչը մարմնոյն դժը կը պահէ, կը կենդանացընէ ու կ'աւելցընէ : Գ. **Ղիւրամարս :** Արչափ որ մէկ կերակուր մը զիւրաւ ու շուտով ստամոքսին մէջ սննդեան նիւթի կը փոխուի, ու շրջանի մէջ կը մանէ, այնչափ աւելի զիւրամարս կ'ըսուի : Դ. **Օգտակար ու առողջարար ըլլան,** այնպէս որ մարդուս ոչ տկարութիւն եւ ոչ ուրիշ անհանգստութիւն մը պատճառեն, մարմնոյն զօրութիւնը ու ոգւոյն կենդանութիւնը չնուազեցընեն, այլ անոր հակառակ զօրացընեն : Ե. **Պէտք է որ աղէկ համ ու անուշ հոտ ունենան :** Աս պահանջուած յատկութիւնները աստիճանի մը կարգաւ դրուած չեն. ըստ ինքեան խօսելով առջի դրուած հանգամանքները աւելի օգտակար ու հարկաւոր կ'երեւան, բայց հիմակուան խիստ զգայուն աշխարհքը աս կարգը փոխել է, անոր համար ալ ամէն կերակրոյ մէջ աղէկ համը ամենէն վեր կը դրուի. բայց աս ալ պէտք չենք մոռնալ, որ թէ որ վախճանը փոխուելու ըլլայ, պահանջուած հանգամանքներն ալ կը փոխուին :

Առողջութեան կամ բժշկութեան համար առնուելու ապրանքներու վրայ մենք չենք ուզեր կանոն

տալ, տալափ միայն կ'ըսենք որ ասոնք գեղազործութեան կանոններուն համաձայն պէտք է որ շինուած ըլլան:

13. Օգտատեղէններ: Հագուստներու աղէկութեան համար պահանջուած հանգամանքները զգեստին վախճանէն կ'առնուին: Օգտատին գլխաւոր նպատակը՝ մարմինը ծածկել, վիրաւորելէն պահպանել, ներսի ջերմութիւնը բռնել, խոնաւութիւնը ներս չանցընել ու զարգն են: Ասկից ինք իրէն կը հետեւի, որ Ա. Ամէն զգեստ մարդուն անձին պիտ'որ յարմարի. Բ. Նիւթին, գործուածքին, կարուածքին, գոյնին եւ այլն կողմանէ Գիմացկուն ու հաստատուն ըլլայ. Գ. Չանազան նպատակներու նայելով Խիտ կամ ցանցառ. Դ. Տաք կամ Պաղ բռնող, որ պարագաներէն կախում ունի: Աս բանիս վրայ, ուրիշ կողմանէ հանգամանքները հաւասար ալ ըլլան, գոյնը շատ ազդեցութիւն կ'ընէ: Աոյն նիւթէ շինած, բայց սեւագոյն զգեստ մը աւելի տաք կը բռնէ, քան թէ ճերմակը: Ե. Վիւրատար, այս ինքն գիւրաւ գործածուի: Ասոր մէջ զանազան պարագաներուն նայելով թեթեւութիւնը, տարածականութիւնը կամ առածգականութիւնը, կակղութիւնը, կարծրութիւնը շատ ազդուութիւն կ'ունենան: Չ. Պոյնները աղուոր ու ձեւը գեղեցիկ պիտ'որ ըլլայ, դարձեալ կակուղ ու բարակ, բայց ասոնք գլխաւորաբար նորաձեւ սովորութիւնը (մոդան) ու ժամանակին ճաշակը կ'որոշեն:

14. Հանգստութեան վերաբերեալ ապրանքներ: Աս տեսակ ապրանքները, ինչպէս են տան մը կահ կարասիքը, անօթները եւ այլն, զանազան բաներու կը գործածուին, ուստի եւ զանազան հանգամանքներ կը պահանջեն: Հոս տեղս աս ապրանքները մէկիկ մէկիկ քննել չենք ուզեր, միայն ընդհանուր անոնց բնութենէ բխած թէութիւնները գնելով կը շատանանք: Ասոնց աղէկ ըլլալուն համար կը պահանջուի

որ Ա. վախճանին համաձայն, Բ. դիւրատար, Գ. գի-
մացկուն ըլլան, ու Դ. աղուոր ձեւ ու գոյն ունե-
նան, որն որ ըստ մեծի մասին նորամուտ սովորու-
թիւնը (ճորձ) կ'որոշէ:

Օ. արդի վերաբերեալ ապրանքներու վրայ ալ
խօսելու զանց կ'առնունք, ինչու որ նորամուտ սովո-
րութեան տակ ինկած բաներ են, երկրորդ որ ասոնց
քննութեան սկսելու ըլլանք, բոլոր գրքերնիս ասոնց
վրայ գրելու ենք, բայց գուցէ անշափով ալ շէնք
կրնար լմընցընել:

15. Յառաջ բերող ապրանքներ: Աւրիշ գործք
մը յառաջ բերելու ծառայող ապրանքները, զոր օրի-
նակ են արուեստաւորներու գործիքներ, մնէքենայ-
ներ եւ այլն, ուրիշ վախճան մը շունին, բայց եթէ
կամ ուզուած գործք մը կարելի ընել, կամ գիւրին-
ցընել, եւ կամ շուտցընել, անոր համար ալ կը պա-
հանջուի որ անանկ շինուած ըլլան, որ անոնցմով
Ա. Զօրութեան խնայութիւն ըլլայ, այս ինքն քիչ
զօրութեամբ բանը լմըննայ: Ա. վախճանիս հասնելու
համար գործածելու գիւրին պիտ'որ ըլլան, ու աշխա-
տողը պիտ'որ շոգնեցընեն. Բ. Ժամանակի խնայու-
թիւն ըլլայ, այս ինքն որչափ կարելի է, գործքը շուտ
լմըննայ. Գ. Շատ տեղ չըռնեն. Դ. Միօրինակ ու
կանոնաւոր գործեն. Ե. Իրենց վախճանին յարմար
ըլլան, այս ինքն ինչ բանի որ պիտի ծառայեն, ծա-
ռայեն, ու ինչ որ պիտ'որ յառաջ բերեն, կարող
ըլլան իրօք ալ յառաջ բերել. Զ. Գիմացկուն, ու
Է. Աղուոր ըլլան, որն որ երկրորդական թէութիւն
մըն է:

Ընդհանրապէս տեսակ տեսակ ապրանքներուն
վրայ դատաստան ընելու համար աս կանոնը կրնայ
արուիլ, որ ոչ այնչափ անոնց արտաքին, որչափ զա-
նոնք կազմող ներքին մասունքներուն միտ գնելու է,
ու իմանալու է, թէ մէկ ապրանք մը կազմիչ մասերէն
որուն մէջ մէկալ ապրանքէն առաւելութիւն ունի:

Աս իմանալէն ետքը կրնայ մարդ գիւրաւ հետեւըընել, թէ որը իր վախճանին կը ծառայէ ու որը չծառայէր: Օրը օրինակ ցորենին կամ ալիւրին բաղադրիչ մասունքներն են օսլայի (նիշուրի) նիւթ, խիւս (էօզ) ու շաքար: Արդ որովհետեւ ալիւրին կամ ցորենին սննդարար մասը խիւսն է, ուրեմն հաց շինելու համար ան տեսակ ցորենը աղէկ է, որն որ համեմատութեամբ աւելի խիւս ունի. բայց անկից օղի հանողները ան ցորենը պէտք են առնուլ, որուն շաքարի նիւթը աւելի է, իսկ օսլայ շինողները ան ընտրելու են, որուն օսլայի նիւթը շատ է:

Ասով նաեւ շատ տեսակ ապրանքներուն գինը ուղղութեամբ կրնանք հաշուել: Օղին ուրիշ բան չէ, բայց եթէ ջրի ու բարկ ոգիի (ալկոհոլի, բուրբ) խառնուրդ. եւ որովհետեւ մէջի ջուրը բան չարժէք, ասկից կը հետեւի, որ օղին՝ որչափ որ բարկ ոգիի մասն աւելի ունենայ, այնչափ աւելի յարգի ու ընտիր է: Արդ թէ որ առջեւդ երկու տեսակ օղի ունենաս, որոնց մէկուն չորս մասին երեքը, իսկ մէկալին կէսը միայն բարկ ոգի ըլլայ, ու առջի տեսակէն մէկ մարը 100 զուրուշի, իսկ երկրորդէն մէկ մարը 70 զուրուշի ծախուի, յայտնի բան է որ առջի կամ աղէկ տեսակը աւելի արժան է: Ինչու որ աս երկու տեսակին որպիսութեան աստիճանները իրարու հետ կը համեմատին ինչպէս 3 առ 2 (այս ինքն $\frac{3}{4} : \frac{2}{4}$), անոր համար հարկ էր որ գիներն ալ այնպէս համեմատէին, ու ստորին տեսակ օղիին մարը $66\frac{2}{3}$ զուրուշ արժէք,

$$\text{վասնդի } 3:2 = 100:+, \text{ ու } + = \frac{100 \times 2}{3} = \frac{200}{3} = 66\frac{2}{3}.$$

բայց որովհետեւ 70ի կը ծախուի, ուրեմն $3\frac{1}{3}$ զուրուշ առջինէն սուղ է: — Վարձեալ գնենք որ ցորենի տեսակ մը, որուն քուրը 20 զուրուշով ծախուի, վեց մաս օղի տայ, ուրիշ տեսակ մ'ալ, որուն քուրը 30 զուրուշ արժէ, բայց 10 մաս նոյնչափ սաստիկ օղի տայ. յայտնի բան է որ վերջի տեսակը աւելի

աժան է : Այսան զի երկրորդը՝ առջինին հաւասար
արժէք ունենալու համար, Գ մասն օղի ալ տալու
ըլլար, բաւական էր, բայց ասով ալ առջինէն աւելի
աժան կ'ըլլար, ինչու որ առջի տեսակէն Գ մաս օղի
առնելու համար $1/2$ ին չափ ալ ցորեն պէտք է, որուն
համար զատ ստակ, նոր աշխատութիւն ու եփելու
պատրաստելու համար փայտ ալ հարկաւոր է :

Ապրանքներու գիտութեան վրայ տուած կանոն-
նիս շատ օգտակար ու շահաւոր բաներ են : Արդէն
գործածութեան մէջ ալ աս սկզբունքներն են, որով
ապրանքներու վրայ դատում կ'ըլլայ, բայց առանց
միտ դնելու ու յայտնի իմանալու :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ

Ս Տ Ա Կ Ի Վ Բ Ա Յ

16. Մեկ նիւթի կամ ապրանքի մը արժէքը
որոշելու համար, հարկ է որ ծանօթ ու որոշ արժէք
ունեցող բան մը Միութեան տեղ առնուի, ու անիկա
բոլոր ապրանքներուն արժէքն ու գինը իմանալու հա-
մար Չափի կամ Չափելու գործիքի մը պէս գործա-
ծուի : Աշիոները, Երկայնութեան ու Մարմիններու
չափերը նոյնատեսակ ապրանքները մէկը մէկալին հետ
համեմատելու չափեր են, բայց աս գիպուածին մէջ
հարկ է որ ապրանքին արժէքն ու գինը զանգուածին
ու մեծութեան հետ ուղիղ համեմատի, այս ինքն
որչափ որ ապրանքը ծանր է կամ մեծ է, այնչափ
ալ աւելի արժէ : Բայց որովհետեւ ասիկա միայն
նոյնատեսակ ապրանքներու վրայ կրնայ յարմարիլ,
անոր համար ուրիշ չափ մը փնտռելու ենք : Հին
ատենի ազգերն ալ տեսան որ աս կերպով կարօտու-
թիւնը չլեցուիր. իմացան որ առուտուրի մէջ իբրեւ
ապրանք անցնող նիւթերուն գինը որոշելու համար
հաստատուն ու անփոփոխ արժէք ունեցող նիւթ մը
առնելու է, անոր համար ալ առուտուրի Ընդհանուր
միջնորդ սկսան փնտռել, որն որ Ստակ անուանեցաւ :

Ստակը կամ առուտուրի ընդհանուր միջնորդը, որպէս զի գործածական ըլլայ, աս հարկաւոր թէու-
թիւնները կ'ուզէ. Ա. Պէտք է որ պզտիկ միջոց (քիչ
տեղ) բռնելով ալ, շատ մեծ արժէք ունենայ. Բ.
Արժէքը որչափ կարելի է հաստատուն ու անփոփոխ
ըլլայ. Գ. Թէ որ կտոր բաժնուէլու ըլլայ, արժէքը
չկորսընցընէ, ու վերջապէս Դ. Հազուադիւտ ըլլայ:


17. Աթենացիք դրամներու գործածութիւնը
Լիւզացիներէն սորվելէն յառաջ, ապրանքներուն
արժէքը ցուցընելու համար ստակի տեղ եղ կը գոր-
ծածէին: Իսլանտացիք մինչեւ հիմա հաշիւնին գոցե-
լու ու առնելիքնին տալիքնին հաւասարցընելու ատեն-
նին չորցած ձուկ ու ծխախոտ կը գործածեն: Արկու
լիար ծանրութեամբ ձուկ մը երկու շիլլինկ կ'արժէ,
ու մէկ կանգուն ծխախոտը մէկ ձուկի հաւասար է:
Ամերիկայի ծովեզերեայ տեղուանքը ազգեր կան,
որոնց ստակը տեսակ մը խեցեմորթ է, որ Աորիս
կ'ըսուի. կան ալ, մանաւանդ հիւսիսային Ամերիկայի
մէջ, որոնք Ալարոս ըսուած ստակ մը ունին, որն որ
նոյնպէս տեսակ մը խեցեմորթ է. բայց թէ աս տեսակ
ստակները որչափ խոշոր ու անյարմար են, ու հար-
կաւորութիւնը շէն կրնար լեցընել, ամէն մարդ ինք
իրմէ կը տեսնէ: Օսաղիեալ ու կրթուած ազգերը
առուտուրի ընդհանուր միջնորդի, այս ինքն Ստակի
տեղ մետաղները ու անոնցմէ ալ ոսկին ու արծաթը
ընտրած են, որոնք ստակի համար պահանջուած ամէն
թէութիւններն ալ ունին:

18. Իբրեւ առուտուրի միջնորդ գործածուած մե-
տաղները, մէյ մը իբրեւ ապրանք, մէյ մ'ալ իբրեւ
ընդհանուր ընդունուած առուտուրի միջնորդ, ու եր-
րորդ՝ իբրեւ տէրութենէ ճանչցուած ու հաւանեալ
առուտուրի միջնորդ կրնանք մտածել:

Ազնիւ մետաղները իբրեւ ապրանք մտածելով,
ինչպէս որ առ հասարակ ճանչցուած է, ըստ ինքեան
բարձր արժէք մը ունին: Յուրար վրանին ազդեցու-

Թիւն չունենալէն զատ՝ երկայն կը տեւեն ու առողջութեան այնպէս փնտասկար չեն, ինչպէս որ մէկալ մետաղները, անոր համար ալ երկայն ատենէ ի վեր գործածութեան մէջ են: Իրենց հազուադիտութեանը, երկրէս հանելու ծախքին ու աշխատութեան պատճառաւ թանկ բլլալնուն, ու նաեւ գեղեցկութիւննին չկորսընցընելնուն համար՝ իսկզբանէ մինչեւ հիմա ամենուն առջեւը զարդարանքի ու փառաւորութեան մէկիկ յարմար սեպուած են: Այլսաւորաբար աս յարգին ու գործածութեան շատ յարմար բլլալնուն համար է, որ ասոնք ծաղկեալ ազգերը առուտուրի բնդհանուր միջնորդի տեղ հաստատել ուզեցին:

19. Իսկ տէրութիւնները ասանկ բնդհանուր միջնորդի տեղ բնդունելի եղած մետաղներուն մէջ սրչափ զուտ մետաղի նիւթ պարունակելը ու միանգամայն անոնց ինչ սրպիտութիւն ունենալը ցուցընելու համար, վրանին նշաններ կոխեցին: Ասանկ դրոշմ կամ արժանք (+++) ունեցող ստակը Գրամ կը կոչուի. իսկ անոնց ծանրութիւնը գտնելու համար դրուած կշռոյն միութիւնը Մարկ կ'անուանուի: — Ասկին ու արծաթը զուտ ինչպէս որ են, այս ինքն առանց մէջերնին օտար մետաղի խառնուրդ ունենալու շատ կակուղ են, անոր համար ալ աս վիճակիս մէջ ստակ կոխելու չեն յարմարիր, ու հիմակուան ժամանակս ալ եւ ոչ մէկ դրամ կը գտնուի, որ զուտ ոսկի կամ արծաթ բլլայ: Ասարակօրէն ոսկին ու արծաթը պղնձով, բայց երբեմն ալ ոսկին արծաթով կը խառնեն, ու աս միաւորութենէն դրամ կը կտրեն: Այլ որովհետեւ աս խառնուրդին մէջ գտնուած ստորին տեսակ մետաղին արժէքը այնչափ նուազ է, որ ազնիւ մետաղին հետ համեմատութեան չգար, անոր համար ալ ասանկ դրամներու յարգը կամ առաւելութիւնը ազնիւ մետաղէն կ'առնուի, ու նոյն ազնիւ մետաղէն շինուած դրամներու մէջ անիկա աւելի կ'արժէ, որուն մէջ աւելի ազնիւ մետաղի մաս կայ, կամ թէ քսենք որուն մէջ



որ գտնուած ազնիւ մետաղը աւելի կը կշռէ: Այլ որ դրամները նոյնատեսակ մետաղներէ, կամ այլատեսակ բայց հաւասար արժէք ունեցող մետաղներէ շինուած ըլլային, ան ատենը անոնց արժէքներն ալ մէկը մէկալին հետ այնպէս կը համեմատէին, ինչպէս իրենց կշիռները, կամ արժէքներուն համեմատութիւնը իրենց կշիռներուն համեմատութեանը հաւասար կ'ըլլար. բայց գրեթէ ամէն տէրութեանց մէջ դրամները՝ զանազան ու տարբեր տարբեր համեմատութիւններով ստորին տեսակ մետաղներու խառնուրդ ունենալով՝ կոխուած են, անոր համար հիմակ աս համեմատութեամբ անոնց արժէքը շկրնար իմացուիլ:

20. Ամէն մէկ տէրութիւն իրեն երկիրը կոխուելու դրամներուն խառնուածը ու անոնց ամէն մէկ հատին կշիռը եւ այլն, որոշած ու անոնց վրայ օրէնքներ դրած է: Աս օրէնքներով, որոնք Գրամական օրէնք կամ աստիճան (titre de monnaie) կը կոչուին, ու ամէն մէկ տէրութեան մէջ զատ զատ են, դրամներուն օրինաւոր խառնուածը կ'որոշուի ու կ'իմացուի թէ մէկ մարկ զուտ ոսկիէ կամ արծաթէ մի եւ նոյն տեսակէ քանի՛ հատ դրամ պիտ'որ կտրուի, եւ կամ թէ ամէն մէկ տեսակ դրամին ամէն մէկ հատին մէջ քանի՛ մարկ զուտ ոսկի կամ արծաթ պիտ'որ գտնուի: Այլ որ աս ազնիւ մետաղին կշռոյն վրայ օրէնքէն որոշուածին չափ պղնձին մասն ալ աւելցրնելու ըլլաս, խառնուած դրամին ամէն մէկ հատին կշիռը կ'ելլէ, որ Օրինակշիռ (Aloi, ար) կ'անուանուի: Ասկից դիւրաւ կրնայ գտնուիլ նաեւ ամէն մէկ հատ դրամին մէջ գտնուած զուտ ոսկւոյն կամ արծաթին կշիռը, որն որ Գարեհատ (grain) կը կոչուի:

Շատ երկիրներ նաեւ ոսկւոյն ու արծաթին մէկը մէկալին հետ ունեցած համեմատութիւնն ալ օրէնքով հաստատուած է (գրեթէ 1 առ 15) բայց առուտուրի մէջ ասիկա հաստատուն չպահուիր, ինչու որ երբ որ ոսկին շատ փնտռուելու ըլլայ, ան ժամանակը համե-

մատուցիւնը կ'եղծանի, ոսկւոյն գինը կը բարձրանայ՝ որն որ պարագաներուն նայելով երբեմն երկայն երբեմն ալ քիչ ժամանակ կրնայ տեւել: Ոսկւոյն գնոյն բարձրացած մասը Ոսկիի լումայաշահ (agio) կը զըցուի:

21. Տեսակ տեսակ դրամներու գիներն ու արժէքը ճիշդ իմանալու ու որոշելու, եւ առուտուրի մէջ անոնց գիներուն փոփոխականութենէն չշփոթելու համար, դրամներու վրայ երեք գին կամ արժէք կը զանազանուին, որոնց գործածութեան մէջ աղէկ միտ գնելու է:

Ա. Աերքին արժէք, կամ որ նոյն է զուտ ազնիւ մետաղէն դրամին մէջ գտնուած մասը:

Արովհետեւ դրամներուն վրայ եղած կարգադրութիւնները բոլորովին տէրութենէ կախում ունին, ու վրանին որոշեալ օրէնքներ կան, եւ դարձեալ որովհետեւ դրամներու ամէն մէկ հատին մէջ սրչափ զուտ ազնիւ մետաղ գտնուիլը, սրչափ արժելը ու մէկը մէկալին հետ համեմատութիւնը արդէն որոշուած ու հրատարակուած է, ասկից գուցէ կրնար հետեւիլ, որ տեղւոյ մը բնակիչներուն, մանաւանդ վաճառականներուն ալ հարկ չկար որ իրենց տէրութեան դրամներուն ներքին արժէքը գիտնային, հապա զանազան տեսակ դրամներու հատերուն մէկը մէկալին հետ ունեցած օրինաւոր համեմատութիւնը միայն գիտնալը բաւական էր: Բայց ասիկա ծուռ ու սխալ կարծիք մըն է: Ամէն տէրութիւնները մի եւ նոյն միութիւնը իրենց չափերուն հիմ դրած չեն, ու դրամ կտրելու ատենն ալ մէկ միութենէ նոյնչափ հատ դրամ չեն կտրեր. վասն զի ամէն մէկը զատ զատ մարկ ունի, ուրեմն ասկէ կը հետեւի որ տէրութեանց դրամական օրէնքը գիտնալը մանաւանդ վաճառականի մը շատ հարկաւոր բան է, որով դրամներուն ներքին արժէքը մէկը մէկալին հետ կրնայ համեմատել:

Աեր վախճանը աս գրքիս մէջ ասոնք սորվեցընել չէ, որոնք աւելի պատմական մասին կը վերաբերին, բայց աս զրուցածներնէս ճշդիւ յառաջ կու կայ, [Թէ՛

Չանազան տեսակ գրամներու ներքին արժէքներուն (այս ինքն բուն իրական արժէքներուն) մէկը մէկալին հետ ունեցած համեմատութիւնը, անոնց մէջ գրանուած զուտ ազնիւ մետաղին շատութենէ ու քիչութենէ կախում ունի: Ասոր համար երբ որ մէկ տեսութեան մը որոշեալ թուով (զոր օրինակ 9 հատ) գրամներուն մէջ այնչափ մաքուր մետաղ (սակի կամ արծաթ) բլայ, որչափ որ նոյն կամ ուրիշ տեսութեան գրամներէն որոշեալ թուով հատերուն (զոր օրինակ 12 հատին) մէջ նոյն ազնիւ մետաղէն կը գանուի, ան ժամանակը աս երկու տեսակ գրամներուն որոշեալ թուով հատերը ներքին արժէքին կողմանէ նայելով մէկը մէկալին Հաւասար կամ Հանգէտ (Pari) կը զոյգուին:

Այս ուրեմն գրամներուն հաւասարութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ երկու տեսակ գրամներէն զանազան թուով առնուած հատերուն մէկը մէկալին հետ ունեցած համեմատութիւնը որոնց մէջը գանուած ազնիւ զուտ մետաղը հաւասար է: — Հաստ անգամ կը պատահի որ մարդ տեսակ մը գրամի կարօտութիւն կ'ունենայ, որն որ ձեռք բերելու համար զատ տեսակ գրամով անոր հաւասարէն աւելի կը տրուի եւ ասիկա Լոմայաշահ կ'ըսուի:

Մինչև հիմա զրուցածնիս դիւրինցընելու համար քանի մը օրինակներ բերենք: Աերը ըսինք որ ամէն տեսութիւն սակին կամ արծաթը կըսելու համար զատ զատ մարկ ունի: Ամէն մէկ մարկը ուրիշ միութեանց նման զանազան փոքր մասեր կը բաժնուին: Աիեննայի 1 մարկը = 12 Լոթ է, 1 Լոթը = 4 գուինդ, 1 գուինդը = 3 ֆէնիկ, ուստի աս հաշուով 1 մարկը 256 ֆէնիկ է: Գազզիացիք սակին ու արծաթը Արամով կը շափեն, 10 կրամը Տեգակրամ կ'ըսուի, 100 կրամը Հէկտակրամ, 1000 կրամը Գիլոկրամ, 10000 կրամը Միլիակրամ կը կոչուի: Իսկ Արամի տասներորդ մասը Տեփակրամ, հարիւրերորդ մասը՝ Սանդիկրամ, հազարերորդ մասը՝ Միլիկրամ կը զոյգուի: 10 միլիակրամը մէկ մեղրական կենդինար է: — Արուսիայի կամ գերմանական մարկը = 18 ունկի է, 1 ունկին = 2 Լոթ է, 1 Լոթը

$= 1\frac{1}{2}$ կերատ $= 2$ Գուինդէլ, 1 Գուինդէլը $= 4$ ֆէն-
 նինկ, 1 ֆէննինկը $= 1\frac{1}{3}$ կրան, 1 կրանը $= 15\frac{1}{9}$ էշէն,
 1 էշէն $= 15\frac{1}{17}$ բիճթֆէննինկ է, ուստի եւ մէկ մարկը
 $= 24$ կերատ $= 4352$ էշէն $= 65536$ բիճթֆէննինկ է:
 Այսպէս զանազան մասունք կը բաժնուին ամէն մէկ երկրին
 մարկերը:

Պրուսիայի գրամական օրէնքին նայելով 14 Պրուսիայի
 Թալէրին մէջ 1 մարկ արծաթ պիտ'որ ըլլայ, եւ 100 Թա-
 լէրը 9 մարկ եւ 8 լոթ պիտ'որ կշռէ. իսկ դաշնագրութեան
 գրամական օրէնքին նայելով 20 ֆիորինի կամ 10 (դաշնա-
 գրութեան) Թալէրին մէջ մէկ մարկ զուտ արծաթ պիտ'որ
 գտնուի: Ասկից կը հետեւի որ 14 Պրուսի թալէր, եւ
 20 ֆիորին արծաթը մէկը մէկալին հաւասար արժէք ունին,
 ուստի եւ իսկ արժէքով 2 ֆիոր. արծաթ $= 1\frac{2}{3}$ Պրու-
 սիայի թալէր է:

Բ. Օրինաւոր արժէք:

Ասիկա ուրիշ բան չէ, բայց եթէ կամ մէկ տե-
 րութեան մը՝ իրեն զանազան տեսակ գրամներուն ար-
 ժէքին իրարու հետ ունեցած համեմատութիւնը, եւ
 կամ ուրիշ երկիրներուն գրամներուն հետ փոփոխու-
 թիւն ընելու համար որոշուած գինը: Աս երկու որո-
 շումները կառավարութիւնը կ'ընէ, կէս մը՝ որպէս զի
 անտեղեակները շխարհին ու կէս մ'ալ որպէս զի
 զժողովուրդը կ'ախներէն ու վէճերէն ազատէ, որոնք
 կրնան պատահիլ այնպիսի դիպուածներու մէջ երբ որ
 գրամներու տեսակները որոշուած չեն, ու մէկ տեսակ
 գրամով մը ստակ վճարել ուղելով, հաւասարութեան
 (բարիք) դիմել հարկ կ'ըլլայ: Տէրութիւնը իր ելքին
 մուտքին մէջն ալ միշտ իր հաստատած օրինաւոր
 գինովը կը վարուի: Աս զրուցածներնէս յառաջ կու
 գայ, որ տեղւոյ մը բնակիչները պէտք է որ իրենց կա-
 ռավարութեան դրած օրինաւոր գնոյն վրայ կապուին,
 բայց առուտուրի մէջ երբեմն վաճառականները ասոր
 չեն հետեւիր:

Տէրութեանց գրամներուն մէկը մէկալին հետ համեմա-
 տութիւնները քննելը աս դրքիս շվերարերիբ, ասոնք շա-
 թուարանութիւններու, բայց գլխաւորաբար առանձինն
 ստակներու, գրամներու ու կշիռներու վրայ գրուած գը-

քերու մէջ կը գանուին: Աս նիւթիս վրայ նոր դիրք մը գուցէ մտերս կը հանենք, որն որ վաճառականներուն համար մեկիկ հարկաւոր է:

Գ. Պատահական գին, որն որ նաեւ վաճառատեղեաց կամ Ընթացիկ գին ալ կ'անուանուի:

Ինչպէս որ առուտուրի մէջ ապրանքներուն գինը զանազան պարագաներուն հետ կապակցութիւն ունի, ասանկ ալ աս կամ ան տեսակ որոշեալ գրամներու գիները զանազան պարագաներու նայելով, զոր օրինակ գնողներու կամ ծախողներու շատնալուն կամ քիչնալուն, նոյն իսկ գրամներուն շատնալուն կամ քիչնալուն եւ ուրիշ ասանկ պարագաներու պատճառաւ կ'ելլէ կ'իջնայ: Ասոր պատճառն ան է, որ գրամներն ալ ապրանքի պէս կը մտածուին, անոր համար ալ է որ աս տեսակ գինը վաճառատեղեաց կամ Շուկայի գին ըսուած է:

Գրամներուն պատահական կամ վաճառատեղեաց գինը, նաեւ օտար երկիրներու վաճառատեղեաց մէջ վճարուելու փոխանակագիրներուն գինը՝ Ընթացք (Cours) կը կոչուի, գրամներունը՝ Գրամներու ընթացք, իսկ փոխանակագրերունը՝ Փոխանակագրերու ընթացք կ'անուանուի: Թէ որ ընթացքը գրամին ներքին արժէքին հաւասար է, ան ժամանակը ընթացքը Հաւասար (pari) է կ'ըսուի, բայց թէ որ ներքին արժէքէն ցած կամ բարձր է, ան ատենը Հաւասարէն վար կամ վեր է կը զըցուի:

Գրամներու ընթացքը որոշեալ տեսակ ստակի մը քիչ կամ շատ փնտռուելէն կը ծագի ու գրամներու գինը կ'ելլէ ու կ'իջնայ ըսինք: Ստոյգ է որ ասիկա մեկէն ըմբռնելը նոր սորվողի մը գժուար կ'ըլլայ, ու տղու մը միտքը խոթել անկարելի կ'ըլլայ, որ նոյն ներքին արժէք ունեցող գրամներ ինչպէս իրարմէ տարբեր գին կրնան ունենալ: Բայց ասչափ միայն մտածելու ըլլանք, որ նոյն իսկ երբ որ երկու վաճառականի իրրեւ առնող ու տուողի մէջ մեծ դուժար ստակի վճարմունք պիտ'որ ըլլայ նէ, կարծեմ կրնանք դիւրաւ իմանալ որ առնողն ալ տուողն ալ ամէն տեսակ ստակի անասարբեր չեն կրնար ըլլալ, նոյն տեսակ ստակին փոքր տե-

տակաւը վճարուեր է եւ կամ մեծ տեսակաւ (զոր օրինակ զուրուշով կամ փարայով) թէ առնողին եւ թէ տուողին հաւասար չէ: Ասլափս թէ որ բաւական չըլլար ըմբռնելու, ուրիշ օրինակ մ'ալ բերենք. երբ որ ուրիշ երկիր վճարելու համար ստակ պիտ'որ անցընես, ուր որ քու եղած տեղւոյդ դրամներէն աս կամ ան տեսակը միայն կ'անցնի, յայտնի բան է, որ ան ատեն պէտք է որ ան տեսակէն ժողվես ու ձեռք ձգելու ջանաս. բայց ան ստակը ունեցողներէն զով կրնաս գտնել, որ իր ունեցած մ[թ]երքը առանց իր շահուն գործածելու այս ինքն դրամաշահ առնելու աշխատիլ ու քուկինիդ հետ փոփոխել ուզէ, մանաւանդ երբ որ պարագաներէն կրնայ տեսնել գուշակել, որ դրսի երկիր ստակ վճարելու համար, ինքն ալ ան տեսակ դրամի հարկաւորութիւն կրնայ ունենալ:

Աւստրիայի կայսերական դրամները իրենց սիրուն կոխուածքին ու դիւրին բաժանմանը համար գրեթէ ամէն տեղ առ հասարակ շատ կ'ուզուին: 1 մարկ արծաթէն 10 թալէր, 20 ֆիորին, 60 քսաննոց եւ այլն կ'ելլէ: Աստակին թալէրը Տաճկաստանի մէջ Արծուեկիր (تورک) կը կոչուի: Ռուսաստանի ու Լեհաստանի մէջ Հոլանտայի տուգաթը շատ կը գործածուի, ինչու որ աս տեղաց մարդիկը ասով հաշիւ ընելու վարժած են:

22. Սետաղէ կամ հնչող դրամները ցուցընելու համար նշաններ հնարուած են, ու քաղաքային կենաց ու գործոց մէջ դիւրութիւն ըլլալու համար ստակի տեղ ասոնք կը գործածուին: Այսպէս են Սեղանատոմս կամ Լոմայագիր (billet de banque) ըսուած թղթերը: Ան երկիրները ուր որ ասոնց գործածութիւնը հասարակ եղած է, ու օրինաւոր արժէք ունին, ապրանքներու գիներն ալ ցուցընելու համար կամ առ հասարակ ընդհանուր առուտուրի միջնորդի (այս ինքն ստակի) տեղ կ'անցնին, ու հասարակ հնչող դրամներէն զատուելու համար թղթէ ստակ կամ Դրամաթուղթ (papier-monnaie) կը զբոցուին:

Սերը առուտուրի ընդհանուր միջնորդին կամ ստակին պահանջուած յատկութիւնները մէկիկ մէկիկ նշանակեցինք: Արդ սրովհետեւ ստակը՝ ըստ ինքեան իր նիւթին մէջ իրական արժէք պիտ'որ

ունենայ, ասկից յայտնի յառաջ կու գայ, որ թղթէ ստակները իրենցմէ դուրս արտաքին արժէք մը կը նշանակեն: Այս ինքն արժէքնին իրենց վրայ եղած կամ կապուած, ու տէրութենէ ալ ապահովուցած իրաւունքէ մը կ'առնուն: Արենց արժէքը միայն համարմանէ կը կախուի, այս ինքն է իր հաստատութիւնը կ'առնու նախ անիկա հանողին ու վճարելու պարտական ըլլողին կարողութենէ, ու երկրորդ տէրութենէ՝ որչափ որ աս թղթերուն իրաւանցը կ'ուզէ ու կարող է պաշտպան եւ օգնական ըլլալ:

Թղթէ ստակին մուտ գտնելուն ու այսչափ սովորական ըլլալուն առջի պատճառը՝ վճարելու ու ստակ տալու կամ յանձնելու դիւրութիւնը եղած է: Առանց սաստիկ ծանրութիւն կրելու երկու երեք հարիւր ֆիորին արծաթի ստակ վրանիս շէնք կրնար կրել, բայց թղթէ ստակով հազարաւոր ֆիորին վրանիս կրնանք առնուլ ու ծանրութիւն մը շէնք զգար: Ան քաղաքները ուր որ թէ ապրանքներու եւ թէ փոխանակագրերու շատ առուտուր կայ, ստակ վճարելը ու կշռելը խիստ շատ ժամանակ կ'ուտէ, բայց մանաւանդ երբ որ ան երկրին իշխանը կամ թագաւորը իր առանձին շահին համար ըստ մեծի մասին փոքր տեսակ դրամ կտրել տուած ըլլայ: Մտածենք մէյ մը որ օրուան մէջ 50, 100 կամ 200 հազար ֆիորին վճարելիք ունեցող սեղանաւոր կամ վաճառական մը քսաննոցով կամ տասնոցով նաեւ ասոնցմէ մեծ տեսակ ստակով ալ վճարելու համար որչափ ժամանակ պիտ'որ կորորնցընէ, ու որչափ դիւրին է ասիկա հինգնոց, տասնոց, հարիւրնոց, հազարնոց թղթէ ստակներով վճարել: Աս զրուցածներնէս կրնանք իմանալ, որ ինչո՞ւ համար ամենէն յառաջ թղթէ ստակը ան տէրութեանց մէջ սկսաւ, ուր որ ամենէն աւելի շատ ստակ ու ստակի ու ապրանքներու շրջան կար: Այսն զի շէ թէ ըստ ինքեան ստակի պակասութիւնը, հապա աս մեծ շրջանը պատճառ եղաւ, որուն համար թղթէ

ստակը բաղձալի, օգտակար ու հարկաւոր երեւցաւ, մանաւանդ որ անոր վրայ անանկ ապահովութիւն մը կայ, որ երբ որ ուղուի նէ անոր տեղը իրական արժէք ունեցող ստակ կրնայ առնուիլ: Ապա ուրեմն թղթէ ստակը առեւտրական գործքերու ստակի ու ապրանքներու շրջանին մեծութենէ յառաջ եկած գործք մըն է, բայց պատճառ չէ:

Թղթէ ստակին մանելուն պատճառ եղաւ նաեւ տէրութեանց ստակի կարօտութիւն ունենալը: Թաւազաւորները տեսան որ ասիկա դիւրաւ հարստնալու ու ստակի պակասութեան նեղութենէ ազատելու հեշտ ճամբայ մըն է, ինչպէս վաճառականներուն սուտ փոխանակագիր ձեւացրնելը: Նաեւ տեսնուեցաւ ալ որ թղթէ ստակ մանելով՝ ստակը կ'աւելնայ, ու աս ստակով, ու ստակի նշաններով շատ գործք կրնայ գործուիլ, արուեստանոցներ հաստատուիլ, առուտուրը ընդարձակուիլ եւ այլն: Արուեստագէտ մը թէ որ միայն 10,000 զուրուշ դրամագլուխ ունի, ու իր տունը պահելու համար իրեն 5000 զուրուշ պէտք է, ան ժամանակը 100ին 50 պիտ'որ վաստըկի որ կարող ըլլայ ապրիլ: Բայց եկուր աս մարդուն դրամագլուխը շատցրնենք 100,000 զուրուշ ընենք, յայտնի բան է որ աս մարդը 100ին 10ը վաստըկելով՝ տարին 10,000 զուրուշ կը վաստըկի, ու 5000 ծախքը հանելէն ետքը՝ 5000 ալ մէկ դի կրնայ դնել, ուր թողունք որ իր արուեստանոցին ապրանքը 100ին 40 աժան կրնայ ծախսել, որով կամ օտար ապրանքներուն ներս մանելը կ'արգելուի եւ կամ թէ որ իր ապրանքը դրսի երկիրներ տանելու ըլլայ, դիւրաւ կրնայ ծախսել: Ասոնցմէ զատ ուրիշ օգուտ մ'ալ, թղթէ ստակը տէրութեան մէջ բանեցրնելով, մետադէ ստակով արտաքիններուն հետ շատ գործք կրնայ տեսնել:

Մինչեւ հիմա զրուցածնիս թղթէ ստակին օգուտները կը ցուցրնեն. բայց աս օգուտները աւերելոյթ միայն կ'ըլլան, թէ որ ուրիշ պարագաներու միտ

չդրուի եւ զգուշութիւն չըլլայ: Թղթէ ստակ հանելով երկրի մը մէջ չէ թէ միայն մէկ արուեստաւորի մը, հապա նաեւ բոլոր արուեստաւորներուն ու բոլոր երկրին ստակը կ'աւելնայ, բայց ինչպէս դիտողութեան (speculation) վրայ խօսած ատեննիս պիտ'որ ըսենք, որչափ որ ստակը կը շատնայ, այնչափ ալ անոր գինը վար կ'իյնայ եւ կամ որ նոյն է մէկալ ապրանքներուն գիները կը բարձրանան: Վովի դրացի երկիրներէն ուր որ ստակը քիչ է, ու մարդիկը քիչ վարձքով գոհ կ'ըլլան, իրենց ապրանքը ներս կը բերեն, ու ատան ծախելով, մետաղէ ստակը կ'առնուն դուրս կը հանեն: Վերսի գործատանց տէրերը դրսէն իրենց գործատանցը համար շատ ապրանք բերել տալով ու թղթէ ստակ չկրնալով հատուցանել, մետաղէ ստակ հարկ կ'ըլլայ դուրս հանել: Արդ որովհետեւ թղթէ ստակը իրական հարստութիւն մը չէ, աս կերպով մետաղէ ստակը՝ ճշմարիտ հարստութիւնը դուրս կ'ելլէ, իսկ թղթէ ստակը՝ երեւակայական ու առերեւոյթ հարստութիւնը միայն ներսը կը մնայ: Աս ամէն մնասները կ'ըլլան, թէ որ ճարտարութիւնն ու ներգործական վաճառականութիւնը (այս ինքն իր երկրին ապրանքը օտար երկիրները ծախելու առուտուրը) աղէկ չըլլալով դրսէն ալ ներս իրական ստակ չմանէ: Ասիկա հաւասարակշռութեան մէջ պահուելու չըլլայ, տէրութիւնը վերի ըսուած մնասները կը կրէ ու մինչեւ կործանման վիճակի մէջ կ'իյնայ:

Չէ թէ հարստութեան կամ ստակին շատնալովը տէրութիւն մը հարուստ կ'ըլլայ: Արկրի մը հարստութեան աղբիւրը իր մէջը պիտ'որ ըլլայ, որ է ճարտարութիւնն ու արուեստները: Ապանիա՝ երբ որ Բերուն ու Մեքսիկոն կողոպտեց, սակին ու արծաթը շատնալով, մէկէն ամէն բան սաստիկ սղցաւ, ու տեղացիք արուեստներն ու առուտուրը ձգեցին, օտարականներուն թող տուին, որով եւ քիչ մը ետքը ստակնին ալ հատաւ: Ասոր հակառակ՝ օրինակ է մեզի Անգղիան:

23. Ստակ ըսած բաներնիս, ու ստակի ամէն տեսակները միշտ մէկ արժէք մը կը յայտնեն, ու ինչպէս վերը ըսինք մէկ մարկի համեմատութեան հետ կապակցեալ են: Ենոր համար Ստակի մը յարգը իր մէջը եղած զուտ մետաղին որչափութենէ կախում ունի: Թէ որ ստակ մը որչափ արժէք ունի նէ, այնչափ ալ մէջը զուտ մետաղ կայ, ան ատեն անիկա ճշմարիտ դրամ կը զըցուի, բայց թէ որ իրօք այնչափ չունենալու ըլլայ, Աեղծեալ կամ Հաշուի դրամ կ'ըսուի: Եսանկ կեղծեալ ստակներ են փաւնտ ստերլինը, Տաճկաստանի 100 զուրուշնոց ոսկին եւ ուրիշ դրեթէ ամէն դրամները, ինչու որ ինչ որ անուննին կը նշանակէ, մէջերնին այնչափ զուտ մետաղ չունին:



ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԼԱՅ

24. Աս գլխոյս մէջ խօսելիքնիս արժէքի ու գնոյ վրայ պիտ'որ ըլլայ, ու միանգամայն ամէն բան որ ասոնց վրայ ազդեցութիւն մը ունին, աս գլխոյն տակը կ'երթան:

Մէկ բանի մը ուրիշ իրերու նկատմամբ ունեցած յարգը՝ Արժէք կամ Արժողութիւն կը զըցուի: Թե որ աս յարգը ընդհանուր է, ան ատենը՝ ան իրը Ընդհանուր արժէք ունի. զոր օրինակ են սննդեան համար հարկաւոր եղած ուտելիքը, զդեաստեղէնի նիւթերը, վաճառականներու հասարակ ապրանքները, որոնք ընդհանուր յարգ մը ունին, անոր համար ալ գիններնին մէկ որոշ հաւասար աստիճանի մը մէջ է, թէպէտ իրենց հարկաւորութեան աստիճանին նայելով, գիններնին մէկը մէկալէն կը տարբերին: Բայց երբ որ իր մը քիչերուն առջեւը յարգ ունի, ան ատեն Մասնաւոր արժէք ունի կ'ըսուի: Ասանկ են արուեստական ապրանքները, զոր օրինակ պատկերներ, հնութիւններ, գիրքեր եւ այլն: Իսկ երբ որ իրի մը յարգը միայն քանի մը անձնական առանձին մարդիկներու նկատումէն յառաջ կու գայ, ան ատեն Անձնական արժէք կը զըցուի: Ասանկ են այլեւայլ ընտանիքներու վերաբերեալ բաները, զոր օրինակ ըսեմ Փրեզերիկոս Բ.ին, Նաբոլէոնին եւ այլն զդեասաները, կահ կարասիքը, որոնք Անգղիացիք ու Գերմանացիք շատ բարձր գնով ալ ըլլայ կը գնեն, ազգականաց կամ սիրելի անձանց պատկերները եւ այլն:

25. Մէկ նիւթի մը յարգը անոր օգտակարութեան աստիճանէն չչափուիր, այս ինքն իր մը որչափ որ օգտակար է, այնչափ ալ յարգի չըլլար, ինչու որ ամենէն աւելի օգտակար բաներ շատ անգամ կամ ամենեւին յարգ չեն ունենար եւ կամ շատ քիչ, զոր

օրինակ ջուրը, որ թէպէտ օգտակար է, բայց յարգչունի, անոր համար ալ ասանկ բաները առուտուրի նիւթ չեն ըլլար, ու ապրանք ալ չեն, բայց եթէ վրանին աշխատութիւն մը եղած ըլլայ. ինչպէս Աստանդնուպոլիս, ուր ջուրը՝ բերել տալու աշխատութեան համար արժէք ունի, ու կը ծախուի: Ա իէննա ալ Ալպերդեան ջրանցքները շինուելէն յառաջ քանի մը արուարձաններու մէջ ջուրը հրապարակաւ կը ծախէին:

Բայց ապրանքի մը արժէքը՝ անոր վրայ եղած աշխատութենէ, գործողին վարպետութենէն, ու անիկա պատրաստելու կամ յառաջ բերելու համար հարկաւոր նիւթերուն գացած ծախքէն կ'առնուի, նաեւ տեղւոյն կարօտութեանն ու հարկաւորութեանը նայելով, ապրանքին շատութենէն կամ քիչութենէն ալ շատ կախում ունի:

Ըսինք. Ա. Անոր վրայ եղած աշխատութենէն: Այն ապրանք մը յառաջ բերելու համար որչափ շատ ու երկայն ատեն աշխատելու ըլլանք, ան ապրանքին արժէքը այնչափ կ'աւելնայ: Այն որ ատաղձագործ (որօգրամճը) մը մէկ գրասեղան մը ութը օրուան մէջ եւ ուրիշ նոյն նիւթէ գրասեղան մը մէկ ամսուան մէջ լմընցընելու ըլլայ, երկրորդը աւելի սուղ պէտք է որ ծախէ, քան թէ առջինը:

Բ. Գործողին վարպետութենէն: Ապրանք մը յառաջ բերելու համար, հաւասար ատենի մէջ, որչափ աւելի որ վարպետութիւն պահանջուի, այնչափ ապրանքը աւելի արժէք կ'ունենայ:

Գ. Աւրիշ նիւթերու գացած ծախքէն: Արչափ աւելի գործիքի, մենքենայի, նիւթերու եւ այլն հարկաւորութիւն ըլլայ, եւ որչափ որ ասոնք սուղ ըլլան, անկից յառաջ եկած ապրանքն ալ այնչափ սուղ կը նսաի:

Դ. Տեղւոյն կարօտութեան նայելով՝ ապրանքին շատութենէն կամ քիչութենէն: Աստ ինքեան խօ-

սելով առ պայմանը չէ թէ արժէքին հապա զնոյն կը վերաբերի : Աթէ որ մէկ նիւթէ մը , որն որ յառաջ բերելու համար շատ վարպետութիւն , աշխատութիւն ու ծախք գացած ըլլայ , բայց հիմա (նորածու սովորութիւնը անցած ըլլալով) փնտռող չըլլայ , ստոյգ է «ալ հիմա արժէք չունի , բան չարժեր կ'ըսուի» , բայց աւելի «հիմա որոշ գին չունի» , պէտք էր ըսել :

Նիւթ մը ան ատենն ալ աւելի մեծ յարգ կ'ունենայ , երբ որ անիկա շատ օգտակար ու գծուարաւ գտնուելու բաներու տեղ դիւրաւ կրնայ գործածուիլ :

26. Աս ընդհանուր սկզբունքներէն գանք առանձինն առուտուրի նկատմամբ ապրանքներուն արժէքը նայինք : Ապրանքի մը արժէքը՝ առուտուրի նկատմամբ ան ապրանքին համար եղած ու գեռ ըլլալու ծախքերէն , վրան եղած աշխատութենէն , ու ապրանքին արժէքը ձեռք բերելու վտանգներէն կ'առնուի :

Առուտուրի նկատմամբ ապրանքի մը արժէք ըսելով՝ առանձինն կ'իմացուի անիկա ծախու առնելու ատեն տրուած գինը , բոլոր տանելու բերելու համար գացած ծախքերը . իսկ արուեստանոցի նկատմամբ ապրանքի մը արժէք կ'ըսուի անգործ նիւթին , անոր մասունքներուն , ու գործելուն կամ աշխատութեան վարձքին եւ այլն տրուած ծախքերը , արուեստանոցին վարձքը (+էրան) , մենքենաներու պահպանութեան գացած ծախքը եւ այլն : Ասոնցմով արուեստանոցի ապրանքին գինը կ'որոշուի , բայց վրան աւելցրնելու է նաեւ վտանգը որ քիչ մը յառաջ զրուցեցինք : Աթէ որ շատ անգամ ապրանքը յաջողութեամբ պատրաստուի , բայց անգամ մ'ալ դժբաղդութիւն մը պատահելու ըլլայ , զոր օրինակ լուսաբեր (ֆոֆոթ) շինելու ատեն՝ սրուակին մէկը յանկարծ ճաթի , ու նիւթը կորսուի , ան ատեն առ կորուստը՝ յաջողածներուն վրայ Հաւասար պէտք է բաժնել , առ մասն ալ արժէքին կը վերաբերի :

27. Առուտուրի մէջ ապրանքի մը համար առնուածը կամ պահանջուածը, ան ապրանքին գինը կ'ըսուի: Թէ որ աս գինը որոշելը սակարկողներուն (խառն ընդունեալ) կամքին թող տրուած է, ան ատենը Վաճառատեղեաց կամ Շուկայի գին կ'ըսուի, բայց թէ որ տէրութիւնը կամ կառավարութիւնը գրեթէ որոշեր է, գնատութիւն կամ գնարկութիւն (նոր) կը զըցուի: Թէ որ ապրանքի մը համար՝ ունեցած արժէքէն աւելի բան պահանջուելու ըլլայ կամ տրուի, ան ապրանքը Սուղ կամ Թանկ կ'ըսուի, բայց երբ որ անկից աւելի քիչ տրուի կամ պահանջուի Աժան, Գիւրագին, Թեթեւագին կը կոչուի:

Ան ապրանքները՝ որոնք սովորաբար կը փնտռուին ու կը գործածուին, երկու գին ունին, մէյ մը Որոշեալ ու սովորական, մէյ մ'ալ Անորոշ: — Ար ապրանքները որ աւելի հարկաւոր են, եւ կամ աղէկութիւննին մի եւ նոյն որպիսութենէ կախում ունի, գիներնին աւելի հաստատուն, որոշ ու տեւական է, քան թէ քիչ հարկաւոր ապրանքներունը. անոր համար ալ շաքար, խահուէ, բրինձ աւելի հաստատուն գին ունին, քան թէ գեղորայները եւ կամ ներկերը: Անոր համար թէ որ ասանկ ընդհանուր գին ունեցող ապրանք մը, զոր օրինակ 100 զուրուշ արժելու ըլլայ, նոյն տեսակը այլեւայլ վաճառականներէն գնելու ըլլա՞ս՝ հազիւ գնոյն մէջ հարիւրին մէկ կամ երկու տարբերութիւն կը գտնես. բայց ասոր հակառակ անանկ ապրանքներ որ այլեւայլ որպիսութիւն ունենան, որն որ առջի բերան նայելնուս չենք կրնար ճանչնալ, 60, 80 ու 100 զուրուշով ալ կրնան ծախուիլ: Ինչպէս քրքումը (սֆրան) եւ այլն:

28. Ստակի ձեռքով՝ ապրանքի մը արժէքը եւ գինը որոշելը շատ գիւրինցած է, ինչու որ ապրանքի մը արժէքը ան ապրանքին համար ուղղակի կամ անուղղակի ծախք եղած ստակներուն գումարին հաւասար է: Ասկից կը հետեւի որ ապրանքի մը համար

պահանջուած գինը թէ որ ծախողը բնական համեմատութիւնը պահել կ'ուզէ, ու փաս ընել չուզեր, աս գումարէն վար չկրնար ըլլալ: Արդ հիմա սկսինք քննել, թէ ինչպէս պէտք է ընել, որ աս համեմատութիւնը ճշգիւ պահուի:

Առուտուրին անմիջական ու զլիաւոր վախճանը վաստակը ըլլալով, յայտնի բան է, որ վաճառականը թէ որ առուտուրի մէջ վաստակիլ կ'ուզէ, իրօք կամ համեմատութեամբ աւելի պիտ'որ առնու քան թէ տայ: Ասոր համար կը պահանջուի, որ վաճառականը յառաջուց գիտնայ թէ սա ու սա ապրանքը բոլոր ծախքերովը մէկտեղ իրեն ինչ արժեց, որպէս զի աս գտած արժէքէն կարող ըլլայ ան ապրանքին տեղը ընդունելու գինը որոշել, որմէ իր վաստակն ալ կը կախուի: Աս ծախքերուն գումարները ու նաեւ ամէն պարագաները, որ ապրանքին արժէքին, սրով եւ անոր գնայն վրայ ազդեցութիւն մը ունին, աղէկ պիտ'որ քննէ ու հաշուէ:

Ապրանք մը երկու տեսակ ծախք ունի, մէյ մը Յայտնի որն որ Աւղղակի ալ կ'ըսուի, մէյ մ'ալ Անյայտ կամ Անուղղակի: Ապրանք մը առնելու համար տուած ստակնիս, տեղէ մը ուրիշ տեղ փոխադրելու համար բրած ծախքերնիս (կրողէք, տանողէքը) եւ սուրիշ ասոնց նման ան ապրանքին վերաբերեալ անմիջական ծախքերը, ապրանքին յայտնի ծախքերն են, որոնք հաշուելը շատ դիւրին է, ինչու որ ասանկ ծախքերու համար սովորաբար առձեռնպատրաստ դրամ տուած կ'ըլլանք: Բայց աս անմիջական ծախքերէն դուրս ապրանքի մը վրայ անուղղակի եղած ծախքեր ալ կան, որոնք հաշուելը դիւրին չէ. անոր համար ալ մտադիր քննութեան ու զգուշաւոր հաշիւներու կարօտ է: Ասանկ անուղղակի ծախքերուն տակը կ'երթան ան ամէն ծախքերը, որոնք որ առուտուրը յառաջ տանելու վախճանաւ կ'ընես, ինչպէս են ան անձինքներու տուած ստակը, որոնք միայն վաճա-

աականութեան գործքիդ համար կը պահես, դար-
 ձեալ քու սեպհական եւ կամ առուտուրի գործքիդ
 համար պարտք առած գումարիդ տոկոսիքը, առու-
 տուրի համար շտկած կահուց ու կարասեաց վրայ
 կեցող գրամագլխոյն տոկոսիքը, վարձքով բռնած
 բնակութեանդ, խանութիդ ու մթերանոցներուդ
 (Տաղաղաներուդ) համար տուած տարեկան վարձքդ,
 եւ կամ թէ որ աս շէնքերը քու սեպհական ստա-
 ցուածներդ են, անոնց համար տուած ստակներուդ
 տոկոսիքը, առուտուրի ու անոր գործածած գրամա-
 գլխոյդ պատճառաւ վճարած բոլոր տուրքերն ու հար-
 կերը: Աս անուղղակի ծախքերը հաշուելը ասանկ
 կ'ըլլայ: Պէտք է, առանց մէկ որոշ ապրանքի մը
 վրայ կապուելու, աս կերպով դուրս տուած այլեւայլ
 ստակներուդ համար, որոնք ետքէն առուտուրին շա-
 հովը մէկտեղ ձեռք ձգելու միտք ունիս, որոշ ժամա-
 նակ մը որոշել (զոր օրինակ մէկ տարի) ու այնչափ
 ատենի մէջ եղած անուղղակի ծախքերը իրենց տոկո-
 սիքովը մէկտեղ հաշուելով, իւրաքանչիւր ապրանքին
 վրայ համեմատութեամբ բաժնել: Աս անուղղակի
 ծախքերուն կարգն են նաեւ ապրանքը ծախելու ատեն
 ըլլալու կորստեան վտանգը ու ամէն այլեւայլ դի-
 պուածներով [զոր օրինակ են փոխադրութեան (trans-
 portի) ժամանակ եղած կարելի վտանգները, պարտա-
 պանին սնանկութիւնը եւ կամ ուղելով ալ չվճարելը
 եւ այլն,] եղած կամ ըլլալու կորուստները, որոնք
 ամէն տեսակ գործքի ու առուտուրի մէջ կրնան պա-
 տահիլ: Ասոնք ալ առջիններուն կերպովը հաշուելով
 հարիւրին մէկ քանի ամէն մէկ ապրանքին վրայ զար-
 նելու է: Ասոնք մէկիկ մէկիկ մանրամասն մեկնենք:

Ա. Ամենէն գլխաւորն է ապրանք մը գնելու կամ
 մեզի սեպհականելու համար, ան ապրանքին դիմացը
 տուած գիներնիս: Վայց թէ որ ապրանքի մը տեղ
 ապրանք կու տանք, առած ապրանքնիս ինչպէս
 պիտ'որ արժեցընենք. արդեօք տուած ապրանքնիս

զնած ատեննիս ըրած ծախքերնուս պիտ'որ նայինք, չէ նէ մեր սովորական ծախելու գիներնէս պիտ'որ շափենք: Յայտնի բան է որ առջի կերպը ապահով է, բայց աս ալ պէտք չէ մտնալ, որ եթէ տուած ապրանքնիս՝ քովերնիս երկայն ատեն մնացած է նէ, ան ատեն շատ աժան հաշուած կ'ըլլանք, թէ որ առջի գինին վրայ ոչինչ եւ կամ շատ քիչ բան մը աւելցրնենք:

Ա. Եթէ զնած ապրանքներնուս արժէքը փոխանակագրով պիտ'որ վճարենք, ան ատենուան փոխանակագրին ընթացքը (cours), եւ գլխաւորաբար ան գինը, որով փոխանակագիրը յանձն առինք, ապրանքին վրայ հաշուելու ծախքերնիս ճիշդ կը ցուցնէ:

Բ. Ապրանքը զնելու համար վաճառատեղիները պարտելու ծախքերը: Այս ինքն երբ որ ապրանք զնելու համար անձամբ ճամբորդութիւն կ'ընենք եւ կամ զնելու համար մարդ կը խաւրենք, ասոնց համար եղած ծախքը՝ առձեռնպատրաստ դրամ տուած ծախքերու կարգը կը գրուի: Իսկ երբ որ դորձակատարներու կամ յանձնառուներու (+սխիւնձուներու) ձեռքով ապրանք կը զնենք, ան ատեն թղթաբերին տրուած ստակը ու յանձնառուին տրուած յանձնառուչէքը (provision) աս ծախքերուն կարգը սեպելու է:

Գ. Ապրանքի մը մէկ տեղէ ուրիշ տեղ տանելու համար ըրած ծախքերնիս, որուն տակը կ'երթան, Ա. կրողէք կամ տանողէք, Բ. մաքս, տուրք եւ այլն, ու Գ. ապրանքը ուղեւորողին վարձքը կամ ուղեւորչէքը:

Դ. Ապրանքը փոխադրելու ատեն կորըստեան եղած վտանգը: Աս վտանգէն ազատելու համար, ապրանքը կրնաս ապահովցրնել (սխիւնձու ընել), ան ատենը ապահովցրնելու համար տուած վարձքդ հաշուելու ես. բայց ասոր կերպին վրայ ետեւէն եկած գլուխներուն մէջ երկայն պիտ'որ խօսինք: Ասանկ գէպքերու մէջ վաճառականը կրնայ այնպէս ենթա-

դրել, որ ապրանքին բուն տէրը ապահովուցած ըլլայ, ու ապահովորեն զացած ծախքը ապրանքին գնոյն վրայ զարկած ըլլայ:

Ե. Չափերու ու կշիռներու տարբերութիւնն ալ նայելու է: Արովհետեւ ապրանքի մը վրայ դրած ու որոշած արժէքնիս մեր քաղքին ստակովը, չափովն ու կշռովը չափուած են, անոր համար աս չափերը կամ կշիռները փոխուելու ըլլան, նոյն համեմատութեամբ ապրանքին գինն ալ կը փոխուի: Օր օրինակ Տաճկաստանի կանգունը Աիէննայի կանգունէն գրեթէ $\frac{5}{22}$ օտք պզտիկ է, անոր համար թէ որ մէկը Տաճկաստանի կանգունին վրայ չափելով, կանգունը ասոչափ դուրուշով ապրանք մը գնած է նէ, Աիէննայի կանգունով նոյնչափ դուրուշի չկրնար ծախել. պէտք է արժէքը որոշելու ատեն աս երկուքին տարբերութիւնները քննել, ու անոր համեմատութեամբ գին գնել. ապա թէ ոչ մնաս կ'ընէ:

Զ. Պէտք է տեղւոյն օրինաւոր եւ կամ սովորութեամբ ընդունելի եղած պայմաններուն ալ միտ գնել, զոր օրինակ են ապրայ (արտ), ձիւր կամ աւելի տուած մասդ (ճարտ), զանազան հաշիւներէն վար առնուածները, որոնք ապրանքին գինը կրնան աւելցընել կամ պակսեցընել:

Է. Աճառականութեան գործքը յառաջ տանելու համար եղած ծախքերը, զոր օրինակ թղթաբերի վճարուած ստակը, միջնավաճառներու (Բեւելներտ) տրուած վարձքը, անցագիր (Գորտարտ) առնելու համար եղած վճարմունքը եւ այլն:

Ը. Օտխած ապրանքին գինը ձեռք բերելու համար եւ կամ առած ստակը ուրիշ տեղ անցընելու համար եղած ամէն ծախքն ու կորստեան վտանգը: Ասոր տակ կ'երթան տուած գրամաշահ (Մէտարտ), փոխանակագրերու ընթացքին մէջ եղած կորուստը, փոխանակագրի միջնավաճառներուն վարձքը, մէկ տեղաց ուրիշ տեղ առձեռնպատրաստ գրամ խրկելու

ատեն տէրութեան եղած վճարմունքը եւ այլն : Մեծամեծ կորուստներ կ'ունենայ վաճառականը թէ որ ասանկ բաները հաշուելու անհոգ ըլլայ, որոնք շատ անգամ առանց զգալու ապրանքին արժէքին վրայ մեծ ազդեցութիւն կ'ընեն : Մըշտի վաճառականներ, արուեստանոցներու ու գործատուներու տէրեր ասոնց միտ չդնելով կործանած են ու կը կործանին :

Թ. Ապրանքի մը վրայ կեցած դրամագլխոյն տուկոսիքը, որն որ ան ապրանքը գնելու ատեննէդ մինչեւ ծախսելէն ետքը ստակը առնելու ատենդ ան դրամագլխէն կրնայիր ունենալ :

Ստակ ըսած բանդ արդէն ինք իրմէ շահ կը բերէ, հարկ չկայ որ աշխատիս կամ առուտուր ընես : Արդ երբ որ առուտուրի մէջ առձեռնպատրաստ դրամով ապրանք մը գներ ես, ու ապրանքը առանց ծախուելու քովդ մնացեր է, ան ապրանքին տեղ վճարած ստակդ մեռած դրամագլուխ մըն է, այս ինքն ըսել կ'ուզեմ շահ մը չբերեր : Այց որովհետեւ վաճառական մը առանց ապրանք գնելու չկրնար առուտուր ընել, բայց գնած շատ ապրանքներն ալ մէկէն չկրնար ծախել, ուստի աս ստակը շահաբեր ընելու համար, ապրանքը ծախելու ատենդ ան տոկոսիքը կամ շահը, որն որ մինչեւ ան ատենը մեռած դրամագլխէն կրնայիր ունենալ, ապրանքին վրայ զարնելու ես : Ապա ուրեմն թէ որ առուտուրի մէջ վաստակը՝ ան շահէն աւելի չըլլար, որն որ մեռած դրամագլուխ մը ապրանքը գնած ատենէն մինչեւ ծախելու ատեն կրնար բերել, յայտնի բան է որ բուն առուտուրի վաստակ չէ : Արամագլխոյ մը տոկոսիքը (թէ դրամագլուխը քու ստացուածքը ըլլայ, եւ թէ կամ ամբողջ եւ կամ ըստ մասին փոխ առած ըլլաս) միշտ զուտ ելք է, անոր համար ալ թէ որ մնասական ելլել կամ կործանիլ չես ուզեր, պէտք ես ապրանքին վրայ զարնել :

Աս տոկոսիքը հաշուելու համար ան ապրանքին կանուխ թէ ու ծախուիլը յառաջուց իմանալու է,

ան ապրանքէն որոշեալ ատենի մէջ նրչափ քշուիլը, ու առուտուրին համար դրած դրամագլխոյն շրջանը նոյն ժամանակին ու տեղւոյն հանգամանացը հետ համեմատելու է: Աս բանիս վրայ այսչափ միայն ընդհանուր խօսելով կը շատանանք, վասն զի քաջ, տեղեակ ու վարժ վաճառականը իրեն անձին, առանձին գործքին ու ներկայ վիճակին առուտուրը ու անոնց պարագաները աւելի աղէկ գիտնալով ու ճանչնալով, աս կերպ հաւանականութիւնները աւելի աղէկ կրնայ դուշակել քան թէ մենք հոս տեսական կերպով երկայն բարակ խօսելու ըլլանք: — Ասածներնէս կը հետեւի, որ եթէ ապրանք մը երկայն ատեն մնալու ըլլայ, աւելի սուղ կ'ըլլայ, քան թէ քիչ ատենի մէջ ծախուի լմրննայ: Շատ գործատուներ իրենց ապրանքներուն գիները այնպէս որոշած ու կարգաւորած են, որ արդէն որոշեալ ժամանակուան համար կեցած կամ կենալու դրամագլխոյն տոկոսիքը յառաջուց հաշուած ու ապրանքին վրայ աւելցուցած են. թէ որ գնողը մէկէն շուտով վճարէ կամ թէ շատ չյապաղէ, ան ատեն երկայն ատենի համար հաշուած տոկոսիքը գործատան որոշուած գինէն վար կ'առնուն:

Ժ. Ան դրամագլխոյն տոկոսիքը, որն որ առուտուրին համար որոշուած շէնքերուն վրայ կը կենայ, եւ կամ անոնց պահպանութեանը համար կը տրուի. իսկ թէ որ շէնքերը քուկդ չեն, ան ատեն վարձքով բռնածներուդ ծախքը հաշուելու ես:

ԺԱ. Առուտուրի համար հարկաւոր մարդիկներուդ առձիկները եւ ուրիշ առուտուրի վերաբերեալ ծախքերը, ինչպէս թղթի, նամակի եւ այլն:

Աս վերջին երկու (Ժ ու ԺԱ) թուերուն մէջ նշանակած ծախքերը պէտք է ասանկ հաշուել. մէկ տարուան մէջ եղածները գումար ընելու ժողովելու է, պէտք է բոլոր տարուան մէջ եղած առուտուրի շրջանին հետ համեմատել, ու հարիւրին քանի որ կը ցուցրնէ՝ ան համեմատութեամբ ապրանքներուն գինը աւելցրնելու է:

Մտենք թէ աս տեսակ տարեկան ծախքերդ 1000 զուրուշ եղած ըլլայ, ան ատեն՝ թէ որ բոլոր տարուան մէջ հարիւր հազար զուրուշի առուտուրի շրջան եղած է նէ, այս ինքն 100,000 զուրուշի ապրանք ծախած ես նէ, 100 ին մէկ կ'ելլէ, որն որ ապրանքներուն գնոյն վրայ պէտք է զարնել:

ԺԲ. Տուրքերն ու հարկերը, որոնք վաճառականը իր առուտուրին ընդարձակութեան, ու անոր գործածած դրամագլխոյն համեմատութեամբ պիտ'որ վճարէ:

ԺԳ. Օտխելու ատենդ եղած վտանգը կամ սնանկութիւններով, պարտապաններուն խաբէութեամբ շվճարելովը, եւ ուրիշ այլեւայլ դժբաղդութիւններով բրած վնասդ:

Ամէն գնողները միշտ իրօք չեն վճարեր, ոմանք ապրանքը գնելէն ետքը անանկ վիճակի մէջ կ'իյնան, որ վճարելու կարողութիւն չեն ունենար, ոմանք ալ խաբէութիւն կ'ընեն, ապրանքը կամ ստակը մէյ մը ձեռք ձգել կ'ուզեն, առնելէն ետքը՝ վճարելու ժամանակը կու գայ նէ, չեն վճարեր, երկայն ատեն կ'ուշացընեն, ունեցած պարտքերնէն մաս մը չեն վճարեր, եւ կամ շատ անգամ ամենեւին չեն վճարեր: Ամէն վաճառական ասոնց փորձը գրեթէ ամէն օր կ'առնու, բայց մէկը շատ՝ մէկը քիչ: Աս շատութիւնը կամ քիչութիւնը վաճառականին ուրիշին փոխ տուած ատենը բրած քննութենէն ու զգուշութենէն, ժամանակին պարագաներէն, աղղի մը բարոյական բարութենէն ու անխարդախ բնութենէն, աղէկ վիճակի մէջ գտնուելէն ու ունեցած օրէնքներէն կախում ունի: Վանի մը տարի յառաջ Աւստրիական տէրութեան մէջ կային գաւառներ, ուր ունեցած պահանջքդ դժուարաւ կրնայիր առնուլ, ինչու որ աս տեղերը փոխանակագրի դատաստան չըլլալով, սնանկացած մարդիկներուն փոխանակագրերը չէին կրնար դիւրաւ գատաստանաւ բռնագատել ու պահանջել: Ասանկ երկիրներու հետ առուտուր ընողը՝ պէտք է որ իր

ապրանքը սովորական ծախելու գնէն շատ աւելի վեր
 բռնէ, ինչու որ անանկ մարդիկներու հետ գործք
 անի, որ դժուարաւ կը վճարեն, ու անանկ վտանգի
 մէջ է, որ իր պարտապանը իրեն վրայ կ'իշխէ: Այս
 կան գաւառներ ալ, որոնց մէջ եղած ազգին ազնու-
 ական բնութիւնը, արդարութիւնը, աղէկ վիճակի
 մէջ գտնուիլը, օրէնքները, մանաւանդ շուտով դա-
 տաստան ընելով առնելիքը պահանջելը առջիններէն
 շատ տարբեր է: Աւստրիային օրինակէն աղէկ օգուտ
 կրնանք քաղել, երբ որ աս գաղափարով աշուրնիս
 անգամ մը մեր ազգին վրայ դարձնելու ըլլանք:
 Օրէնքները, ազգային վաճառականներուն բարոյական
 բարութիւնը ու անխարդախ բնութիւնը գլխաւոր հի-
 մերը պիտ' որ ըլլան, որոնց վրայ ազգերնուս վաճա-
 ռականութիւնը հիմնելով պիտ' որ կարող ըլլայ յա-
 ռաջանալ ու ծաղկիլ: (Ը) Ե որ ասոնք մեր ազգին մէջ
 պակաս են, ան ատենը շուսացուի որ ազգային
 վաճառականութիւնը յառաջ երթայ ու ազգը հարըս-
 տանայ: (Ը) Ե որ ազգի մը մէջ օրէնք, արդարութիւն
 ու դատաստան պակաս է, կամ ինչպէս որ պէտք է
 նէ՛ չէ, ո՞ր օտարականը ան ազգին վաճառականնե-
 րուն վրայ ապահով կրնայ ըլլալ: Ամ թէ որ ազ-
 գային վաճառականները արդար մարդիկ չեն, ո՞վ կը
 գտնուի որ անոնց բան մը հաւտայ: Ասանկ վաճառա-
 կանները նախ իրար ու ետքը օտարականները խաբե-
 լու ու նենգելու կը ջանան, մէկը մէկային ստակը
 սւտելու կը նային, որով ոչ ազգայինք իրարու եւ ոչ
 ալ օտարականները ազգայնոց վրայ համարում ու ա-
 պահովութիւն կ'ունենան: Ասանկ վիճակի մէջ ո՞ր
 հայը կամ եւրոպացին հայազգիի մը փոխ ստակ կրնայ
 տալ, ու կը յուսայ որ ետքը իր ստակը կրնայ ետ
 առնուլ կամ ո՞վ կը գտնուի որ ասանկ մարդու ապա-
 ռիկ (վերէնէն) ապրանք ծախէ: Ասով ազգին համա-
 րումը թէ օտարականներուն եւ թէ իր առջեւը մէկ
 ստակի կ'ըլլայ, ու ի վախճանի իր առուտունն ալ

կ'իյնայ, երբ որ մէկը իրեն հետ հաղորդութիւն չընէ: Հիմակուան ժամանակս ազգին ինչ բնութիւն ունենալը աւելորդ ու անօգուտ կը սեպենք հոս տեղս նկարագրել, մանաւանդ որ ազգերնիս զանազան կողմ ցրուած ըլլալով, աս նկարագիրը ընել անկարելի կ'ըլլայ: Բայց նորուս պատանիները՝ որոնք ետքը վաճառականութեան վիճակին մէջ պիտ'որ մտնեն՝ կը յորդորենք, ու անոնց առջեւը իբրեւ սկիզբ հաստատուն կը դնենք, որ անխարդախ բնութիւնը իրենց սեպահական ու հարկաւոր պայման մը սեպեն, ու թէ որքաջ ու միանգամայն աղէկ վաճառական կ'ուզեն ըլլալ աս ըսածնիս աչքերնէն չհեռացրնին:

Ասանկ ապրանքները ծախելու ատեն եղած վտանգները հաշուելը շատ դժուար է. վաճառականը պէտք է աղէկ ճանչնայ թէ պարտք տուած տեղը ինչպէս է, մանաւանդ երբ որ միայն հաւանականութեամբ պիտի գործէ: Շատ անգամ կը պատահի, որ ասանկ գործքի զբաղող մարդիկ շատ պարտապաններ ու կորսընցուցած (կամ ինկած) փոխանակագիրներ կ'ունենան, իսկ արկեղ մէջ քիչ ստակ. բայց զարմանալին ան է որ ասանկները մեծ հարստութիւն ունինք կը կարծեն, որ անոր հակառակն է, ու իրենց պարտքերն ալ վճարելու կարողութիւն չունին:

ԺԳ. ԱՎճառականին տարեկան ծախքը, որ իր տանը համար կ'ընէ: Ասոնք են գլխաւոր մասունքը, որոնցմով ապրանքի մը արժէքը կ'որոշուի: Բայց վաճառականը ապրանքը միայն այսչափ գնով չկրնար ծախել, ապա թէ ոչ՝ մնաստակար կ'ելլէ, այլ պէտք է որ աւելի ծախէ, ու ինչ որ աս զրուցածներնէս աւելի կ'առնու, ան իրեն վաստակն է, որով իր ստացուածքը կրնայ շատցրնել ու հարբստնալ:

Ապրանքներուն արժէքին որոշումը ասանկ մէկիկ մէկիկ զատելը շատ հարկաւոր բան է: Ասիկայ չգիտնալն է, որ գլխաւորաբար այնչափ սնանկութիւններու պատճառ կ'ըլլայ: Անտեղեակ ու անհմուտ թեթեւ

ամիս վաճառականը աս զրուցած կտորներնուս մէջ
 դիւրաւ կրնայ խաբուիլ: Ասանկները իրենց մէկ հաս-
 տատուն գոյք (Fondo) ու ստացուածք մը ձարելու,
 ու իրենց առուտուրին կենդանութիւն տալու եւ ապ-
 րանքները շուտով քշելու մտքով ապրանքը ծախելու
 համար հարկաւոր եղած դնէն դիւրաւ ու առանց զգա-
 լու այնչափ վար կ'առնուն ու չեն հաշուեր, որչափ
 որ իրենց կարծած վաստակը կը պարունակէ, բայց
 ետքէն ուրիշ կողմանէ իրենց օգնութիւն մը չկրնալով
 գտնել, իրենց վաճառականութեան տանը նախատինք
 բլլող միջոցներ ձեռք կ'առնուն, ու կը տեսնեն յայտ-
 նապէս որ պղտիկ ու շնչին բան մըն էր, որն որ անհո-
 գութեամբ կամ մոռացմամբ չհաշուելով ասանկ շա-
 րեաց պատճառ եղեր է:

Աս տեղս պատշաճ կը համարինք մասնաւոր կերպով մը
 վարպետները յորդորել, որ ասանկ օգտակար նիւթ մը աշ-
 կերաներնուն միտքը հիմնովին խոթելու աշխատին, ու մեր
 ասոր մէջ համառօտութեան համար ամէն մէկ գլխուն մէյ-
 մէկ օրինակ չդնելնուս թերին իրենք լեցընեն իւրաքանչիւր
 տեղոյ իր յարմար օրինակը տալով:

29. Ապրանքի մը բոլոր թէ հեռաւոր եւ թէ մեր-
 ձաւոր ծախքերը քննելէն ետքը ներքուստ ասոր հետ
 կապակցեալ բան մ'ալ կայ քննելու, այս ինքն թէ
 քաղաքային ընկերութեան կամ առուտուրի մէջ ապ-
 րանքի մը դինը (ինչպիսի բերք որ բլլայ թէ բնական
 թէ արուեստական) ինչ բանի նայելով կ'ելլէ կ'իջնայ,
 եւ թէ ասիկայ ինչ բանով հաւանականաբար յառա-
 ջուց կրնայ գուշակուիլ: Թէպէտեւ ասիկայ քննելը
 կէս մը բուն առուտուրի գլխոյն կը վերաբերի, կէս
 մ'ալ դիտողութեան (սէֆտ-լայն), բայց մենք նոյն
 նիւթին վրայ եղած գլխաւոր մասնաւոր մասերը ան
 գլուխներուն թող տալով ընդհանուր սկզբունքները
 հոս տեղս կը դնենք:

Ապրանքի մը արժէքը անոր օգտակարութենէն
 կ'առնուի, բայց անիկայ ձեռք ձգելու դիւրութիւնը
 կամ դժուարութիւնն ալ մէկտեղ մտածելով, իսկ

Գինը արտաքին պարագաներէ, այս ինքն ապրանքին քիչ կամ առատ գանուելէն ու քիչ կամ շատ փրնտուուելէն կ'առնուի: Աս ըսածներնէս կը հետեւի, որ ապրանքի մը գինը կ'որոշեն,

Ա. Ապրանքին շատութեան՝ գործածական ըլլալուն աստիճանին հետ ունեցած համեմատութիւնը: Ապրանքէ մը որչափ շատ գանուի կամ յառաջ բերուի ու պատրաստուի, եւ որչափ որ գործածութիւնը քիչնայ ու նուազի, անոր գինը այնչափ կ'իյնայ ու կը նուազի. նոյնպէս՝ որչափ որ ապրանք մը քիչ ըլլայ ու որչափ որ գործածութիւնը շատնայ, ան ապրանքին գինը ան համեմատութեամբ կը բարձրանայ:

Բ. Ապրանքին մթերքը կամ համբարը հաւասար եղած ատեն, գնողներուն քիչութիւնն ու շատութիւնը կամ որ նոյն բան է, ծախողներուն ու գնողներուն համեմատութիւնը: Ապրանք մը որչափ շատ որ փնտուուելու ըլլայ, կամ որչափ որ քիչ գանուի, այնչափ աւելի կրնայ սղնալ:

Գ. Ծախու նիւթերուն, ստակին հետ ունեցած համեմատութիւնը: Մէկ տեղ մը՝ որչափ որ ստակը շատնայ, ապրանքներն ալ այնչափ կը սղնան. ու ասոր հակառակ որչափ որ ստակը քիչնայ, ու առձեռնպատրաստ ստակ շատ փնտուուի, այնչափ ալ ապրանքները կ'աժըննան: Գիններն ու աշխատողներուն վարձքը որոշելու ատեն, միտ դնելու է որ ասիկա հաշուելը շմուցուի:

Դ. Ապրանքին հետ կապակցեալ ելքը, ինչպէս են դրամագլուխը, աշխատաւորներուն տրուած վարձքը, մենքենաները, ժամանակի կորուստը եւ այլն: Ասիկց կը հետեւի որ ապրանք մը քիչ քիչ կամ թէ պղտիկ քանակութեամբ ծախուելու ըլլայ նէ, աւելի սուղ պիտ'որ ըլլայ, քան թէ շատը մէկտեղ: Մտածէ մէյ մը, որ նպարաւաճառը մէկ կամ կէս օխայ կամ 50 արամ ապրանքը կշուելու համար, նոյնպէս գեղագործը ան քանի մը տրամ նիւթերը բաղադրելու,

տուփերու մէջ գնելու, գիրք անցընելու համար որ-
չափ պիտ'որ աշխատին:

Ե. Պահանջուած ճարպկութիւնն ու աշխատու-
թիւնը:

30. Առանձինն շինելու կամ պատրաստելու
ապրանքներուն գինը կ'որոշեն:

Ա. Անիկա պատրաստելու համար հարկաւոր եղած
գլխաւոր նիւթին ու նաեւ անոր վերաբերեալ երկրոր-
դական նիւթերուն գինը:

Բ. Ապրանքը պատրաստելու համար գործածուած
միջոցները, զոր օրինակ են գործիքները, մենքենա-
ները, շէնքերը ու ասոնք պահպանելու համար եղած
ծախքերը եւ այլն: Ասոնց վրայ կեցած դրամագլխոյն
տոկոսիքը, զանոնք պահպանելու ծախքերը, ու նոյն
իսկ դրամագլուխը, երբ որ գործիքները, մենքենա-
ները եւ այլն ալ չեն գործածուիր, պէտք է պատրաս-
տուած ապրանքին վրայ զարնել:

Գ. Ապրանքը պատրաստուելուն գացած ժամա-
նակի կորուստը, ու ան ապրանքին յաջողելուն ստու-
գութեան աստիճանը: Ինչպէս ըսենք հայլի շինելու
ատեն կամ քիմիական գործողութեանց մէջ եւ այլն
ապակիին ճաթիլը, որն որ մէկալ յաջողածներուն
վրայ պիտ'որ զարնուի:

Դ. Ան ապրանքները պատրաստելու համար պա-
հած բանուորներուդ գացած ծախքը:

Ե. Պատրաստելու ու յառաջ բերելու համար
պահանջուած յաջողակութիւնը կամ վարպետու-
թիւնը, ու աս յաջողակութիւնը ստանալու համար
սորված ատենդ ըրած ծախքերդ:

Զ. Ապրանքին հարկաւորութեան համեմատու-
թեամբ բանուորներուն շատնալը կամ պակսիլը:

Է. Ապրանքին հարկաւորութեան կամ փնտռուե-
լուն համեմատութեամբ, պատրաստողներուն շատու-
թիւնը կամ քիչութիւնը:

Ը. Գործքը լմնցրնելու դադար ժամանակին երկայնութիւնը, ան ալ գործողին կամ աշխատողին պահպանութեանը հարկաւոր եղած ծախքին հետ համեմատելով: Օր օրինակ նկարիչը, քանդակողը, եւ ուրիշ արուեստաւորներ, մանաւանդ ուսումնականները օրուան մէջ քանի մը ժամ միայն կրնան գործել, բայց անով այնչափ պէտք են վաստակիլ որ մէկալ ժամանակներուն տեղն ալ ըլլայ, որ կարող ըլլան իրենց վիճակին համաձայն ապրիլ: Վաղաքական ընկերութեան մէջ ամէն աշխատող իր վիճակին, իր լուսաւորութեանը նայելով, իրմէ ստորին վիճակի մէջ գտնուող մարդիկներուն պէս շիրնար ապրիլ, թէ նիւթական եւ թէ բարոյական կարօտութեան կողմանէ նայելով: Աղի հանքերուն մէջ աշխատող գործավարը քիչ ստակով օրը կ'անցընէ, բայց ուրիշ արուեստաւոր մը պէտք է որ քսան, քսանուհինգ զուրուշ օրը վաստակի, որ իր վիճակին նայելով մէկալին պէս շափաւոր կեանք անցընէ:



ԱՌՈՒՏՈՒՐԻ ՈՒՍՄԵՆ ՎՐԱՅ

31. Աս գլխուս մէջ, որն որ վաճառականութեան ուսման երեւելի ու հարկաւոր մասերէն մէկն է, պիտ'որ խօսինք նախ՝ Առուտուրի վրայ ընդհանրապէս ու առանձինն անոր ճիւղերուն վրայ, երկրորդ՝ գնելու վրայ, երրորդ՝ ծախելու վրայ, չորրորդ՝ վճարելու վրայ, ու հինգերորդ՝ ապրանքներու ուղեւորչութեան (expéditionի) վրայ:

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Ա

ԱՌՈՒՏՈՒՐԻ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՈՒ ԱՌԱՆՁԻՆՆ
ԱՆՈՐ ՃԻՒՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ

32. Թէ որ Առուտուր անունը ընդարձակ մտքով առնելու ըլլանք, մէկ բան մը տալ ու անոր տեղ ուրիշ բան մը առնուլ կ'իմացուի, բայց ամփոփ մտք առնելով, Առուտուր ըսելով ան մարդիկներուն զբաղմունքը կ'իմանանք, որոնք խել մը ապրանք կը գնեն ան վախճանաւ, որ անիկա առանց փոփոխելու նոյն վիճակին մէջ իրենց շահովը որ ինչ եւ իցէ կերպով կամ ապրանքի տեղ ապրանք փոխանակելով եւ կամ ծախելով ձեռքէ հանեն: Արչափ ապրանքի որ տեսակ կայ, ու քանի կերպով որ իրարու հետ փոխանակութիւն կրնայ ըլլալ նէ, այնչափ ալ առուտուրի տեսակ կայ:

Թէ որ վաճառական մը իր հաշուին, այս ինքն իր շահուն կամ վնասուն՝ առուտուր կ'ընէ, ան ատեն աս առուտուրը Սեպհական առուտուր կը կոչուի. բայց երբ որ ուրիշի մը համար կը գնէ կամ կը ծախէ, ան ատեն իր գործքը կամ զբաղմունքը՝ Յանձնարարութեան առուտուր կամ Յանձնարարութիւն կ'ըսուի: Ինքը՝ որ յանձնարարութիւնը կը կատարէ Յանձնառու (+սփոխնձու), անիկա՝ որուն համար որ աս առ-

ուսուրը կ'ընէ կամ որն որ իրեն յանձնարարութիւն կ'ընէ, Յանձնարարող կը կոչուի. իսկ իր աշխատութեանը համար աս մարդէն առած վարձքը՝ Յանձնարողէք կը զոցուի:

Առուսուրը՝ ծախուած նիւթին մեծութեանը կողմանէ մտածելով կը բաժնուի Մեծ կամ Բոլորական ու Փոքր կամ Մասնական, իսկ տէրութեան կամ ազգի նայելով՝ Ներքին ու Արտաքին, տեղւոյն կողմանէ՝ Արեւելքի, Արեւմուտքի, կամ նաեւ Անգղիական, Տաճկաստանի, Հայաստանի առուսուր եւ այլն
 Առուսուրը՝ նիւթին կողմանէ մտածելով կը բաժնուի Ապրանքներու առուսուրի, որուն գործքը՝ անգործ կամ գործուած, բայց բուն յատուկ ապրանքներու հետ է, մէյ մ'ալ Ստակի, Փոխանակագրերու (+աւելնէր--), Բաժանորդութեան թղթերու (+աւելնէր--) առուսուր եւ այլն, որոնք բուն ապրանք չեն, հապա ապրանք եղած իրեր են:

Ա. Աւելնէր-- -- -- -- --

33. Ամենէն աւելի բնական ու բուն յատկապէս աւելալ առուսուրը Ապրանքներու առուսուրն է: Ապրանքներ ճանչնալու ու անոնց արժէքն իմանալու բաղձանք ունեցող վաճառականը կէս մը ապրանքներ ճանչնալու ուսման (տես Հ. 6) ու կէս մ'ալ մեր վերը Ապրանքներու վրայ գրած յօդուածին կը խաւրենք: Իսկ թէ ինչպիսի ապրանքներ գնելու է, կամ թէ հաւանականաբար որ ապրանքը շուտով ու աւելի շահով կրնայ ծախուիլ, ասոնց վրայ դիտողութեան գլխոյն մէջ երկայն պիտ'որ զբուցենք: Հոս խօսելիքնիս գլխաւորաբար ապրանքի առուսուրին այլեւայլ տեսակներուն կամ այլեւայլ տեսակ գործատուններու ու անոնց առուսուրին սեպհական ընդհանուր սկզբունքներուն վրայ պիտ'որ ըլլայ:

34. Ուր տեղ որ տեսակ մը ապրանք աւելի կը քշուի կամ կը ծախուի, նոյն տեղը խանութները աւելի կը

պարզին, կ'ուղեմ ըսել կը բաժնուին, ու խանութ-
պաններ կ'ելլեն, որոնք օրինակի համար՝ միայն խա-
հուէի առուտուր կ'ընեն, ուրիշները միայն եղ կը
ծախեն, եւ այսպէս առուտուրը զանազան ճիւղեր
կը բաժնուի: Ասիկա շատ օգտակար է թէ՛ ծախող-
ներուն եւ թէ՛ գնողներուն, ինչու որ ասով թէ՛ շատ
ապրանք կը ծախուի, եւ թէ՛ ապրանքները կրնան
ածրննալ: Ասոյց պղտիկ տեղեր մէկ ապրանքով
միայն առուտուր ընելը անկարելի է, անոր համար
գիւղաքաղաքներու մէջ ասոր հակառակը կը տեսնուի,
ուր խահուէ, շաքար ծախողը՝ լաթ ալ կը ծախէ:
Ասոյց որովհետեւ մէկ ապրանքով միայն առուտուր
ընող շատ քիչ կը գտնուի, անոր համար ալ եղած
վաստակը բոլորէն մէկտեղ կ'ըլլայ, եւ ոչ թէ
մէկ հատէն միայն, ու ամէն մէկ հատէն ալ շահ
դժուարաւ կ'ըլլայ: Արչափ որ առուտուրիդ նիւթերը
շատ ու տարբեր են, այնչափ ալ անոնց մէջ շատ
ապրանքներ կը գտնուին, որ անոնց ծախուելու տա-
րիներով քովդ կը մնան, անանկ որ ապրանք կ'ըլլայ,
որուն վրայ կեցող դրամագլխոյն եւ ոչ տակօսիքը
կրնաս հանել:

Վիխաւոր ապրանքներու առուտուրի տեսակները,
կամ թէ այլեւայլ տեսակ ապրանքները, որոնք սո-
վորարար մէկ խանութի մէջ կը ծախուին, են.

Վեղմլմճմի ապրանքներ կամ Գեղմլմներ: Ասոր
տակ կ'երթան ամէն գեղի համար գործածուած
անկային ու հանքային նիւթերը, զոր օրինակ խոտ
(թէյ, պատրինջ [օղմլ օրմմ], գափնիի տերեւներ
եւ այլն), Արմատ (ինչպէս գարծիլ [մմլմմ] եւ այլն),
Ծաղիկ (ինչպէս երիցուկ [լմլմմ], շամբուկ [լմլմմ]
եւ այլն), Հունա (ինչպէս անխոտն եւ այլն):
Վարձեալ կեղեւ, փայտ, խիժ, մետաղ, հող, բնա-
լուծութեամբ պատրաստուած ապրանքներ (ինչպէս
ծծմբոյ եթեր, քլորակերպ եւ այլն) եւ ուրիշ ամէն
կերպ նիւթեր, որ գեղի կը գործածուին:

Վարդապետական (Մաղաղաճրժի) աղբյուրներ, ինչպէս խաչուէ, շաքար, պղպեղ, թուղթ, քանի մը տեսակ գունաւորելու փայտեր եւ այլն, որոնք ծախողը Նպարաւաճառ, ու ծախելու տեղը Նպարանոց կը զբոսնի:

Վարդապետական (Թօհաֆճրժի) աղբյուրներ, ինչպէս են տիներ (խոհիներ), պահարաններ, խաղի թուղթ, գունաւոր թղթեր, նկարելու համար ներկեր (ոչոններ), գլխարկներ, ձեռնոցներ եւ այլն եւ այլն: Ասոնց խանութները Նորավաճառի խանութներ կը զբոսնին:

Վարդապետական (Գործարար) աղբյուրներ, որոնց տակն են շուխայ, մետաքսեղէններ, կերպասեղէններ ծախողներու խանութները:

Ղաթարար (Հարգճրժի) աղբյուրներ, որոնց տակն են ամէն փայտէ, սակրէ, եղջիւրէ, փղոսկրէ՝ ծախարակով գործուած ապրանքները (գնդակներ եւ այլն):

Վարդապետական (Սրտապետ) աղբյուրներ, որոնց տակը կ'երթան ամէն տեսակ ապակիները ու ապակիէ գործուած ապրանքները, ինչպէս են պատուհանի, հայլի ապակիներ, գաւաթներ, շիշեր, սրուակներ, ապակի խողովակներ եւ այլն:

Ասոնց նման շատ տեսակ խանութներ կան, ինչպէս թղթավաճառի, երկաթագործի, պղնձագործի, գրքածախի, մուշտակագործի (+խր+ճի), խաղալիկներ ծախողներու (ոչոններ), ծխախոտ ծախողի, ցորենավաճառի եւ ուրիշ այլեւայլ խանութներ, ու անոնց մէջ ծախուած տեսակ տեսակ ապրանքներ, որոնք հաստեղս յիշելը աւելորդ կը համարինք, մանաւանդ որ աս բաժանումները ամէն երկիր ու ամէն գաւառնոյն չէ: Արապեաներուն կը յանձնենք որ ուր տեղ են նէ, հոն տեղաց բաժանումներուն պէս իրենց աշկերաններուն վարդապետն ու սորվեցընեն:

35. Առուտուրի վախճանին կրնանք հասնիլ, թէ որ ապրանքները Ա. շուռ, Բ. յաճախ ու Գ. շահավ ծախելու ըլլանք: Աս բանիս միջնորդ են Ապրանքներն ու Յաճախորդները (Գործարարներ), բայց պահանջուած

բանը վաստակն է: Աս զբուցածներնէս յառաջ կու
գան հետեւեալ գլխաւոր սկզբունքները:

Ա. Պէտք է որ ապրանք ունենաս, ու փնտրուած
ապրանք ունենաս. դարձեալ այնպիսի գնով ունենաս,
որով կարող ըլլաս դիւրաւ ծախել ու ձեռքէ հանել:
Ասկից զատ՝ այնչափ շատ, այնչափ այլեւայլ տեսակ
ու այնպէս աղէկ ապրանքներ ունենալու ես, որ գնող-
ները հաճին ու գոհ ըլլան: Ասոնք ետքէն պիտ'որ
ճշդիւ քննենք ու սորվեցընենք, երբ որ ան մասը
հասնինք, ուր պիտ'որ խօսինք թէ ապրանքները
ինչպէս գնելու է:

Բ. Պէտք է որ յաճախորդ (Բ-չրէրի) ունենաս,
որոնք քեզի հետ ճանչուոր ու քու ապրանքներդ
գնելու յօժար ըլլան: Ասոնք ալ՝ ծախելու վրայ խօ-
սելու մասին կը վերաբերին:

Գ. Պէտք է որ վաստակ ալ ունենաս: Ապրան-
քին արժէքն ու գինը որոշելու վրայ սորվեցուցած-
նիս, ու դիտողութեան (ԲԷԻ-ԼԳԻ-ՆԻ) ուսումը, որուն
վրայ ետքէն պիտ'որ խօսինք, ասոնք կը սորվեցընեն:

Քայց գիտութեան չոր ու ցամաք սկզբունքներն
ու կանոնները առուտուրի մէջ գանուող վաճառականի
մը գործնականին բաւական չեն: Ա՛ւճառականը աշ-
խարհք ճանչցող մարդ պիտ'որ ըլլայ, հասարակու-
թեան տեղեակ պէտք է որ ըլլայ, անոր հարկաւորու-
թիւնը, կարօտութիւնը, ինչ բանի ճաշակ ունենալը,
անոր բարքը, յօժարութիւնը, նորածեւ սովորու-
թիւնները (ԲԻՊ-ՆԷՐԸ) աղէկ ճանչնայ, որոնք առու-
տուրին ամէն ճիւղին հարկաւոր ու էական բաներն
են: Ա՛ւճառականը՝ հասարակութեան նկատմամբ ու
անոր համեմատութեամբ պիտ'որ վարուի, եւ ոչ թէ
պիտ'որ ուզէ որ աշխարհք կամ հասարակութիւնը,
քիմքն ու ճաշակը իրեն քմացը ու աւանձին յօժա-
րութեանը համաձայնցընէ կամ փոխէ: Քայց ասոնցմէ
զատ նաեւ իր առուտուր ըրած վաճառատեղւոյն վրայ
ալ աղէկ ծանօթութիւն ու տեղեկութիւն ունենալու

է, որ շատ հարկաւոր բան է. ան տեղաց վիճակը, հոն ամէն տեսակ առուտուր ընողներուն կամ վաճառականներուն վիճակը, իր՝ անոնց հետ ունեցած յարաբերութիւնը, իր՝ ուրիշ տեղաց հետ ունեցած կապը, ան տեղերուն բերքին առատութիւնը կամ նուազութիւնը, ու անոնց ապահով, օգտակար ու շահաբեր հանգամանքները աղէկ գիտնալու է: Ա՛յ՝ վաճառական մը որչափ աւելի որ ասոնց տեղեակ է, այնչափ ալ աղէկ ու օգտիւ ձեռք զարկած գործքը կրնայ յառաջ տանիլ, նոր նոր հնարքներ կրնայ մտածել, աւելի քիչ վտանգներու մէջ կ'իյնայ. մէկ խօսքով ըսենք՝ ասանկ վաճառականն է, որ լուսաւորեալ ու քաջ կրնայ ըսուիլ, որուն՝ աս բաներուս անտեղեակ ըլլող վաճառականներէն ունեցած տարբերութիւնը ամէն մարդ կրնայ իմանալ: Այսին մեր ազգին վաճառականներն ալ որ ասոնց պէս ըլլան, որ ազգին վաճառականութիւնը ծաղկի, ու ազգը զօրանայ ու հարստնայ:

Բ. Փոխանակութիւն տրուողը:

36. Այլին դարերու մէջ որչափ որ զանազան երկիրներ առուտուրի կապով իրարու հետ կապուեցան, որչափ որ վաճառականութիւնը ընդարձակեցաւ ու կենդանացաւ, ու իրարմէ շատ հեռու տեղուանք իրարու հետ հաղորդութիւն ընելու սկսան, այնչափ ալ իրարու ստակ վճարելու համար՝ վաճառականները այլևայլ միջոցներ մտածեցին: Ա՛յ՝ վաճառականները մէկը մէկալին ունեցած վճարմունքները մէկ տօնավաճառի մէջ շկրնալով ըմբոսընել, մէկալ տօնավաճառ ձգելու պարտաւորեցան, ու ասկից պարտականութեան թղթեր կամ մուրհակներ (billet de reconnaissance) ելան, որոնք փոխանակադրերու սկիզբ եղան: Ա՛յ՝ վաճառական մը իր քովը ունեցած պարտականութեան թուղթը երրորդի մը ծախեց, աս առնողն ալ ուրիշի մը, եւ ասանկով թղթերը ձեռքէ ձեռք անցան, որով կամաց կամաց փոխանակադրի ձեւ մտաւ: Գա-

Տառօտ նամակի ձեւով գրելը տասուիրեքերորդ դարուն մէջ հասարակ եղած էր: Արդէն 1246ին երբ որ Իննովկենտիոս Գ. Քահանայապետը՝ Հենրիկոս Ռասբէթուրինգիայի աշխարհատէր կոմսին 25,000 մարկ արծաթ օգնութիւն ուղեց խաւրել, աս ստակը Ալենետիկի մէջ գտնուող սեղանաւորի մը վճարեց, ու սեղանաւորը Մայն գետին քովի Ֆրանգֆուրդ քաղաքը թուղթ մը խաւրեց, ու հոն ստակը կոմսին վճարուեցաւ: Փոխանակագրի գործածութիւնը ամենէն յառաջ գլխաւորաբար Իտալիայի ու Սպանիայի քաղաքները շատցած էր, բայց մանաւանդ Ալենետիկ, ճենովա ու Պարչէլոնա: Հասարակ պարտականութեան թղթերէն ասով կը զանազանէր, որ վճարելու խիստ պարտք կար, այնպէս որ եթէ անիկա՝ որուն վրայ խաւրուած էր, վճարելու չըլար, խաւրողին կը դառնար: Փոխանակագրին սկզբան վրայ այսչափ խօսելէն ետքը, հիմա անոր ինչ ըլլալը մեկնենք:

37. Փոխանակագիրը տեսակ մը համատառօտ նամակ կամ գիր մըն է, որով երկու կողման մէջ ըլլալու վճարմունքը դիւրաւ կը կատարուի: Ասէնք թէ Խորէն Բագրատունին՝ որ Աոստանդնուպոլիս կը նստի, Աիէննայի Թէոգորտեանց տանը 1000 Ֆիորին պարտական մնացեր է, որն որ վճարել կ'ուզէ: Ասիկա կատարելու համար կ'ելլէ Աոստանդնուպոլիս սեղանաւորի մը կ'երթայ, ու անոր 1000 Ֆիորինը տալէն ետքը՝ անկից կը խնդրէ որ աս ստակը Աիէննա Թէոգորտեանց տանը վճարել տայ: Սեղանաւորը 1000 Ֆիորինը առնելուն վրայ, Խորէն Բագրատունիին ձեռքը գիր մը կու տայ (որ Փոխանակագիր կ'ըսուի), որուն մէջ Աիէննայի ան սեղանաւորին անունը գրուած է, որն որ Բագրատունիին կամայք համաձայն Թէոգորտեանց 1000 Ֆիորինը պիտ'որ վճարէ: Բագրատունին աս թուղթը առնելէն ետքը Աիէննա Թէոգորտեանց կը խաւրէ, որն որ Թէոգորտեանք առնելուն պէս՝ ան թղթով կ'ելլեն թղթին մէջ նշանակուած

սեղանաւորին կ'երթան ու անկից իրենց ստակը կ'առնուն : Ուրիշ օրինակ մ'ալ դնենք : Մարսիլիայի վաճէ վաճառականը 1000 ֆրանգ կոստանդնուպոլիս խ. Բագրատունիէն առնելիք ունի, որն որ կ'ուզէ առնուլ : Աս իր առնելիքը առնելուն կերպը ասիկա է : Ա' երթայ սեղանաւորի մը, անկից իր 1000 ֆրանգ կ'առնու, ու սեղանաւորին զիր մը կու տայ, որուն մէջ իր կոստանդնուպոլսեցի խ. Բագրատունի պարտապանին կը պատուիրէ կամ կը յանձնէ, որ այնչափ ստակի գումարը ան սեղանաւորին գործակալին վճարէ : Արդ Մարսիլիացի սեղանաւորը աս թուղթը կ'առնու իր կոստանդնուպոլիս ունեցած գործակալին կը խաւրէ, ու գործակալը աս թուղթը խ. Բագրատունիին կը ներկայացընէ ու ստակը կ'առնու :

Աս ըսածներնէս փոխանակագրին առուտուրի մէջ ըրած գիւրութիւնը կրնայ տեսնուիլ. որն որ գլխաւորաբար ասոր վրայ կայացեալ է, որ պարտատէրը ձեռքը եղած փոխանակագիրը (ստակի պէս) ուրիշ երկրորդի մը, աս ալ երրորդի մը կրնայ տալ կամ ծախել, ու ասանկով ձեռքէ ձեռք կը պտըտի, մինչեւ որ վճարուելու ժամանակին անոր կը հասնի, որն որ անիկա պիտ'որ վճարէ : Ասով շատ անգամ երկու կողմանէ ըլլալու վճարմունքները կը կատարուին, ու առձեռնպատրաստ դրամ խրկուիլը կ'արդելուի, որն որ դժուարութենէն զատ, այնչափ ծախք կ'ուզէ ու ժամանակի կարօտ է : Առանց փոխանակագրի՝ չէր կրնար առուտուրը այնչափ ընդարձակուիլ, ինչպէս որ այսօրուան օրս է. ասով միայն եղաւ, որ վաճառականներու մէջ եղած վճարմունքները այնչափ պարզեցան : Տէրութեանց՝ ասոնց ժամանակին վճարուելուն վրայ բանեցուցած խստութիւնը՝ աս թղթերուն յարդը շատ աւելցուց, ու առձեռնպատրաստ դրամի տեղ անցնելուն շատ օգնեց :

38. Ա՛վճառականներու լեզուաւ փոխանակագիր մը հանելը՝ քարշէլ (tirer) կ'ըսուի. փոխանակագիրը

Հանողը՝ Քարշող (tireur), իսկ անիկա որուն վրայ որ փոխանակագիրը խրկուած է, Քարշուող (sur-tiré) կը զըցուի : Փոխանակագիրը վճարելու տեղը խաւրողը՝ Յուղարկող (remetteur), ու փոխանակագիրը իբրեւ վճարելի խրկելու գործողութիւնը Յուղարկած (remise) կը զըցուի, բայց շատ անգամ նաեւ խրկուած փոխանակագիրն ալ Յուղարկած կ'անուանուի : Անիկա որ փոխանակագիրը՝ Քարշողէն կ'առնու, Փոխանակագրի տէր կ'ըսուի, աս անուամբ կը կոչուին նաեւ անոնք ալ, որոնց որ ետեւէ ետեւ ծախելով փոխանակագիրը ձեռքերնին կ'անցնի, ու անոր ստացող կ'ըլլան, բայց ի Քարշուողէն : Թէ որ փոխանակագրին տէր ըլլող առաջին պարտատէրը փոխանակագիրը ուրիշին կու տայ՝ ինք Գարձընող, Փոխանցող (endosseur), իսկ փոխանակագիրը առնողը՝ Փոխանցառու (endossé) կը զըցուի : Աս գործողութիւնը Փոխանցութիւն (endossement, giro) կ'ըսուի : Աս անուններով կը կոչուին նաեւ ետեւէ ետեւ փոխանակագիրը իրարմէ առնողներն ու տուողները : Անիկա՝ որուն ձեռքը որ ամենէն ետքը փոխանակագիրը կը մնայ ու ստակը առնելու համար փոխանակագիրը Քարշուողին առջեւ կը հանէ, Ներկայացընող կ'ըսուի : Վարշուողը փոխանակագիրը ըստ օրինի ճանչնալէն կամ իրօք ընդունելէն ետքը՝ Ընդունող (acceptant) է :

39. Փոխանակագրերը ընդհանրապէս երկու գըլխաւոր տեսակ կը բաժնուին : Ա. Վարշուած կամ աամկօրէն Գր-Գր-ըսուած փոխանակագրեր, որոնք հանողը՝ օտար ու դրսի Քարշուողին վրայ կը Քարշէ, եւ ասոնք են որ բուն փոխանակագիր անուան արժանի են : Բ. Աւայհական կամ չոր փոխանակագրեր, որոնք աամկօրէն Տե՛-Նշ-Գր-ի փոխանակագրեր ալ կը զըուցուին, եւ ուրիշ բան չեն, բայց եթէ փոխանակագրի ձեւով հանուած պարտականութեան թուղթ մը, որ հանողին պիտ'որ դառնայ, որ միանգամայն Քարշուող է : Աս տեսակ փոխանակագրին ըստ ինքեան փոխա-

նակագիր անունը շարմարի, ինչու որ թէև ձեւն
ու հանողին պարտականութիւնը առջի տեսակ փո-
խանակագրին հետ նոյն է, բայց իր ներքին էութեան
կողմանէ նայելու ըլլանք, պարտականութեան թըղ-
թերէն շտարբերի:

Քարշուած փոխանակագրերը հասարակօրէն մէկ
օրինակ միայն չեն ըլլար, երկու, երբեմն ալ երեք
կ'ըլլան: Առջի խրկուածը՝ Առաջնական (prima), եր-
կրորդը՝ Երկրորդական (secunda), երրորդը՝ Երրոր-
դական (tertia) փոխանակագիր կը զըցուի: Թէ որ
փոխանակագիրը մէկ օրինակ միայն ըլլայ, ինչպէս հա-
սարակօրէն սեպհական կամ չոր փոխանակագրերը
կ'ըլլան, ան ատենը Մենական (sola) փոխանակագիր
կ'ըսուի: Փոխանակագրի մը օրինակները շատցընելը
ուրիշ վախճան մը շունի, բայց եթէ կամ որ առջինին
պատահամբ կորսուած ատենը՝ երկրորդը կարող
ըլլայ գործածուիլ, եւ կամ որ տէրը՝ անոնցմէ մէկը,
սովորաբար առաջնականը, ընդունել, ստորագրել ու
վճարուելու տեղը պահել տայ, իսկ մէկալը շրջանի
մէջ խոթէ ու ձեռքէ ձեռք պտըտցընէ: Աս շատցուցած
բոլոր օրինակները ամէնը մէկտեղ մէկ փոխանակագրի
տեղ կ'անցնին, բայց որպէս զի խաբէութիւն չըլլայ
(որն որ գիւրաւ կրնայ պատահիլ), ամէն մէկ օրինա-
կին վրայ Առաջնական, Երկրորդական, Երրորդական
բառերը յայտնի կը նշանակուին, ու առաջնականին
վրայ աս խօսքը կը գրուի, «եթէ Երկրորդականն եւ
Երրորդականն ոչ», այս ինքն թէ որ երկրորդ ու եր-
րորդ օրինակները վճարուած չեն նէ. ասանկ ալ եր-
կրորդականին ու երրորդականին վրան կը նշանակուի,
«եթէ Առաջնականն եւ Երրորդականն ոչ, կամ եթէ
Առաջնականն եւ Երկրորդականն ոչ», որով՝ քանի որ
վճարողը վճարածին օրինակը քովը պահած է, խա-
բէութիւնը անկարելի կ'ըլլայ: Երրորդական օրի-
նակը շատ քիչ կը գործածուի, իսկ Չորրորդականը
(quarta) գրեթէ երբեք չգործածուիր. ասոնք աւելի

ան ատենը կը դործածուին, երբ որ տեղերը մէկը մէկալէն շատ հեռու են:

Փոխանակագրերը աս բաժանմունքէն զատ ուրիշ բաժանմունք մ'ալ ունին, այս ինքն Ա. Փոխանակագիր ըստ թուականին (a dato), որն որ փոխանակագրին մէջ որոշուած ժամանակին պիտ'որ վճարուի. Բ. Փոխանակագիր ի տեսութեան (a vista), որն որ վճարողին ներկայացընելուդ պէս պիտ'որ վճարուի, եւ ասիկա՝ փոխանակագրին մէջ «ի տեսութեան», բառը բացայայտ դնելով կը նշանակուի. Գ. Փոխանակագիր ըստ սովորութեան (a uso), որն որ ներկայացուցած ժամանակէդ սկսեալ սովորութեամբ ընդունուած ատենին մէջ պիտ'որ վճարուի: Աս սովորութեամբ ընդունուած ատենը այլեւայլ վաճառատեղիներ տարբեր է, 44 օր, 15 օր եւ այլն: Ասիկա նշանակելու համար «ըստ սովորութեան», բառը բացայայտ դնելու է. երբ որ այնչափ ժամանակին կրկինը, մէկ ու կէսը, կամ կէսը կ'ուզուի՝ ասանկ կը գրուի, «Արկին սովորութիւն, $1\frac{1}{2}$ սովորութիւն, $\frac{1}{2}$ սովորութիւն», եւ այլն:

Ան նաեւ տեսակ մը փոխանակագրեր ալ, որ Օրական փոխանակագրեր կ'ըսուին, որոնց վճարուելու ատենը որոշեալ օր մըն է, ինչպէս ամսոյն տասը, տասնուհինգը, քսանուչորսը, եւ կամ ամսոյն սկիզբը, կէսը կամ վերջին օրը, կամ Նոր կիւրակին օրը կամ զատկէն 15 օր ետքը կամ Լիւսիայի՝ Ս. Միքայէլի տօնավաճառէն ութը օր ետքը եւ այլն: Ան փոխանակագրերը, որոնց վճարուելու օրը ամսոյն առջին օրն է՝ Սկզբնական (primo) փոխանակագրեր կ'ըսուին, իսկ անոնք որ ամսոյն կէսին պիտ'որ վճարուին՝ Միջնական (medio) կ'ըսուին: Բայց սրովհետեւ ամսոյն օրերը հաւասար չեն, անոր համար վճարուելու օրը ամէն անգամ ամսոյն նոյն օրը չէ. 30 ու 29 օր ունեցող ամիսներուն մէջ՝ 16ը, իսկ Փետրուար ամսոյն մէջ, 28 օր ունեցած ատենը (ինչպէս նահանջ տա-

րիները դուրս հանելով միշտ կ'ըլլայ) ամսոյն 14ը :
 Քայց շատ տեղուանք օրէնքը ամէն ամիսներուն ալ
 մէկ հաստատուն օր մը կ'որոշէ, հասարակօրէն ամսոյն
 15ը, բայց Լիփսիա ամսոյն 14ն է : Ալերջնական (ul-
 timo) փոխանակագրեր կ'ըսուին անոնք, որոնց վճա-
 րուելու օրը ամսոյն վերջին օրն է : — Այս տեսակ մը
 փոխանակագիր ալ որ Ըստ հաճոյից (a piacere) կ'ը-
 սուի, որուն մէջ ներկայացընելու ու ստակ առնելու
 օրը փոխանակագրին տիրոջը կամքին թող կը տրուի :

40. Փոխանակագիր մը ըստ օրինի գրուած ըլլալու
 համար պէտք է որ մէջը գտնուի, Ա. փոխանակագիրը
 քարշողին եւ կամ իր գործակալին ստորագրութիւնը.
 Բ. քարշուած տեղը. Գ. քարշուելուն ատենը, տա-
 րուիլը, ամսովն ու օրովը. Դ. ան մարդուն անունը՝ որ
 ստակը պիտ'որ առնու կամ առնել տայ. Ե. փոխա-
 նակագիրը վճարողին անունը. Զ. փոխանակագրին
 վճարուելու տեղը. Է. փոխանակագրին վճարուելու
 ժամանակը կամ պայմանաժամը. Ը. վճարուելու գու-
 մարը, ու ստակին տեսակը որով պիտ'որ հատուցուի.
 Թ. ծանուցանելու է թէ անոր արժէքը (Valuta) ար-
 դէն առնուած է : Մ. Բանս իբրեւ քարշողին ու պար-
 տապանին մէջ եղած պարտքին պատճառ դնելու է,
 որ դիւրաւ կը նշանակուի փոխանակագրին մէջ “Ար-
 ժէքն ընդունած եմ”, կամ “Արժէքն ի հաշիւ”, խօսքը
 դնելով : Ժ. “Ըստ հրամանի”, խօսքը, որ կը նշանակէ
 Ըստ հրամանի փոխանակագրին տիրոջը, որմէ կ'իմա-
 ցուի որ փոխանակագրին տէրը չէ թէ անձամբ աս
 փոխանակագրին գումարը պիտ'որ առնու, այլ ուրիշի
 մը անիկա ընդունելու համար իշխանութիւն կու տայ :
 ԺԱ. Վարշուողէն խնդրելու է, որ ան փոխանակա-
 գրին գումարը ի հաշիւ անցընէ կամ յառաջուց իրեն
 մասնաւոր ու առանձինն ծանուցածին համաձայն եւ
 կամ առանց այնպիսի ծանուցման : Մ. Եղած ծանու-
 ցումը իմացընելու համար փոխանակագրին մէջ կը
 գրուի “Ըստ ազգարարութեանս”, խօսքը : Վ. անու-

ցումք որն որ թուղթ ազդարարութեան ալ կ'ըսուի, ուրիշ վախճանի համար չէ, բայց եթէ որ քարշուղը իմանայ ու պատրաստութիւն տեսնէ. անոր համար ազդարարութեան թղթին մէջ պիտ'որ ծանուցուին գումարը, քարշուղուն օրը, փոխանակագրին առաջին տիրոջը անունը, հրամանը, եւ ուրիշ պարագաները: ԺԲ. Առաջնական, Երկրորդական, Երրորդական եւ այլն, կամ Մենական բառերը բացայայտ նշանակուին պիտ'որ: ԺԳ. Վրուածքը փոխանակագրի ձեւով պիտ'որ ըլլայ, որով քարշուղը ինքը զինքը փոխանակագրի դատաստանին տակ կը ձգէ:

Քարշուղ ինքնակիցի ին օրինակ.

Առաջնական.

Առատանդնուպոլիս, 1 Յուլիսի 1848.

1500 արծաթ ֆիորինի համար (1
ֆիորինը 3 քսաննոց հաշուելով):

Այսօրուրնէ երկու ամիս ետքը աս իմ Առաջնական փոխանակագրիս դիմացը ըստ հրամանի Պ. Ստեփանի Մարութեանց վճարեցէք 1500 (հազար հինգհարիւր) արծաթ ֆիորինի գումարը, 1 արծաթ ֆիորինը 3 (երեք) քսաննոց հաշուելով: Արժէքը ընդունած եմ: Անցուցէք ի հաշիւ ըստ ազդարարութեանս.

Վարժէ 1500 (հազար հինգհարիւր)
արծաթ ֆիորինի համար, մէկ ֆիորինը երեք քսաննոցով.

Գրիգոր Մամիկոնեան:

Պ. Խաչատուր Թէոգորեանց
ի Վիէննա:

Ա՞ն փոխանակագրին մէջ չորս գլխաւոր մաս կայ. Ա. Փոխանակագրին Առաջնականը՝ որն որ վրան ձախ կողմը կեցած է, որն որ ոմանք վարը ձախ կողմը կը դնեն. Բ. Փոխանակագրին քարշուղած տեղը, որն որ վրան ձախ կողմը դրուած է. Գ. Ստորագրութիւնը վարի աջ կողմը. Դ. Քարշուղին տեղն ու անունը, որ

վարը ձախ կողմը կեցած է: Փոխանակագրի մը ըստ պատշաճի ըլլալուն համար քանի մը երկրորդական պայմաններ ալ կը պահանջուին, որոնք Արտաքին հանգամանքներ կը զրցուին: Ընդհանրապէս մաքուր պիտ'որ ըլլայ, մէջը աւրուած պիտ'որ չգտնուի: Թէպէտեւ արտաքին ձեւը ամէն մարդուն կամքին թող տրուած է, բայց առհասարակ երկայնաձեւ քառակուսի ձեւով բարակ թղթի վրայ գրելը ընդունելի եղած է: Ան շատ վաճառականի տներ, որոնք իրենց փոխանակագրերը տպել կու տան. ասանկ տպած փոխանակագրերու մէջ փոփոխութեան տակ ինկած մասերը պարապ թող տալու է, որ ժամանակին ինչ որ մէջը գրել պէտք ըլլայ կարող ըլլայ գրուիլ:

Նոստերս սեպհական կամ չոր փոխանակագրի օրինակ մ'ալ դնենք

Վիեննա, 16 Յուլիսի 1848.

200 արծաթ ֆիորինի համար
(1 ֆիորինը երեք քսաննոցով):

Աս թուականէն երկու ամիս ետքը աս իմ Մենական փոխանակագրիս դիմացը կը վճարեմ 9. Վահանայ Խորենեանց կամ ըստ հրամանի նորա, 200 (երկուհարիւր) արծաթ ֆիորին մէկ արծաթ ֆիորինը երեք քսաննոցով: Արժէքը առձեռնպատրաստ դրամով ընդունած եմ:

Սարգիս Թաթուլեանց:

Թէ որ ասանկ փոխանակագիրը միայն պարտատէրին ուղղեալ ըլլայ եւ ոչ թէ անոր հրամանին նայելով ուրիշի մ'ալ, ան ատեն «Ըստ հրամանի նորա» խօսքը չգրուիր: Ինչու որ աս խօսքը կը նշանակէ որ փոխանակագիրը առնողը ուրիշ երրորդի մը ծախելու ազատութիւն ունի:

41. Արբ որ պարտատէրը կամ փոխանակագրին տէրը իր ձեռքը ունեցած փոխանակագիրը կը ծախէ կամ իր վճարմունքին աեղը կու տայ, աս իրեն գործողութիւնը փոխանակագրին կունակը կը գրէ: Իրմէ

եաքը եկող ան փոխանակագրին տէրը անիկա ուրիշին ծախելու կամ տալու իրաւունք ունի: Աս գործողութիւնը Փոխանցութիւն (endossement) կը կոչուի, եւ կամ ռամկօրէն ճիւղ (Giro), փոխանակագիրը տուողը Փոխանցող (endosseur), իսկ առնողը Փոխանցառու կամ Գարձառու (endossé) կը զոչուի: Աս գործողութիւնը փոխանակագրին ետեւը նշանակելու ձեւը ասանկ է. փոխանցողը կը գրէ

Ինձի համար ըստ հրամանի Պ. Աբրահամու Աստուածատուրեանց վճարեցէք: Արժէքը ընդունած եմ:

Կոստանդնուպօլիս, 4 Օգոստոսի 1848.

Ստեփան Մարութեանց:

Ասոր մէջ ինչպէս յայտնի կը տեսնուի, կայ Ա. Ստեփան Մարութեանցին (փոխանցողին) քարշուղին տուած հրամանը, որ փոխանակագրին գումարը դարձառուին (Պ. Աբրահամին) վճարէ: Բ. Փոխանցողին առած ստակին վկայութիւն, որ է «Արժէքը ընդունած եմ», խօսքը. որուն տեղ, թէ որ արժէքը վար առնուած է նէ «Արժէքն ի հաշիւ», կը գրուի: Գ. Աղած փոխանցութեան տեղը, տարին ու ամսոյն օրը: Դ. Փոխանցողին անուան ստորագրութիւնը: Ասկէ ետքը թէ որ դարձառուն աս փոխանակագիրը ուրիշի տալ ուզէ, ան ատեն ըստ ամենայնի աս կերպով կ'ըլլայ, ինքը փոխանցող, իսկ փոխանակագիրը իրմէ առնողը դարձառու կ'ըլլայ: Աս կերպով յառաջ կ'երթայ, մինչեւ որ ան մարդուն ձեռքը անցնի, որն որ ժամանակը գալով քարշուղէն կ'երթայ ստակին գումարը կ'առնու: Փոխանցութեան մէկ կերպ մ'ալ կայ, որ ճերմակի վրայ կ'ըսուի, որուն մէջ փոխանցողները միայն անուննին կը գրեն, ու լեցրնելու պարագայ տեղ կը թողուն, բայց ասիկա այնչափ աղէկ ու գործածական չէ: Թէ որ փոխանակագիր մը այնչափ անգամ փոխանցուի, որ կռնակը ալ գրելու տեղ շունենայ, ան ատենը վրան նոյն ձեւով թուղթ

մը կը փակցուի, ու անոր վրայ կը շարունակուի: Ասանկ թղթերը Յաւելուած կ'ըսուին, ու յաւելուած ըլլանին բացայայտ վրանին կը նշանակուի, փոխանակադրին գլխաւոր մասերը (տեսակը, ստակին գումարը, անունը, փոխանցողին բնակութեան տեղը եւ այլն) յառաջ բերելով այսպէս. «Յաւելուած Առաջնական փոխանակադրի 1500 արծաթ ֆիորինից, Գրիգոր Մամիկոնեանէն քարչուած, ի Աստանդնուպոլիս, 1 Յուլիսի 1848, թուականէն երկու ամիս ետքը վճարելի, ըստ հրամանի Ստեփանի Մարութեանց, Թէոդորեանց Խաչատուրին վրայ ի Ալիէննա», : Աս կերպը ամենէն աղէկն ու ապահովն է: Բայց որպէս զի ասոր մէջն ալ խաբէութեան տեղ չմնայ, խօսքին մէկ մասը բուն փոխանակադրին թղթին վրայ սկսելու է, իսկ մէկալ մասը անոր կպցուցածին վրայ լմրնցընելու է: Ան ոմանք որ երկու կտորներուն իրարու հետ կպած տեղը ծուռ խաչածեւ նշան մ'ընելով կը շատանան:

42. Որպէս զի փոխանակադիր մը քարչուողին կողմանէ ընդունուի, կամ թէ ըսենք իրօք վճարուի, պէտք է որ փոխանակադրին տէրը կամ անոր գործակալը անիկա քարչուողին առջեւը հանէ, կամ ներկայացընէ: Փոխանակադրի աս գործողութիւնը ներկայացուցումն կը զըցուի, իսկ առջեւը հանողը՝ ներկայացընող: Ներկայացուցումը երկու վախճանի համար կ'ընայ ըլլալ. մէյ մը փոխանակադիրը ընդունել տալու համար, մէյ մ'ալ վճարել տալու համար: Որպէս զի քարչուողին կողմանէ փոխանակադիրը ճանչընել տրուի, ուստի եւ անոր վճարուիլը ապահովցուի, փոխանակադիրը անոր բնակած տեղը կը խաւրուի, ու նոյն տեղը բարեկամի մը յանձնարարութիւն կ'ըլլուի՝ որ անիկա քարչուողին ընդունել տայ, որն որ սովորաբար փոխանակադիրը ցուցուելէն ետքը քսանուչորս ժամու մէջ պիտ'որ ըլլայ: Իսկ վճարելու համար ներկայացընելու պարտականութիւնը ան գարձառուին վրայ է, որն որ վճարուելու սահմանած:

օրը՝ փոխանակագրին տէրն է: Ան փոխանակագրերը՝ որոնք տեսնելէն խել մը ատեն ետքը պիտ' որ վճարուին, յայտնի բան է որ երկու անգամ կը ներկայացուին, մէյ մը ընդունել տալու համար, մէյ մ'ալ վճարել տալու համար: Արբ որ մէկը՝ իրեն փոխանակագիր մը վճարելու պարտաւոր ըլլալուն յայտարարութիւն կու տայ, անիկայ ընդունելութիւն (acceptation) կ'ըսուի: Աս բառով կ'իմացուի նաեւ փոխանակագրին վրայ գրուած խօսքը կամ ծանուցումը՝ որով քարշուողը՝ ընդունող (acceptant) կ'ըլլայ, ու դատատանի առջեւ միայն ինքը ան փոխանակագիրը վճարելու պարտական կը մնայ: Ընդունելութիւնը՝ միայն քարշուած (արտոգրուած) փոխանակագրին կը պահանջուի, իսկ սեպհական կամ չոր փոխանակագրերուն աւելորդ է:

Արկու տեսակ ընդունել կայ, մէյ մը Հասարակ, մէյ մ'ալ Միջնորդաւ: Հասարակ ընդունելութիւն ան է, երբ որ քարշուողը անոր օրինաւորութիւնը ու իրեն ալ վճարելու պարտականութիւնը կը յայտնէ, փոխանակագրին առջեւի կողմը կը գրէ «Ընկալեալ», ու անոր տակը իր ստորագրութիւնը կը դնէ այսպէս «Ընկալեալ 1500 արծաթ Ֆիորինի համար»:

Խաչատուր Թէոգորեանց,:

Իսկ Միջնորդաւ կամ Պատուոյ համար (per onor) ընդունելութիւն ան ատեն կ'ըլլայ, երբ որ քարշուողը փոխանակագիրը շընդունիր, եւ կամ կ'ընդունի, բայց պայմանեալ ժամանակը հասնելու ըլլայ՝ չվճարեր, ու ան ատեն ուրիշ մէկը քարշողին եւ կամ դարձառուին մէկուն հաշուին փոխանակագրին ընդունելութեան պարտքը կը վճարէ: Աս կերպով փոխանակագիր մը ընդունողը կամ վճարողը Միջնորդ կամ Միջամուտ (intervenent) կ'ըսուի, իսկ գործողութիւնը Միջնորդութիւն, Միջնորդ ըլլալ, Մէջը մտնել եւ այլն: Աս միջնորդութիւնը, որն որ թէ ազատ կամ ճշտ եւ թէ դարձառուին մէկուն յանձնարարութեամբն

ալ կրնայ բլլալ, ուրիշ վախճան մը չունի, բայց եթէ
 աս, որ փոխանակագրին շնորհունուելուն պատճառաւ
 ետ դառնալուն ծախքերը արդելուին, ու միանգա-
 մայն քարշուողին պատիւն ու համարումը (+բէրէրոն)
 չիյնայ, ան պատճառաւ ալ «Անոր պատուոյն համար
 ընկալեալ կամ վճարեալ», կ'ըսուի: Պատուոյ համար
 եղած ընդունելութիւնը հասարակ ընդունելութեան
 պէս փոխանակագրի վրայ կրնչանակուի, թէ որ քարշու-
 ողին համար է, աս խօսքերով «Ընկալեալ (1500 արծաթ
 ֆիորինի համար) ի պատիւ ստորագրողին (Գրիգորի
 Մամիկոնեան ի Աոստանդնուպոլիս)», իսկ թէ որ փո-
 խանցողի մը համար է, աս խօսքերով «ի պատիւ փո-
 խանցողին (Ստեփանի Մարութենց ի Աոստանդնուպո-
 լիս)», ու ընդունելութեան օրը եւ ընդունողին անուան
 ստորագրութիւնը կը գրուի: Աս միջնորդութիւնը
 վաճառականներուն համարումը չիյնալու համար շատ
 հարկաւոր ու փոխանակագրի գործքին մէջ էական բան
 մը եղած, է ու փոխանակագրի առուտուրին շատ դիւ-
 րութիւն կու տայ:

Աս հասարակ ըստ փոխանակագրի օրինաց, փո-
 խանակագիր մը ընդունողը կը պարտաւորի պայմանեալ
 օրը հասած ատեն անիկայ վճարելու ու ամենեւին
 չկրնար եւ ոչ դէպքի մը մէջ անիկայ ետ կանչել: Բայց
 կան շատ երկիրներ, ուր օրէնք դրուած է, որուն զօ-
 րութեամբ քարշուողը ըստ ամենայնի պայմանեալ օրը
 վճարելու չկրնար ստիպուիլ, հապա քանի մը օր ալ
 վճարմունքը կատարելու ժամանակ կը տրուի: Աս
 պայմանեալ օրէն ետքը ուշացած օրերը՝ Մեծարանաց
 կամ Շնորհաց օրեր (jours de grâce, jours de faveur)
 կը կոչուին, եւ այլեւայլ տեղեր իրարմէ ասարեւր են:
 Մեծարանաց օրերուն վերջին օրը վճարելու օր է, ու
 ներկայացրնողը մինչեւ ան օրը հանդարտութեամբ
 պիտ' որ սպասէ: Արբ որ ընդունողը ատենին ստակը
 կը վճարէ, ան ատեն փոխանակագիրը իրեն կը արուի,
 որն որ իրեն քովը ընկալագրի տեղ կը բռնէ, մա-

նաւանդ երբ որ ստակը առնողը գրէ «Ընկալայ», ու
իր ստորագրութիւնը դնէ, ինչպէս որ սովորութիւն է:
Բայց թէ որ ընդունողը գծադրութեամբ չվճարէ,
ան ատեն դատ կը բացուի, այս ինքն պարտատէրը
դատաստանի կը դիմէ, բողոք (protêt) կ'ընէ, որոնց
վրայ խօսիլը տեղւոյս չվերաբերիր:

43. Փոխանակագրի նման մէկ տեսակ թուղթ
մ'ալ կայ, որն որ նշանակագիր (assignation) կը
կոչուի, որն որ մէկ երկրորդի մը կը յանձնէ, որ աս
կամ ան մարդուն ասչափ գումար ստակ վճարէ:
Ասիկայ ձեւին ու խօսակցութեանցը կողմանէ փոխա-
նակագրին շատ նմանութիւն ունի, բայց ասով ան-
կից կը տարբերի որ, թէ որ վճարելու պարտական
ըլողը չընդունիր կամ չվճարեր, ան ատեն փոխանա-
կագրին կերպովը դատաստանի չելլուիր: Ասոր ձեւը
սորվողներուն իմացընելու համար հոս երկու հատ
այլեւայլ կերպով գրուածներ կը դնենք:

Առջին օրինակ՝ որ գիտնալիքն յետը գրուած է:

Կոստանդնուպոլիս, 1 Յուլիսի 1848.

1500 Ֆիորին արծաթ, (մէկ
Ֆիորինը երեք քսաննոցով):

Ի տեսութեան՝ աս իմ նշանակագրիս դիմացը,
ըստ հրամանի Պ. Ստեփանի Մարութենց, վճարեցէք
1500 (հազար հինգհարիւր) արծաթ ֆիորին, մէկ
ֆիորինը երեք քսաննոցով: Արժէքը ընդունած եմ:
Իմ հաշուիս անցուցէք ըստ ազդարարութեանս:

Գրիգոր Մամիկոնեան:

Պ. Խաչատուր Թէոդորեանց
ի Վիեննա

Երկրորդ օրինակ՝ որ գիտնալիքն յետը գրուած է:

Պ. Խաչատուր Թէոդորեանց ի Վիեննա: Աս
իմ նշանակագրիս դիմացը ի տեսութեան շնորհք
ըրէք, ըստ հրամանի Պ. Ստեփանի Մարութենց, վճա-

բեցէք 1500 արծաթ ֆիորին, մէկ ֆիորինը երեք քսաննոցով, ու անիկայ իմ հաշուիս անցուցէք (ըստ ազգարարութեանս) .

Ի Կոստանդնուպոլիս, 1 Յուլիսի 1848.

Գրիգոր Մամիկոնեան :

1500 ֆիորին արծաթ, ֆիորինը երեք քսաննոցով :

Աստեասակ նշանակագրերը աւելի օգտիւ կրնան գործածուիլ . Ա. անանկ տեղուանք, ուր փոխանակագրի իրաւունք չկայ, եւ կամ երբ որ անանկ մարդիկներէ ստակ պիտ'որ առնուի, որոնք փոխանակագիր տալու ընդունակ չեն . (փոխանակագիր տալու ընդունակ եղող մարդիկը տէրութեան օրէնքները կ'որոշեն) : Ինչու որ ասանկ տեղուանք նոյն իսկ փոխանակագրով ալ քարշուողին վրայ աւելի պարտականութիւն մը չըդրուիր : Բ. Արբ որ վճարելու գումարը պղտիկ բան մըն է : Գ. Արբ որ ծախած ապրանքին ստակը կ'ուղես առնուլ, ու դեռ չես ուղեր պարտապանդ խստիւ փոխանակագրի իրաւունքով ստիպել :

Առջափս փոխանակագրի վրայ ընդ հանրապէս խօսելէն ետքը՝ հիմա փոխանակագրով առուտուրին գառնանք, որն որ մեր գլխաւոր խօսելու նիւթն էր :

44. Ա երբ 37 համարին մէջ փոխանակագրին ինչը լլալը մեկնելու ատեն՝ բերած երկու օրինակներնուս մէջ Խ. Բազրատունին Աիէննա ստակ անցընելու համար, նոյնպէս եւ Պ. Ահէն Կոստանդնուպոլիս ունեցած առնելիքը առնելու համար, սեղանաւոր մը ձեռք առին, ու անոր միջնորդութեամբը ուղածնին կատարեցին : Բայց աս ալ յայտնի է, որ ասանկ գործքի մը զբաղող սեղանաւորները, որոնք ասկից պիտ'որ ապրին, չեն կրնար վերը ըսած կերպով ասիկայ ձրի կատարել, ու իրենց աշխատութիւնը զոհել, հապա իրենց ծառայութեանը համար պէտք է որ բան մը

առնուն: Աս վարձքը՝ որն որ (այսչափ) Առ հարիւր (pour cent) կ'ըսուի, ստուգիւ սեղանաւորին արդար պահանջմունքն է, ու իրաւամբ իրեն կը տրուի: Խաղաղատունին ստակ վճարելու ատեն՝ աւելի, զոր օրինակ 100 ին մէկ աւելի (այս ինքն 101) ուստի եւ 1000 ին՝ 1010 կու տայ. նոյնպէս Վահէն ալ ստակը առնելու ատեն՝ պակաս, զորօրինակ 100 ին երկու պակաս (այս ինքն 98) ուստի եւ 1000 ին 980 կ'առնու: Ասչափ ըսածներնէս սեղանաւորներուն գործքն ու զբաղմունքը բաւական յայտնի տեսնուեցաւ, թէ ինչ բան է: Աս տեսակ գործքը կամ առուտուրը Փոխանակագրի առուտուր կ'ըսուի, ինչու որ անոր զբաղողին գործքը բոլոր փոխանակագրերու հետ է, ու թէ որ ճիշդ սահմանել ուզենք,

«Փոխանակագրի առուտուրը ուրիշ բան չէ, բայց եթէ հեռաւոր տեղուանք, ուրիշի մը համար վճարել կամ ստակ առնուլ»,

Ան վաճառականը՝ որն որ գլխաւորաբար կամ թէ ըսենք՝ աւելի ասանկ առուտուրի մը կը զբաղի, Աեղանաւոր կամ Ղուճայափոխ (սորմ) կը կոչուի: Աեղանաւորը չէ թէ միայն հարստութիւն եւ ուրիշներուն իր վրայ վստահութիւնը ստացած պիտ'որ ըլլայ, հապանակ հարկ է որ գիտուն, սորված մարդ ու բարձրագոյն տեղեկութիւններ ալ մտքին մէջ ժողված ըլլայ, ինչու որ քաղաքային ընկերութեան ու տէրութեանց առջեւ սեղանաւորները՝ երեւելի, անուանի ու համբաւաւոր անձանց կարգն են, ու իրենց գործքը բարձր կարգի ազնուականաց ալ անվայել ու նախատական բան մը չէ:

45. Փոխանակագրի առուտուրին ինչ ըլլալուն վրայ ըսածներնէս կը հետեւի որ սեղանաւորէ մը (որովհետեւ իր պաշտօնը հեռու տեղերը ստակ վճարել, կամ հեռու տեղերէն ստակ առնուլ է) կը պահանջուի,

Ա. Ճանչուորութիւն: Ան տեղուանքը՝ ուր որ վճարմունք պիտ' որ ընէ կամ ստակ անցընէ, պէտք

է որ վաճառականներ ու թղթակիցներ ունենայ, որոնք իրեն հետ հաղորդակցին, իրեն տեղը վճարեն, կամ ստակ քարշելը հոգան :

Բ. Համարում եւ համարման ընդունակութիւն : Այլը որ ուրիշ մը քեզի համար կամ քու տեղդ ստակ պիտ' որ վճարէ, սա վճարած կամ դուրս տուած ստակին արժէքը կամ իր ձեռքը ապահով ունի եւ կամ չունի : Յետ որ ունի, յայտնի է որ դուն անոր վրայ բան մը վստահացած ես, ու քու քովդ համարում (յարգ) ունի, կամ թէ ըսենք՝ դուն անոր վրայ համարում ունիս, որն որ չէիր ունենար, թէ որ ինքը համարման ընդունակ մարդ չըլար : Այս թէ որ արժէքը իր ձեռքը չունի, ու քեզի հետ անանկ կապ մը ունի, որ հարկաւոր եղած ատեն քու տեղդ ուրիշին ստակ պիտ' որ վճարէ, միշտ կարելի չէ, որ ամէն անգամ քեզի համար ստակ վճարելուն պէս՝ շուտ մը ան ստակին արժէքը կամ առձեռնպատրաստ գրամով եւ կամ փոխանակագրով հատուցանես, ինչու որ շատ վաճառատեղիներ ու քանի մը տեսակ փոխանակագրերու մէջ պէտք է որ քու տունդ կամ քաղաքդ խաւրէ որ ընդունիս ու ստորագրես : Ասոր տեղը իրեն հետու տեղուանք ունեցած համարումը կը լեցընէ. որմէ յայտնի կը տեսնես, որ սա կերպով փոխանակագրի առուտուր ընող սեղանաւորը հետու տեղուանք ինչպէս համարում ունենալու է :

Գ. Այսելու է, որ ստակը առձեռնպատրաստ գրամով չխաւրուի, հապազանազան վաճառատեղեաց մէջ եղած առնելիքն ու տալիքը որչափ կարելի է համեմատութեամբ հաւասարցուին, ապա թէ ոչ՝ փոխանակագրի առուտուրին մեծ շահը կը կորսուի : Ասոր համար ամէն սեղանաւոր պէտք է որ ամէն վաճառատեղեաց փոխանակագրերուն գիներուն վրայ ընդհանուր տեսութիւն ունենայ, որ անոնք իրարու հետ համեմատելով կարող ըլլայ իմանալ ու որոշել, թէ որ տեղաց փոխանակագիրը վճարելը եւ սւր տեղ փո-

խանակազիր քարշելը կամ ստակ վճարելու համար փոխանակազիր խաւրելը իրեն աւելի շահաւոր կ'ըլլայ :

Գ. Ամէն տեսակ ստակը՝ ամէն կողմ իր մէջը եղած զուտ ազնուական մետաղին գնովը շանյնիր, եւ կամ այսպէս ըսենք՝ ստակին գինը ամէն տեղ իր ներքին արժէքին հաւասար չէ. եւ դարձեալ քանի մը տեսակ ստակներուն գնոյն վրայ տեսնուած աս փոփոխականութիւնը միշտ չմնար, երբեմն շատ ու երբեմն ալ քիչ կը տեւէ, բայց երբեմն ալ անցողական բան մը կ'ըլլայ : Աեղանաւորը աս համեմատութիւնը, չէ թէ միայն ստակներու փոխանակութիւն, հապա փոխանակազրով առուտուր ընելու համար ալ աղէկ պիտ'որ գիտնայ, որպէս զի որոշեալ գործքերու համար ան տեսակ ստակ պատրաստ ունենայ, որն որ աւելի շահով կրնայ գործածել :

Ե. Աեղանաւորը պէտք է գիտնայ ու հաւանականութեամբ կարող ըլլայ յառաջուց իմանալ, թէ աս կամ ան տեսակ ստակն ու փոխանակազիրը որ ատեն ու որ վաճառատեղիներու մէջ կրնայ փնտռուիլ, որպէս զի գիները փոփոխութիւն մը կրելէն յառաջ կարող ըլլայ պատրաստուիլ, ու հարկաւոր եղած միջոցները ի գործ դնել : Պատմական, աշխարհագրական եւ մանաւանդ այլեւայլ վաճառատեղիներու ու տօնավաճառներու (խանայրներ) վրայ տեղեկութիւնները, ու երեւելի տեղերու ու քաղաքներու հետ ունեցած թղթակցութիւնը, բայց ամենէն աւելի աս վախճանաւ լրագիրներ կարդալը ասանկ գործքի զբաղող ու գիտող մարդու մը շատ կրնայ օգնել ու մեծամեծ օգուտներ քաղել տալ :

Մեր ազգին վաճառականութիւնը յառաջացրնելու համար վաճառականութեան լրագիրներ ալ շատ հարկաւոր են, մանաւանդ ան տեղուանքը ուր որ առուտուրի քաղաքներ կան, ինչպէս Կոստանդնուպոլիս, Չփուքիա, Առաճա, Հալէպ, Կարին, եւ այլն : Աս լրագիրները երկու տեսակ կրնան ըլլալ, մէյ մը՝ որ վաճառականներուն ու գիտողութեան ի մերձուստ կ'օգնեն, զանազան վաճառատեղեաց,

տօնավաճառներու, երեւելի քաղաքներու մէջ եղած առու-
տուրին վրայ տեղեկութիւն տալով, ան քաղքին նաւա-
հանգիստը մտած ու ելած նաւերը, անոնց [թիւը, բերած
ու տարած ապրանքնին, ապրանքներուն գինը կ'յնալն ու
բարձրանալը, ստակներու ու փոխանակագրերու ընթացքը,
փնտռուած ապրանքները ծանուցանելով: Մէյ մ'ալ՝ որ ա-
ւելի պատմական է, ու աս կամ ան [թագաւորութեան կամ
երկրին վաճառականութեան ինչ վիճակի մէջ ըլլալը, անոնց
յառաջ երթալուն արդեւթները, տէրութեանց մէկը մե-
կալէն առած ապրանքներուն չափը կը պատմէ, անոնցմէ
ազգային առուտուրը յառաջ տանելու խորհուրդներ կը
գտնէ, ու վերջապէս ազգային վաճառականներուն միտքը
այլեւայլ իրենց վիճակին վերաբերեալ տեղեկութիւններով
լեցընելու կը ջանայ: Յայտնի բան է, որ առջի տեսակ
լրագիրները ան տեղուանքը պէտք է որ շինուին ու տպուին,
ուր որ ազգին գլխաւոր բազմութիւնն է, ու գլխաւորա-
բար աս տեսակ լուրերը ան տեղերուն լրագիրներուն մէջ
կարդացուին. ինչու որ [թէ որ հեռու տեղուանք շինուին
ու խաւրուին, լուրերը հիննալով՝ գիտող վաճառականի
մը ամենեւին օգուտ մը չեն կրնար ընել: Բայց երկրորդ
տեսակ լրագիրները հեռու տեղուանք ալ կրնան շինուիլ,
ու ան տեսակ տեղեկութիւնները հեռու եղած լրագիրնե-
րու մէջ ալ կրնան գրուիլ:

Գ. Յանձնարարութեան առուտուրի կամ ընդհանրապէս
յանձնարարութեան գործ+երո՝ վրայ:

46. Յանձնարարութեան առուտուր կամ Ապրու-
պարութիւն (commission), ինչպէս վերը ըսինք, ու-
րիշ բան չէ, բայց եթէ աս, որ վաճառականը՝ ուրիշ
մէկու մը հաշուին ապրանք կը գնէ ու կը ծախէ, ան
անձին հրամանին նայելով, ու իր աս աշխատու-
թեանը համար որոշեալ վարձք մը կ'ընդունի: Ասանկ
առուտուր մը ըլլալու համար կ'ենթադրուի, որ Ա.
Ըլլայ մէկը որ խնդրէ կամ հրամայէ, այս ինքն է Յան-
ձնարարող (commettant) մը ըլլայ. Բ. Ուրիշ մէկն
ալ, որ յանձնարարողին ուղածը յանձն առնու կա-
տարել. այս ինքն Յանձնառուն (commissionnaire,
գործախնդուն). Գ. Յանձնուած բան մ'ալ, այս ինքն
Յանձնարարութիւն մ'ալ պիտ'որ ըլլայ, ու Դ.

Յանձնառուն վարձք մ'ալ, այս ինքն Յանձնառողէք (provision) մը պիտ' որ ընդունի:

47. Ան ամէն գործքերը, որոնք վաճառականը իր հաշուին համար կը հոգայ ու կը գործէ, կրնայ նաեւ ուրիշին յանձնել, որ հոգայ. ու ան ամէն գործքերը՝ որուն վաճառականը իր առանձին շահուն կամ հաշուին համար ձեռք կը զարնէ, կրնայ անոնք օտարին հաշուին համար ալ գործել: Ասկից կը հետեւի, որ որչափ առուտուրի տեսակ ու գործք կայ, նոյնչափ ալ Յանձնարարութեան գործքեր կրնան մտածուիլ. բայց աս ասանկ չէ, գլխաւորաբար Յանձնարարութեան առուտուր մինակ ան կ'ըսուի, երբ որ մէկը ուրիշին հաշուին ապրանք կը գնէ ու կը ծախէ. իսկ առուտուրի ուրիշ տեսակ գործքերը, որ ուրիշին հաշուին կ'ըլլան, Հոգացողութեան (procuration) գործքեր կը զըցուին: Բայց որովհետեւ վաճառականութիւն ըսած բաներն իս միայն ապրանք գնելու ու ծախելու վրայ չէ, հապա նաեւ փոխանակագրերու ու տեսակ տեսակ ստակներու գործքերուն վրայ ալ կը տարածուի. ասոր համար Յանձնարարութեան առուտուրը ասոնց ալ կը զբաղի, որոնք հոգացողութեան գործքերէն զանազանելու համար Բուն յանձնարարութեան գործքեր կը զըցուին: Իսկ հոգացողութեան կամ ասոնցմէ դուրս եղած գործքերը՝ Անյատուկ յանձնարարութեան գործքեր կ'անուանուին, որոնք շատ տեսակ են, որոնցմէ ոմանք մարդ անձամբ ու ոմանք ալ ուրիշի մը ձեռքով կը կատարէ: Ասոնց կարգը կ'երթան գլխաւորաբար Ուղեւորչութիւնը (expédition), ու Ապահովչութիւնը (assurance), որոնց վրայ ետքէն երկայն պիտ'որ խօսինք:

48. Յայտնի բան է որ յանձնարարողը կ'ուզէ, որ յանձնառուն իր հաշուին՝ իրեն առուտուրին վերաբերած գործք մը հոգայ: Բայց որպէս զի յանձնառուն աս իր պաշտօնը աղէկ կատարէ, կը պահանջուի որ յանձնարարողը իր ուզածը ձիշգ, յայտնի, որոշ ու

չիտակ բացատրէ կամ որոշէ: Ա՛ւ՛ աճառականութեան վիճակին վերաբերեալ գործքերուն մէջ չկայ անանկ մէկ գործք մը, որուն այնպէս ճիշդ ու որոշ խօսքերու ու բառերու հարկաւորութիւն ըլլայ, ինչպէս յանձնարարութիւնը: Ա՛րբ որ յանձնարարողը իր թղթերուն մէջ բառերու ու խօսակցութիւններու ճշգրտութեան միտ չղներ ու չղգուշանար, իրեն մեծ վնասներ կրնայ հասցընել, ինչու որ թէ որ յանձնառուն պատուաւոր մարդ ալ ըլլայ, կրնայ ծուռ հասկընալ. բայց թէ որ խորամանկ, խաբեբայ ու պատիւը բանի տեղ չղնող մարդ է, կամօք ծուռ կ'իմանայ ու ծուռ մեկնութիւն կու տայ: Ա՛նոր համար յանձնարարողը բան մը ապսպրած ատենը իր թղթին մէջ ճիշդ պիտ'որ որոշէ,

Ա. Ա՛իւթը: Ա՛ն ապրանքները, որոնք որ իր հաշուին պիտ'որ գնուին կամ ծախուին, պէտք է որ ճիշդ ու որոշ գրուած ըլլան: Թէ որ ապրանքներուն մէկը մէկալէն ունեցած տարբերութիւնները գրելով միայն կրնայ որոշ իմացընել, ան ատեն անիկայ բաւական ճշգրտութիւն սեպելով կրնայ այսչափով շատանալ. բայց երբ որ աս կերպով իրը բաւական յայտնի ու որոշ չկրնար ստորագրել ու ցուցընել, ան ատենը նոյն ապրանքէն, օրինակ մ'ալ խաւրելու է: Օ՛ր օրինակ ան մետաղէ ապրանքները, որոնք հասարակօրէն գործատուներ մէկ թուանշանով (նոմերոյով) կը նշանակէ, եւ որպիսութեան ու տեսակին կողմանէ նոյն կ'ըլլան, կրնայ իմացընել, երբ որ նոյն թուանշանը ու տեսակը գրելու ըլլայ. բայց գոյնին կողմանէ քիչ զանազանութիւն ունեցող մետաքսէ ապրանքները, նոյնպէս տպուած ձեւերուն կողմանէ մէկը մէկալէն տարբեր եղած բամբակէ ապրանքները եւ այլն, չկրնար ստորագրել կամ բաւական աղէկ իմացընել, անոր համար օրինակով մը ցուցընելու է:

Բ. Վ՛ինը՝ որով ապրանքը պիտ'որ գնուի կամ ծախուի: Արովհետեւ աս գինը գրելթէ չկրնար ճշգրտորոշուիլ, անոր համար գնելու համար յանձնարա-

բութիւն մը ըրած ատենդ, յանձնառուին պէտք ես
 գրել ամենէն բարձր գինը որ ապրանքը գնելու համար
 կրնայ տալ. իսկ ծախելու համար ըրած յանձնարա-
 բութեանդ ատենը իմացընելու ես ամենէն վար գինը,
 որով ան ապրանքը կրնայ ծախել: Ասկից զատ պէտք
 ես նաեւ անոր իշխանութիւն տալ, որ պէտք ու
 հարկաւոր եղած ատեն այնպիսի գնով մը կարենայ
 ծախել, որչափի որ իրեն տուած իշխանութեան վեր-
 ջին սահմանը կը հասնի: Աս տեսակ գինը Աւերջին
 գին կը զոյցուի:

Գ. Օճախելուն վտանգը, եւ թէ վնասը որուն
 վրայ է, յանձնարարողին չէ՛նէ յանձնառուին: Թէ որ
 յանձնառուն՝ գնած փոխանակագրերուն ու յանձնա-
 րարողին հաշուին՝ ուրիշներուն տուած ստակներուն
 յաջողութեանը երաշխաւոր կեցած է, ան ատեն
 կ'ըսուի, որ իր երաշխաւորութեանը վրայ կը դործէ,
 ու իր աս աշխատութեանը համար առած վարձքը
 երաշխաւորչէք կ'անուանուի: Աս վարձքը ու յան-
 ձնառողչէքը յանձնարարողը ու յանձնառուն առջի
 յանձնարարութեան ատենը պէտք է որ մէջերնին
 ճիշդ որոշեն, որպէս զի ետքէն շփոթութիւններու
 առիթ չըլլայ:

Գ. Աճարելու կերպը եւ կամ թէ ծախած կամ
 գնած ապրանքներուն գիմացը մէկը մէկալին երբ ու
 ինչպէս ստակ պիտ' որ անցընեն: Թէպէտեւ ստոյգ
 է որ երբեմն յանձնարարողը՝ յանձնառուին, ու երբեմն
 ալ յանձնառուն յանձնարարողին ստակ վճարելու
 կ'ըլլայ, դարձեալ երբեմն յանձնառուն յանձնարա-
 րողին, երբեմն ալ յանձնարարողը յանձնառուին ապ-
 րանք կը խրկէ, ու ասոնց նայելով հաստատուն չէ, թէ
 որը որուն պիտ'որ վճարէ, բայց միշտ հարկաւոր է,
 որ յառաջուց ասոր վրայ վեր ի վերոյ մէջերնին խօ-
 սած ըլլան, ու ետքէն թէ յանձնարարողին թղթե-
 րուն եւ թէ յանձնառուին անոնց տուած պատաս-
 խանին մէջ ճիշդ որոշուի ու մանրամասն գրուի, որ-

պէս զի վերջէն իրարու մէջ շփոթութիւն ու վէճ կամ կռիւ ծագելով, երկուքն ալ վտանգի մէջ չիյնան:

Ե. Ա երջապէս զանազան դորձքերու նայելով, ամէն մանր մանր պարագաները:

Մի կարծեր որ ասանկ մանր մանր ու ընդհանուր պահանջմունքները յանձնառուին հաճոյական չըլլար: Ինչու որ արդար ու պատուաւոր յանձնառուն կ'ուզէ ու կը բաղձայ, որ թէ իր իրաւունքը ու թէ իր պարտականութիւնը յայտնի ու որոշ ըլլայ. ասոր հակառակ խաբեբայ ու նենգաւոր յանձնառուներն են, որ ամէն բացայայտութիւնը ու յայտնի դորձք դորձելը կ'ատեն, բայց յայտնի բան է, որ այսպիսիներուն վրայ մարդ վստահութիւն ու ապահովութիւն չկրնար ունենալ, որն որ մէկ յանձնառուի մը ամենէն աւելի հարկաւոր բանն է, անոր համար ալ իրեն խօսքերուն՝ որչափ որ ուզէ մարդ, այնչափ կը հաւտայ:

49. Յանձնառուին պաշտօնը յանձնարարողին ուղածը կամ հրամայածը կատարել է, անոր համար ալ իրեն յանձնարարութիւն եղածէն աւելի կամ պակաս չկրնար դորձել: Ասիկայ աղէկ կատարելու համար, պէտք է նայի, որ

Ա. Ուղուած ապրանքէն ճիշդ ու որոշ օրինակ բերել տայ:

Բ. Ճիշդ անոնց հետեւի. բայց

Գ. Թէ որ պարագաները այնպէս փոխուին, որ յանձնարարողին ուղածին պէս կատարելը անկարելի ըլլայ, զրէ ու անոր իմացընէ ու նոր հրամանի սպասէ:

Դ. Յանձնարարողին բարին այնպէս հոգայ, իբրև թէ իրեն շահն է:

Ե. Աւածին, տուածին ու եղած շահին վրայ յանձնարարողին ճիշդ հաշիւ տայ, ու իր յանձնառողչէքէն զատ ուրիշ աւելի շահ մը չյուսայ ու չառնու:

50. Յանձնարարութիւնը, ինչպէս որ իրին բնութիւնն ալ կը ցուցընէ, յանձնարարողին համար շատ

մեծամեծ վտանգներ ունի, որոնք շատ անգամ վարժուհիներու համար վաճառականի աչքէն ալ կը սպրդին ու կը ծածկուին, եւ ետքը, բայց շատ ուշ իր փորձովը կը սորվի ու կը ճանչնայ: Աստ կանոնի պէտք է որ յանձնարարողը կամ թէ ըսենք վաճառականը՝ յանձնառուին քովը կամ ստակ եւ կամ ապրանք ունենայ, ու շատ անգամ իրեն ու յանձնառուին մէջ հաշուի տարբերութեան համար խնդիր ելլելով, յանձնառուն՝ յանձնարարողին իր քովը մնացած ստակը չուզեր խաւրել, մինչեւ որ հաշիւները շտկուին ու հաւասարցուին, ու քանի որ աս շփոթութիւնը կը տեսէ, յանձնարարողին ստակ կը պակսի ու նեղը կը մտնէ:

Շատ անգամ յանձնարարողը, թէ որ խաբեբայ, նենգաւոր ու պատիւը արհամարհող յանձնառուի մը ձեռք իյնալու ըլլայ, ծախելու համար խրկած ապրանքներուն վրայ մեծ վնաս կ'ընէ, ինչու որ սովորաբար այսպիսիները՝ յանձնարարութեամբ ծախելու համար ապրանքներ կ'առնուն, ու նոյն տեսակ ապրանքներով իրենց հաշուին ալ առուտուր կ'ընեն: Այլ որ ան իրեն յանձնուած ապրանքին գինը իյնալու ըլլայ, ու անկից ըստ մասին ծախուած ալ ըլլայ, յանձնառուն իր յանձնարարողին կը գրէ, թէ ապրանքդ չծախուիր կոր, մթերանոցին (հաշիւներ) մէջ կեցեր է, ու ծախուածին տեղ իր ապրանքին մնացածէն կը գնէ. իսկ երբ որ գիները կը սուղնան ու կը բարձրանան, կը գրէ որ արդէն ինքը յառաջագոյն տեղւոյն աժան գնովը ծախած է, ու սուտ մուտ գիներ ու հաշիւներ կը յարմարցնէ: Այլ պէտեւ ասանկ խաբեբաները հմուտ ու տեղեակ յանձնարարողին հսկող աչքէն երկայն ատեն չեն կրնար պրծիլ ու անտես մնալ, բայց ինչ օգուտ, որ վնասը արդէն եղած կ'ըլլայ, ու շատ անգամ դատաստանաւ ալ չկրնար իմացուիլ ու ցուցուիլ:

Ան յանձնառուները, որոնք սովորութենէ դուրս քիչ յանձնառողէքով գոհ կ'ըլլան, հասարակօրէն

յանձնարարողին խրկած ապրանքին գինէն գողնալով, յանձնառողէքին պակասը լեցընել կը յուսան: Թէ որ յանձնառուն իր պարտքը ալէկ հաւատարմութեամբ ու արդարութեամբ կատարելու ըլլայ, ծախուածին գինէն հարիւրին երկու իրեն մաս հանելը՝ շափաւոր վարձք է: Թէպէտեւ երբեմն այնպէս կը պատահի որ անիկայ իր յանձնառողէքը շուտով ձեռք կը ձգէ, բայց շատ անգամ ասոր հակառակը անանկ դէպքեր կը պատահին, որ իր բրած ծառայութիւնը վաստակածէն աւելի կ'ըլլայ, երբեմն ալ իր աշխատութեանը տեղ ձեռքը բան չանցնիր, ապրանքը ծախելու համար ասդին անդին կ'իյնայ, առտուրնէ մինչեւ իրիկուն կ'աշխատի, բայց գնող չգտնուելով դանգ մը յանձնառողէք չկրնար գտնել:

51. Ար կարծուի հասարակօրէն, որ յանձնարարութեան առուտուրը յանձնառողին ամենեւին վտանգ մը չունի, ու կան անտեղեակ ու անփորձ վաճառականներ, որոնք առանց իրենք զիրենք ճանչնալու ասանկ վտանգներու մէջ իրենք զիրենք կը ձգեն. բայց ասանկ կարծողները շատ կը սխալին:

Շատ անգամ կը պատահի, որ յանձնառուն յանձնարարողին համար ապրանք գնելու կ'ըլլայ, ու ստակը յանձնարարողէն կանխիկ առած չըլլար: Հասարակօրէն խնդրուած ապրանքը յանձնարարողին համարմանը վրայ կամ իր վրայ պարտք առնելով կը գնէ, ու յանձնարարողը փոխանակագիրը չվճարած՝ անոր հրամանին ու կարգադրութեանը համեմատ՝ ապրանքը խրկած կամ տրամադրած կ'ըլլայ: Արդ թէ որ յանձնարարողը՝ փոխանակագիրը վճարելէն յառաջ անանկանալու ըլլայ, ան ատեն յանձնառուն նոյն փոխանակագիրը վճարելու կը պարտաւորի, ու ան ապրանքին տեղը, որն որ երբորդի մը անցած ու ալ անոր ստացուածքը եղած կ'ըլլայ, բան մը չկրնար առնուլ:

Յանձնառուն՝ իրեն գնելու համար եղած յանձն-

արարութեանց մէջ չխաբուելու համար, պէտք է որ ապրանքները աղէկ ճանչնայ, ու միայն իր քննութեանը վստահանայ, ինչու որ ասանկ գործքերու մէջ ուրիշներուն նաեւ նոյն իսկ միջնավաճառներու ալ քիչ վստահութիւն ցուցընելու է: Ասկից զատ նաեւ իր յանձնարարողն ալ աղէկ ճանչնալու ու անոր ինչպէս մարդ ըլլալը գիտնալու է, մանաւանդ անոր համար որ անոր հաշուին այնչափ ապրանք պիտ'որ գնէ, ու երկայն ատեն անոր տեղը ձեռքը ամենեւին ստակ պիտ'որ չանցնի, մանաւանդ երբ որ ձեռքը եւ ոչ փոխանակագիր ունի: Գիտնալու է, որ դիտող մարդիկ (սէր+--լնդնէրը) շատ անգամ իրենց կարողութենէն վեր բաներ կ'որոշեն, ու գրածնին կամ որոշածնին քիչ մը ետքը ետ կ'առնուն, ու ամենեւին չեն հոգար որ արդեօք ասով յառձնառուն ինչպէս նեղը կը մտնէ:

Արշափ անգամ որ յանձնառուն որ ինչ եւ իցէ պատճառաւ յանձնարարողին համար փոխանակագիր կ'ընդունի, ինչպէս ըսեմ երբ որ անոր հաշուին փոխանակագիր կը գնէ, եւ կամ ծախած ապրանքին դիմացը առնելու ստակին տեղ փոխանակագիր կ'առնու, խոհեմութիւնը կը պահանջէ որ ինքը մէջը չմտնէ, ու անունը մէջը չխոթէ, հապա կամ ան փոխանակագիրը յանձնարարողին հրամանին (ըստ հրամանի Ա. Ա.) քաշել տայ, եւ կամ անոր ձեռքովը՝ որմէ որ փոխանակագիրը կ'առնու, յանձնարարողին վրայ դարձընէ (ճէրոյ ընել տայ), որպէս զի չըլլայ, որ ինքը մէջը մտնելով, անանկ դէպք մը պատահի, որ անիկայ վճարելու ստիպուի: Մայց յայտնի բան է որ աս զրուցածներնէս դուրս է ան դէպքը, երբ որ յանձնառուն երաշխաւորութեամբ կը գործէ:

Գնելու համար եղած յանձնարարութեանց մէջ շատ անգամ յանձնառուն՝ ստակը կանխիկ վճարելու կը ստիպուի, ու հասարակօրէն ընդունած փոխանակագրեր կ'ունենայ: Ասանկ պարագայի մէջ այնպէս

Հաշիւ կ'ընէ, որ մինչեւ ստակը վճարելու, կամ ստորագրած փոխանակագրին վճարուելու ժամանակը հասնի նէ, քովը եղած ապրանքները կը ծախուին, բայց շատ անգամ անանկ պարագաներ կը պատահին, որ ապրանքները յանձնարարողին սահման դրած վերջին աժան գնովն ալ չկրնար ծախել, ու վճարմունքներ ունենալուն պատճառաւ բարձր ու շատ սովորաբար պարտք առնելու կը ստիպուի, ու ան ապրանքը ծախելուն համար առած յանձնառողէքը եւ ոչ ան սովորաբար կրնայ հաւասարիլ:

Յանձնառողէքը, ինչպէս վերը ըսինք, հասարակօրէն հարիւրին երկու է. բայց աս ալ կը զրուցենք, որ երկու վաճառական ասոր վրայ մէջերնին զատ դաշնագրութիւն ու որոշմունք կրնան ընել: Նաեւ զանազան երկիրներ, զանազան յանձնառողէք սովորական կրնայ ըլլալ:

Գ. Առտոյի անորոշի արեւելիք:

52. Տուչութեամբ առուտուր (marché à livrer, à terme): Ասանկ կը կոչուի ան առուտուրը, երբ որ դեռ պատրաստ չեղած ապրանք մը գնելու վրայ խօսք կ'ըլլայ, ու ծախողը՝ որոշ ժամանակ մը անցնելէն ետքը տալու, իսկ գնողը որոշեալ ժամանակէ մը ետքը աս կամ ան գնով առնելու իրարու խօսք կու տան: Ասանկ վտանգաւոր գործողութեան մէջ, որչափ որ գնելու ապրանքին գինը անորոշ ու փոփոխութեան տակ ինկած է, գնողը պիտ' որ նայի, ու հաւանակաւորութեամբ որոշէ:

Ա. Գնելու նիւթը: Յայտնի բան է, որ անգործ ու չմընցած ապրանք մը՝ չկրնար ալ տեսնուիլ, անոր համար կամ վաճառականներու ճշգրութեամբ ստորագրուած պիտ' որ ըլլայ, ու անոր որպիսութիւնը վաճառականներու կանոնով, նշաններով որոշուած պիտ' որ ըլլայ, եւ կամ երկու դաշնագրողներուն միաբան հաւանութեամբը օրինակը կնքուի, ու պահուի կամ իրենց քովը եւ կամ երրորդ պատուաւոր ու համարում ունեցող անձի մը քով:

Բ. Ապրանքը արուելուն ժամանակն ու տեղը :
 Ասոնք երկու դաշնագրողները մէջերնին պիտի որոշեն
 կամ իրենց ազատ կամօքը եւ կամ ուրիշ պարագայի
 մը կապուելով, ինչպէս ըսեմ ժամանակին նկատմամբ
 իրարու մէջ հաստատեն, թէ երբ որ նաւը հասնելու
 ըլլայ :

Գ. Աճարուելու գինն ու ինչ կերպով վճարուելէքը :

Աս գրուցածնիս գնողին կողմանէ մտածելու բաներ
 են : Իսկ ծախսողը, թէ որ իրին վրայ ստուգութիւն
 ու ապահովութիւն չունի աւելի վտանգի մէջ է, անոր
 համար պէտք է մտածէ . Ա. Թէ արդեօք շինելու ու
 տալու ապրանքները ստուգիւ իրօք ալ կրնայ ճարել
 թէ չէ : Թէ որ ան ապրանքէն տեղ մը պատրաստ
 ունի, ան ատեն ապահով է . բայց երբ որ չունի ու
 ապօպրած է, ան ատեն ժամանակին հասնելուն ու
 յաջողելուն միշտ վտանգ կայ : Բայց երբ որ այնպէս
 միտքը դրած է, որ տալու ատենէն յառաջ պիտի
 գնէ, ան ատեն մեծ հիմն ու հաւանականութեան շատ
 պատճառներ պիտ' որ ունենայ, որ աս ապրանքէն ու
 իրին խոստացածին չափ ատենին իրեն օգտակար
 գնով մը կրնայ ճարել : Բ. Արդեօք յանձնելու
 ատենը որոշուի նէ, ստուգիւ ապրանքը ան ժամանա-
 կին կրնայ հասցընել . Գ. Ան ապրանքին համար՝ մին-
 չեւ յանձնելու ժամանակը ուրիշ հիմակուան որոշելու
 գինէն աւելի տուող չը կրնար արդեօք գտնել : Դ.
 Պէտք է որ յանձնելուն ու վճարման ամէն պարագա-
 ներն ու պայմանները ճիշդ որոշէ, ու կարգաւորեալ
 կերպով դաշնագրութիւն ընէ, ուր որ պարագաները
 յարմար ու հարկաւոր կ'երեւցընեն՝ օրինակ առնու կամ
 տայ, որպէս զի ասանկ գործքի մը մէջ, որ արդէն ըստ
 ինքեան վտանգաւոր է, հարկաւոր թէութիւններն ալ
 պակսելով, աւելի եւս մեծ վտանգի մէջ չի յնայ :

53. Սէկ տեսակ առուտուր մ'ալ կայ, որ Աւարձ-
 քով առուտուր կ'ըսուի, որն որ տուչութեամբ առ-

ուտուրին հետ գրեթէ նոյն է, միայն ասով անկից տարբերութիւն ունի, որ ասոր մէջ գնողը՝ ապրանքը գալէն ետքը առնելու չպարտաւորիր, բայց ծախողը բերելու կը պարտաւորի: Այժմ որ գնողը՝ ապրանքը պահել ուզէ, ան ատեն դաշնագրած գինը պիտ'որ վճարէ, ու ապրանքը առնու. բայց երբ որ չպահէր, ան ատեն պէտք է որ դաշնագրած վարձքը հատուցանէ, որպէս զի ապրանքը շնորհունելուն ու վտանգին համար ծախողին հատուցում ըլլայ:

54. Բաժանորդութեան թղթերու (ստոկս) կամ բաժանորդութեան առուտուր: Արովհետեւ շատ գործքեր կան, որոնց ձեռք զարնելը առանձինն մէկ մարդու կարողութենէն վեր է, ինչպէս ըսեմ Թրեստու ու Աստանդինուպոլսոյ եւ ուրիշ արեւելքի քաղաքներու մէջ շոգենաւներու երթեւեկութիւն հաստատել. դարձեալ կան գործքեր ալ, որոնց հետ անանկ մեծ վտանգներ կապուած են, որ մէկ մարդ մը առանձին անոնց դէմ չկրնար դիմանալ. ասանկ գործքերը յառաջ տանելու ու գլուխ հանելու համար շատ մարդիկ մէկտեղ կը միաբանին, ընկերութիւն մը կը հաստատեն, որն որ Բաժանորդութիւն կ'ըսուի: Աս գործքիս համար հարկաւոր եղած դրամագլուխը, որոշ, զոր օրինակ 100, 200 ու մինչեւ 1000'նոց մասեր կը բաժնեն, ու աս մասերուն նայելով, 100'նոց, 200'նոց ու մինչեւ 1000'նոց թղթեր կը հանեն, որոնցմէ ամէն մէկը Բաժանորդութեան թուղթ կ'ըսուի, եւ ով որ կ'ուզէ ու քանի հատ որ կ'ուզէ ան թղթերէն կ'առնու ու անոր տեղը առձեռնպատրաստ դրամ կը վճարէ: Աս կերպով ստակ ժողովելով, ան գործքը կը սկսի, յառաջ կ'երթայ ու գլուխ կ'ելլէ: Տարւոյն վերջը թէ որ աս գործքէն վաստակ եղած է, անիկայ ամէն ան թղթերէն առնողներուն (որոնք Բաժանորդ [ստոկս] կ'ըսուին) կը բաժնեն: Ամէն մէկ բաժնին ինկած շահը Բաժանելի (dividende) կը կոչուի, որն որ հարիւրին, 2, 3, ... 10 եւ այլն կրնայ ըլլալ: Արչափ

ատեն որ աս սկսուած գործքը կը շարունակուի, բա-
 ժանորդներէն մէկը չկրնար իր բաժանորդութեան
 թղթին ստակը պահանջել ետ առնուլ. բայց ուրիշին
 ծախելու իշխանութիւն ունի: Ասոր տեղը տուած
 ստակէն աւելի կամ պակաս առնելուն նայելով կը շահի
 կամ կը մնասի: Ասկից կը ծագի Բաժանորդութեան
 թղթերու առուտուր, որն որ Արեւելեան Հնդկաստան,
 Ամերիկա, Լոնտոն, Ամստերտամ, Վիէննա, Փարիզ,
 եւ այլն շատ երեւելի է: Ապա ուրեմն Բաժանոր-
 դութեան թուղթը ընկալագիր մըն է, որն որ ընկե-
 րութեամբ գործք մը յառաջ տանելու համար տրուած
 առձեռնպատրաստ դրամին գիմացը կը տրուի, որով
 ան թուղթը ձեռքը ունեցողը դաշնագրութեան հա-
 մաձայն՝ ան գործքէն յառաջ եկած շահին մասնակից
 կ'ըլլայ, եւ նաեւ (թէ որ մնաս ալ կայ) մնասին ալ
 հաղորդ կ'ըլլայ: Հասարակօրէն գործքին յաջողիլն ու
 չյաջողիլը՝ գործքին սկսելու ատենները անորոշ կ'ըլլայ,
 անոր համար ալ բաժանորդութեան թղթերը ան ա-
 տենը առուտուրի շէն ելլեր, բայց քիչ մը ետքը երբ
 որ գործքին յաջողութիւնն ու յառաջացումը տես-
 նուի, ան ատեն ասոնք ալ երբեմն բարձր ու եր-
 բեմն ալ ցած գնով կը գնուին ու կը ծախուին:

Բաժանորդութեան թղթերուն գինն ու արժէքը
 կէս մը Ա. Ան գործքին համար գրուած ստակին
 ապահովութենէն, կէս մ'ալ Բ. Ան գործքէն յա-
 ռաջ եկած կամ յուսացուած շահին մեծութենէ
 կ'առնուի, բայց միանգամայն Գ. Ստակին քիչութեան
 կամ շատութեան նայելով քիչ կամ շատ փնտռուիլն
 ալ, ու անոնք աւելի օգտիւ գործածելու առիթներն
 ալ գինը կ'աւելցընեն ու կը պակսեցընեն:

Թէ որ հասարակ ատեն դրամագլխոյ մը բերած ասկո-
 սիքը սովորաբար 100 ին 5 ըլլայ, իսկ բաժանորդութեան
 ընկերութենէն յառաջ եկած շահը 1000 ին 100 ին ալու-
 ըլլայ նէ, ան ատեն յայտնի բան է որ աս վաստակը վերի
 դրամագլխին հետ համեմատելով 2000ի վաստակ է: Ասոր
 համար է, որ բաժանորդութեան թղթերուն գիները կ'ել-

լեն ու կ'իջնան, ինչու որ վաստակն ալ փոփոխական է : Բայց թէ որ վաստակը միօրինակ քանի մը տարի աւելէ, ու յոյս ըլլայ որ անանկ կ'երթայ, եւ կամ աւելի կը շահնայ, ու ստակը ուրիշ տեղ աւելի շահով դործածելու յոյս չըլլայ, ան ժամանակը ան թղթերը որ քեզի 1000 արժած են, դիւրաւ 1200 ի, 1500ի նաեւ 2000 ի կրնան ծախուիլ : Ալիքնայի Գանուբի շոգենաւի ընկերութեան հաստատուելու ատեն հանած 500նոց թուղթը՝ ժամանակ եղաւ որ 597ի ծախուեցաւ, բայց ատեն ալ եղաւ որ 410ով ալ դժուարաւ կ'երթար :

55. Տէրութեան թղթերով առուտուր : Տէրութեան թղթեր կը կոչուին, ան ամէն պարտականութեան թղթերը, որոնք տէրութիւնը կամ կառավարութիւնը պարտք առած գրամագլխոյն համար կու տայ : Աս ընդհանուր անուան տակ կ'երթան թէ ան ամէն թղթերը, որոնք տէրութիւնը՝ իր արտաքոյ կարգի ծախքերը վճարելու համար առած պարտքին գիմացը կու տայ, որոնց համար տոկոսիք կը վճարէ, եւ թէ անոնք, որոնց համար տոկոսիք չվճարեր, հապա երբեմն երբեմն վիճակահանութիւններ (բիւն-էնէր) որոշած է, որոնք որոշած ժամանակին հանելով, ան պարտքին համար տուած պարտականութեան թղթերը կը վճարէ :

Տէրութեան թղթերով առուտուր ընելու համար ետեւէն եկած կանոններն ու հիմունքը միտք առնելու է :

Ա. Արբ որ ուրիշ կողմանէ ամէն պարագաները հաւասար են, ան ատենը ան պարտականութեան թղթերը աւելի յարգի են, որոնց համար պարտատէրը կրնայ ծանուցում ընել, ու ստակը ուղել, ու ծանուցում ընելէն քիչ մը ետքը պիտ'որ վճարուի, քան թէ անիկայ, որն որ ծանուցում չունի. եւ կամ ծանուցանելուն վրայ երկայն ատեն անցնելէն ետքը պիտ'որ վճարուի :

Բ. Անիկայ աւելի յարգի է, որուն որ գրամագլուխը աւելի ապահով է :

Գ. Արն որ մեծամեծ ու շատ արտօնութիւններ ունի:

Դ. Արուն որ տոկոսիքը աւելի է, ու կարգաւորեալ պիտ' որ վճարուի:

Ե. Արն որ շատ կը փնտռուի, ու անիկայ գնելու համար բաւական առձեռնպատրաստ դրամ ալ կայ:

Իսկ վիճակահանութեան պարտականութեան թղթերուն առուտուրին համար աս կանոնները միտք առնելու է:

Ա. Այրք որ ուրիշ կողմանէ ամէն պարագաները հաւասար են, անիկայ աւելի յարգի է, որուն ինչ բլաւիքը որոշուելուն, ու քաշուելուն ժամանակը աւելի մօտիկ է:

Բ. Այնչափ աւելի յարգի է, որչափ որ բլաւու շահը մեծ, ու կորսուելիքը քիչ է:

Գ. Արչափ որ վաստրկելու աւելի յոյս կայ:

Դ. Արչափ որ վաստրկածին վճարմունքը ապահով է:

Ե. Արչափ որ վաստրկածին հետ շատ ու մեծ արտօնութիւններ կապուած են:

Զ. Ի վախճանի, որչափ որ աւելի շատ կը փնտռուի, ու գնելու համար պատրաստ շատ ստակ ալ կայ:

Ամէն առուտուրներէն աւելի, աս տէրութեան թղթերուն առուտուրին մէջ անկարգութիւն ու խառնաշփոթութիւն ու անհաստատութիւն կը տիրէ: Շատ անգամ կը պատահի, որ պատերազմի ու խաղաղութեան, տէրութեան ելեւմտիցը վիճակին, կառավարութեան պատրաստութիւններուն, պաշտօնեաներուն փոփոխութեանը, եւ ուրիշ աս տեսակ բաներու վրայ սուտ ու մուտ համբաւներ ելլելով, տէրութեան թղթերուն գիներն ալ կ'իյնան ու կ'ելլեն: Ասանկ սուտ համբաւներ հանելու անկարգութիւնը կամ խաբէութիւնը քանի մը տեսակ մարդկան ու մանաւանդ ասանկ թղթերով առուտուր ընողներուն

մէջ տարածուած է, ու տէրութիւնը չկրնար ասիկայ գիւրաւ ջնջել, որովհետեւ թէ որ ասանկներուն հետ խստիւ վարուելու ըլլայ, աւելի դէշ կ'ըլլայ, ինչու որ ան ատենը ասանկ համբաւները գաղանի ու ծածուկ կը տարածեն, որն որ աւելի վտանգաւոր է: Ասանկ լուրերը, որ ծաղու համար հասարակօրէն Ակմբանոցի (պորսպի) նորալուրեր կը կոչուին, խելացի մարդու մը շէն կրնար ազդել, ու միայն անմիտ մարդիկ խաբուելով անոնք ստոյգ կը համարին: Բայց աս ալ ըսելու ենք, որ վաճառականը աս կերպ լուրերէն ան թղթերուն իյնալն ու բարձրանալը իր օգտին ու շահին կրնայ ծառայեցընել: Տէրութեանց վիճակը, պատերազմը, խաղաղութիւնը՝ որ իրօք շատ անգամ կը պատահին, ասոնց գիներուն վրայ շատ ազդեցութիւն ունին:

Տէրութեան թղթերու առուտուր ամենէն աւելի Լոնտոն, Ամստերտամ ու Վիէննա կ'ըլլայ. շատ վաճառականի տներ աս առուտուրին կը զբաղին, ու մասնաւոր միջնավաճառներ (Բէլլ-Էլեր) կան, որ գնողներ ու ծախողներ կը փնտռեն: — Գրեթէ ամէն տէրութեանց մէջ ասանկ պարտականութեան թղթեր կը գտնուին. Անգղիան իր Հոգերը, Գաղղիա իր Ռանդ ըսուած թղթերը, Հոլանտա իր Ինդեկրալն ու Ռանձները, Սպանիան՝ իր Արտոասը ու Ագուադոսը, Ռուսաստան՝ իր վկայականները, եւ այլն եւ այլն ունի: Ասոնց մանրամասն քննութիւնն ու ուսումը սորվիլ ուզողը, ասոնց վրայ եղած մասնաւոր գրքերը կարգալու է, սեղանաւորներէն ու միջնավաճառներէն տեղեկանալու է:

Աս նիւթիս վրայ ալ մեր ազգին մէջ մինչեւ հիմա գրուած գիրք մը չկայ: Ասանկ բաներու տեղեկութիւնը՝ վաճառականի մը շատ հարկաւոր բան է, ասոնցմով է որ ետեւէն եկող Եւրոպացիք, իրենցմէ յառաջ եղող վաճառականները անցան: Մեր ազգին գրագէտներն ալ ասանկ գիտութիւնները ազգին մէջ խոթելու սիտ'որ ջանան, թէ

որ ազգը թէ նիւթականին եւ թէ մաււորականին կողմանէ ծաղկեցընել կ'ուզեն :

Ե. Առաջինի մէջ պատկերով պայմանները :

56. Ամսայական կամ թէ վաճառականի մը առանձին կամքէն ու հաճոյքէն (+էֆէն) կախում ունեցող պայմանները՝ գիտութեան ու գիտնական քննութիւններու ամենեւին նիւթ չեն կրնար ըլլալ, ինչու որ իրարու հետ առուտուր ընող անձինքներուն վիճակին, առանձին պարագաներուն նայելով հաղարումէկ տեսակ կրնան ըլլալ, ուստի եւ չեն կրնար ալ մէկիկ մէկիկ համրուիլ ու քննուիլ : Արբեմն վաճառականը այնպիսի գնով ապրանք կը դնէ, որն որ որոշ ժամանակ ետքը ուրիշ վաճառատեղւոյ մը մէջ փոխանակազրով պիտի վճարուի, երբեմն ալ աս վճարմունքը ապրանքին տիրոջը յանձնուելէն կախում կ'ունենայ, իսկ երբեմն ան ծախուած ապրանքին տեղ երրորդէ մը առնելու ստակէն : Վարձեալ ծախուածին ընդունելի ըլլալը ըստ հաճոյից դրուած պայմաններէն կախուած կ'ըլլայ. համառօտ ըսենք, ասանկ ըստ հաճոյից դրուած կամսայական պայմանները՝ իրարու հետ դաշինք դնող երկու կողմանց առանձինն հանգամանքներէն կը կախուի, ու ընդհանրապէս ասոնց վրայ ուրիշ կանոն չկրնար դրուիլ, բայց եթէ աս, որ վաճառականը առանց մեծ ու երեւելի պատճառի մը հասարակ սովորական պայմաններէն շեղանալու է, որ իր վրայ տրանջել չտայ, թէ իրեն առուտուրի բարեկամներէն անսովոր պահանջմունքներ կ'ընէ : Աճառականին գործքը սովորաբար հասարակ ու ճանչուոր մարդիկներու հետ ըլլալով, սովորականէն դուրս եղած բանը անոնց զարմանալի կու գայ, ու աչքի կը զարնէ :

57. Առուտուրի մէջ գործածական եղած պայմանները երկու տեսակ են, մէյ մը Էական, մէյ մ'ալ Սովորութենէ դրուած կամ սովորութեամբ ընդունելի եղած պայմաններ : Այսական զլխաւոր ու բուն պայմանները ասոնք են :

Ա. Տ՛իշդ ու բացայայտ պիտի որոշուին ապրանքները, որոնք առուտուրի նիւթեր կամ առարկաներն են:

Բ. Ապրանքին դիմացը ինչ որ պիտի հատուցուի, հաստատ պիտի որ որոշուի. թէ որ ապրանքը ծախուած է, անոր դիմացը տրուելու ստակը, ստակին տեսակը, եւ այլն. իսկ թէ որ եղածը ապրանքներու փոխանակութիւն է, տուածիդ դիմացը առնելու ապրանքներդ, որոնց վրայ քու ստացուածքներուդ պէս իրաւունք ունիս:

Գ. Յանձնելուդ, կամ թէ ըսենք ապրանքը քեզմէ հանելուդ պայմանները:

Դ. Օտխած ապրանքիդ տեղ առնելու ստակիդ վճարուելուն կերպը, կամ թէ ըսենք արժէքը ձեռք բերելու կերպը:

58. Իսկ սովորութեամբ ընդունուած պայմանները ասոնք են, որոնք կ'արժեն, քանի որ առուտուրի մէջ բացայայտ հակառակը չդաշնադրուիր:

Ա. Ապրայ (Տրո): Ա շառահանները՝ ապրանքի մը ամանին, տակառին, արկղին, ծրարին կամ պատասանքին (անդալթին), որն որ ապրանքին հետ մէկտեղ կը կշռուի, Ապրայ կ'ըսեն: Ան ապրանքներուն ապրան, որոնք առանց վնասելու իրենց ամաններէն կամ ծրարներէն դուրս կրնան հանուիլ, դիւրաւ կը դանուի, երբ որ կշռելով ծրարին կշիռը կը դանես, եւ կամ բոլորին կշռէն՝ ծրարին կշիռը կը հանես, որն որ Անխառն կամ զուտ (netto) ապրայ կը զըցուի: Բայց կան շատ ապրանքներ ալ, ինչպէս շաքարաջուր (շրո), եղ, բամբակ, եւ այլն, որոնք առանց վնասի կամ վտանգի մը ամաններնէն կամ ծրարներնէն դուրս հանելն ու առանձին կշռելը (որ ապրայել կրնայ ըսուիլ) դժուար, մանաւանդ թէ ապրանքին վնասակար եւ կամ դոնէ վտանգաւոր կ'ըլլայ: Ասանկ ապրանքներուն ապրային կշիռը փորձով ու աչքի շափով իմանալու է: Ապրանքին ու

պատատանքին կշիռը մէկտեղ առած՝ խառն (sporco, brutto) կշիռ կը զըցուի, իսկ մինակ ապրանքին կշիռը՝ Անխառն կամ զուտ (netto) կը զըցուի:

Սովորութեամբ ընդունելի եղած պայմանը աս է, որ ապրային գինը հարիւրին մէկ քանի հաշուելով՝ ապրանքին ծախուած գնէն վար կ'առնուի, եւ կամ թէ որ գնողը խառն կշռոյն նայելով ապրանքին գինը պիտ'որ վճարէ, ան ատեն ծախողը հարիւրին մէկ քանի աւելի կու տայ:

Բ. Չիր կամ Աքան տալ (հապոյ): Ասիկայ ծախուած ապրանքին կշռոյն վրայ աւելի տրուածն է, եւ կամ գնողին առածին վրայ եղած յաւելուածը, որուն գինը ծախողը չկրնար պահանջել: Ասով հատուցում մը բրած կ'ըլլայ ան մնասին տեղ, որն որ գնողը կը կրէ, երբ որ մեծ կտոր ու շատը մէկտեղ գնած ապրանքը կտոր կտոր ծախելու ըլլայ. կամ թէ ըսենք գնողին՝ շատը մէկտեղ գնելուն համար վրան պարգեւ կը տրուի:

Խոշոր ու հաստը (հապոյ) ապրանքներուն առուտուրին մէջ վրան տրուածը կշռոյն հարիւր մասին մէկ մասն է, իսկ բարակներունը՝ հարիւրին կէս:

Սովորութենէ գրուած աս պայմանը կ'երեւայ որ վաճառականութեան սկիզբէն սկսած պիտ'որ ըլլայ, ու մինչեւ հիմա ալ կը տեւէ, թէպէտեւ անիկայ պահելու համար մինչեւ հիմա համոզող ու միտք հանգչեցընող պատճառ մը մտածուած ու յառաջ բերուած չէ: Ինչու որ գնողը յառաջուրնէ մտածելով, որ ծախողը վրան տալիքին համար գինը աւելի բարձր բռնած է, անիկայ վար զարնելու կը նայի: Աս պատճառաւս է, որ ծաղկեալ վաճառական ազգերը կամաց կամաց աս բանս կը վերջացընեն, վասն զի ազէկ նայելու ըլլանք, կը տեսնենք որ ասիկայ ըստ ինքեան կեղծիք ու ինքը զինքը խաբել մըն է, որն որ երկայն ու անօգուտ հաշիւներու ալ պատճառ կ'ըլլայ:

Գ. Այս ար առնուլ, կտրել կամ Ռապոյ, կամ թէ գնուած ապրանքին արժէքէն համեմատութեամբ վար

առնուած մասը, որն որ գնողին օգուտ է, ու իրեն կը թողուի, երբ որ գնածին գինը՝ սովորական կամ պայմանեալ ժամանակէն յառաջ կը վճարէ:

Հաստ տեղեր գործատուներու սովորութիւնն է, որ գնուած ապրանքներուն արժէքը վճարելու համար գնողին երկայն ատեն, այս ինքն քանի մը ամիս ժամանակ կու տան: Բայց սա անգործ մնացած գրամագլխոյն տոկոսիքը արդէն գործատէրը հաշուած ու անոր նայելով ապրանքին գինը որոշած կ'ըլլայ, անոր համար ալ երբ որ գնողը ժամանակէն յառաջ ստակը դայ վճարէ, ան ատեն տոկոսիքը թող կը տրուի:

Առուտուրի մէջ շատ անգամ անանկ ապրանքներ առջեւ կ'ելեն, որ կէս մը փասած կ'ըլլան: Աճառականը ասոնք ծախելու համար գինը վար կ'առնու, կամ թէ որ գինը հաստատուն պահէ նէ՝ կշիռը կ'աւելցընէ: Նոյնպէս թէ որ ապրանքը մաքուր տեսակ չըլլայ, մէջը օտար մասունք ունենայ նէ ան ատենն ալ մաքուր տեսակին գնովը ալ չկրնար ծախուիլ:

Աս ապրանքին գնէն վար առնուած մասը հաշուելը թուարանութեան կը վերաբերի, որն որ համեմատութեան մէջ ասոր վրայ հարկաւոր կանոնները կու տայ: Աս կանոններով կը հաշուի նաեւ փոխանակագիր կտարելն (տէ՛ռնոյ ընելն) ալ, որն որ ասոր հետ պէտք չէ շփոթել:

Առուտուրը այսչափ ընդհանրապէս քննելէն ետքը, հիմա անոր առանձինն գործքերուն վրայ զատ զատ խօսելու սկսինք: Առուտուրին գլխաւոր գործքերը, Գնել, Ծախել, Աճարել ու Ուղեւորել են, անոր համար ալ առուտուրի ուսումը նոյն կերպով կը բաժնենք ու կը խօսինք, Ա. Գնելու վրայ, Բ. Ծախելու վրայ, Գ. Աճարելու վրայ ու Դ. Ուղեւորելու վրայ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ

Գ Ն Ե Լ Ո Ւ Ա Ր Ա Յ

59. ԳՆԵԼՈՒ վրայ ընելու քննութիւննիս ու խօսելիքնիս մեր վախճանին օգտակար ընել կ'ուզենք նէ, միայն իրաւանց նկատմամբ քննելով ու մեկնելով չենք կրնար շատանալ, հապա վաճառականներու

նկատմամբ ու անոնց բմբռնածին նայելով գնելուն
ինչ բլլալը քննելու ու մեկնելու, ու տալու կանոննիս
աս սկիզբէն յառաջ բերելու ենք:

Արդ աս կողմանէ մտածելով Գնումն կամ Գնել
է Ապրանքի մը օրինաւոր տէր բլլալ, ծախողին հաւա-
նութեամբը ան ապրանքին դիմացը գին մը (ստակ)
վճարելով, ու յուսալով որ ան ապրանքը աւելի
բարձր գնով կրնայ ծախուիլ: — Գնելուն օրինա-
ւորութեան ու իրաւունքներէ պահանջուած թէ ու-
թիւններուն վրայ խօսիլը՝ առեւտրական իրաւագի-
տութեան կ'իյնայ, ինչպէս որ վաստըկելու յոյս ցու-
ցրնող հաւանականութիւնը կշռելու ու շափշրփելու
սկզբունքներն ալ՝ դիտողութեան (սէնտիմենտ) կը
վերաբերին. բայց գնելու այլեւայլ տեսակներու վրայ
խօսիլը, ու բուն գործքին բնութենէն սկզբունքներ
յառաջ բերելը, որոնցմով աս կամ ան կերպը ա-
ւելի շահով կրնայ գործածուիլ, աս հատուածիս
կ'իյնայ:

Թէ որ գնողն ու ծախողը, ապրանքին կեցած
տեղը ներկայ են, ու ապրանքը աչքէ անցընելու
արգելք մը չկայ, ան ատեն գնելը բոլորովին պարզ
կերպով մը կ'ըլլայ կը լմըննայ, երբ որ գնողը կէս մը
տեսնելէն ու քննելէն ետքը՝ կամ գնելու ապրանքին
մասնաւորապէս որոշեալ գնով մը դաշնագրութիւն
կ'ընէ, որն որ գնելու հասարակ ու սովորական կերպն է,
եւ կամ ընդհանրապէս առանց գին մը որոշելու, խել
մը այլեւայլ ապրանքները վրայէ վրայ հաշուելով՝ գին
կը կտրէ ու կը դաշնագրէ: Վայց երբ որ գնողն ու
ծախողը մի եւ նոյն տեղը ներկայ չեն, եւ կամ գնուե-
լու ապրանքը նոյն տեղը չէ, եւ կամ գնողն ու ծա-
խողը դաշնագրութիւնը մինակ իրենց մէջը չեն կրնար
լմընցընել, եւ կամ թէ հաշիւները գոցել լմընցընել
չեն ուզեր, ան ատեն գնելը աս հետեւեալ կերպերով
կրնայ բլլալ. Ա. Առուտուրի ծառաներուն ձեռքով,
Բ. Թղթակցութեամբ, Գ. Յանձնառուի ձեռքով,

Գ. Միջնավաճառներու ձեռքով, Ե. Տուչութեամբ,
 Զ. Վարձատրութեամբ :

60. Ինչ կերպով որ ըլլայ, գնելը միշտ Գաշինք մըն է, անոր համար ալ կ'ենթադրուի որ յառաջուընէ գաշնադրութիւն մը պիտ'որ ըլլայ, որուն մէջ ըլլալու գլխաւոր որոշմունքները երկու գաշնադրող կողմերուն կամքէն կախում ունին : Աայց շատ անգամ անանկ մասնաւոր ու երկրորդական պայմաններ ալ մէջ կը մտնեն, որով Գնման գաշինքին բնութիւնը կը փոխուի, եւ ուրիշ տեսակ գաշնադրութիւն մը կ'ելլէ : Արդ որպէս զի ասիկայ չըլլայ, պէտք է միշտ ապրանքի մը տեղ, որոշեալ գումար դրամ տալու պայմանը հաստատուն գնել ու պահել, ու աս պիտ'որ ըլլայ, որ գնելը՝ առուտուրի մէկալ տեսակներէն զատէ : Ինչու որ եթէ ապրանքի մը դիմացը ապրանք մը տրուի նէ, ան ատեն գնել չըլլար, հապա փոխանակութիւն (Բր-Տ) կ'ըլլայ. իսկ երբ որ ապրանքի մը դիմացը կէս մը ստակ կէս մ'ալ ապրանք կը տրուի, ան ատեն տալու ապրանքիդ ու ստակիդ իրարու համեմատութիւնը գործքին ինչ ըլլալը կ'որոշեն : Արեմն որպէս զի գնել ըլլայ, դիմացը ստակ (դրամ) պիտ' որ ըլլայ, ինչպէս վերը դրած սահմաննիս ալ կը յայտնէ :

61. Վաճառականը առած ապրանքին տեղ վճարելու գինը կամ անմիջապէս կը վճարէ, եւ կամ ետքէն տալու կը խոստանայ : Առաջին դէպքին մէջ եղած գնումը՝ Առձեռն պատրաստ դրամով, իսկ երկրորդը՝ Համարմամբ կամ Ապառիկ (à crédit) կ'ըսուի :

62. Արովհետեւ վաճառական մը ան վախճանաւ միայն ապրանք կը գնէ կամ ապրանքի փոխանակութիւն կ'ընէ, որ ետքէն դարձեալ անիկայ աւելի շահով ծախէ, անոր համար հարկ է որ գնելու հարկաւոր կանոնները կամ սկզբունքները միշտ աչքին առջեւն ունենայ, որպէս զի իր վախճանին կարող ըլլայ հասնիլ : Աս կանոնները ասոնք են :

Ա. Արշափ որ կարելի է, աժան գնէ :

Աւելի աժան գին անիկա է, որուն համար վճարուելիքը համեմատութեամբ աւելի քիչ է: Արդէս զի ասիկա ըլլայ, վաճառականէն կը պահանջուի, որ այլեւայլ ապրանքներուն յառաջ եկած տեղերուն տեղեկութիւն ունենայ, այլեւայլ վաճառատեղիներուն գիները գիտնայ եւ թէ ո՛ր աւելի աժան կրնայ գրանուիլ, եւ ո՛ր սուղ եւ այլն, որոնք վաճառականութեան աշխարհագրութիւնը ու գործնական առուտուրի տեղեկութիւնը կը սորվեցընեն: Միանգամայն այլեւայլ տեղերու հետ գործունեայ թղթակցութիւն պէտք է որ ունենայ, որով երեւելի վաճառատեղիներուն գիները կարող ըլլայ իմանալ. նաեւ հաշիւ ընել պիտ'որ գիտնայ, որ զանազան վաճառանոցներուն գիները իրարու հետ համեմատելով՝ իմանայ թէ ո՛ր տեղաց ապրանքը մինչեւ ծախուելու քաղաքը բերել տալով, աւելի աժան կ'իյնայ: Աս նիւթիս հաստատուն կանոն մը չկրնար տրուիլ, վաճառականին սրամտութիւնը պիտ'որ ըլլայ, որ ասոնք իմանալու պիտ'որ օգնէ: Հասարակօրէն ասչափս ստոյգ կը համարուի, որ առջի ձեռքէն այս ինքն նոյն ապրանքը յառաջ բերողներէն զնուածը միշտ աժան կրնայ իյնալ, բայց շատ անգամ անանկ պարագաներ կը պատահին, որ նոյն ապրանքը երկրորդ ձեռքէն՝ առջինէն աւելի աժան կրնաս առնուլ: Ինչու որ ան ապրանքին տէրը շատ անգամ ստակի կարօտութիւն կամ հարկաւորութիւն ունենալով, եւ կամ ինչ եւ իցէ կերպով նեղը մանելով, աժան տալու ու ձեռքէ հանելու կը նայի. դարձեալ կը պատահի, որ ան ապրանքէն վաճառատեղւոյ մը մէջ շատ գանուելով, ու փնտառողներն ալ քիչնալով, գիները կ'իյնան, եւ կամ ապրանքին գինը բարձրանալուն վրայ յոյս ունեցող վաճառականներուն գիտողութիւնը պարապ կ'ելլէ, եւ ուրիշ ասանկ հազարումկ պարագաներ կը պատահին, որ մեծամեծ փոփոխութիւններու պատճառ կ'ըլլան: Ասկից ալ զատ հասարակօրէն աճուրդի (Բեշ-

դի) Ժամանակ ապրանքները շատ աժան գնով կ'երթան :

Բ. Այլը որ (երկու կամ շատ ապրանքներու) գիները հաւասար են, պէտք է որ ան ապրանքը գնէ, որն որ աւելի աղէկ է :

Ան ապրանքները աղէկ կամ աղէկ տեսակ կ'անուանենք, որոնք աւելի գիւրաւ, ու աւելի սուղ կրնան ծախուիլ : — Վան ապրանքներ, որոնք իրենց գիմացկունութեանն ու ազնուութեան համար սուղ կ'արժեն, եւ որչափ որ աս յատկութիւնները աւելի ունենան, այնչափ ալ սուղ կը ծախուին, ինչպէս են կտաւ, շուխայ, կաշի եւ այլն : Վայց կան ապրանքներ ալ որոնք չէ թէ երկայն ատեն գործածելու համար են, հապա միայն կը պահանջուի որ գեղեցիկ ու միանգամայն աժան ըլլան : Ասիկա նորաձեւութեան (մոդայի) ապրանքներուն վրայ շատ կը տեսնուի, որոնք շատ անգամ միայն անգամ մը բաղնիք մտնելու ատեն կամ մէկ անգամ մը հանդէսի երթալու համար կը գործածուին ու անկէ ետքը բանի մը չեն ծառայեր : Անոր համար վաճառականը իր խոհեմութեամբն ու ճարպիկ մտքովը աս ամէն բանը ու իրեն յաճախորդներուն (հիշտէրէներուն) ինչ բանի կարօտութիւն ունենալը պիտ'որ կշռէ, ու անոր նայելով իր ընթացքը պիտ'որ ուղղէ :

Գ. Այնչափ միայն գնելու է, որչափ որ քիչ ատենի մէջ ու աւելի շահով կրնայ ծախել :

Աթէ մէկը նորաձեւութեան ապրանքներէն, որոնց գինը նորաձեւութիւնը անցնելէն ետքը մէկէն կ'իյնայ, այնչափ շատ գնէ ու բեռնաւորի, որ նորաձեւութիւնը անցնելէն կամ փոփոխուելէն ետքն ալ իր քովը անկից մեծ մթերք մը մնալու վախ ըլլայ, շատ անխոհեմութեամբ, մանաւանդ թէ անխելքութեամբ առուտուր ըրած կ'ըլլայ, ինչու որ ասով իրեն անանկ վտանգ մը կը պատրաստէ, որ նորաձեւութիւնը անցնելէն ետքը աս ապրանքները կամ իրրեւ անպի-

տան ու բանի մը շճառայող վաճառք քովը պիտի պահէ, եւ կամ շատ մնասով ծախելու պիտ'որ ստիպուի: Բայց ասոր հակառակ խոհեմ ու խելացի վաճառականը դիտէ ու ինքիբմէ կ'իմանայ, թէ աս նորածեւ ու նորելուկ բանը երկայն պիտ'որ տեւէ թէ չէ: Հասարակօրէն ան նորածեւ բանը (նորած), որ առողջութեան, դիւրութեան կամ միանգամայն գեղեցկութիւնն աւելցընելու շճառայեր, աղուորութիւն չունի, շատ աչքի կը զարնէ, կամ շատ քիչ տեսք ունի, շատ ծախքի կարօտ եւ կամ խիստ աժան բան է նէ, երկայն ատեն չմնար ու չտեւեր. եւ ասոնցմէ ապրանքի բազմութիւն մ'թերելը՝ չէ թէ միայն անխոհեմութիւն, հապա շատ մնասակար ալ է:

Գ. Արբ որ ապրանքներու փոխանակութիւն պիտ'որ ընես, պէտք ես անանկ ապրանք տալ, որն որ առած ապրանքիդ պէս աւելի շահով ծախելու յոյս չունիս, ու անանկ ապրանք առնուս, որն որ աւելի դիւրաւ ու աւելի շահով կը յուսաս որ կարող ես ծախել:

Արնայ պատահիլ, որ երկու վաճառական իրարու հետ փոխանակութիւն ընել ուզած ատեննին, երկուքն ալ տեսակ մը ապրանքէ իրենց ծախելու հարկաւոր եղածէն շատ աւելի ունենան, ու միանգամայն մէկուն քով եղածը մէկալին քովը պակսի, ան ատեն փոխանակութիւնը երկու կողման ալ օգտակար է:

Ե. Արբ որ երկու նոյն տեսակ ապրանքներուն արժէքը, գեղեցկութիւնն ու վախճանին համաձայնութիւնը՝ հաւասար է, ան ատեն ան վաճառականէն գնելու է, որն որ գինը վճարելու աւելի երկայն ատեն կը թողու, եւ կամ թէ որ մէկալէն աւելի յառաջ ալ պահանջելու ըլլայ, գինէն այնչափ վար կ'առնու, որ յառաջագոյն վճարած գրամագլխոյդ տոկոսիքին կը հաւասարի:

Զ. Թէ որ դիտողութեան՝ այս ինքն գիները բարձրանալուն սպասելու մտքով ապրանք կը գնես,

գիները բարձրացած ժամանակը ծախելու յոյս ունեցածէդ աւելի պէտք չէ որ գնես :

Աթէ որ վաճառական մը այնպիսի վիճակի մէջ է, որ գիներուն բարձրանալուն չկրնար սպասել, ինչու որ գիները սովորաբար կամաց կամաց կը բարձրանան, լաւագոյն կ'ընէ, թէ որ ասանկ գիտողութեան մը ձեռք չզարնէ : Ասան զի ասանկ դէպքերու մէջ վաճառականին մեծ վտանգ կայ. շատ անգամ գիները բարձրանալէն յառաջ անանկ դէպք մը կը պատահի, որ վաճառականը ստակ գտնելու համար ունեցած ապրանքը քիչ շահով, եւ կամ շատ անգամ փաստով ալ ծախելու կը ստիպուի : Ասով շատ կը փնասի, մանաւանդ անոր համար՝ որ անյարմար ու անհամաձայն ժամանակ ծախելու հանեց, ու վախճանը ուրիշ բան չէր, բայց եթէ իր ստակի արկղին օգնութեան հասնիլ : Ասով իր ըրած անխելքութիւնը կը տեսնէ, բայց ի՞նչ օգուտ որ շատ ուշ :

Թէ որ մի եւ նոյն տեսակ ապրանքի գիտողութիւն ընող շատեր կան, ան ատեն անոնց հետ նոյն գիտողութիւնը սկսիլը խելք չէ, ինչու որ սովորաբար անոնցմէ շատերը գիներուն բարձրանալուն չկրնալով սպասել, իրենց ունեցած ապրանքը ժամանակէն յառաջ ծախելու կը հարկադրին, ուստի եւ այնպէս անոնցմէ աժան կրնաս գնել, ու աւելի համարձակ ու առանց վախի գիներուն բարձրանալուն կրնաս սպասել : Առուտուրի մէջ աս վերջի ըսածներնուս աղէկ մտադիր ըլլալու է :

Է. Ալ որ յանձնառուի կամ միջնավաճառի ձեռքով մէկ որոշեալ տեղ մը ապրանք գնել կու տայ, պէտք չէ որ մի եւ նոյն ժամանակուան մէջ շատ անձինքներու նոյն տեսակ ապրանքի յանձնարարութիւն ընէ : Ինչու որ ամէն ապրանք, երբ որ շատ փնառուի, կը սուղնայ : Արդ երբ որ մի եւ նոյն ժամանակ նոյն տեսակ ապրանքի վրայ շատերուն յանձնարարութիւն կ'ընես, որ նոյն տեղէն գնեն ու խաւրեն, յայտնի բան

է, որ ան ապրանքը շատ փնտռուած կ'ըլլայ, ու շատերը նոյն ապրանքը ուզած կ'ըլլան, ուստի եւ անխորհուրդ ու քեղի վնասակար կերպով մը նոյն ապրանքը կը սուղնայ:

63. Ապրանք մը գնելու ատեն, մէկէն վճարելը միշտ կարելի չէ, մանաւանդ թէ վաճառականներու մէջ հասարակ բան մըն է, որ գնուած բանին գինը մէկէն չեն վճարեր: Ասով կ'ենթադրուի, որ ծախողը գնողին վրայ վստահութիւն մը ունի, որ անիկա իր ճարակութեամբն ու իր առուտուրէն ունեցած վաստակովը՝ իր առած ապրանքին գինը կամ թէ բսնք իր պարտքը չէ թէ միայն կրնայ վճարել, այլ նաեւ պայմանեալ ժամանակ մը որոշուի նէ, ճիշդ ատենին կ'ուզէ վճարել, ու կը վճարէ: Ասանկ գնողին վրայ եղած վրստահութիւնը կամ բարի հաւատքը, Համարում (credit) կը կոչուի, եւ վաճառականի մը անանկ հարկաւոր է, որ ինչպէս շնչաւոր կենդանի մը առանց օդոյ չկրնար ապրիլ, ասանկ ալ վաճառականը առանց ասոր չկրնար կենալ. թէ որ ասիկա չունի նէ, եւ ոչ պզտիկ առուտուրի կամ ինչ եւ իցէ գործքի մը ձեռք կրնայ զարնել, եւ ձեռք զարնելու ալ ըլլայ, գլուխ չկրնար հանել: Աոյն իսկ ամենահարուստ վաճառականն ալ ասոր կարօտ է, ինչու որ առուտուր ընելու համար ստակ ունենալը բաւական չէ: Արեւմն սկսինք հիմա համարման վրայ խօսիլ, ու փնտռենք, թէ վաճառականը ինչ կերպով անիկա կրնայ ստանալ ու պահել:

64. Վաճառականը համարում ստանալու համար պէտք է որ Ա. Բաւական ինչք ու ստացուածք (կարողութիւն) ունենայ, որ իր ներկայ ու ետքէն պատահելու գործքերը եւ ուրիշներուն պարտականութիւնները կարող ըլլայ կատարել. Բ. Պէտք է որ տեղեկութիւններով միտքը լեցուցած ըլլայ ու պարաստութիւն ունենայ, որով ունեցած ստացուածքը հմուտ վաճառականի պէս կարող ըլլայ գարձընել ու

իրբեւ պատուաւոր տանտէր ապրիլ, եւ Գ. Ի վախճանի պէտք է որ ուրիշներուն ունեցած պարտաւորութիւնը ժամանակին կատարելու կամք ու կարողութիւն ունենայ: Ասոնք համարում ստանալու համար անանկ հարկաւոր բաներ են, որ եթէ ասոնցմէ մէկը պակաս ըլլայ, վաճառականին բոլոր համարումը կ'եղծանի, ու ասով իրեն գործոցը հիմն ալ տակն ու վրայ կ'ըլլայ: Հասարակօրէն անանկ մարդիկներուն վրայ, որոնք հարստանալով շռայլութեան զարկած են, կամ ասոր հակառակ պատուաւոր մարդիկ են, բայց ստացուածք մը չունենալով կը մուրան, կամ վաճառականութեան վրայ տեղեկութիւն չունենալով ու յանգուզն դիտողութիւններու ձեռք զարնելով ունեցածնին կորսընցուցեր են, համարում չզրուիր: Աւերը դրած պայմաններով է, որ վաճառականը համարման ընդունակ կամ արժանի կ'ըլլայ, ու աս պայմանները որչափ աւելի կատարեալ ունենայ, այնչափ աւելի համարում կամ համարման ընդունակութիւն ու արժանաւորութիւն կը ստանայ:

65. Ապա ուրեմն համարումը՝ ուրիշներուն իր վրան ունեցած կարծիքէն, ու իրեն ալ համարման ընդունակութենէն կախում ունի: Ասիկա ձեռք ձգելու համար, վաճառականը պիտ'որ աշխատի, որ ուրիշները գիտնան ու համոզուած ըլլան, որ ինքը համարման ընդունակ մարդ է, ապա թէ ոչ՝ թէ որ չգիտնալու ըլլան կամ իր համարման ընդունակութիւնը ճանչցած չըլլան, իր վրան համարում չեն կրնար ունենալ: Արդ վաճառականը իրեն համարման ընդունակութիւնը ուրիշներուն ցուցընելու համար, պէտք է որ

Ա. Ամէն տեղ առհասարակ իր հմտութիւնը (այս ինքն առուտուրի տեղեակ մարդ ըլլալը), խոհեմութիւնը, հաւատարմութիւնը, ճարպկութիւնը կամ գործունէութիւնն ու տնտեսութիւնը ցուցընէ:

Բ. Առհասարակ ամէն տեղ, բայց մանաւանդ իրեն բնակութեան քաղաքը կամ տեղը, որչափ կա-

րելի է՝ քիչ փոխ առնու կամ թէ ըսենք համարման քիչ գործածութիւն ընէ :

Գ. Չանայ որ ամենէն աւելի հաստատուն, արդար, հաւատարիմ ու շիտակ սիրտ ունեցող վկայուած մարդիկներու հետ գործ տեսնէ :

Դ. Հասարակօրէն սովորական դէպքերու մէջ սովորական ժամանակէն աւելի երկայն ատենի համար ապառիկ չպահանջէ ու առնուլ չուզէ :

Ե. Անեցած վճարմունքները ժամանակին առանց յայտադելու վճարէ, բացառութիւններ չխնդրէ, ու մէկուն ունեցած պարտքէն կամ վճարմունքէն ոչ անձամբ եւ ոչ ալ միջնորդաւ չկարէ :

Զ. Ընանկ գիտողութիւններու ձեռք չղարնէ, որ շատ աչքի զարնելով՝ իր բարեկամները իրեն վրայ սկսին հոգ ընել, սիրտ հատցընել, իր սոսիւները սկսին խստիւ քննել ու խօսիլ, ու թշնամիները վար զարնեն ու վրան ծիծաղին :

Վաճառականի մը յաջողութիւնն ու յառաջացումը, ինչպէս ըսինք, գլխաւորաբար, մանաւանդ թէ մինակ աս համարումէն կախուած է, անոր համար ալ պիտ'որ նայի, որ իր համարումը հաստատուն ու տեւական ընէ : Շատ մեծ զգուշութիւն պիտ'որ ընէ, ինչու որ իր ստացած համարումը թեթեւամտութեան գործքով մը մէկէն մէկ բոսէի մէջ կրնայ կորսընցընել, բայց ասոր հակառակ համարումը ասանկ մէկ վայրկենի, եւ ոչ ալ խել մը ատենի մէջ կրնայ ձեռք ձգել : Զառաջուց բարի անուն պիտ'որ ունենայ, ու յարատեւութեամբ եւ անխարդախութեամբ պիտի ջանայ հաստատուն պահելու : Աերը գրած պայմաննիս ու մանաւանդ անխարդախութիւնը մեր ազգին վաճառականներուն նկարագիրը պիտ'որ սեպուի, ինչպէս որ յառաջ էր, ասանկ ալ հիմա, ու ասկէ ետքն ալ աս գեղեցիկ զարդը մեր ազգին վրայէն պակաս չըլլայ :

66. ԱՌԵՒՏԻՆԵՆ մտօք առեալ վաճառումն կամ Ծախել կըսուի ան գործողութիւնը, երբ որ մարդ մը ուրիշ գնողի մը հետ գաշնադրած կամ սակարկած (խաղաղ բրած) գնով մը իր ստացուածքը կը թողու, որպէս զի անկից շահ կամ վաստակ ունենայ:

Աս առջեւի հատուածիս մէջ ան ամէն սկզբունքները պիտ'որ յառաջ բերենք, որոնք պէտք է պահել, որ վաճառականը որչափ կարելի է կարող ըլլայ աւելի վաստակիլ, եւ թէ որ գնած ապրանքը ձախորդութեամբ չկրնար ծախել նէ, որչափ կարելի է, քիչ կորուստ ունենայ: Բայց ասոնք մեկնելու սկսելնէս յառաջ շահին ու կորստեան վրայ վաճառականի վերաբերեալ տեղեկութիւն մը կ'ուզենք տալ, ու անոնց գաղափարն ու ինչ ըլլալը աղէկ մը հասկըցընել, որն որ վաճառականի մը ամենահարկաւոր բան է:

67. Թէ որ վաճառականը ապրանքը՝ գնածէն աւելի սուղ կամ թանկ ծախէ, ան երկու դումարներուն (այս ինքն գնածին ու ծախածին) իրարմէ ունեցած տարբերութիւնը դեռ բուն զուտ վաստակ չզրցուիր: Օրուտ վաստակ (շահ) ան ատենը կ'ըլլայ, երբ որ Ա. Ան ապրանքը գնելու համար տուած ստակդ, Բ. Անոր համար բրած բոլոր այլեւայլ ծախքերդ ու միանգամայն Գ. Աս տուած ստակներուդ (իբրեւ դրամագլուխ մտածելով) մինչեւ ապրանքը ծախած ատենդ բերելու տոկոսիքը, դարձեալ Գ. Խանութին ծախքերը ու վտանգները. ասոնք ամէնը մէկտեղ, ապրանքը ծախած ատենդ առած դումարէդ հանելու ըլլաս ու մնացորդ մը մնայ:

Թէ որ վաճառական մը իր առուտուրին համար դրած դրամագլուխը որոշեալ ժամանակի, զոր օրինակ մէկ տարւան միջոցին մէջ շատ անգամ շրջան ընել

կու տայ, այս ինքն իր դրած գրամագլխոյն բազմա-
պատիկը ապրանք կը ծախէ, դարձեալ երբ որ շատը
մէկտեղ կամ մեծ մեծ կտորներով առուտուր կ'ընէ,
ու ինքն ալ մեծ համարում ստացած կ'ըլլայ, ու յա-
ջողութեամբ այնպիսի յաճախորդներ ունի, որոնց
վրայ ապահով կրնայ ըլլալ, որ ժամանակին կը վճա-
րեն, ան ատեն ի հարկէ պէտք է որ աւելի շահ ունե-
նայ, քան թէ ասոր հակառակ դիպուածներու մէջ,
երբ որ աս պայմանները չունենար: — Իսկ մնաս կամ
կորուստ ան ատենը կ'ըլլայ, երբ որ ծախած ապրանք-
ներէն մտած գումարը՝ վերը դրած ծախքերուն գու-
մարին չհասնիր:

68. Անոր համար այնչափ աւելի վաստակ կ'ըլլայ,

Ա. Արչափ որ ապրանքները շուտ կը ծախուին:

Բ. Արչափ որ ծախած ապրանքներուն գինը շու-
տով կրնայ առնուիլ:

Գ. Արչափ որ գնած ապրանքներուն արժէքը ուշ
կը վճարուի:

Դ. Արչափ որ շատը մէկտեղ կամ մեծ կտորնե-
րով առուտուր կ'ըլլայ: Պինները կամ արժէքը որո-
շելու վրայ դրած գլուխնիս՝ վաճառականին ան կա-
նոններն ու սկզբունքները կը սորվեցընէ, որոնցմով
ապրանք մը ծախելու ատեն գին պիտ'որ դնէ:

69. Թէ որ կ'ուզէ վաճառական մը, որ հաստա-
տած առուտուրը իրեն շահաւոր ու պտղաբեր ըլլայ,
ու ինչպէս որ պէտք է նէ, կարող ըլլայ դարձընել,
ի հարկէ պէտք է որ գոյք (fondo) ունենայ. բայց
ասիկա ալ անանկ մեծ ու շատ ըլլալու չէ, որ կարող
չըլլայ ինչպէս որ պէտք է դարձընել ու առուտուրին
գործածել: Աւելի օգտակար ու շահաբեր է դրամա-
գլուխ մը առուտուրի մէջ շատ անգամ շրջան ընել
տալ (կամ դարձընել) ու ամէն մէկ շրջանին վաստը-
կիլ, քան թէ մեծ գրամագլուխ մը կամաց կամաց
շարժել: Շատ անգամ կը տեսնենք ու կը զարմա-
նանք, որ դուզնաքեայ ու ստորին աստիճանի մարդիկ

իրենց փոքր գոյքը կամ գրամագլուխը, որ իրենց առուտուրին համար գրած են, անանկ գործունեայ կերպով մը կը դարձրնեն, ու շրջանի մէջ կը խոթեն, ու կը գործածեն, որ անով իրենց տանը պէտքն ու կարօտութիւնը հոգայէն ու խանութներնուն ծախքը վճարելէն զատ, նաեւ ամէն տարի ունեցած վաստակովնին քիչ մը բան ալ մէկ դի կը դնեն: Ազտիկ ու քիչ գրամագլխով այսչափ պտուղ հանելը կարելի է, բայց մեծ գրամագլուխները գործածելու ու շրջանի մէջ խոթելու ամէն անգամ առիթ չըլլար:

Անոր համար պէտք չէ որ վաճառականը իր առուտուրին մէջ այնչափ շատ ու այլեւայլ գրամագլուխներ դնէ, որ ան առուտուրին մէջ չկրնայ գործածել: Բայց ասոր ալ պիտ'որ նայի որ ասկից զգուշանամ ըսելով՝ մէկալ ծայրը շանցնի ու բոլորովին ներհակ սխալման մէջ չիյնայ, այս ինքն գործքի կամ շրջանի մէջ եղած գրամագլուխները, որոնք ետքէն նոյն գործքին մէջ հարկաւոր կրնան ըլլալ՝ քաշէ հանէ: Անոր համար խոհեմ ու խելացի վաճառականներ, երբ որ կը տեսնեն որ աւելորդ ստակ ունին, անոնցմով անանկ ապրանքներ կը դնեն ու կը պատրաստեն, որ դարձեալ ժամանակին առանց կորուստ մը ունենալու նորէն ստակի կրնան դարձրնել: Աս տեսակ միջոցներէն մէկն է նաեւ, կրնանք ըսել որ ամենէն ազէկ ու սովորական եղած ու գործածուած միջոց է հաստատուն փոխանակադրերը կտարել (որոնք ընել):

Մինչեւ հիմա շահի ու փնասի վրայ ըսածնիս կ'ուզենք մէկ երկու օրինակով բացայայտ ընել: Բայց ասկից յառաջ վերջի համարներուն մէջ «Գրամագլուխ մը շրջան ընել տալ, դարձրնել», ըսածնիս պէտք է որ համառօտիւ մեկնենք: Գրամագլուխ մը շրջան ընել տալ, դարձրնել, շրջանի մէջ խոթել՝ ուրիշ բան չէ, բայց եթէ առուտուրի համար գրուած գրամագլխով ապրանք մը գնել ու ծախել, ետքը ան ստակով նորէն ապրանք գնել ու ծախել, եւ այսպէս միօրինակ (մէկ, երկու, երեք, . . . անգամ) աս գրամագլուխը դարձրնել: Իմանալու համար թէ որոշ ժա-

մանակի, զոր օրինակ մէկ տարւան մէջ, դրամագլուխ մը քանի անգամ շրջանի մէջ մտած է, պէտք է ծախուած ապրանքներուն արժէքին դումարը՝ դրամագլխոյն վրայ բաժնել, ինչ որ քաներորդ կ'ելլէ՝ ան դրամագլխոյն շրջանին թիւը կը ցուցնէ: Ըսենք որ վաճառական մը 40,000 զուրուշ առուտուրի դրամագլուխ դրած է, ու տարին 400,000ի ապրանք ծախեց, ան ատեն աս մարդը իր դրամագլուխը մէկ տարւան մէջ 10 անգամ շրջան ընել տուած կամ դարձուցած է, ինչու որ $\frac{400,000}{40,000} = 10$: Աս գիտնա-

լէն ետքը՝ մեր մեկնութեանն ու օրինակներուն դանք:

Գնենք թէ վաճառականի մը իր առուտուրին համար դրած կամ դործածած դրամագլուխը ըլլայ 30,000 զուր: Աս դրամագլխոյն շրջանը (այս ինքն ծախած ապրանքներուն դումարը) ըլլայ 100,000 զուր. որմէ յայտնի է որ դրամագլուխը աս դէպքիս մէջ $3\frac{1}{3}$ անգամ շրջան ըրած կամ դարձուած է, ինչու որ $\frac{100,000}{30,000} = 3\frac{1}{3}$: Իսկ աս

առուտուրէն եղած շահը հաշուետումարին

նայելով, գտնուի 6,000 զուր:

Ասկից կը հետեւի որ աս դրամագլուխը՝ բոլոր շրջանները մէկտեղ առնելով՝ (այս ինքն 100,000) իրեն 100ին 6 բերեք է, իսկ ամէն մէկ շրջանը (այս ինքն միայն դրամագլուխը առանձին՝ միջինը առնելով՝ 100ին 20: Ինչու որ թէ որ 100,000ը 6000 բերելու ըլլայ, 100ը քանի կը բերէ. յայտնի է որ համեմատութեան կանոնով $\div = \frac{6000 \times 100}{100,000} = 6$:

Իսկ թէ որ 30,000ը 6000 կը բերէ նէ, 100 քանի կը բերէ.

յայտնի է որ $\frac{6000 \times 100}{30,000} = \frac{60}{3} = 20$:

Բայց ինչպէս վերը ըսինք, աս 6000ը զուտ մարուր վաստակ չէ: Չուտ վաստակը ան ատեն կը գտնուի, երբ որ ասկից 30,000ին տոկոսիքը, առուտուրի պատճառաւ եղած ծախքերը, ու վտանգը՝ որուն մէջը որ անիկայ ձգած ենք, հաշուենք, ու 6000էն հանենք: Տոկոսիքը, որն որ աս դրամագլուխը ապահով տեղ մը դրուելով կրնայ բերել, հարիւրին 5ով, գնենք թէ ըլլայ 1500 զուր:

Առուտուրի դործքը յառաջ տանելու համար բռնած մարդիկներուն, կարասեաց, շէնքի եւ այլն գացած ծախքերը ըլլան 2500 զուր:

Իսկ սնանկութիւններով, չվճարելով, դատերով եղած ֆեասը ըլլայ գրեթէ 1000 զուր .

Արդ առուտուրին ծախքերուն ու կորուստներուն գումարը, յայտնի է որ կ'ըլլայ 5000 զուր .
որն որ վերը գրած վաստակէն այս ինքն 6000 ,, էն

Հանելու ըլլաս կը մնայ մնացորդ 1000 զուր .
որ է զուտ շահ կամ վաստակ, որն որ վաճառականը իբրեւ իրեն գործքին ու աշխատութեանը վարձք ձեռք կը ձգէ: —
Որովհետեւ 5000 զուրուչ ծախքը 100,000ին հետ համեմատելու ըլլանք՝ 100ին 5 կու գայ, իսկ 30,000 գրամագլխոյն հետ համեմատուելու ըլլայ 100ին $16\frac{2}{3}$ կու գայ, ասկից յառաջ կու գայ որ զուտ շահը բոլոր շրջաններուն մէկտեղ (այս ինքն 100,000ին) հարիւրին 1 է (ինչու որ 6էն 5 պիտ'որ ելլէ), իսկ գրամագլխոյն $3\frac{1}{3}$ է, որն որ կը գլուխուի թէ որ 20էն $16\frac{2}{3}$ ը հանելու ըլլաս:

Աւերը ըսինք որ վաճառական մը իր գրամագլուխը որոշեալ ժամանակի մէջ շատ անգամ գարձընելու է, եւ թէ շատ անգամ մեծ գրամագլուխ մը չկրնար աղէկ գործածելու առիթ գտնուիլ: Գնենք որ վաճառական մը 200,000 արծաթ ֆիորին առձեռնպատրաստ գրամ գրամագլուխ ունենայ իր առուտուրին մէջ, ու տարին 200,000 արծաթ ֆիորինի ապրանք ծախէ, այս ինքն իր գրամագլուխը մէկ անգամ գարձընէ: Գնենք միանգամայն որ աս առուտուրին մէջ հարիւրին 10 վաստակած, ուստի եւ 20,000 արծաթ ֆիորին շահած ըլլայ: Փոխանակ 200,000 գրամագլխոյն՝ աս առուտուրին համար 50,000 արծաթ ֆիորին միայն գնենք, որն որ երեք անգամ գարձընէ, ու հարիւրին ալ 8 միայն վաստակի: Յայտնի բան է որ բոլոր առուտուրէն ունեցած

անխառն շահը կ'ըլլայ $\frac{50,000 \times 3 \times 8}{100}$
այս ինքն 12,000 արծ . ֆ

Մնացած 150,000ը՝ շահի գնէ 100ին
Տով ու անկից վաստակի 7500 ,, ,,

Եւ որովհետեւ 50,000 արծաթ ֆիորինին երեք շրջանը 150,000 կ'ընէ, ուստի եւ քիչ ապրանք գնելով, քիչ ալ անձինքներու հարկաւորութիւն ու քիչ ալ վտանգ կայ, անոր համար ասոր ալ մասը վրան զարնենք 1000 ,, ,,

ուրեմն բոլոր վաստակը կ'ըլլայ 20,500 ,, ,,

Արդ ինչպէս կը տեսնես, քիչ աշխատանքով 500 արծաթ

Ֆիորին առջինէն աւելի կը վաստըկի: Բայց թէ որ 100ին 10 վաստակ ունենալու ըլլար, ինչպէս առջի դէպքին մէջ գրինք, ան ատեն 500ին աեղ 3500 աւելի վաստակ կ'ունենար:

Այսչափս վաստակի ու վնասի վրայ խօսելէն ետքը՝ հիմա ծախելու սկզբունքներուն դառնանք:

70. Ինչպէս որ ապրանք գնելը այլեւայլ կերպով կ'ըլլայ, ասանկ ալ ապրանքները ծախելն ալ տեսակ տեսակ է, այս ինքն Ա. Փոխանակութեամբ, Բ. Առձեռնպատրաստ գրամով, Գ. Ապառիկ (վէրէ-էյէ), Դ. Տուչութեամբ, Ե. Վարձատրութեամբ ու Զ. Յանձնառուի ձեռքով:

71. Առուտուրը կամաց կամաց կերպաւորելով ու հիմակուան վիճակին փոխուելով, փոխանակութեան՝ իսկզբան ունեցած կերպարանքն ու բնութիւնն ալ բոլորովին փոխուեցաւ ու կրնանք բսել որ կորսուեցաւ: Առուտուրի ընդհանուր միջնորդը, այս ինքն է ստակը գտնուելէն ետքը, ի հարկէ ամէն մարդ իրեն ունեցածին արժէքը ստակի վրայ հաշուելու, ու իրեն կարողութիւնը կամ ունեցածին որչափութիւնը ստակով յայտնելու սկսաւ: Հիմակուան ատենս ալ մարդկային ընկերութեան տղայութեան ատենները չենք, որ հարկաւորութենէ ստիպեալ, անամոյ մը կտորը՝ չափ մը հացով կամ ալիւրով փոխանակելու ստիպուած ըլլանք, հապա անանկ ատենի մէջ ենք, որ եթէ երկու հոգի իրարու հետ ապրանքի փոխանակութիւն ընել կ'ուզեն նէ, իւրաքանչիւրը թէ իր ապրանքը, եւ թէ անոր տեղ դիմացինէն առնելու ապրանքը ստակի վրայ հաշիւ կ'ընէ, եւ այսպէս իր ապրանքներուն ծախող ու անոր դիմացը առնելու ապրանքին գնող կ'ըլլայ: Աճառականը փոխանակութեան ատեն պէտք է որ աս միտքը ունենայ, ու աս մտքով առուտուր ընէ, ապա թէ ոչ՝ դիւրաւ կը խաբուի: Փոխանակութեան ատեն տուած ապրանքին վրայ՝ պէտք է որ ծախելու կանոնները գործածէ, իսկ անոր դիմացը առածին՝ գնելու վրայ

խօսած հատուածներնուս մէջ տուած կանոննիս պահէ :
Բայց փոխանակութեան համար ալ մասնաւոր կանոն-
ներ կան . այս ինքն .

Ա . Վ փառապատիւնը իրեն ապրանքը արժեցընելու
ատեն , անոր տեղը ընդունելու ապրանքին գնոյն
պէտք է որ միտ դնէ : Անոր համար թէ որ գիմացիներ
իր ապրանքներուն գինը վեր կը բռնէ նէ , ան ատենը
ինքն ալ պէտք է որ իրենը վեր բռնէ որ վնասակար
չելլէ :

Բ . Անանկ ապրանքներ միայն փոխանակելու է ,
որոնք սիրով մարդ ձեռքէ հանել կ'ուզէ , եւ անանկ
ապրանքներ առնելու է , որոնք ետքէն կրնայ ծախել :

72 . Առձեռնպատրաստ գրամով ապրանք ծախելը
ամէն տեսակ առուտուրի մէջ հասարակօրէն պահան-
ջագոյնն է , բայց մանաւանդ մանրավաճառի մը աս
կերպը բանեցընելը շատ օգտակար ու շահաւոր է , ին-
չու որ քիչ ու պզտիկ կտոր բան գնողներէն գինը
գիւրաւ կրնայ պահանջել , քան թէ շատը մէկտեղ
գնողներէն , որոնց պէտք է որ սպասէ : Բայց երբ որ
վաճառական վաճառականի հետ առուտուր կ'ընէ , ան
ատեն շատը մէկտեղ ու մեծ կտոր ծախած ապրանքին
գիմացը չկրնար առձեռնպատրաստ գրամ պահանջել ,
որն որ թէ որ վճարելու ատենին թող տալու ըլլայ՝
կրնայ առնուլ . եւ աս կողմանէ մտածելով , կրնայ
ըլլալ որ ապառիկ (վերէ-նէ) ծախելը շատ անգամ
աւելի օգտակար ըլլայ :

73 . Ապառիկ ապրանք ծախելու ատեն , պէտք է
որ վաճառականը աս կանոնները միշտ աչքին առջեւէն
չհեռացընէ , այս ինքն .

Ա . Օտխելու ատեն պէտք է որ , որչափ կարելի
է , վճարելու քիչ ատեն թողու :

Բ . Որչափ որ վճարելու համար գնողին երկայն
ատեն թող կու տայ նէ , պէտք է որ ան համեմա-
տութեամբ ծախած ապրանքին գինը վեր բռնէ , ու
գնողն ալ այնչափ աւելի համարման ընդունակ համարի :

Գ. Ամենեւին պէտք չէ որ համարում ունենայ ան գնողներուն վրայ, որոնք վճարելու երկայն ժամանակ ձեռք ձգելու համար՝ անհամեմատ խիստ բարձր գնոյն ալ չեն ընդգիմանար, ինչու որ ասանկ մարդիկները ծախողներուն ձեռքէն ապրանքը փրցընելու միայն կը նային, ու մէյ մը առնելէն ետքը վճարելու ատենը հասնի նէ, հազարումէկ դարձուածներ կ'ընեն, փախուստ կու տան, գնէն մաս մը վար առնուլ կ'ուզեն եւ կամ ամենեւին չեն վճարեր:

Դ. Թէ որ վաճառականը աս կամ ան ապրանքէն մեծ կտոր մը ծախել կ'ուզէ, ու գնողն ալ ան դաշամբ միայն շատը մէկտեղ առնելու կը հաճի, որ վճարելու համար իրեն երկայն ժամանակ թող տրուի, ան ատեն ծախողը պէտք է աղէկ մը մտածէ, որ արդեօք առանց մնասու իր ստակը այնչափ երկայն ատեն անոր քովը կրնայ թող տալ թէ չէ. եթէ կրնայ ու գնողն ալ բաւական համարման ընդունակ է, ան ատեն կրնայ ծախել:

Ե. Արբ որ ապրանքի մը գինը կը բարձրանայ, վաճառականն ալ ծախելու ատեն ան ապրանքին գինը նոյն համեմատութեամբ վեր բռնելու է: Հաս վաճառականներ, մանաւանդ թղթէ ստակին գինը փոխուելու ատեն, աս պատճառաւ ինկած ու կորսուած են, որ իրենց ունեցած ապրանքները ծախելու գինը՝ ան ապրանքը գնելու ատեննին ունեցած գնոյն միայն միտ գնելով որոշած են, ու չեն մտածած որ հիմա գնելու բլային, ինչ գին պէտք էին վճարել: Իրենց ապրանքը երթալով քիչցած է, բայց ասոնք շատ ապրանք ունեցած ատեններնէն աւելի իրենք զիրենք հարուստ դտած են, ինչու որ թղթէ ստակին գնոյն փոփոխութիւնը հաշիւ բրած չեն:

Զ. Արբ որ վաճառականը մէկ գործքի մը ձեռք զարնելով, անկից իրեն ուրիշ գործքեր, ու ասուտուրի օգտակար կապեր ու այլեւայլ մարդիկներու հետ բարեկամութիւններ պատրաստել կը յուսայ,

ան ատեն պէտք չէ որ այնչափ նոյն ատենին մէջ ունեցած կամ ունենալու շահին միտ դնէ. հապա մանաւանդ հեռաւոր շահին համեւելու նայելու է, անոր համար ալ իր մտադրութիւնն ան կողմը աւելի դարձնելու, քննելու եւ կշռելու է:

Ա՛ւ ավաճապահանութեան նոր սկսողները մէկուն մէկալին հետ ճանչուորութիւն ունենալու, յաճախորդներ վաստակելու ու տեղեկութիւն ստանալու համար խիզարան քիչ շահով պէտք են գոհ ըլլալ. բայց աս ալ ըսելու ենք, որ ճանչուորութիւն ընելու բաղձանքին ալ մէկալ կողմը պէտք չեն անցնիլ, այս ինքն ապրանքները աժան աժան ծախել. ինչու որ շաանգամ ասով դրսիները կը կարծեն, որ ապրանքները շուտով ձեռքէ հանելու հարկաւորութեան մէջ են, եւ վրանին ունեցած համարումը կը կորսընցընեն, որով օգուտ քաղելու տեղ՝ իրենց մնասը կը գտնեն:

74. Տուչութեամբ ու վարձատրութեամբ ապրանք ծախելու համար, վաճառականը պէտք է զգուշանալ, որ չըլլայ թէ այնչափ պարտականութիւններ իր վրան դիզէ, որ ետքէն իր մեծ մնասովը գուցէ եւ ոչ այնչափով ալ կարող ըլլայ կատարել: Ապրանք մը պէտք չէ որ ծախէ, որն որ ուրիշ տեղ մը պատրաստ չունի եւ կամ մինչեւ տուչութեան ժամանակը ձեռք ձգելու կատարեալ ստուգութիւն կամ ապահովութիւն չունի: Թէ որ վաճառական մը սովորականէն զատ ուրիշ կերպեր բանեցընելով ասանկ վտանգաւոր գործքի մը մէջ մտնել կ'ուզէ, այնպիսին բաղդի խաղ խաղացող պէտք ենք անուանել, քան թէ վաճառական, որուն գործքն ալ գիտնական քննութեանց տակ ձգելու արժանի չէ:

75. Յանձնարարութեամբ ապրանք ծախելը երկու կողմանէ կրնայ մտածուիլ: Ա՛ւ ավաճապահանը մէյ մը իբրեւ յանձնառու ուրիշին հաշուին, մէյ մ'ալ իբրեւ յանձնարարող յանձնառուի մը ձեռք ապրանք կրնայ ծախել: Ա՛յրկու տեսակին ալ զանազան խոհե-

մութեան կանոններ կը պահանջուին, անոր համար երկուքն ալ տարբեր սկզբունքներու ու օրէնքներու տակ ինկած են:

Ա. Երբ որ վաճառականը իբրեւ յանձնառու ուրիշին հաշուին ապրանք կը ծախէ, ան ատեն աս ետեւէն եկած կանոնները պահելու է:

Ա. Ամենեւին պէտք չէ ծախելու անանկ յանձնարարութիւն ընդունիլ, որն որ չյուսար որ յաջողութեամբ կրնայ կատարել, անոր համար ալ ապրանք մը ծախելը պէտք չէ որ յանձն առնու, երբ որ չյուսար որ իրեն սահման դրուած վերջին գնով ձեռքէ կրնայ հանել:

Բ. Պէտք է որ թէ յաջող ու շահաւոր եւ թէ վնասակար երեւցած երեւոյթներն ու հաւանականութիւնները իր յանձնարարողին իմացընէ, ու ամէն տեսակ առիթը անոր օգտին գործածելու աշխատի, կամ, երբ որ իշխանութիւն ունի, իր կարծեացը համաձայն գործելով, եւ կամ երբ որ չունի, իր յանձնարարողէն եկած հրամաններուն նայելով՝ աշխատելով:

Գ. Պէտք է որ ջանայ, որ իր ձեռքէն եկած ամէն միջոցները ի գործ դնէ, որ իրեն յանձնուած ու վրստահացած ապրանքները ծախէ ու ձեռքէ հանէ:

Դ. Պէտք է որ իր յանձնարարողին բարւոյն համար ամէն կերպ խնայութիւնն ընէ, ու ամէն աւելորդ ծախքերէ զզուշանայ:

Ե. Ամէն ըրած ծախքերը յանձնարարողին հաշուին անցընէ, ու անոնք ապրանքին գինէն հանէ առնու, բայց միանգամայն նայի ալ, որ որչափ կարելի է իր ըրած ծախքերուն հաշիւը կարող ըլլայ ցուցմամբ հաստատել:

Զ. Իրեն վարձքը, այս ինքն յանձնառողէքն ալ պէտք է որ հաշուէ առնու:

Է. Թէ որ երաշխաւորութեամբ չգործեր, պէտք է միայն ան գնողներուն, ու անանկ պայմաններով ապառիկ ծախէ, որոնց համար յանձնարարողը յայ-

անապէս գրով իշխանութիւն տուած է: Ասոց թէ որ
երաշխաւորութեամբ կը գործէ, ան ատենը անանկ
անձինքներուն, որոնց կարողութիւնն ու վիճակը վա-
ճառականի մը հարկաւոր եղած ապահովութեամբ
իրեն յայտնի ու ծանօթ չեն, ապառիկ ծախելու չէ,
ինչու որ ասանկ վտանգաւոր գործքի մը մէջ շատ
անգամ՝ ուրիշին հաշուին գործելու ատեն, վնասը
ինքը կը կրէ:

Ը. Վանի որ ապրանքները իր ձեռքը եկած չեն,
ու անոնց որպիսութիւնը քննած չէ, պէտք չէ որ
կանխէ ու անոնց համար ծախք ընէ, եւ կամ յանձն-
արարողին օգտին համար փոխանակագրեր ընդունի.
ինչու որ թէպէտ յանձնարարողին ինչպէս մարդ ըլլալն
ալ աղէկ դիտնայ ու անոր համարման ընդունակու-
թիւնն ալ աղէկ ճանչցած ըլլայ, բայց առանց ապա-
հովութեան մէկը ուրիշի մը ստակ անցընելու չպար-
տաւորիր: Ասոց ամենէն աւելի անոր միտ դնելու է,
որ յանձնարարութեան ապրանքներուն վրայ միայն
այնչափ ծախք ընէ, որչափ որ ամենէն անյաջող ժա-
մանակը, ու ուզած ատենն ալ ձեռք ձգել կը յուսայ:
Միանգամայն նայելու է որ իշխանութիւնը ձեռքէ
չթողու, որ երբ որ ըրած ծախքերն ու ընդունած փո-
խանակագրերը յանձնարարողը չվճարեր, ու ապրանք-
ները որոշուած վերջին գնով չկրնար ծախել, անկից
վար գնով ալ կարող ըլլայ ծախել:

76. Իսկ յանձնառուի ձեռքով ապրանք ծախե-
լու մէջ յանձնարարողին վերաբերեալ կանոնները
ասոնք են:

Ա. Իր ապրանքները պէտք չէ որ անանկ յանձնա-
ռուի մը հաւատայ, որուն գիտութեանը, հաւա-
տարմութեանը, ճարպիութեանը ու համարման ըն-
դունակութեանը վրայ ըստ բաւականին տեղեկութիւն
առած չէ, եւ կամ վերի վերոյ մը գոնէ քննած չէ:

Բ. Ապրանք մը ծախելու համար յանձնառուին
խրկելէն յառաջ պէտք է մտածէ, որ ան ապրանք-

ները խրկած տեղը աւելի շահով կրնան ծախուիլ թէ չէ:

Գ. Ան առենը միայն յանձնառուի ձեռքով ծախել պիտ'որ բնորէ, երբ որ կէս մը՝ ան ապրանքները ինքը իր տեղը ծախելու յոյս չունի, ու կէս մ'ալ յանձնառուի ձեռքով ծախելէն մեծ շահ կը յուսայ:

Գ. Ան ապրանքը խրկելու համար ճամբուն ստակը, ու յանձնարարութեան գացած ծախքերը պէտք է ճիշդ հաշուել, ու կարելի դէպքերու ու պատահարներու համար ալ հաշուած գումարին վրայ յաւելուած մ'ալ զարնելու է, ինչու որ սովորաբար ծախքը ի սկզբան մտածուածէն ու հաշիւ բրածէն աւելի կ'ըլլայ:

77. Ծախելու զանազան կերպերը մեկնելէն ետքը, հիմա կը մնայ մեզի ծախելու միջոցները մեր բնութեցոյցներուն առջեւ դնել: — Առուտուրի գլխաւոր վախճանը ապրանքներ ծախելով՝ որչափ կարելի է, շատ վաստրկիլն է: Աս վախճանիս հասնելու միջոցները ասոնք են:

Ա. Արչափ կարելի է թանկ կամ սուղ ծախելու է:

Բ. Արչափ կարելի է շատ ծախելու է:

Գ. Արչափ կարելի է շատ անգամ ծախելու է:

Դ. Ծախածին արժէքը որչափ կարելի է շուտ առնելու պէտք է նայիլ:

Ե. Արչափ կարելի է արժէքը ձեռք բերելու ապահով ճամբայ փնտռելու է:

1. Արչափ կարելի է թանկ կամ սուղ ծախելու համար, պէտք է նայիս, որ Ա. Արչափ կարելի է վերջին ձեռքին ծախես, այս ինքն անանկ մարդու ծախես, որն որ չէ թէ առգնող (այս ինքն առնող ծախող), հապա գործածող կամ սպառող ըլլայ: Արովհետեւ ամէն առնող ծախող վաճառականը՝ ան ապրանքէն ինքն ալ վաստրկիլ կ'ուզէ, յայտնի բան է, որ ան ապրանքը առնող ծախող վաճառականին ձեռքէն ելլելու առեն՝ աւելի սուղ պիտ'որ արժէ, ուստի եւ անիկա գնել ուղղը աւելի պիտ'որ վճարէ, քան թէ

յառաջ: Անոր համար թէ որ սպասես, ու վերջին ձեռքին ծախես, ան ատեն առնող ծախողին վաստակն ալ դուն կը վաստակիս, ու գործածողներուն աւելի աժան կ'իյնայ քան թէ դուն առնող ծախողի մը ծախէիր, ու անոնք անկից դնած ըլլային: Բ. Ասկից զատ պէտք էս նայիլ, որ անանկ ապրանքներով առուտուր ընես, որոնք աղէկ ըլլան, ու շատ փրնտաուին: Ա՛ւձառականը ապրանքները ընտրելու մէջ պէտք չէ որ միայն իր խելքին հաւնի, ու միայն իրեն հաճոյական երեւցածը առնու ու ծախելու դնէ, հապա անոր հակառակ գնողներուն հաճածին միտ դնելու է: Գ. Պէտք է որ ապրանքները աղէկ մը ընտրէ, աղէկներն ու ստորին աստիճանի ապրանքները մէկը մէկալէն զատէ: Դ. Օտխելու համար անանկ նոր նոր ձամբաներ փնտռէ ու մտածէ, որ ամէն մարդ չգիտեր: Ե. Աւելի շահով ծախելու համար պէտք է որ ժամանակին ու պարագաներուն սպասէ:

2. Արչափ կարելի է շատ ծախելու համար ալ շատ տեսակ միջոցներ կան, որոնք վաճառական մը տեղւոյն եւ ժամանակին նայելով՝ կրնայ գործածել. այսինքն Ա. Օտխելու համար այլեւայլ անձինքներու առաջարկութիւններ ընելով, ու աս առաջարկութիւնները յաճախ կրկնելով: Աս առաջարկութիւնները կրնան ըլլալ նամակով, ձամբորդութիւններով, նաեւ ուրիշի մը յանձնարարութիւն ընելով: Բ. Շատ յաճախորդներ ու անանկ յաճախորդներ ունենալով, որոնք շատի հարկաւորութիւն ունին, ու ան ապրանքէն շատ կը գործածեն: Գ. Օտխելու աղէկ ու հաճոյական պայմաններ դնելով, աժան գին պահանջելով ու արժէքը վճարելու համար երկայն ժամանակ թող տալով: Դ. Այլեւայլ տեղուանք աղէկ ընտրած ապրանքներ դնելով, եւ անանկ տեղուանք խանութ ունենալով, որ բանուկ ըլլայ ու գնողները դիւրաւ կարող ըլլան երթալ գալ: Ե. Ա՛ւերջապէս ապրանքներուն գիները գնողներուն գործածած կշռոյն ու

ստակին վրայ որոշելու ու հաշուելու է, որ ուրիշներուն հետ եղած առուտուրը դիւրիննայ. ու միանգամայն ապրանքները առանց ճամբու ծախքի խաւրելու է, ու անանկ տեղ մը խաւրելու է, որ գնողը կարող ըլլայ դիւրութեամբ գտնել:

3. Այլ որ կ'ուզէ, որ որչափ կարելի է շատ անգամ ծախէ, պէտք է որ Ա. Իր ապրանքներուն գինները ատեն ատեն ծանուցանէ. Բ. Պնողներուն հետ առանց խաբէութեան ու խարդախութեան առուտուր ընէ, անոնց աղէկ ընտիր ապրանքներ տայ, ապրանքներուն աժան գին դնէ, ընտիր ապրանքները զատէ, ու միշտ նայի ու ջանայ որ որչափ կարելի է շուտ ու յաճախ աղէկ ապրանք առնէ ժողովէ:

4. Ծախած ապրանքին գինը որչափ կարելի է շուտով ձեռք բերելու համար, աս կանոններուն զգուշանալու է: Ա. Որչափ կարելի է վճարելու կարճ ժամանակ թող տալով դաշնադրելու է: Բ. Որչափ կարելի է պէտք է վաճառականը պայման դնէ, որ ծախած ապրանքին դիմացը կարող ըլլայ փոխանակազիր քաշել. որն որ ան աղէկութիւնը ունի, որ ան փոխանակազիրը, նոյն իսկ անոր վճարելու ժամանակէն յառաջ ալ՝ ստակի տեղ կրնայ գործածել: Գ. Պէտք չէ որ այնչափ շատ ապրանք դնէ, որն որ համեմատութեամբ քիչ ատենի մէջ ծախել չյուսար:

5. Որպէս զի ծախած ապրանքին գինը ապահով կերպով մը կարող ըլլայ ձեռք բերել, պէտք է որ յետագայ կանոնները պահելու ջանայ: Ա. Միայն հաստատուն մարդիկներու հետ առուտուր ընէ, որոնք թէ կրնան եւ թէ կ'ուզեն վճարել. անոր համար պէտք է որ որչափ կարելի է, անոնց համարման ընդունակութիւնը ճանչնայ. եւ թէ որ ասոր վրայ կատարեալ ապահովութեան հարկաւոր եղածին չափ տեղեկութիւն չկրնար ունենալ՝ իրենց ապառիկ շտայ, բայց եթէ միշտ վճարելու կարող ու համարում ունեցող մարդու մը երաշխաւորութեամբ. այս ինքն

անանկ մարդու մը, որն որ գնուած ապրանքին արժէքը վճարելու յանձն կ'առնու կամ քաշած փոխանակագիրդ կ'ընդունի, եւ կամ գոնէ վճարելու համար շինած հաստատուն ու արժող թղթին տակը գնողին հետ իբրեւ երաշխաւոր կը ստորագրէ: Բ. Ա՛ճարելու համար շատ երկայն ժամանակ թող չտալու է, ինչու որ շատ երկայն ատենուան մէջ գնողին համարման ընդունակութիւնը կրնայ փոխուիլ: Գ. Ա՛ռուտուրը ճիշդ եւ որոշ ընելու լմընցընելու է, որ վճարելու ժամանակը տարակուսի մէջ չձգուի եւ կամ ատեն որոշելու համար վճարելէն յառաջ սպասելու հարկ չըլլայ:

78. Շատ անգամ անանկ դէպքեր առջեւնիս կ'ելլեն, որոնց մէջ աս տուած կանոններնիս իրարու ներհակ կը պատահին: Ա՛սիկայ օրինակաւ մը յայտնենք: Ա՛ւերը ըսինք որ վաճառական մը շատ ապրանք մեկտեղ ծախելու համար, պէտք է որ վճարելու երկայն ատեն թողու. քիչ մը ետքը նորէն կանոն մ'ալ տուինք, որ ծախածին գինը որչափ կարելի է շուտ ձեռք բերելու համար, պէտք է որ ապրանք ծախելու ատեն շուտով վճարելու դաշինք գնէ: Ա՛սանկ դէպքերու մէջ, երբ որ կանոնները իրարու հակառակ կու գան, աս կանոնը պահելու է. «Քիչ շահը կամ օգուտը՝ մեծ շահին համար զոհելու է. իսկ մեծ փնասէ մը ազատելու համար՝ փոքր փնասը յանձն առնելու է»: Ա՛վաճառականը որոշեալ դէպքերու մէջ իր ճշմարիտ շահը հաշուելու համար բաւական խելք ու մտածութիւն պէտք է ունենալ: Արնայ պատահիլ, որ անանկ դէպք մը առջեւն ելլէ, որուն մէջ շատ ապրանք մեկտեղ ծախելու ազէկ առիթ ըլլայ, բայց ծախածին գինը ձեռք բերելու համար հարկ ըլլայ երկայն ատեն սպասել: Ա՛սանկ առիթի մէջ թէ որ վաճառականը կը տեսնէ, որ ան ապրանքին գինը երթալով իյնալու վրայ է, ու վճարուելու ստակին երկայն ժամանակ սպասել չուզեր նէ՛ ապրանքը արդէն առանց ծախուելու մթերանոցին մէջ երկայն ատեն

պիտ' որ սպասէ, իսկ մէկիւլ կողմանէ գնողին վճարելու երկայն ժամանակ թող տալով՝ անոր հետ ուրիշ ապրանքներու առուտուր բնելու ալ յոյս կայ, ան ատեն կարծենք թէ ծախածին գինը առնելու երկայն ժամանակ թող տալով մնաս մը չընէր. բայց ասանկ առթի մէջ աւելի օգտիւ կրնայ գնողէն երկայն ժամանակ ետքը վճարուելու փոխանակագիր մը առնուլ: Ասանկ դէպքերու մէջ վճարելու երկայն ժամանակ թող տալով ծախելը խոհեմութիւն է:

Ամէն ասանկ առանձին դէպքերու համար վաճառականի մը կանոններ տալը, որով կարենանք զինքը մտածելէն ազատել, անկարելի է: Արբ որ հարկաւոր եղած սկզբունքներով, կանոններով, զգուշութեամբ ու խոհեմութեամբ կը պատրաստուի, ան ատեն ամէն դէպքի մէջ ալ ինքը զինքը կրնայ աղէկ կառավարել:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ

Վ Ճ Ա Ր Ե Լ Ո Ւ Վ Ր Ա Յ

79. Ս Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ա Յ մտօք, Վճարել կ'ըսուի, ստակ կամ անոր տեղը բանօղ բան մը տալով պարտականութենէ ազատիլ: Ասիկայ զանազան կերպերով կրնայ բլլալ. Ա. Առձեռնպատրաստ դրամով, Բ. Փոխարինութեամբ (compensation), Գ. Փոխանորդական ծամբով (contrepartie), Դ. Փոխանցութեան դրամասեղանի (banque à virement) ձեռքով, Ե. Նշանակագրով, Զ. Փոխանակագրով ու է. Աւանդով: Աս հասուածիս մէջ աս ամէն կերպերը մեր բնութեցողներուն մէկիկ մէկիկ պիտ'որ մեկնենք, ու պիտ'որ սորվեցրնենք, թէ ընդհանրապէս եւ մասնաւոր դէպքերու մէջ որ կերպով աւելի շահով եւ օգտիւ կրնայ վճարուիլ:

80. Առձեռնպատրաստ դրամով մարդ թէ իր բնակած տեղը եւ թէ նաեւ հետու տեղուանք ունեցած վճարմունքները կրնայ կատարել, երբ որ անձամբ եւ կամ ուրիշին ձեռքովը վճարելու ստակը իր պար-

տատիրոջը յանձնէ, եւ կամ թէ որ հեռու է նէ՝ հասարակ փոխադրութեան միջոցով զոր օրինակ թղթաբերով ($\frac{1}{2}$ ստորոջով) խաւրելու ըլլայ: Աս կերպով վճարելու ատեն աս կանոնները պահելու է:

Ա. Պէտք է վաճառականը ան տեսակ ստակով իր վճարմունքը կատարել, որն որ իրեն զիւրին եւ միանգամայն օգտակար է: Անոր համար հեռու տեղուանք ան տեսակ ստակ խաւրելու է, որն որ առնողը վերջին բարձր գնով կ'ընդունի: Աս բանիս մէջ վատարկելու համար պէտք է որ վաճառականը ստակներուն ընթացքին աղէկ միտ դնէ, որ վճարմունքը աւելի շահաւոր ստակի տեսակով կատարէ:

Բ. Վճարելն ու ուրիշէն վճարմունք ընդունիլը անանկ մարդիկներուն յանձնելու է, որոնց ճարպկութեանն ու հաւատարմութեանը վրայ տարակոյս չունի: Անոր համար տեղէ մը ուրիշ տեղ ստակ խաւրելու համար ամենէն ապահով ճամբան ընտրելու է: Աւերուպա հասարակօրէն թղթաբերի կառքերը շատ ապահով կը սեպուին: Ասոնցմով ստակ խաւրելու ատենդ պաշտօնատարին առջեւը տուած գումարդ համրելու ես, ծրարը կամ քսակը կնքելու ես, իսկ թէ որ բուն հնչող դրամ կը խաւրես կոր նէ, ան ատեն ամենէն յառաջ դրամին կշիռքը ճշգիւ իմացընելու ես: Աս ալ պէտք չէ մոռնալ, որ ստակը որուն որ կը խաւրես նէ, խաւրածիդ վրայ անոր ալ թղթով տեղեկութիւն տալու ես:

Գ. Պէտք չէ առանց ընկալազիր առնելու ստակ վճարել. ու միայն ան մարդուն վճարելու է, որն որ ստակը ընդունելու իշխանութիւն կամ հրաման ունի:

Տ1. Վաճառականը մէկու մը ունեցած վճարմունքը կրնայ նաեւ ուրիշ մէկ կերպով մը կատարել: Արբ որ անկից ինքն ալ առնելիք ունի, ան առնելիքը իր տալիքէն կը հանէ, ու մնացորդը իր պարտատիրոջը կը խաւրէ կամ կու տայ: Աս կերպ վճարմունքը՝ Փոխարինութիւն կը կոչուի, որն որ ըստ

էութեանն ուրիշ բան չէ, բայց եթէ առնելիքին ու տալիքին փոփոխակի երկու կողմանէ ալ աւրուիլը: Աստեասակ վճարման՝ յետադայ կանոններուն պահպանութիւնը շատ օգտակար է:

Ա. Արկու կողմանէ եղած պահանջմունքները որոշ, յայտնի ու ստոյգ պիտ'որ ըլլան: Անոր համար ան պահանջմունքները որոնց վրայ վէճ կամ կռիւ կայ, յայտնի պահանջմունքներուն դիմացը չեն կրնար փոխարինուիլ կամ աւրուիլ:

Բ. Փոխարինելու առնելիքն ու տալիքը պէտք է որ նոյնատեսակ ըլլան: Ասան զի այլատեսակ բաները չեն կրնար փոխարինութեան տակ իյնալ. ինչպէս ըսեմ, թէ որ ես ուրիշի մը այսչափ գումար ստակ պարտք ունենամ, ու անկից խել մը ապրանք պահանջք ունենամ, չեմ կրնար ասոնք փոխարինել: Ասանկ զէպքի մէջ փոխարինութիւն ըլլալու համար երկուքնիս զնոյն վրայ յառաջագոյն մէջերնիս միաբանելու ենք:

Գ. Մի եւ նոյն տեղը ու մի եւ նոյն ժամանակ պիտ'որ պատահին: Թէ որ ասանկ չըլլայ՝ փոխարինութիւն չկրնար ըլլալ. զոր օրինակ թէ որ ես այսօր այսչափ ստակի գումար մը պիտ'որ վճարեմ, իսկ մէկայլը խել մը ատեն (մէկ կամ քանի մը ամիս) ետքը պիտ'որ ինձի վճարէ, ան ատենը ես արդարութեամբ իմ առնելիքս կամ պահանջքս պարտքիս հետ չեմ կրնար փոխարինել, թէպէտեւ յառաջագոյն պահանջելուս համար տակոսիքին տեղը հատուցում ընեմ, բայց եթէ երբ որ դիմացինս կատարեալ հաճի:

82. Փոխանորդական ճամբով վճարելը՝ շատ անգամ փոխարինութեան հետ կը շփոթուի ու նոյն կը սեպուի. բայց մէջերնին շատ տարբերութիւն կայ: Փոխարինութիւնը երկու հոգւոյ մէջ եղած առնելիքին ու տալիքին երկու կողմանէ վար առնուիլն է. իսկ փոխանորդական կերպով վճարելը՝ շատ մարդիկներու մէջ եղած առնելիքին ու տալիքին նոյն կերպով հաշիւ տես-

նուիլն է, կամ թէ ըսենք՝ Բաղադրեալ փոխարինու-
թիւն մըն է, որով այլեւայլ անձինք իրարու ունե-
ցած առնելիքնին ու տալիքնին կը հաւասարցընեն:
Օր օրինակ ըսենք որ

Ա. Սարգիսը՝ Ամիտասին 10,000 ղուրուշ պարտք
ունի .

Բ. Մի եւ նոյն Սարգիսը՝ Աիրակոսէն 10,000 ղու-
րուշ առնելիք ունի: Աս դէպքիս մէջ յայտնի բան է
որ առնելիքն ու տալիքը կը հաւասարցուին, երբ որ
Աիրակոսը՝ Սարգսին կամացը համաձայն՝ Ամիտասին
10,000 ղուրուշ վճարելու ըլլայ: Իսկ երբ որ նաեւ

Գ. Մի եւ նոյն Ամիտասը՝ Գրիգորին 10,000 ղու-
րուշ պարտք ունենայ, ու

Դ. Աիրակոսը՝ Գրիգորէն 10,000 ղուրուշ առնելիք
ունենայ. ան ատենը նաեւ Ամիտասը՝ Աիրակոսին
10,000 ղուրուշ վճարելու ըլլալով՝ դիմացէ դիմաց առ-
նելիքներն ու տալիքները կը հաւասարնան, այս ինքն
Աիրակոսը՝ Ամիտասին 10,000 ղուրուշ տալիք կ'ու-
նենայ, նոյնպէս ալ Ամիտասը՝ Աիրակոսին 10,000
ղուրուշ պարտք կ'ունենայ, որով առանց իրական
գրամի՝ պարտքերն ու առնելիքը կը հաւասարցուին,
երբ որ Սարգիս, Ամիտաս, Աիրակոս ու Գրիգոր մէ-
ջերնին միաբանին: Փոխանակազրերը վճարելու մէջ
ալ աս փոխանորդական կերպը ամենեւին նոյն է:
Ըսենք թէ Սարգիս ձեռքը 5000 արծաթ ֆիորինի
փոխանակազիր մը ունի, որն որ Ամիտաս պիտ'որ
վճարէ. իսկ Ամիտաս ալ մէկ 4000նոց փոխանակազիր
ունի Աիրակոսէն վճարելի, ու մէյ մ'ալ 1000նոց Գրի-
գորէն վճարելի. ան ատենը Ամիտաս կը կանչէ Աի-
րակոսն ու Գրիգորը, ու անոնցմէ կը խնդրէ որ աս
գումարները Սարգսին յանձնեն: Արդ թէ որ Սար-
գիսն ալ Եփրեմին 6000 ֆիորին վճարելիք ունի նէ,
անոր 1000 ֆիորին առձեռն պատրաստ դրամ տալէն
ետքը՝ Աիրակոսէն ու Գրիգորէն կը խնդրէ, որ իրեն
վճարելիքնին (4000ն ու 1000ը) Եփրեմին տան: Ասկէ

ետքը փոխանակագրերը՝ ընդունողներուն կը արուին, ու աս գործողութեան մէջ մտնողներէն ամէն մէկը իր գրքին մէջ կը գրէ թէ որուն ձեռքը, ու որուն հաշուին վճարուեցաւ, կամ թէ վճարել տուաւ:

Աս փոխանորդական կերպը մեծ ու գլխաւոր վաճառատեղիներու մէջ առձեռնպատրաստ դրամով վճարելու անթիւ ու անհամար դժուարութեանց վերջ մը տալու ու առուտուրը դիւրինցընելու աղէկ միջոց տեսնուելով՝ հաստատուած է: Ասանկ մեծ վաճառատեղիներու մէջ փոխանորդական կերպով վճարելու առանձին օր որոշուած կ'ըլլայ, ինչպէս Ղիփսիայի տօնավաճառներուն ատենը շաբթուն առջի երեք օրը, իսկ Աւգսպուրկ շորեքշաբթի օրը որոշուած է: Ան օրը վաճառականները մեծամեծ դումարներու հաշիւներ կը գոցեն ու կը հաւասարցընեն, որն որ թէ որ առձեռնպատրաստ դրամով վճարել ուղէին, գրեթէ անհնար բան մըն էր: Վայց աս կերպով շատ դիւրութիւն ըլլալէն զատ, նաեւ առձեռնպատրաստ դրամները բեռերով տանելու բերելու դժուարութիւնն ալ կը վերնայ:

83. Փոխանցութեան դրամասեղանը (Բէճ-սս-դանճ-սը) կառավարութենէ հաստատուած հասարակաց արկղ մըն է, որուն մէջ ամէն մարդ ստակի դումար կամ մթերք մը կրնայ ունենալ, ու աս դրամասեղանին ձեռքը պարտատիրոջը իր հոն տեղը ունեցած ստակէն կրնայ վճարել: Անոնք որ աս փոխանցութեան դրամասեղանին ստակ տուած են, անուննին դրամասեղանին հաշուեգրին մէջ գրուած ու ընդունուած է, եւ երբ որ իրենց հաշուին մէկու մը վճարել կ'ուզեն, իրենց ստակին դումարէն վար առնել, ու անոր գրել կու տան, որուն օր պիտ' որ վճարեն: Աս քսածներնէս յայտնի կը տեսնուի որ աս փոխանցութեան դրամասեղանը՝ վաճառականներուն սրշափ դիւրութիւն է: Ասոր պահանջուած կանոնները ետեւէն եկածներն են:

Ա. Ով որ փոխանցութեան դրամասեղանին ձեռքովը վճարմունքը ընել կ'ուզէ, պէտք է որ հոն տեղը ստակ դրած ըլլայ. որմէ աւելի չկրնար ալ վճարել տալ:

Բ. Անոր համար պէտք է որ դրամասեղանին մէջ ունեցած ստակին, անոր աճելուն ու նուազելուն վրայ առանձին հաշիւ բռնէ, ու ատեն ատեն անիկայ դրամասեղանին գրքերուն հետ համեմատէ:

Գ. Պէտք է որ դրամասեղանին որոշ ու ճիշդ տեղեկութիւն տայ, թէ որո՞ւն եւ որչափ պիտ'որ վճարուի: Ասոր շատ զգուշութիւն ընելու է, որ սխալմունք եւ կամ խաբէութիւն չսպրդի:

Դ. Նոյնպէս պէտք է որ իր պարտատիրոջն ալ իմացընէ, թէ դրամասեղանին յանձնած է, որ իրեն պահանջքը վճարէ, եւ դրամասեղանէն այնչափ ստակ առնելուն կամ իր հաշուին անցընելուն համար ընկալագիր մը ընդունի:

Ե. Այլ որ դրամասեղանը ստակ կը դնես, եւ կամ ուրիշ մէկը դրամասեղանին ձեռք քու հաշուիդ ստակ կ'անցընէ, ան ատենը աս ստակը ընդունելու իշխանութիւն ունեցող պաշտօնատերէն ստորագրուած ընկալագիր մը պահանջելու ես:

Աւելի եւս մասնաւոր կանոնները դրամասեղանին կարգադրութեան օրէնքներուն մէջ կը գտնուին. բայց ասոր վրայ նաեւ տէրութեան առուտուրը յառաջացընելու միջոցներուն վրայ խօսելու ատեննիս պիտ'որ զրուցենք: — Մինչեւ հիմա խօսած վճարելու կերպերնիս ամէնն ալ գլխաւորաբար մի եւ նոյն տեղուց բնակիչներուն մէջ գործածուելու միջոցներ են, հիմա անցնինք ան կերպերուն, որոնցմով հեռու տեղուանք վճարքնիս կրնանք անցընել:

ՏԿ. Աշանակագրով ու փոխանակագրով վճարել ան է, երբ որ վաճառականը նշանակագրով եւ կամ փոխանակագիր մը քաշելով ուրիշ մը կը յանձնէ, որ աս կամ ան անձին՝ իր հաշուին այսչափ ստակի գումար

վճարէ : Ասոնց վրայ վաճառականաց իրաւագիտութեան մէջ շատ երկայն կը խօսուի . բայց մենք կը շատանանք , միայն ան սկզբունքները դնելով որոնց նայելով վաճառականը պիտ'որ վարուի , որպէս զի կարելի եղածին շտի աւելի շահով , փոխանակագրերու կամ նշանակագրերու ձեռօք կարենայ վճարել : Աս սկզբունքները կամ կանոնները ասոնք են :

Ա . Արբ որ վաճառականը դիմացինին վճարմունք ընելու համար փոխանակագիր պիտ'որ գնէ , ան փոխանակագրերը առնելու է , որոնց որ ընթացքը կամ ընթացիկ գինը (գորտն , գոմպն) ամենէն աւելի իրեն շահաւոր է :

Բ . Արբ որ ընթացքները հաւասար են , այլեւայլ փոխանակագրերէն անոնք պէտք է առնուլ , որոնք որ կանուխ պիտ'որ վճարուին :

Գ . Ամենէն աւելի անոր պէտք է աղէկ նայիլ , որ գնելու փոխանակագրերը քաշողներն ու փոխանցութիւն (ճիւղ) ընողները հաստատուն ու վճարող (ապահով) մարդիկ ըլլան , եւ թէ որ անանկ պատահի , որ ընդունուած փոխանակագրեր հարկ ըլլայ առնուլ , փոխանակագրին հաստատուն ու ապահովապէս վճարող ընդունողներ ստորագրած ըլլան . որպէս զի չըլլայ որ ի վախճանի փոխանակագիրը ինք վճարելու վտանգի մէջ իյնայ , եւ վճարելէն ետքը իրմէ յառաջ ստորագրողներէն ստակը առնելու յոյս չունենայ :

ՏԾ . Պարտական եղած գումարը գատաստանական ճամբով աւանդ դնելով , քանի մը դէպքերու մէջ ալ ետքէն վճարելու պարտականութենէն կրնայ մարդ ազատիլ : Աս սովորական դէպքերը ասոնք են :

Ա . Արբ որ պարտատէրը ստակը ընդունելու կը դանդաղի , եւ կամ բոլորովին ընդունիլ չուզեր :

Բ . Արբ որ պարտատէրը ստակը առնուլ ընդունիլ կ'ուզէ , բայց պարտականութեան ու անոր վերաբերեալ երկրորդական թղթերը ետ տալ , եւ կամ ըստ օրինաց շինուած ընկալագիր տալ չուզեր :

Գ. Արբ որ պարտատէրը ստակը ընդունելու անկարող կամ անընդունակ է, զոր օրինակ քրէական յանցանքի համար դատաստանի տակ ինկած է, կամ շափահաս չէ, կամ թէ խենթ է, եւ կամ դատաստանաւ՝ մտնող ու շուայլող հրատարակուած է:

Դ. Արբ որ շատերուն մէջ կուի ու վէճ կը ծագի, ու անոնցմէ ստակը ընդունելու իրաւունք ունեցողը չիմացուիր:

Ե. Արբ որ մէկը փոխանակագիրը կը ներկայացընէ, ու ստակը առնուլ կ'ուզէ, բայց կարգաւորեալ փոխանցութեամբ չկրնար ցուցընել, թէ աս փոխանակագրին ստակը ինք պիտ'որ ընդունի:

Զ. Արբ որ ճիշդ որոշեալ ժամանակին հարկ է որ վճարէ, անանկ որ թէ որ վճարելու չըլլայ, կորուստ պիտ'որ ունենայ, ու պարտատէրին յանցանքովը եւ կամ անոր պատճառաւ պատահած գէպքով մը, վճարելէն արդելուի, ան ատենն ալ զայլու պարտականութենէն կրնայ ազատիլ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե

Ո Ւ Ղ Ե Ւ Ո Ր Ե Լ Ո Ւ Վ Ր Ա Յ

86. ԱՊՐԱՆՔ մը գնելու համար հեռաւոր անձանց մէջ եղած դաշնագրութենէն կը հետեւի, որ ապրանքը շատ անգամ մէկ տեղէն ուրիշ տեղ խրկելու կամ ուղեւորելու հարկ կ'ըլլայ: Աս ապրանքները վաճառականի լեզուաւ՝ Առեւտրական ինչք (beni commerciali) կը կոչուին:

Արբ որ ապրանք մը տեղէ մը ուրիշ տեղ պիտ'որ խաւրուի, ամէն բանէն յառաջ նայելու է որ հեռաւոր տեղուանք խաւրուելու վիճակի մէջ խոթուի: Աս հատուածիս մէջ ապրանքներ խրկելու կամ ուղեւորելու վրայ պիտ'որ խօսինք, ու կանոններ պիտ'որ յառաջ բերենք, որոնցմով ապրանքը անանկ վիճակի մը մէջ կրնայ խոթուիլ, որ աղէկ, ապահով, շուտ ու

օգտակար եւ շահաւոր կերպով մը պատրաստուի ու կարող ըլլայ ուղեւորուիլ :

Տ7. Արպէս զի ապրանք մը ուղեւորութեան կամ խրկելու յարմար ըլլայ, պէտք է որ ամէն բանէն յառաջ ըստ պատշաճի ծրարուի ու անկէ ետքը գրուին ալ աղէկ մը գոցուի : Անդհանրապէս ապրանքները խրկողին պարտքն է, որ զանոնք աղէկ հաստատուն ու ապահով ծրարներու, հակերու (տէնկէր--), տակառներու, պարկերու (շ--վ--նէր--) կամ սնտուկներու մէջ տեղաւորէ, ու ամէն ապրանք իրեն յարմար բանի մէջ ծրարէ, ու նայի որ ծրարը՝ խրկուած ապրանքին սովորական եղածէն աւելի չկշռէ : Աս բանիս վրայ ընդարձակ տեսական տեղեկութիւններ գրել աւելորդ կը սեպենք, ինչու որ անոնք որ աս բաներուս պիտ'որ զգուշանան, այս ինքն ծրարող կամ պատատող ծառաները, ասանկ տեսական ծանօթութիւններ կարգացող մարդիկ չեն, ու սորվածնին աւելի վարժութեամբ կը սորվին : Վայց ապրանքները ծրարող ու փակող գործավարներուն գործածին վրայ դատաստան ընելու համար, վաճառականի մը ետեւէն եկած կանոնները օգտակար ալ կրնան ըլլալ :

Ա. Իւրաքանչիւր ապրանք պէտք է որ իրեն յատկութեանը համաձայն ծրարուի, անանկ որ թէ եղանակին, եւ թէ շարժելու, կոտրելու եւ ուրիշ ամէն վտանգներէ ապահով ըլլայ : Աս ապահովութիւնը միայն աղէկ ծրարելէն ու գոցելէն կը կախուի :

Բ. Փակելու սնտուկին կամ ծրարին պնդութիւնն ու զիմացկունութիւնն ալ ապրանքին համաձայն պիտ'որ ըլլայ :

Գ. Էղուկ բաները, որ ջերմութեամբ կը տարածին ու կ'ընդարձակին, անանկ հաստատուն ամաններու մէջ պէտք է դնել, որ շճաթին : Աս բանիս աղէկ զգուշանալու է, մանաւանդ անանկ ապրանքներու, որոնք կը բարձրին ու կ'այրին :

Գ. Թէ որ շատ տեսակ ամաններ, որոնցմէ ոմանք դիւրաբեկ ու ոմանք ալ հաստատուն են մէկտեղ պիտ'որ փակես, պէտք է որ անոնք իրարմէ միջոցներով զատես, որպէս զի երբ որ ճամբան սնտուկին դիւրքը փոխուելու ըլլայ, շըլլայ թէ ծանրութիւնը բոլոր մէկ քանի հատին վրայ կոխէ, ու անոնցմէ քանի մը հատը կոտրելով ու մէջ տեղուանքը պարապ տեղ բացուելով, մնացած մէկալ ամաններն ալ իրենց տեղերնէն ելեն, ու ամէնն ալ կոտրելու վտանգի մէջ իյնան:

Ե. Ապրանքները՝ պէտք է որ հաստատուն ծրարութիւն կամ փակութիւն, որ շըլլայ թէ իրարու շփուելով ապականին:

Զ. Ախրաբեկ, թեթեւ ու այնչափ հաստատուն շըլլող ապրանքները՝ աւելի պինդ, ծանր ու հաստատուն ապրանքներուն վրայ պէտք է դնել, եւ թէ որ այնպէս պատահի, որ մէկ կտոր մը բոլոր ճամբուն մէջ մէկ որոշ դիւրքի մէջ պիտ'որ մնայ, ան ատեն ծրարողներուն կամ փակողներուն առանձինն ծանուցանելու է, որ անոր համաձայն ծրարեն. ու ծրարին ինչ դիւրքի մէջ բռնուելիքը՝ ծրարին վրայ ալ նշանակելու է:

88. Ապրանք մը խրկել կամ Ուղեւորել կ'ըսուի, երբ որ վաճառականը ուրիշի մը ապրանք կը յանձնէ, որ որոշեալ տեղ մը տանի հասցընէ: Աս դործողութեան գլխաւոր անձինքն են Ուղեւորողը՝ որն որ ապրանքը խրկելը կը հոգայ, Տանողը, ու ապրանքն ընդունողը, այս ինքն անիկայ՝ որուն որ ապրանքը պիտ'որ երթայ:

Ապրանքները տեղէ մը ուրիշ տեղ կամ ցամաքով եւ կամ ջրի վրայէն կրնան խաւրուիլ. ցամաքի վրայէն՝ սուրհանդակի կառքով, հասարակ կառքով եւ կամ երկաթի ճամբով. իսկ ջրի վրայէն գետով կամ ծովով կը խաւրուին: Ապրանքը մինչեւ որոշուած տեղը հասցընելու համար վճարուած վարձքը, երբ որ խըր-

կողը՝ տանողին վճարելու ըլլայ, ընդհանրապէս Տանող-
չէք կ'ըսուի. թէ որ կառքով ցամաքի վրայէն է խաւ-
րուածը՝ Սայլորդչէք. իսկ թէ որ նաւով ջրի վրայէն
կը խաւրես, վճարած վարձքդ՝ Նաւադրամ կամ
Նաւողչէք կ'անուանուի: Այց որովհետեւ ապրանք-
ները խրկողը հասարակօրէն մինչեւ տեղը հասցընելը
վրան կ'առնու, թէ ծովով եւ թէ ցամաքով, կամ
կէս մը աս կերպով եւ կամ կէս մ'ալ ան կերպով,
անոր համար առհասարակ Տանողչէք անունը կը
գործածուի:

89. Ապրանքը ուղեւորողն ու տանողը՝ բեռան
քանակութեանը կամ մեծութեանը, վճարուելու
տանողչէքին, ճամբորդութեանը կերպին, ու ամէն
մանր մանր երկրորդական պայմաններուն վրայ մէջեր-
նին դաշնագրութիւն կ'ընեն, դրած դաշինքնին գրի
կ'առնուի, ու հարկաւոր եղած ամէն տեղեկութիւն-
ները անոր վրան կը նշանակուին: Աս տեսակ թղթե-
րը Աւճառագիր (lettre de voiture) կ'ըսուին, երբ որ
ապրանքները ցամաքով կամ գետի վրայէն պիտ'որ
խաւրուին. իսկ թէ որ ուղեւորելը ծովով է, ան ա-
տենը Ծանուցում (connaissance) կ'անուանուին:

Տանողչէքի վրայ եղած դաշանցը, բայց մա-
նաւանդ օրինաց վերաբերեալ մասերուն վրայ առեւ-
տրական իրաւունքը երկայն կը խօսի, բայց մէնք ասոնց
չենք մերձենար հապա քանի մը հարկաւոր եղած խո-
հեմութեան կանոններ տալու կը նայինք:

90. Յայտնի բան է որ ապրանքները ուղեւորողը
(expéditeur) կ'ուզէ, որ իր խրկած ապրանքները ան-
մնաս, որչափ կարելի է քիչ ատենի մէջ, քիչ վտան-
գով ու աժան երթայ տեղը հասնի: Աս ուղածին
հասնելու համար.

Ա. Պէտք է որ ապրանքը աղէկ ու ինչպէս որ
պէտք է նէ գոցած ու ծրարած՝ տանողին յանձնէ:

Բ. Ապրանքը անանկ կառապանի կամ նաւապե-
տի մը յանձնէ, որուն հաւատարմութիւնը, ճարպ-

կութիւնն ու հաստատութիւնը ծանօթ ըլլայ, որպէս զի կարող ըլլայ ապահով ըլլալ, որ ապրանքները աղէկ կը նայի, ու թէ որ անոր յանցանքովը ապրանքին վնաս մը հասնի նէ, հատուցումը առնելու յոյս ունենայ:

Գ. Աճառագրին մէջ՝ տանելու դաշնագրութեան ամէն պարագաները ճիշդ ու յայտնի, ու վաճառականէ մը պահանջուած ճշդութեամբ մանրամասն գրուած ըլլան, այս ինքն Ա. Կտորներուն թիւը, հակերը, չափը, ապրանքին կշիռը, նշանն ու թուանշանը (նոմերոն): Բ. Տանողէքը, ստակին տեսակը, որով պիտ'որ վճարուի: Պէտք է որոշ գրել, թէ տանողէքը բոլոր ապրանքին համար, չէ նէ չափին ու կշռոյն նայելով է. բոլոր ճամբուն, չէ նէ անոր մէկ մասին համար պիտ'որ վճարուի. դարձեալ թէ տանողէքը արդէն վճարուած է, ու ապրանքը ազատ (franco) պիտ'որ յանձնուի թէ չէ: Գ. Վամանակը՝ որուն մէջ ապրանքը տեղը պիտի հասցընէ ու յանձնէ, ուստի եւ օրն ալ, երբ ապրանքը տանողին յանձնուեցաւ ու հատուցումը՝ որն որ տանողը որոշեալ օրը չհասցընելու ըլլայ նէ, պիտ'որ ընէ: Վսիկա անատենը գրելու է, երբ որ դաշանց մէջ աս պայմանը յայտնի որոշուած է: Դ. Վն անձը՝ որուն, ու տեղը՝ ուր որ ապրանքը՝ տանողը պիտ'որ յանձնէ: Ե. Պէտք է յայտնի գրել, թէ ճամբու տուրքերը, մաքսերն ու ամէն տեսակ ծախքերը որուն վրայ են:

Դ. Պէտք է ապրանքը տանողին ալ՝ հարկաւոր եղած թղթերը տալ, ինչպէս են մաքսի համար նամակներ, վկայականներ, յայտարարութիւններ, անցագիրներ եւ այլն, որպէս զի չըլլայ թէ աս թղթերը չունենալով՝ տեղ մը արգելուի, կամ չընդունուի, վտանգներու մէջ իյնայ ու ծախքերու տակ մանէ: Վն ալ պէտք է գիտնալ խրկողը, որ եթէ աս տուած թղթերը աղէկ չըլլան, այս ինքն կամ ապրանքներուն վրայ գրուած տեղեկութիւնները շիտակ չըլլան,

կամ թէ շինծու ըլլան, եւ կամ թէ մաքսէն փախ-
ցընելու մտքով բռնած ճամբովը պարտականութեան
տակ ինկած ըլլայ, ան ատեն ասոնցմէ հետեւած
ամէն վնասները ինքը պիտ'որ քաշէ, ու իր յանցան-
քին պատիժը տուժելու պարտական է :

Ե. Պէտք է նայի որ ամենէն աժան տանողէքով
դաշնադրութիւն ընէ. բայց զգուշութեան կանոններն
ալ առանց աչքէն հեռացընելու : Անոր համար ուր
որ կարգաւորեալ աս բանիս համար որոշուած տանող-
էքի միջնավաճառներ կան, անոնց երթալու է, եւ
ոչ թէ ան միջնավաճառներուն, որոնք անանկ տա-
նողներու հետ ընկեր են, որ ապրանքին վնասուելուն
պատասխանատու չեն ըլլար :

Զ. Թէ որ ապրանքը ապահովցընելու հարկ տես-
նէ, ան ալ պէտք է ընել, բայց եթէ ապրանքին
տէրը յայտնապէս հակառակը ապսպրած ըլլայ :

Է. Ուղեւորելու համար դաշնադրութիւնը լմըն-
ցընելէն գոցելէն ետքը, ապրանքին խրկուիլը թղթով
մը ընդունողին իմացընելու է, ու ինչ, երբ, որուն
ձեռքը, ինչ տանողէքով, եւ ուրիշ ինչ պարագա-
ներով խաւրուիլը ծանուցանելու է :

Վաճառագիրը սովորաբար ուղեւորողը կը շինէ, ու ապ-
րանքը տանողին կը յանձնէ : Հասարակօրէն վաճառականի
տները շատ աշխատութենէ ազատելու համար անիկա
տպել կու տան, մէջի ան տեղուանքը բաց թող տալով,
ուր որ պարագաներուն նայելով այլեւայլ բաներ պիտ'որ
գրուին, ու վերջէն հարկաւոր եղածները ձեռագրով կը
գրեն : Գրսի կողմը ան մարդուն անունը, տեղը եւ այլն
կը գրուի, որն որ ապրանքները պիտ'որ ընդունի : Ասոնց
ձեւն ու օրինակը ուրիշ տեղ կը գնենք :

91. Ապրանքը տանողին ալ զգուշութեան կա-
նոններ կան : Ամէն բանէն յառաջ պիտ'որ նայի, որ

Ա. Ապրանքը անանկ վիճակի մէջ ընդունի, որ
առանց վտանգի կարող ըլլայ տանիլ ու տեղը
հասցընել :

Բ. Ապրանքները ինչպէս որ պէտք է նէ աղէկ փակուած կամ ծրարած ըլլան:

Գ. Ապրանքները առանց մեծ հարկաւորութենէ մը ստիպուելու ճամբուն մէջ ինք իրմէ ուրիշ տանողի մը չտայ, ինչու որ ապրանքը ուղեւորողին կամքը ասանկ կ'ենթադրուի, թէպէտեւ յայտնի ալ ըսած չըլլայ:

Դ. Ճամբորդութեան մէջ ամէն տեղ ուր որ հասնի, ան տեղաց օրինաւոր կարգադրութիւնները ճիշդ պահէ, որպէս զի իրեն հաւատացուած ապրանքները փտանդի մէջ չխնան:

Ե. Ճամբորդութեան հարկաւոր եղած թղթերն առնու, զոր օրինակ են վաճառագրերը, ծանուցումները, վկայականները, անցագիրները, յայտարարութիւնները եւ այլն:

92. Ապրանքը ընդունողը, թէ ան ապրանքին տէրն ըլլայ, եւ թէ պարզ ուղեւորող ըլլայ, պէտք է որ յետագայ կանոնները պահէ:

Ա. Ան մը ապրանքը բերողին իրեն ցուցրցած թղթերուն, ու կէս մ'ալ ապրանքը ուղեւորողին գրած տեղեկութիւններուն նայելով պէտք է որ վաճառագրին նիւթն ու պայմանները աղէկ իմանայ:

Բ. Պէտք է որ իրեն խրկուած նիւթերը կամ ապրանքները աղէկ մը քննէ, որ արդեօք գրերուն ըսածին նման են, ու աղէկ վիճակի մէջ իրեն կը յանձնուին թէ չէ:

Գ. Թէ որ ապրանքը ինչպէս որ պէտք է նէ, իրեն յանձնուած է, ան ատեն բերողէքը (տանողէքը) վճարելու է:

Դ. Բայց թէ որ ապրանքը՝ կտորներուն թիւին նայելով, եւ կամ շափոյն ու կշռոյն կողմանէ պակաս եւ կամ վնասած իր ձեռքը կը հասնի ու կը յանձնուի, ան ատեն կամ բերողէքէն վար առնելով եւ կամ ուրիշ մէկ ճամբով մը հատուցում ուղելու է: Թէ որ ապրանքը անանկ վիճակի մէջ չէ, ինչպէս որ իրեն

պիտ'որ յանձնուէր, ան ատեն առանց դատաստանաւ
քննել տալու պէտք չէ որ բնդունի, որպէս զի ետքէն
պակասը կամ եղած մնասը կարող ըլլայ զիւրաւ
ցուցընել. ապա թէ ոչ՝ թէ որ աս կերպով վարուե-
լու ըլլայ, ձեռքը ամենեւին ցուցում շունենար: Թէ
որ ապրանքը խրկողը՝ ըլլալու մնասը վրան առած է,
ան ատենը շուտով մը եղածին վրայ իրեն թուղթ մը
դրելու իմացընելու է: Այլ թէ որ ապրանքը ուրիշին
հաշուին իրեն խաւրուած է, պէտք է ապրանքին ախ-
րոջն ալ անմիջապէս պատահածը ծանուցանել:

Ե. Թէ որ ինքը ապրանքին տէրը չէ, պէտք է որ
ապրանքը խրկողին ու ապրանքին ախրոջը հրամաննե-
րուն զգուշանայ, ու ապրանքը բնդունելու համար թէ՛
մէկէն եւ թէ՛ մէկալէն յանձնարարութիւն ունենայ:

93. Արբ որ ապրանք մը տեղէ մը ուրիշ տեղ
պիտ'որ խաւրուի, կրնայ պատահիլ որ խրկուած տե-
ղէն մինչեւ որոշուած վերջին տեղը շարունակ ճամբայ
չկրնայ ընել: Ինչու որ շատ անգամ անանկ առիթ
չպատահիր, որ մի եւ նոյն տանողը՝ ապրանքը մէկ
տեղէ մը մինչեւ ուրիշ տեղ տանելու կարող ըլլաս
ստիպել. մանաւանդ երբ որ ճամբան շատ երկայն
կ'ըլլայ, ու կէս մը ծովով ու կէս մ'ալ ցամաքով
հարկ կ'ըլլայ որ երթայ. ու շատ անգամ անանկ դէպք
մը առջեւ կ'ելլէ, որ ապրանքը երկայն ճամբորդու-
թեան մէջ բանալ ու նայել տալ հարկ կ'ըլլայ: Աս
պատճառներուն համար, ապրանքը չէ թէ վերջին
որոշեալ տեղը, հապա միջին տեղ մը կը խաւրուի, ու
անկից ալ ուրիշի մը ձեռքով յառաջ կը քշուի: Աս
տեսակ ուղեւորութեան մէջ, մէջտեղը գանուող ու-
ղեւորողը երկու գործք ունի, այս ինքն խրկուած
ապրանքներուն թէ՛ բնդունող է, եւ թէ՛ (ապրանք-
ները նորէն ճամբայ դնելուն ու յառաջ քշելուն հա-
մար) ուղեւորող ալ է. եւ աս երկու գործքն ալ ու-
րիշին հաշուին պիտ'որ գործէ: Արդ թէ որ վաճա-
ռականի մը պէս աս գործքիս մէջ մտնել կ'ուզէ,

պէտք է որ աս գործքիս մէջ եղած վտանգները աղէկ ճանչնայ, անոնց առջեւն առնու, ու պարագաներուն նայելով անոնցմէ ինքը զինքը ազատելու նայի: Անոր համար պէտք է որ անանկ զգուշութիւն ընէ, որ միշտ ամէն ատեն կարող ըլլայ ցուցընել, թէ ինքը իր պարտքը կատարած է, ու իր գլխաւորին շահը աչքին առջեւէն հեռացուցած չէ:

ԾԿ. Իբրեւ ապրանքները ընդունող պէտք է որ աս սկզբունքները միշտ աչքին առջեւն ունենայ.

Ա. Պէտք է գիտնայ, թէ ինչ պիտ'որ ընդունի, ու համոզուած պիտ'որ ըլլայ, թէ ամէն բան որն որ պիտ'որ ընդունէր, ընդունեցաւ: Թէ որ հակերուն կամ կտորներուն ցանկն ալ շունի, գոնէ պէտք է նայի, որ խրկուած ապրանքներուն նշանակուած կտորներուն կշիռը, թիւն ու նշանները եւ ամէն շափերը ճիշդ, շիտակ ու ամբողջ ըլլան:

Բ. Պէտք է որ նայի, որ ապրանքները աղէկ վիճակի մէջ հասած են թէ չէ: Թէ որ հակերուն ցանկն ալ իրեն ծանօթ չէ նէ, գոնէ պէտք է որ անոնց ծրարները աղէկ մը քննէ, ու նայի որ արդեօք որչափ որ ապրանքը բերողի մը պարտքն է, ապրանքները թրջելէն պահպանուած են թէ չէ, կամ թէ արդեօք փաստած են թէ չէ:

Գ. Թէ որ փաստած կամ կշռէն պակասած գտնէ, եւ կամ թէ ընդունելու համար հարկաւոր եղած պայմաններուն մէկուն մէջ պակասութիւն մը գտնէ, ան ատենը պէտք է որ ապրանքը բերողը բռնէ, ու ապրանքը ընդունելէն յառաջ՝ դատաստանաւ հարկաւոր եղած քննութիւնները ընել տայ, ու որչափ որ պէտք է նէ, բերողէքը վճարելն ուշացընէ. եւ թէ որ ասոնք բաւական չեն ըլլար, ապրանքը բերողէն աւելի ապահովութիւն պահանջէ: Համառօտ ըսենք, որչափ որ կարող է, իր մեծին եղած փաստին ցուցումներ փրնտուէ, ու յայտնէ թէ աս փաստը որչափ բանի կրնայ հասնիլ:

Գ. Բայց երբ որ քննութենէն անանկ ելլէ, որ բերողը իր ամէն պարտքերը աղէկ կատարած է, ան ատեն ինչ որ վաճառագրին դաշինքը կը պահանջէ, կատարելու, ու բերողէքը վճարելու է. եւ թէ որ բերողը կարող ըլլայ ցուցնել, որ դաշանց մէջ եղած պայմաններէն դուրս ապրանքը աղէկ պահպանելու համար ծախքեր ըրած է, անոնց ալ տեղը հատուցում ընելու է, առանց փախուստ տալու կամ խաբէական պատճառներ բերելու:

95. Իբրեւ ուղեւորող, պէտք է որ ետեւէն եկած կանոններուն զգուշանայ:

Ա. Ապրանքները մինչեւ նորէն ճամբայ հանելու ատենը աղէկ վիճակի մէջ պահպանէ:

Բ. Ուղեւորելու ապրանքին ծրարը կամ սնտուկը թէ որ նորոգութիւն պէտք է, նորոգել տալու է, որ ճամբորդութեան կարող ըլլայ դիմանալ:

Գ. Պէտք է նայի, որ ապրանքները այնպիսի տանողի մը յանձնէ, որ իր մեծին աւելի շահաւոր պայմաններով, որչափ որ կարելի է շուտ ճամբայ ելլեն, քիչ ատենի մէջ որոշեալ տեղը հասնին, ու տանողն ալ ամէն տեսակ հարկաւոր թղթերն ունենայ:

Դ. Ապրանքը ճամբայ հանելէն ետքը, պէտք է որ անոր՝ որուն որ ապրանքը կը խաւրուի, թղթով մը ապրանքին ճամբայ դրուիլը, տանողին անունը, խորհուած ապրանքին քանի կտոր ըլլալը, անոնց թիւը, նշաններն ու իր մեծին կամքը ծանուցանէ:

Ե. Ի վախճանի իր վարձքը այս ինքն ուղեւորչէքը, ու ապրանքին համար ըրած բոլոր ծախքերը ըստ արդար հաշուի անկից առնու, որն որ գրուած դաշանց համաձայն՝ ան վարձքը վճարելը վրան առած է:

Ապրանքները ուղեւորելը առջի ժամանակները գիւրին գործք մըն էր, ու գիտութիւններու եւ այլեւայլ տեղեկութիւններու հարկաւորութիւն մը չկար. վաճառականը՝ կառապանին, ու կառապանն ալ վաճառականին հետ կը խօսէր կը լմըննար: Բայց հիմա կուան ատենս անանկ չէ, հապա

այլեւայլ տեղեկութիւններու հարկաւորութիւն կայ : Աւ-
 ճառականին սենեակը՝ մարտերու, տուրքերու կարգադրու-
 թիւններով, ճամբորդութեան պայմաններուն թղթերովը,
 անոնց փոփոխութեանցը յաւելուածներովը, շոգենաւնե-
 րու, երկաթի ճամբաներու դներուն ցուցակներովը լեցուն
 պէտք է որ ըլլայ : Ուղեւորողը այլեւայլ տերութեանց
 կարգադրութիւնները, օրէնքները պիտ'որ գիտնայ, ինչու
 որ բանը գործքը անանկ բաներու հետ է : Աւճառական մը
 աս բաներուս որչափ աւելի տեղեակ է, այնչափ աւելի
 աներկիւղ համարձակ կը գործէ, ու այնչափ իր առու-
 տուրն ալ կրնայ ընդարձակել : Օրինակ մը դնենք հոս :
 Յայտնի բան է, որ Անցորդական կամ Անցաւոր (Transito)
 ապրանքները սովորաբար քիչ կարգադրութիւններու տակ
 ինկած են. առ առաւելն երբ որ տերութեան մը մէջ կը
 մանեն նէ, կը կներուին, ու աս վիճակիս մէջ դուրս պէտք է
 որ ելեն : Բայց ասիկա միշտ ասանկ չէ : Մարդուն մէկը
 ժամանակաւ Ռուսաստան արուեստական ապրանքներ խա-
 րելու ըլլալով, ասոնց վրայ նաեւ ծխախոտ ալ աւելցուց :
 Արդ որովհետեւ աս բեռը միջին տերութիւններէն մե-
 կուն մէջէն պիտ'որ անցնէր, անոր համար ալ ապրանքին
 տէրը մէջի եղած նիւթերուն ցանկը գրեց : Բայց ասիկա
 բաւական չըլլալով ապրանքը աս տերութեան մէջ մանելուն
 պէս՝ բանուեցաւ, ու հինգ ամիս ետքը ասանկ վճիռ ելաւ
 որ, ան ծխախոտը օրինաց դէմ առանց անցագրի ներս
 մանելով, պէտք է որ անոր համար տուգանք վճարուի :

Աս ետքի հատուածներնուս մէջ տրուած կանոններուն
 ամեն մէկ բառն ալ մէյմէկ կանոն ըլլալով՝ կը յորդորենք
 մեր ուսանողները որ անոնց մասնաւոր մտադրութիւն
 ընեն :



ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

96. ՍԱՐԴՍ չէ թէ միայնութեան, հապա ընկե-
 թեան մէջ ապրելու համար ծնած ըլլալով, անոր
 բնութեան մէջ առուտուրի սկիզբը հաստատուած կը
 տեսնենք: Այլ որովհետեւ ամէն կողմ երկիրը նոյն
 բերքը չծնանիր, ու ամէն մարդ ալ նոյն գործքի կա-
 րողութիւն ու յարմարութիւն չունի, ուրեմն յայտնի
 բան է, որ ան առջինը՝ որն որ իր ճակատին քրտին-
 քովը, փորելով, հերկելով, տափանելով ու մշակելով
 երկրէն աղէկ ու առատ պտուղ, ու անկից ալ մարդու
 կերակուր հաներ, ու իրեն ալ ստացուածք ձարեր է,
 որով եւ մէկալ մարդիկներէ առաւելութիւն մը ստա-
 ցեր է, աշխարհքիս առջի վաճառականը ու վաճա-
 րականութեան հաստատողը դնելու ենք: Մարդիկ-
 ներուն թէ կարողութեամբ եւ թէ զօրութեամբ
 իրարմէ ունեցած տարբերութիւնը, մէկուն՝ հարկաւոր
 եղածէն աւելի ունենալը, իսկ մէկալին կարօտու-
 թիւնը՝ ստիպեցին, որ մէկը աւելորդը տայ, ու մէկալը՝
 հատուցում մը ընելով, հարկաւորը անկից առնու:
 Արբ որ ընտանիքներ, ընկերութիւններ ու ցեղեր
 իրարմէ բաժնուեցան ու անոնցմէ ազգեր ու ժողո-
 վուրդներ զատուեցան ու ելան, աս կարօտութիւնը
 մէկ տեղ մը սաստկանալով ու անոր հակառակ մէկալ
 կողմը թէ բնութեան առատաձեռնութեամբը եւ թէ
 արուեստներով յառաջ եկած բերքերը շատնալով,
 հարկ եղաւ որ կողման մը կարօտութիւնը լեցընելու
 համար առուտուր ըլլայ: Հարթ ու տափարակ երկիր-
 ներու բնակիչները երկրագործութեան ու անասուններ
 աճեցընելու, իսկ լեռնային կողմերու բնակիչները որ-
 սորդութեան կը պատաղէին, ծովեզերեայ տեղերուն
 մարդիկն ալ՝ ձկնորսութեան: Այլ որովհետեւ ասոնք
 ամէնն ալ թէ ուրիշներուն եւ թէ իրենց աշխատու-
 թեանն ու քրտանց պտղոյն կը կարօտանային, ու

մարդիկ քանի որ կը շատնային, կարօտութիւնն ալ կը մեծնար, ու մէկալ կողմանէ առջի նախահարց անպաճոյճ կեանք անցընելը թող տալով կը բարակնային, ասկից հարկ կ'ըլլար, որ առուտուրը աւելի յաճախէր: Աս տեսակ առուտուրը այնչափ հին է, որչափ աշխարհքիս սկիզբն ու մարդուն զանազան բաներու ունեցած կարօտութիւնը, որն որ օտար բերքեր ճանչնալէն յառաջ եկաւ, ու մարդուն անոնց հաճելուն ու վայելել ուզելուն պատճառաւ սովորութիւն եղաւ: Ինչու որ բնութիւնը ամէն դաւառ նոյն պտուղը յառաջ չբերեր, ինչպէս բրինձ ու ձիթապտուղ Լապլանտիայի լեռներուն վրայ չեն յաջողիր, նոյնպէս հիւսիսային կողմի երկրագործութիւնը արեւելքի հողերուն ու ծովեզերեայ տեղերուն օգուտ չընէր: Ալ որովհետեւ քիմքի հաճոյական կերակուրները փոփոխելը՝ մարդուս բնական է, ու մարդս աւելի աղէկ ապրիլ կ'ուզէ, ասկից գրգիռ մը եղաւ, որ մարդ՝ իր երկրէն աւելցածը ուրիշ մերձաւոր սահմանակից երկիրներ տանելու ու անկից աւելցածը առնելու ու իր տեղը բերելու համար, նախ իր երկրին բերքը շատցընէ. եւ որչափ որ ասանկ բերքեր աւելցընելու միջոցները շատցան, ու առուտուրը դիւրինցաւ, այնչափ ալ ընդարձակեցաւ ու ամէն կողմ տարածեցաւ: Տկար փայտի մը վրայ ելլելով մարդս, ծովէն ճամբայ գտնել ուզեց, իր կեանքը շնչին փայտին, ու իր բոլոր ստացուածքը ծովու անհաւատարիմ ալիքներուն հաւտալով, նաւազնացութիւնը գտաւ. եւ թէպէտ իսկզբան վախնալով ու դողալով եզերքներէն ու գետերու վրայ միայն կը նաւէին, բայց ետքը ապահով միջոցներ գտնելով, ու ճարպկութիւն բանեցընելով ազատ ծովու վրայ ալ սկսան երթալ, որով եւ իրարմէ հեռու եղած երկիրները կապուեցան, ու վաճառականութիւնը աւելի ընդարձակելով մեծ օգուտներ սկսաւ ցուցընել: Աս միջոցիս մէջ Ստակն ալ գտնուեցաւ, որն որ առուտուրի մէջ ամէն ապրանքին դիմացը ընդհանուր արժէք

մը ըլլալով, վաճառականութիւնը նոր կեանք մը ստացաւ :

Վաճառականութիւնը յառաջ տանելու համար, պէտք էր որ մարդիկ թէ քաղաքականութեան եւ թէ արուեստներու մէջ գոնէ քանի մը ոտք յառաջ դացած ըլլային, ինչու որ արուեստներու մշակութիւնը՝ վաճառականութեան հետ ձեռքէ ձեռք բռնած կ'երթան ու մէկը մէկալէն շէն զատուիր : Արուեստներուն յառաջ երթալովը՝ բերքն ու պտուղն ալ շատցաւ, բաղձանքն ու եռանդն ալ աւելցաւ, ու մէկ արուեստ մը ուրիշ արուեստ սկսաւ ծնանիլ : Վիտութիւնները՝ որոնք մտքի վերաբերած բաներ են, անոնց օգնութեան հասան, ու մարդու սուր միտքը նոր նպր գիւտեր գտնելու ետեւէն եղաւ : Արօտութենէն աւելի բան ստանալու համար մարդու բնական անյազ բաղձանքը՝ որ մարդկային հնարագիտութեան աղբիւր մըն է, վերջապէս խորթ ու օտար ծնունդ մը ծնաւ, այս ինքն ընշասիրութիւնն ու ազահութիւնը. բայց ասանք ալ ընդհանուրը յառաջ տանելու գրգիռ եղան, հարստութեան բաղձանքը ու բան ստանալու յոյսը՝ մարդիկներու սիրտ տուին, ու վաճառականութիւնը զօրացուցին :

97. Ապա ուրեմն պզտիկ ու աննշան բան մըն էր վաճառականութեան սկիզբը, ու առջի կերպարանքը հիմակուանէն շատ տարբեր էր, որն որ այնչափ դարեր ետքը, այնչափ ազգերու ջանքովն ու գիւտերովը ստացաւ : Թէ որ վաճառականութեան տարածուելուն ու մեծնալուն պատճառները քննելու ըլլանք, կը գտնենք որ քաղաքներու մէջ ընկերութիւններու կազմուիլը, նոր երկիրներու գտնուիլը, առուտուրի միջոցներուն դիւրիննալը, ու նաւագնացութիւնը ասոր գլխաւոր պատճառ եղած են : Ինչ ու առջի ժամանակներու վաճառականութիւնը՝ որչափ որ քաղաքներու մէջ կարգաւորեալ բնակութիւն չկար, հարկ էր որ շնչին բան մը ըլլար. անոր համար ալ հին ազ-

գերու թագաւորութիւնները հաղիւ քիչ մը կրցան
 գործել, թէպէտեւ թէ ցամաքային եւ թէ ծովային
 վաճառականութեան սկիզբ իրենք եղան: Մեծ թա-
 գաւորութեանց կարօտութիւնը՝ հասարակ ընտանիք-
 ներու կարօտութենէն շատ աւելի եւ մեծ ըլլալով,
 առանց իմացուելու վաճառականութիւնը ամենէն
 յառաջ տէրութեանց մայրաքաղաքներուն մէջ ծաղ-
 կեցաւ, ու նաեւ նոյն իսկ իշխանին կամ թագաւորին՝
 կարօտութեան միտ դնելէն, ու բոլորին օգնութեան
 հասնիլ ու պաշտպանել ուղելէն յառաջ, ան քաղաք-
 ներուն մէջ յառաջ գնաց: Ինչ որ նոր ատեններս ալ՝
 մեծամեծ թագաւորութեանց վաճառականութիւնը
 միշտ ան ատենները երեւելի եղած ու վերջի ծայրը
 հասած է, երբ որ թագաւորութիւնը վերջի աստիճան
 բարձրութեան հասած եւ կամ իմաստուն թագաւորի
 մը տակ էր: Վարձեալ որովհետեւ վաճառականու-
 թիւնը՝ աւելորդը տալու ու անոր տեղը հարկաւորը
 առնելու վրայ հաստատուած է, անոր համար պէտք
 է որ ան ատենը աւելի մեծցած ու յառաջացած ըլլայ,
 երբ որ կամ երկիրները առատ բերք բերած, եւ կամ
 նոր երկիր մը գտնուելով, անանկ ապրանք յառաջ
 եկած ըլլայ, որոնք յառաջ ձեռք բերելը դժուարին
 էր: Վայց որովհետեւ նոր երկիրներուն մեծ մասը
 ծովային ճամբորդութիւններով գտնուած են, ու
 նաւագնացութիւնը՝ աս երկիրներուն հետ եղած ա-
 ուտութիւնը դիւրինցընելու միջոց մըն է, ասկից կը
 հետեւի որ վաճառականութեան մեծնալը՝ նաեւ
 նաւագնացութեան յառաջ երթալէն կախում ունի,
 ու ճամբաներուն դիւրիննալը՝ անոր հետ ի ներքուստ
 կապուած է:

98. Ինչ որ առջի ժամանակները դիպուածով մը
 կը գործուէր, քանի գնաց եւ մանաւանդ վերջի ա-
 տենները դիտողութեան նիւթ ու առարկայ եղաւ. եւ
 որչափ որ վաճառականութեան սահմանը մեծցաւ,
 ու զանազան ազգերու մէջ անիկայ յառաջ տանելու

եռանդը բորբոքեցաւ, այնչափ ալ շատ ազգեր առու-
տուրի կապով մէկը մէկալին հետ կապուեցան, մինչեւ
իրենց զէնքով ալ վաճառականութիւնը յառաջ տա-
նելու ջանացին: Ան ազգը որ իր զէնքովը մէկալներէն
վեր կ'ելէր, անկէ ետքը իր վաճառականութեան մե-
նավաճառութիւնը կը շարունակէր, մինչեւ որ ուրիշ
տէրութիւն մը իր տեղը անցնէր: Ամենէն յառաջ
ծովեզերեայ տէրութիւնները վաճառական տէրութիւն
եղան, ինչու որ ծովագնացութեան շատ յարմար դիրք
ունենալով, կրցան շուտով յառաջանալ, որոնց գաղ-
թականութիւններն ալ շատ օգնեցին ու իրենց վա-
ճառականութեանը գլխաւոր նեցուկ ու պաշտպան
եղան:

Թէ որ վաճառականութիւնը՝ ազգի մը մէջ տեւած
ժամանակին նայելով նկարագրել ուզէինք, ամէն
անգամ մէկ ազգէն մէկալ ազգ անցնելուն՝ նոր հա-
տուած հարկ ըլլալով բաժնել, շատ մէջէ մէջ բաժան-
մունքներ կ'ելլէին, որով եւ պատմութիւնը կարգա-
ցողին դիւրիմանալի չէր ըլլար, անոր համար մեզի
աղէկ կ'երեւայ բոլոր աշխարհքիս վաճառականու-
թեան պատմութիւնն ալ ընդհանուր պատմութեան
պէս ան երեւելի դէպքերուն վրայ բաժնել, որոնցմով
վաճառականութիւնը մեծ փոփոխութիւն կրեց: Աս
կերպով վաճառականութեան պատմութիւնը երեք
կը բաժնենք՝ Հին, Միջին ու Նոր: Հինը՝ սկիզբէն
մինչեւ Հռոմայեցւոց թագաւորութեան կործանումը
ու Արաբացւոց սկզբնաւորութիւնը. Միջինը՝ ասկից
մինչեւ արեւելեան Հնդկաստան ծովով ճամբուն ու
Ամերիկայի գտնուիլը. իսկ Նորը՝ անկից մինչեւ հիմա:
Ասկից զատ առանձին հատուած մ'ալ մեր ազգային
վաճառականութեան պատմութեանը կը գնենք:

99. Արք որ վաճառականութեան առջի մթին նշմարանքները կամ հետքը փնտուելու ըլլանք, անանկ երկրի մը մէջ կը գտնենք, որմէ հիմակուան լուսաւորեալ ու ծաղկեալ ազգերուն գիտութիւնն ու իմաստութիւնը յառաջ եկած է, այս ինքն Ազիպտոս, ուր երեւելի եղաւ Սեսոսարիս, որուն անունը այնչափ հին ատեններէ մինչեւ հիմա մնացեր է: Աս անուանի թագաւորը Եթովպիայի ազգերուն յաղթելէն ետքը՝ Ասիա գարծաւ, ու անկից Հնդկաստան երթալով իր յաղթող բանակաւ մինչեւ Ովկիանոսի եզերքը նուաճեց, Սկիւթացիները հարկատու ըրաւ, ու Թրակացիներուն յաղթեց, այնպէս որ իր իշխանութիւնը Սելծովէն մինչեւ Գանգէս գետին բերանը կը հասնէր: Իր մեծամեծ յաղթութիւններէն ետքը խաղաղութեան օրհնութիւնն ալ իր ժողովուրդեանը վայելել տուաւ, ու իր իմաստուն կառավարութեանը համար՝ իր անունը ամէն ատեն ազգերու մէջ երեւելի մնաց: Ասիա մեծ ջրմուղներ ու սահանքներ շինեց, որով Ազիպտոս ամէն կողմանէ կապուելով, առուտուրը շատ դիւրինցաւ, ու ասով ժողովուրդն ալ երջանկութիւն գտաւ: Ազիպտացւոց վաճառականութեանը սրչափ ընդարձակութիւն ունենալը ու մինչեւ սր կողմը տարածուիլը ճիշդ չենք գիտեր, բայց կ'երեւայ որ թագաւորութեան շատ զօրացած ու մեծցած ատենը՝ վաճառականութիւնն ալ շատ ընդարձակ էր, ինչու որ Ազիպտոս Ափրիկէի ու Ասիայի մէջտեղը ու ոսկիի ու ծխանելիքներու երկիրներուն մօտ ըլլալով, պէտք է որ իր առուտուրն ալ յաջող գացած ըլլայ, ու Ազիպտոս ամէն տեղաց վաճառականներուն ու առուտորի գլխաւոր տեղն եղած ըլլայ:

100. Վաճառականութիւնը հոնկից սահմանակից ազգերու եւ աւելի Փիւնիկեցւոց անցաւ, որոնք ճիշդ

խօսելով՝ Աճառական ժողովուրդ կրնանք անուանել :
 Իրենց ջանքովը, աշխատութեամբը, սրտոտութեամբն
 ու յարատեւութեամբը ամէն ազգերէն երեւելի եղան ,
 ու իրենց ճարտակութեամբ առջինը եղան որ ծովու
 վրայ սկսան նաւարկել , անանկ ատեն մը՝ երբ որ
 ոչ կողմնացոյց , ոչ ալ լուսատու աշտարակներ կային :
 Անանկ ատեն մը՝ երբ որ դեռ նաւարկութիւնը շատ
 վտանգաւոր բան էր , ու նաւապետները ծովուն ան-
 սաստ ալեացը գէմ կռուել չէին գիտեր , ասոնք սկսան
 ծովով ճամբորդութիւններ ընել : Արդ Փիւնիկեցիք
 աս կերպով առուտուրի ձեռք զարնելով , քիչ ատենի
 մէջ Միջերկրական ծովուն ու բոլոր արեւմտեան վա-
 ճառականութեան աէր եղան , որն որ ոչ կռուով եւ
 ոչ պատերազմաւ իրենց ձեռքէն մէկը կրցաւ յափշտա-
 կել : Մեծ պատուոյ , փառաց ու շնորհակալութեան
 արժանի են Փիւնիկեցիք , վասն զի օգտակար գիւ-
 տերու ետեւէն եղան , որոնց մէջ խորհուրդներու ալ
 տեսանելի նշանակներ գտնելուն հնարքը , այս ինքն
 է զրի գիւտը իրենց մտացը պտուղն է : Ասանկ ժողո-
 վրդեան երկրին վրայ պէտք է որ մանրամասն տեղե-
 կութիւն մը տանք : Փիւնիկեցիք ըսելով Փոքր Ասիայի
 մէջ ան երկիրը կ'իմացուի , որուն հիւսիսային ու ա-
 րեւելեան կողմէն Ասորիք , հարաւային կողմանէ
 Պաղեստին ու արեւմտեան կողմանէ Միջերկրական
 ծովը սահման է : Ասոնք ծովեզերեայ տեղուանք մեծ
 քաղաքներ ունէին , որոնց մէջ անուանի եղաւ Սիդոն
 կամ Ծայղան , որն որ երկայն ատեն Փիւնիկեցւոց
 մայրաքաղաքը համարուած էր : Իրենց բարձրութեան
 ատենը աս քաղաքին հարաւային կողմերը քիչ մը հեռու
 ծովու մէջ նոր քաղաք մ'ալ շինեցին Տիւրոս կամ
 Ծուր անունով , որն որ միանգամայն առջի քաղաքին
 քովը ըլլալուն՝ Գուստր Սիդոնի կոչուեցաւ , ու թէ
 զօրութեամբ եւ թէ՛ գեղեցկութեամբ մայրաքաղաքը
 անցուց : Անուանի քաղաքներուն կարգը կը դրուին
 նաեւ Արագոս , Տրիպոլիս ու Բերիտոն : Փիւնիկեցւոց

երկիրը ըստ ինքեան այնչափ բերրի երկիր մը չէ, ու ապրուստի հարկաւոր բաները պակաս ու քիչ են, անոր համար ալ կը կարծուի որ իր բնակչաց եռանդն ու ոգին գրգռողը՝ աս պակասութիւնը եղած ըլլայ, որով գրսէն ներս խոթած հարստութեամբ իրենց ներքին աղքատութեանը ճար մը կրցան հոգալ, ու եռանդնոտ առուտուրով իրենց կարօտութիւնը առատութեամբ լեցուցին:

101. Սիդոնի, Տիւրօսի ու մէկալ ծովեզերեայ քաղաքներուն օգտակար ու շահաբեր նաւահանգիստներուն պատճառաւ նաւազնացութիւնն ալ շատ յառաջ գնաց. Վիբանանու մայրերն ու սահմանակից մերձաւոր անտառներուն փայտերը անոնց առատ նիւթ էին, ու Փիւնիկէ ան ժամանակուան ճանչցուած աշխարհքին միջավայրը ըլլալով, բոլոր երկրիս շորս կողմին առուտուրը իրեն կը քաշէր: Արեւելեան կողմէն Ասորիք, Բաբելոնիք, Ասորեստանեայք ու Հրնգիկք կը բնակէին, իսկ արեւմտեան գին Միջերկրական ծովը իր ծովեզերեայ տեղեօքը ու կղզիներովը կեցած էր. հարաւային կողմը Արաբիա ու Ագիպոսս, իսկ հիւսիսային կողմանէ Սեւ ծովի գեղեցիկ երկիրները կը պատէին: Հնդկաստանի հեռաւոր տեղերէն աս տեղս վաճառք իջեցընելով, Հնդիկները հարաւային կողմերու հետ առուտուր կ'ընէին. երկրիս ամէն տեղերուն բերքերը ամէն կողմանէ հոս կը թափէին, ու կ'երեւայ թէ նոյն իսկ բնութիւնը աս տեղս վաճառականութեան յարմար տեղ մը սահմանած էր, որմէ ամէն կողմի տերութիւններու ու աղգերու ճիւղեր կ'արձրիէին: Արկրին սքանչելի գիրքին հետ նաեւ բնակչացը հնարագիտութիւնը, ճարտարութիւնն ու գործունեայ ու ճարպիկ բնութիւնն ալ զարմանալի էր. երեւելի էին անոնց գործատուններն ու արուեստանոցները, որոնք ան ժամանակուան վաճառականութեանը յառաջ երթալուն գլխաւորաբար պատճառեղան, որոնցմէ ելած գործուածներուն մէջ գեղեցիկ

էր ծիրանին ու ապակին, որոնք հին ժամանակները
թանկագին վաճառներ էին: Աս երկուքն ալ Փիւնի-
կեցիք գտան, որոնց շինելուն կերպը դուրս չէին հա-
ներ, ու ասով անոնց վաճառականութիւնը երկայն
ատեն իրենց մէջը մնաց: Ասոնցմէ զատ նաեւ տեսակ
մը բարակ կտաւ ու ասուի ալ կը գործէին, նաեւ քող
ու մկրատ, դանակ եւ այլն, որչափ որ ան ատենի
ախորժակը կը տանէր: Շարտարապետութիւնն ու
գործնական արուեստներն ալ պէտք է որ անոնց մէջը
յառաջ գացած ըլլան, վասն զի դիտենք որ Սողոմոն իր
մեծագործ ու բոլոր աշխարհքիս վրայ անուանի եղած
տաճարը շինելու համար ճարտարապետներն ու շինող-
ները Սիդոնէն բերել տուաւ: Սարեփթա ալ հալոցներ
կային ու մետաղներ գործելու մէջ ալ քաջ էին:

Վաճառականութիւնն ու նաւագնացութիւնը
գիւրինցընելու համար գտած գիւտերնին ալ շատ
երեւելի են, որոնց մէջ գլխաւորաբար Ստակը՝ որ յա-
ռաջ անձանօթ էր, ու գիշեր ատեն աստղները դիտե-
լով նաւելը՝ ամենէն աւելի զարմանալի են: (Ինչ որ
անգամ մը մտածենք, որ նոր ատեններս առձեռն-
պատրաստ դրամ վճարելու տեղ՝ փոխանակագիրը
առուտուրին որչափ դիւրութիւն ըրած է, ասկից
կրնանք հետեւցընել, որ երբ որ հին ատեններն ալ
փոխանակութեամբ (Եր-մբ-յո՛վ) առուտուր ընելու
տեղ ստակը գտնուեցաւ, վաճառականութիւնը որ-
չափ թեթեւցած պիտ'որ ըլլայ: Այց որովհետեւ
ստակը այնպէս արուեստական բան մըն է, որ մէկէն
մարդուն միտքը չիյնար, հապա ուրիշ գիւտեր գրա-
նուելէն ետքը ու կամաց կամաց, անոր համար ալ կա-
մաց կամաց աս աստիճանի հասած պիտ'որ ըլլայ:
Իսկզբան ապրանքի տեղ ապրանք տալով առուտուր
կ'ըլլար, ետքը անասունները ընդհանուր միջոցի տեղ
սկսան գործածել, բայց աս կերպն ալ ծանր ու
դժուարին ըլլալով, հարկ եղաւ որ մարդիկ ազնուական
մետաղներու դիմեն: Աս կերպը երկայն ատեն զնաց,

ու վաճառականները մետաղը կշռելով՝ ապրանքով կը փոխէին. բայց որովհետեւ կշռորդն ու կշիռները մէկտեղ տանիլն ալ մեծ աշխատութիւն էր, ստիպուեցան մետաղները հաւասար կտորուանք բաժնել, որոնք վրանին դրոշմ (որոշմ) ունենալով ինչ կշիռք ու գին ունենալնին ալ կը ցուցնէին: Աս կերպով բուն ստակը երեւան ելաւ, ու քիչ մը ետքը տէրութիւնները կամ իշխանութիւնները ստակ կոխելու իրաւունքը իրենց սեպհականեցին: Ասոր նման նաւագնացութիւնն ալ հարկ էր որ կամաց կամաց իր վերջին կատարելութեանը հասնէր. հիներուն ատենը շատ անկատար միճակի մէջ էր նաւագնացութիւնը, ինչու որ մեծամեծ նաւեր շատ քիչ կային, ու կողմնացոյցը որ այսօրուան օրս ծովու վրայ նաւելու գլխաւոր միջոցն է, դեռ գտնուած չէր: Ասոր համար իսկզբան Փիւնիկեցւոց նաւագնացութիւնը Գիպրալդարի նեղուցէն անդին չէր անցներ. բայց քիչ մը ետքը Եւրոպայի բոլոր ծովեզերքը գտնելով, չէ թէ միայն Անգղիայի կողմերը առաջաստով նաւելու սկսան, հասցա նաեւ սաթ հանելու պատճառաւ մինչեւ Պալդիկ ծովը հասան: (Ընկալեալ Փիւնիկեցւոց նաւագնացութիւնը մեծ բան մը չէր, բայց անանկ ողորմելի ու քիչ միջոցներով, ու մեծամեծ դժուարութիւններու ու արգելքներու յաղթելով այնչափի հասնիլն ալ մեծ բան էր: Աին գարերուն առաջինն ու ամենէն աւելի հմուտ ու տեղեակ նաւաւարներն էին. առջինը իրենք եղան, որ այնչափ երկայն ճամբորդութիւններու ձեռք զարկին, ու ասով ան աստիճանի հասան, որ ան ատենի իշխանները, թագաւորներն ու զաւառապետները նաւագնացութեան ու ծովական գործքերու մէջ զիրենք սկսան գործածել, ինչպէս նաեւ ետքէն եկող մտադիր Յոյներն ալ նաւելու արուեստը անոնցմէ սորվեցան: Բայց Փիւնիկեցւոց՝ նաւագնացութիւնը կատարելագործելու համար գործածներնուն մէջ ամենէն երեւելին ու զարմանալին՝ աստղաբաշխութիւնը ծա-

ուայեցընելն ու աստղները դիտելով տեղւոյ մը շեքը
 գանելն է: Օքուցածներնուս վրայ աս ալ պէտք ենք
 աւելցընել, որ Փիւնիկեցիք երկու տեսակ նաւ ունէին,
 մէյ մը կլոր կամ բեռան նաւ, մէյ մ'ալ երեք կամ
 հինգ կարգ թիակներով երկայն նաւեր: Առջինը առ-
 ուտուրի վերաբերեալ ճամբորդութիւններու կամ աս-
 դին անդին ապրանք տանելու կը գործածէին, իսկ
 երկրորդը՝ գլխաւորաբար պատերազմի: Արկուքին ալ
 շաստուածներու անուններ կը դնէին, որոնց պաշտ-
 պանութեանը որ նաւը նուիրած էր:

Պովական վաճառականութիւնը մէկ կողմէն հիւ-
 սիսային Ափրիկէի ու Ասիայի ծովեզերքը կը տարածէր,
 մէկալ կողմէն ալ ցամաքային առուտուրը Ափրիկէի
 ու Ասիայի մէջ յառաջ կ'երթար: Հնդկաստան բո-
 լոր Փիւնիկեցւոց հարստութեանը գլխաւոր աղբիւրն
 էր, ինչու որ աս երկրին մէջ յառաջ եկած թէ բնա-
 կան եւ թէ արուեստական գանձերը երեւելի, ու
 նաեւ մարդուս քմացը ու հաճոյից յարմար ըլլալով,
 ամէն ատեն ալ Փիւնիկեցւոց առուտուրին հիմն եղած
 էին: Ապա ուրեմն կրնանք ճշմարտութեամբ ըսել
 թէ Փիւնիկեցիք՝ որ այնպէս ընդարձակ առուտուրի
 ձեռք զարկին ու յառաջ տարին, Աւաճառական ժո-
 դովուրդ էին, ու գիտուն ազգ ալ էին, ինչու որ վա-
 ճառականութեան հետ գիտութիւնն ալ սիրեցին ու
 տարածեցին:

102. Ստոյգ է որ Փիւնիկեցւոց թագաւորութիւնը
 իսկզբան շատ պզտիկ էր ու քիչ երկիր ունէր, բայց
 վաճառականութիւնը ուր որ կը հասնի, իր օրհնու-
 թիւնն ալ հսն տեղը կը սփռէ ու կը տարածէ: Տիւ-
 րոս, ամէն կողմ ուր որ իր նաւատորմովը կրցաւ
 հասնիլ, տիրեց. որչափ որ իր շահը կը պահանջէր,
 շատ արեւելեան տերութիւններու մէջ, առանց ու-
 թիշինը յափշտակելու գաղթականներ կը հաստատէր,
 ու քաղաքներ կը շինէր. բոլոր Ափարոս ու Եգէացւոց
 կղզիներէն շատերը Փիւնիկեցի գաղթականներով լե-

ցուեցան, նոյնպէս Աեւ ծովուն հարաւային կողմերը, Թրակացւոց երկիրը, Աիկլադեան կղզիները, Արեւոյն ու Յունաստանն առ ազգին քաղաքներովը շէնցած էին, նաեւ Եւրոպայի ու Ափրիկէի մէջտեղը եղած մեծ ու պզտիկ կղզիները, Մալդա, Սիկիլիա, Սարդինիա, Աորսիկա ու Մայորիկա եւ ուրիշ կղզիները առաջուան ժամանակները բոլոր փիւնիկեցի գաղթականներ կը բնակէին: Փիւնիկեցիք Սպանիայի մէջ ալ հաստատուեցան. բայց իրենց գլխաւոր հաստատած տեղերը Ափրիկէի հիւսիսային կողմերն էին, որոնք իրենց շատ շահ կը բերէին: Ասոնց մէջ շատ երեւելի ու գրեթէ առջինը եղաւ Աարքեդոն, որուն Գիդոն կամ Եղիսա Ասորւոց Պիգմալէոն թագաւորին քոյրը Քրիստոսէն գրեթէ 900 տարի յառաջ հիմ գրաւ, ու քիչ մը ետքը այնպէս ծաղկեցաւ ու անուն հանեց, որ Տիւրոսի վաճառականութեան մեծ մասը իրեն ձգեց, ու ետքէն իր գլխուն զօրաւոր տէրութիւն մը եղաւ: Աս կերպով Փիւնիկեցւոց վաճառականութիւնը ան ատենը ճանչցուած աշխարհքին չորս կողմը տարածուեցաւ: Փիւնիկեցիք Աարմիր ծովուն մէջ քանի մը կղզիներ առնելով ուղղակի դէպ ի Հնդկաստան ճամբայ ըրին, որն որ իր ազնիւ քարերովը, հարգարտովը, մեծագին ծխանելիքներովը, համեմներովը, մետաքսովը, ծանր բանուած զգեստներովն ու գորգերովը եւ այլն, արեւմուտքի առուտուրին առատ նիւթ կը մատակարարէր, իսկ արեւմտեան երկիրներէն՝ առատ մետաղ կը հանէին, ինչպէս Անգղիայէն անագ, ու Արաբիայէն ու Եթովպիայէն սոկի, սպնիազ (ադանոզ) ու փղոսկր կ'առնէին, որոնք առջի ժամանակները առուտուրի գլխաւոր նիւթերն էին:

Բայց մեզք որ առ վաճառական ազգին խաղաղասէր սգին երկայն ատեն հանդարտ երթալէն ետքը՝ արտաքին յարձակմունքներէն վրդովեցաւ ու խռովեցաւ: Սաղմանասար Ասորեստանցոց թագաւորը՝ որն որ Իսրայելացւոց թագաւորութիւնը նուաճած ու

Հրեաները դերի ըրած Բաբելոն տարած էր, Տիւրոսի
 վրայ ալ կը սպառնար. արդէն Փիւնիկեցւոց քա-
 ղաքներէն շատերը ու Սիդոն ասոնց գլխաւորը [Թշնա-
 մեաց կողմը անցնելով, անոնց հետ մէկտեղ Տիւրոս
 քաղաքին դէմ կը կռուէին. բայց [Թշնամեաց 60
 նաւով նաւատորմիղը Տիւրոսի 12 նաւերէն զարնուե-
 լով ու յաղթուելով՝ Սաղմանասար հինգ տարի պա-
 րապ տեղը քաղաքը պաշարելէն ետքը, ստիպուեցաւ
 փախչիլ: Վիչ մը ետքը հռչակաւոր Նաբուգոդոնոսոր
 [Թագաւորը Յուդայի [Թագաւորութիւնը նուաճելէն
 ետեւ՝ Տիւրոսի վրայ քալեց, ու միտքը դրած էր որ
 Տիւրոսը առանց առնելու ետ չդառնայ: Տասուիրեք
 տարի պաշարմանէ ետքը քաղաքը պարապ դատաւ,
 ինչու որ Տիւրացիք բարեկամներու օգնութեամբ իրենց
 բոլոր ունեցածովը դիմացը եղած կղզի մը քաշուելու
 ճամբայ գտան, ուր [Թագաւորին զօրքը չէր կրնար
 մօտենալ, ու հոն [Թող տուածներնէն աւելի աղուօր
 քաղաք մը շինեցին, ու անուանեցին Նոր Տիւրոս:
 Նոր Տիւրոսն ալ գրեթէ երեք դարու շափ յառաջ
 գնաց ու ծաղկեցաւ, բայց ասոր քաղաքացիները ան
 առջի Տիւրացիքը չէին, շատ հարստութեամբ [Թուլ-
 ցան ու մեղկացան, ու հպարտութիւնն ու մոլութեանց
 ետեւէն երթալը՝ առջիններուն գործունեայ ու աշխա-
 տասէր բնութեան տեղ փոխանակեցին: Աս վիճակի
 մէջ եղած ատեննին՝ Աղեքսանդրին բանակը, որ Պար-
 սից եւ ուրիշ մեծամեծ [Թագաւորութեանց ու նաեւ
 Սիդոնի ու Փիւնիկեցւոց մնացած քաղաքներուն ախ-
 րած էր, նոր Տիւրոսի պարիսպներուն առջին երեւ-
 ցաւ: [Թէպէտեւ Աղեքսանդր մինչեւ ան ատենը իրեն
 գէմ երկայն ատեն դիմացող քաղաք չէր տեսած,
 բայց Տիւրոսին առջեւը հարկ եղաւ որ եօթը ամիս
 սպասէ: Քաղաքը առնելու համար մերձաւոր յաղ-
 [թուած քաղաքներէն մարդիկ ժողովեց, ու ցամաքէն
 գէպ ի ծովը լեցրնելով մեծ [Թումբ մը շինել տուաւ:
 Քաղաքին բնակիչներուն մէկ մասը Սիդոնացւոց օգ-

նութեամբ փախան, բայց աւելին յաղթողին ձեռքն ինկաւ :

103. Տիւրոսի իյնալովը Փիւնիկեցւոց առուտունն ալ լմբնցաւ : Ան ժամանակները Յունաստանի մէջ վաճառականութիւնը արդէն շատ յառաջ դացած ու հաստատուն տեղ մը դատած էր : Ալիսաւոր քաղաքներն էին Աորընթոս ու Աթէնք. իսկ առուտուրի նիւթերը՝ եղ ու գինի : Բայց ամենէն աւելի Աարքեդոն երեւելի էր, ուր Տիւրոսէն փախչողները հաստատուեցան, ու իրենց գործունեայ ու աշխատասէր բնութեամբը առուտուրին յառաջ երթալուն շատ օգնեցին : Աարքեդոնի ու Յունաստանի քովերը քիչ մը ետքը (Սիկիլիայի մէջ) Սիրակուսա քաղաքը, որուն հետ Աարքեդոն միշտ կառուի մէջ էր, առուտուրի մէջ մեկայնեքուն մասնակից եղաւ : Բայց մեծն Աղեքսանդր իր մտադիր բնութեամբն ու սուր մտքովը այնպիսի տեղ մը գտաւ, ու քաղաք շինեց, որ ետքէն երկրորդ Տիւրոս եղաւ : Աղեքսանդրիա՝ Եգիպտոսի ծովեզերքը շինուած, ու իր հիմնադրին կանոններովն ու միջոցներով հաստատուած ըլլալով՝ այնպէս իր վաճառականութիւնը ընդարձակեց, որ բոլոր աշխարհքիս վաճառականները հոն թափեցան : Աղեքսանդրին մեռնելէն ետքը Եգիպտոս Պտղոմէոսին ձեռքն անցաւ, որն որ բարերար ու իմաստուն թագաւոր մը եղաւ, Աղեքսանդրին հաստատածները յառաջ տարաւ, ու անոր օրինակին հետեւելով տուած զանազան արտօնութիւններովը շատ օտարականներ առ քաղաքը ժողվեց, ու անիկա իր թագաւորութեան մայրաքաղաքն ըրաւ, եւ նաւահանգստին մէջ գիշերը լոյս տալու համար ան մեծ ու անուանի Փարոս աշտարակը շինեց, որն որ աշխարհքիս եօթը հրաշալիքներէն մէկը սեպուեցաւ :

Արդ առ կերպով Աղեքսանդրիա ան աստիճան բարձրացաւ, որ Տիւրոս ու Աարքեդոն անկէ ետքը ալ մոռցուեցան : Հնդկաստանի վաճառականութեան՝

ապրանք թափելու, եւ թէ արեւելեան, թէ արեւմտեան վաճառականներուն միանալու տեղը բլաւով, այնպէս մեծցաւ, որ իրաւամբ Քաղաք քաղաքաց ու Արեւելքի թագուհի ըսուեցաւ, մանաւանդ որ ան ատենի գիտութիւններն ու արուեստները իրենց աթոռը հոն հաստատած էին. անոր համար ալ աշխրբքիս տէրութիւններէն ամենէն երջանիկն եղաւ, ու առուտուրը, երկրագործութիւնն ու արուեստները հոն շատ յառաջ գացին: Անոնց արուեստական գործուածներուն մէջ երեւելի է զարդերու համար գործածուած կտաւը, որն որ այնպէս բարակ էր, որ մարդուս աչքը հաղիւ կրնար տեսնել. բայց ամենէն զարմանալին՝ պրտու (papyrus) անկէն թուղթ շինելն է, որն որ ամէն կողմերը կը գործածէին: Պտղամէսին քաջութիւնն ու առաքինութիւնը իր յաջորդներուն վրայ ժառանգութեան պէս մնաց. ասով տէրութիւնը այնպէս զօրացաւ ու բարձրացաւ, որ վաճառականութիւնը պաշտպանելու համար Միջերկրական ու Աարմիր ծովերուն վրայ երկու նաւատորմիդ ունէր: Արեւելեան Հնդկաստանի հետ վաճառականութիւնը դիւրինցընելու համար Պտղամէսս Փիղագեղփոս Աարմիր ծովուն արեւմտեան դին Բերենիկէ քաղաքը շինեց, ու կարաւաններով ճամբորդութիւն ընողներուն դիւրութեան համար տեղ տեղ ու մանաւանդ վերը զրուցած քաղաքը պանդոկներ շինեց, ուր ճամբորդները ամէն դիւրութիւն կը գտնէին:

Այսպէս երկայն ատեն յաջող ու քաջ կառավարներու տակ Եգիպտոս շատ յառաջ գնաց. բայց երբ որ Պտղամէսէք լմընցան, ու անոնց յաջորդները երկրին տիրեցին ու բռնացան, իրենց անխելք ու անպիտան կանոններովը ամէն բան տակն ու վրայ բրին ու երկիրը աւերակ դարձուցին: Ան ատենները Անապատ Արաբիայի մէջ Բաւմիրա քաղաքը սկսաւ վաճառականութիւնը պահել ու ծաղկեցընել, ու Եգիպտոսի իշխաններուն թոյլնալու ատեն՝ ասիկա զօրացաւ ու

բարձրացաւ: Մայց վաճառականութեան գլխաւոր
տեղը միշտ Եգիպտոս մնաց, ան ատենն ալ, երբ որ
Հռոմայեցւոց տակը ինկաւ, մինչեւ որ Արաբացիք
անոր տիրեցին, որով եւ Եգիպտոսի վաճառականու-
թիւնը բոլորովին ինկաւ:

104. Հռոմայեցիք իսկզբան Աարքեղոնացւոց յար-
ձակմունքներէն շատ նեղուելով, անոնց դէմ գնելու
համար ստիպուեցան ծովու վրայ զօրք ու զօրութիւն
պատրաստել: Աս պատերազմասէր ազգը ու անոնց
մայրաքաղաքը Հռոմ կամաց կամաց զօրացաւ, մեծ-
ցաւ, ու մեծ տէրութիւն եղաւ. մի եւ նոյն ատենը
Աարքեղոն ու Աորընթոս զարկաւ աւրեց ու Եգիպ-
տոսի ալ տիրեց: Արբ որ Հռոմայեցիք ասանկով աշ-
խրըքիս ամէն կողմը յարձակեցան ու աւար առնելու
տեղ շինաց, ան ատենը հանդարտեցան ու սկսան
քաղաքական օրէնքներ գնել, ու հարկ եղաւ որ իրենք
զիրենք վաճառականութեան ու նաւազնացութեան
տան: Մայց թէ որ աղէկ քննելու ըլլանք, կը տես-
նենք որ յափշտակել փնտռող Հռոմայեցւոց ազգին
մէջ ասով ալ վաճառականութեան հոգի շմտաւ.
խելացի ու գլուխ ունեցող երիտասարդները քաղա-
քական պաշտօններու մէջ կը մտնէին, ուստի եւ
արուեստները յառաջ տանող քիչ կար, նաւազնա-
ցութեան փոյթ ցուցընող աւելի քիչ: Միայն Նիպ-
պաղոսը կը գտնենք, որ ամենէն յառաջ արեւադարձ-
ներու կողմերը կանոնաւոր հողմերով նաւարկել մտա-
ծեց: Հռոմայ մէջ ան ժամանակները որ քաղաքացիք
իրենք զիրենք ուտելու, խմելու ու զարգարուելու
տուած էին, զարգարանքի ու փառաւորութեան ա-
պրանքներ շատ կը քշուէին, ծխանելիք ու խնկե-
ղէններ կրօնական արարողութեանց ատենը, իսկ մար-
դարիտ ու ազնիւ քարեր զարդի համար շատ կը գոր-
ծածէին: Մեաքսը Սինէացւոց երկրէն Հնդկաս-
տանի վրայէն կու գար, ու Հնդկաստանի առուտուրին
գլխաւոր նիւթերէն մէկն եղած էր: Հռոմ Եգիպ-

տոսէն ուրիշ ապրանքներէն զատ նաեւ շատ ցորեն
ալ կը հանէր, ու ան որ յառաջագոյն միայն պատե-
րազմօղ էր, ետքէն վաճառականութեան կտեւէ ալ
ինկաւ, ու անկից շատ հարստացաւ ու զօրացաւ:

Վրիստոսի ծնընդենէն 330 տարի ետքը Մեծին
Վոստանդիանոսի Հռոմէն Բիւզանդիոն փոխուիլը, որն
որ ան ինքնակալին անուամբը հիմա Վոստանդնուպո-
լիս կը կոչուի, վաճառականութեան մեծ փոփոխու-
թիւն ըրաւ: Աս մեծանունն ու առաջին քրիստոնեայ
կայսրը՝ քիչ ատենի մէջ աս մայրաքաղաքը այնպէս
զարդարեց ու յառաջացուց, որ Հռոմայ հետ հաւա-
սարեցաւ. իրեն խոհեմ ու իմաստուն քաղաքական
կառավարութեամբը սաստիկ շէնցաւ ու բազմամարդ
եղաւ, ու քաղքին ալ սքանչելի բնական դիրքը բոլոր
արեւելքի վաճառականութեան աս կողմը դառնալուն
շատ օգուտ ըրաւ, որով եւ Հռոմ քիչ մը ետքը ին-
կաւ: Աէս դար ետքը Թէոդոս կայսեր ատենը Թա-
զաւորութիւնը երկու բաժնուելով, այս ինքն արեւ-
ելեանն ու արեւմտեանն, վաճառականութիւնը արեւե-
լեան կայսրութեան մէջ միայն մնաց, իսկ արեւ-
մտեանը դրեթէ բոլորովին մարեցաւ: Վայց Հնդկաս-
տանի վաճառականութեան քաղաք միշտ Աղէքսան-
դրիա էր, անիկայ ալ կամաց կամաց Ասորւոց քաղաք-
ներուն սկսաւ բաժնուիլ, ու աւելի Անտիոք, Բերիա
կամ Հալէպ, Եփեսոս, Աղիկառնաս, հին Սիդոն,
Տիւրոս ու Տրիպոլիս, բայց ամենէն աւելի Յոպպէ
(Եֆֆ) ու Չմիւռնիա:

105. Հռոմայեցւոց կայսրութեան երկու բաժ-
նուելէն ետքը, իրենց տակը եղած ազգերը սկսան
վրէժնին առնուլ, ու ասկից ալ ազգերու զանազան
փոփոխութիւններ յառաջ եկան: Ղոթացիք, որ ան
ազգերուն մէջ ամենէն զօրաւորն էին, Ալարիկոսին իշ-
խանութեան տակ հինգերորդ դարուն սկիզբները
Խտալիա յարձակեցան, Հռոմ քաղաքն առին,
Թալլեցին ու կողոպտեցին, ու Գաղղիա եւ Սպանիա

իրենց տակն առին: Ասկից քիչ մը ետքը Հոնք Ատտիլայի առաջնորդութեամբ Հռոմայու արեւելեան թագաւորութեան գաւառներուն վրայ վազեցին, բայց Գաղղիայի մէջ Գոթացիներէն յաղթուելով ցրուեցան: Հինգերորդ դարուն միջին ատենները Սաքսոնիացիք Անգլիա առին, իսկ Աւանդալները Գենսերիկոսին առաջնորդութեամբ Սպանիայէն ելան ու Ափրիկէանցան ու նորէն Հռոմ կոխեցին: Ալերջինը եղաւ Ողոսկրոս գերմանացին Հերուլներու թագաւորը, որ արեւմտեան կայսրութիւնը բոլորովին ջնջեց վերցուց, երբ որ Հռոմ առաւ, հիմնելէն 1200 տարի վերջը, ու Հռոմուլոս Աւգոստուղոս վերջին թագաւորը աթոռէն վար իջեցուց:

Արեւելեան կայսրութիւնը դեռ ասանկ սաստիկ ու զօրաւոր յարձակմունքներէ սասանած չէր. թէպէտեւ երբեմն երբեմն աս կողմերուն վրայ ալ յարձակողներ գանուեցան, բայց բոլոր թագաւորութիւնը կործանելու զօրութիւննին չբաւեց, ինչու որ Գոթացիք անոնց դէմ կենալով՝ չկրցան յառաջ երթալ ու ասով թագաւորութիւնը ազատեցաւ: Ալեցերորդ դարուն սկիզբները Պարսիկք սկսան աս տէրութիւնը խռովել, բայց Յուստինիանոս, որ ան ատենը կայսր էր, թագաւորութիւնը աւելի բարձրացուց: Տեղացւոց մետաքս յառաջ բերել տալով, նոյն ապրանքին առուտուրը իր երկիրը ձգել կ'ուզէր, եւ ստուգիւ ի վախճանի մետաքսը յառաջ բերելու ու գործելու գաղտնիքը իմացաւ, Հնդկաստանէն եկող երկու կրօնաւորներու ձեռքով շերասին կամ մետաքսի որդին հաւկիթները ձեռք ձգեց, ու ինչպէս որ պէտք է նէ, աղէկ զգուշութեամբ թխսել տալով, շատցուց: Քիչ մը ետքը Աոստանդնուպոլսոյ մէջ մետաքսի գործատուներ բացուեցան, ու Յուստինիանոսի աս բանին ետեւէն իյնալովը, միլիոնաւոր մարդիկ հաց գտան: Բայց աս մեծանուն կայսեր յաջորդները թագաւորութիւնը չկրցան բռնել ու պահել. Պարսիկք

միշտ վրայ ելան յաղթեցին, ու ան ժամանակները ելաւ Մուհամմէտ, ու ետեւէն եկան իր յաջորդները, որոնք աս թագաւորութեան ոխերիմ թշնամիներն էին: Ասոնք 640ին Յունաց ձեռքէն բոլոր Եգիպտոս առին, ու անկէ ետքը ալ ձեռքէ շահանեցին: Աս ժամանակս վաճառականութիւնը օտար ազգի մը ձեռք անցնելուն, ու անկից նոր պարագաներ ծագելուն ու նոր մեծամեծ փոփոխութիւններ ընդունելուն, վաճառականութեան նոր դար կամ դարադրուիս (époque) կը սկսի:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԻՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ

106. ԱՐԱԲԱՑԻՔ, որոնք իբրեւ ասպատակաւոր ու աւարառութողութեամբ ամենուն ծանօթ էին, Մուհամմէտին ելելէն ետքը նոր կրօնի մը դրօշին տակը մտան, որն որ քիչ ատենի մէջ գրեթէ երկրիս կէսը տարածուեցաւ բռնեց: Տաճկական կրօնին հիմնադիրը բոլոր Արաբիան տակը առաւ, ու մեծ թագաւորութիւն մը հաստատեց: Իրեն յաջորդներն ալ անոր օրինակին նայելով, պատերազմը յառաջ տարին, ու այնպէս շուտով իրենց թագաւորութիւնն ու կրօնը ընդարձակեցին, որ պատմութեանց մէջ ասոր նմանը չենք գտներ: Բոլոր Ասիան նուաճեցին ու քիչ ժամանակուան միջոցի մէջ՝ ճանչցուած Ափրիկէն բոլոր առին: Մուհամմէտին կրօնը՝ կէս մը քրիստոնէական կրօնին գլխաւոր ճշմարտութիւններէն ու կէս մ'ալ բնական մտքի ցուցուցած սկզբունքներէ՝ ան ժամանակուան տեղացւոց քմքին համաձայն շինուած ըլլալով, արեւելք գիւրաւ ընդունելութիւն գտաւ, մանաւանդ որ մէկալ կողմանէ ալ Բիւզանդիոնի կայսերութեան տկարութիւնը ու թմբած բնութիւնը ան մեծամեծ յաղթութիւններուն շատ գիւրութիւն տուաւ: Բայց աս ազգը՝ որ իսկզբան բոլոր խաղաղասէր վաճառականները վաւրտեց, ու վաճառականու-

Թիւնը դրեթէ բոլորովին ջնջեց վերցուց, քիչ մը
 ետքը կարծես թէ բոլոր իր բնութիւնը փոխեց, ու
 պատերազմասէր ազգէ՝ յաջողակ ու ճարպիկ վաճա-
 ռական ազգի փոխուեցաւ: Ա՛ւճառականութեան
 աղբիւրները ամէնն ալ իրենց ձեռքն էին, ու Արաբա-
 ցիք Հնդկաստանի օգտակարութիւնը աղէկ ճանչնա-
 լով, արեւելեան առուտուրին նոր կեանք մը տալու
 համար, արեւելքի նաւահանգիստները բացին, ու
 Հնդկաստանէն եւ Չինուամաչինէն դէպ ի Պարսկաստան
 ու Արաբիա ապրանք բերելու համար երթեւեկութիւն
 սկսան ընել: Պարսա առուտուրի գլխաւոր տեղ մը
 եղաւ. բայց Աստանդնուպոլսի ու բոլոր արեւմուտքի
 հետ կապակցութիւնը՝ Յունաց իրենց դէմ ատելու-
 թիւն ունենալուն պատճառաւ յառաջ չգնաց, ուստի
 եւ արեւմուտքի վաճառականութեան բունը միշտ Աս-
 տանդնուպոլիս մնաց. բայց իրենց ատելի սահմանա-
 կիցներուն հետ հաղորդութիւն չընելու համար, եր-
 կայն ու դժուարին ճամբաներէն երթալ հարկ կ'ը-
 լար: Արաբացւոց երեւելի գիւտերէն մէկը հիմակուան
 գործածուած թուանշաններն են, ու ասոնց համար
 պէտք ենք անոնց շնորհակալ ըլլալ, ինչու որ իրենց
 ձեռօքը ու մանաւանդ տասներորդական դրութեամբ
 թուաբանութիւնը, որ յառաջուան ատենները Փիւ-
 նիկեցւոց ալ ծանօթ էր, կամաց կամաց յառաջ գնաց
 ու աս աստիճանիս հասաւ:

Արաբացիք աս կերպով երեք դարու մէջ յառաջ
 դացին: Աս ատենները Մուհամմէտի մեծ թագաւո-
 րութիւնը երկու բաժնուեցաւ, Եզիպտոսի ու Պաղ-
 տատի ամիրապետութեան (խալիֆայութեան), ուս-
 տի Հռոմայեցւոց թագաւորութեան բաժնուելէն հե-
 տեւածը՝ աս ատեն ալ պատահեցաւ, այս ինքն վա-
 ճառականութիւնը տկարացաւ: Բայց գլխաւոր ա-
 ռուտուրը միշտ Եզիպտոսի ամիրապետութեան մէջ
 մնաց, ուր որ ան ատենները Գահիրէ ալ սկսած էր
 ծաղկիլ:

107. Արբ որ Յունաց կայսրութիւնը այնպէս տկարացած ու վերջին շունչը հասած էր, արեւմուտք նոր ու սքանչելի կեանք ու գործունէութիւն մը սկսաւ: Վերամանիա ու Գաղղիա (ուր մեծն Աարոլոս Փրանզներու զօրաւոր թագաւորութիւնը նորէն կանգնած էր), Անգղիա եւ գլխաւորաբար Հոլանտա արուեստից ու գիտութեանց մէջ շատ յառաջացան ու զօրացան, եւ առուտուրը՝ իրենց հարստութեան գրելխաւոր աղբիւր ճանչնալ ու սիրել սկսան: Աս թագաւորութիւններուն խորին քնէն արթննալու ատենը Իտալիա ալ ճենովայի ու Աենետիկի հասարակապետութիւնները՝ որոնք Խաչակրաց ատենները ծովական վաճառականութիւնը իրենց սեպհականելով մեծցած էին, ամենուն աչքը իրենց վրայ կը ձգէին: Ճենովայի հասարակապետութիւնը իններորդ դարուն սկիզբները Աարոլոս մեծին ժամանակները ծովու կողմանէ զօրանալով, Յունաց կայսրութեան իյնալուն շատ օգնեց, անկից շատ կղզիներ առաւ, ու իր տէրութեան սահմանը մինչեւ սեւ ծով ընդարձակեց, ու քէֆէ քաղաքը իր մեծ վաճառականութեանը ապրանք իջեցընելու տեղ բրաւ: Այնպէս Աենետիկի հասարակապետութիւնն ալ ճենովային օրինակին հետեւեցաւ. իր քաղաքացիները ձկնորսներէն՝ նաւավարներու ու վաճառականներու փոխուելով, կամաց կամաց ճենովացւոց շատ վնասակար եղան, Աենետիկ քաղաքը ծովու թագուհի ըրին, ու երկայն ատեն իրենց բարձրութեան մէջ կրցան մնալ: Սեւ ծովու մէջ Գաֆնա քաղաքը Աենետիկցոց արեւելքի հետ ունեցած առուտուրին գլխաւոր տեղն էր, բայց ետքէն Ասորոց նաւահանգիստներուն անցան, ու գրելխաւորաբար Պէյրութ ու անկէ ետքն ալ Եգիպտոս, որն որ աս պատճառաւ նորէն Հնդկաստանի հետ առուտուրի վաճառատեղի եղաւ, ինչպէս որ Եւրոպայի մէջ հարաւային կողմերու համար Աենետիկ, իսկ հիւսիսային կողմերուն համար Ախսրին էր: Աս երկու

քաղաքներէն զատ նաեւ Ամալֆի, Բիզա ու Փիո-
րէնցա ալ ժամանակ մը արուեստներու փոյթ ունենա-
լովնին, առուտուրի ու ծովագնացութեան մէջ երե-
ւելի եղան :

Իտալականներու արշաւանքը սկսած ատենը՝ ա-
րեւմտեան տէրութիւնները ճենովայի ու Ալենեաիկի
հետ բարեկամութիւն ըրին, ու զանոնք այնպիսի
գործքի մը մասնակից ըլլալու ստիպեցին, որ իրենց
վաճառականութեանը շատ օգտակար պիտ'որ ըլլար :
Աս երկու հասարակապետութիւնները Ասորոց առ-
նուելուն շատ օգնեցին, որով եւ իրենց վաճառակա-
նութիւնը աւելի ընդարձակեցին : Վայց ի՞նչ օգուտ,
որ երկուքն ալ իրենց առանձին շահը փնտռելով,
առանց իրարու վրայ նախանձելու չկրցան կենալ,
ու երեք դար մէկը մէկալին հետ պատերազմելով,
երկուքն ալ կը վատթարանային, ուր որ եթէ խոհե-
մութեամբ միարան գացած ըլլային, շատ մեծ աստի-
ճան բարձրութեան կրնային հասնիլ :

108. Իտալացւոց վաճառականութեան ծաղկելու
ժամանակը մէկալ կողմանէ հիւսիսային ազգերն ալ
յառաջ գացին : Վանի որ քրիստոնէութիւնը աս ազ-
գերուն մէջ կը յառաջանար, ու Գերմանիա քաղա-
քականացեալ ազգերու կարգ կ'անցնէր, մանաւանդ
հիւսիսային կողմերը ու Ռենոսի գաւառները առու-
տուրը այնպէս ծաղկեցաւ, որ գրեթէ Իտալացւոց
վաճառականութեանը հաւասարեցաւ : Ասոնք տես-
նելով որ առուտուրը զօրացընողը ազատութիւնն է,
եւ թէ ասիկայ թէ ծովու եւ թէ ցամաքի կողմանէ
աւազակութիւններէն ապահովընելու կարօտ է, եւ
թէ հիւսիսային կողմերը Գերմանական ծովեզերեայ
քաղաքները իրենք զիրենք պաշտպանելու համար
անձուկ կապով մը պէտք է որ մէկը մէկալին հետ
կապուին, 1241ին Համպուրկ ու Վիպէք քաղաքները
մէջերնին դաշինք մը դրին ու դաշնակցութիւն մը հաս-
տատեցին : Աոյն դարուն մէջ աս դաշնակցութեան

մէջ մտան նաեւ Հիւսիսային ու Արեւելեան ծովուն ու
 Պարզիկ ծովուն ծովեզերեայ քաղաքները, ու Ելլայ, Օտեր,
 Ռենոս ու Աէշէր գետերուն քով եղած մեծ
 քաղաքները, որոնց ամենուն թիւը ութսուն ու հինգ
 կը հասնէր: Աս դաշնակցութիւնը Հանսա կոչուեցաւ,
 որն որ Ստորին Գերմանիայի բնակիչներուն լեզուաւը՝
 Գաշնակցութիւն ըսել է: Աս դաշնակցութիւնը՝ որ
 իր դաշնակիցներովը շատ զօրաւոր էր, իր մեծամեծ
 իմաստուն գործքերովը վաճառականութեան վրայ
 շատ ազդեցութիւն ըրաւ: Օտլային ձկնորսութիւն
 մը հաստատեց, ու օրէնք մ'ալ դրաւ, որ Հանսէական
 ապրանքները միայն Հանսէական դաշնակցութեան
 նաւերով կարող ըլլայ տարուիլ: Հիւսիսային կողմե-
 րուն իշխանները առ դաշնակցութեան զօրութիւնը
 տեսնելով ու կէս մ'ալ անոր դրած օրէնքներուն
 գլուխ ծռելով իրենց երջանկութիւն մը կը համարէին,
 երբ որ Հանսան իրենց երկրին մէջ վաճառականի
 տներ ու դիւաններ կ'ունենար, որոնց իրենք ալ
 տրտօնութիւններ կու տային: Վաշնակցութիւնը
 գլխաւորաբար չորս տեղ ունէր. առջինը՝ Լոնտօնի
 տունը, որն որ Անգղիայէն իրեն բամբակ, անագ,
 մորթ, կաշի, կարագ, եւ ուրիշ ասոնց նման հանքի
 ու երկրագործութեան վերաբերեալ ապրանքներ կը
 խաւրէր, ու անոնց տեղը Հանսայէն տարազա-
 գործութեան (հւնիճ-դր-ը-չէ) վերաբերեալ գոր-
 ծուածներ կ'ընդունէր: Արկորդն էր Պրիկի տունը՝
 որն որ 1252ին հաստատուեցաւ, ուր Անգղիայէն ու
 Հիւսիսային թագաւորութիւններէն Հանսային դաշնա-
 կիցները չգործուած ապրանքներ կը բերէին, եւ անոնց
 տեղը Բեղգիայի չուխայ, եւ ուրիշ տարազներ, նաեւ
 Իտալիայէն եկած արեւելեան վաճառքներ ու արու-
 եստական գործուածներ կ'առնէին, որոնք դարձեալ
 Հիւսիսային ծովուն կողմերը եղած երկիրները ծախսե-
 լու կը տանէին: Արկորդն էր Ռուսաստանի Նովհորոս
 քաղքինը, որ 1272ին հաստատուեցաւ, ու գլխաւոր

գործքը՝ մուշտակ, կտաւ, կանեփ եւ ուրիշ ասոնց
 նման անգործ ապրանք առնուլ ու անոնց տեղ տա-
 րազներ տալ էր: Ասկ շորրորդն էր Նորուեղիայի Պեր-
 կէն քաղքինը՝ որն որ 1278 ին հաստատուեցաւ, ու
 առանձին որսի, կէտի (դ-է-ն-յէ) եւ ամէն տեսակ
 ձկան վաճառականութեան կը զբաղէր: Աս կերպով
 հիւսիսային առուտուրը գրեթէ երեք հարիւր տարի
 Հանսային ձեռքը մնաց, որն որ քաղաքական զօրու-
 թեամբ ու իշխանութեամբ ալ՝ որ առուտուրը յառաջ
 տանելու կը գործածէր, շատ զօրացած էր: Հանսան
 շատ անգամ թշնամիներու կամ ապստամբ հպատակ-
 ներու դէմ թագաւորաց կամ իշխանաց օգնութեան
 կ'երթար. ինչպէս անգամ մը Պրաւնշուայդ (Պրո-ն-
 լի+) քաղաքը ապստամբութեան պատճառաւ թշնամի
 հրատարակեց, եւ Աարոյոս Գ. կայսրը Աիւպէք երթա-
 լով ու միջնորդ բլալով հազիւ քաղաքը անոր ձեռքէն
 կրցաւ ազատել: Այրբ որ տասնուչորսերորդ դարուն
 վերջերը Աիւննեպուրկի դուքսը քաղքին արտօնու-
 թիւնները յափշտակել կ'ուզէր, Հանսան անոր դէմ
 ելաւ, ու նաեւ Աիւքսենպուրկ ու Իւլցէն քաղաքնե-
 րուն ալ՝ որոնք շատ տարիներէ ի վեր կռուոյ մէջ էին,
 հին իրաւունքները հաստատեց ու դքսերը ստիպեց
 որ քաղաքներէն շատերը դրաւ դնեն: Աւրիշ անգամ
 մ'ալ նոյնպէս Աիւննեպուրկիցիներուն օգնեց, երբ որ
 իրենց կղերէն բաժնուիլ կ'ուզէին: Շատ անգամ
 պատահեցաւ որ իշխանները անկից օգնութիւն խն-
 դրելու համար անձամբ ելան ժողովք եկան: Հան-
 սան զօրութեամբ ու իշխանութեամբ մեծ ու միան-
 դամայն օգտակար ու բարիք բնող ալ էր. շեղաւ եր-
 բեք, որ ուրիշէն բան մը յափշտակէ, հապա միայն
 իրեն ու իրեններուն իրաւունքը կը պաշտպանէր: Ի
 վերայ այս ամենայնի անոր իշխանութիւնը՝ նոյն իսկ
 տերութեան գործքերու համար իրեն դիմող ու զինքը
 գործածող իշխաններուն ալ սկսաւ ծանր երեւալ.
 անոր համար մերձաւոր իշխանները այնպէս միջոցներ

ու կերպեր բանեցուցին, որ անոնցմով իրենց վաճառականները դաշնակցութենէն ելլելու ստիպուեցան: Ամենէն յառաջ Անգղիացիք Հանսային մնաս բարով ըսին, որոնց՝ դաշնակցութիւնը առուտուրի վարպետ եղած էր: Ադուարդ Գ. անոնց թագաւորը ամէն տեսակ արտօնութիւններ տալով, ջանաց որ Ֆիանարացի ասուեգործները իր երկիրը քաշէ, որպէս զի երկրին մէջի անգործ նիւթը դուրս չելլէ, ու երկրին մէջ գործուելով արուեստը յառաջանայ, եւ երբ որ երկրին գործատուները աղէկ մը կարգի դրուեցան, դրսի երկիրներու չուխան հագնելը արգելեց: Հնգետասաներորդ դարուն սկիզբները բամբակէ գործած ապրանքները Անգղիայի մէջ շատ յառաջացան: Ադուարդ Գ.ին ժամանակը դրսէն չուխայ եւ ուրիշ շատ տեսակ բաներ ներս խոթելը բոլորովին արգելուեցաւ, եւ թէպէտ ետքէն Հանսան՝ թագաւորը ստիպեց որ հրամանը ետ առնու, բայց ասիկայ ալ արուեստները յառաջ տանելու արգելք մը չեղաւ: Աղիսարէթի կառավարութեան ատենը Հանսային՝ Անգղիայի վրայ ունեցած ազդեցութիւնն ու նկատումը բոլորովին վերցաւ:

Աս ներքին թշնամիներէն զատ նոյն ժամանակները նաեւ արտաքին պատճառներ ալ շատ եղան, որ Հանսային դաշնակցութեան բոլոր ջնջուելուն ու քակուելուն օգնեցին: Տանիմարգան ու Շուէտը իրենց երկայն ատեն Հանսային տակ մնալուն համար անկից վրէժ առնուլ ուզեցին, ուստի եւ վաճառականութեամբ անոր ամէն կերպով արգելք եղան. նոյնպէս Ռուսաստանի կայսրները անգղիացի վաճառական ընկերութիւններու արտօնութիւններ տուին. ասպետներն ալ, որոնք Հանսային հետ դարերով երկայն ատեն դաշնակից մնացած էին, անիկայ թողուցին ու բաժնուեցան: Հոլանտացիք ու Անգղիացիք՝ ամէն տօնավաճառներէն ու նաւահանգիստներէն անիկայ վաւերացին, ու վերջապէս Հնդկաստան ծովով ճամ-

բայ գտնուիլն ալ անոր շատ մնաս հասցուց: Աս կերպով անհամար դժբաղդ պարագաներ մէկտեղ գալով, գրեթէ երեքհարիւր տարիի շափ փառօք տեւելէն ետքը Հանսէական ընկերութիւնը կործանեցաւ ու իր մասունքներուն լուծուեցաւ: Արովհետեւ ընդհանուր գլուխ մը չմնաց, դաշնակցութեան մէջ գտնուող ամէն մէկ քաղաքը առանձին սկսաւ աշխատիլ, որ մնացած աւերակները ձեռք ձգէ, որոնց մէջ միայն սպառելու ապրանքներու առուտուր կար, իսկ դրսին հետ գրեթէ ոչինչ: Հանսային իյնալովը ամենէն աւելի Գերմանիա շատ մնասեցաւ, ուր արուեստ քիչ ըլլալով դրսի հետ առուտուր չունէր, ու միայն Համպուրկ ու Պրեմէն մնացին, որ իրենց յարմար դիրքին պատճառաւ քիչ մը թէ ներսի եւ թէ դրսի հետ առուտուր ընելու մէջ երեւելի եղան:

109. Նոգեաասաներորդ դարուն վերջերը հասած ըլլալով, դառնանք աչուրնիս անգամ մ'ալ Իտալիայի քաղաքներուն վրայ դարձընենք, որոնց մէջ վաճառականութիւնը միշտ ծաղկած մնաց: Ամենէն յառաջ Ճենովան եղաւ որ կործանեցաւ. ներքին անմիաբանութիւնը ու Ալենետիկի հետ միօրինակ սաստիկ պատերազմը անոր զօրութիւնը շատ տկարցուցին, այնպէս որ ալ չէր կրնար Տաճկաց իր թշնամիներուն դէմ կենալ, որոնք հետ զհետէ անոր դաղթականութեան քաղաքները ու արեւելք ունեցած երկիրները ձեռքէն առին, մինչեւ ի վախճանի 1453ին Մուհամմետ Բ. Աստանդինուպոլիս ու Քէֆէ առաւ, ու ասով Յունաց կայսերութեամբը մէկտեղ նաեւ Ճենովացւոց արեւելքի հետ ունեցած բոլոր առուտուրն ալ լմրնցաւ: Ալենետիկ դեռ առանց սասանելու ան ծովերուն մէջ իշխանութիւն ունէր, ու ինքիբն առանց ուրիշին օգնականութեան պատերազմաւ քաղաքներ ու երկիրներ առաւ: Ալենետիկցիք Եգիպտոսի Սուլթաններուն հետ դաշինք մը դրին, որով բոլոր արեւելքի հետ ունեցած վաճառականութիւննին ապահովցուցին, ու

անով այնչափ հարստութիւն ժողվեցին, որ Աննե-
տիկի հարուստներուն ցուցուցած փառաւորութեան
ու շքեղութեան եւ ոչ ան ժամանակուան ինքնա-
կալներն ու թագաւորները կրցան հասնիլ: Աւրիշ
ազգերը Աննետիկցիներուն վրայ նախանձով կը նայ-
էին, ու ամենուն աչքը անոնց մեծնալուն վրայ էր,
անոր համար ալ 1508ին Գամպրէ եղած դաշինքով
դրեթէ Եւրոպային կէտը Աննետիկը ձգելու միաբա-
նեցան: Տաճկաց յաղթող զէնքերուն զօրութենէն
Աննետիկ Եգիպտոսի ծովուն վրայ ունեցած բոլոր
երկիրները կորսընցուց, իսկ իր տէրութեան ու
իշխանութեան յետին մնացորդը կորսուեցաւ երկրիս
նոր մասին յանկարծակի յայանուելովը, որով բոլոր
աշխարհքիս վաճառականութեան երեսն ալ փո-
խուեցաւ:

110. Արբ որ հազիւ թէ Աոպեռնիկոսի դրութիւնը՝
որ երկրիս ձեւը գնդաձեւ կը սորվեցընէր, ընդունելի
եղաւ, քրիստոսիոր Աոլոմպոս անուամբ աղքատ, բայց
խորունկ մտածող ու քննող իտալացի նաւապետին
մէկը 1480էն ի վեր՝ արեւմտեան կողմանէ նաւելով
դէպ ի արեւելեան Հնդկաստան ճամբայ մը գտնելու
ետեւէ էր: Աս մարդը՝ երեքտասաներորդ դարու մէջ
գտնուած մագնիսի ասեղին միշտ դէպ ի հիւսիս նա-
յելու յատկութենէն՝ կողմնացոյցը գտաւ, որով նա-
ւագնացութիւնը շատ յառաջ գնաց ու ծաղկեցաւ,
եւ քաջասիրտ ու գործունեայ մարդիկ ծովու վրայ
իրենց ապահովութեան ապաւէն մը ունեցան: Աոլոմ-
պոս իր դրութեանը ստոյգ ելլելուն վրայ մեծ յոյս
ունենալով, շատ թագաւորներու աղաչեց որ միտքը
դրածին ետեւէն ըլլալու համար իրեն քանի մը նաւ
տան, բայց որուն որ ինկաւ նէ, ամենէն ալ ձեռնու-
նայն ելաւ: Միտքը դրածը խենթի երազ ու ցնորք
համարուեցաւ, ու ամէն մարդ վրան սկսաւ խնտալ:
Բայց ի վախճանի վեց տարի Սպանիայի արքունեացը
աղաչելէն ետքը, հոնտեղաց տիրողները Փերտի-

նանտոս ու Եղիսաբէթ անոր խնդիրքն ընդունեցան, ու 120 հոգւով երեք նաւ տուին: Առլոմպոս 1492ին Օգոստոսի 3ին առազաստները բացաւ, ու ասոնցմով ճամբայ ելաւ, ու նոյն տարւոյն Հոկտեմբերի 11ին Ամերիկա հասաւ: Աւէպ ի արեւելեան Հնդկաստան ծովով ճամբայ գտնելու յուսով, Ամերիկայի մեծ երկիրը գտնուեցաւ, որն որ իսկզբան Հնդկաստանի մաս կարծուեցաւ, բայց Առլոմպոս կարծուածէն աւելի բան գտած էր, որով Սպանիա անչափ հարստութիւն գտաւ, ու կէս աշխարհքէ աւելի երկրի տէր եղաւ: Առլոմպոս երեք անգամ ճամբորդութիւն ընելով բոլոր ան ատենը Արեւմտեան Հնդկաստան ըսուած երկիրը ու հարաւային Ամերիկան յայտնեց, եւ Սպանիացւոց արքունական գաւազանին հնազանդեցուց: Բայց Սպանիացիք ապերախտութեամբ անոր յարգը չճանչցան, ու այնպիսի սքանչելի մարդ մը, որն որ թէ գիտութեան եւ թէ աշխարհքիս այնչափ մեծամեծ բարիք բերած էր, ողորմելի վախճանեցաւ:

111. Բորդուկալցիք վաճառականութեան գաղթականութիւններ հաստատելու մտքով արդէն շատ տարիներ յառաջ դէպ ի Ափրիկէ ճամբորդութիւններ ընել սկսած էին. Բարթոլոմէոս Տիաց 1486ին Բարեյուսոյ հրուանդանը հասած էր, բայց անկից յառաջ չէր կրցեր երթալ: Բայց Ամերիկայի գտնուելովը Բորդուկալցոց սիրտը բորբոքեցաւ, ու նոր նոր ճամբորդութիւններու սկսան ձեռք զարնել: Սէծն Էմմանուէլ թագաւորին ժամանակը 1497ին Վասգոյ Գամա 4 նաւով ճամբայ ելաւ որ Ափրիկէի չորս կողմը պտըտի, որպէս զի ուստի որ կարելի է դէպ ի Արեւելեան Հնդկաստան ճամբայ մը գտնէ: Այլ ստուգիւ աս մարդուն ալ յոյսը պարապ չելաւ, 10 ամսուան չափ նաւելէն ետքը՝ 1498ին Մայիսի մէջ Աալկադա հասաւ, ու ասանկով խնդիրը լուծուեցաւ: Տեղւոյն իշխանը աս անկոչ օտարականները ուզեց կոտրել, բայց ծովակալը իր խոհեմութեամբը անոր միտքը դրածը

պարապ հանելէն ետքը արեւելքի գանձերով լեցուած յաջողութեամբ Ղիսարոն դարձաւ :

Աս երկու նոր գիւտերը բոլոր աշխարհք զարմացուցին, ու գլխաւորաբար Աննեաիկցիք սոսկացին մնացին : Իրենց մեծ զօրութեամբը ասոնք իրենց յաջողութեանը ծառայեցընելու տեղ՝ Աննեաիկցիք պաշտութեամբ կեցան ու փոյթ մը շտարին, որով եւ անկէ ետքը բոլորովին ինկան : Նոյնպէս Հանսէական քաղաքներն ալ, որոնք այնչափ երկայն ատեն վաճառականութեան իշխան եղած էին, նոր երկիրներէն օգուտ քաղելու հոգ մը չըրին, թէպէտ եւ ան ժամանակները ամէն ազգերէն աւելի զօրութիւն, նաև ու փորձ ունէին, ու թող տուին որ ուրիշ ազգերը աւարը մէջերնին բաժնեն : Աւելի մտադիր գտնուեցան Անգղիացիք, Գաղղիացիք ու Հոլանտացիք, որոնք ան ատենները առուտուրի ու նաւագնացութեան վրայ ուրիշ աչքով մը նայելով, իրենց յետագայ առուտուրին հաստատուն հիմ մը դրին :

Ինչ որ յառաջ Աննեաիկ, Ճենովա ու Հանսային քաղաքներն էին, անոնց տեղը անցան Գատիքս ու Ղիսարոն, եւ ասկից վաճառականութեան յաջողութեան ու մեծնալուն նոր դար մը սկսաւ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

112. ՍՊԱՆԻԱՅԻՈՅ՝ Ամերիկայի ու Բորդուկալցոց՝ Արեւելեան Հնդկաստանի հետ ունեցած առուտուրը հաստատուն էր : Հնդկաստաներորդ ու վեշտասաներորդ դարուն մէջ եղած երեւելի գիւտերը, եւ մանաւանդ տպագրութեան ու վառօդի գտնուիլը, Սպանիացոց ու Բորդուկալցոց իրենց գաղթականութիւններէն յառաջ բերած պտուղը, Եւրոպային մեծութիւն, հարստութիւն եւ մեծ առաւելութիւն մը պարգեւեցին, ու աշխարհքիս աս մասը քիչ ատենի մէջ

սաստիկ բազմամարդ եղաւ ու շէնցաւ : Հոր Սուլդան Սելիմին՝ բոլոր առուտուրը Աոստանդինուպոլիս դարձրնելու զիտաւորութիւնը՝ Բորդուկալցոց ղէնքերուն զօրութենէն յառաջ չգնաց, ու անկէ ետքը քրիստոնեաները մէկը մէկալին հետ աւելի կապուեցան : Բայց ինչ օգուտ, որ մէկալ կողմանէ նոր աշխարհքին տիրողներուն վրայ ան բիծը անջնջելի պիտ'որ մնայ, որ ոսկի ժողվելու անյագ բաղձանքով տեղացիները կոտրեցին : Պատմութիւնը մեզի կը ցուցընէ որ Սպանիա աս իր անագործութեանն ու ցուցուցած գազանութեան պատիժը կրեց :

113. Ա եշտասաներորդ դարուն մէջ Հոլանտան՝ որ ան ատենները 17 գաւառներէ կը կազմուէր ու աշխարհքիս ծաղկած տէրութիւններէն մէկն էր, ժառանգութեամբ Սպանիայի Փիլիպպոս Բ. թագաւորին ձեռքն ինկաւ : Աս տէրութիւնը անթիւ անհամար գործատուներով ու արուեստանոցներով կենդանացած էր, ու Աենետիկի վաճառականութենէն ետքը Անդուերբիայի վաճառականութիւնը կու գար : Անկէ ետքը իբրեւ Սպանիացոց ինքնակալութեան մաս՝ Անդուերբիան ալ Ամերիկայի վաճառականութեան մասնակից եղաւ, ու Աենետիկին իյնալէն ետքը՝ Բորդուկալին հետ առուտորով կապուեցաւ, այնպէս որ Արեւելեան ու Արեւմտեան Հնդկաստանի ու Հանսային ձեռքը նաեւ հիւսիսային կողմերուն ալ նաւահանդիստ եղած էր : Առուտորի զատ օրէնքներ ու հասարակապետական ազատութիւն մը ունէր, այնպէս որ աշխարհքիս ամէն ազգերը գրեթէ կրնային հոն գալ : Բայց քիչ մը ետքը հնդեասաներորդ դարուն մէջ ելած Լուտերականաց աղանդոյն պատճառաւ, Հոլանտացիք՝ որ Փիլիպպոս Բ. ին ուղածներուն չէին ուզեր գլուխ ծռել, ապստամբեցան ու յիսուն տարիէն աւելի երկու կողման մէջ կռիւ բլլալէն ետեւ՝ Հոլանտան Սպանիայէն բաժնուեցաւ : Բայց Սպանիա ասկից մեծ վնաս մը չկրեց, ինչու որ ան ատենները

Բորդուկալի թագաւորութիւնն ալ Սպանիայի անցնելով, Փիլիպպոս բոլոր Հնդկաստանի վրայ ալ տիրեց, ու այնչափ մեծցաւ իր թագաւորութիւնը, որ անկից յառաջ տեսնուած բան չէր:

Հոլանտայի նոր հասարակապետութիւնը դէպ ի Հնդկաստան առանձին ճամբայ փնտռեց, եւ ստուգիւ կամաց կամաց բոլոր Հնդկաստանի վաճառականութեան ու քիչ մը ետքը բոլոր աշխարհքիս առուտուրին տէր եղաւ: Չկնորսութեամբ, եւ մանաւանդ հիւսիսային կողմերը փայլուել (բնիւ) ձկան որսովը, որ հարստութեան աղբիւր մըն էր, Հոլանտացիք այնչափ մեծցան, որ անով մեծ նաւատորմիղ մը կրցան շինել: Աս ատենները Անգղիացիք ալ իրենց առուտուրն ու նաւագնացութիւնը ծաղկեցընելու համար ամէն ճիգը ի գործ կը դնէին, եւ ստուգիւ իրօք ալ անանկ մեծ նաւական զօրութիւն մը կրցան պատրաստել, որ Հոլանտացւոց հետ միանալով՝ Փիլիպպոսին շատ վնաս հասցուցին, ու 1588ին անոր Անգղիացւոց դէմ շինած մեծ նաւատորմիղը արեցին:

Հոլանտացիք՝ Բորդուկալցիները ամէն կողմէն վարնտելէն ետքը՝ 1602ին Հոլանտացւոց Արեւելեան Հնդկաստանի ըսուած ընկերութիւնը հաստատեցին: Անոնց արեւելեան Հնդկաստանի հետ ունեցած առուտուրին գլխաւոր նիւթերն էին Մոլուկեան կղզիներուն համեմները ու ամենէն աւելի Հնդկաց ընգոյղ (չիւրպիւրան ձէվիշի), ընկուզած աղիկ (մէ-մէ-մէ, macis), ու կինամոն կամ դարիճենիկ (մ-բ-իւ), որոնք Հոլանտացւոց հարստանալուն պատճառ եղան: Իրենց ան կողմերը ունեցած երկիրներուն ու ստացուածներուն կառավարութիւնը Եաւա կղզին հաստատած էին, ուր էր նաեւ ընկերութեան բունը: Հոլանտացիք իրենց խոհեմ ու զգուշաւոր ընթացքովը ան ամէն ժայռերէն ու վտանգներէն զգուշացան, որոնք վաճառական ազգի մը իյնալուն ու կործանմանը պատճառ կ'ըլլան, իրենց կառավարելու ու անտեսութեան կերպը շատ

զարմանալի ու նմանելու արժանի էր, իրենց փոյթն
 ու ջանքը ու աշխատասեր բնութիւնը իրենց մեծու-
 թեան ու զօրանալուն պատճառ եղան, որով զանձ
 զանձի վրայ դիպեցին, ու կ'երեւար թէ շոայլու-
 թիւն ինչ է՝ չէին գիտեր: Չէ թէ միայն կղզինե-
 րու ու Արեւելեան Հնդկաստանի ցամաք երկիրներուն
 մէջ տեղ ունէին, հապա նաեւ մինչեւ Չինուամաչին
 ալ հասան, ու Ճաբոնի մէջ այնպէս առուտուր մը
 հաստատեցին, որ մինչեւ այսօրուան օրս կը տեւէ,
 ու Ափրիկէի մէջ Բարեյուսոյ գլուխը Բորգուկալցի-
 ներէն առին. նոյնպէս Արեւելեան Հնդկաստանի ա-
 մենէն աղէկ մասը Բորգուկալցոց ու Սպանիացոց ձեռ-
 քէն յափշտակեցին: Ասչափով ալ դո՛հ չըլլալով,
 դէպ ի արեւմուտք ալ աշուրնին դարձուցին. Բրասի-
 լիան՝ թէպէտեւ քիչ ժամանակ ու առանց օգուտ
 մը քաղելու, նոյնպէս Աուիանայի երեւելի գաղթա-
 կանութիւնը ու Արեւմտեան Հնդկաստանի Գուրրաս-
 սոյ ու Ս. Եւստաքէոս ըսուած երկու պղտիկ կղզի-
 ներն առին: Աուիանայի մէջ գլխաւորաբար Սուրի-
 նամի կողմը՝ բամբակով, խահուէով, շաքարով, հնդը-
 կանչով (դոփէֆ հինդիով, cacaoյով) եւ ուրիշ Արեւ-
 մտեան Հնդկաստանի բերքերով Հոլանտացոց շատ
 մեծ օգուտ ըրաւ: Նաեւ Արեւմտեան Հնդկաստանի
 համար ալ 1621 ին ընկերութիւն մը հաստատեցին,
 որպէս զի հոն ալ գաղթականներ խաւրեն, բայց Հո-
 լանտային բանը աս կողմերս Արեւելեան Հնդկաստանին
 պէս յաջող չգնաց:

Աս կերպով բոլոր աշխարհքիս հարստութիւնը
 Հոլանտա կը վաղէր, ու անոր վրայ Եւրոպա կը նա-
 խանձէր: Արեւելեան ծովուն առուտուրին բոլոր տէր
 եղած էին Հոլանտացիք. ու Միջերկրական ծովուն
 վրայ մինչեւ արեւելեան նաւահանգիստներու մէջ ար-
 տաքոյ կարգի մեծ առուտուր ունէին, ու աս կողմերը
 Վենետիկոց ունեցածներուն վերջին կտորուանքն ալ
 ձեռքերնէն առին: Վիշ մը ետքը բոլոր Եւրոպայի

մէջ ապրանք տանիլ բերելն ու յանձնարարութեան առուտուրն ալ ձեռք ձգեցին, այնպէս որ՝ ուր որ առանձին չէին կրնար կատարել, աս առուտուրը ընողներուն՝ նաւերով կը ծառայէին, եւ այսպէս գրեթէ Եւրոպայի քաղաքներուն թղթաբերները եղած էին:

114. Նոլանտայի ռիսերիմ թշնամին ու սոսիսը իր մերձաւորներէն մէկն էր, ու իսկզբանէ միշտ իր քովը կեցած անոր ընթացքը կը գիտէր, ետեւէն կ'երթար ու ամէն ջանքն ու ճիգը ի գործ կը դնէր, որ իրեն հաւասարի. եւ ստուգիւ չէ թէ միայն հաւասարեցաւ, այլ նաեւ թէ ծովական զօրութեամբ եւ թէ առուտուրով անոր յաղթեց: Անգղիա կ'ըսեմ, որուն յետադայ առուտուրին ու մեծութեան հիմը Եղիսաբէթ թագուհին դրած էր: Անգղիացիք իսկզբանէ վաճառականութեան վրայ ընդարձակ զաղափար մը ունէին, անիկայ ազգային տնտեսութիւն մը կը սեպէին. կը ճանչնային որ չէ թէ միայն արտաքին ու օտար երկիրներու հետ եղած առուտուրը ազգին հարստնալուն աղբիւր է, այլ մանաւանդ ամէն երկիր աս իր երջանկութեան աղբիւրը իր մէջը պէտք է որ փնտռէ ու մշակէ: Անգղիացիք նոյն իսկ Եղիսաբէթի թագաւորութեան ատեն նաւատորմիդ մը պատրաստելով ծովու տէր եղան, իսկ ներքին արուեստներն ու ճարտարութիւնները մշակելով՝ երկիրը օտարականներուն լծէն ազատեցին: Անկից մինչեւ հիմա Անգղիայի քաղաքական վարմունքը զուտ վաճառականի քաղաքական վարմունք է, ու գրեթէ ամէն եղած պատերազմներուն վախճանը՝ Անգղիայի առուտուրն ու շահը եղած է: Ամերիկային գանուելէն քիչ մը ետքը Անգղիացիք ալ գէպ ի Հնդկաստան արեւմուտքի կողմանէ ճամբայ, կամ գոնէ նոր, հարուստ երկիրներ գտնելու համար քանի մը նաւեր խրկած էին: Վապոզոյ անունով Ալենտիկցի նաւապետը աս պաշտօնով խրկուած ըլլալով, Նոր Փաւնտլէնտը ու արեւե-

լեան հիւսիսային Ամերիկան դառաւ: Աս գիւտէն Անգլիացիք շատ քաջալերեցան, ու նաւագնացութիւնը յաճախելով, շատ անգամ աս կողմերը երթալէն գալէն ետքը հիւսիսային արեւելեան ճամբով մը Չինուամաչին անցնիլ կ'ուզէին. ասոր ետեւէն իյնալուն պատճառաւ զտնուեցաւ Արքանգելը, որն որ Իվան Ասսիլեվիչ Ռուսի թագաւորին իշխանութեանը անցաւ: Անգլիացիք աս իշխանին հետ առուտուրի դաշինք մը դրած էին, որն որ հիմ եղաւ Բրիտանացոց Ռուսաստանի հետ ունեցած վաճառականութեանը, որն որ Աղիսաբէթի թագաւորութեան ատեն շատ յառաջ գնաց:

Իւէպ ի Արեւելեան Հնդկաստան կարճ ճամբայ մը գտնելու համար եղած փորձերը պարապ ելլելէն ետքը, ամէն մարդ սկսաւ Բորդուկալցոց հին ճամբովը Բարեյուսոց գլխոյն բոլորաիքը շրջան ընել: Իսկ աս ժամանակներս են, որ աս տեղուանքը Անգլիացիք Հոլանտացոց հետ սկսան դիմացէ դիմաց ելլել: Ապանիացիներն ու Բորդուկալցիները իրենց ստացուածներէն վաճառեցին, ու երբ որ Հոլանտացիք գրեթէ միայն համեմներու կղզիներուն վրայ աչուրնին դարձուցած ու մտադրութիւննին ժողված էին, Անգլիացիք բոլոր ձգերնին հաստատուն երկիր ստանալութափեցին: Աղիսաբէթ թագուհին 1600ին Արեւելեան Հնդկաստանի անուանի ընկերութիւնը հաստատեց, ու վրան յիսուն տարիի շափ անցնելէն ետքը, Հոլանտան ալ ամէն ծովական պատերազմներու մէջ Անգլիացիներէն յաղթուելով, վերջապէս անոնց նաւատորմին ուժը ձանձրաւ, ու ամէն անգամ խաղաղութեան դաշինք դրուած ատեն՝ Անգլիացոց առուտուրը ընդարձակեցաւ: Թէպէտ կամաց, բայց ապահով կերպով հիւսիսային Ամերիկայի գաղթականութիւններն ալ հաստատուեցան, որոնցմէ Վիրգինիա դաւառը շատ առատ ծխախոտ սկսաւ մատակարարել: 1625 ին Պարպատոս կղզին իբրեւ առաջին Արեւմտեան

Հնդկաստանի ստացուած Անդղիացւոց անցաւ, անկէ ետքը շատ կղզիներ ալ առին, որոնց մէջ ամենէն երեւելի է Եւամայիդա կղզին, որն որ 1655ին խաղաղութեան դաշինքովը Անդղիացւոց մնաց:

115. Սինչեւ տասնութերորդ դարուն մէջերը Արեւելեան Հնդկաստանի հետ եղած առուտուրին մեծ ու երեւելի մասը դեռ Հոլանտացւոց ձեռքն էր: Վաղղիացիք կամաց կամաց մօտիկնալ ու անոնց դործքին մասնակից ըլլալ սկսած էին: Տասնութներորդ դարուն մէջ Լուդովիկոս ԺԳ.ին թագաւորութեան ատենները՝ Ռիչլիէօ կարդինալը Վաղղիայի վաճառականութեան ու նաւագնացութեան ծաղկելուն շատ օգնեց ու երկուքն ալ մեծապէս յառաջացուց: Աս անուանի պաշտօնեան անանկ ճամբայ մը բռնեց, որ շատ վաճառականներ անոր յորդորելովը սկսան ան կողմերը ճամբորդութիւններ ընել, ուր որ արուեստներն ու տարազագործութիւնը յառաջացած էին: Իրեն հաստատած վաճառականի ընկերութեանց մէջ Վանատայի, Արեւելեան Հնդկաստանի, Արեւմտեան Հնդկաստանի ու Սենեկամպիայի ընկերութիւնները երեւելի եղան: Լուդովիկոս ԺԳ.ին ատենները Վաղղիացիք ամէն ջանքը ի դործ դրին, որ Հոլանտացւոց ու Անդղիացւոց հաւասարին. Գողպէրդ խելացի ու գիտուն պաշտօնեան ասոր հասնելու համար այնպէս միջոցներ բանեցուց, որ ան դարուն մէջ Վաղղիա վերջին աստիճանի ծաղկեցաւ, ու ան դարը իր բարձրութեան դարն եղաւ: Վործատունները շատցուց, ու անոնցմէ յառաջ եկած ապրանքները այնպէս բարակցուց ու աղէկցուց, որ Վաղղիացւոց ապրանքներուն, եւ մանաւանդ մետաքսի, ոսկիի ու արծաթի նիւթով գործուածներուն, բամբակով բանածներուն, հայլիին, եւ ուրիշ ասոնց նման շինուած բաներուն ուրիշ տեղ հասնող չկար, որմէ թագաւորական զանձատունն ալ լեցուեցաւ, ու Վաղղիայի անունը ամէն կողմ տարածուեցաւ: Սար-

սիլիայի մէջ արեւելքի հետ, իսկ Տէօնքերքի մէջ
 հիւսիսային կողմերու հետ եղած առուտուրը սգի
 առաւ ու կենդանացաւ: Աստնցմէ զատ ընկերութիւն-
 ները մեծցուց ու կենդանացուց, նաեւ գաղթականու-
 թիւններուն վրայ ալ (ինչպէս են Հնդկաստանի մէջ
 Քանդիշէրիինը, հիւսիսային Ամերիկայի մէջ Գանատա
 կղզւոյնը, ու Արեւմտեան Հնդկաստանի մէջ Մարդի-
 նիգ ու Կուատալուպ կղզիներունը,) հոգ տարաւ, ու
 Գաղղիայի մէջ եղած նաւահանգիստներն ալ մեծցուց
 եւ շատ նաւ մտնելու ու տանելու յարմար շինեց:
 Աւգոստինոս ԺԳ. թէպէտեւ աս բաներուն աղէկ
 ձեռք բռնեց, բայց Հիւկընոնները (Huguenots, Գաղ-
 ղիայի Կալուինականները) իրենց անպիտանութեանը
 համար Գաղղիայէն վաճառելով՝ Գաղղիայի առու-
 տուրին միաստացուց. ինչու որ ասոնք Հելուետիա
 ու Գերմանիա ու կէս մ'ալ Հոլանտա ու Անգղիա
 ցրուելով, հոն ալ իրենց ձեռացը ճարտարութեամբ
 ստակ վաստրկելու ետեւէն եղան, որով եւ շատ ա-
 բուստական ապրանքներ, որոնք մինչեւ ան ժամա-
 նակ Գաղղիայի մէջ վերջին աստիճան կատարելու-
 թեան հասած էին, ուրիշ տեղեր ալ սկսան ելլել, ու
 Գաղղիացուց ապրանքներուն հաւասարեցան: Ասով
 օտարական գնողները Գաղղիայէն պակսեցան, ու շատ
 երեւելի ու մեծ գործատուններ ու տարազագործու-
 թեան արուեստանոցներ ինկան ու գրսի երկիրներ
 ցրուեցան: Աւգոստինոս ԺԵ.ին շափահաս չըլլալուն
 պատճառաւ Օրլէանի դուքսը տէրութեան կառավար
 դրուելով՝ տեսաւ որ տէրութեան ելքը մուտքը խառ-
 նակութեան մէջ, դանձր պարպուած ու տէրութիւնը
 մեծ պարտքի տակ ինկած է: Ստակները քէչցուց
 ու տէրութեան դրամասեղանը (դան+ան) չարաչար
 գործածելով՝ համարումը կորսունցընել տուաւ, որով
 հպատակներէն շատերը աղքատացան, մեծամեծներն ու
 կարողութիւն ունեցողներն ալ իրենց ինչքն ու ստա-
 ցուածքը ազատելու համար երկիրն ու հայրենիքը

Թող տուին ուրիշ տեղեր դացին : Առդովիկոս ԺԶ. աս շարեաց ուղեց դարման մը ընել ու անկարգութիւնը վերցընել, եւ ստուգիւ միտքը գրածը սկսած էր ի գործ դնել, բայց Գաղղիայի մեծ ապստամբութիւնը վրայ հասնելով, բոլոր աշխարհք տակն վրայ բրաւ :

116. Անգղիացիք եօթնեւտասներորդ դարուն մէջերը Արեւելեան Հնդկաստանի մէջ Ապլիպադա քաղաքը, որ հիմա ալ իրենց հոնտեղաց ստացուածքներուն մայրաքաղաքն է, առած էին, եւ ուրիշ դղեակներ ալ ունէին : Ան ատենները Եւրոպացւոց ան կողմերը առուտուր ընելը Մողուլներէն ու անոնց հպատակ իշխաններուն շնորհքէն կախում ունէր : Այդտեւ Պարսիկք աս իշխաններուն դէմ բրած պատերազմներով Մողուլները շատ խոնարհեցուցին, բայց պատերազմը միշտ կը տեւէր, ու Մողուլները երբեմն կը նուաճուէին ու երբեմն ալ նորէն անկախ կ'ըլլային : Աս ժամանակները Պենկալայի Սուրայահ իշխանը՝ որն որ Անգղիացւոց հարստութիւններուն վրայ շատ կը նախանձէր, առիթ մը գտնելով՝ անոնց Ապլիպադա քաղաքին վրայ յարձակեցաւ, ու շատ ընդդիմութիւն ու պատրաստութիւն չգտնելով, քաղաքն առաւ : Արբ որ աս լուրը Անգղիացւոց Արեւելեան Հնդկաստանի Մատրաս քաղաքը հասաւ, սրոյնցին որ վրէժ առնուի, անոր համար Սուրայահին դէմ զօրք խաւրեցին : Սուրայահ Անգլիացւոց զօրութեանը դէմ չկրցաւ դիմանալ, Ապլիպադան ձեռքէ հանեց, ու երկրորդ անգամ Անգղիացւոց կողմանէ նորէն զօրք խաւրուելուն, բոլորովին յաղթուեցաւ ու նուաճեցաւ : — Անգղիացիք աս արշաւանքէն կամ կռուէն յառաջ Պենկալայի մէջ Գաղղիացւոց երկիրները յափշտակած էին, որն որ Գաղղիացւոց Արեւելեան Հնդկաստան նաւատորմիկ խաւրել չկրնալուն պատճառաւ, դիւրաւ յաջողած էր : Ասով ու ասկէ ետքն ալ Գաղղիացւոց հետ եղած թշնամութեան գործքերով Անգ-

ղիացւոց տէրութիւնն ու իշխանութիւնը Պենկալայի մէջ հաստատուեցաւ, ու ըստ մեծի մասին Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան ձեռքը մնաց, որն որ մինչեւ հիմա իր արտօնութիւնները կը պահէ:

Անգղիացւոց վաճառականութիւնը աս կողմանէ աս կերպով յառաջանալու ատեն, մէկալ կողմանէ իրենց ու հիւսիսային Ամերիկայի գաղթականներուն մէջ եղած սաստիկ ու երկայն կռուովը, ուր Գաղղիա, Սպանիա ու Հոլանտա գաղթականաց օգնեցին, շատ վնաս կրեց: Անգղիացիք աս իրենց գաղթականները պարտաւորած էին, որ օտար վաճառքները՝ միայն Անգղիայէն իրենց հայրենի երկրէն բերել տան. իսկ գաղթականութեան երկիրներուն բերքերը՝ միայն անգղիացի նաւերով, ու ամենէն յառաջ Անգղիա տանին, որ ետքը անկից ուրիշ երկիրներ տարածուի ու ծախուի: Վարձեալ՝ որպէս զի Անգղիայի տարազագործութիւնը վնաս չկրէ, գաղթականներուն արուեստանոցներ ու տարազագործութեան գործատուներ բանալու հրաման չէին տար, եւ ասանկով ասոնց դրօշ հետ առուտուր ընել թող չէր տրուած, որով բոլոր հիւսիսային Ամերիկային ոսկին ու հարստութիւնը Անգղիա կը վազէր: Անգղիա՝ իր գաղթականներուն հետ, որ ան ժամանակը բազմացած ու երկուք ու կէս միլիոնի հասած էին, աս կերպ վարուելովը՝ մեծ սխալմունք ու անխոհեմութիւն ըրաւ: Աոր նոր տուրքերով ու մաքսերով, նորէն նորէն ժողովրդեան սիրտը զայրացուց, ու աս օրէնքներուն խիստ պահպանութեանը համար՝ հիւսիսային Ամերիկային ծովեղերքը շարած պատրաստ զինաւորեալ պատերազմական նաւերը՝ ժողովուրդը կը զրգռէին: Վաղթականները ազատութեան սիրովը վառեալ, ու միանգամայն Բրիտանացւոց բռնանալը իրենց բնական իրաւանցն ու երջանկութեան դէմ տեսնելով, մէկէն սոք ելան, Անգղիայի հետ բոլոր առուտուրը կտրեցին, ու Պոսդոնի նաւահանգստին մէջ թէյ լեցուցած

Անգղիայէն նոր հասած վաճառական նաւերուն վրայ
ինկան, ու անոնցմէ 327 արկղ թէյ ծովը թափեցին :
Ասիկա իրենց հայրենի երկրին դէմ պատերազմին
առջի նշանն եղաւ, որն որ 1774ին Փիլադելփիա քա-
ղաքը ընդհանուր ժողովքով որոշեցին ու հրատարա-
կեցին : Արիւ տարի ետքը (1776ին) պատերազմը
իրօք սկսաւ, ու դաղթականները իրենց մեծ աշխա-
տութեամբը, ու Գաղղիացւոց, Սպանիացւոց ու Հո-
լանտացւոց օգնութեամբ վերջապէս յաղթութիւնը
գլուխ տարին, ու 1783ին Փարիզի երկրորդ խաղաղու-
թեան դաշնագրութեան ատեն որոշուեցաւ, որ Ամե-
րիկա բոլորովին ազատ ու անկախ ըլլայ : Աս ատենէ
ի վեր է, որ հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ
նահանգները շատ յառաջ գացին, տարազագործու-
թեան ու արուեստական ապրանքներու գործատուն-
ներ դրին, նաւեր շինեցին ու ծովու վրայ կանոնաւոր
նաւագնացութիւն մը հաստատեցին, անանկ որ քիչ
ատենի մէջ անկախ ու ինքնիշխան ազգերէն երեւելի-
ներուն կարգը անցան :

117. Ստոյգ է որ Անգղիայի հիւսիսային Ամերիկա-
ցւոց հետ ըրած կռիւը, Ամերիկացւոց կողմը բանող
ու անոնց օգնող տէրութիւններուն վրայ չէր կրնար
ազդեցութիւն չընել, բայց աս ազդեցութիւնը ամե-
նէն աւելի Հոլանտայի վրայ երեւցաւ : Ան պատերազ-
մին մասնակից ըլլալով Հոլանտայի ծովային առու-
տուրին մէջքը կտարեցաւ : Անգղիացիք՝ ուր որ Հո-
լանտացի նաւ մը կը տեսնէին, ետեւէն կ'իյնային ու
կը հալածէին : Այց ասոր հակառակ աս կռուին մէջ
չէզոք կեցող տէրութիւնները, ինչպէս Գանիա, Սուե-
տիա, Պրուսիա ու Հանսայի քաղաքները ասկից շատ
օգուտ քաղեցին, իրենց առուտուրը աւելի ընդար-
ձակեցին, ու Հոլանտացւոց փնասովը ծովային վաճա-
ռականութիւննին ասդին անդին տարածելով աղէկ
վիճակի մէջ մտան : Նաեւ Ռուսաստանի ու բոլոր
հիւսիսային արեւելեան կողմերու առուտուրն ալ

Անգղիայի կողմերը փայտ, կանեփ եւ ուրիշ նիւթեր շատ փնտռուելուն պատճառաւ՝ մեծցաւ ու յառաջացաւ :

Թէպէտեւ Անգղիայի գլխէն ձախորդ ու դժբաղդ դէպքեր անցան, բայց առուտուրը չինկաւ ու չնուազեցաւ. Ամերիկացւոց հետ եղած կռիւք անցաւոր խռովութիւն մըն էր, անոր համար ալ խաղաղութիւն ըլլալէն ետքը, Անգղիացւոց դրսի ու մանաւանդ Միաբանեալ նահանգներու ու Վաղղիայի հետ ունեցած առուտուրը սկսաւ նորէն յառաջ երթալ ու մեծնալ : Անգղիա հիմակուան պէս իր առուտուրին մեծնալը երբէք տեսած չէ, գրեթէ ամէն երկիրներու հետ առուտուր ունենալով, անբաւ հարստութիւն կը դիզէ :

118. Աս ատենները Եւրոպայի ցամաքային կողմերն ալ շատ տեղուանք արուեստները յառաջ գացին : Սպանիա շատ տարիներէ ի վեր սկսած վաճառականութեանը պտուղները սկսաւ երեւցընել, նոյնպէս Բորդուկալ գործատուներն ու արուեստները կատարելագործուեցան : Վերմանիայի շատ քաղաքները, Գանիա ու Սուեդիա նոյն յառաջացումը կը աւանուէր, ու Ռուսաստանի մէջ կատարինէ Բինթազաւորութեան ատեն մեծ յառաջագիծութիւն կ'ըլլար, երբ որ Վաղղիացւոց սոսկալի ապստամբութիւնը վրայ հասաւ, որ բոլոր Եւրոպա տակն ու վրայ բրաւ : Աս ապստամբութիւնը 1789ին ելաւ, ան ժամանակները, երբ որ Վաղղիա, ինչպէս վերը յիշեցինք, ելեւմտից գէշ մատակարարութեամբ պարտք պարտքի վրայ դիզած սղորմելի վիճակի մէջ ինկած էր : Ասոր ու ետեւէն եկած երկայն պատերազմներուն պատճառաւ, որ մինչեւ 1815 տեւեցին, վաճառականութիւնը շատ փնաս կրեց ու ամէն քաղաքական կարգերն ալ շփոթեցան : Անգղիայիք, որ ան ատենները գրեթէ ամէն տեղ ծովու վրայ Վաղղիացիներէն վեր էին, Վաղղիացւոց գաղթականներուն հետ ունեցած առուտուրը արգելեցին, նոյնպէս Հոլանտացւոց գաղ-

Թականաց վաճառականութիւնը բոլորովին վերցուցին, որն որ չէզոք մնացած ազգերուն եւ զլիսաւորաբար հիւսիսային Ամերիկացւոց անցաւ: Ասով Անգղիացւոց արուեստանոցներն ու դործատունները շատ մեծ յաջողութիւն գտան, ինչու որ իրենց դրսի եւ մանաւանդ Միաբանեալ Նահանգներու ու Արեւմտեան Հնդկաստանի հետ մեծ առուտուր բացուեցաւ, ու նաեւ Եւրոպայի արեւելեան կողմերը ու ամենէն աւելի Գերմանիա սկսան ապրանք խաւրել: Հողանտայի ծովեզերեայ քաղաքներուն առուտուրը ու նաեւ Գաղղիացւոց վաճառականութեան մէկ մասը Պրեմէն ու Համպուրկ անցաւ, ու Համպուրկ քաղաքը ցամաքային Եւրոպայի վաճառականութեան առաջին քաղաքն եղաւ:

Միօրինակ պատերազմին պատճառաւ, կռուին մասնակից բլրող ամէն երկիրները արուեստանոցներու վաճառքներ (marchandises de fabriques) սկսան շատ փնտռուիլ, որով գործքերը շատնալով, ստակի մեծ շրջան սկսաւ ըլլալ: Անգղիա ժողովուրդը այնչափ բազմացաւ, որ աս վաճառական ու արուեստներու մէջ առաջին համարուած երկիրը ինք իրեն ցորեն չկրնալով բաւեցընել, հիւսիսային արեւելեան կողմերէն, Գերմանիայէն ու Միաբանեալ Նահանգներէն նաւերով սկսաւ ցորեն բերել տալ: Բրիտանացւոց տէրութիւնը արուեստները աւելի յառաջացընելով՝ պատերազմին մեծ ծախքը կրցաւ գոցել. որով եւ ցամաքային Եւրոպա շատ ոսկի ու արծաթ անցընելով, հարկադրեցաւ թողթէ ստակը, որն որ յառաջագոյն առձեռնպատրաստ գրամին հետ կ'երթար, շատցընել: Աոյն ժամանակները մէկ կողմէն, ժողովրդեան շատնալէն կերակրեղինաց կարօտութիւնն ալ աւելնալով, երկրագործութիւնը յառաջացաւ ու երկիրները սղցան, մէկալ կողմանէ ալ շարունակ տեւող պատերազմը բոլոր ապրանքներուն գները արտաքոյ կարգի բարձրացուց: Թէպէտեւ 1802ին խաղաղութեան դա-

չինքովը վաճառականութիւնը ըստ մասին նորէն պատերազմէն յառաջ եղած վիճակը դարձաւ, բայց ի՞նչ օգուտ որ երկայն շտեւեց, նորէն կռիւ բացուելով առուտուրն ինկաւ: Թէպէտ եւ մէկ կողմանէ Գաղղիացիք ու Անգղիացիք Հանսայի քաղաքներուն ու Պրուսիայի նաւահանգիստներուն առուտուրը սեղմեցին, բայց մէկալ կողմանէ հիւսիսային Ամերիկայի վաճառականութիւնը արտաքոյ կարգի մեծնալով, Անգղիացւոց առուտուրին շատ վնաս հասցուց:

119. Նաբոլէոն Եւրոպայի ցամաքային կողմերուն ծովային առուտուրը մէկէն բոլորովին կտրեց վերցուց: Անգղիացւոց վաճառականութիւնը արմատէն կործանելու գիտաւորութեամբ 1806ին վերջերը Յամաքային դրութիւնը (Système continental) հանեց, որն որ ասոր վրայ կայացեալ էր, որ իր տակը եւ իրեն դաշնակից եղած քաղաքները Անգղիայի հետ առեւտրական հաղորդութիւն պիտ'որ չընէին, այս ինքն ոչ անգղիացի ապրանք աս տեղերը պիտ'որ մտնէր, եւ ոչ ալ աս տեղերէն Անգղիա ապրանք պիտ'որ խաւրուէր: Նաբոլէոնին աս գիւտը կամ հնարքը Անգղիայի ու Եւրոպայէն դուրս եղած երկիրներուն հետ առուտուրը, նաեւ ցամաքային Եւրոպայի տերութեանց մէջ եղած նաւազնացութիւնը ըստ մեծի մասին բոլորովին դադրեցուց. 1807ին Ամերիկացիք ալ իրենցմէ ազատութեամբ Եւրոպայի հետ առուտուրը կտրեցին, ու Ռիլիանտոսի վրայ միայն անգղիացի նաւեր կ'երևային: Գաղթականաց բերքերուն, զոր օրինակ շաքարի, խահուէի եւ ուրիշ ասոնց նման ապրանքներու վրայ դրուած սոսկալի մաքսը, աս ապրանքները ներս չխոթելու արգելքի պէս բան մը ըլլալով, չէզոք մնացող երկիրներու ու ամենէն աւելի Սուեզիայի ու ցամաքային Եւրոպայի մէջ եղած առուտուրը օգի առաւ: 1810ին Հոլանտան ու Սուեզիան ալ ցամաքային դրութիւնը ընդունելու պարտաւորեցան: Ամէն բանի գինը անանկ բարձրացաւ, որ մարդ

չկրնար երեւակայել . բայց ասով աս մեծ աղէկութիւնն եղաւ որ ճնշեալ ազգերուն գործատունները սաստիկ մեծ կենդանութիւն մը ստացան , ինչու որ մինչեւ նոյն ատենները Գերմանիա , Հոլանտա , Ռուսաստան ու հիւսիսային Ամերիկայի ազատ քաղաքները անգղիացի ապրանքներ մտնելով , ան տեղերուն արուեստները յառաջ չէին կրցած երթալ . բայց աս դրութեան հաստատուելովը՝ շուտով ու աղէկ յառաջացան , ու Գաղղիայի մէջ քիմիական ուսումը արուեստներու գործածելով , ճարտարութիւնը ծաղկեցաւ ու կատարելագործեցաւ : Այսպէս եղաւ նաեւ Գերմանիա եւ ուրիշ տեղուանք , ուր որ ցամաքային դրութիւնը կը տիրէր :

120 . Աս կերպով ցամաքային հաղորդակցութեան կտրուելը որչափ որ ցամաքային Աւրոպային ներքին առուտուրին օգտակար եղաւ , այնչափ ալ Անգղիայի գործատուններուն ու արուեստանոցներուն վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ , ու անոր դրսի հետ ունեցած առուտուրին մեծ մնաս հասցուց : Ասով դրսի երկիրներ ապրանք խաւրելը զրեթէ զազրեցաւ , շատ հարկաւոր արուեստական ապրանքներ , որ իրեն գաղթականներուն ու մանաւանդ Միաբանեալ Նահանգաց հետ ըրած առուտուրին նիւթերն էին , ինկան . ու ան ամէն չգործուած բերքերը , որոնք յառաջագոյն գըրսէն ու ցամաքային Աւրոպայէն բերել կու տար , պակսեցան , բայց ամենէն աւելի ցորենը : Անգղիացիք իրենց աս շքաւորութեանն ու կարօտութեանը ուրիշ կերպով չկրցան դարման մը ընել , բայց եթէ իրենց բերքերն ու իրենց գաղթականութիւններէն ելածները գործածելով ու դրսէն եկած արուեստական ապրանքներն ու գործուածները իրենց մէջը յառաջացընելու փոյթ տանելով , որուն համար ալ այնչափ անհամար մենքենաներու շինութեան սկզբնաւորութիւն եղաւ :

Թէպէտեւ Անգղիացւոց վաճառականութիւնը աս կերպով շատ նուազեցաւ , բայց քանի մը եր-

կիրներու, զոր օրինակ Սպանիայի, Բորդուկալի ու գլխաւորաբար Արեւմտեան Հնդկաստանի հետ ունեցած առուտուրը աւելի ընդարձակեցաւ, եւ ասոնց վրայ աւելցաւ նոր առուտուր մ'ալ, այս ինքն Բրասիլիայինը: Արեւելեան Հնդկաստանի հետ հաղորդութիւնը Անգղիայի շատ օգտակար եղաւ, ինչու որ արտաքոյ կարգի շատ անգործ նիւթեր, ու գլխաւորաբար բամբակ ու լեղակ անկից բերել տուաւ, բայց մանաւանդ թէյ հանել տուաւ, որն որ միայն Անգղիայի մէջ բոլոր ցամաքային Եւրոպային մէջ գործածուածէն աւելի կը գործածուի: Բրիտանացիք ու հիւսիսային Ամերիկացիք աս ատենները Սպանիական Ամերիկային հետ առուտուր ընելու սկսան, որն որ Ամերիկային աս մասին իրենց հայրենի երկրէն բաժնուելուն ու անկախ ըլլալուն պատճառ եղաւ:

Արբ որ ցամաքային Եւրոպայի գոցուիլը կամ թէ ըսենք ցամաքային գրութիւնը Նաբոլէոնին իյնալովը վերցաւ, ու Սպանիայի նաւահանգիստները Գաղղիացւոց լուծէն ազատեցան, Անգղիացիք թէ հոս եւ թէ Բորդուկալի մէջ վերին գլխաւորութիւն մը ստացան, ու աս երկու տէրութիւնները՝ միայն Բրիտանիայի ու անոր գաղթականներուն հետ առուտուր կ'ընէին: Այլապէս ցամաքին գոցուիլը ցամաքային տէրութեանց մշակութեան ու երկրագործութեան յառաջ երթալուն շատ մնասակար եղած էր, բայց մէկալ կողմանէ բանակի ու զօրաց հարկաւոր եղած ապրանքներ շատ փնտռուելով աս մնասը գոցեցին, ու միանգամայն բրդեաներու աղէկնալուն շատ օգուտ ըրին, որ պատճառաւ Սաքսոնիա ու հիւսիսային Գերմանիայի կողմերը ոչխարները ազնուացրնելու ետեւէ ինկան: Բայց աս պարագաներու մէջ պատերազմ եղած երկիրները շատ ողորմելութեան մէջ ինկան. երկրի տէրերը ունեցածնին շունեցածնին կորսընցուցին. իսկ ասոր հակառակ գրամազլուխ ունեցողները՝ Նաբոլէոնի դէմ պատերազմ ընող տէրու-

Թեանց փոխ տալով՝ հարրստացան ու շատ ստակի տէր եղան: Ասկից ետքը եկած պատերազմներուն ատենները ստակի ու փոխանակագրի առուտուրը շատ երեւելի եղաւ, այնպէս որ անկից յառաջ երբեք տեսնուած չէր, ու սեղանաւորները տէրութեանց շատ օգուտ բրին, ինչու որ ասոնցմէ միայն ստակ կարող ըլլալով գտնել, պատերազմը կրցան յառաջ տանիլ: Թողթէ ստակներուն շատնալն ալ, աս տեսակ առուտուրին յառաջ երթալուն շատ օգնեց:

121. Թէպէտեւ 1814ին Փարիզ հաստատուած խաղաղութեան դաշինքով Գաղղիա ու Հոլանտա պատերազմին մէջ կորսընցուցած գաղթականութիւններն առին, բայց ան առջի գաղթականաց առուտուրը արդէն Անգղիացւոց ու հիւսիսային Ամերիկացւոց սեպհական ստացուածք ըլլալով՝ նորէն ձեռք ձգելը անկարելի եղաւ: Որչափ ալ որ աս երկու տէրութիւններուն (Հոլանտայի ու Գաղղիայի) ծովային վաճառականութիւնը աս ատենները յառաջ գնաց, ու Անգղիայի եւ հիւսիսային Ամերիկացւոց առուտուրին արդելք եղաւ, սակայն աս ալ ստոյգ է, որ ան առջի պայծառութեանը չհասաւ: Բայց ասոնցմէ աւելի մնաս կրեց Սպանիացւոց ու Բորդուկալցոց վաճառականութիւնը, ինչու որ սկսան բոլորովին Անգղիայէն կախում ունենալ:

Խաղաղութիւն ըլլալէն ետքը Անգղիացիք իրենց տարազներովը դրսիներուն հետ սկսան մրցիլ, ու իրենց ապրանքներովը շատ երկիրներ լեցուցին: Անով աւելի յաջողութիւն գտան, որ երկու կողման մէջ առուտուրը դադրած ատեն՝ իրենց տարազները արուեստական կողմանէ շատ բարակցուցած էին, եւ որովհետեւ մեծ դրամագլուխալ ունէին, ասով իրենց ապրանքներուն շատ աժան գին դրին, ու երկայն ատեն կրցան դիմանալ: Ինչպէս յայտնի բան է, ասիկա Գերմանիայի շատ մնասակար էր, անոր համար ալ ամէն արուեստաւորներն ու գործատէրները

առ հասարակ սկսան տրանջալ, մինչև որ օտար ապ-
 բանքներուն վրայ սաստիկ մաքս դրուելով, կրցաւ
 Գերմանիա ներքին ճարտարութիւնը պաշտպանել,
 ու արուեստանոցներն ու գործատուները նորէն սկսան
 յառաջանալ: Պրուսիայի, Ռուսաստանի ու Հոլան-
 տայի արուեստանոցները նորէն վեր ելան բարձրացան,
 ու Անգղիացւոցը սկսան խոնարհեցընել: Աւստրիա-
 ցւոց գործուածներն ան սաստիճան կատարելութեան
 հասան, որ ցամաքը բացուելէն ետքը վաճառանոց-
 ներու մէջ սկսան շատ քշուիլ: Գաղղիացւոց գոր-
 ծատուներն ու արուեստանոցներն ալ վաճառա-
 նոցներուն մէջ շատ մեծ յաջողութիւն կը գանելին:
 Ամենէն աւելի յառաջ գացողն ու քշուողն էր բամ-
 բակեղէնը, որուն շգործուածը Ամերիկայէն ու Հրնդ-
 կաստանէն կու գար. բայց աս առեւնները ամենէն
 աւելի առուաուրը անկից կենդանութիւն մը ստացաւ,
 որ ցամաքը բացուելէն ետքը խահուէի ու շաքարի
 գործածութիւնը խիստ շատցաւ, ու ամէն տարազները
 Անգղիայի, Գաղղիայի, Գերմանիայի ու Ռուսաստանի
 մէջ աւելի յառաջ գացին, երբ որ մենքենաներու գոր-
 ծածութիւնը ամէն կողմ տարածեցաւ:

122. Գերմանացւոց տարազները Պրուսիայի
 1818ին գրած մաքսի օրէնքով շատ յաջողութիւն
 գտան: Բայց երբ որ ասով Պրուսիայի արուեստա-
 նոցներու տէրերը հանդարտեցան, ու մէկալ կողմէն
 Աւստրիա ալ իր ճարտարութեանը պաշտպան կեցաւ,
 Գերմանիայի մէկալ կողմերը՝ պզտիկ պզտիկ սահման-
 ներու մէջ փակուած ու Գերմանիայի մէկալ կողմերէն
 բաժնուած ըլլալով՝ ողորմելի վիճակի մէջ ինկան,
 ու արուեստանոցնին անանկ անգործ մնացին, որ
 յուսահատելու մտ եղան: Աս պատճառաւ 1819ին
 հինգ, վեց հազար Գերմանացի արուեստանոցներու
 տէրեր մէկտեղ եկան ու առանձին ընկերութիւն մը
 կազմեցին, որուն վախճանն աս էր, որ Գերմանիայի
 բոլոր ներքին մաքսերը վերցընեն ու միաբանութեամբ

առուտուրի ու մաքսի նոր կարգ մը դնեն: Աս ընկերութիւնը բոլոր Գերմանիայի տէրութեանց ու 1820ին Վիէննա եղած պաշտօնեաներու կամ դեսպաններու ժողովքին պատգամաւորներ խաւրեց, որուն վախճանն աս էր, որ գերմանական միջակ ու պղտիկ տէրութիւնները աս առթով միաբանին ու Տարմշգատ առանձին մասնաւոր ժողովք մը կազմեն: Ասիկա իրօք ալ եղաւ, ու ամենէն յառաջ Վիւրդեմպերկ ու Պաւիէրա մէկը մէկալին հետ, ետքը քանի մը պղտիկ գերմանական տէրութիւններ Պրուսիայի հետ, եւ ետքէն Գերմանիայի միջին կողմերու տէրութիւնները մէկը մէկալին հետ միացան. իսկ 1833ին աս երեք դաշնակցութիւնները մէկտեղ եկան, ու մաքսի ընկերութիւն կամ դաշնակցութիւն մը կազմեցին, որ կ'ըսուի Պրուսիական - Գերմանական մաքսի ընկերութիւն, որն որմինչեւ հիմա (Աւստրիա, Մեքլեմպուրկ, Գանիայի գերմանական դաւառները, Հաննովեր, Նիւպէկ, Համպուրկ ու Պրեմէն դուրս հանելով,) Գերմանիայի բոլոր տէրութիւնները իրարու հետ կապած է. ասով առուտուրը, երկրագործութիւնն ու արուեստները շատ յառաջ գացին, ու ցանկալի պտուղներ ցուցուցին: — Ասանկ ընկերութիւն մը անցեալ տարի հաստատեցին նաեւ Իտալացիք, որուն մէջ մտած են Եկեղեցւոյ տէրութիւնը, Սարդինիա ու Գոսկանա:

Սեր ժամանակիս սահմանը եկած հասած ըլլալով անցնինք մեր ազգին վաճառականութեանը պատմութեանը, որն որ ազգայնոց աւելի հաճելի ու աւելի օգտակար էր:

123. ՕՏԱՐ ազգերուն առուտուրին պատմութիւնը լսելէն ու սորվելէն ետքը, անտարակոյս իր ազգին առուտուրին կրած փոփոխութիւններն ալ սորվելը հայրենասէր սրտի մը անուշ կու գայ: Պատանի մը հիմակուան ատենս ազգին վաճառականութեան յարմար բնութիւն ունենալը տեսնելով, իր նախնեաց ալ աս ձիրքն ունենալը կրնայ հետեւցընել, ու մեծ ուրախութիւն կը զգայ, երբ որ անանկ յիշատակարաններ գտնէ, որով իր ազգին առուտուրին պատմութիւնն ալ կարող ըլլայ ամբողջ մը կազմել: Ահա աս բաղդիս պատահած է մեր ազգին վաճառականութեանը պատմութիւնը, որն որ հիմա գրելու կը սկսինք:

Թեպէտ եւ ցամաքային երկիր էր Հայաստան, բայց Պոնտոսի, Ասսպից ու Միջերկրական ծովերուն, ու Պարսից ծովածոցին կամ Ավկիանոսին մէջտեղը գտնուելով, ու մեծ մեծ գետերով ան ծովերուն հետ հաղորդելով, վաճառականութեան յարմար եղած էր: Ղորոխ մեծ ու անուանի գետը՝ Սեւ ծովուն, Երասխ՝ Ասսպից ծովուն, Եփրատ եւ Տիգրիս՝ Ավկիանոս ծովուն հետ կը հաղորդէին: Ային երկու գետեր ալ, որոնք հիմա Չհան ու Չագըտ կ'ըսուին, որոնք Միջերկրական ծովը կը թափէին: Հայաստանի առուտուրը երեք գլխաւոր ճամբով կ'ըլլար: Ասոնցմէ առջինը Ասսպից ծովուն ճամբան էր: Հնդկաստանի երեւելի ու ազնիւ ապրանքները ցամաքով մինչեւ Իքարիս գետ դալէն ետքը՝ կը մտնէին Աքսոս գետը, անկից շիտակ կը հասնէին մինչեւ Ասսպից ծովը: Աստեղէն Հայաստան անցընելով ցամաքով մինչեւ Ճորոխ գետին եզերքը բերուելէն ետքը, մինչեւ Սեւ ծով կ'երթային, ուրկից բոլոր Յունաստանի չորս կողմը կը բաժնուէին: Արկորդը՝ ծովու ճամբան էր: Հայաս-

տանէն Փասիս գետով Աողքիս շատ ապրանքներ կ'երթային, ինչպէս ոսկի, ցորեն, աղ, ոչխարի ու այծի մորթ ու բժշկական բոյսեր, եւ մանաւանդ խաշնդեղ, որն որ մինչեւ հիմա ալ հոնտեղաց առուտուրին գլխաւոր մասերէն մէկն եղած է: Արեւելի էր նաեւ Եփրատ գետին ճամբան, որն որ առանձինն արտաքին պատմիչները կը յիշեն: Համիրամ Եփրատ ու Տիգրիս գետերուն քովերը շատ քաղաքներ շինել տուած ու անոնց մէջ վաճառատեղիներ հաստատել տուած էր, ուր Մարաց երկրէն ու բոլոր շրջակայ կողմերէն ամէն տեսակ ապրանքը կը ժողվուէր, որով ան քաղաքները մեծցան ու հարրստացան: Հայոց Եփրատ գետին ճամբովը Բաբելոն ապրանք իջեցընելը Երողոտոս կը պատմէ: «Հայաստանի մէջ, կ'ըսէ, որ Ասորեստանէն վեր է, տեղացիք ուռենիի ճիւղերով իրենց նաւերուն կողերը կը շինեն, դրսի կողմանէ վրան մորթ անցընելով չորս կողմանէ կը պատեն. նաւուն ոչ յետակողմը եւ ոչ ալ առջեւի կողմը սրածայր է, հապա կըր վահանի ձեւով*: Ասանկ նաւերը զանազան ապրանքներով, ու մանաւանդ գինւով կը բեռնաւորեն, ու երկու հոգի միայն՝ ձեռուրնին թիակներով կը ղեկավարեն, ու ջրին ընթացքին թող տալով այլեւայլ քաղաքներ կ'իջնան: Աս նաւերէն թէ մեծ եւ թէ պզտիկ կը գտնուին: Մեծերուն մէջ էշեր ալ կ'առնուն, ու երբ որ Բաբելոն կը հասնին, ապրանքները կը պարուեն, նաւուն կողերը կը

* Հիմակուան ատենս Իրլանտացիք ալ իրենց նաւակները աս կերպով կը շինեն. ուռենիի (սեօյի-րի) ճիւղերով մեծ կողով (սեփե-ր) մը կը հիւսեն, ներսի գին կովի կաշիով ու կարածիւթով (գաթրանով) ծեփած լաթով կը պատեն: Հասարակ նաւակ մը գրեթէ 30 շիւլինկի կ'ելէ, ու չորս տարի կը դիմանայ, Նաւին երկայնութիւնը 9 ոտնաչափ է, լայնութիւնը՝ 3, խորութիւնը՝ 2: Նոյն իսկ կենդանիներն ալ ազանկ նաւակներու մէջ կը կրեն կ'անցընեն:

քակեն ու կը ծախեն : Հոն տեղը իրենց ապրանքն ալ ծախելէն ետքը՝ նաւուն վրայ անցուցած մորթը էշերուն վրայ բեռնաւորելով , իրենք ալ վրան հեծնալով նորէն Հայաստան կը դառնան , ինչու որ գետին սաստիկ ուժով վազելուն համար , ջրին ընթացքին հակառակ նաւելը անկարելի է : Հոն դարձեալ նաւեր շինելով , նորէն վաճառքներով Բաբելոն կ'իջնան , :

Հայաստան հաղորդակցութեան համար ասանկ բնական ճամբաներ ունենալով , որչափ որ հին յիշատակարաններէն կրնանք գուշակել , դրացի ազգերուն հետ առուտուրը ընդարձակելով , իր մեծութիւնը , հարստութիւնն ու զօրութիւնն ալ մեծցուց : Արնանք հաւանականաբար հաստատել , թէ առուտուրը ամենէն յառաջ արեւելքի կողմերը ծաղկած ըլլալով , Հայաստանի առուտուրն ալ պինտ հին ազգերուն առուտուրին ընթացակից եղած ըլլայ : Թէպէտեւ ան ատենի ամէն ազգերը աւելի իրենց թրովը տէրութիւննին կը մեծցրնէին ու կը զօրացրնէին , եւ ստուգիւ ասանկ ալ եղած է Հայերուն , որոնք Արամայ , Տիգրանայ , եւ ուրիշ Հայ դիւցազանց թագաւորութեան ժամանակները իրենց սրովը մեծցան ու հարստացան , բայց Փիւնիկեցւոց վաճառականութեանը քով , որն որ ամենէն հին վաճառական ազգը կը սեպուի , Հայոցն ալ մէկտեղ կը յիշատակուի : Հայերը իրենց բազմաթիւ ձիերն ու ջորիները Տիւրոս Փիւնիկեցւոց երեւելի քաղաքը իջեցրնելով՝ անոնց հետ առուտուրով հաղորդակցութեան մէջ էին , ինչպէս Ս. Գիւրքը կը հաստատէ : Մեր հին պատմութիւնները կը ցուցնեն որ Հայերուն ու Պարսից մէջ մեծ կապ ու հաղորդութիւն կար , որմէ անոնց հետ ունեցած մեծ առուտուրն ալ կրնանք գուշակել : Ս գիտէ թէ մեր ու Պարսից լեզուին մէջ գտնուած մի եւ նոյն բառերուն շատերը աս երկու ազգերուն ան ժամանակները իրարու հետ ունեցած հաղորդութենէն չըլլայ , ինչու որ լեզուազիտաց նոր քննութիւնները կը ցուցնեն

Թէ աս երկու լեզուաց մէջ նոյն եղած բառերը աւելի պահլաւեան լեզուին բառերն են, որոնք Պարսից մէջ վաճառականաց ու արուեստաւորաց լեզու կը համարուէր: Արշափ բախտաւոր կ'ըլլայինք, թէ որ մեր պատմագիրները ազգին իր դրացի ու հեռաւոր ազգերուն հետ ունեցած կապին վրայ քանի մը յիշատակարաններ մեզի թողուին: Ստոյգ է որ մեր ազգին առուտուրը հին ժամանակները, մանաւանդ մեր երեւելի թագաւորաց ատենները երեւելի եղած պիտի ըլլայ, ինչպէս Խորենացւոյն պատմութենէն կրնայ գուշակուիլ. բայց աս գուշակութիւնը յայտնի յիշատակարաններ չըլլալուն՝ միշտ գուշակութիւն ու պարզ ենթադրութիւն մը կը մնայ, ու անկարելի կ'ըլլայ իմանալը թէ մեր հին թագաւորութեան զանազան փոփոխութեանցը ատեն, առուտուրն ալ ինչ փոփոխութիւն կրած է:

124. Թէպէտեւ Հայերը գրեթէ ամէն ատեն պատերազմի մէջ էին, բայց Քրիստոսի 428 թուականին Արշակունեաց թագաւորութիւնը կործանելով, Հայաստանի մէջ՝ ալ առուտուրի ու արուեստներու միտ դնող մարդ չկար: Ամէն մարդ մեծն ու պզտիկը, հարուստն ու աղքատը՝ հայրենիքը չորս կողմանէ յարձակող թշնամեաց ձեռքէն ազատելու ու անոնց յափրշտակել չտալու կ'աշխատէին: Արակապաշտ Պարսիկներուն ու Սարակինոսներուն Հայաստան յարձակելուն ու մերիններուն եւ անոնց մէջ եղած անդադար պատերազմներուն պատճառաւ (428 — 580) Հայաստան քանի դնայ իր հարստութիւնը, զօրութիւնն ու վայելչութիւնը կորսընցուց: Ստոյգ է որ Հայերը իրենց սրտոտութեամբը ու իրենց զօրապետներուն ու նախարարներուն քաջութեամբը երկայն ատեն անոնց դէմ կռուեցան, բայց ասոնց ալ իյնալէն ետքը Հայաստան ալ առջինը չէր: Պարսիկներն ու Յոյները ժողովուրդը կը շարշարէին, որն որ անոնց բռնութեանը տակ չէր կրնար աչք բանալ: Բայց Սարակինոսները,

որոնք 636 ին Հայաստան յարձակել սկսան, ստուգիւ առջի երկու ազգերն ալ անցուցին, մինչև 850 ին Հայաստան ուրիշ բան չէր տեսնուէր, բայց եթէ աւեր ու կոտորած:

125. 859 երորդ տարին Հայոց համար նորէն կանգնելու ու պայծառանալու սկիզբ մը եղաւ: Աշոտ Սմբատ խոստովանողին որդին Տաճկի աերութեան առջեւը հաւատարմութիւն ցուցընելով, Հայաստանի կառավարութիւնը ձեռք ձգեց ու զօրքը շատցընելով իր Աբաս եղբորը գործակցութեամբ Հայաստան թշնամիներէն մաքրեց ու Բագրատունեաց իշխանութիւնը հաստատեց: Այնպէս կը կարծուէր թէ Հայաստան նորէն կեանք ու կենդանութիւն մը ստացած է, մանաւանդ երբ որ Պաղտատի ամիրապետը նախարարները ետ դարձուց ու Աշոտին թագ ու թագաւորական ծիրանի խաւրեց. բայց մեր աս թագաւորութեան բաղդն ալ շարունակ պատերազմ է եղեր, որմէ չէր կրնար ոգի առնուլ ու պայծառանալ: Ասկէ առջի ժամանակները դրսէն եկող թշնամեաց հետ միայն գործք սենէր Հայաստան. բայց հիմա իր թշնամին կրկին էր. մէյ մը օտար ու արտաքին, մէյ մ'ալ ներքին ու ազգակից: Աշոտին որդւոյն Սմբատայ թագաւորութեան ժամանակ գրեթէ մի եւնոյն ատեն Աբաս անկից ապստամբեցաւ ու Ափշին Պարսից ոստիկանը Հայաստան յարձակեցաւ (890 — 896): Վրիշ մը ետքը Ահմատ Միջագետաց ոստիկանն ալ ամիրապետէն ապրտամբելով Հայաստանի վրայ քալեց: Ասոնք երեքն ալ յաղթուելէն քիչ մը ետքը Եգիպտացւոց թագաւորը Հայաստան յարձակեցաւ. հազիւ թէ աս նոր թշնամին ալ բռնուած էր, Գագիկ Սմբատին քեռորդին ապստամբեցաւ, ու Ափշինին եղբորը Յուսուփայ հետ միաբանեցաւ, որն որ եկաւ Հայաստան զարկաւ, ու բոլորովին տակն ու վրայ բրաւ, ջարդեց, կոտորեց, ու բոլոր երկիրը արիւնլուայ բրաւ: Ասանկ ատեն արուեստներն ու վաճառականութիւնը ինչպէս

կրնային Հայաստանի մէջ ծաղկիլ. մէկ կողմէն օտար թշնամիները, իսկ մէկալ կողմանէ նախարարները մէջերնին խօսք ըրածի պէս տակն ու վրայ կ'ընէին Հայաստանը, անոր համար մշակութիւնն ալ գաղթելով, չորս կողմը սով ինկաւ: Թէպէտ ասանկ ողորմելի վիճակի մէջ էր Հայաստան, բայց եղան երեւելի քաղաքներ ալ որ առուտուրի կողմանէ յառաջ գացին, Գուին՝ որն որ շատ ազգերուն վաճառատեղի եղած էր, որուն առուտուրը առանձինն կը յիշէ Արծրունին. Արծն, Բաղէշ ու մանաւանդ Աարս՝ որ առուտուրով շատ հարստցած էր, ու Մելիտինէ, որ Փոքր Հայոց մէջն է, որն որ գլխաւոր առուտուրի քաղաք կը սեպուէր:

Պատերազմները աս կերպով միշտ մինչեւ Բագրատունեաց թագաւորութեան վերջերը տեւեցին. Հայերը 921 ին Յունաց դիմեցին, բայց ասոնք ալ չկրցան օգնութիւն մը ընել, ինչու որ թշնամի տան մէջն էր: Աւելորդ է մեզի աս ժամանակուան սոսկալի պատմութիւնները յիշատակել, որ մեր վախճանին օգուտ մը չունին: Հայերը միօրինակ խռովութեամբ Տաճկաց, Եգերացոց, Արաց ու նոյն իսկ իրենց նախարարներէն ու ետքի ատենները Յոյներէն ջարդուեցան, տարի շանցաւ որ հանդարտած ըլլային: Աս կերպով Բագրատունեաց թագաւորութիւնը մինչեւ 1086 տեւելէն ետքը՝ կործանեցաւ ու Պարսից ձեռքն ինկաւ: Օլարմանալի բան մըն է, որ ասանկ ժամանակ Հայերը արուեստներու ետեւէն ինկած կը տեսնենք: Ան ժամանակուրնէ մնացած շէնքերուն աւերակները մինչեւ հիմա տեսնողները կը զարմացընեն. Անի քաղքին եկեղեցիներուն ու աւերակներուն վրայ տեսնուած արուեստը՝ ամենէն քաջ արուեստաւորներն ալ կը զարմացընէ:

126. Հայերը գրեթէ նոյն ժամանակները որ Հայաստանի մէջ իրենց անկախութիւնը կորսընցուցին, Աիլիկիա (1080 ին) նոր տէրութիւն մը հաստատեցին,

որն որ գրեթէ 300 տարի տեւեց: Հայոց աս իշխանութեան ժամանակն ալ պատերազմներով անցաւ, ու աս փոքրիկ թագաւորութիւննին Յոյներուն, Թաթարներուն ու Պարսիկներուն ձեռքէն պահպանելու համար գործածներուն մէջ իրենց սրովը երեւելի եղան: Թէպէտեւ Ռուբինեանց ցեղին թագաւորներէն Ռուբէն Բ. ու Ղեւոն Բ. իրենց երկիրը շէնցընելու աշխատեցան, բայց ասոնց՝ առուտուրն ու արուեստները ծաղկեցընելու ջանքին վրայ վկայութիւն մը չենք գտներ: Ղեւոն Գ.ին 1228ին ճենովացւոց տուած արտօնութիւններուն հրովարտակը, որուն բնագիրը մինչեւ հիմա Գուրինի թագաւորական գրքատունը պահուած է, յայտնի կը հաստատէ թէ ճենովացիները՝ որոնք ան ժամանակները իրենց վաճառականութեամբը բոլոր աշխարհք անուանի էին, նաեւ Ախիկիայի հետ առուտուրի մէջ էին, որն որ ծովեզերեայ բլալով՝ վաճառականութեան յարմար գիրք ունէր: 1393ին Ախիկեցւոց թագաւորութիւնն ալ կործանեցաւ, ու Հայերը իրենց յաղթողներուն բռնութենէն ազատելու, կրօննին պահելու ու իրենց արիւնլուայ եղած հայրենեաց շարիքը աչքով չտեսնելու համար սկսան բազմաթիւ գաղթականութիւններ աս դին ան դին Ասիայի ու Եւրոպայի կողմերը ցրուիլ: Աս ժամանակները Հայոց վաճառականութեան դար մը եղաւ, ինչու որ տեսնելով որ երկիրնին բռնաւորներու ձեռք անցած բլալով, իրենք զիրենք հոգալու ուրիշ ճար չկայ, ազգովին վաճառականութիւնը ձեռք առին, որն որ կրնանք բսել թէ ազգը պահպանեց ու բոլորովին ջնջուելէն պահեց: «Հայ ազգը զարմանալու ու դիտելու արժանի բան մ'ունի, կ'ըսէ Եւրոպացի մը, որ զանազան դարերու մէջ վրան իրարմէ տարբեր երկու ոգի յայտնի երեւցած է: Հայերը պատերազմի ժամանակ քաջ ու պատերազմական ժողովուրդ են, իսկ խաղաղութեան ատեն՝ քաջ վաճառական: Իրենց ինքնիշխանութիւնը կորսունցընելէն

եաքը իրենց խելքովն ու հնարագիտութեամբ նոր ճամբայ մը գտան, որուն վրայէն խաղաղութեամբ ու հանդարտութեամբ կրնան երթալ ու երջանիկ ըլլալ» :

Արդէն 1239 ին Անի քաղքին կործանելէն ետքը, Հայերէն շատերը ապաւէն մը գտնելու մտօք ելան հին Աթտերխան անցան, ու հոն 60 — 70 տարի բնակելէն ետքը բազմութեամբ ելան ու Թաթարներուն հետ պատերազմելով, 1299 ին Խորմ եկան, որն որ ան ատենը ճենովացւոց ձեռքն էր, ու անոնց հետ դաշինք դնելով, ան տեղաց Բէֆէ քաղաքը բնակեցան. ետքը ասդիէն անդիէն շատերն ալ գալով ասոնց հետ միացան, ու յաջողութիւն գտնելով մեծցան ու հարստցան, որուն պատճառ մինակ իրենց դործունեայ բնութիւնն ու առուտուրը եղաւ : Ասոց երբ որ 1475 ին Օսմանցիք Բէֆէն ալ առին ու սկսան ան տեղաց Հայերը նեղել, ասոնցմէ բազմութեամբ մէկ մաս մը բաժնուեցաւ, ու Ահաատան անցնելով միացաւ հոն տեղը գտնուող ազգայնոց հետ, որոնք 1062 ին Անի քաղքին Յոյներէն առնուելէն ետքը, Ահաց դէմ Ռուսաց Թէոդորոս իշխանին օգնութեան երթալով, հետը դաշինք դրած էին, ու շատ ազատութիւններ առնելով, Նախջուանէն ելած Գիեւի եկած բնակած, ու 1183 ին նորէն Հայաստանէն գաղթականներ գալով բազմացած էին : Ահաատանի Հայոց դործունեութիւնն ու առուտուրի յարմար բնութիւնը մինչեւ հիմա իրենց թոռներուն վրայ յայտնի կ'երեւայ, որոնք Ալիքիայի զանազան կողմերը կը բնակին, ու մէջերնին հարուստ մարդիկ կան. Ահի թագաւորները անոնց շատ արտօնութիւններ տուած էին, ու մանաւանդ Ելվովցոց, որոնք 1365 ին առանձին դատաստան կըտրելու իշխանութիւն ալ առած էին :

Խորմի Հայերուն մէկ մասն ալ Բէֆէէն բաժնուելով եկան Ալաքիայի ու Մոլտաւիայի (Ուլահ Պուլտանի) քաղաքները բնակեցան : Այնչափ շատուոր էր ասոնց թիւը, որ աստեղաց դաւառներուն երեւելի

քաղաքներուն մէջ կէսէն աւելին Հայ էր: Բայց կամաց կամաց Անհաստան անցնելով, քիչցան, ու 17երորդ դարուն մէջ 10,000 հոգւոյ շափ ալ Գրանսիլուանիա գացին, ուր Աեռլէ ու Պաշպարով քաղաքները գնեցին, ու անոնց մէջ հաստատուեցան: Ասոնք ամէնն ալ առուտուրի կը զբաղէին ու մինչեւ հիմա ալ կը զբաղին. բայց աս քաղաքները շիրցան հարստնալ եւ հարստնալիք ալ չունին, ինչու որ երբ որ մէջերնէն հարուստ վաճառականներ ելլեն, ուրիշ տեղ գեղեր ու կալուածներ կը գնեն, ու քաղաքնին կը թողուն կ'ելլեն: Ասանկ երեւելի ու հարուստ Հայեր հիմակուան ատենս Մաճառստանի կողմերը շատ կան:

Հայաստան թէպէտեւ հետ զհետէ Պարսիկներէն, Թաթարներէն ու Օսմանցիներէն զարնուած ու կործանած էր, բայց իր հին պայծառութեանը քանի մը մնացորդները կը պահէր ու իր առեւտրական գործունէութեամբը ինքը զինքը կը հոգար: 1453 ին Ֆէթիհ Սուլդան Մէհմէտ երբ որ Աոստանդինուպոլիս առաւ, Հայաստանէն մաս մ'ալ բաժնեց, ու բերաւ Աոստանդինուպոլիս բնակեցուց, ու ազգ մը ձեւացրնելով՝ Յովակիմ անուն եպիսկոպոսին Պատրիարքի անուն առաւ, ու Յունաստանի եւ Փոքր Ասիայի մէջ եղած Հայերուն գլուխ դրաւ: Աոստանդինուպոլսոյ Հայերը իրենց ճարպկութեամբը շատ յառաջացան ու մեծցան: Աոստանդինուպոլիս փոխադրուելէն մինչեւ հիմա Օսմանեան տէրութեան մէջ թէ արուեստները եւ թէ առուտուրը յառաջ տանողները իրենք եղած են: Բոլոր տէրութեան մէջ Հայոց պէս գործունեայ, ու ընդարձակ գաղափար ունեցող ազգ մը չկայ. անոր համար ալ տէրութեան պաշտօններուն մէջ շատ կը մտնեն, ու Աոստանդինուպոլսոյ գործատուներուն ու արուեստանոցներուն մեծ մասը իրենց ձեռքն է: Ալ երջին ատենները աւելի եւս իրենք զիրենք առուտուրի տուին, ու ասանկ աղէկ տեղ ու վաճառականութեան յարմար դիրք ունեցող քաղքի մը մէջ ըլլա-

լով, Եւրոպայի բոլոր մեծ քաղաքներուն, Լոնտոնի, Փարիզի, Մարսիլիայի, Վիեննայի, Օտէսայի հետ հաղորդութիւն ունին: Ասկից զատ մէջերնին այլեւայլ առեւտրական ընկերութիւններ հաստատուցին, որոնք թէ առուտուրը եւ թէ ազգը յառաջացրնելու մէկիկ միջոցներ են: Աս գործունեայ առուտուրն է, որ ազգը կը պահպանէ, ու մէջէն շատ հարուստ մարդիկ կը հանէ: Ստոյգ է որ 1828ին ուանկէց առջի քանի մը դէպքերը ազգին մէկ մասը շատ աղքատացուցին, բայց ասիկայ անցաւոր բան մը եղաւ, ու անով գոնէ ուրախանալու ենք, որ աս խռովութիւնները դադրելով ամէնքը համոզուեցան, որ ասանկ ցրուեալ վիճակի մը մէջ ազգայնոց իրարու կռնակը լլալովն ու իրար բռնելովը միայն կրնայ ազգը յառաջ երթալ ու պահպանուիլ:

127. Պարսկաստանի Հայոց վաճառականութիւնն ալ շատ երեւելի եղած է, ու մեր ազգային առուտուրին մէջ ասոր նմանը քիչ կը գտնուի: Շահարաս Պարսից թագաւորը Հայաստանը Օսմանցոց ձեռքէն առած էր, բայց 1604ին Չղալ օղլու Օսման փաշան շատ զօրքով վրան յարձակեցաւ: Ասիկայ արգելելու մտօք Շահարաս ուզեց որ Հայաստանը անապատ թողու: Ամէն տեղ կրակ ձգելէն, աւրելէն քանդելէն ետքը՝ բնակիչներուն մեծ մասը Պարսկաստան փոխադրեց, բայց ասոնցմէ մաս մը Երասխ գետէն անցնելու ատեն մեռնելով, մաս մ'ալ անողորմ Պարսիկներուն ձեռքէն սպանուելով, հազիւ կէսը կրցաւ Պարսկաստան հասնիլ: Շահարաս աս դաղթականութեան աղէտներէն ազատողներուն սիրար շահելու համար անոնց աղէկ կը նայէր: Սպահանի դիմացը անոնց տեղ տուաւ, ուր քաղաք շինեցին ու նոր Զուղայ անուանեցին: Աոր Զուղայի մարդիկը՝ շատ ազատութիւններ գտնելով, առուտուրի մէջ շատ անուանի եղան: Իրենց վաճառականութեանը յառաջանալուն ու մեծնալուն գլխաւոր պատճառներէն մէկը աս եղաւ, որ Հնդկաստանի

առուտուրը ձեռք ձգեցին: Ղլխաւոր վաճառակա-
նութեան աները Զուղայ էին, բայց շատ վաճառա-
կաններ Հնդկաստանի քաղաքներն ալ երկրորդական
աներ ունէին: Անոնք մանաւանդ որոնք որ Զուղան
թող տուին, ու զլխաւոր աներնին Հնդկաստան հաս-
տատեցին, խիստ մեծցան ու հարստացան: Աս Զու-
ղայեցւոց ու Հնդկաստանցոց առուտուրը վաճառակա-
նութեան պատմութեան մէջ երեւելի դէպքերէն մէկն
է, որ աս մասին մէջ Հայերը երեւելի ազգաց հետ կը
հաւասարեցնէ: Իրենց Օսմանեան տէրութեան մէջ
առուտուրի զլխաւոր քաղաքներն էին Պաղտատ ու
Պասրա, մանաւանդ Պասրա, ուսկից Տաճկաստանի
ամէն մեծ քաղաքներուն հետ հաղորդութիւն ունէին:
Հնդկաստանին ապրանքները հոս կը ժողվէին, ու
անկից ամէն կողմ կը խաւրէին. թող տանք ան ամէն
առուտուրը, որ ցամաքով Հնդկաստանէն Պարսկաս-
տան ապրանք անցընելով կ'ըլլար: Հնդկաստանի մէջ
հաստատուող աներէն շատ հարուստ մարդիկ էլան,
որոնց մէջ կը յիշուին զլխաւորաբար Շաֆրասեանց,
Նազարեանց, Գամիրք, Պապումենց, Շահրիմանեանց,
Ղարամեանց գերդաստանները: Աս Հնդկաստանի Հայ-
ոց հաստատուած տեղերն էին Հնդկաստանի զլխաւոր
քաղաքները, ինչպէս Մատրաս, Նալկադա, Պոմպա,
Բադալիա, եւ այլն, ուր որ մինչեւ հիմա կան ու վա-
ճառականութեան կողմանէ շատ անուանի են: Այլ
թէ միայն վաճառականութիւն, այլ նաեւ նաւուղ-
ղութիւն ալ կ'ընէին. Հայոց նաւերը Հայու դրօշով
կը բանէին, որ էր կարմիր դեղին կարմիր, այս ինքն
երկու կարմիր մէջտեղը դեղին ու դեղինին վրայ
գառն Աստուծոյ: Աս իրենց վաճառականութիւնն ու
նաւուղղութիւնը ան աստիճանի մեծցաւ, ու օտար-
ազգեաց առջեւն ալ յարգ գտաւ, որ Սպանիայի ու
Բորդուկալի տակ եղած քանի մը կղզիներ, ինչպէս
Մանիլա կղզիները, ուր որ օտար Եւրոպացւոց նաւերը
մանելու հրաման չկար, Հայոց դրօշը ազատ կը բա-

ներ, եւ որպէս զի ուրիշ ազգերը կարող ըլլային մանեւ՝ Հայու դրօշը կը բանային . բայց Հայ նաւապետ մը պէտք էին մէկտեղ առնուլ, որ նաւը Հայու նաւ սեպուէր, ու կարող ըլլար անարգել ներս մտնել: Հայերը չէ թէ մինակ Հնդկաստանի ծովեզերեայ քաղաքները, հապա նաեւ ներսի կողմերն ալ մեծ ընդունելութիւն գտան, ու հոնտեղաց մեծ ու պզտիկ տէրութեանց իշխաններուն (Բաճաններուն) սիրելի ըլլալով՝ անոնց քաղաքական պաշտօններուն մէջ ալ մտան, ու մինչեւ ոմանք փոքր Բաճայի պատիւ, երկիր ու տէրութիւն ալ ունեցան, որոնց վերջինն եղաւ Յովհաննէս աղա Բաբիկեանց: Իրենց վաճառականութիւնը մինչեւ Չինուամաչին հասաւ:

128. Տասնուեօթներորդ դարուն վերջերը ու տասնուութերորդին սկիզբները նոր Զուղայէն շատ ճիւղեր բաժնուեցան նաեւ Եւրոպա, ինչպէս Ամստերտամ, Ալենեաիկ, Ղիփոսոյ, Մարսիլիա ու Լոնտոն, ուրտեղաց տէրութիւնները իրենց մեծամեծ արտօնութիւններ տուած էին: Հոս տեղուանքը մեծամեծ պատիւներ ստացան, ինչպէս էր Շահրիմանեանց ցեղը, որ գերմանական կոմսութեան պատիւ առաւ. ասոնցմէ է նաեւ Ռուսաստանի մէջ Ղազարեանց երեւելի գերդաստանը, որ շատ մեծ անուն ունի: Աս Հայ վաճառականներն եղան, որ մետաքսի ու բրինձի մշակութիւնը Իտալիայի մէջ յառաջ տարին, ու կ'ըսուի թէ Արկնատումարի համարակալութեան եղանակն ալ իրենք գտած ու Զուղայէն Եւրոպա բերած ըլլան, որն որ հաւանական ալ է, ինչու որ Եւրոպացիք ասոր սկիզբը Հոլանտացւոց ու Իտալացւոց կու տան, որոնց երկիրը ան ատենը Հայոց վաճառականութիւնը շատ ծաղկած էր:

Արնանք ըսել ուրեմն որ Հայոց վաճառականութեանը պարծանք եղան Զուղայեցիք, ու Զուղայէն Հնդկաստան անցնող Հայերը, որոնց առուտուրը մինչեւ հիմա մեծ է: Իսոյց քիչ մ'ալ քննենք թէ ինչ

էր որ անոնց առուտութիւն մեծնալուն ու ընդարձակելուն պատճառ եղաւ, որպէս զի հիմակուան երիտասարդներուն ալ յորդորանաց նիւթ ու ճամբայ մը գանձէնք : Անոնց պատմութիւնը ամբողջ պահող աւանդութիւնը, ասոնց այսչափ ծաղկելուն պատճառն ալ կու տայ, այս ինքն անոնց իրարու հետ մի սիրտ մի հոգի ըլլալնին, հաւատարմութիւնն ու անխաբհախս բնութիւնը, որով ամենուն առջեւը յարգ գտան ու համարում ստացան : Անոնց ազգասիրութիւնը մինչեւ երկինք բարձրացընելու արժանի է : Աս հայրենասիրութիւնն է, որուն նշանները մինչեւ հիմակը կենան, այս ինքն են վերը դրած գերդաստաններնուս ազգին ըրած բարիքները, որոնցմով ազգին մէջ իրենց անմահ յիշատակ ձգեցին . աս հայրենասիրութիւնն է, որ զանոնք այնչափ հարստացուց ու մեծցուց : Աննախանձ ու անխտիր իրարու կռնակ ըլլալով ու իրար յառաջացընելու փութով իրենց ազգակիցներէն մէկը ձեռքէ թող չէին ի տար, ով որ իրենց իյնար, կամ Հնդկաստան ու Ջուղայ գար, կ'առնէին ձեռք կը բռնէին կ'օգնէին, ու գործքի մը վրայ կը դնէին, ու մարդ կ'ընէին : Ասով եկող մուրացիկներն ալ քիչ ատենի մէջ կը մեծնային ու ստացուածներու տէր կ'ըլլային : Ի՞նչ որ ասոնց ասանկ կ'ընէին նէ, ինք իրմէ կրնայ իմացուիլ, թէ ինչ աստիճանի զթով ու սիրով ձեռք կը բռնէին ան ազգային վաճառականին որ նեղի մէջ, կամ իյնալու վտանգի մէջ ըլլար : Անախանձ ըսուած բանը կամ իրար չքաշել չկար իրենց վրայ, աս մտութիւնը վաւերաբար մերժած էին իրենց մէջէն : Աս գեղեցիկ օրինակը մեր ազգին վաճառականներուն գեղեցիկ յորդոր մըն է, որ իրենց գործքերնուն մէջ նային որ աս նախնեաց օրինակին հետեւին, որով կրնան ազգը նիւթական կողմանէ ծաղկեցընել ու յառաջացընել :

Ար յուսանք որ աս ընդհանուր վաճառականութեան ու մանաւանդ ազգային առուտութիւն պատմու-

Թեան դէպքերը կը համոզեն մեր բնթերցողները,
 ու կ'իմանան թէ վաճառականութիւնը ինչպէս ազդի
 մը խարիսխ, հաստատութիւն ու երջանկութիւն է,
 մանաւանդ մեր ազգին, որ միայն ասոր ձեռքով
 ինքը զինքը կրնայ հոգալ: Անոր համար կը յոր-
 դորենք բոլոր ազգայինները որ ասիկա ծաղկեցընե-
 լու աշխատին ու բոլոր ջանքով յառաջ տանելու
 ջանան:



Հ Ա Շ Ո Ւ Ե Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Ո Ւ Գ Լ Խ Ա Ւ Ո Ր Ա -
Բ Ա Ր Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Վ Ր Ա Յ

129. ԳՆՐԾՔԵՐՈՒ կարգաւորութիւնը առու-
տուրին հոգին է, իսկ խառնակութիւնն ու շփոթու-
թիւնը առհասարակ վաճառականի մը իյնալուն գր-
խաւոր պատճառներէն մէկը կը սեպուի: Ինչպէս
յայտնի է վաճառական մը ուրիշներու հետ ունեցած
առուտուրը ամէն անգամ մէկէն շլրնար գոցել լմըն-
ցընել, երբեմն պարտատէր կ'ըլլայ, ու երբեմն ալ կը
պատահի որ պարտական կը մնայ: Ամէն օր ստակի
հետ գործք ունի, օր չանցնիր, որ իր արկը ստակ
չմտնէ ու անկից ստակ չելլէ: Ստուգիւ շատ ողորմելի
կ'ըլլար վաճառականը թէ որ աս ամէն բան, ու ա-
նոնց վերաբերեալ ամէն մանր մունր պարագաներն ալ
միտքը պահել ուզէր. ինչու որ աս կերպով միայն
երկու եւ կամ առ առաւելն երէք հոգւոյ հետ առ-
ուտուր պիտ'որ ընէր որ չշփոթի, բայց ասոր ալ շատ
որամիտ մարդ պէտք է: Սակայն մարդուս միտքը տկար
է, եւ ոչ այսչափի ալ կրնայ հասնիլ. անոր համար
ալ հարկ է, որ ամէն վաճառականները ըրած առու-
տուրնին տեղ մը գրեն ու կարգաւորեալ կերպով մը
նշանակեն, որ ետքէն ուզած ատեննին՝ նային, ու
ուզածնին տեսնեն ու յիշեն, եւ ինչ վիճակի մէջ
ըլլալնին կարող ըլլան իմանալ: Աս ըսածներնէս զատ
վաճառականը դրաւորական ուսում մ'ալ ունենալու
է, ինչու որ իր հեռաւոր բարեկամներուն կամ առու-
տուրի ընկերներուն հետ ալ գործք տեսնելու հար-
կաւորութիւն ունի, անոնց հետ թղթակցելու կարօտ
է, այլեւայլ մօտաւոր ու հեռաւոր բարեկամներուն
հետ դաշինքներ դնել հարկ կ'ըլլայ, եւ այլեւայլ
դրաւորական աշխատութիւններու կարօտ կ'ըլլայ,
որոնց համար մասնաւոր գիտութիւն պէտք է:

Աս ամէն գործքերը՝ որոնք ամէն օր վաճառա-
 կանի մը գրասեղանին վրայ կը պատահին, սորվեցը-
 նողը Հաշուեգիտութիւնն է: Ասիկա, ինչպէս վերը
 քսածներնէս յայտնի յառաջ կու գայ, երկու կը բաժ-
 նուի, Գիրք բռնելու կամ համարակալութեան ու
 թղթակցութեան: Հիմակուան ատենս համարակա-
 լութեան ուսումը անանկ յառաջացած է, որ վաճա-
 աական մը թէ սր կարգաւորեալ կերպով կրկնատու-
 մարի սկզբանցը համաձայն գիրք բռնելու ըլլայ, ամէն
 վայրկենի մէջ երբ որ ուզէ մէկ նայուածքով մը ընդ-
 հանրապէս չէ թէ միայն իր առուտուրին վիճակը կը
 տեսնէ, այլ նաեւ իր բարեկամներուն ու թղթակից-
 ներուն հետ ինչ յարաբերութեան մէջ ըլլալը ու իր
 առուտուրին ամէն մէկ ճիւղերուն ինչպէս յառաջա-
 նալը կ'իմանայ: Մտուգիւ գիտենք, որ ասիկա վա-
 ճառականին ամենահարկաւոր բանն է, ու մէկալ կող-
 մանէ մեր ազգին մէջ ալ մինչեւ հիմա դեռ կարօտու-
 թիւնը լեցընող համարակալութիւն սորվեցընելու
 գիրք մը չկայ. բայց մենք ահամայ աս մասը թող
 տալու, ու միայն թղթակցութեան ու անոր վերա-
 բերեալ մասերուն վրայ խօսելու կը հարկադրինք,
 ինչու որ յայտնի կը տեսնենք որ համառօտ ընելու
 պիտ'որ ստիպուինք, որով եւ պահանջուած օգուտը
 չկրնանք պիտ'որ ընել: Աւր թողունք ան ալ որ հիմա-
 կուան ատենս աս գիտութեան տեղեակները ասի-
 կա իբրեւ զատ մաս մը կը մտածեն, ու դպրոցներու
 մէջ ալ զատ կը սորվեցընեն: Աւրեմն հիմա դանք
 թղթակցութեան հարկաւոր եղած բաները սորվե-
 ցընելու:

130. ՄԵԿՈՒ մը հետ թուղթ կամ նամակ առնուլ տալը թղթակցութիւն կ'ըսուի. իսկ թղթակից է դրսի երկիր գտնուող ան բարեկամը՝ որուն հետ որ վաճառականը թղթակցութեան մէջ է: Արթեալ՝ ու գործքի մէջ մտած թղթակցի մը ամենէն յառաջ ու ամէն բանէ աւելի պահանջուած բանը՝ աղուոր, վարժ ու շուտ գիրն է. ասկից ետքը կու գան ուղղագրութիւն ու լեզուին համաձայնութեան կանոնները գիտնալ:

Առեւտրական նամակներուն ոճը պէտք է որ Ա. Մաքուր լեզուաւ, Բ. Անսխալ, Գ. Յայտնի, Դ. Որոշ, Ե. Քաղաքավարական ու Զ. Համառօտ ըլլալուն կողմանէ ուրիշ նամակներէն որոշուի: Այլ որովհետեւ թղթակցին հմտութիւնը իր նամակներէն պիտ'որ ձանչցուի, անոր համար պէտք է որ վաճառականը նայի, որ աս պահանջուած բաները ստանայ ու ձեռք ձգէ:

Ա. Արպէս զի լեզուն մաքուր ըլլայ, պէտք է անանկ բառեր ու անանկ ոճեր բանեցընէ, որոնք հայերէն լեզուին սեպհական են, որոնք Հայ ժողովրդեան կրթեալ մասը խօսած ու գրած ատենը կը գործածէ: Անոր համար պէտք է որ նախ՝ օտար լեզուի բառեր չգործածէ, որոնց տեղը մեր լեզուին մէջ նոյնանշանները կան. զոր օրինակ են *ամպիւլ*, *ճիւղ*, *բրդեօր*, *լիֆտս*, եւ այլն կամ տաճկերէն բառերը, որմէ հասարակօրէն շատերը չեն զգուշանար: — Արկրորդ, օտար դաւառներու կամ խորթ կամ մութ ու գրաբառ բառերէ ու դարձուածներէ խորշելու է, որոնք պարզ աշխարհաբառ գրուածքի մը մաքրութեանն ու յստակութեանը արգելք կ'ըլլան:

Բ. Անսխալ գրելու համար՝ պէտք է որ գրածը քերականութեան կանոններուն համաձայն ըլլայ,

անոր համար ալ նամակ գրողը կ'ենթադրուի, որ լեզուին կանոնները յառաջուրնէ արդէն աղէկ սորված ըլլայ:

Գ. Նամակը յայտնի կամ բացայայտ ըսուելու համար, պէտք է որ կարգացողը գրուած նիւթը շուտով, գիւրաւ ու կատարեալ հասկընայ: Արպէս զի գրողն ալ աս կատարելութիւնը իր նամակներուն կարող ըլլայ տալ, պէտք է որ գրած կամ գրելու նիւթին վրայ ճիշդ ու շիտակ գաղափար մը ունեցած ըլլայ, անանկ որ իր մտածութիւնները թէ առանձին եւ թէ ամէնը մէկտեղ մէկ ամբողջ մը կազմեն, որուն միտքը ամէն մարդ գիւրաւ իմանայ: Աճառականը իր գրուածներուն մէջ ամէն բանէն աւելի աս բացայայտութեան միտ դնելու է, ինչու որ աս յատկութիւնը վաճառականին նամակներէն պահանջուած գլխաւոր յատկութիւնն է, մէկալները՝ երկրորդական յատկութիւններ են:

Դ. Նամակը որոշ գրուած կ'ըլլայ, երբ որ զատ զատ ամէն մէկ մտածութիւնը անանկ բառերով կատարեալ մեկնուած է, որ կարգացողը՝ նամակին եւ ոչ մէկ մասին վրայ կը տարակուսի ու անստուգութեան մէջ կ'իյնայ: Մտիկա ըլլալու համար ամենէն աւելի հարկաւոր է, որ նամակը գրողը գրելու բանին վրայ պայծառ գաղափար ունենայ:

Ե. Յարմար ու քաղաքավարական կերպով գրելու համար, պէտք է որ գրողը իր մտածութիւնները յայտնելու յարմար ու պատշաճ բացատրութիւններ ու խօսքեր ընարէ. գրածը բնական, եւ ոչ թէ տղայամտական կամ շողոքորթական զարդարանքներով կամ դարձուածներով զարդարած պիտ'որ ըլլայ. ուրիշին պատուոյն պիտ'որ չդպչի, որն որ պահելու պարտական է, ու իրեն պատիւն ալ ոտքի տակ պիտ'որ չառնէ, տմարդի ու բիրտ խօսակցութիւններ պիտ'որ չընէ, հապա անոր հակառակը իր պատուոյն վայել ծանր խօսքերով գրուած պիտ'որ ըլլայ:

Չ. Նամակը համառօտ ըլլալու համար, պէտք է որ գրողը աւելորդ խօսակցութիւններէն զգուշանայ, ու մի եւ նոյն բանը շատ անգամ այլեւայլ խօսքերով չկրկնէ: Անոր համար նամակը սկսելէն յառաջ պէտք է մտածել որ ինչ կ'ուզէ ըսել, ու մտքին գաղափարները կարգաւորելու է. վասն զի թէ որ զրուցել ուղածին վրայ պայծառ գաղափար չունի նէ, ան ատենը նամակն ալ շփոթ ու անկատար կ'ըլլայ, ինչու որ նամակը ուրիշ բան չէ, բայց եթէ հայելի մտածութեան: Գլխակցողին ամենէն մեծ արուեստն ան պիտ'որ ըլլայ որ քիչ խօսքով շատ բան ըսէ, ու միանգամայն աղէկ ըսէ: Ասիկա աղէկ գրուած նամակներ կարգալով, աղէկ մտադիր ըլլալով, ու իր գրուածներուն ալ խիստ ու անաչառ դատաւոր ըլլալով կրնայ ձեռք բերուիլ: Համառօտ ըսելով՝ պէտք չէ կարճ կամ քիչ գրուած իմանալ. կրնայ շատ անգամ նամակը երկայն, բայց համառօտ ըլլալ, երբ որ մէջը աւելորդաբանութիւն ու կրկնութիւն չկայ, ու ամէն զրցուածները ըստ պատշաճի ըսուած են: Անոր համար թղթակցութիւն ունեցող վաճառականները պէտք են նաեւ անկէ ալ զգուշանալ, որ համառօտ ընենք ըսելով՝ նամակնին անիմանալի չընեն: Աս երկու ծայրէն զգուշանալու համար պէտք է աս կանոնը աչքերնուն առջեւէն չհեռացընեն, այս ինքն որ նամակին մէջ բացայայտութեան հարկաւոր եղածէն ոչ աւելի եւ ոչ ալ պակաս բան պիտ'որ գտնուի:

131. Նամակ մը շարագրելու ատեն, պէտք է նայիլ, որ ամենէն աւելի հարկաւոր ու գլխաւոր բաները յառաջ, իսկ անհարկաւորները ետքէն գրուին: Վաճառականի մը նամակին ներքին շէնքը երեք գլխաւոր մաս կ'ունենայ. Ա. Վերնագիր, Բ. Մարմին, ու Գ. Վերջաբանութիւն ու ստորագրութիւն: Վերնագրին մէջ կան նամակին գրուած տեղը, թուականը ու բարեկամին՝ սրուն որ նամակը կը գրուի, անունը եւ բնակած տեղը, ինչպէս.

Պ. Գրիգոր Մամիկոնեան, ի Առստանդնուպոլիս .

Վիեննա, 1 Յուլիսի 1848 .

Իսկ նամակին մարմինն ան է՝ ինչ որ մէջը պիտ'որ գրուի, որն որ հասարակօրէն վերնագրէն մէկ երկու մատ վարէն կը սկսի գրուիլ, ու թղթին քովէն ալ մէկ երկու մատ պարապ միջոց թող տալով յառաջ կ'երթայ մինչեւ թղթին վարի ծայրը, իսկ թէ որ մէկալ երեսը անցնելու հարկ կ'ըլլայ, մէկ մատ տեղ թող կը տրուի ու այնպէս մէկալ երեսը կ'անցնուի, ըստ ամենայնի ան տեղէն սկսելով՝ ուր տեղէն որ առջի երեսին մէջ նամակին մարմինը սկսուած է : Թէ որ նոր նիւթ մը սկսելու կ'ըլլայ, պէտք է նոր տողէ սկսիլ : Իսկ նամակին վերջաբանութիւնը քանի մը քաղաքավարական խօսքերով կ'ըլլայ, կամ աղաչելով որ յանձնարարութիւն մը ընէ, եւ կամ աղէկ առուտուր մաղթելով եւ այլն :

Նոս տեղս աս ըսածներնուս պէս շինուած նամակ մը գնենք :

Պ. Սարգիս Թաթուլեան, ի Վիեննա .

Թրեստ, 21 Յուլիսի 1848 .

Աս թղթովս կը ծանուցանեմ Ձեզի, որ Աղէքսանդրիայի հետ մինչեւ հիմա ունեցած առուտուրիս մէջ չգործուած բամբակի առուտուրն ալ խոթեցի . անոր համար ալ անոր ընթացիկ գներուն ցանկը աս թղթիս մէջ կը գնեմ :

Թէ որ Գուք ալ զիս Ձեր յանձնարարութիւններովը պատուել ուզելու ըլլաք, ապահով եղէք, որ աժան գնով ու շուտով ալ Ձեզի ծառայելու պատրաստ եմ :

Արդ Ձեր հրամանին կը սպասեմ : Գներուն վճարքը 6 ամիս Ձեր քովը թող կու տամ : Կաղաչեմ Ձեզի որ տակի եղած ստորագրութեան (firma) մտադիր ըլլաք, ու կը խոստովանիմ զիս,

Ձեր Աղնուութեանը

Ն . Ծ . Գրիգոր Մարկոսեան :

Նամակագրութեան ոճը ստանալու համար վաճառականի մը աղէկ գրուած նամակ մը առնելու է, ու որչափ կարելի է անոր նմանելով իր քովէն նորէն նամակ մը շարագրելու է: Անկից ետքը իր շինածը բնագրին հետ համեմատելու, ու թէ բառերուն եւ թէ շինուածքին կողմանէ անկից ունեցած տարբերութիւնները քննելու է: Այլ երբ գրուած նամակին մէջ Գրիգ. Մարկոսեան՝ Սարգսին կ'իմացընէ որ բամբակի առուտուր կը սկսի, անոր կ'ազաչէ որ իրեն յանձնարարութիւն ընէ, կը խոստանայ որ աժան ծախէ, ու ուզածը ժամանակին կատարէ, եւ վեց ամսուան համարում ալ կը խոստանայ: Աս նամակիս նմանելով շինուած թուղթ մ'ալ դնենք, ու բնագրին հետ համեմատենք:

Պ. Սարգիս Թաթուլեան ի Ա. Իէննա.

Թրեւս, 21 Յուլիսի 1848.

Աս թղթովս պատիւ կ'ունենամ Ձեզի խոնարհարար ծանուցանելու, որ ես Աղէքսանդրիայի հետ արդէն շատ տարիներէ վեր ունեցած գործունեայ առուտուրիս հետ անգործ բամբակի առուտուրն ալ միացուցեր եմ, գլխաւորաբար ամէն կողմերէն ինձի եղած ազաչանքներէն ստիպեալ. անոր համար ալ անոր ընթացիկ գներուն ցանկը աս թղթիս մէջ կը դնեմ:

Թէ որ Գուք ալ իմ ազաչանքս կ'ընդունիք, ու զիս Ձեր ազնիւ ու անգին յանձնարարութիւններովը պատուելու կը բարեհաճիք, ան ատենը կրնաք իմ կողմանէս ալ ապահով ըլլալ, որ արտաքոյ կարգի շուտութեամբ, ու շատ աժան գնով Ձեզի կը ծառայեմ: Անոր համար ալ Ձեզի մեծապէս կ'ազաչեմ, որ Ձեր պատուական հրամանները ինձի խաւրէք, ու ես ալ միտեալ եմ Ձեզի վեցամսուան համարում տալով: Ի վախճանի կ'ազաչեմ Ձեզի որ թղթիս տակը եղած ստորագրութեան նայելու շնորհք ընէք: Ձեր ազնիւ պատասխանին սպասելով, կը մնամ,

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Գրիգոր Մարկոսեան:

Արդ աս երկու նամակները իրարու հետ համեմատելու ըլլանք՝ կը տեսնենք որ երկրորդը աւելորդաբանութեամբ առջինէն շատ կը տարբերի. նախ՝ խորհրդաբան, անկէ ետքը շատ արհեստներէ է վերը դարձեալ հորձոնեաց բառը, ու մանաւանդ գլխաորհրդէն մինչեւ «պիպեալ բոլորովին աւելորդ են: Մարկոսեանին՝ ուրիշներուն աղաչելէն ստիպուիլը կամ շտիպուիլը՝ Սարգսին օգուտ մը չունի. նոյնպէս նաեւ իր առուտուրին երկայն ատեն տեւելը կամ դործունեայ ըլլալը, եւ այլն: «Նամակին սկիզբը պարտէ՝ կ'ունենամ հայերէն լեզուի ոճ չէ, եւ ասանկ եւրոպացիի օտար նամակագրութեան ոճերէն զգուշանալու է: Իսկ ի՞նչպիսիք է՝ կ'ընդունի, ու լին Զեր ունի ու անգին յանցարարութիւններովը պարտելը կը բարեհաճի՝ ըսելը՝ շափազանց քաղաքավարութիւն ու ծիծաղական է. ուր թողունք որ անգին յանցարարութիւնը անյարմար է, իսկ բարեհաճիլ ալ աղէկ բացատրութիւն չէ: Ի՞նչ կ'ըսեն խօսքն ալ աւելորդ է. նոյնպէս «Բարեպետ» բառն ալ: Իսկ պարտաւորութիւն հրամանները ծիծաղական ու շափազանց շողքորթութիւն է, որ զբողին աղայամտութիւնը կը յայտնէ: Ասկէ ետքը լեզուին ոճին ու կանոնին դէմ գրուածք մը կու գայ. այս ինքն է «Բարեպետ» եւ... համարումս արտաւ, որ պիտ'որ ըլլայ միտեալ եմ... համարումս տալու. բայց «Բարեպետ» ալ Հայու բացատրութիւն չէ. պէտք էր ըսել՝ Զեղի վեցամսուան համարում կու տամ կամ տալու միտք ունիմ: «Նամակին վերջերն ալ շորհո՛ւ ընէ՛ր ու ունի խօսքերը աւելորդ ու շափազանց մանաւանդ թէ աղայամտական են:

Շատերը անանկ կը կարծեն, թէ երկայն խօսակցութիւններով նամակը աւելի աղուոր կ'ըլլայ ու աւելի ընթացիկ ոճ կ'ունենայ. բայց ասիկա սխալ ու ծուռ կարծիք մըն է: Մանաւանդ թէ ասոր հակառակը երկայնաբան դարձուածքներէն ու պարբերութիւններէն զգուշանալու է, եւ աւելի ընտրելու է, որ ուր որ բացայայտութիւնն ու գիւրութիւնը կը

պահանջի նէ, շատ անգամ կէտ դնելով խօսքը կտրուի, քան թէ խօսքը երկրնցուի. բայց ասոր ալ չափը չանցրնելու է, ամէն տեղ, անյարմար տեղուանք ալ կետեր դնելով: Ասել զգուշանալու է, որ նոյն բառերը յաճախ ու մօտ չգործածուին, ինչու որ ասիկայ ականջին աղէկ չհնչեր: Աարձեալ բռնի քաշած քաշկուտած բանաստեղծական բացատրութիւններ ընելէն ալ զգուշանալու է, որն որ ասանկ գործքի կամ առուտուրի նամակներուն ամենեւին չվայլեր: Ինչպէս որ վերը ըսինք, աղէկ գրուած նամակներ ու նամակագիրքեր կարգալու, ու անոնց բացատրութեան կերպը, դարձուածներն ու սճը իրեն սեպհականելու աշխատելու է: Ասով ամէն մարդ կրնայ աղէկ թղթակցութիւն ընել:

132. Մինչեւ հիմա ըսած ընդհանուր տեղեկութիւններն ու կանոնները քանի մը առեւտրական գէպքերու կ'ուղենք մերձեցրնել, որոնց համար թղթակցութիւն պէտք է: Ասոր օրինակ մը առնունք, ու անոր մէջ հարկաւոր եղած բոլոր նամակները դնենք: Ասենք որ Աստուածատուրեան Պ. Սամուէլը կոստանդինուպոլսոյ մէջ վաճառականութեան տուն մը հաստատեր է, ու դրսի երկիրներու վաճառականներու տներուն հետ առուտուրի կապ ունենալու համար, անոնց շրջաբերական թուղթ մը կը գրէ: Արդ իրեն գրելու ծանուցման նամակին մէջ ինչ գլխաւոր մասունք պէտք է որ բովանդակած ըլլան: Պէտք է որ իր թղթին մէջ

Ա. Իրեն առուտուրի տուն հաստատելը ծանուցանէ, աւելցրնելով, որ բաւական տեղեկութիւն, ու միանգամայն յանձնարարութիւնները, հրամանները կատարելու, դարձրնելու չափաւոր գոյք (ֆոնդ) ունի:

Բ. Իր առուտուրին գլխաւոր նիւթը իմացընելու է:

Գ. Պիտի գրէ ան ամէն պարագաները, որոնք կը կարծէ որ գիմացինը աս իրեն հետ հաղորդու-

Թիւն ունենալու կը շարժեն եւ աս հաղորդութիւնը անոր շահաւոր կը ցուցնեն :

Գ. Ազաչելու է որ իրեն յանձնարարութիւն ընէ :

Ե. Իր ստորագրութիւնը (firma) իմացընելու է, որով նոր հաստատուած տունը պիտ'որ ճանչցուի :

Աս նամակը յետագայ կերպով կրնայ շինուիլ :

Ե.

Պ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ. ի Թրեւտ .

Կոստանդինուպոլիս, 7 Մայիսի 1848.

Աս թղթովս կը ծանուցանեմ Ձեզի, որ ես ապրանքներու ուղեւորչութեան ու յանձնարարութեան առուտուր ընելու վախճանաւ աս քաղքիս մէջ տուն հաստատած եմ :

Առուտուրի վրայ ունեցած երկայն ժամանակուան փորձառութեանս ու բարի համբաւիս վստահանալով, եւ աս գործքիս համար բաւական գոյք ալ ունենալով, կը համարձակիմ Ձեր վստահութիւնը խնդրել, ու կը բաղձամ առիթ մը գտնել, որ աս ըսածներս կարող ըլլամ իրօք ցուցնել :

Յուսալով որ աս տեղերուն աւելի տեղեակ ըլլալովս, ամէն ինձի յանձնարարութիւն ընող առուտուրի բարեկամներս կատարեալ գոհ կ'ընեմ, կ'ազաչեմ Ձեզի, որ ասոր համոզուելու համար փորձ մ'ընէք, ու միանգամայն իմ ստորագրութեանս միտ դնէք :

Ձեր Ազնուութեանը կը խոստովանիմ զիս

Ն. Ծ. Սամուէլ Աստուածատուրեանց :

Բ.

Պարասիան :

Պ. Սամուէլ Աստուածատուրեանց, ի Կոստանդ .

Թրեւտ, 21 Մայիսի 1848.

Ձեր Մայիսի 7ին գրած շրջաբերականը առնելով նոր տուն մը հաստատելնիդ իմացանք. չէ թէ

միայն շնորհակալ ենք աս Ձեր բրած մտադրու-
թեանը, հապա նաեւ կը բաղձանք որ ամէն գործ-
քերնիդ յաջող երթան:

Թէպէտեւ մենք երկայն ժամանակուրնէ վեր ան
տեղաց քանի մը հին տներուն հետ հաղորդութիւն
ունինք, սակայն Ձեր խօսքին վրայ վստահանալով,
կ'ուզենք պզտիկ փորձ մ'ընել, ու կը խնդրենք ձեզ-
մէ, որ

Գրեթէ 50 արկղ ծխակալի կաւ (1/2-1/2 Բոֆ-
բ-շը) աղէկ ծրարուած, մեր հաշուին Գանուբի ճամ-
բով, Աիէննա Թաթուլեան Պ. Սարգսին խաւրէք,
ու գնոյն համար ապրանքին հաշիւը խրկած ատեն-
նիդ՝ մեր վրայ թուականէն վեց շաբաթ ետքը վճա-
րուելու փոխանակագիր մը քաշէք:

Բայց ամենէն աւելի ասիկայ կ'աղաչենք, որ ա-
պրանքը աղէկ, ու որչափ կարելի է աժան ըլլայ, եւ
կը յուսանք որ աս առաջին փորձը մեծամեծ յանձն-
արարութեանց պատճառ կ'ըլլայ:

Ար մնանք Ձեր Ազնուութեանը,

Խ. Ծ. Խաչիկ Սրապիտեանց եւ Ընկ:

Թէ որ աս նամակը իր կազմիչ մասունքներուն
բաժնելու ըլլանք, կը աեսնենք որ մէջը բովանդա-
կուածներն են.

Ա. Ըջաբերական թղթին հասնելուն ծանու-
ցումը, անոր շնորհակալութիւն ու բարեմաղթու-
թիւն:

Բ. Արդէն ան տեղաց ուրիշ տներուն հետ հնուցմէ
եղած հաղորդութիւնը:

Գ. Փորձի համար պզտիկ որոշում մը:

Դ. Թէ ապրանքը որուն պիտ'որ խաւրուի, եւ
թէ գինը ինչ կերպով պիտ'որ վճարուի:

Ե. Աղէկ կատարելու համար աղաչանք, նշանա-
կելով որ ասով միայն յանձնարարութիւնները պիտ'որ
աճին:

Ըրդ աս հինգ գլխաւոր մասունքները միտքը պահելով, վարժիլ ուզողը կրնայ անկից մէկ ամբողջ մը շինել. շինածը դրածներնուս հետ համեմատել, ու վարժիլ:

Ըստուածատուրեանց Պ. Սամուէլը իրեն ապրուած ծխակալի կաւին վրայ տեղեկութիւն տալու պատճառաւ, Թրեւոտի Սրապիոնեանց Պ. Խաչիկին ու Ընկերութեանը պատասխան պէտք է որ տայ:

Գ.

Պ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ. ի Թրեւոտ.

Կոստանդինուպոլիս, 17 Յունիսի 1848

Ձեր Մայիսի 21ին գրած թղթովը ինձի ցուցուցած վստահութեանը շնորհակալ եմ:

Արովհետեւ շատ հաւանական կ'երեւայ, որ ծխակալի կաւուն գինը քանի մը օրէն պիտ'որ շատ բարձրանայ, որուն նշանները այսօր վաճառատեղիներուն մէջ յայտնի կ'երեւան, անոր համար կը կարծեմ որ Ձեր յանձնարարութիւնը չէի կրնար երկընցընել:

Ստուգիւ շատ ալ բաղդաւոր դանուեցայ, որ Ձեր յանձնածին չափ աղէկ տեսակ մաքուր ծխակալի կաւը համեմատութեամբ շատ աժան կրցայ առնուլ, (այս ինքն . . . ուլ), որուն արժէքը՝ աս թղթիս մէջ եղած հաշուին ցուցուցածին նայելով, կ'աղաչեմ որ վճարէք:

Ձեր ինձի գրած պայմանին նայելով, գնոյն համար թուականէս վեց շաբաթ ետքը վճարուելու, ըստ հրամանի Հայկեան Պ. Վահանայ փոխանակազիր մը քաշած եմ, ու կ'աղաչեմ որ անիկա ընդունիք, որով եւ մեր աս առաջին գործքը գոցենք լմընցընենք:

Վարանքը աղէկ ծրարուած Լոյսի ընկերութեան շոգենաւով երէկ ճամբայ ելաւ Ձեր ինձի յանձնած

մարդուն ուղղելով, ու ասիէ ետքը ապրանքին վրայ
աւելեկութիւնը ան Պարոնէն կ'ընդունիք:

Յուսալով որ Գուք կատարեալ գոհ կ'ըլլաք, ու
նորէն մեծամեծ յանձնարարութիւններով զիս կը
պատուէք, կը խոստովանիմ զիս,

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Սամուէլ Աստուածատուրեանց:

Կոստանդնուպոլսի յանձնառուն Սամուէլ Աս-
տուածատուրեանցը Ախէննայի Թաթուլեանց Սար-
գիս վաճառականին կը գրէ Գանուբի ճամբով ու-
ղեւորած ապրանքին վրայ:

Պ.

Պ. Սարգիս Թաթուլեանց, ի Ախէննա.

Կոստանդինուպոլիս, 21 Յունիսի 1848

Ըստ հրամանի եւ ի հաշիւ Պ. Խաչիկի Սրապիոն-
եանց եւ Ընկ. ի Թրեսա, ամսոյս 16ին Լոյսի ըն-
կերութեան շողենաւով ճամբայ գրի Ձեր վրայ 50
արկղ ծխակալի կաւ ... կենդինար ծանրութեամբ
աղէկ ծրարուած,

Ա. Ա. նշանով, Թիւ 1, 2 եւ այլն.

եւ կը խնդրեմ Ձեզմէ, որ ապրանքը աղէկ վիճակի
մէջ Ձեզի յանձնուելէն ետքը՝ պայմանեալ տանող-
չէքը, եւ ստոյգ եղած ծախքերն ու մաքսերը վճա-
րէք, իսկ մնացած բաներուն համար յանձնարարողին
հրամանին նայիք:

Աս առթով կ'աղաչեմ Ձեզի որ ճանչնաք զիս
միշտ,

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Սամուէլ Աստուածատուրեանց:

Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկերութիւնը Թրեսա
ապրանքին ճամբայ ելլելը լսելուն պէս՝ կը գրէ Ախէն-
նա Թութուլեանց Պ. Սարգսին այսպէս.

Ե.

Պ. Սարգիս Թաթուլեանց, ի Վիեննա.

Թրեստ, 3 Յուլիսի 1848.

Պ. Սամուէլ Աստուածատուրեանց Աստանդի-
նուպոլիս Լոյտի ընկերութեան շոգենաւով մեր հա-
հաշուին Ձեզի 50 արկղ ծխակալի կաւ կը խաւրէ
... կենդ. ծանրութեամբ: Ար խնդրենք Ձեզմէ,
որ հասնելէն, ու աղէկ վիճակի մէջ Ձեզի յանձնուելէն
ետքը՝ պայմանեալ տանողէքն ու նաեւ ստոյգ եղած
ծախքերը վճարէք, ու անոնց համար անմիջապէս մեր
վրայ փոխանակագիր մը քաշէք ի տեսութեան անդ
վճարելի: Սակաւ առանց դանդաղելու առջի առ-
թով ապրանքին 15 արկղը Լիւսիա Պօլոս Խորենեա-
նին խաւրէք:

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ

Սարգիս՝ ապրանքին Վիեննա հասնելուն վրայ
Սրապիոնեանց ընկերութեանը տեղեկութիւն կու
տայ:

Զ.

Պ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ. ի Թրեստ.

Վիեննա, 20 Յուլիսի 1848.

Վանուբի ընկերութեան Ա. Ա. շոգենաւով ...
կենդինար ծանրութեամբ 50 արկղ ծխակալի կաւը
երէկ հոս հասաւ, ու ամէն կողմանէ աղէկ պահուած
էր: Մասանկ աղէկ վիճակի մէջ առնելէն ետքը, պայ-
մանեալ բերողէքն ու ծախքերը՝ որոնց հաշիւը աս
թղթիս մէջ կը դնեմ, վճարեցի, ու գումարը՝ որ
... ֆիորին արծաթ կ'ընէ, ինչպէս որ ինձի հրա-
ման խրկած էիք, ի տեսութեան անդ վճարելի փո-
խանակագրով մը ըստ հրամանի Պ. Համազասպեանցի
առի. ու կ'աղաչեմ որ աս փոխանակագիրը ընդունիք:

Արովհետեւ ճիշդ վաղը եղբայրս շոգեկառքով

դէպ ի Լիփսիա ճամբայ պիտ'որ ելլէ, ասիկայ աղէկ առիթ մը սեպելով՝ 15 արկղ ծխակալի կաւը յանձնեցի, որ մէկտեղ տանի, ու Լիփսիա Պօղոս Խորենեանին յանձնէ: Զարկաւոր վաճառագիրը աղէկ հոգացած եմ. ու կը յուսամ որ աղէկ վիճակի մէջ կ'երթայ: Ար խնդրեմ Ձեզմէ որ ուրիշ Ձեր յանձնարարութիւններովը զիս պատուէք, ու ճանչնաք զիս,
 Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Սարգիս Թաթուլեանց:

Է.

Ի վախճանի Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ. կը ծանուցանեն Կոստանդնուպոլիս Աստուածատուրեանց Սամուէլին, որ յանձնարարութիւննին աղէկ կատարելուն վրայ գոհ են:

Պ. Սամուէլ Աստուածատուրեանց, ի Կոստանդ.

Թրեստ, 3 Օգոստոսի 1848.

Աս տարւան Մայիսի 21ին Ձեզի ըրած ծխակալի կաւի յանձնարարութիւններնուս վրայ շատ գոհ ենք: Հատ ժամանակ չէ որ ապրանքն առինք, Ձեր կողմանէ քաշուած փոխանակագիրը ընդունեցանք ու վճարեցինք, որով եւ հաշիւնիս հաւասարեցաւ:

Ար յուսանք որ ասկէ ետքը շատ անգամ առիթ կ'ունենանք Ձեզին որէն յանձնարարութիւններ ընելու:

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ:

Ասով աս առուտուրի գործքը կը լմբննայ: Աս կերպով կ'ըլլան ուրիշ ամէն գործքերու թղթակցութիւնները, որչափ որ իրարմէ տարբեր ալ ըլլալու ըլլան: Վիխաւոր կանոնները միշտ նոյն կը մնան, իսկ մասնաւոր դէպքերու մէջ՝ զանազան պարագաներ մտնելով, այլեւայլ զգուշութիւններ պէտք կ'ըլլայ, բայց ասոնց վրայ առանձին կանոններ տալը անկարելի է:

133. Առուտուրի նամակները զանազան տեսակ կը բաժնուին:

Ա. Շրջաբերական թղթերու (lettre circulaire), որոնք առուտուր մը հաստատելու, յանձն առնելու, շարունակելու կամ թող տալու առթով, կամ մահուան դէպքերու մէջ եւ այլն, կը գրուին, որոնցմով հասարակօրէն գրողը կը խնդրէ կամ կը հրաւիրէ առուտուր ընելու, ինչպէս որ վերը գրուած Ա. նամակէն յայտնի է:

Բ. Հրաւիրանաց թղթերու (lettre d'invitation), որոնցմով նաեւ նոյն իսկ երկայն ատենէ վեր տեւած աները աւելի մեծ ու ընդարձակ առուտուրի ձեռք զարնելու ու իրարու հետ հաղորդութիւն ընելու կը հրաւիրուին: Աս թղթերուն մէջ սովորաբար առուտուրի այլեւայլ առաջարկութիւններ կը գրուին, ու անոնց օգուտն ու շահը պէտք է որ յայտնի ու պայծառ մեկնուին: Ասոնց գիմացը պատասխան տուողը կամ առաջարկութեան կը հաւանի եւ կամ չհաւանիր: Թէ որ չհաւանելու ըլլայ, ան ատեն բանը կը լմըննայ, իսկ եթէ հաւանելու ըլլայ, ան ատեն յանձնարարութիւններ ու որոշմունքներ կը սկսին, ու իրարու:

Գ. Յանձնարարութեան, գնելու, որոշելու նամակներ գրելու պատճառ կ'ըլլան: Աս տեսակ նամակներուն կարգն են վերը գրած Բ. ու Գ. նամակները: Ասոնք ալ լմըննալէն ետքը կու գան:

Դ. Խնդիր կամ աղաչանք ընելու նամակները, ինչպէս են վերը գրած Գ. — Է. նամակները: Ասոնց մէջ տրուած տեղեկութիւնները այլեւայլ տեսակ բաներու վրայ կրնան ըլլալ, ինչպէս ըսենք, վէճերու, յանձնարարութիւններու, որոշմունքներու, անոնք կատարելու, յանձնարարութեամբ գնելու, ծախելու, եւ ուրիշ ասոնց նման գործքերու վրայ: Աս կարգին տակը կ'երթան նաեւ:

Ե. Ազգարարութեան թղթերը (lettre d'avis), որոնք ըստ մեծի մասին փոխանակագրի վերաբերեալ գործքերու մէջ կը գործածուին, ու հասարակօրէն շատ համառօտ կ'ըլլան, ինչպէս

Պ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ. Ի Թրեւս
Վիէննա, 30 Սեպտեմբերի 1848.

Աս թղթովս կը ծանուցանեմ Ձեզի, որ Ձեր վրայ ըստ հրամանի Պ. Համազասպեանցին

300 արծաթ ֆիօրիննոց, թուականէս շորս շարժութեամբ վճարելի փոխանակագիր մը քաշելու համարձակեցայ, ու կը խնդրեմ որ անիկայ ընդունիք, ու աս գումարը իմ հաշուիս գրէք:

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Սարգիս Թաթուլեանց.

Թէ որ փոխանակագրին մէջ «ըստ ազգարարութեան», խօսքը գրուած չէ, ան ատեն աս ազգարարութեան թղթի ալ հարկաւորութիւն չկայ:

Զ. Աւելորչութեան թղթեր, որոնց մէջ ապրանքներուն խրկուիլը, արկղներուն նշանը, թիւը ապրանքը տանող կառապանին կամ նաւապետին անունը, պայմանեալ տանողէքը, ապրանքը տեղը հասցընելու ժամանակին պայմանը, ծախքերը, մաքսերը, աղէկ վիճակի մէջ յանձնելուն պայմանները, վնասին հատուցման պայմանը, եւ այլն կը գրուի:

Է. Աւելին բայց ամենէն յաճախ գործածուած առեւտրական նամակն է փոխանակագրի գործքերուն վրայ եղած թղթակցութիւնը. բայց աս տեսակ նամակները իրենց ձեւոյն ու ներքին պահանջուած պայմաններուն կողմանէ առջիններէն քիչ տարբերութիւն ունին:

Աս նամակներու առջին շորս տեսակներուն հոս տեղս օրինակ դնելը, կարծեսք թէ աւելորդ բան մը չսեպուիր:

Օրինակ առաջին տեսակին, որ է Շրջաբերական: Աճառականին մէկը իր առուտուրի բարեկամներուն

իրեն առուտուրի գործքը՝ իր տղուն ու իր եղբորորդւոյն յանձնելը կ'իմացընէ, ու անոնցմէ կը խնդրէ որ անոնց հետ առուտուրնին շարունակեն:

Պ. Սարգիս Գասպարեան, ի Զմիւռնիա.

Կոստանդինուպոլիս, 28 Օգոստոսի 1848.

Իմ ծերութիւնս ու անոր հետ մէկտեղ կապակցեալ տկարութիւնս ինձի ալ անկարելի կ'ընեն առուտուրի գործքերս ինչպէս որ պէտք է նէ, զգուշութեամբ ու փութով կատարելու. եւ որովհետեւ ես երկայնժամանակեայ աշխատութենէս ետքը քիչ մ'ալ հանգչելու կը փութամ, անոր համար հիմա առուտուրէն քաշուելով, բոլոր գործքերս յանձնեցի իմ Յակոբ որդւոյս ու Վարդան եղբորորդւոյս: Արդէն գիտէք որ Յակոբը երեք տարիէ ի վեր իմ քովս հաւատարմութեամբ ու փութով ինձի օգնած է, ու աս ժամանակիս մէջ իզմէ հոգաբարձութիւն (procura) ունենալով՝ թղթերու ու փոխանակագրերու ինքը կը ստորագրէր: Ասոնք երկուքն ալ մէկտեղ Յ. Վ. Բաղարատեանց անուամբ աս առուտուրը մինչեւ հիմա եղածին պէս պիտ'որ յառաջ տանին:

Անոր համար կը խնդրեմ Ձեզմէ, որ նոյն վստահութիւնն ու նոյն յանձնարարութիւնները, որոնցմով երկայն ատենէ ի վեր զիս պատուեցիք, իմ որդիէս ու անոր գործակիցէն պակաս չընէք: Ապահով եղէք որ աս երկու առուտուրի ընկերները նոյն փութով միշտ Ձեր վստահութեանը համաձայն կը վարուին, ու Ձեր հրամանները աղէկ ու շուտով կատարելու կը նային:

Ասկէ ետքը զիս ալ միշտ Ձեր անկեղծ բարեկամը համարեցէք, թէպէտեւ իրարու հետ այսչափ երկայն ատենուան ունեցած գործքի կապերնիս կը դադրի: Ձեր մինչեւ հիմա ինձի ցուցուցած բարեկամութեան շնորհակալ ըլլալով, կը խնդրեմ Ձեզմէ, որ իմ մշատեւ բարեկամութեանս վրայ ապահով ըլլաք:

Ձեր ազնուութեանը

Ն. Ծ. Պօղոս Բաղարատեանց:

Արկու նոր գործակիցները իրենց հօրը բարեկամներուն շրջաբերական թուղթ կը հանեն :

Պ. Սարգիս Գասպարեան, ի Զմիւռնիա .

Կոստանդինուպոլիս, 28 Օգոստոսի 1848.

Մեր սիրելի հօրը գրութենէն, որն որ աս թղթիս մէջ դրած ենք, կ'իմանաք որ բոլոր իր առուտուրը մեզի յանձնած է :

Անոր համար երկուքնիս մէկտեղ մեր հօրը խնդիրքը կը կրկնենք, որ Հրամանքնիդ նոյն վստահութիւնը մեզի ցուցնէք, ու նոյն բարեկամական գործքերով զմեզ պատուէք, որոնցմով միշտ մեր հօրը հետ վարուած էք : Մենք ասոր վրայ զՁեզ կ'ապահովցնենք, որ ձեռքերնէս եկածին չափ աշխատելով, առանձին եռանդեամբ մը Ձեր հրամանները՝ Ձեզի օգտակարագոյն կերպով կատարելու կը նայինք :

Աս թղթիս մէջ կը գնենք նաեւ մեր ապրանքներուն գներուն նոր շինուած ցանկը, ու կ'աղաչենք որ մեր ստորագրութեանը միտ գնէք :

Ն . Ծ . Յ . Վ . Բագարաատեանց :

Օրինակ երկրորդ տեսակին, որ է Հրաւիրանաց թուղթ : Արիտասարդ գրավաճառ մը իրեն ծանօթ ուսումնականներուն կը յանձնէ, որ իրմէ դիրք գնեն :

Ազնիւ ու պատուական Պարոն .

Կոստանդինուպոլիս, 28 Օգոստոսի 1848.

Ար խնդրեմ Հրամանոցմէ, որ իմ նոր հաստատած գրավաճառութեանս խանութը Ձեզի յանձնելու համար ձակեղուս ներէք : Հրամանքնիդ Ձեր գրաւորական բաներու մէջ ունեցած անուամբը՝ որն որ առհասարակ ամենուն ծանօթ է, կրնաք գիւրաւ իմ գրավաճառութեան խանութիս մեծ յառաջացում պատճառել : Անոր համար կ'աղաչեմ Ձեզի, որ աս Ձեր խնամքը վրայէս պակաս չընէք :

Արնամ Հրամանքնիդ համոզել, որ ես ամէն ատեն Ձեր դրքերը աժան գնով տպել կու տամ, եւ թէ

որ Հրամանքնիդ պատրաստ ձեռագիր մը ունիք նէ,
կը խնդրեմ որ շափաւոր վարձքով մը ինծի տաք: Տպա-
գրութեան աղուորութեանը, աժան գնով ծախելու,
ու հարկաւոր ծանուցումներն ընելու համար ոչ ծախքի
եւ ոչ ալ աշխատութեան կը խնայեմ, որպէս զի Հրա-
մանոցը մտացը գեղեցիկ ծնունդը հասարակութեան
հրատարակուի:

Սակեւ աս առթով իմ գրավաճառութեանս գրքե-
րուն ցանկն ալ Հրամանոցը կը խաւրեմ, խնդրելով որ
հարկաւոր եղածները ընտրէք. ու գնելու համար ասով
Չեզի գիւրութիւն մը կրնամ ընել, որ հարիւրին
16 գնէն վար կ'առնում, ուր որ մէկալ խանութները
հարիւրին 10 միայն վար կ'առնուն. եւ ասով կը յու-
սամ որ Հրամանքնիդ շատ գրքեր մէկէն կ'որոշէք:

Հրամանոցը հրամանին սպասելով, կը մնամ
Չեր ազնուութեանը

Ն. Ծ. Ա. Ա.

Վինեվաճառին մէկը իշխանի մը մառանապետին
իրմէ գինի գնելու յանձնարարութիւն կ'ընէ:

Ազնիւ Պարոն.

Բաղդով Գողթան գաւառին գինիէն քիչ մը
ձեռքս անցաւ, անանկ գինի մը, որուն ոչ Ախպրոսինը
եւ ոչ ալ ուրիշ գինի մը կրնայ հաւասարիլ, եւ ասի-
կայ ինչպէս կը կարծեմ, բարձրապատիւ Բաղրատու-
նեանց իշխանին գինետունը միայն կը վայլէ: Բողորը
մէկտեղ երէք մար է, կամ թէ 120 հոխանոց շիշ-
ու ամէն մէկ շիշը քսան զուրուշ կ'արժէ: Վարծեմ
որ աս գինը Չեզի շատ աժան պիտ'որ երեւայ, ուստի
եւ կը յուսամ որ առնելու չէք գանդաղիր: Ասկից
փորձի համար պղտիկ շիշով մը Հրամանոցը կը խաւրեմ,
եւ թէ որ հաճելու ըլլաք, շուտով ինծի իմացուցէք:

Չեր Ազնուութեանը

Ն. Ծ. Ա. Ա.

Օրինակ երրորդ տեսակին: Չուխայի յանձնարարութիւն մը:

Պ. Գէորգ Ապտեան, ի Վիէննա

Կոստանդնուպոլիս, 19 Օգոստոսի 1848.

Իմ բարեկամներուս մէկուն ինձի բրած յանձնարարութեան պատճառաւ, որմէ նաեւ Հրամանոցը առնունք եւ ստորագրութիւնը սորվեցայ, կը խնդրեմ Ձեզմէ, որ աս թղթիս մէջ օրինակի համար դրուած Չուխայէն 20 պուրակ ($7\text{օ}^{\frac{1}{2}}$) գնէք ու խաւրէք:

Ձեր հմտութեանը նախատինք բրած կը կարծեմ, թէ որ վեր ի վերոյ մ'ալ յիշեցընեմ, որ ուզածիս պէս գտնէք ու խաւրէք: Միայն այսչափ դրուցել կ'ուզեմ, որ աս ընդունելու ապրանքիս աղէկութենէն կամ պակասաւորութենէն կախում ունի իմ յանձնարարութիւններս շարունակելս:

Ասոր դիմացը վճարելի գումարը՝ կրնաք իմ հաշուիս, Պ. Խաչիկ Սրապիոնեանց ու Ընկ. վրայ ի թրեւտ փոխանակագիր քաշել ու ապրանքն ալ իրենց խաւրել, որուն արդէն իրենք ալ տեղեակ են:

Աղաչեմ որ որչափ կարելի է աս յանձնարարութիւնս շուտով կատարէք:

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Սահակ Ամասեան.

Պարտիան:

Պ. Սահակ Ամասեան, ի Կոստանդինուպոլիս.

Վիէննա, 1 Սեպտեմբերի 1848.

Արչափ որ շնորհակալ ըլլալու եմ ան Ձեր բարեկամին, որ Ձեզի ինձի հետ ճանչուորութիւն ընելու պատճառ եղաւ, այնչափ ալ աւելի պարտական եմ իր յանձնարարութիւնը աղէկ կատարելու:

Ար յուսամ որ յանձնած Չուխանիդ առ առաւելն այսօրուրնէ ութը օրէն, Ձեր հրամանին նայելով՝ դէպ ի թրեւտ ճամբայ կը հանեմ Պ. Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկ. ուղղելով: Ասկէ ետքը զատ նամակով մը

Թէ ասոր եւ Թէ արժէքին գումարին վրայ մանրա-
մասն կը գրեմ, ու մեծ յոյս ունիմ, որ Հրամանքնիդ
իմ վրաս ունեցած վստահութիւններնուդ մէջ չէք
խաբուիր, հապա մանաւանդ այլեւայլ յանձնարարու-
թիւններ ընելու յարմար կը գտնէք:

Չեր Ազնուութեանը

Ն. Ծ. Գէորդ Ապտեան:

Ուրիշ օրինակ մ'ալ: Նոր սկսող վաճառական
մը ապրանքներ բերել կու տայ, ու միանգամայն իր
հաստատութիւնն ու ապահովութիւնը կը ցուցնէ:

Պ. Գրիգոր Սիսակեան, ի Թրեւտ.

Առատանդինուպոլիս, 4 Սեպտեմբերի 1848.

Հատ ժամանակ չէ, որ իմ աներոջս խանութը
գնելով վրաս առի:

Անիկա քանի մը տարի յառաջ իրեն ապրանքը Պ.
Խաչիկ Սրապիոնեանց եւ Ընկերութենէն կը գնէր.
Բայց որովհետեւ աս Պարոնները խիստ բարձր գին կը
պահանջեն, անոր համար փոփոխութիւն ընելու պար-
տաւորեցայ, ու ասկէ ետքը աւելի աժան գնով ու շուտ
ապրանք բերել տալու համար Չեր գործունէութեանը
պիտ'որ վստահանամ:

Աւելի հանգիստ սրտով ինձի հետ գործ սկսելու
համար կրնաք իմ մօրեղբորմէս Պ. Մարկոսէն ու Պ.
Անտոն Առատանդեանէն, որ Թրեւտ կը բնակին, վրաս
տեղեկութիւն աւնուլ: Ամէն անգամ ապրանքները
ընդունելէս կամ անմիջապէս ետքը եւ կամ կարճ
պայմանաժամով վճարմունքս կը կատարեմ:

Աս անգամ կ'աղաչեմ Չեղի որ վարը գրուած
ապրանքները ինձի խաւրէիք. որոնց գնոյն գումարը
ապրանքը ընդունելէս ետքը կը վճարեմ:

Թէ որ աժան գնով առուտուր ընելու ըլլաք, ան
ատենը ամիսը մէյ մը Չեղի հետ գործք կ'ունենամ:
Ար մնամ

Չեր Ազնուութեանը

Ն. Ծ. Մեսրոպ Արմայիսեան:

Պատահական:

Պ. Մեսրոպ Արմայիսեան, ի Կոստանդնուպոլիս.

Թրեւս, 24 Սեպտեմբերի 1848.

Թէ որ աժան գինն ու յանձնարարութեան շուտով կատարուի Ձեր բարեկամութիւնը ստանալու միջոց մըն են, ան ատեն ապահով եմ, որ աս Ձեր ազնիւ բարեկամութիւնը չեմ կորսընցընէր:

Մեծ ուրախութեամբ ու սրտի հաճութեամբ Լոյսի ընկերութեան Մահմուտիէ շոգենաւով, որն որ Սեպտեմբերի 21ին ասկից ելաւ, Ձեր խնդրած ապրանքները ձամբայ հանեցի, որոնց գինը կ'աղաչեմ ինձի անցուցէք: Ստուգիւ շատ կ'ուրախանամ, թէ որ շատ անգամ առիթ ունենամ Ձեր հրամանները կատարելով ցուցընելու թէ եմ

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծ. Գրիգոր Սիսակեան.

Օրինակ չորրորդ տեսակին որ է Աղաչանաց թուղթ: Արկու առուտուրի ընկերներ կամ բարեկամներ իրարմէ կը բաժնուին:

Պ. Աբրահամ Արոյրեան ի Մարսիլիա.

Զմիւռնիա, 30 Հոկտեմբերի 1848.

Աս թղթովս՝ Ձեզի իբրեւ մեծարոյ բարեկամի պարտք կը համարինք ծանուցանելու որ մենք՝ իրարու հետ մինչեւ հիմա ունեցած առուտուրի ընկերութիւննիս բարեկամաբար դադրեցուցինք, ու ասկէ ետքը ամէն մէկերնիս զատ զատ առուտուր պիտ'որ ընենք:

Բայց ասոր վրայ երկուքնիս ալ միաբանեցանք որ Անտոն Հայկեանը գինիի առուտուր ընէ, իսկ Յակոբ Մեսրոպեանը ցորենի ու բամբակի առուտուրը յառաջ տանի:

Ամէն մէկերնիս իր մասին համար կը բաղձանք,

որ ասկէ ետքը Հրամանոցը իր ծառայութիւնը կարող
ըլլայ մատուցանել, ու կ'աղաչենք որ Ձեր յանձնա-
րարութիւնները մեզմէ պահաս չընէք:

Ձեր Ազնուութեանը

Ն. Ծառայք

Անտոն Հայկեան եւ Յակոբ Մեսրոպեան:

Ես ասկէ ետքը պիտ'որ ստորագրեմ

Անտոն Հայկեան:

Ես ալ ասկէ ետքը ասանկ պիտ'որ ստորագրեմ

Յակոբ Մեսրոպեան:

Աւրիշ օրինակ մը: Առուտուրի տան մը վրայ ծա-
նուցում խնդրել:

Պ. Յուսիկ Արամեան, ի Լոնտոն.

Առստանդնուպօլիս, 2 Հոկտեմբերի 1848

Քանի մը օր է որ Ներսէս Սահակեան եւ Գարե-
գին Աարդանեան իրենք զիրենք ինձի առուտուրի բա-
րեկամ ընդունելու առաջարկեցին, ու զիս ապահով-
ցրնելու համար իրենց վկայականը ցուցուցին: Բայց
որովհետեւ աս Պարոնները ինձի ամենեւին ծանօթ չեն,
ու անստուգութեամբ մէկու մը հետ գործք տեսնել
չեմ ուզեր, անոր համար կ'աղաչեմ Ձեզի, որ աս մար-
դիկներուն թէ բարոյական եւ թէ դրամական վիճակին
վրայ ինձի ստոյգ տեղեկութիւն մը տաք: Ապահո-
վութեամբ կրնաք իմ վրաս վստահ ըլլալ, որ թէ որ
Ձեր անոնց վրայ ունեցած կարծիքն ու դատաստանը
աղէկ չելէր, մէկու մը ամենեւե՛ն չեմ յայտներ. ինչ-
պէս որ ես ալ Ձեր վրայ բոլորովին վստահ եմ, որ
աս իմ խնդիրս բարեկամաբար կ'ընդունիք, ու
հետո սրտի բացութեամբ եւ անկեղծութեամբ կը
վարուիք:

Ձեր հրամանները կատարելու ամէն առանձն պատ-
րաստ եմ, ու կը ծանշնամ զիս,

Ձեր ազնուութեանը

Ն. Ծ. Միքայէլ կարապետեան:

Պատասխան :

Պ. Միքայէլ Կարապետեան , ի Կոստանդնուպոլիս
Լոնտոն , 29 Հոկտեմբերի 1848 :

Չեր աս ամսոյս Չին գրած նամակովը՝ Ներսէս Սահակեան եւ Գարեգին Արղանեան Պարոններուն վիճակին վրայ իմ դատաստանս ու կարծիքս կը հարցընէք : Աս զիրենք բաւական ծանշցեր եմ , ու հիմա ալ աս Պարոնները պատուաւոր , հաստատուն ու գործունեայ վաճառականներ գիտեմ : Հոստեղս ընդհանրապէս աս համբաւն ունին , անոր համար ալ չեմ վախնար ըսելու թէ զՉեզ վտանգի մէջ չէք ձգեր , թէ որ իրենց հետ գործքի սկսելու ըլլաք :

Հատ ուրախ եմ , որ աս տեղեկութիւնը կըրցայ Չեզի տալ . ասիկա առիթ մը կ'առնում նորէն Չեզի ծանուցանելու , որ Չեր ինծի ամէն ատեն ըրած ծառայութեանցը վրայ շատ գոհ եմ :

Չեր Ազնուութեանը

Ն . Ծ . Յուսիկ Արամեան

Նամագրութեան վրայ այսչափ գրածնիս բաւական սեպելով , հիմա կ'անցնինք առեւտրական ուրիշ գրուածներու վրայ , որոնք վաճառականին ամէն որ հարկաւոր կ'ըլլան :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ

ԱՌԵՒՏՐԵԱԿԱՆ ՈՒՐԻՇ ԳՐՈՒԱԾՆԵՐՈՒ ՎՐԱՅ

134. ԱՌԵՒՏՐԵԱԿԱՆ գրուածներու մէջ ամենէն աւելի գործածականներն ասոնք են , Վաճառագիր , Ծանուցումն , Ընկալագիր , Ապրանքներու հաշիւ , Ընթացիկ հաշիւ ու Ընթացք գնոց , Թուղթ պարտականութեան :

Ա . Վաճառագիր : Ասիկա ինչպէս որ վերը 90երորդ համարին մէջ ըսած ենք , ապրանքը տեղէ մը կամ ցամաքով եւ կամ գետով ուրիշ տեղ խաւրելու համար ուղեւորողին ու ապրանքը տանողին մէջ եղած գաշնագրութիւնն է : Ասոր մէջը գրուելիքները

արդէն նոյն համարին մէջը ըսած ենք : Քսածնիս
աւելի եւս բացայայտելու համար առանձին օրինակ մը
դնենք :

Թրեւտ, 5 Հոկտեմբերի 1848.

Մարդին լայ կառապանին ձեռքովը կը խաւրեմ
Չեզի վարը գրուած վաճառքները աղէկ վիճակի մէջ :
Գուք ալ՝ ասոնք Չեզի 12 օրուան մէջ Չեր ձեռքը յան-
ձնուելէն ետքը՝ կենդինարին երկու ֆիտրին արծաթ
վճարեցէք, ու տուած տեղեկութեանս նայելով
տրամադրեցէք :

Խ . Ծ . Ղեւոնդ Մամիկոնեան :

Նշան եւ Թիւ	Թիւ	Բեռ	Նիւթը	Խառն	
				կենդ .	հոխայ
Հ . Հ . Թ . 12	1	Քուրձ	խահուէ . . .	1	30
Բ . Հ . Թ . 13	1	Տակառ	Քթախոտ . . .	1	25
Գ . Հ . Թ . 14	1	Տակառ	Պաղլեղ . . .	1	10
Դ . Հ . Թ . 16	1	Քուրձ	Ներկի փայտ .	1	32
				6	9

Ղեց կենդինար ($\frac{1}{2}$ -նդ-ար) եւ ինը հոխայ բեռան
վրայ դաշնադրեալ :

Ասոնք վաճառագրին մէջի կողմը գրուելու բաներն
են : Իսկ դրսի կողմը ան մարդուն անունը կը գրուի,
որուն որ ապրանքը պիտ'որ յանձնուի, այսպէս

Առ Պ . Գրիգոր Արսենեան

ի Ղիէննա

Վաճառագիրը աս ձեւով ալ կրնայ գրուիլ :

Թրեւտ, 5 Հոկտեմբերի 1848.

Մարդին լայ կառապանին ձեռքովը հոսկից կը
խաւրեմ Չեզի, կենդինարին երկու ֆիտրին ետեւէն
եկած նշանով

Հ . Մ . Թիւ 4.

1 հակ բամբակ, $4\frac{1}{2}$ այս ինքն շորս ու կէս
կենդինար ծանրութեամբ :

Ասիկա աղէկ վիճակի մէջ, ու ինչպէս որ պէտք է նէ՝
Չեզի յանձնուելէն ետքը, վճարեցէք ինը ֆիորին
արծաթ տանողէք, ու զանոնք Չեզի տուած տեղե-
կութեանս նայելով տրամադրեցէք

Խ. Ծ. Ղեւոնդ Մամիկոնեան :

Բ. Ծանուցում (Connaissement) : Ասոր ինչ
ըլլալը 89երորդ համարին մէջ ըսած ենք : Աճառա-
գիրը, ինչպէս որ նոյն տեղը ըսուած է, ապրանքը
ուղեւորողը կը շինէ, բայց ծանուցումը ապրանքը տա-
նող նաւապետը կը շինէ կամ գոնէ կը ստորագրէ :
Ծանուցման պարունակած բուն էական մասերը՝ վա-
ճառագրին հետ նոյն են. սովորաբար ասկից երեք
օրինակ կը շինուի, մէկը ապրանքը ուղեւորողին, մե-
կալը ապրանքը ընդունողին, իսկ երրորդը նաւապետին
համար : Ամէն մէկ օրինակին մէջ օրինակներուն թիւը
ճիշդ պիտ'որ գրուած ըլլայ, ու ամէն օրինակները
իրարու համաձայն պիտ'որ ըլլան : Ապրանքը ընդու-
նողին համար որոշուած օրինակը ուղեւորողը կ'առնու
ու ընդունողին կը խաւրէ, անանկ որ ապրանքը ըն-
դունելու ատեն կարող ըլլայ ձեռքն ունենալ : Աս
ծանուցումներն ալ հասարակօրէն տպուած կ'ըլլան,
ու փոփոխութեան տակ ինկած տեղերը բաց թող
կը տրուին, որ ինչ որ հարկաւոր է, մէջը գրուի, զոր
օրինակ են անունները, թիւերը, նշանները եւ այլն :
Հոստեղս ծանուցման ձեւն ալ պէտք է որ գնենք :

Չեւ ծանուցման .

Աս Մարկոս Միրզայեան Զուղայեցի, նաւապետ
իմ սեպհական Ղահագն ըսուած նաւիս, որն որ հիմա
Ամստերտամ կը կենայ, ու Աստուծոյ շնորհելովը
առջի յաջողակ հովով դէպ ի Ա. Ա. ճամբայ պիտ'որ
ելլէ, աս թղթովս կը վկայեմ, որ Պ. Եղիազար
Մմբատեանէն, իմ վերոյիշեալ նաւիս մէջ չոր ու
աղէկ պահուած վիճակի մէջ ետեւէն եկած ապրանք-
ներն առի,

15 տակառ խաճուէ, մաքուր 10,000 լիտր ծանրութեամբ

Ա. Ս. Թ. 105 — 109 նշանով,

որն որ կը խոստանամ, որ ինչ վիճակի մէջ ընդունած եմ, Ա. Ա. Հասնելուս պէս, այնպէս Պ. Մանուէլ Թադիկինն ձեռքը յանձնեմ, ու ասոր 10,000 լիտր ծանրութեան համար՝ չորս նաւու բեռ (հակ) հաշուելով, ամէն մէկ բեռան 20 ֆիտրին Հողանտայոց առնում, հանդերձ մաքսիւ, ծովական փնասու եւ այլն, ինչպէս որ սովորութիւն է, ու ծովային օրէնքը կը շնորհէ:

Արպէս զի աս իմ խոստումս ժամանակին կատարուի, զիս կը պարտաւորեմ, այլ նաեւ իմ նաւս ու բոլոր անոր կարասիքը ըստ կարգի նաւուղղութեան ու ծովային իրաւանց՝ աս թղթովս ապահովութեան համար դրած եմ:

Աս տեղեկութեան համար, առաջիկայ ծանուցումէս երեք օրինակ շինուած է, որոնք ամէնն ալ ես իմ ձեռքովս շինած եմ, ու աս երեքն ալ մէկի տեղ միայն կ'արժեն, անանկ որ անոնցմէ մէկը կատարուած ըլլայ նէ, անով մէկալ մնացած երկուքն ալ կատարուած կը սեպուին:

Ամստերտամ, 25 Յուլիսի 1848.

Մարկոս Միրզայեան ջուղայեցի
նաւապետ:

Հատ անգամ կը պատահի որ խրկուելու ապրանքը շատ ըլլալով, բոլոր նաւը կամ նաւին մեծ մասը վարձքով բռնելու հարկ կ'ըլլայ: Ասանկ գէպքի մէջ նաւապետին կամ նաւին տիրոջը եւ ուղեւորողին մէջ եղած դաշինքը՝ նաւակալութեան պայման (Charte partie) կ'ըսուի: Ասոր մէջ կը գրուի հասարակօրէն նաւին անունը, մեծութիւնը կամ բեռնաւորելու կարողութիւնը, նաւը բռնողին, նաւին տիրոջը ու նաւապետին անունը, բեռը առնելուն ու հասցընելուն կամ հանելուն ժամանակն ու տեղը, նաւին մէջ լեցուած

ապրանքներուն ճիշդ ցանկը, պայմանեալ տանողէքը ու բոլոր մասնաւոր պայմանները :

Գ. Ընկալագիր: Աս տեսակ թղթերը գրով յայտարարութիւններ են, որով վաճառականը կը յայտնէ, որ այսչափ ստակ եւ կամ ուրիշ որ ինչ եւ իցէ բան մը իր կամ ուրիշ երրորդի մը հաշուին ընդունած է: Ասոնց մէջ գրուելու էական մասունքներն ասոնք են. Ա. Տուողին անունը, Բ. Ընդունողին անունը, Գ. Տրուած բանը, Դ. Անիկայ որուն համար որ տրուած է, Ե. Տրուած տեղն ու ժամանակը, Զ. Պատճառը՝ որուն համար տրուած է: Ընկալագիրներն ալ հասարակօրէն տպուած կ'ըլլան, ու ան տեղուանքը՝ ուր որ դէպքին նայելով կրնան փոխուիլ, բայց թողուած են, որ ետքէն գրուին: Աս տեսակ թղթերուն օրինակ ըլլան ետեւէն եկած ընկալագիրները:

1. Ընկալագիր 150 սղերլինի, որն որ պարտապան մը իր պարտատէրին վճարեր է:

Այսօր Արամեան Պ. Յուսիկէն առձեռնպատրաստ գրամով ընկալայ շնորհակալութեամբ 150 (կ'ըսեմ հարիւր յիսուն) սղերլին, իմ անկից ունեցած առնելիքիս տեղ. աս թուղթս ըլլայ վկայ:

Անտոն, 30 Յուլիսի 1848.

Յովհաննէս Արմենակեան:

2. Պարտքէն մաս մը վճարելու ընկալագիր:

Աս թղթովս կը վկայեմ, որ Ռշտունեան Պ. Ներսէսէն իրեն հոս գտնուած ատենը, ի հաշիւ իր ինծի ունեցած տալիքին, առձեռնպատրաստ գրամով 10,000 (կ'ըսեմ տասը հազար) ղուրուշ ընկալայ մեծաւ շնորհակալութեամբ:

Կոստանդնուպոլիս, 3 Յուլիսի 1848.

Անտոն Մարկոսեան:

Թէ որ ընկալագիրը առուտուրի գործքէն զատ գործքի մը համար է, ան ատեն ասանկ կը գրուի Ներքոյ գրեալս կը վկայեմ, որ եւ այլն: — Թէ որ ընկալագիր մը կրկին օրինակ պիտ'որ ըլլայ, բայց մէկի

տեղ միայն պիտ'որ արժէ, զոր օրինակ ըսեմ ընկալա-
գիրը ընդունողը մէկ հասար իրեն քովը պիտ'որ պահէ,
իսկ մէկալը ուրիշ երրորդի մը պիտ'որ խաւրէ, որ
ցուցընէ թէ վճարմունքը ստուգիւ իրօք եղած է, ան
ատեն պէտք է որ ամէն մէկ օրինակին մէջ նշանակուի,
որ երկուքն ալ մէկ կ'արժեն, որ շըլայ թէ փնաս մը
պատահի, ու մանաւանդ երբ որ թուականը շարու-
թեամբ փոխուելու ըլլայ, կարող ըլլայ ցուցուիլ թէ
ստակը կրկին վճարուած է:

3. Սուրհանդակի մը՝ մէկ վաճառականի տնէն դըր-
սեցի մարդու մը համար առած ստակին ընկալագիրը:

Աս թղթովս կը ծանուցանեմ, որ հաստեղս Մա-
նածիհրեան Պ. Գէորգէն, ի յանձնարարութիւն եւ
ի հաշիւ Սիսակեան Պ. Վարդանայ ի կոտանդի-
նուպոլիս ընկալայ երկու հարիւր ոսկի կայսերական
արծուեկիր (400-ըն-ըն). կը վկայեմ կրկին՝ բայց մէկ
հասի արժէք ունեցող ընկալագրով:

Վիեննա, 3 Յուլիսի 1848.

Աբրահամ Ահանեան:

Գ. Ապրանքներու հաշիւ: Ապրանքներու հաշիւ
ըսելով կ'իմացուի գնուած կամ ծախուած, կամ նաեւ
դուրս խաւրուած ապրանքներուն հաշիւը, որն որ ա-
նոր կը տրուի, որուն համար որ ապրանքները գնուած
կամ ծախուած են, եւ կամ որուն որ ծախուած են:
Ասկից կը հետեւի, որ ապրանքներու հաշիւը՝ ապ-
րանքները ընդունողին եւ կամ տիրոջը ճիշդ պիտ'որ
ցուցընէ, թէ ինչ, որչափ, ինչ գնով կամ որչափ
ծախքով ապրանք մը գնուած, ծախուած եւ կամ
ուղեւորուած է: Ասոր վրայ կ'աւելցուի նաեւ ապրան-
քին ուղեւորելուն կերպը, տանողին անունը, ուղեւո-
րութեան պայմանները, ու ուղեւորողին անունը:
Անոր համար ապրանքներու հաշուին մէջ գտնուի
պիտ'որ Ա. Ապրանքներուն անունները, անոնց խառն
կշիւը, ապրան, ու մաքուր կշիւը (ծանրութիւնը).
Բ. Գներն ու գներուն գումարը. Գ. Անոնց համար

Եղած ծախքերը (ամանները, միջնավաճառներուն վարձքը, յանձնառողչէքը, մաքսերը, ապահովցրնելու համար տրուած վարձքը, տանողչէքը եւ այլն. Գ. Բոլոր գումարը՝ ստակին տեսակին ալ նշանակելով, ու անոր ուրիշ ստակներու հետ ունեցած համեմատութիւնը, եւ նաեւ վճարման պայմանները (վճարելու կերպը). Ե. Յանձնուելուն կերպը. Զ. Յանձնողին անունը. Է. Պայմանեալ տանողչէքը, ամէն ծախքերովը մէկտեղ. Ը. Յանձնուելուն ժամանակը. Թ. Յանձնուելու նիւթերը (արկղները, հակերը եւ այլն) իրենց թուովը, նշանովն ու կշռովը. Ժ. Յանձնուելու ու ընդունողին տեղը. ԺԱ. Եղած դաշնագրութեան ժամանակն ու տեղը:

Օրինակ.

Պ. Ա. Ա. Ի Կոստանդնուպոլիս, Ձեր հաշուին խաւրուեցաւ.

		արժ. ֆ.	դարան.
ՍԱՐ. ԹԱԹ.	Ձեր խնդրածին նայելով Գանուբի շոգենաւի ընկերութեան ձեռքով		
	Երեք բեռ չուխայ թիւ 1, 2, 3, կենդինարին 3 արծ.		
	Ֆիորին վճարելով		
	25 պրակ (150 ֆ) չուխայ,		
	25 " " "		
	25 " " "		
	75 պրակ չուխայ այլեւայլ պրակը վրայէ վրայ 80 արծ. ֆիորինով . . .	6000	—
	Վար առնուած առհարիր 3	180	—
	Ար մնայ	5820	—
	Ծրարելու, կապելու եւ այլն	15	—
Յանձնառողչէք 2 առհարիր	116	12	
Գումար որն որ հաճեցէք (վճարելու կամ մեր հաշուին անցընելու.)	5951	12	

Վիէննա, 20 Օգոստ. 1848.

Սարգիս Թաթուլեանց:

Թէ որ ապրանքներու հաշիւը տուողը՝ վաճառականի վարձուորներէն մէկը եւ կամ յանձնառուն է, ան ատեն Վաճառահամար, Վաճառահաշիւ (Facture) կ'ըսուի, որուն տակը յանձնառուն իրեն յանձնառուչէքն ալ կը գնէ ու կը պահանջէ:

Ե. Բնթացիկ հաշիւ (compte courant) կամ Հաշուի քաղուած: Աս անուամբ կ'իմացուին ան հաշիւները, որոնք վաճառականները կամ սեղանաւորները իրարու եւ կամ առուտուրի բարեկամներու հետ ունեցած յարաբերութիւննին ցուցնելու համար իրենց հաշուեգիրքէն վեց ամիսը եւ կամ տարին մէյ մը կը քաղեն կը հանեն, ու իրարու կը խաւրեն, որով պարտապանը որչափ վճարելիք ունենալը կ'իմանայ: Ասոնց մէջը ապրանքներն ու փոխանակագրերը զատ զատ չեն գրուիր, հապա համառօտ: Ասոնց ձեւը՝ հաշուեգիրքին մէջ եղածին հետ նոյն է, աջ կողմը պարտական եղած ստակները կը գրուին, իսկ ձախ կողմը՝ եղած վճարմունքները. երկու կողմն ալ գումար կ'ըլլուի, ու վճարուածներուն գումարը՝ պարտական եղած ստակներուն գումարէն հանելով, ինչ որ կը մնայ՝ առնելիքն է, կամ որ նոյն է, պարտապանին՝ պարտատէրին կամ համարում տուողին ունեցած պարտքն է: Սեղանաւորներուն տուած բնթացիկ հաշուին մէջ նաեւ ան ստակներուն տոկոսիքներն ալ կը հաշուին:

Օրինակ

Պարտական է

Պ. Եղիշէ Խորենեան, ի Կասանդճուպոլիս

Ար պահանջէ

1848			դուր .	փ.	1848	դուր .	փ.		
Թանաք	10	Այլեւայլ արքանքներու հա- մար	4440	36	Փերբուս	3	2եր Քրեստ բաշած փոխա- նակագրով	3500	—
Փերբուս	6	Չուխայի համար	3100	—	Մայի	10	Իմ բարչած փոխանակագրովս ըստ հրամանի Խ. Բագրատ	2800	
Ադրիլ	18	Լեզակի համար	5140	40	Ադրիլ	14	Լիփսիա խրկած փոխանակա- գրին համար	3000	
Մայի	4	Այլեւայլ արքանքներու հա- մար	2500	10			Ի հաւատարութիւն ունիմ	5881	26
			<u>15181</u>	<u>26</u>			<u>15181</u>	<u>26</u>	
		Նոր հաշուին անցընելու հա- մար ունիմ առնելիք	5881	26					

Պիտեմոս, 3 Ետեմի 1848.

Գրքագոր Մուշեղեանց :

Սեղծեալ հաշիւ կ'ըսուի անիկա երբ որ վաճառականը հեռու տեղէ մը ապրանք բերել տալ կուզէ, բայց ըլլալու ծախքը, սովորութիւնները, կշռոյն կամ ոսկիին վրայ աւելի արուածը եւ այլն չգիտնալով՝ հստակաց յանձնառուէն կը խնդրէ որ իրեն բերել տալու ապրանքին վրայ հաշիւ մը խաւրէ: Ասիկա իր ձեռքը ունենալով՝ անկէ ետքը կ'ընայ իր հաշիւը ճիշդ ընել, ու բանին ձեռք տալու ըլլայ նէ՛ բերել կու տայ:

2. Ընթացիկ գին կամ գնոց ցանկ (prix courant, liste des prix) ըսելով կ'իմացուի ան ապրանքներուն ցանկը՝ որոնցմով վաճառականը առուտուր կ'ընէ, եւ կամ որն որ տարազագործները, գործատէրներն ու արուեստաւորները շինել կու տան, ու անով գործուածքնին վաճառականներուն կամ վաճառքնին գնել ուզողներուն կը ծանուցանեն: Աս տեսակ ցանկերը թէ տպուած, թէ քարի վրայ փորուած, եւ թէ միանգամայն ձեռք ալ գրուած կ'ընան ըլլալ:

Հասարակօրէն ապրանքներէն յառաջ, ան ամէն պայմանները կը գրուին, որոնցմով որ ապրանքները պիտ'որ ծախուին, եւ թէ վճարմունքը ինչ ստակով պիտ'որ ըլլայ, ինչ կշռով, ինչ կանգունով, եւ կամ թէ որ հեղուկ է նէ՛ ինչ չափով պիտ'որ չափուի: Հատ անգամ նաեւ ուրիշ տեղերուն ստակներուն համեմատութիւնն ալ կը գրուի:

Ասոնց մէջ սովորաբար աս բառերը կը գտնուին.

1. Ճամբու ծախքով, որ կը նշանակէ թէ ան տեղէն՝ ուր որ ապրանքին սակարկութիւնը եղած է, մինչեւ ապրանքին որոշուած տեղը եղած ճամբու ծախքը առնողին վրայ է: Թէ որ ասոր հակառակ առնողը ճամբու ծախք պիտ'որ չվճարէ նէ, Ազատ կամ Առանց տանողէքի կը գրուի, բայց յայտնի է որ աս դէպքիս մէջ ճամբու ծախքը ապրանքներուն գնոյն վրայ պիտ'որ զարնուած ըլլայ:

2. Ստակին տեսակը՝ որով որ վճարմունք պիտ'որ

ըլլայ, կը գրուի. «ղուրուշի վրայ», «դաշնագրութեան ստակով», եւ այլն:

3. (Արեք ամիս) ժամանակ, որով կ'իմացուի թէ առնուած ապրանքին արժէքին գումարը՝ առնուած օրէն սկսած երեք ամիս ետքը վճարելու է:

4. Իսկոյն, որ կը նշանակէ՝ որ առձեռն պատրաստ դրամով հասարակօրէն ապրանքը առնելէն ետքը պիտ'որ վճարուի:

5. Հարիւրին $1\frac{1}{2}$ շահաթող (որի-ն-դոյ) շնորհելով. որ քսել է, որ ով որ երեք ամիս ետքը վճարել չուզեր, հապա իսկոյն ստակը կու տայ, իր վճարելիքէն 100 զուրուշին $1\frac{1}{2}$ զուրուշ վար կ'առնուի:

6. Թէ որ գներու ընթացքին վրայ «առանց պարտաւորութեան», խօսքը գրուած է նէ, կը նշանակէ, որ ծախօղը գնոց ընթացքին մէջ գրուած գնով ծախելու չպարտաւորիր, ինչու որ գները երբեմն կ'ելլեն ու երբեմն ալ կ'իջնան:

7. Ազատ նաւով կամ կառքով՝ խօսքը կը նշանակէ որ գրուած գներով առանց ուրիշ ծախքի մը պիտ'որ գնողին յանձնուի:

8. Անցողական՝ բառը կը նշանակէ որ ապրանքներուն մաքսը դեռ վճարուած չէ, ու դեռ ապրանքներու մթերանոցը կեցած են, ու գնողը մաքսը պիտ'որ վճարէ: Այս թէ որ ասոր հակառակ մաքսը վճարուած է նէ, պատարեալ՝ բառը կը գրուի:

Է. Թուղթ պարտականութեան: Ասիկա գրով ծանուցում մըն է, որով պարտական մը՝ իր մէկէն (պարտատէրէն) այսչափ սարկի գումար առած ըլլալուն կը վկայէ, ու առանց երաշխաւորութեան կամ մասնաւոր երաշխաւորութեամբ մը ան ստակը սովորական գործածութեան նայելով հաստատուած տուկոսիքով ետ դարձրնելու ինքը զինքը կը պարտաւորէ: Ասիկց կը հետեւի որ պարտականութեան թղթին մէջ միշտ յառաջագոյն եղած դաշինք մը կ'ենթադրուի, ուստի եւ մէջը կը նշանակուին.

1. Փոխատուին անունն ու անոր բնակութեան տեղը :

2. Այնպէս փոխատուին անունն ու բնակութեան տեղը :

3. Արոշեալ փոխ տրուած գումարը ճիշդ իր թուովը, ստակին տեսակովը եւ այլն :

4. Այս դարձընելու խոստումը (որն որ արդէն բուն դաշանց էութենէն է) որոշեալ ժամանակովը, եւ կամ թէ որ փոխատուն կը հաճի՝ ժամանակը անորոշ թող տալով :

5. Տրուած ապահովութիւնը, զոր օրինակ են երաշխաւորութիւն, անշարժ ու շարժական գրաւներ :

6. Տոկոսիքը, որն որ իրաւամբ փոխ տրուած գրամագլխոյն համար կը պահանջուի :

7. Աղած դաշինքին ժամանակը :

8. Փոխատուին, երաշխաւորներուն ու վկաներուն եւ այլն ստորագրութիւնն ու կնիքը :

Օրինակ :

Այս ներքոյ գրեալս Սահակ Սիսակեան քաղաքացի ու վաճառական քաղաքիս Աերլայու, աս թղթովս կը ծանուցանեմ կը վկայեմ, որ այսօր Խոռխոռունեան Պ. Վրթանէսէն առձեռնպատրաստ գրամով, հարիւրին 4 տոկոսիքով 10,000 (տասը հազար) շուրուշ փոխ ընդունեցայ :

Արդ կը խոստանամ որ չէ թէ միայն ամէն տարի աս ստակին հարիւրին չորս տոկոսիքը կատարեալ վճարեմ, հապա նաեւ ծանուցուելէն վեց ամիս ետքը գրամագլուխն ալ ետ դարձընեմ : Այս եւ աս գրամագլխոյն ու տոկոսիքին ապահովութեանը համար բոլոր իմ շարժական ու անշարժ ստացուածներս (եւ կամ մէկ մասնաւոր բան մը) գրաւական կը դնեմ, որն որ պարտատէրս բռնելու իշխանութիւն ունի, թէ որ վճարելու չըլլամ :


Ասոր վկայութիւնն ու հաստատութիւնն ըլլալու համար աս գրաւով եղած պարտականութեան թղթիս իմ ձեռքովս ստորագրութիւնս կը դնեմ, ու իմ կնքովս կը կնքեմ:

Կոստանդնուպոլիս, 6 Յուլիսի 1848.

(Տ. Կ.)

Սահակ Սիսակեան:

Այսչափս առուտուրի գրուածներու վրայ բաւական սեպելով՝ աս գլուխն ալ կը գոցենք: Թէպէտեւ կան քանի մը գրաւորական գիտնալու բաներ ալ, զոր օրինակ դաշնագրութիւններ, բայց ասոնք շատ ընդարձակ ըլլալով՝ հոստեղս չենք կրնար դնել. այսչափ միայն գրուցելով կը շատանանք, որ ամէն դաշանց մէջ վաճառականը պիտի նայի որ դաշնագրութեան էական մաս մը դուրս չմնայ, ու ամէն հարկաւոր եղած բաները մէջը նշանակուին:



ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

135. ԼՈՒՍՈՒՐԻ գիտութեան անանկ մէկ մասին եկած հասած ենք, որ վաճառականի մը մանաւանդ ան պատճառաւ աւելի շահաւոր ու օգտակար է, վասն զի անոր աս վտանգաւոր ճամբուն մէջ առաջնորդ, կառավար ու զգուշութեան կանոն ըլլալու սկզբունքը կը սորվեցընէ: Առուտուրի մէջ ամենէն աւելի հարկաւոր բանը՝ մտածել ու դէպքերուն հետեւութիւնները քննելն ու դիտելն է. անոր համար ալ աւելի ընտրելի է հասարակ մարդ մը որ մտածելով կը գործէ, քան թէ չմտածող ու յանդուգն վաճառական մը, որ առանց խորհելու ու չափչըփելու կը գործէ, ու բախտը միայն իրեն առաջնորդ առած է:

Արովհետեւ աս գլխոյս մէջ առուտուրի հաւանականութեանցը վրայ պիտ'որ խօսինք, պէտք է որ ամէն մէկ մասին վրայ զատ զատ իջնալէն յառաջ, մեկնենք թէ ինչ է կարելին, ստոյգը, հաւանականն ու տարակուսականը: — Կարելին կամ հնարաւորը ան է, որն որ իր մէջը հակասութիւն մը չունի (կամ կրնայ ըլլալ), ինչպէս ըսեմ՝ կարելի է որ երկու շաբաթ ետքը շաքարին ու խահուէին գինը հիմակուան գնոյն կէսին չափ բարձրանայ: Ստոյգն ան է, որուն ճշմարտութիւնը մեզի յայտնի է: Իսկ հաւանականը՝ կարելուն ու ստոյգին մէջտեղն է: Կարելիութեան՝ ստուգութեան մօտ ըլլալուն որչափ աւելի պատճառ ունենաս, այնչափ աւելի բարձր է հաւանականութեան աստիճանը. ուստի գործքի մը աւելի պատահելուն քան թէ չպատահելուն պատճառ ունենալու ըլլաս նէ, նոյն գործքին պատահիլը աւելի հաւանական է: Իսկ թէ որ թէ մէկ կողմը եւ թէ մէկալ անոր հակառակ կողմը պատճառները հաւասար են, ան ատեն իրը՝ Տարակուսական կը սեպուի:

136. Առանց պատճառի փոփոխութիւն մը չկր-
նար ըլլալ: Անոր համար երբ որ փոփոխութիւն մը կը
տեսնենք, միշտ պիտ'որ ենթադրենք որ յառաջուց
անոր պատճառ մը եղած պիտ'որ ըլլայ: Աս պատ-
ճառները՝ զօրութիւններու պէս են, երբեմն իրենց
սաստկութեան աստիճանին նայելով, երբեմն ալ իրենց
բազմութեանը նայելով ազդեցութիւն կ'ընեն: Արդ
թէ որ աս զօրութիւնները գիտես, անոնց սաստկու-
թիւնը, շատութիւնը կը ճանչնաս, ու միանգամայն
անոնցմէ ի հարկէ հետեւելու փոփոխութիւններն ալ
որոշ կը տեսնես, յայտնի բան է որ անոնցմէ յառաջ
դալու փոփոխութիւնները՝ ալ հաւանական չեն մնար.
վասն զի զանոնք արդէն յառաջուց կրնաս իմանալ ու
աս պարագաներէն կախում ունեցող վաճառականու-
թեան գործքերուն ինչ վախճան ու ինչ ելք ունե-
նալը կրնաս ստուգութեամբ որոշել: Բայց երբ որ
կամ չես համոզուիր, որ առջեւի կեցած զօրութիւն-
ներէդ ան փոփոխութիւնները ի հարկէ յառաջ պիտ'որ
դան, եւ կամ յայտնի չես տեսնար որ աս պատճառ-
ները կան, ան ատեն իրը հաւանականութեան մէջ
կը մնայ, ու նոյն ժամանակն է որ դիտողութեան
(սխալ-լացիոն) սկզբունքներն ու օրէնքները գործքիդ
առաջնորդ ու կանոն պիտ'որ առնուս:

Աս սկզբունքներուն վրայ պիտ'որ խօսինք աս
դիտուս մէջ, որն որ իրին պահանջելուն նայելով վեց
հատուած կը բաժնենք. Ա. Առուտուրի հաւանա-
կանութեանց վրայ ընդհանրապէս, Բ. Ապրանքներու
առուտուրին հաւանականութեանցը վրայ, Գ. Գոր-
ծատանց ապրանքներուն հաւանականութեանցը վրայ,
Դ. Փոխանագրերու, Ե. Տէրութեան թղթերու հաւա-
նականութեանցը վրայ, Զ. Բաժանորդութեան թղթ-
թերու իյնալուն ու բարձրանալուն հաւանականու-
թեանցը վրայ. Է. Ապահովացուցմանց (սսխալ-լացի-
ոն) հաւանականութեանցը վրայ:

137. ԱՌՈՒՏՈՒՐԻՆ վախճանը՝ վաստակը կամ շահն է. բայց աս վաստակը շատ պայմաններէ, ու պայմաններուն շատը մէկտեղ ըլլալէն կասուած ունենալով, ու միանգամայն վաճառականի մը կարողութենէն դուրս ըլլող պատահարներու տակ ինկած ըլլալով, չկրնար կատարեալ ստուգութեամբ մը յառաջուրնէ որոշուիլ կամ դուշակուիլ. անոր համար ալ վաճառականներուն յոյսն ու ակնկալութիւնը միշտ հաւանականութեան հաշիւներուն ու շարունակ հաշիւներու տակ ինկած է:

Վաճառականը ապրանքներ կը գնէ ու կը մթերէ, ան յուսով որ իր վաստակովը դարձեալ ուրիշին ծախէ: Բայց իրօք ալ աս ապրանքները իր օգտին ու շահովն ալ կրնայ ծախել: Վնենք որ իր շահովն ալ ծախեց. բայց ծախածին արժէքը ամբողջ կրնայ առնուլ, որոշեալ ժամանակին եւ կամ առանց նորէն վրան ծախք ընելու կրնայ իր արկղին մէջ խոթել: Վրսէն վաճառք բերել տալու եւ կամ դուրս խրկելու ատեն, արդեօք փնտձ պիտ'որ կրէ, թէ շահ պիտ'որ ընէ: Իր գործատան յաջողութիւնը միօրինակ պիտ'որ տեւէ: Արդեօք ոտխները՝ իրեն յաճախորդները (Բ-շտերիները) պիտ'որ չորսան ու իրմէ պիտ'որ չդարձրնեն, ու զինքն ալ աւելի աժան դնով ծախելու պիտի շատիպէն: Մթերանոցին մէջ ունեցած ապրանքներուն գները հաստատուն պիտի մնան, չէ նէ պիտ'որ իյնան կամ բարձրանան: Ասոնք անանկ խրնդիրներ են, որ մարդ չկրնար ստուգութեամբ ու պահովութեամբ անոնց պատասխանը տալ. խոհեմ, վարժ ու փորձ վաճառականը ամէն մէկ պատահած դէպքէն հետեւելիքներուն հաւանականութեան աստիճանը հաշուելով, ասոնք կրնայ ըստ մասին դուշակել:

138. Առուտուրէն կամ գործատան գործքերէն յուսացուած վաստակը կամ թէ ըսենք առուտուրին յաջողութիւնը, իրին բնութեան նայելով՝ հասարակօրէն աս ետեւի եկած պայմաններէն կախում ունի.

Ա. Պէտք է որ ապրանքները գնող ըլլայ:

Բ. Ապրանքը բոլոր ծախքովը որչափի ելած է նէ, անկից աւելի սուղ պիտի ծախուի:

Գ. Օտխուիլը շարունակ ու անընդհատ պիտ'որ ըլլայ:

Դ. Օտխուած ապրանքին արժէքը կատարեալ ամբողջ ու առանց ուրիշ ծախք մը ընելու ան առեւնին պիտ'որ առնուի, որուն նայելով ապրանքին գինը որոշուած է:

139. Որպէս զի վաճառականը կարող ըլլայ հաւանականաբար յուսալ որ իր ապրանքներուն գնող կը գտնէ, պէտք է որ Ա. Անանկ ապրանքներ ճարէ կամ մթերէ, որոնց ստուգիւ կարօտութիւն կայ: Բ. Աղէկ մտածելու է որ վաճառատեղւոյն մէջ գտնուած ապրանքներուն մթերքը, այս ինքն է շափը կամ քանակութիւնը, գնողներուն կարողութեանն ու կարօտութեանը (այս ինքն հարկաւորութեանը) հետ ինչ համեմատութիւն ունի: Ինչու որ ապրանքի մը կարօտութիւն կամ հարկաւորութիւն ըսելով, միայն ան ապրանքին պակտութիւնը չիմացուիր, հապա նաեւ ան ապրանքը ձեռք բերելու միջոցին (այս ինքն ստակին) շատութիւնը կամ քիչութիւնն մէկտեղ կ'իմացուի: Գ. Պէտք է որ ճշմարտութեամբ համոզուած ըլլայ, թէ իրեն ապրանքներուն աղէկութեամբն ու ծախելու համար դրած պայմաններովը ուրիշ ծախողներէն աւելի առաւելութիւն մը կ'ունենայ եւ կամ գոնէ կրնայ անոնց ընթացակից (+ ու - շէր) ըլլալ: Դ. Պէտք է որ բոլոր առուտուրի զբաղող մարդիկներուն ծանուցանէ որ ինքը ծախելու աս տեսակ ապրանք պատրաստ ունի: Ան ապրանքին կարօտութիւնը որչափ աւելի որ անցողական (չուտով անցնելու) բան մը ըլլայ, պէտք

է որ ծանուցումը այնչափ աւելի շուտով ընէ: Ա՞տեսակ շուտով անցնելու կարօտութիւնները աւելի երեւակայական կամ թէ ըսենք՝ հաճոյքէ յառաջ եկած բաներու կարօտութիւններն են, ինչպէս զարդարանքի ու նորածեւութեան ապրանքներուն կարօտութիւնը, որոնց մէջ շատ անգամ քաջութիւնը՝ միայն ապրանքը որչափ կարելի է՝ շուտ ծախելէն, ուստի եւ որչափ կարելի է՝ ունեցածը շուտ հրատարակելէն կախում ունի:

140. Ապրանքին ամէն ծախքովը արժածէն աւելի սուղ ծախուիլը՝ ետեւէն եկած պարագաներէն կախում ունի: Ա. Ան ապրանքին կարօտութեան աստիճանէն, այս ինքն ապրանքին շատ փնտռուելէն: Բ. Ան ապրանքէն գտնուած մթերքին՝ կարօտութեան հետ ունեցած համեմատութենէն, այս ինքն թէ որ ան ապրանքէն քիչ կայ ու կարօտութիւնը շատ է, պէտք է որ ապրանքը սուղ ծախուի, իսկ թէ որ քիչ կայ, բայց փնտռող կամ ուզող ալ չկայ, ան ատեն աժան կը ծախուի: Գ. Ապրանքը գնողներուն կամ թէ ըսենք գնող հասարակութեան կարողութեան կամ ստացուածքին շատութենէն քիչութենէն: Դ. Ապրանքին գնէն: Ե. Սպասուած կամ դրսէն գալու ապրանքին շատութենէն կամ քիչութենէն, ուստի եւ ապրանքին գնոյն բարձրանալուն կամ իջնալուն վրայ եղած կարծիքէն: Զ. Գնողներուն՝ ծախողին տեղեակ, պատուաւոր ու հաւատարիմ մարդ ըլլալուն վրայ ունեցած վստահութենէն կամ համարումէն, եւ մանաւանդ ան ապրանքներու առուտուրին մէջ, որոնց ազնուութիւնը մէկէն առջի տեսնելուն չկրնար իմացուիլ:

141. Ապրանքին գինը ամբողջ ու ժամանակին ձեռք բերելը՝ քիչ, բայց աղէկ մտածելու պարագաներէ կախում ունի: Ա. Առուտուրին ըստ պատշաճի լմրննալուն վաւերութենէն, որն որ թէ ծախողին եւ թէ գնողին՝ ապրանքին չափին կամ քանակութեանը, որպիսութեանը, արժէքին, յանձնուելու կերպին, ու

արժէքը վճարելու ժամանակին վրայ միաբանելն են կախուած է. անիկայ որչափ աւելի որ որոշ կերպով մը կարգի դրուած է, ետքէն այնչափ քիչ դժուարութիւններ կրնան ելլել, ու վճարմունքն ալ այնչափ աւելի ապահով կ'ըլլայ: Թէ որ գործքը առ կերպով ժամանակին գոցուելէն լմննալէն ետքը, որ ալ անոր ստուգութեանը կամ վաւերութեանը վրայ տարակոյս չկրնար ըլլալ, գնողը՝ դարձուածներ ընէ ու վճարելը երկրնցընէլ ուզէ, հասկըցիր որ անիկայ համարման արժանի մարդ չէ, ու քեզի փնասակար պարտապաններէդ մէկն է: Բ. Պնողին համարման ընդունակութենէն, այս ինքն թէ հաւանականաբար համոզուած պիտ'որ ըլլաս, որ կրնայ վճարել ու կ'ուզէ վճարել:

Թէ արդեօք գնող մը իր առած ապրանքին արժէքը կրնայ վճարել, հաւանականաբար կրնայ իմացուիլ իրեն իրական ունեցած ստացուածքէն, այս ինքն կարողութենէն, հարստութենէն ու հաստատուն վաճառական ըլլալէն: Ասոնք ալ իմանալու համար պէտք է նայիլ. Ա. Իրեն վաճառականութեան սկսած ատեն ունեցած ստացուածքին, ինչու որ իր առուտուրին սկիզբը ստակ ունեցողը՝ հասարակօրէն կը յուսացուի, որ անիկայ խել մը ատեն պահպանած ու աւելցուցած ալ ըլլայ: Բ. Պէտք է ան իսկզբան ունեցածին վրայ աւելցած ստակներուն ալ նայիլ: Ա՞ր ըսելով կ'իմանանք միայն ժառանգութեամբ, կարգուելով եւ ուրիշ ասոնց նման կերպերով ձեռք ձգած ստացուածքները, որոնք տարակուսի տակ չեն իյնար, ու ստոյգ են: Ա՞ն երկու կերպովս է, որ հասարակ մարդ մ'ալ վաճառականի մը հարստութեանն ու համարման ընդունակութեանը վրայ դատաստան կ'ընէ: Գ. Միմացուի նաեւ իրեն առուտուրին կամ գործքին մեծութենէն: Ով որ շատ գործք ունի կամ շատ առուտուր կ'ընէ, մարդիկ անանկ կը համարին որ շատ ալ պէտք է որ վաստըկի: Ա՞ն կարծիքը թէպէտ շատ անգամ ստոյգ ալ սեպուի, բայց հիմակուան

ատենս աս դատաստանը ընելու ատեն՝ զգուշաւորութիւնն ալ ձեռքէ թող տալու չէ: Ինչու որ կան շատ վաճառականներ, որոնք առանց տակէն ելլելու կամ վաստրկելու՝ շատ գործք կը գործեն, ան մտքով որ կամ մեծ առուտուր ցուցնելով համարում կը ստանան, ու մէյ մը համարում ստանալէն ետքը քիչ ատենի մէջ կրնան հարստանալ, եւ կամ ան համարումը ձեռք չեն կրնար ձգել նէ, առանց մնասի կրնան տակէն ելլել: Ապա ուրեմն աւելի պէտք ենք ըսել, որ մէկու մը հարստութիւնը կրնանք գործքին շատութենէն իմանալ, երբ որ աս գործքը հաստատուն ու վաստակ բերող գործք է, ու գործքին մեծութիւնը՝ իր գոյքին կամ գրամագլխոյն հետ ուղիղ համեմատութեան մէջ է, այս ինքն առուտուրը որչափ մեծ է նէ, այնչափ ալ մեծ գոյք կամ գրամագլուխ ունի: Գ. Ա՛ւճառականին փոյթէն, զգուշաւորութենէն (որն որ ուրիշին համարում տալէն, ու նաեւ ապրանքներ գնելէն կրնայ իմացուիլ), կարգաւորեալ կերպով գործելէն, հմտութենէն, արդարասիրութենէն, հաւատարմութենէն, խնայողութենէն ու աղէկ անտեսութենէն: Գործքին անհոգ, գնելու ու ծախելու անտարբեր, վաստրկելու փոյթ շունեցող, գործքերը խառնաշփոթ վիճակի մէջ եղող, ու աղէկ կարգաւորեալ անտեսութիւն շունեցող մարդու համարում տալու շատ մեծ զգուշութիւն պէտք է ընել, թէպէտեւ շատ ստակ ունենայ ու մեծ առուտուր բացած ըլլայ: Ե. Աւրիշներուն անոր վրայ ունեցած համարումէն: Ա՛յսն զի ով որ ուրիշներէն համարում կ'ընդունի, ու միանգամայն դիւրաւ ու շատ ալ կ'ընդունի, անոր վրայ աւելի կրնայ վստահուիլ: Զ. Տուած համարմանդ տեւողութենէն: Արչափ քիչ ժամանակուան համար համարում կու տաս, այնչափ հաւանական է որ ստակդ կ'առնուս, վասն զի անանկ ենթադրելով, որ ան մարդը հաստատուն է, յայտնի բան է որ նախ ան պարտքերը վճարելու պիտ'որ նայի,

որոնք ժամանակաւ աւելի մտաւոր են: Է. Չկարգուած վաճառականներուն վրայ այսչափ հաւանականութիւն մ'ալ կրնայ դրուիլ, որ կարգուելով գուցէ կրնան իրենց վիճակը աղէկցընել:

Պնտղի մը առած ապրանքին արժէքը վճարելէն յետոյ՝ հաւանականաբար իմանալու համար, ան մարգուն բարուցը ու բնութեանը միտ դնելու է: Ա. Մէկը՝ որչափ որ իր պատուոյն աւելի նախանձախնդիր է, ու իր անուանն ու համբաւին վրայ հոգ ունի, այնչափ աւելի ալ իր խօսքը բռնելու կը նայի: Բ. Իրաւունքի ու անիրաւութեան վրայ որչափ աւելի բարձր գաղափար ունեցող մարդ է նէ, ու խարդախութենէ, նենգութենէ, եւ այլն որչափ աւելի որ կը զզուի, այնչափ ալ անիրաւութիւն ընել չուզեր: Գ. Ապրանքը գնողին տեղը որչափ որ դաշանց ու անոնց կատարմանը վրայ եղած օրէնքները, սովորութիւններն ու կարծիքները խիստ են, այնչափ աւելի հաւանական է, որ գնողը կ'ուզէ վճարել: Անոր համար ալ ասանկ քաղաքներու վաճառականները աւելի մեծ համարում ունին. ինչու որ երկու երեսով ու անզգամ մարդ հոն դիւրաւ մուտ չկրնար դտնել, ու տեղւոյն մարդիկն ալ ասանկներու երես չեն տար ու անոնց հետ գործ չեն տեսներ: Դ. Վարձեալ թէ որ շատ անգամ ան մարդուն հետ գործ ունեցեր ես, ու զինքը արդար ու հաւատարիմ մարդ գտեր ես, այնչափ հաւանականաբար կրնաս անոր վրայ վստահ ըլլալ: Ե. Ատեւ որչափ որ մէկը շահասէր չէ, աւելի կրնաս վստահ ըլլալ, որ քու ստակովդ հարստանալու ալ աչք չունենար: Զ. Մէկը թէ որ մեծ ստացուածոց տէր է, կամ դիւրաւ կը յառաջանայ կը հարստնայ, հաւանականաբար կը յուսացուի, որ ուրիշին անիրաւութիւն չընէ:

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԻՆ ՄԷՋ ԵՂԱԾ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

142. Աս հատուածիս մէջ քննելու բաներնիս՝ ապրանքներու գներուն բարձրանալն ու իյնալն է: Պիտի ճշդիւ քննենք ու իմանանք թէ ասոնք ուստի կը պատահին, ու կանոններ պիտ'որ տանք, որոնցմով վաճառականը առանձին ծանօթ բաներէն՝ հաւանա- կանաբար ետեւէն գալու գնոյն աճումն ու նուազումը կրնայ յառաջուց իմանալ:

143. Թէ որ վաճառական մը աս կամ ան տեսակ ապրանքէն սովորական հարկաւորութենէն կամ կարտութենէն աւելի կ'առնու կը մ'թերէ, ան յուսով որ գները կը բարձրանան, ու ինքն ալ ան ատենը աւելի սուղ ծախելով կը վաստըկի, ան վաճառականը աս կամ ան ապրանքի Գիտողութիւն կ'ընէ կ'որ կ'ըսուի: Աս ըսածներնէս կը հետեւի, որ ասանկ դիտողութեան մը ձեռք զարնող վաճառականը, շէ թէ միայն ինչպէս հասարակ առուտուրի մէջ կ'ըլլայ, երկրորդ ձեռքէ ծախողներուն շահը, հապա նաեւ ան շահն ալ ձեռք բերել կ'ուզէ, որն որ աս կամ ան ապրանքին գներուն բարձրանալէն կը յուսայ, որուն համար ալ սպասել կ'ուզէ:

144. Ապրանքներուն գներուն բարձրանալն ու իյնալը երկու տեսակ է, մէյ մը Ընդհանուր, մէյ մ'ալ Մասնաւոր, այս ինքն երբ որ աս գներուն փոփոխութիւնը կամ առհասարակ բոլոր ապրանքներուն եւ կամ առանձինն մէկ կամ քանի մը տեսակ ապրանքներուն գներուն վրայ կ'ըլլայ: Աս երկու տեսակ փոփոխութիւններն ալ այլեւայլ պատճառներէ յառաջ եկած գործքեր են:

Վաճառականը ապրանքներուն գներուն բարձրանալուն ու իյնալուն վրայ թէ ընդհանրապէս եւ թէ առանձինն քանի մը կամ մէկ տեսակ ապրանքի

վրայ մասնաւորապէս կրնայ դիտողութիւն ընել: Բար ապրանքներուն գներուն առհասարակ բարձրանալը կամ իյնալը շատ քիչ կը պատահի, ու հասարակօրէն պէտք է որ արտաքոյ կարգի գէպք մը պատահի, որ ասոր պատճառ ըլլայ. ինչպէս են սովորաբար տէրութեանց մէջ պատահած արտաքոյ կարգի դիպուածներն ու երեւելի փոփոխութիւնները, զոր օրինակ ընդհանուր բերքերու չյաջողիլը կամ աղէկ չաճիլը. թշնամւոյն՝ տէրութեան վրայ յարձակիլը. ուր որ թղթէ ստակ միայն կը պտըտի, անոնց արժէքին իյնալը. թէ իրական հարկաւոր եւ թէ երեւակայութեամբ հարկաւոր սեպուած ապրանքներ ներս խոթելու համար դրուած մաքսին սաստիկ բարձրանալը. որոնք անանկ դիպուածներ ու փոփոխութիւններ են, որ ապրանքներուն գնոյն ընդհանրապէս բարձրանալուն ու իյնալուն պատճառ կ'ըլլան: Բայց մենք ասոնց վրայ խօսելու բան մը չունինք, հապա ապրանքներուն առանձին տեսակներուն գներուն բարձրանալուն ու իյնալուն վրայ պէտք է որ խօսինք. ինչու որ ասոնք են, որ դիտողութեան ձեռք զարնող վաճառականներուն հարկաւոր կ'ըլլան:

Սակաւ չենք ուզեր անանկ գործքերու վրայ ալ խօսիլ, որոնց թէպէտեւ առանց խղճի շատերը ձեռք կը զարնեն, զոր օրինակ են մենավաճառները, որոնք իրենց քաղաքացեացը կարօտութիւնը գիտնալով, բոլոր ապրանքը կը գնեն ու կը բռնեն, որպէս զի ետքէն սուղ սուղ կարօտելոց ծախեն. բայց յայտնի է որ աս չար ու անվայել գործքը նոյն իսկ մարդկային ազնուական բնութեան գործ չըլլալով ու անխիղճ սրտէ մը յառաջ դալուն, Առուտուր, Վաճառականի գործ ալ ըսուելու արժանի չէ եղած, հապա Մենավաճառութիւն ու ասոր ետեւէն ինկողները Մենավաճառք ըսուելը են: Տէրութիւններ կան որոնց մէջ աս ոճիրն ու յանցանքը մինչեւ մահուան պատժով կը պատժուի. բայց ասանկ ամօթալից գործքի մը

վրայ պատիժ սահմանուած ըլլայ չըլլայ, խելքը գլուխը
 ու պատուաւոր վաճառականը, որ իր պատիւը կը
 յարգէ, ու իր մտացը լուսաւորութեամբը՝ իր վախ-
 ճանն ու իր քաղաքակցացը երջանկութեանն ու
 աղէկութեանը վրայ ունեցած ազդեցութիւնը գիտէ
 ու սորված է, պէտք չէ որ ասանկ մենավաճառու-
 թեան գործքերու մէջ մտնէ. հապա անոր հակառակը
 իր առուտուրի ու վաճառականութեան գործքերուն
 սահմանին մէջ մնալու աշխատի, որ չըլլայ թէ ծեր
 ու կորացեալ հօր աչուրներէն իր սրգւոցը կարօտու-
 թեան վրայ արցունք թափել տայ, ու յօգնած աշխա-
 տաւորի եւ կամ ալեւոր ծերուն ումպ մը գինւոյն,
 որն որ Աստուած զովանալու ու զօրանալու համար
 մարդուս պարգեւած է, սաստիկ շատ սուղնալուն
 պատճառ ըլլայ:

145. Թէ որ ապրանքներուն գնոյն բարձրանալուն
 ու իյնալուն բուն պատճառները փնտռելու ըլլանք,
 կը գտնենք որ ասոնք տեսակ տեսակ են ու այլեւայլ
 ազդիւրներէ կը բղխին: Արդէն վերը ապրանքներուն
 գները որոշելու վրայ խօսած ատեննիս (Համար 26, 27)
 ըսինք ու ցուցուցինք, թէ մէկ ապրանքի մը գինը՝ ա-
 նոր վրայ եղած աշխատութենէն, շինողին վարպետու-
 թենէն ու ան ապրանքը պատրաստելու ու յառաջ
 բերելու համար եղած ուրիշ ծախքերուն գումարէն
 կ'առնուի. բայց հարկաւորութեան կամ ներկայ կա-
 րօտութեան սաստիկութեան աստիճանը աս գինը
 աւելի եւս ի մերձուստ կ'որոշէ: Ասխ ստակը իբրեւ
 առուտուրի ընդհանուր միջնորդ կամ միջոց աս գնե-
 րուն բարձրանալուն ու իյնալուն պատճառ կ'ըլլայ:
 Ատակը՝ մետաղի արժէքը չմտածելով ու իբրեւ առ-
 ուտուրի ընդհանուր միջնորդ առնելով, ինչ եւ
 իցէ կերպով տէրութեան կամ երկրի մը մէջ շատնա-
 լու ըլլայ, ինչպէս կրնայ պատահիլ երբ որ հանքերը
 շատ ոսկի ու արծաթ կու տան ու շատ ստակ կը կո-
 խուի, երբ որ օտար երկիրները եւ կամ նոյն իսկ

Թագաւորութիւնը իր հպատակներուն ունեցած պարտքերը կը վճարէ, երբ որ երկրի մը դրամներուն գինը կը բարձրանայ, եւ կամ երբ որ թղթէ ստակը կը շատնայ, կամ երբ որ դրսի երկիրներուն շատ ապրանք կը ծախուի ու անոնց տեղ ստակ կ'առնուի. աս ամէն ու ասոնց նման դէպքերով՝ ստակը շատնալու ըլլայ, ան ատեն ապրանքները (նոյն իսկ երկրի բերքերն ալ) կը սուղնան, միայն թէ ուրիշ կողմանէ ապրանքն ալ շատնայ կամ կարօտութիւնը չնուազի: Ասով աղէկ կը մեկնուի, թէ ինչո՞ւ համար Ամերիկան դանուեցաւ նէ, ամէն բան մեկէն սղցաւ, եւ ինչո՞ւ երբեմն ոսկին ու արծաթը ուրիշ ապրանքներու ու աշխատութեան նկատմամբ աւելի քիչ արժէք կ'ունենան: Տեղ մը դանուած ստակին չէ թէ մինակ չափը կամ քանիօնութիւնը, այս ինքն շատութիւնը կամ քիչութիւնը, հապա աւելի անոր շրջանին շուտութիւնն է, որ անոր առուտուրի մէջ ունեցած արժէքին վրայ ազդեցութիւն կ'ընէ: Առուտուրի ընդհանուր միջնորդը այս ինքն ստակը ամէն մէկ անգամ շրջանի մէջ մտնելուն՝ իր արժէքին բոլոր գումարովը ազդեցութիւն կ'ընէ, զոր օրինակ 1000 զուրուշը 50 անգամ շրջան ընելով այնչափ ազդեցութիւն կ'ընէ, որչափ ազդեցութիւն որ կ'ընէ 50,000 զուրուշը թէ որ նոյնչափ ժամանակի մէջ անգամ մը շրջան ընելու ըլլայ: (Բաղդատէ 69 համարին ու անոր ծանօթութեան մէջ ըսածներնուս հետ:) Ա՞ս ըսածներնէս կըրնայ հետեւիլ որ չէ թէ միայն ստակին ընդհանրապէս մէկ երկրին մէջ շատնալը, հապա նաեւ առանձին մեծերուն քով շատնալը կամ նուազիլն ալ գներուն փոփոխութեան պատճառ կ'ըլլայ, բայց մանաւանդ երբ որ կառավարութեան ու վաճառականներուն քով շատնալու ըլլայ նէ, ինչու որ ան ատենը կառավարութեան պարտքերը վճարուելով, ստակը շրջանի մէջ կը մտնէ, այլեւայլ շէնքեր կը շինուին, ու գործքերը կը շատնան, որուն բոլորովին հակառակը

կ'ըլլայ, թէ որ կառավարութեան քով ստակը քիչ-նայ ու պարտք առնելու պարտաւորի :

Արդ երբ որ ասանկով ստակը արագ շրջանի մէջ տեսնուի, այնչափ ալ ստակը կը շատնայ, գինը վար կ'իյնայ, ուստի եւ ապրանքին գինը կը բարձրանայ : Ասկից կրնաս ինք իրենդ իմանալ, թէ ինչէն է որ ապրանք ունեցողները, որոնք իրենց ապրանքին գիմացը առձեռնպատրաստ դրամ առնելով առուտուր կ'ընեն, շատ մեծ շահ կ'ունենան : Ասան զի ասով ձեռքերնին ստակ անցնելով ու շուտով շրջանի մէջ խոթելով բնական է որ շատ ալ վաստըկին :

146. Աւր որ հասարակ գործածուած ստակը ծանր ստակի տեսակ է, զոր օրինակ ոսկի կամ արծաթ, ան տեղուանքը ստակին շատնալը կամ նուազիլը սովորաբար ապրանքներուն գնոյն բարձրանալուն կամ նուազելուն վրայ անանկ շուտով ազդեցութիւն չկըրնար ընել, որ անկից՝ քիչ ատենի համար եղած ապրանքներու գիտողութիւններուն շյաջողելուն կարենայ պատճառ ըլլալ, ինչու որ ստակին հատնիլը ինչպէս նաեւ բոլոր տէրութեան կամ գաւառի մը մէջէն դուրս ելլելը անանկ մէկէն ի մէկ չկրնար ըլլալ : Վայց ուր տեղ որ թղթէ ստակը սովորական կամ ընթացիկ ստակն է, ու տէրութիւնը ան թղթէ ստակը ետ քաշելու (օրինակն վերցընելու) միտք ունի, ու անոր համեմատ ալ ճամբայ կը բռնէ, անատեն ան գործածական ստակին պակասութիւնը ապրանքներու գնոյն վրայ շուտով ու մէկէն ազդեցութիւն կ'ընէ :

147. Տէրութեան մը մէջ՝ առուտուրի ձեռքով շրջան ընող ստակին դումարը, որոշեալ ժամանակի մէջ բրած շրջանին շուտութեամբ բազմապատկելու ըլլանք, ելած արդիւնքը (կամ արտագրեալը) այնչափ ատենի մէջ բոլոր վաճառականներէն վճարուած ստակներուն գումարին հաւասար է : Աւր թէ որ աս վճարմունքները ընդհանրապէս առնելով՝ գնուած ապրանքներուն համար եղած են նէ, ան ատենը յառաջ

կու գայ, որ աս ժամանակին մէջ բոլոր գնուած ու
ծախուած ապրանքներուն գներուն գումարը աս զուր-
ցուած գումարին հաւասար պիտ'որ ըլլայ: Ասկից կը
հետեւի, որ եթէ առուտուրի մէջ շրջան ընող ստակին
գումարը շուտով շարժելու ըլլայ, ան ատեն նշան է
որ առուտուրի մէջ պարտող ստակը շատ շէ, հապա
շատութեան տեղը բրած շրջանին շուտութիւնը հարկ
է որ լեցրնէ:

148. Տէրութեան մը առուտուրին կշիռն ալ (այս
ինքն տէրութենէ մը բոլոր գուրս ելած ու ներս մտած
ապրանքներուն համեմատութիւնն ալ) շրջան ընող
ստակին վրայ իրօք ազդեցութիւն կ'ընէ, ինչու որ երբ
որ տէրութենէ գուրս ելած ապրանքները՝ ներս մտա-
ծէն աւելի են, ան ատեն ըսել է, որ առուտուրը
աղէկ գացեր է ու ստակը տէրութեան մէջ աւելնալով,
շատ ստակ շրջանի մէջ մտեր է, որուն հակառակը
կ'ըլլայ, թէ որ կշիռը տէրութեան օգտակար ու շա-
հաւոր ըլլայ: Ասոյց ինչպէս յայտնի է, աս կշիռն
ազդեցութիւնները շատ կամաց են, ու քիչ ատենի
նկատմամբ եղած դիտողութեանց վրայ շուտով չեն
կրնար ազդել:

149. Վներուն բարձրանալուն ու իյնալուն եր-
կրորդ պատճառ ապրանքներն են, որոնցմէ գանուած
մթերքին առատութիւնը կամ նուազութիւնը՝ փրն-
արուելուն համեմատութեամբ գներուն վրայ շատ
մեծ ազդութիւն ունի: Աստ ինքեան խօսելով,
թէպէտ առատութիւնը կամ նուազութիւնը առան-
ձինն ալ կրնան մտածուիլ, ինչպէս երբ որ այնչափ
ցորեն գանուելու ըլլայ, որ մարդիկներուն ուտելուն
բաւական ըլլայ, ու նոյն ատենը գանուին մարդիկ որ
սովու նեղութեան մէջ ինկած ըլլան կամ մեռնին,
ասիկա բացարձակ նուազութիւն է, եւ կամ նոյնպէս
ասոր հակառակը բացարձակ առատութիւն է, երբ որ
այնչափ շատ ցորեն ըլլայ որ մարդիկ սպառելու բաւա-
կան ըլլան. բայց հասարակօրէն թէ առատութիւնը

եւ թէ նուազութիւնը ասանկ բացարձակ չմտածուիր, հապա յարարերութեամբ, այս ինքն թէ առատութիւնը եւ թէ նուազութիւնը ան ապրանքին փրնտրուելու աստիճանէն կամ թէ ըսենք՝ ներկայ ժամանակ եղած կարօտութենէն կ'առնուի, վասն զի ազէկ ու կարգաւորեալ տէրութեան մը մէջ բացարձակ կարօտութիւն մտածելու բան չէ, միշտ շատ մ'թերք պատրաստ կ'ըլլայ, ու անկից պակասածը գրսէն բերել կը տրուի: Արնայ ալ ըլլալ, որ դանուած մ'թերքը կարօտութիւնը լեցընելու բաւական ըլլայ, բայց սակայն ստակը քիչ ըլլալով, եւ կամ թէ գիները բարձր ըլլալով՝ քիչ փնտռուի, ու համեմատութեամբ առատութիւն ըլլայ: Արնայ ըլլալ նաեւ, որ մ'թերքը կարօտութենէն շատ աւելի մեծ ըլլայ, բայց ամէն մարդ գնել ուզելով, բոլորովին նուազութեան պէս ըլլայ:

Ա՞ն ըսածներնէս կը հեատուի, որ Ա. նուազութիւն կ'ըլլայ, երբ որ կարօտութիւնը մ'թերքէն աւելի է. Բ. նուազութիւն կ'ըլլայ, երբ որ (չէ թէ կարօտութիւնը, հապա) փնտռուիլը մ'թերքէն աւելի կ'ըլլայ. Գ. Առատութիւն, թէ որ մ'թերքը կարօտութենէն աւելի է. նոյնպէս Դ. Առատութիւն, թէ որ (չէ թէ կարօտութիւնը դանուած մ'թերքէն քիչ, հապա նաեւ) փնտռուիլն ալ մ'թերքին համեմատութեամբ քիչ կ'ըլլայ:

150. Ապրանքի մը արտաքոյ կարգի փնտռուիլը պլեւայլ պատճառներէ կրնայ յառաջ գալ: Ասի կրնայ պատահիլ երբ որ սովորաբար հարկ եղածին շափ պատրաստ ապրանք գանուի, բայց կարօտութիւնը շատնալով, շատ ալ փնտռուի: Ինչպէս որ յառաջ առուտուրի ընդհանուր միջնորդին այս ինքն ստակին վրայ ըսինք, ասանկ ալ աս պէտք եղածին շափ ապրանք չգանուիլը՝ երկու կերպ կրնայ ըլլալ. մէյ մը Ընդհանուր, այս ինքն ամէն տեղ, մէյ մ'ալ Մասնաւոր, այս ինքն մինակ մէկ երկրի կամ տէրու-

կ'իյնայ: Ապրանքի մը ասանկ հարկաւորութենէն աւելի ելլելը կամ շինուիլը կրնայ շատ պատճառներէ յառաջ դալ: Արնայ ըլլալ որ ան ապրանքին բուն յառաջ եկած կամ շինուած տեղը շատ ելլէ ու շինուի, բայց կրնայ միանգամայն ըլլալ որ նոր կերպ ու ճամբայ մը գտնուած ըլլայ, որով ան տեսակ ապրանքը թէ անանկ աղէկ պատրաստուի, եւ թէ հաւասար գնով եւ կամ աւելի աժան ելլէ: Աս երկու գէպքերս ալ ապրանքներու տեսակներուն վրայ մի եւ նոյն զօրութիւնն ունին, ինչու որ թէ որ քննելու ըլլանք, կը տեսնենք որ պատրաստ գտնուած ապրանքին՝ մնատուելուն հետ համեմատութիւնը երկուքին մէջն ալ նոյն արդիւնքը կամ հետեւութիւնը յառաջ կը բերէ:

Ապրանքի մը՝ թէ ելած տեղը աւելի շատ ելլելէն կամ շինուելէն, եւ թէ ուրիշ տեղերէն ալ շատ բերուելէն աւելնալը կրնայ թէ անցողական եւ թէ տեւական բան մը ըլլալ: Թէ որ շատ գործաւորներ անոր համար միայն աս տեսակ ապրանքը պատրաստելու կ'աշխատին ու կը գործեն, որովհետեւ նոյն ատենը ուրիշ կողմանէ ուտելու ստակ մը չեն կրնար գտնել. դարձեալ թէ որ ուրիշ տեղերէն ուր որ աս ապրանքները կ'ելեն, անոր համար միայն, նոյն իսկ փաստով ալ բերելու կը նային, որովհետեւ ան ժամանակը ան տեղուանքը առատութիւն կայ, բայց առնող չկայ, ու միանգամայն ստակի կամ անոր գիմացը առնելու ապրանքի մը կարօտութիւն կայ, յայտնի բան է, որ աս գէպքերու մէջ աժանութիւնն ու առատութիւնը անցողական բան մըն է:

152. Ան ապրանքներ, որոնց գներուն բարձրանալը անով կը շախաւորուի, որովհետեւ անոնց տեղը ուրիշ ապրանքներ կրնան գործածուիլ: Ասիկա ուտելու, գունաւորելու ու հագնելու ապրանքներուն շատ կը պատահի: Շատ անգամ մի եւ նոյն տեսակ ապրանքը միայն ան պատճառաւ աւելի շահով ու

օգտիւ ուրիշ տեղէ մը բերել կրնայ տրուիլ, որովհետեւ սովորաբար ելած տեղը ան ապրանքին գինը անանկ բարձրացած կ'ըլլայ, որ բերել տալու համար տրուած ծախքը՝ գնոյն բարձրանալուն հետ դիմացէ դիմաց կու գան: Աստե՛մ գիտող վաճառականը՝ որն որ ազէկ գիտէ ամէն ապրանքներուն բերել տալու տեղերը, կրնայ աս հաշիւներն ընել ու մտածել, ու անոնց նայելով իր գիտողութիւններն ալ կարգաւորել, բայց նորէն կ'ըսենք, պէտք է իր հաշիւները ազէկ ճիշդ ու զգուշութեամբ ընէ:

153. Ապրանքի մը շատ փնտռուիլը, որն որ չէ թէ բուն ապրանքին քիչութենէ, հապա գիտողներուն յառաջուց ան տեսակ ապրանքը բոլոր գնելէն ու պահելէն յառաջ եկած է, երբեք հաստատուն ու մնայուն չէ: Աս փնտռուիլը երբեմն արտաքոյ կարգի բարձր աստիճանի մը կը հասնի, այնչափ որ ալ անկից աւելի կարելի չէ որ աճի: Աս վիճակիս մէջ կը սկսի գրսէն շատ ապրանք գալ, ու քանի կ'երթայ կը շատնայ. բայց վերջապէս գիտողներէն կամ հնարագիտութեամբ պահողներէն շատերը չեն կրնար իրենց գոյքը (գործ) երկայն ատեն անգործ ու առանց շահի թողուլ, եւ որովհետեւ գիտեն որ աս հարկաւորութիւնը կամ կարօտութիւնը բացարձակ չէ, անոր համար իրենք ալ անհոգ չեն կրնար կենալ, կը սկսին ապրանքները դուրս հանել, ու ձեռքէ ալ հանելու նայիլ, որով ան ապրանքը՝ որն որ քիչ մը յառաջ չէր գանուեր, քիչ մը ետքը մէկէն կ'աժընձայ, ու գիտողութեան նիւթ ըլլալէն յառաջ որչափի կը ծախուերնէ, անկից շատ աւելի աժան կը սկսի ծախուիլ:

154. Գործատուներու մէջ գործածուելու եւ ուրիշ ապրանք մը պատրաստելու համար հարկաւոր եղած նիւթերը շատ կը փնտռուին, երբ որ գործատուներու մէջ գործքը մէկէն կը շատնայ եւ պատրաստելու ապրանքը շատ շինուելու կը սկսի. նաեւ թէ որ պատերազմ մը լմընայ, ու աշխատաւորներէն

շատերը իրենց թող տուած գործքին դառնալու ըլլան, ու նոր գործատուներ կը բացուին նէ, կամ եղած գործատէրները իրենց գործքը ընդարձակեն նէ, ան ատեն ըսածներնուս պէս ապրանքը կը սկսի շատ փնտռուիլ :

Նաեւ թէ որ տեղւոյ մը մէջ, սպառող մարդիկը շատնալու ըլլան, ան ատեն ան սպառելի ապրանքն ալ շատ կը փնտռուի : Նսիկա պատերազմի ատեն շատ կը պատահի, երբ որ բանակը տեղ մը կը կենայ կամ թէ նաւատորմիդը ծովեզերեայ տեղ մը կը մնայ, եւ կամ բեռնաբարձ նաւերը՝ կերակուր եւ ուրիշ հարկաւոր եղած բաները կ'առնուն եւ ուրիշ տեղ կը կրեն : Ընդհանրապէս պատերազմի ատենները գործքերը դադրելով ու ապրանք բերել տալու համար շատ ծախք ըլլալով, միշտ ապրանքները կը սուղնան :

Շատ անգամ երկրի բերքերուն անյաջողութիւնն ու երկրին աղէկ բերք շտալն ալ՝ ապրանքներուն գնոյն ելլելուն ու իջնալուն վրայ շատ ազդեցութիւն կ'ընէ : Աս անյաջողութեան՝ գներուն վրայ բրած ազդեցութիւնը հաշուելու ատեն՝ վաճառականը շատ դիւրաւ կրնայ խաբուիլ, մանաւանդ երբ որ պզտիկ երկիրներու վրայ ըլլայ խնդիրը, ինչու որ շատ անգամ աս անյաջողութեան տեղը, թէպէտ պէտք եղածին չափ շուտով ալ օգնութեան շահասնուի, դրացի ու մօտաւոր երկիրներուն մէջ եղած առատութիւնն ու պատրաստ գանուած մթերքը կը լեցընէ : Նսիկա թէպէտ յառաջ շտեմնուիր, բայց սղութիւն ըլլալուն պէս՝ երեւան կ'ելէ :

155. Ապրանքներու գներուն բարձրանալուն ու իջնալուն վրայ տէրութիւններն ալ մեծ ազդուութիւն ունին : Արբ որ տէրութիւն մը՝ օտար ապրանք գրսէն ներս խոթելը կ'արգելէ, ան ատեն ան երկրին մէջ գանուած պատրաստ ապրանքին գինը կը բարձրանայ, եւ որչափ ատեն որ դեռ կրնայ գրսէն ներս խոթուիլ, անկից վաստակ ըլլալու ալ մեծ յոյս կայ : Աս գրսի

երկիրներէն ապրանքներս խոթելը արդեւ լուեւ լով, հարկ
կ'ըլլայ որ նոյն ապրանքը տէրութեան մէջ պատրաս-
տուի կամ ուրիշ մէկ բանով մը անոր տեղը լեցուի:
Ասկից ալ յառաջ կու գայ, որ գներուն բարձրու-
թիւնը այնչափ կը տեւէ, մինչեւ որ ներսի շինուած
ապրանքին շատութիւնը յառաջագոյն դրսէն եկածին
հետ հաւասարի: Ասկ աս կամ ան ապրանքը դուրս
չհանելու համար դրուած արդեւքները գներուն վրայ
բոլորովին ասոր հակառակ ազդեցութիւն ունին, այս
ինքն աժնութեան պատճառ կ'ըլլան:

Մաքսերուն շատնալով կամ աւելնալովն ալ ապ-
րանքները կը սուղնան, ինչու որ մաքսերուն աւելցած
մասը ապրանքին գնոյն վրայ կը զարնուի: «Ասեւ ապ-
րանք մը տէրութենէ դուրս հանելու համար տրուած
պարգեւը, չափին կամ քանիօնութեանը նայելով՝
ապրանքները նոյն երկրին մէջ կը սուղցընէ. ասոր հա-
կառակ ներս խոթելու համար խոթողին տրուած
պարգեւը՝ ապրանքները կ'աժանցընէ:

Տէրութիւնը կրնայ թէ առուտուրը յառաջ տա-
նելու ու արուեստները ծաղկեցընելու եւ թէ ետք
ձգելու ալ գործակից ըլլալ: Թէ որ բանուորները
իրենց աշխատողէքը առնելով գոհ կ'ըլլան, տուր-
քերը չափաւոր կ'ըլլան, ու գործատուներուն՝ իրենց
համար կարգի դրած աշխատաւորները հանգիստ կ'ըլ-
լան, ու զինուորական ծառայութիւն չեն ունենար,
ան ժամանակը ամէն տեսակ ապրանքն ու բերքը
առատ ու շատ կը պատրաստուի, ուստի եւ աժնու-
թեան ալ յոյս կ'ըլլայ:

156. Մինչեւ հիմա ապրանքներուն գներուն բար-
ձրանալուն ու իյնալուն պատճառ ըլլող դէպքերուն
վրայ ըսածներնէս, աս ետեւի սկզբունքները յառաջ
կու գան, որոնք վաճառականին ապրանքներու առ-
ուտուրին մէջ գիտողութիւն ընելու համար մէկիկ
գիտնալու հարկաւոր են:

Ա. Ապրանք մը որչափ քիչ գանուի, կամ հա-

զուազիւտ ըլլայ, այնչափ ալ կը սուղնայ, միայն թէ կարօտութիւնն ալ նոյն չափով քիչցած չըլլայ, եւ կամ ան ապրանքին տեղը ուրիշ ապրանք մը չբռնէ: Անոր համար Գաղղիացւոց՝ Անգղիացիներուն հետ ունեցած կռուին ժամանակը, որ ատեն որ նաւագնացութիւնը դադրած ու հաղորդակցութիւնը բոլորովին կտրած էր, գաղթականաց ապրանքները, զոր օրինակ խահուէ, շաքար* եւ այլն անանկ սղցան, որ գներնին կրկին, մանաւանդ թէ տասնապատիկ բարձրացաւ, մինչեւ որ ըստ մասին Տաճկաստանէն Մալդային վրայէն բերելու ճամբայ մը կրցան գտնել:

Բ. Այնչափ շատ վաստակի սպասելու ու աչք գնելու չէ, որչափ աղէկ յարմար ատենին ծախելու ու ձեռքէ հանելու: Ինչու որ հասարակօրէն կը պատահի որ ապրանքի մը սուղնալը անոր գործածութիւնն ալ կ'արգելէ, եւ աս գործածութեան արգելուելովը՝ գիները ալ չեն բարձրանար, ու ան աստիճան չեն ելլեր, ինչ որ ան բացարձակ կարօտութիւնը կը պահանջէր: Ինչպէս վերը յիշատակած կռուին ժամանակը պատահեցաւ, որ երբ որ գները սաստիկ բարձրացան, ան գաղթականաց ապրանքներուն գործածութիւնն ալ դադրեցաւ. սկսան խահուէն սաստիկ բարակ ծեծել ու քիչ խմել, կերակուրներուն մէջ համեմ չգործածել եւ կամ շատ քիչ, ներկելու գոյներուն մէջ լեղակն ու որդան կարմիրը (հըր'ը'ը) խնայութեամբ դնել. եւ յուսացուած շուտով վաճառումն ու ըլլալու մեծ շահը անանկ շուտով ու մէկէն չյաջողեցաւ. մանաւանդ որ ասանկ ժամանակ անոնք ալ իրենց ապրանքը դուրս կը հանեն, որոնց համար յառաջագոյն գնող չէր գտնուած:

Գ. Թէ որ ստուգիւ ու ապահովութեամբ յառաջուց կրնաս իմանալ, որ ստակի պակասութիւն կամ

* Ասոնց Եւրոպացիք գաղթականաց ապրանք կ'ըսեն, ինչու որ ըստ մեծի մասին իրենց դրսի երկիրներէն կամ գաղթականներէն կը հանեն կը բերեն:

նուազուժիւն պիտ'որ ըլլայ, ան ատեն կրնաս հաւանական սեպել, որ ամէն ապրանքներուն եւ մահաւանդ պակասած ու շատ փնտռուած ապրանքներուն գները պիտ'որ իյնան: Ասան զի առուտուրի մէջ ստակի պակասութիւնը, ուրիշ պարագաները նոյն մնալով՝ ապրանքներուն գներուն իյնալուն պատճառ կ'ըլլայ: Ինչու որ ան ատեն ամէն մարդ քիչ շահով ալ իր ապրանքը ձեռքէ հանելու ու ծախելու կը նայի. կը գտնուին նաեւ վաճառականներ որոնք առանց վաստակի ալ կը ծախեն: Իսկ թէ որ ստրկի պակասութիւնը գնողներուն մէջն է, ան ատեն կարօտութիւնն ալ կը քիչնայ, ինչու որ քիչ կը գնուի:

Գ. Ար ապրանքի վրայ որ շատ դիտողութիւն ընողներ կան, անոր վրայ պէտք չես դիտողութիւն ընել. ինչու որ աս պարագայիս մէջ վաստակդ այնչափ մեծ չկրնար ըլլալ, բայց փնասդ կրնայ մեծ ըլլալ: Ասան զի աս դէպքիս մէջ քեզի շատ ընթացակից ընկերներ ունենալով, ասոնցմէ շատերը ստակի պակասութեան մէջ կրնան իյնալ, ու չկրնալով դիմանալ՝ ապրանքնին դուրս կը հանեն, ու գները մէկէն կ'իյնան:

Ե. Թէ որ մինակ առանձին տեղ մը ապրանքները սուղնան, միայն քիչ ժամանակուան միջոցի մէջ մեծ առուտուր ու մեծ վաստակ կրնայ յուսացուիլ: Ինչու որ տեղական պակասութիւնը կամ նուազութիւնը, ինչպէս վերը ըսինք, կարճ ու անցաւոր է:

Տեղական պակասութիւն կրնայ պատահիլ, երբ որ մի եւ նոյն ատեն ան տեղը այնչափ շատ յանձնարարութիւններ կ'ըլլան ու ապրանք կ'որոշուի, որ պատրաստ գտնուած ապրանքին մթերքը բաւական չըլլար, եւ կամ երբ որ վաճառականները կարծելով որ գները պիտ'որ իյնան՝ իրենց ունեցած ապրանքը կը պահեն: Աս երկու դէպքիս մէջն ալ գները կը բարձրանան, բայց քիչ մը ատեն:

Զ. Թէ որ ապրանքի մը մեծ կարօտութիւն ու

հարկաւորութիւն ծագի, ու պատրաստ գտնուած ապրանքը անոր համեմատութեամբ շատ քիչ է ու չկրնար ալ շատնալ, ան ատեն վաճառականը յառաջուց գնած եւ պատրաստ ունեցած ապրանքէն մեծ օգուտ ու շահ կրնայ բնել, անոր համար ան ժամանակը ձեռքն ունեցած ապրանքը աղէկ գործածելու ժամանակ է:

Ս. Առօդ, բորակ, ծծումբ, կաշի, օղի, եւ այլն պատերազմի ատեն շատ հարկաւոր են, ու դուրս հանելն ալ կ'արդելուի. անոր համար ալ սովորաբար գներնին կը բարձրանայ:

Է. Թէ որ ապրանքի մը կարօտութիւնը ըլլայ, բայց ան ապրանքին տեղ ուրիշ ապրանք մը կարող ըլլայ բռնել ու անոր տեղը գործածուիլ, ան ատեն շուսացուիր որ պակասած ապրանքին գինը շատ բարձրանայ: Ինչպէս Նաբոլէոնին ատենը ցամաքը գոցուած ժամանակը՝ լեղակի (շէշէրէ) տեղ՝ լըջու (օ՞ն շէշէրէ) կը գործածուէր, անոր համար լեղակին գինը այնչափ չբարձրացաւ:

Ը. Պատերազմ բացուելուն պէս՝ պատերազմի հարկաւոր եղած ապրանքներուն գինը անմիջապէս կը բարձրանայ. իսկ ծովային պատերազմ բացուելու ըլլայ, բոլոր գաղթականաց ապրանքները սաստիկ կը սուղնան:

Թ. Թէ որ տէրութեան մը կամ անոր մէկ գաւառին մէջ սպառողները սաստիկ շատնալու ըլլան, (զոր օրինակ կրնայ պատահիլ, երբ որ տեղ մը պատերազմի բանակ շինուի,) ան ատեն կարօտութիւն կամ բացարձակ հարկաւորութիւն ալ չըլլայ նէ, ի վերայ այսր ամենայնի ապրանքները շատ կը փնտռուին, ու թէ որ վաճառականը յառաջուց գնած պատրաստ ապրանք ունենայ, իսկզբան սաստիկ մեծ շահ կ'ունենայ, բայց վրան քիչ մը ժամանակ անցնելէն ետքը գրսի երկիրներէն շատ ներս բերելով, շահը քանի կ'երթայ կը նուազի:

Ժ. Ան դիտողութիւնները որոնք գներուն բրանահան կերպով մը բարձրանալուն վրայ հաստատուած են, խիստ անստոյգ շահ կը բերեն :

Թէ որ ապրանքի մը գներուն բարձրանալը չէ թէ ան ապրանքին պակսելէն, հապա անկից միայն յառաջ եկած է, որ շատերը առատ ստակ ունենալով ան ապրանքը գնելէն պահելէն շատ վաստակ կը յուսան, ան ատեն յայտնի բան է, որ աս կերպով ապրանքին գնոյն բարձրանալը՝ պահել ուզող գնողներէն ու անոնց հաճոյքէն յառաջ եկած բան է : Ինչու որ երբ որ անանկ համարին որ իրենց ստակը աւելի շահով ուրիշ բանի մը կրնան գործածել, եւ կամ ապրանքները պահելէն օգուտ մը չեն տեսներ նէ, ան ատեն գները նորէն իրենց առջի վիճակը կը դառնան :

ԺԱ. Որչափ որ գործատանց մէջ շատ ապրանք պատրաստուի, կամ պատրաստել հարկ ըլլայ, այնչափ ալ նիւթերուն գինը կը բարձրանայ, երբ որ ան ապրանքին գործածութիւնն ալ եղած մթերքին համեմատութեամբ կ'աւելնայ, եւ նաեւ անգործ նիւթը դժուարաւ կը գտնուի, կամ յառաջ բերելը դժուար կ'ըլլայ : Անոր համար երբ որ Նաբոլէոնին ժամանակը ծովը նորէն բացուեցաւ, ու ապակին դուրս կրնար հանուիլ, աս կողմերը տնկադին (հալի) Բըլլէն) գինը բարձրացաւ :

ԺԲ. Տերութեան բռնած ճամբան ալ ապրանքներու գներուն բարձրանալուն ու իջնալուն վրայ շատ մեծ ազդեցութիւն կ'ընէ : Վանի մը տեսակ ապրանքներ շինելու կամ պատրաստելու համար տրուած վարձքը՝ ան ապրանքին մթերքը շատցընելու կը ծառայէ ու գները վար կը ձգէ : Իսկ դրսէն ներս խոթելու համար դրուած արգելքները՝ գները կը բարձրացընեն . բայց դուրս հանելու արգելքները՝ որ ապրանքներուն վրայ որ դրուած ըլլան, անոնց գները վար կը ձգեն :

ԺԳ. Ան ժամանակը որ ծախողները կը շատնան, (զոր օրինակ է հունձքի ժամանակները,) կը յուսացուի որ գները վար կ'իջնան. բայց աս ատենը անցնելէն ետքը, նորէն կը բարձրանան:

Միանգամայն ասանկ հունձքէն անմիջապէս ետքը գնուած ապրանքներու դիտողութեան մէջ պէտք է նաեւ մտածել որ ասոնք ժամանակաւ չորնալով՝ իրենց ծաւալն ու ծանրութիւնը երեւելապէս կը պակսի: Յայտնի բան է որ ան ապրանքները, որոնք ծաւալի միութեան վրայ կը գնուին, զոր օրինակ ցորեան, գարի եւ ուրիշ ասոնց նման բաներ, իսկզբան թաց եղած ատեննին շատ աւելի տեղ կը բռնեն, քան թէ չորնալէն ետքը: Ասկ անոնք որ կշռով կը գնուին, ետքէն աւելի թեթեւ կու գան, ինչպէս ծխախոտի տերեւներ եւ այլն: Ասկ հեղուկներ, ինչպէս եղ, քաղցու (շէր), նոր գինի, իսկզբան շատ մրուր կը թողուն, ու նաեւ դեռ խմորման վիճակի մէջ ըլլալով, շատ տեղ կամ միջոց կը բռնեն: Ասով յայտնի է, որ ետքէն ծախուելու ըլլան նէ, գներնին կը բարձրանայ:

ԺԴ. Ան ապրանքներէն, որոնց ազնուութիւնը քիչ ատենի մէջ կը կորսուի կամ կը նուաղի, ապահովութեամբ շուտով ծախելու յուսացուածէն աւելի շատ մ'թերք շառնելու է, կամ թէ ըսենք շատը մէկտեղ չգնելու է:

ԺԵ. Աւելի ապահովութեամբ դիտողութիւն կրնաս ընել ան ապրանքներուն վրայ, որոնք միշտ անպակաս հարկաւոր են, քան թէ անոնց վրայ, որոնք չըլլալու ըլլան նէ ալ՝ կ'ըլլայ, եւ կամ ուրիշ ապրանքով մը տեղերնին կրնայ լեցուիլ:

Անոր համար կարօտութեան ու սննդեան ապրանքներուն վրայ (ինչպէս են ցորեն, բրինձ, խահուէ, շաքար, գինի, ծխախոտ եւ այլն), հագնելու վերաբերեալ ապրանքներու վրայ (ինչպէս են բամբակ, մետաքս, կտաւ, կաշի, ու անոնցմէ գործուած

ապրանքները), կարասեաց ու արուեստական ապրանքներու վրայ ապահովութեամբ վաստակ կը յուսացուի, քան թէ զարդարանքի ապրանքներէն կամ անանկ ապրանքներէն, որոնց տեղը ուրիշ ապրանք մը կրնայ բռնել:

ԺԶ. Թէ որ նիւթերուն գները բարձրանան, պէտք է ան ատեն ան ապրանքներուն գներուն բարձրանալուն սպասել, որոնք ան նիւթերէն կը շինուին: Օր օրինակ փայտին ու տնկաղին գինը կը բարձրանայ նէ, յայտնի բան է, որ ապակւոյն գինն ալ պիտ'որ բարձրանայ. նոյնպէս կապարին գինը բարձրացած ատեն՝ նօթը (սիւլի-յէնը), սպիտակաղեղը (իւլի-պէնը), քարմարցանկը (սիւլի-սիւլի) կը թանկնայ. իսկ պղնձին սուղնալովը ժանգն ալ կը սուղնայ: Վարձեալ երբ որ մորթերը խաղախելու կամ աղաղելու նիւթը (զոր օրինակ կաղնիի կեղեւը, գղթորը) կը սուղնայ, ան ատեն կաշին ալ սուղ կ'ըլլայ: Վաճառեալս բուրդը, բամբակը, մետաքսը թանկ կ'ըլլայ նէ, անոնցմէ շինուած ապրանքներն ալ թանկ կ'ըլլան:

ԺԷ. Արչափ կարելի է ապահովութեամբ դիտողութիւն ընելու համար, պէտք չէ գներուն բարձրանալը կամ իյնալը քանի մը հաւանականութեան պատճառներով քննելով շատանալ, հապա պէտք է ամէն պարագաները մէկտեղ առնելով աղէկ մտածել ու կշռել, որոնք անոր վրայ ազդեցութիւն մը կրնան ընել: Ինչու որ ինչպէս ամբողջ մը կազմելու համար բոլոր մասերն ալ կ'ենթադրուին, ասանկ ալ գործք մը յառաջ բերելու համար, անոր հարկաւոր եղած ամէն պատճառներն ալ պիտ'որ ըլլան. ամէնը՝ եւ ոչ թէ մէկ քանի հատը մինակ կրնան ան գործքը յառաջ բերել:

Մեր ընթերցողները մինչև հիմա ըսածներնէս կրնան դիւրաւ իմանալ թէ գներուն բարձրանալը ետեւէն գալիքին հաւանականութիւններովը իմանալը

ու անոր նայելով սպասելը որչափ դժուար բան է :
 Ասանկ գիտողութիւններ ընել ուզողը առանձինն
 ազատ դրամագլուխ ունենալու է, որն որ երկայն ա-
 տեն կարող ըլլայ ասանկ ապրանքներուն վրայ թո-
 ղուլ, ու ամէն բանէն յառաջ պէտք է մտածել թէ
 Այսչափ ապրանք կրնայ ծախել թէ չէ : Ենչու որ թէ
 որ չկրնար, ան ատեն որչափ ալ աժան տայ, չկրնար
 անիկայ ձեռքէ հանել :

Կան ապրանքներ, որոնք տարւոյն եղանակին հետ
 կապուած են, ինչպէս չկայ մէկը որ ամառուան հա-
 զուստները ձմեռը ծախէ. ասանկ ալ գինի, օղի
 ծխախոտ, կաշիէ հողաթափ եւ այլն, աւելի ձմեռը
 կը ծախուին :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ

Գ Ո Ր Ծ Ա Տ Ո Ւ Ն Ն Ե Ր Ո Ւ Ն Գ Ո Ր Ծ Ք Ե Ր Ո Ւ Ն

Հ Ա Ւ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Ը Վ Ր Ա Ց

157. ԳՈՐԾԱՏԵՐ մը կամ գործատուն բացող
 մարդը՝ պէտք է ասանկ մեծ գործողութեան մը ձեռք
 զարնելէն յառաջ, մտածէ որ տակէն կարող պիտ'որ
 ըլլայ ելլել թէ չէ : Ասիկայ իմանալու համար,
 պէտք է որ աղէկ մը քննէ, թէ արդեօք

Ա. Իր շինած ապրանքները գնող պիտ'որ կա-
 րող ըլլայ գտնել :

Բ. Ան ապրանքները շինելու կամ պատրաստե-
 լու համար հարկաւոր եղած նիւթերը կամ միջոց-
 ներն ունի թէ չէ :

Գ. Առանց խուփութիւն հանելու իր գործքին
 հարկաւոր եղած գործավարներ կրնայ գտնել թէ չէ :

158. Իր պատրաստած ապրանքներուն քշուելուն
 վրայ ան ատենը միայն հաստատուն ու ապահով
 կրնայ ըլլալ, երբ որ

Ա. Իր պատրաստած ապրանքին ճշմարիտ իրա-
 կան եւ կամ գոնէ երեւակայական կարօտութիւն
 կայ :

Բ. Երբ որ ապրանքներուն աղնուութեան, գեղեցիութեան ու գներուն պայմաններուն կողմանէ նայելով, կրնայ ուրիշ գործատուներուն շինածին հաւասարիլ եւ կամ թէ

Գ. Ալ աւելի աղէկ, գեղեցիկ ու աժան ապրանքներ կրնայ հանել:

Դ. Թէ որ գործատուներ հաստատելու տեղը՝ մէկալ գործատուներուն եղած տեղուանքէն աւելի բանուկ ու գնողներուն աւելի հաճելի է:

Ե. Թէ որ գնողներուն հետ ճանչուորութիւն ունի, ու անոնք ալ իր վրայ համարում ստացած են:

Զ. Թէ որ նոյն իսկ կառավարութիւնն ալ նոյն տեսակ ապրանքներուն դրսէն ներս մտնելը արգելելով եւ կամ դուրս հանողներուն վարձք տալով, աւելի օգնական կ'ըլլայ:

159. Արդեօք իր պատրաստելու ապրանքին նիւթը առանց արգելքի մը իրեն հարկաւոր եղածին չափ կրնայ գտնել թէ չէ, հաստատութեամբ կրնայ իմանալ, երբ որ

Ա. Ան նիւթէն մթերք ժողվելու ու իրեն հարկաւոր եղածը յառաջուց պատրաստելու բաւական գոյք (ֆոնդոյ) ունի, որով առանց արգելքի մը ապրանքները իր շահովը գնելու յարմար առիթ մը գալուն պէս, կարող ըլլայ գնել:

Բ. Թէ որ ան նիւթը տէրութեան մէջը կրնայ գտնել, ու քիչերուն ձեռքը չէ, որ իրեն սուղ կարենան ծախել եւ կամ բոլորովին ալ չտալ:

Գ. Թէ որ ան նիւթը պատրաստող գործատուները գէշ վիճակի մէջ չեն, որով նոյն ապրանքէն բաւական բերուիլը դժուար չըլլայ:

160. Իրեն հարկաւոր եղածին չափ բանուոր գտնելուն վրայ կրնայ ապահով ըլլալ,

Ա. Թէ որ կառավարութիւնը որչափ կարելի է բանուորները իրենց գործքին մէջ հանգիստ կը թողու:

Բ. Թէ որ տէրութեան մէջ քաջ ու աղէկ գործունեայ բանուորներ բաւական կան եւ կամ դրսէն կրնայ բերուիլ:

Գ. Թէ որ գործքը այնչափ վաստակ կը ցուցընէ, որ գործաւորներուն վարձքը աղէկ կրնայ վճարել:

Դ. Թէ որ ինքն ալ անանկ բնութիւն մը ունի, որ գործաւորներուն հետ կրնայ վարուիլ ու խաղաղութեամբ ու հանդարտութեամբ երթալ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Դ

ՓՈՒԱՆԱԿԱԳՐԵՐՈՒ ԳՆԵՐՈՒՆ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՑ

161. ԼՄԷՆ տեսակ ստակ այնչափ ներքին արժէք ունի, որչափ որ մէջը արծաթ կամ ոսկի կայ: Բայց թէ որ ստակի որոշեալ տեսակ մը շատ փնտռուելու կը սկսի եւ կամ թէ քիչ փնտռուելու ըլլայ, ան ատեն առուտուրի մէջ ալ վաճառատեղեաց կամ շուկայի գին մը կը ստանայ, որն որ բարձր կամ ցած կրնայ ըլլալ, եւ Ստակներու ընթացք (համայն, cours) կը կոչուի:

Թէ որ աս գներուն համեմատութիւնը, այս ինքն է բարձր կամ ցած գինը բուն ստակի տեսակներուն վրայ է, Ստակի ընթացք կը կոչուի. բայց թէ որ մէկ տեղէ ուրիշ տեղ քաշուած փոխանակագրերուն վրայ է, ան ատեն Փոխանակագրերու ընթացք կ'ըսուի:

162. Ստակի ընթացքը գլխաւորաբար ան երկիրներուն մէջ հարկաւոր է, ուր որ շրջան ընող թղթէ ստակին շուկայի գնոյն ու գտնուած բուն ստակին գներուն մէջ անհամեմատութիւն մը մտած է: Լս ընթացքին բարձրանալուն կամ իյնալուն վրայ եղած դիտողութիւնը ետեւի սկզբունքներէ կախում ունի:
Ա. Թէ որ տէրութիւնը թղթէ ստակը քիչցընելու կը նայի, ան ատեն թղթէ ստակը աւելի շահաբեր ընթացք կ'ունենայ, որուն աղէկ միտ դնելով դիտո-

ղութիւնն ընելու է: Բ. Թէ որ տէրութեան իր հպա-
 աակներուն ըրած վճարմունքները եւ կամ գրսէն
 ըլլալու վճարմունքները՝ կը կարծուին որ ոսկիով կամ
 արծաթով պիտ'որ ըլլան, ան ատեն թղթէ ստակին
 ընթացքը աւելի աղէկ ու բարձր կ'ըլլայ: Գ. Թէ որ
 տէրութիւնը արտաքոյ կարգի վճարմունքներով, այս
 ինքն ստակ վճարելով կամ ստակ գուրս հանելով,
 թղթէ ստակը քիչցընելու տեղ շատցընելու կը ստի-
 պուի, ան ատեն պէտք է որ թղթէ ստակին ընթացքը
 գէշնայ:

163. Փոխանակագրի ընթացքն է մեր եղած
 տեղւոյն ստակին գինը, որուն նայելով ստակի գու-
 մար մը ուրիշ հեռու տեղ մը աս կամ ան որոշեալ
 ժամանակին մեզի պիտ'որ վճարուի, եւ կամ խոտոր-
 նակի մեր գտնուած տեղւոյն ստակին գինն է, որուն
 նայելով ստակի որոշեալ գումար մը աս կամ ան ատեն
 ուրիշ հեռաւոր տեղ գտնուած անձի մը պիտ'որ ան-
 ցընենք կամ վճարել տանք: Թէ որ աս գինը տեղ-
 ւոյն ստակին ներքին գնոյն հաւասար է, ան ատեն
 ընթացքը Հաւասար կ'ըսուի, բայց երբ որ գնոյն հա-
 մեմատութիւնը ստակին շատ կամ քիչ փնտռուելուն
 պատճառաւ հաւասարութեան մէջ շմնար, ան ատեն
 ան տեղւոյն ընթացքը՝ ուր որ շատ կը փնտռուի հա-
 ւասարէն Բարձր, իսկ քիչ փնտռուած տեղւոյնը՝
 աւելի Ցած կ'ըլլայ:

164. Թէ որ փոխանակագրի ընթացքին բարձրա-
 նալուն կամ իյնալուն հաւանականութեանցը վրայ
 մտածելու ըլլանք, մէկէն կը տեսնենք որ ասոր մէջը՝
 ըստ ամենայնի ընդհանրապէս ապրանքներու գիտողու-
 թիւններուն նման, պակասութեան ու առատութեան
 նայելու ենք, եւ գիտնալու ենք թէ փոխանակագրի
 ընթացքին բարձրանալն ու իյնալը՝ շատ կամ քիչ
 փնտռուելէն կախում ունի: Ասոր համար հոստեղս
 փոխանակագրերուն որոշեալ տեղուանք շատ կամ
 քիչ փնտռուելուն պատճառը պիտ'որ քննենք:

Ս՝ աճառականք երբ որ հեռու տեղ մը վճարելիք ունի ու կ'ուզէ վճարմունքը տալ, ան ատեն ան տեղը վճարուելու փոխանակագիր կը գնէ, ասանկ ալ ունեցած փոխանակագիրը որ ուրիշ տեղ պիտ'որ վճարուի, կը ծախէ, ինչու որ հոն տեղը առնելիք ունի, ու փոխանակագիրը ծախելով՝ կը կարծէ որ իր ստակը աւելի օգտիւ ու շահով ձեռք բերած կ'ըլլայ: Ասոնք են գլխաւորաբար որ ուրիշ տեղ քաշուած փոխանակագիր մը գնելու կամ ծախելու պատճառ կ'ըլլան:

Ստոյգ է որ ամէն պարտք առձեռնպատրաստ դրամ խրկելով ու ասոր հակառակ ամէն պահանջք ալ աս կերպով կրնայ առնուիլ. բայց շատ արդելքներ կան, որ շատ անգամ ասանկ առձեռնպատրաստ դրամով վճարելը անկարելի կ'ընեն. մէկ տեղւոյ մը ստակը շատ անգամ ուրիշ տեղ շանցնիր. նաեւ շատ անգամ առձեռնպատրաստ դրամ խրկելն ալ անկարելի է, ինչու որ տէրութիւնը արծաթ, ոսկի դուրս հանելը բոլորովին կ'արգելէ: Ասկից զատ կան նաեւ ճամբու ծախքն ու վտանգները, որոնք անանկ մեծ են, որ վաճառականները կը պարտաւորին իրարմէ ունեցած պահանջքնին փոփոխակի աւրել, իսկ տէրութիւնները աս պատճառներու համար փոխանակագրի առուտուրը պաշտպանելու կը ստիպուին:

Աս ըսածներնէս կը հետեւի, որ եթէ որոշեալ հեռու տեղ մը շատ վճարմունքներ պիտ'որ ըլլան, ան փոխանակագրերը շատ կը փնտռուին, որոնք ան տեղը պիտ'որ վճարուին, ուստի եւ աս փոխանակագրերը կը սուղնան: Ասց ինչպէս որ ապրանքներու առուտուրին մէջ շատ անգամ կը պատահի, որ ապրանքի մը գնոյն չափէ դուրս բարձրանալը կրնայ արգելուիլ, երբ որ անոնց տեղը ուրիշ ապրանքով մը կրնանք լեցընել, ասանկ ալ շատ անգամ փոխանակագրի առուտուրին մէջ կը պատահի, որ երբ որ փոխանակագրի ընթացքը տեղ մը կը բարձրանայ, ուրիշ արամագրութիւններ ընելով ասիկայ կրնանք արգել-

լել: Ասոր վրայ ու անոր հաշիւները ընելու օրէնքներուն վրայ կը խօսուի հաշուեգիտութեան մէջ, որն որ այլեւայլ պատճառներու համար աւ գրքին մէջ չգրինք:

165. Արկու տեղերու, եւ գնող ու ծախողներու փոխանակագրերուն ընթացքը ետեւի սկզբունքներով կ'որոշուի, որոնք վաճառականը աչքին առջեւէն կ'որսընցընելու չէ:

Ա. Ավաճառատեղւոյն պարտքին ու պահանջքին կամ թէ տալիքին ու առնելիքին իրարու հետ ունեցած համեմատութենէն, կամ աւելի յայտնի ու բացայայտ խօսելու համար մեր տեղւոյն գնողներուն ու ծախողներուն իրարու ունեցած համեմատութենէն: Արչափ որ տեղ մը խրկելու համար շատ փոխանակագիր կը փնտռուի, ու որչափ որ քիչ կը գանուի, ան ատեն ընթացքն ալ այնչափ աւելի բարձր պէտք է որ ըլլայ:

Բ. Գնողներուն ունեցած ստակին առատութենէն, ու ծախողներուն ստակի կարօտութիւն ունենալէն: Ինչու որ առատ ստակ ունեցողները ետեւէն վճարուելու փոխանակագրեր կը գնեն, իսկ ստակի կարօտութիւն ունեցողները, խել մը ատեն ետքը առնելու պահանջքնին ծախելու կը նային, որ որչափ կարելի է ձեռքերնին շուտ ստակ անցնի:

Գ. Փոխանակագրին պայմանաժամէն կամ վճարուելու ժամանակէն (échéance), այս ինքն փոխանակագիրը գնողին ստակը վճարած ատենէն մինչեւ իրեն դրամը ուրիշ հեռու տեղ մը առնելը: Ասորորդ պայմանէն յայտնապէս կը տեսնուի որ փոխանակագիր մը որչափ որ ուշ պիտ'որ վճարուի, այնչափ պէտք է որ աժան գնուի:

Դ. Տոկոսիքէն: Մէկ տեղւոյ մը տոկոսիքին բարձր ըլլալէն եւ կամ նաեւ ստակին քիչութենէն՝ փոխանակագրերուն վճարուելու ժամանակներն ալ իրարմէ տարբերութիւն կ'ունենան, ինչու որ փոխա-

նակագիր գնող մը իր փոխանակագրին հետու տեղ կանուխ կամ ուշ վճարուելուն անտարբեր չկրնար ըլլալ. անոր համար ուշ վճարուի պիտ'որ նէ, գնելու ատեն անոր տոկոսիքին ալ միտ գնելու է:

Ե. Օախտոյին (քաշողին, փոխանցողին, կամ նաեւ թէ որ փոխանակագիրը ընդունուած է նէ, ընդունողին) համարման ընդունակութենէն: Ինչու որ փոխանակագրին հետու տեղ մը վճարուիլը ապահովութեամբ յառաջագոյն չկրնար գուշակուիլ, ու կրնայ պատահիլ, որ անիկայ որն որ պիտ'որ վճարէր, սնանկանայ, ու փոխանակագիրը չվճարուած ետ դառնայ:

Զ. Ընդունապատրաստ դրամ խրկելուն ուղղակի կամ անուղղակի եղած ծախքերէն, անոր ճամբուն ապահովութենէն, ու ստակ դուրս հանելու արգելքներէն:

Է. Աւրիշ փոխանակագրի վաճառատեղիներուն փոխանակագրի ընթացքէն, որով ուղղակի տեղւոյ մը վրայ եղած դիտողութեանց վնասներէն կրնաս զգուշանալ: Ինչու որ թէ որ մէկու մը պարտք ունիս, կրնաս անոր գրել որ իր պահանջքին համար երրորդ տեղ մը եւ ոչ թէ քու վրայ փոխանակագիր քաշէ, կամ ուրիշ տեղէ մը կրնաս քու պարտատէրիդ իր տեղը վճարուելու փոխանակագրեր խաւրել: Քու տեղւոյդ ու ան երրորդ տեղւոյն ընթացքները իրարու հետ համեմատելով կրնաս իմանալ թէ քեզի որը աւելի օգտակար է:

Ը. Մասնաւոր պարագաներէն, որոնք սովորութենէն դուրս տեղւոյ մը մէջ փոխանակագրերուն շատ փնտռուելուն պատճառ կ'ըլլան, ինչպէս են մէկէն շատը մէկտեղ ծախուիլը, տօնավաճառները, պատերազմը, տէրութեան մը ստակի մեծ գուժար մը պարտք առնելը, եւ այլն:

Ըստ զրուցած սկզբունքներով ու անոնք իրարու հետ համեմատելով, վաճառականը ամէն դէպքերուն

մէջ փոխանակագրերուն ընթացքին փոփոխութեանցը վրայ դատաստան պիտ'որ ընէ, ու անոնց բարձրանալուն ու իյնալուն աստիճանը պիտ'որ իմանայ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե

ՏԵՐՈՒԹԵԱՆ ԹՂԹԵՐՈՎ ԱՌՈՒՏՈՒՐԻՆ ՄԷՋ ԵՂԱԾ
ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՑԸ ՎՐԱՅ

166. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԹՂԹԵՐ կ'ըսուին կառավարութեան դաշնագրութեամբ առած պարտքին դիմացը տոկոսեօք վճարուելու պարտականութեան ԹՂԹԵՐը: Ասոնք ԹՂԹԷ ստակէն զանազանելու համար Տէրութեան ԹՂԹԵՐ ըսուած են: Աս ԹՂԹԵՐուն յարգը կամ արժէքը՝ ան դէպքերէն կախում ունին, որոնք աս ԹՂԹԵՐուն վրայ կրնան պատահիլ: Ենչպէս յայտնի է, աս ԹՂԹԵՐը գնողը կամ առնողը իշխանութիւն չունի, երբ որ որ ուզէ նէ իր դրամագլուխը ետ առնելու. Թէ որ աս իշխանութիւնն ունենար, ան առեներ ասոնց գինը ոչ կը բարձրանար եւ ոչ ալ կրնար իյնալ: Արովհետեւ Թէ որ բարձրանալու ըլլար, տէրութիւնը ան առեներ աւելի տոկոսիք վճարելու պարտաւորելով, ետ կու տար. իսկ Թէ որ իյնալու ըլլար, ան առեներ ԹՂԹԻՆ տէրը իր դրամագլուխը կը պահանջէր, ինչու որ շահը քիչնալով, ան դրամագլուխը աւելի բարձր տոկոսիքով կրնար գործածել:

Աս ըսածներնէս կը հետեւի որ աս ԹՂԹԵՐուն գինը անկից կը բարձրանայ կամ կ'իջնայ, որ ունեցողը իր դրամագլուխը ետ չկրնալով առնուլ, տէրութեան ու ան ԹՂԹԵՐն ունեցողներուն գլուխը անանկ դէպքեր կը պատահին, որոնց նկատմամբ ասոնց ալ գինը կը փոխուի: Թէ որ տէրութիւնը նորէն պարտք առնելով իր պարտքը կ'աւելցընէ, Թէ որ շահը կը նուազեցընէ, Թէ որ դաշնագրեալ պարտքին վրայ վերագիր մը կը պահանջէ, Թէ որ անանկ տեղեր կը կորսընցընէ, որ կէս մը տէրութեան ԹՂԹԵՐուն ապահովութիւն

էին, թէ որ տէրութեան թղթերն ունեցողները առ-
 ձեռնպատրաստ դրամի կարօտութիւն ունին, ուստի
 եւ իրենց քովը ունեցած տէրութեան թղթերը ծա-
 խելու կը պարտաւորին, եւ վերջապէս թէ որ առան-
 ձնական մարդիկներու հետ աւելի շահով ստակ տա-
 լու առնելու դաշնագրութիւն կրնայ ըլլալ, քան թէ
 տէրութեան հետ, ան առնն տէրութեան թղթերուն
 իյնալը ստոյգ է: Ասոր հակառակ դէպքերուն մէջ,
 տէրութեան թղթերը աւելի յարգ կը ստանան: Աս
 թղթերը տէրութեան վիճակը ցուցնող ծանրաշափ
 մը սեպուած են, մանաւանդ պատերազմը, կամ պա-
 տերազմի վախը առննց իյնալուն ելլելուն վրայ շատ
 մեծ ազդեցութիւն ունի:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Զ

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԹՂԹԵՐՈՒՆ ԲԱՐՉՐԱՆԱԼՈՒՆ ՈՒ
 ԻՅՆԱԼՈՒՆ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՑԸ ՎՐԱՅ

167. ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ թղթերուն ինչ ըլլա-
 լը՝ արդէն 54 համարին մէջ մեկնեցինք: Արովհետեւ
 բաժանորդութեան թղթերէն եղած վաստակը ան
 գործքին յառաջ երթալէն կախում ունի, որուն հա-
 մար որ դրուած է, ասկից կը հետեւի որ անոնց գինը
 գործքին յառաջ երթալուն վրայ եղած յոյսէն կը կա-
 խուի: Գործքին յաջողութիւն ցուցնող պարագա-
 ները՝ անոնց շատ փնտռուելուն պատճառ կ'ըլլան, ու
 շատ փնտռուիլը՝ անոնց գինը կը բարձրացընէ. ասոր
 հակառակ են բոլորովին անյաջողութիւն ցուցնող
 պարագաները, որոնցմով բաժանորդութեան թղթե-
 րուն գինը կ'իյնայ:

Բաժանորդութեան թղթի մը վրայ վստահանալը՝
 ան գործքին գլուխ ըլլող ընկերութեանը վրայ ունե-
 ցած վստահութեան աստիճանէն կախում ունի: Ան
 ընկերութիւնները, որոնց գլխաւորներուն վրայ հա-
 սարակութիւնը համարում ու վստահութիւն կը ցու-

ցրնէ, աւելի վատահուծեան արժանի են ու վրանին ապահով կրնանք ըլլալ, մանաւանդ երբ որ համոզիչ պատճառներով դորձքին յաջողութեանը վրայ կը յուսանք եւ կամ յաջողութիւնը կը տեսնենք:

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ Է

ԱՊԱՀՈՎՅԸՆԵԼՈՒ ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆՅԸ ՎԲԱՅ

168. ԱՊԱՀՈՎՅԸՆԵԼՈՒ դիտողութեանց մէջ հաւանականութիւնը պատահմանց ու դէպքերու ակնկալութեանց վրայ հաստատուած է: Փորձը մարդու սորվեցուց, որ մէկ տեղէ ելլող նաւերուն մէջէն քանի հատը, ուր եւ ո՞ր ատեն աւելի կը վնասին: Արդնպէս փորձով դիտուած է թէ ո՞ր նաւերը օրչափ ոյժ ունին կամ թէ իրենց զօրութեամբը կրնան դժբաղդութենէ ազատիլ, եւ ո՞ր տեսակ նաւերը անանկ շինուած են որ ծովի ու հովի գէժ կարող ըլլան դիմանալ, եւ միանգամայն յայտնի է որ թշնամի զօրքերէն ու մանաւանդ զողերէն ատեն ատեն, ու տեղ տեղ նաւերու ինչեր պատահած են: Ասոնք գիտնալով զանազան ընկերութիւններ կան, որոնք ապրանքները կ'ապահովցրնեն, այս ինքն վարձք մը կ'առնեն ան դաշամբ որ երբ որ ապրանքը կորսուի, ան ատեն ապրանքին արժէքը բոլոր կը վճարեն:

169. Ապահովցրնելու հաւանականութիւնները երկու այլեւայլ հաւանականութիւններու նայելով կրնան հաշուիլ. մէյ մը՝ երբ որ մէկ բանին ապահովցրնելը վրադ առնելու համար հաւանականութեան պատճառներով վտանգը կը հաշուես, մէյ մ'ալ ընդհանրապէս երբ որ կը հաշուես ու կը շափշրփես թէ ապահովացուցման գները պիտ'որ բարձրանան թէ չէ:

Ապահովցրնելը վրանիս առնելու ատեն՝ եղած վտանգները ցուցրնելու մեզի առաջնորդ է:

Ա. Փորձառութիւնը:

Բ. Ապրանքը տանելու առիթն ու կերպը: Մէկ հաստատուն սեպուած նաւի մը վրայ, ու հմուտ

նաւապետի մը ու վարժ նաւաւարներու տակ է նէ ապրանքը, ան ատեն քիչ վարձքով ալ մարդ կրնայ ապահովընել, ինչու որ վրան առած վտանգը ստուգիւ քիչ է. բայց ասոր հակառակը չկրնար ապահովընողը քիչով գոհ ըլլալ. երբ որ նաւը խախտու է, կամ նաւապետը անտեղեակ է եւ կամ նաւաւարները նոր ու անվարժ են:

Գ. Օտովու վրայ հասարակաց ապահովութեան համար դրուած միջոցները, որոնցմով գողերու ու թշնամիներու վտանգ կամ ամենեւին չըլլար եւ կամ ըլլայ նէ ալ, այնչափ մեծ բան մը չէ:

Իսկ ապահովընելու վարձքին բարձրանալուն ու իյնալուն վրայ ընդհանրապէս դատաստան ընելու համար, պէտք է

Ա. Ընոնց փնտռուիլը քննել: Թէ որ նաւահանգստի մը քով ապահովընելու մեծամեծ շատ տներ կան, ու անոր հակառակ ապահովընելու ետեւէն ինկող չկայ, յայտնի է որ վարձքը կամ գինն ալ կ'իյնայ:

Բ. Ասկիի պակասութիւնն ու առատութիւնը, եւ տեղւոյն առուտութիւն կենդանութիւնը՝ ապահովընելու գներուն վրայ շատ մեծ ազդեցութիւն ունին: Ինչու որ թէ որ ստակի առատութիւն կայ եւ ուրիշ տեսակ գործք չկայ, ան ատեն ասանկ գործքերու ձեռք զարնողներ շատ կ'ըլլան:

Գ. Գլխաւորաբար ապահովացուցման գներուն վրայ ազդեցութիւն ընողը՝ ծովու վրայ եղած ապահովութեան շատ կամ քիչ հաւանականութիւնն է:

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՏՈՒՐԸ ՅԱՌԱՋԱՅԸՆԵԼՈՒ
ՎՐԱՅ

170. ԳՐՔԻՍ սկիզբները ըսինք որ վաճառա-
կանը՝ այլևայլ տեղերու, երկիրներու ու ազգերու մէջ
եղած առուտուրին միջնորդ, արուեստներու ջանքին
ու ստակի շրջանին յառաջացուցիչ, ու գործքերուն
ամենուն միօրինակ բաժնուելուն պատճառ է: Աս
ասանկ ըլլալով՝ վաճառականը իրաւունք ունի որ
տէրութիւնը իրեն ամէն պաշտպանութիւններն ընէ,
եւ անանկ տեղեր շինէ ու պատրաստէ, որոնցմով իր
գործքը ամէն կերպով դիւրիննայ, յառաջանայ ու
իր վախճանին հասնի:

Ասանկ պատրաստութիւններն ու միջոցները ամէն
ծաղկեալ ու քաղաքականացեալ տէրութեանց մէջ
անպակաս կը գտնուին, որոնց օգտակարութիւնը՝
վաճառականը պէտք է որ գիտնայ, ու ճանչնայ թէ
ասոնք՝ միայն իր արուեստն ու միանգամայն անոնց
արուեստը յառաջացրնելու համար է, որոնցմէ ինքը
ապրանք կ'առնու կը գնէ: Ասկից զատ պէտք է որ
համոզուած ըլլայ որ եթէ ասոնք չըլլան կամ թէ
եղածները վերցուին նէ, ան ատեն ինքն ալ ուղղակի
կամ անուղղակի, կանուխ կամ ուշ երբ որ է նէ կը
մնասի:

Արովհետեւ աս գրքիս ու վաճառականութեան
ուսումը սորվեցրնող դպրոցներուն վախճանը կէս
մ'ալ ան կ'ըլլայ, որ ազգին պատանիներէն անանկ
մարդիկ ալ ելլեն, որոնք առուտուրը յառաջացրնելու
կամ ծաղկած վիճակի մէջ պահելու համար տէրու-
թենէն եղած պատրաստութիւններն ու դրուած հաս-
տատուն կարգերը պահպանելու ծառայեն, որով տէ-
րութեան առուտուրին օգտակար ըլլան, անոր համար
պէտք է որ մենք ալ աս գրքիս մէջ մաս մ'ալ աս

վախճանին համար դնենք, որուն մէջը ան ամէն սկզբունքները յառաջ բերենք, որոնք ասանկ պաշտօններու մէջ ըլլողները միշտ աչքերնուն առջեւը ունենալու են, որպէս զի չըլլայ թէ ձեռքերնին եղած միջոցները աղէկ չգործածելով, կառավարութեան ասանկ մեծ ու երեւելի վախճանին դէմ գործածեն, ու քաղաքային կենաց մնաս մը հասցընեն: Մինչեւ հիմա վաճառականութեան վրայ խօսածներնուս մէջ վաճառականը ինք իրեն իր այլեւայլ գործքերուն նկատմամբ մտածեցինք, ու անանկ սեպեցինք, որ իր առանձին անձնական շահուն միտ կը դնէ. հիմակ պիտ'որ սկսինք ան գիտութիւնը յառաջ բերել, որով տէրութիւնը իր առուտուրը յառաջ կրնայ տանիլ ու եղածն ալ պահպանել: Ասոր մէջ վաճառականը չէ թէ առանձին, հապա իբրեւ շղթայի մը անդամ եւ կամ ամբողջի մը մասն պիտ'որ երեւնայ:

171. Առուտուրը յառաջացընելու միջոցները երկու կերպ կրնան մտածուիլ, մէյ մը ներքին առուտուրին, մէյ մ'ալ արտաքին առուտուրին նկատմամբ: Ընդհանրապէս առեալ երկուքին մէջն ալ յառաջացընելը՝ աս բաներուս վրայ կը դառնայ. ապրանքներու առուտուրի շրջանը յառաջացընելու, ապրանքներու շրջանը միջոցներուն, ստակի շրջանը կենդանացընելու, ու ընդհանրապէս առուտուրը ծաղկած վիճակի մէջ պահելու վրայ: Ասոնց վրայ կը սկսինք մէկիկ մէկիկ խօսելու:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԸ ՅԱՌԱՋԱՅԸՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

172. Աս միջոցներն ու պատրաստութիւնները տեսակ տեսակ են, ու իրենց վախճանն ու նպատակն ալ այլեւայլ տեսակ է: Ոմանք անոր համար տէրութենէ հաստատուած են, որ տեղ մը դիւրաւ, աժան ու շատ ապրանք ժողովի. ոմանք ալ անոր համար ԳԻՏ. ՎԱՃԱՌ.

դրուած են, որ պատրաստողները աւելի շատ ծախսելու, ու նոյնպէս սպառողներն ալ գնելու դիւրութիւն ու առիթ ունենան, եւ կամ որպէս զի վաճառականները իրարու հետ դիւրաւ առուտուր կարող ըլլան ընել: Արդ կառավարութեան աս վախճաններուն համար բանեցուցած միջոցները ետեւէն եկածներն են:

Ա. Տօնավաճառներ:

173. Տօնավաճառները (Ժամայւրէիւրը) կառավարութենէ հաստատուած ժամանակներ են, որ ատենն որ ծախողները՝ որոշեալ տեղ մը իրենց ապրանքները կը բերեն, ու անոնցմով ազատ կրնան առուտուր ընել: Ասոնց մերձաւոր վախճանը ուրիշ բան չէ, բայց եթէ աս, որ ծախողները՝ իրենց ապրանքին գնողներ գրտնելու առիթ մը ունենան, ու գնողներն ալ՝ շատ ծախողներ ըլլալով՝ եկած ժողոված ապրանքներուն մէջէն ուզածնին առնուն ու ան գնով առնուն, որն որ իրենց հաճոյական է: Աս տօնավաճառներն ալ տեսակ տեսակ են. կան մեծ տօնավաճառներ, ուր նաեւ գրոսի երկիրներէն վաճառականներ ու գնողներ կը ժողովին, ու այլեւայլ երկիրներէն զանազան ապրանքներ կը բերեն ու անոնցմով առուտուր կ'ընեն, եւ կամ որ որ ապրանքի առուտուր չըլլար նէ, ստակի կամ փոխանակադրերու առուտուր կ'ընեն. կան տօնավաճառներ ալ, որ պզտիկ են, ու միայն տէրութեան մէջ ելած բերքերը կը ժողովին ու կը գնուին կամ կը ծախուին:

Տօնավաճառներուն սկիզբը շատ հին է, ու անանկ ալ կը կարծուի, որ դուցէ անունը քրիստոնէութեան հին ատենները եղած հրապարակական եկեղեցւոյ հանդէսներէն ու տօներէն առած ըլլայ, որ ատենն որ հաւատացեալները կու գային ան տօնին տեղը կը ժողովէին: Արդէն հիմակուան ատեններս ալ Աւրուպայի քրիստոնէայ ազգաց մէջ կը տեսնենք, որ երբ որ տեղ մը եկեղեցւոյ մը հանդէս ըլլայ, հոն շատ մանրավաճառներ կը ժողովին, ու չէ թէ մինակ ան

տօնին հարկաւոր եղած բաներ, հապա նաեւ ամէն տեսակ ապրանքներ ալ կը բերեն, որ ծախեն: Ան տօնավաճառներ, որոնք եկեղեցւոյ որոշեալ տօնի մը օրը կը բացուին: Ա՛վաճառականութեան դեռ տղայ եղած ատենները, առանց ասանկ տօնավաճառներու չէր կրնար ըլլալ. առուտուրը ողորմելի մանրավաճառներու ձեռք էր, որոնք հարկաւոր ապրանքները առջի ձեռքէն ճարելու ոչ տեղեկութիւն եւ ոչ ալ կարողութիւն ունէին: Ա՛նչպէս կրնային ան ատենները ապրանքներու մթերքներ բերել տալ, երբ որ վաճառականները ոչ գրել կարգալ գիտէին, եւ ոչ ալ կարգաւորեալ սուրհանգակներ կամ կառքեր կային, որ նամակները տանէին բերէին: Ա՛նչպէս կրնային ապրանք բերել տալ, երբ որ ճամբաները ապահով չէին, ու նոյն իսկ իշխանները իրարու երկիրները կ'աւրէին կ'աւրըշտրկէին: Ա՛նոր համար թէ գնողները եւ թէ ծախողները իրենց ապահովութեան, ու ունեցածնին յափշտակութենէ ազատելու համար քովերնին մարդիկ կ'առնուին, ու զինաւորեալ քաղքէ քաղաք ճամբորդութիւն կ'ընէին. ասանկ են հիմակուան ատենս արեւելք կարաւանները: Պերմանական կայսերութեան մէջ ամենէն աւելի ասանկ գողեր ու աւազակներ կային, անոր համար շատ վաճառականներ կայսրմէն՝ մէկտեղ մարդ առնելու արտօնութիւն կ'ունենային: Ա՛ս ժամանակները մեծ կտորներով առուտուր՝ միայն տօնավաճառներու ու վաճառանոցներու մէջ կ'ըլլար: Ամաց կամաց մէկ տօնավաճառէն մէկալ տօնավաճառ առնելիք թողուլ կամ համարում տալը սովորական եղաւ, ու համարումս առնուած ապրանքներուն համար փոխանակազիր քաշել ալ եղաւ:

Արշափ որ գողերն ու աւազակները քիչցան, ճամբաները ապահովցան, ու որչափ որ վաճառականութիւնը երթալով կատարելագործեցաւ, այնչափ ալ տօնավաճառները քիչցան: Ա՛ն տօնավաճառները կամ

վաճառանոցները, ուր որ գեղացիք՝ (ծախողները եւ գնողները դիւրութեամբ իրար գանելու համար) իրենց երկրին բերքերը կը բերեն, ինչպէս արմախք, կանաչեղէն, հաւկիթ, կարագ, արջառ ու ոչխար եւ այլն, եւ կամ ուր որ արուեստաւորները շինած գործուածներնին կը բերեն ու ծախելու կը հանեն, բնական, շահաբեր ու հարկաւոր տօնավաճառներ են, որոնք առջի բաժնեկրներու կարգը չեն երթար: Ասկի մէկալ առուտուրի համար որոշուած տօնավաճառները երթալով նուազելու վրայ են. ժամանակի կորուստը, ճամբուն ծախքը, պարապ տեղը ապրանքները ասդին անդին ասնիլ բերելը, ու տօնավաճառ երթալուն պատճառաւ շատ ստակ ժողվելով ստակի շրջանին արդելք դնելը՝ տօնավաճառներէն եղած օգտին դիմացն ելլելով, վաճառականները քանի կ'երթայ տօնավաճառները կը թողուն. եւ ասոր՝ փորձն ալ կը վկայէ, ինչու որ երթալով տարւէ տարի տօնավաճառներուն գէշ երթալուն վրայ տրտունջը կ'աւելնայ: Աշխարհքիս մէջ ամենէն մեծ տօնավաճառը՝ Նիշնէյնովկորոտ քաղքինն է, որուն մէջ 200 միլիոն ոսկւ պլի շրջան կ'ըլլայ կ'ըսեն:

Բ. Աճառանք, Աճառակայ, Բաժարեղի:

174. Աճառանք (entrepôt), կ'ըսուի ան տեղը՝ որուն աս իրաւունքը տրուած է, որ ամէն հոն բերուած ապրանքները որոշեալ տեղ մը պիտի դրուին, ու ան տեղէն երկրին բնակչացը պիտ'որ ծախուին:

Աճառակայ (étape), կ'ըսուի ան տեղը՝ որ աս իրաւունքը ստացած է, որ ամէն ան տեղը հասած ապրանքները պիտ'որ հանուին, ու խել մը ատեն հոն ծախու պիտ'որ դրուին, ու շատ անգամ նաեւ միայն տեղւոյն բնակիչներէն ուրիշ տեղ կրնան տարուիլ:

Բաժարեղի կը զրցուի ան տեղը՝ որուն իրաւունքն է, որ ամէն հասած ապրանքները պիտ'որ հոն կըռուին, ու անոր համար տուրք մը պիտ'որ վճարուի:

Աս իրաւունքները՝ չէ թէ առուտուրը յառաջա-
ցրնելու ու վաճառքներու շրջանին կենդանութիւն մը
տալու կ'օգնեն, հապա մասնաւոր տեղերու եղած
շնորհքներ են, ու ընդհանուր առուտուրին վնաս
կ'ընեն: Ասոնք առուտուրի ազատութիւնը նուաճող,
արդելող բաներ են: Հիմակուան ատենս ասանկ
իրաւունքներ ալ չեն շնորհուիր, հապա եղածներն
ալ վերցրնելու կը նայուի. բայց ասոնք կարգի գնելը
հասարակօրէն մեծերէն կախում ունի, որոնք պէտք
չեն անխօսէմ վարմունքով ասանկ իրաւունքներ
շնորհելով, առուտուրին օրհնութիւնը նուազեցրնել:

Բայց հասարակաց վաճառաւանդները, ապահով
տեղերը, շտեմարանները, ուր որ քիչ տուրքով ամէն
տեսակ թէ հպատակներուն եւ թէ օտարականներուն
ապրանքները կը պահուին, թէ ան երկրին գործա-
ծութեանը համար ըլլայ, եւ թէ դուրս խրկուելու
համար, ստուգիւ առուտուրին յառաջացման միջոց-
ներ են. միայն թէ պարտք ու ստիպում ըլլալու չէ,
որն որ առուտուրին հեռ չկրնար միաբանիլ: Ասեւ
ասոնցմէ եղած շահը պէտք չէ որ տէրութեան մուտք
համարուի, այլ անչափ նուազ գին պէտք է գնել,
որ ան տեղերուն ծախքին բաւական ըլլան:

Գ. Հասարակաց կշռորդներ:

175. Հասարակաց կշռորդները (Ռէր-շիւէրը)
ապրանքներու առուտուրին շատ դիւրութիւն կու
տան: Ասով թէ գնողները եւ թէ ծախողները
իրենց առուտուրին մէջ ունեցած ապրանքին կշռոյն
վրայ ապահովութիւն կ'ունենան, նոյնը բսելու է
ապրանքը ուղեւորողին ու տանողին վրայ ալ: Ստու-
գիւ շատ օգուտ կը տեսնեն անոնք, որոնք այլեւայլ
տեղուանք ճամբորդութիւն ընելու ատեննին, իրենց
ապրանքին՝ կշռոյն համեմատութեամբ մաքս կը վճա-
րեն, ու կշռուած բեռան ծանրութեանը վկայական
թուղթ մը առնելով, ամէն տեղ վար առնելու, բա-

նայու, ժամանակ կորսընցընելու ու ծախքերու սակ մանելու դժուարութիւններէն կ'ազատին:

Գ. Չորսնիստի իշխաններէն:

176. Ապրանքներու առուտուրը ուրիշ բանով այնչափ աւելի յաջողութիւն չկրնար գտնել, որչափ երբ որ գնողները համոզուած ըլլան, թէ չափն ու կշիռը ուղիղ է, ու չեն խաբուիր: Անոր համար պէտք է որ չափերն ու կշիռները իրենց շիտկութեանն ու ճշգրտութեանը նշան մը ունենան, եւ աս նշանն ալ խաբէական չըլլայ: Աս կշիռներուն ու չափերուն կարգաւորութիւնը՝ Աշուաքննութիւն կ'ըսուի, որուն իրաւունքը հասարակօրէն երկրին կառավարներուն ձեռքը կ'ըլլայ:

Ե. Աղբիւրներու Բնակարաններէն:

177. Ասոնք երգուեալ մարդիկն են, որոնք վաճառականութեան պաշտօնեաներէն անոր համար գրուած են, որ ծախողին ու գնողին մէջ միջնորդ ըլլան: Աս միջնավաճառները կամ միջնորդները (Բեւաւերներ) մէկ կողմանէ նայելով ապրանքի շրջանին յառաջացուցիչ են, իբրեւ գնողին ու ծախողին մէջ միջնորդ, իբրեւ եղած լմնցած գործքին վաւերականութեանը վկայ, ու նաեւ իբրեւ ապրանքները ճանչցող ու անոնց աղէկ տեղեակ մարդ:

Միջնավաճառները գնողին ու ծախողին մէջ միջնորդ ըլլալով՝ տեղւոյն վաճառականներուն մէջ եղած առուտուրին կենդանութիւն տուող ու յառաջացուցիչ կ'ըլլան: Մէկ վաճառականէն կ'ելեն ուրիշ վաճառականի մը կ'երթան, ու կը հարցընեն թէ ինչ ապրանք գնել կ'ուզէ, ու ինչ ծախելու ապրանք ունի կամ ծախելու կը բաղձայ: Թէ որ քանի մը տեսակ ապրանք առաջարկելու յանձնարարութիւն ունին, ան ալ կ'առաջարկեն: Ասով ան ամէն ապրանքներուն տեղեակ կ'ըլլան, որոնք վաճառատեղւոյն մէջ

գնել կամ ծախել կ'ուզուի: Թէ որ վաճառական
 մ'ալ ապրանք մը ծախելու հանել կ'ուզէ, կրնայ
 ըլլալ որ իրեն հասարակութեան մէջ երեւնալը իր
 համարմանը, բայց մանաւանդ իր շահուն փաստակար
 համարի, ինչու որ գնողը տեսնելով որ վաճառականը
 ինք իրմէ իր ապրանքը առջեւը կը դնէ կամ թէ
 ըսենք՝ գնելու հաներ է, կը նայի որ աժան գնով
 առնու, ու դինը վար կը զարնէ: Միջնավաճառը
 մինչեւ որ սակարկութիւնը կամ դաշնագրութիւնը
 չլիննայ, թէ գնողին եւ թէ ծախողին անունը դուրս
 չհաներ, ու իրեն եղած յանձնարարութեանը համա-
 ձայն ապրանքը կու տայ, առանց անոր միտ գնելու
 թէ արդեօք ծախողին աւելի հարկաւոր ու շահաւոր
 է իր ապրանքը ծախել չէնէ գնողին նոյն գնով գնելը:

Աղած լիննցած գործքին կամ դաշնագրութեան
 վաւերականութեանը վկայի պէս ալ առնելով՝ մի-
 ջնավաճառներու գործակցութիւնը շատ մեծ ու հար-
 կաւոր բան է: Ինչու որ միջնավաճառներու գրքերը
 իբրեւ հրապարակաւ երդուեալ անձինքներու գրքեր
 ցուցման զօրութիւն ունին, ու շատ անգամ երկայն
 տեւելու դատերը ասոնցմով կը լիննան, երբ որ մի-
 ջնավաճառը իր դիրքը կը հանէ կը ցուցընէ, ու եղած
 դաշնագրութեան ամէն պայմաններն ու հանգամանքը
 կը դանէ:

Թէպէտեւ իբրեւ ապրանքները ճանչցող՝ միջնա-
 վաճառները հասարակօրէն հրապարակական վկայու-
 թիւն կամ իշխանութիւն մը չեն ունենար, բայց աս
 յայտնի է, որ անոնցմէ շատերը կան՝ որոնք երկայն
 ժամանակուան փորձառութեամբ, ու որոշեալ գործքի
 մը մէջ (ինչպէս հասարակօրէն կ'ըսուի) եփելով, քանի
 մը տեսակ ապրանքներ ճանչնալու անանկ համարում
 մը ստացած են, որ ասանկ գործքերու մէջ վաճառա-
 կանները զիրենք միայն կը գործածեն, անոր համար՝
 որովհետեւ ասանկ գործքերու մէջ իրենց ունեցած
 հմտութիւնը երկու դաշնագրողներէն ալ ճանչցուած

է: Վանի մը տէրութիւններու մէջ արեւելեան ապրանքներու միջնավաճառները՝ մինչեւ մաքսատուններու մէջ բամբակի ու բուրդի քննութիւն ընելու մէջ իբրեւ ան ապրանքները ճանչցող մարդիկ կը գործածուին:

Զ. Քննարան:

178. Վան ապրանքներ՝ որոնք մեծ կտորներով կը ծախուին, բայց մեծ առուտուրի մը մէջ հարկաւոր եղած ճշդութեամբ չեն կրնար քննուիլ, վասն զի կամ երկայն տեւելով առուտուրին արգելք կ'ըլլան, եւ կամ ապականելու վտանգի մէջ կ'իյնան: Ասանկ ապրանքները ան ատեն մեծամեծ կտորներով կրնան ծախուիլ կամ գնուիլ, երբ որ մեծերուն կողմանէ առանձինն կտորներուն վրայ իրենց ազնուութեանը կամ զուտ ու ճշմարիտ ըլլալուն նշան ունին: Ասանկ ապրանքներու կարգն է գլխաւորաբար կտաւը, երբ որ շատը մէկտեղ պիտ'որ գործածուի: Վան նաեւ շատ ապրանքներ ալ, որոնք աս կերպով տեղւոյն գլխաւորներէն կը քննուին, ու քննութենէն ելածին համաձայն՝ առուտուրի ելլելէն յառաջ, վրանին նշան կ'ընդունին, ինչպէս են տորոն (+էօ+ պօյասը), լըջու (չիվիթ ֆիթանը), գայլուկ (փիլա օթու), պողպատ, ու ոսկեղէն եւ արծաթեղէն ապրանքներ, եւ այլն:

Աս վախճանիս համար հաստատուած տեղերը՝ որ քննարան կ'ըսուին, չէ թէ միայն ապրանքներու առուտուրին նայելով օգտակար են, հապա նաեւ քանի մը տեսակ ապրանքներու նկատմամբ հարկաւոր ալ են. միայն թէ ասոր աղէկ նայելու ու զգուշանալու է, որ ասոնք բռնութեան միջոց չըլլան: Ավ որ իր ապրանքները նայիլ տալ կ'ուզէ, կառավարութիւնը անոր իր օգնութիւնը կը մատուցանէ, եւ թէ որ ապրանքը ստուգիլ պահանջուած ազնուութիւնն ունի, ան ատեն քիչ վարձք մը վճարելով՝ տէրութեան կողմանէ ապրանքին վրայ ազնուութեան դրոշմ կամ կնիք կը

կոխուի : Բայց ասիկա ոսկիի ու արծաթի ապրանքներուն վրայ կամայական չէ, հապա պէտք է որ կնիք ընդունին, ինչու որ ասանկ ապրանքներուն մէջ զուտ մաքուր մետաղին չափը փոփոխական ըլլալով՝ շատ խաբէութիւններու տակ կրնան իյնալ :

Է. Հասարակաց աճո-բոյներ :

179. Ասոնք ան ատենը առուտուրը կենդանացրնելու միջոց կ'ըլլան, երբ որ ապրանքներու մեծամեծ մթերքներ մէկտեղ կու գան կը դիզուին, անանկ որ սովորական կերպով անոնցմով առուտուր ընելը անկարելի կ'ըլլայ : Ասոնք գլխաւորաբար օտար երկիրներէն եկած ապրանքներու համար են : Ասանկ տեղուանք Եւրոպա շատ կը գտնուին, մանաւանդ Հոլանտա, Անգղիա ու Տանիմարգա, ուր արեւելեան ու արեւմտեան Հնդկաստանի, Ասիայի ու Ափրիկէի ապրանքներ կու գան կը ժողվին, եւ ասոնց առուտուրին բոլոր Եւրոպա մասնակից կ'ըլլայ :

Ը. Նամակատուն կամ Թղթատարութեան րեղեր :

180. Աս տեղերը՝ թէ որ աղէկ կարգաւորուելու ըլլան, ստուգիւ ապրանքներու առուտուրին, ու այլեւայլ վաճառականներուն իրարու մէջ ունեցած հաղորդութեան յառաջանալուն մէկիկ միջոցներ են : Ա՛վաճառականները հիմակուան ատենս առանց իրարու հետ թղթակցելու չեն կրնար ամենեւին իրենց առուտուրը յառաջ տանիլ, եւ առանց նամակատուններ հաստատելու՝ վաճառականութիւնը միշտ իր առջի տղայութեան մէջ կը մնար, ու մանրավաճառութեան վիճակէն աւելի չէր կրնար զարգանալ :

Անանկ կը պատմուի որ նամակատուն կամ թղթատարներ առջի անգամ Պարսկաստանէն սկսած ըլլան, եւ իսկզբան Արքիպեղազոսէն մինչեւ Շուշան Պարսկաստանի մայրաքաղաքը թղթատարութիւն հաստատուած ըլլայ : Աս նամակ տանելու բերելու միջոցները Հռոմայեցւոց ալ անծանօթ չէին, ինչպէս

որ իրենց պատմութենէն յայտնի կ'երեւայ : Պաղ-
ղիայի մէջ ամենէն յառաջ Լուդովիկոս ԺԱ. 1464ին
նամակատուններ հաստատեց : Պերմանիա հազիւ
16երորդ ու 17երորդ դարերուն մէջ թղթատարու-
թիւնը կըրցաւ կարգաւորուիլ : Իսկ Լեհաստան, Ռու-
սաստան ու Մաճառիստան 18երորդ դարուն սկիզբ-
ները թղթատարութիւն սկսաւ մտնել : Մինչեւ հիմա
արեւելքի կողմերը թղթատարութիւնը կարգաւո-
րեալ վիճակի մը մէջ չէ . վերջին ատենները Օսմա-
նեան տէրութիւնը ասոր վրայ ալ սկսաւ հոգ տանիլ,
ու թէ որ գործունէութեամբ քիչ ատենի մէջ կար-
գաւորելու ըլլայ նէ, ինչպէս որ կը յուսացուի, ա-
րեւելքի վաճառականութիւնն ալ շատ կրնայ յա-
ռաջանալ : Ազգ մը որչափ որ կը թուած ու ծաղկած
է, այնչափ ալ թղթատարութիւնն ալ կարգաւորեալ
վիճակի մէջ կ'ըլլայ :

181. Արկու տեսակ թղթատար կայ, մէյ մը
ձիով կամ ձիավարող, մէյ մ'ալ կառքով : Առջի
տեսակ թղթատարները միայն նամակ ու պղտիկ
ծրարներ տեղէ մը ուրիշ տեղ կը տանին . բայց կառ-
քով կամ սուրհանդակի կառքով դացող թղթա-
տարները նաեւ ճամբորդ, ստակ, ազնիւ քարեր եւ
նաեւ մեծ կտոր ապրանքներ ալ կը տանին : Թղթա-
տարներէն կան որ շաբթու մէջ որոշեալ օր մը ճամ-
բայ կ'ելեն, կան ալ՝ որ ամէն օր որոշեալ տեղ մը
թղթեր կը տանին : Աս ամէն օր ելող թղթատարները
ան պատճառաւ հաստատուած են, որ ամէն օր տե-
րութեան մը մայրաքաղաքը ելած լրագիրները դաւ-
առները տարածեն, ասոնք նաեւ նամակներ ալ կը
տանին կը բերեն :

Թղթատարութեան օրը նաեւ ընդունելութեան
թղթով (récépissé) նամակներ ալ կրնան խաւրուիլ :
Ընդունելութեան թուղթ կամ ընկալադիր ըսուածը
ուրիշ բան չէ, բայց եթէ թուղթ մը՝ որն որ նամակին
հետ մէկտեղ կ'երթայ, ու նամակը առնողը՝ իր նա-

մակը ընդունիլը անոր վրայ կը դրէ ու կը ստորագրէ, որն որ դարձեալ նամակը գրողին կը գառնայ, ու գրողը կ'իմանայ որ իր նամակը՝ որոշեալ տեղը հասեր է: Արոշեալ թղթատարներէն գուրս նաեւ կան թղթատարներ, որոնք երբ որ կ'ուզէ մարդ (որ օրը ու որ ժամը որ կ'ուզէ նէ) կրնայ ճամբայ հանել, ու անոր ձեռքը նամակ տալ. բայց ինչպէս յայտնի է, աս արտաքոյ կարգի թղթատար հանելը՝ առանձին վարձք ու ծախք ունի, որն որ հանողը պէտք է որ վճարէ: Ասանկ թղթատարները պնդադեսպան (estafette) կ'ըսուին, որոնք շատ անգամ վաճառականներն ալ կը գործածեն, երբ որ իրենց գործակցին մէկ հարկաւոր լուր մը (զոր օրինակ մէկու մը սնանկութիւնը), որչափ կարելի է շուտով իմացընել կ'ուզեն:

Թէ որ կ'ուզուի որ թղթատարութիւնը՝ յուսացուածին չափ առուտուրին օգտակար ըլլայ, ան ատեն անիկա չէ թէ իբրեւ ելեւմտից աղբիւր ու տէրութեան մուտք միայն, հապա իբրեւ ազգին ծաղկելուն ու կարգաւորութեան միջնորդ ու առուտուրին կենդանացուցիչ միջոց մը մտածելու է: Ամէն տեսակ թղթատարութեան համար վճարելիքները կրնան այնչափ ըլլալ, որ թղթատարութեան ծախքերը հանելէն ետքը, տէրութեան ալ մուտք մը բերեն, ինչու որ արժանի է, որ թղթատարութեան մեծամեծ օգուանները վայելողները՝ տէրութեան ալ բան մը վճարեն: Այց անոր ալ աղէկ նայելու է, որ աս վարձքը կամ տուրքը խիստ շատ չըլլայ, ինչու որ ան ատենը թէ՛ առուտուրին արգելք կրնայ ըլլալ, եւ թէ՛ տէրութիւնը մէկալ կողմանէ տուրքին բարձրանալովը եղած մուտքէն աւելի կը կորսընցընէ. վասն զի ան ատենը դրսեցիները իրենց գործքը յառաջ տանելու համար ուրիշ ճամբայ մը գտնելու կը նային. շատ նամակներ՝ որոնք տուրքին քիչ եղած ատեն կը գրուէին, շէն գրուիր, վասն զի բարձր վճարմունքը պատճառ կը բռնուի, մանաւանդ երբ որ ան

Նամակով յուսացուած օգուտը տարակուսական է :
 Այլ գլխաւորաբար ան արուեստաւորաց նամակները,
 որոնք տէրութեան աւելի շահաւոր են, ու ան ստորին
 աշխատաւորաց թղթերը՝ որոնք պղտիկ բանի մը հա-
 մար իրարու հետ կը թղթակցին, ալ շէն գրուիր,
 ինչու որ բարձր վճարմունքը իրենց փոքր գործքէն
 հանած վաստակին կէտը կը յափշտակէ :

Թ. Այլճանոցներ (պորսա) :

182. Ասոնք ան տեղերը կամ շէնքերն են, ուր
 որ վաճառականները եւ ուրիշ առուտուրի մասնակից
 ըլլող անձինքները որոշեալ ժամանակ մը կը ժողվուին,
 որպէս զի իրենց առուտուրի գործքը գոցեն լմընցընեն,
 առուտուրի գործքերու վրայ խորհուրդ ընեն, եւ
 այլն : Աս տեղս կ'որոշուին փոխանակագրերու ըն-
 թացքը, եւ ուրիշ թէ ստակներու եւ թէ թղթերու
 գները : Աստարակօրէն ամէն առուտուրի քաղաքներ
 ասանկ ակմբանոցներ կը գտնուին, ինչու որ ասոնք
 ալ առուտուրի յառաջացման միջոց ու դիւրութիւն
 կու տան :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ

ԱՊՐԷՆՔՆԵՐԸ ՅԱՆՉՆԵԼՈՒ ԿԱՐԳԵԴՐՈՒԹԵԱՆՑ ՎՄԱՅ

183. ԱՇԽԱՐՀՔԻՍ մէջ ծաղկեալ տէրութեանց
 իմաստութիւնն ու հայրական հոգն ու խնամքը ամե-
 նէն աւելի ապրանքները յանձնելու ու տանելու հա-
 մար շինուած տեղերուն ու եղած կարգադրութիւն-
 ներուն վրայ կ'երեւայ : Ասանկ կարգադրութիւնները
 գրեթէ առանց բացառութեան մը տէրութեան տես-
 չութեանը գործքն է :

Ա. Ադրանչ Գանոցներ :

184. Ասոնց ամենուն հոգն ու կառավարութիւնը
 տէրութեան տեսչութեանը ձեռքն է :

Աս գործքերը կատարելու համար տէրութիւնը պիտ'որ նայի, որ քաղաքներու մէջ բաւական աս գործքը յանձն առնող մարդիկ գտնուին, որոնք ապրանքները տանելու, փոխադրելու ուսումը աղէկ գիտնան, ու այնչափ կարողութիւն եւ ստացուածք ալ ունենան, որ մարդ ապահովութեամբ իրենց իր ապրանքը կարող ըլլայ հաւատալ: Հասարակօրէն ան վաճառատեղիները՝ ուր որ ատեն ատեն ապրանքներ կը տարուին, ասանկ մարդիկներ ամենեւին պակաս չեն ըլլար:

Նաեւ պէտք է որ անանկ մարդիկներ ալ դրուած ըլլան, որոնք թէ տէրութեան մէջը եւ թէ դուրս գտնուած վաճառատեղիները ապրանքները տանելը յանձն առնուն. ու թէ որ իրենց կառքերը բաւական չեն ըլլար, անանկ կառապաններու հետ գործակից եղած ըլլան, որոնք ան ապրանքը տանիլը վրանին առնուն, ու որոշեալ տեղը հասցընեն:

185. Արովհետեւ կառավարութիւնը ապրանքներուն տեղէ մը ուրիշ տեղ փոխադրուելուն հոգ տանելու ատեն անոր պէտք է նայի, որ որչափ կարելի է տանողէքը աժան ըլլայ, անոր համար պէտք է որ տեղ մըն ալ դրուած ըլլայ, ուսկից ապրանք մը ուղեւորողը դիւրութեամբ ու ամենէն աւելի աժան գնով տանողներ կարող ըլլայ գտնել, նոյնպէս նաեւ ապրանքը տանողն ալ որոշեալ տեղ մը տանելու ապրանք գտնելու առիթ ունենայ: Ամէն մեծ ու երեւելի վաճառատեղիները առանձին կառավարութենէ դրուած պաշտօնատէրներ կան, որոնց ամէն մարդ կրնայ ծանուցանել թէ ինչ ապրանք ուղեւորել կ'ուզէ: Կառավարութիւնը ան պաշտօնատէրներուն առանձին խցեր կու տայ, ու անոնց մէջ ամէն ուղեւորողները, տանողները, տանելու պայմանները, տանողէքը, բեռան ծանրութիւնը, խրկուելու ապրանքին յանձնելու օրը, ուղեւորողին ու տանողին անունը, իրենց տունը, բեռը պարպելու տեղը, եւ

այլն գրի կ'անցընէ, որոնց համար ալ քիչ մը տուրք վճարելու է:

186. Ստոյգ է որ ապրանքն ուղեւորողը հարկ է որ իրաւունք ունենայ ան կառապանք կամ տանողը ընտրելու, որուն վրայ աւելի վստահութիւն ունի, ու ասանկով կրնայ անոր հետ իր դաշնագրութիւնը ընել. բայց երբ որ ուղեւորողը աս ընտրութիւնը ընել չուզեր, ան ատենը պաշտօնատէրը պէտք է նայի որ կառապաններուն կամ տանողներուն կարգ մը դնէ, այս ինքն իրենց հասնելուն կարգաւր սկսի նորէն ճամբայ հանել, որպէս զի չըլլայ թէ անոնցմէ մէկը երկայն ատեն սպասելով իր վաստրկածն ալ ձիերուն կերցընելու ստիպուի: Աս պաշտօնատէրները պէտք են գիտնալ, որ իրենց պարտքը կատարելու ըլլան նէ, կառապաններուն կամ տանողներուն շնորհք մը բրած չեն ըլլար, բայց թէ որ պէտք եղածէն հեռանալու ըլլան նէ, ան ատեն իրենց մեծ յանցանք կը սեպուի, ու անիրաւորութիւն բրած կ'ըլլան:

187. Հասարակօրէն ապրանք խրկող պաշտօնատէրը իրեն տակը ստորին պաշտօնատէրներ ալ կ'ունենայ, որոնց պաշտօնն է եկող կառապաններու տանողչէքը առնուլ ժողովել, ապրանքին հասնիլը ան վաճառականին ծանուցանել, որուն որ խրկուած է, վաճառագիրը անոր ձեռքը հասցընել, խրկուելու ապրանքները ընդունիլ, տանելու ու տեղը հասցընելու համար ապահով կառապաններու յանձնել, տանելու պայմանները դնելու ատեն կառապանին օգնական ըլլալ, ու խրկուելու ապրանքները, բեռնաւորելու սպասող կառապանները, ու եղած տանողչէքի համար դաշնագրութիւնը գլխաւոր պաշտօնատէրին ծանուցանել: Աս պաշտօնատէրները իրենց աշխատանացը համար բեռան կենդինարին վրայ քիչ մը վարձք կ'ընդունին: Ասնք ալ միշտ աչքերնուն առջեւէն աս սկիզբը պէտք չեն հեռացընել, թէ մէկ կառապան մը մէկպէն աւելի յառաջ քշելու իրաւունք չունին,

ինչու որ ծառայելու համար որոշուած են, եւ ոչ թէ օրէնսդիր ըլլալու :

188. Ապրանքներ խրկելու համար շատ հարկաւոր բան է ծրարողներ, կապողներ ու բեռնակիրներ ունենալը, որոնք ապրանքը բեռնաւորելու ու վար առնելու ատեն, նաեւ անոնք վար առած տեղէն մինչեւ ապրանքը ընդունողին տեղը տանելու համար կը գործածուին : Ասոնք քանի մը տեղեր իրենց պաշտօնը ճիշդ ժամանակին կատարելուն ապահովութեան համար երդուրնցուցած կ'ըլլան, ու Երդուեալք կը կոչուին : Աս մարդիկները ամէն տեսակ ապրանքները տանելու կառքերուն մէջ անանկ աղէկ տեղաւորել, ու անոնց վրայ հաստատել սորված են, որ առանց վտանգի ու վնասի տեղը կը հասնի :

Տանելու կառքերը պէտք է որ վախճանին համաձայն շինուած ըլլան : Աս կառքերուն հարկաւոր պայմաններն են, որ քիչ զօրութեամբ ու քիչ ժամանակի մէջ ապահովութեամբ բեռ մը տեղէ մը ուրիշ տեղ կարող ըլլան տանիլ : Սէպէտ ասիկա մեքենագործներուն գործքն է, բայց կառավարութիւնն ալ պէտք է նայիլ, որ աս վախճանաւ եղած նոր գիւտերը պաշտպանէ, գտնողները վարձատրէ, անոնց օրինակները հասարակաց տեղուանքը դնէ, որ ամէն մարդ տեսնէ ու անկից օգուտ քաղէ : Առավարութեան չէյնար որ ամէն կառքերը մէկ կերպով մը նորոգելու հրաման հանէ, բայց կրնայ հրամայել որ կառքին առանցքը (ռինկլը) անիւներուն մեծութիւնը, խեցին (կառքին անուոյն շրջանակին) լայնութիւնը մէկ չափով ըլլայ, վրան դրուելու բեռան ծանրութիւնը այսչափ կամ այնչափ ըլլայ : Արդաւորեալ կառավարութիւնը չէ թէ միայն ասոնք կրնայ հապտ նաեւ պարտք է որ կարգի դնէ, ինչու որ ասոնց վրայ հոգ չըլլալու ըլլայ նէ, ճամբաները կ'աւրուին. անոր համար կառավարութիւնը թէ իր հպատակներուն եւ թէ օտարականներուն կրնայ չափ դնել, մանաւանդ

որ ասոնցմէ եղած օգուան ալ վայելողները դարձեալ
հպատակներն են :

Բ. Ճամբաներ — շանտա՛հոգալու — պաշտօնապէս ինքներ :

189. Թէ որ կ'ուզուի որ ցամաքի վրայէն խրկուած
ապրանքները քիչ զօրութիւն ծախելով, մեծ ապա-
հովութեամբ ու քիչ ատենի մէջ յառաջ երթան ու
տեղերնին հասնին, ան ատեն բնական բան է որ ճամ-
բաներն ալ աս բանիս օգնական ըլլալու են : Արշափ
որ կարելի է ճամբաները պէտք է որ ուղիղ գծի վրայ
շինուին, որ կարծ ըլլան . հարթ տափարակ, պինդ ու
հաստատուն, բաւական լայն ըլլան, դիւրաւ գտնուին,
ու մոլորելու ենթակայ չըլլան : Աւղիղ գծէն դուրս
ան ատեն ելլելու է, երբ որ առջեւը լեռ, ծախին
կամ ջուր, եւ կամ ասոնց նման արգելքներ ելլելու
ըլլան : — Ճամբան պինդ ու հաստատուն ըլլալու
համար, պէտք է որ ասանկ շինուած ըլլան . տակը
հաստատուն ու պինդ քարեր դրուած ըլլան, անոր
վրայ պզտիկ քարեր ու աւազ լեցուի : Ճամբուն մէջ-
տեղը քիչ մը բարձր, իսկ երկու կողմերը ցած, ու
ջրի փոսեր ըլլան, որ ճամբուն վրայ ջուր չմնայ : —
Ճամբան բաւական լայն ընելու համար, պէտք է
անանկ հաշիւ ընել, որ երկու լայն բեռնաւորած բեռան
կառքեր կարող ըլլան դիւրութեամբ քովէ քով անց-
նիլ : Թէ որ ասիկայ շատ տեղ անկարելի կ'ըլլայ նէ,
ան ատեն պէտք է նշաններ դնել, որ շրջայ թէ երկու
կառք մէկտեղ գտնուին : — Ճամբան դիւրաւ գտնե-
լու ու ճոխորելու համար, ան տեղուանքը՝ ուր որ
ճամբաները կը բաժնուին, նշաններ դնելու է, որոնց-
մէ ամէն մարդ կարող ըլլայ իմանալ թէ աս կամ ան
ճամբան ուր կը տանի : Ատեւ պէտք եղած տեղեր
ճամբաներուն քովերը ծառեր անկելու է, ինչպէս
շատ ձիւն եկած տեղերը, որ ճամբորդները ճոխորին .
իսկ ան տեղերը՝ ուր որ գետեր կամ առուակներ եւ
կամ ձորեր կան, որոնցմէ անցնիլը բեռան կառքերուն

վտանգաւոր է, հոն տեղուանքը ցանկեր քաշելու է, որ կառքը անկից շերթայ: Իսկ դար վար տեղուանք կամ լեռնէն վար իջնալու ատեն նշաններ դնելու է, որ ուր որ պէտք է կառքին մէկ անիւր շղթայով կապուի, որ կառքին շուտութիւնը արգելուի: Աւերջապէս համառօտ ըսելու համար, կառավարութիւնը ամէն կերպով բոլոր ճիգն ի դործ դնելու է, որ ճամբաները ամէն կողմանէ աղէկ ըլլան, ու աղէկալ պահուին:

Ասոնցմէ զատ նաեւ պէտք է որ կառապաններուն ու ճամբորդներուն կարօտութեանն ու պիտոյիցը համար ալ հոգ տարուի: Պէտք է որ ճամբաներուն վրայ կարգաւորեալ ու ապահով պանդոկներ ըլլան, նաեւ անանկ արուեստաւորներ ալ դրտնուին, որոնք կառքին դժբաղդութիւն մը պատահելու ատեն՝ հարկաւոր են, ինչպէս են կառագործներ, դարբիններ, փոկագործներ, ու նաեւ անանկ մարդիկներ, որոնք լեռներուն վրայ քիչ վարձքով կառքը քաշելու կենդանի կու տան:

Գ. Ն---ի---ց---ի---նը զի---բնջընելը--- համար ի---վ---
ը---ի---նը ընելը--- հոգը:

190. Վետի վրայ եղած նաւագնացութեան օգուտները տեսնելով՝ կառավարութիւնները շատ կ'աշխատին, որ իրենց երկրին մէջէն անցնող գետերը որչափ կարելի է, նաւագնացութեան յարմարցընեն ու նաւելի ընեն: Վետերը իրենց բնական վիճակին մէջ նաւագնացութեան շատ արգելքներ ունին, որոնք պէտք է որ վերցուին: Պէտք է որ ծառերու կոճղները դուրս հանուին, աւազակոյտները մաքրուին ու ժայռերը կտրտուին: Վետին ափունքը պէտք է որ ամբացուին, որ գետը չապականէ, ու գետին քովը աղէկ ճամբայ ըլլալու է, որ նաւերը դէպ ի վեր կարող ըլլան քաշուիլ: Ան տեղուանքը՝ ուր որ նաւերը պիտ'որ բեռնաւորին, հաստատուն ցցեր տնկելու է, որ նաւերը անոնց կապուին ու հաստատուին:

Նաւազնացութիւնը՝ ցամաքի վրայ եղած ճամբորդութենէ աւելի վտանգներու տակ ինկած է, անոր համար նաւերու առաջնորդութիւնը, նաւու գետերու վրայ ալ միայն անանկ մարդիկներուն հաւտալու է, որոնք աս դործքիս հարկաւոր եղած գիտութիւնը, ու իրենց յանցանքով եղած մնասը հատուցանելու կարողութիւն ունին: Աս վախճանաւ ամէն տեղ նաւերու տէրեր կան, այս ինքն անանկ անձինք, որոնք իրենց նաւին առաջնորդութիւնը յանձնելու մարդիկ ունին, ու պարտքերնին ան է, որ ասանկ դործքի մը յարմար մարդիկ գտնելու հոգ տանին:

Գետերու մէջ ասդին անդին անանկ վտանգաւոր տեղեր կան, որոնք թէ որ նաւապետը չգիտնալու ու չճանչնալու ըլլայ, նաւը մեծ վտանգի մէջ կը ձգեն: Առաւփարութիւնը պէտք է նայի, որ ասանկ տեղուանք ան վտանգները ճանչցող մարդ ունենայ, որ եթէ ուզուելու ըլլայ՝ նաւին մէջ մտնէ, ու շափաւոր վարձքով մը նաւը ան վտանգաւոր տեղէն անցընէ:

191. Գետերը միշտ անանկ տեղէ շէն անցնիր, որն որ գաւառի մը թէ դրսի հետ ունեցած եւ թէ ներքին առուտուրին յարմար ըլլայ, անոր համար առուտուրը յառաջացընելու ու դիւրինցընելու համար շատ տեղեր արուեստական գետեր կը շինուին, որոնք Ջրանցք կամ Ջրմուղ կը կոչուին, ամէն տեղ կամ քողաք իր հարկաւորութեանը նայելով՝ ասոնք կըրնայ համաձայնցընել: Աւ որովհետեւ ասանկ ջրանցքներու վրայ քիչ զօրութեամբ շատ բեռ կընայ տարուիլ, ասկից կընայ իմացուիլ, թէ ասոնք ապրանքները ասդին անդին փոխադրելու ինչպէս հարկաւոր ու օգտակար են:

Անգղիա, որն որ ինչպէս յայտնի է իրեն առուտուրին մեծութեամբն ու ընդարձակութեամբը, եւ գործատուններուն բազմութեամբը մէկալ տէրութիւնները կը գերազանցէ, ջրանցքներու կողմանէ ալ Եւրոպայի զբեթէ ամէն երկիրներէն աւելի յառաջա-

յաճ է, ու մէկալ տէրութիւններուն առ բանիս մէջ նմանելու աղէկ օրինակ կրնայ ըլլալ: Թեպէտէւ Հռոմէացիք ալ Քրիստոսի ալ շատ ու Անգղիայէն աւելի քաղմատիւ ջրանցքներ ունին, բայց անոր ջրանցքներուն պէս մեծ չեն: Յիշատակելու արժանի է 12 մղան երկայն մեծ ջրանցքը, որն որ բոլոր Հիւսիսային Հռոմէացիք կը կտրէ, ու Ամստերտամէն սկսելով՝ Հելտէր կը թափի, որուն մէջ կրնան նաեւ մեծամեծ նաւերն ալ նաւել: Ասոնց օգտակարութիւնը Քաղղիա ալ տեսաւ, անոր համար ալ կը ջրանայ ջրանցքներ փորել տալով առուտուրին ու գործատուներուն կենդանութիւն մը տալ: Սպանիայի, Իտալիայի ու Մաճառիստանի մէջ ալ բանուկ ջրանցքներ պակաս չեն, բայց Քերմանիա, Պաւիերան դուրս հանելով, առ բանիս մէջ ետ մնացած է, ու առ արուեստական ջրի ճամբաներուն հարկաւորութիւնը երթալով կը զգայ: Շուէտի մէջ անուանի է Ալեգայի ջրանցքը, որն որ Եւրոպայի մեծամեծ ջրանցքներուն հետ կը մրցի: Բայց Եւրոպային ամէն երկիրներէն նաեւ Անգղիայէն ալ աւելի, Ռուսաստան առ բանիս կողմանէ երեւելի է, որովհետեւ իր մեծ լճերը ու նաւելի գետերը ջրանցքներով կապած է: Եւրոպայէն դուրս Հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ նահանգները աղէկ ջրանցքներ ունի, ու Անգղիային դիմացը կրնան ելլել: Աշխարհքիս մէջ ամենէն մեծ ջրանցքը Չինիմաչինի Ապսերական ջրանցքն է, որ 120 մղան երկայնութիւն ունի ու Բեքին եւ Քանգոն քաղաքները իրարու հետ կը կապէ:

192. Առաւելարութիւնը՝ ապրանքները ծովու վրայէն ալ տեղէ մը ուրիշ տեղ փոխադրելու համար մեծ հոգ ունենալու է, ինչու որ ասոնք օգտակար ու հարկաւոր բաներ են, վասն զի նաւի մը գինը, ու մէջը առած բեռը քիչ բան չեն: Օրովու վրայ նաւագնացութեան տեղեակ մարդիկ հանելու համար, պէտք է որ անանկ դպրոցներ ունենայ, որոնց մէջ տղաք՝ առ

բանիս վերաբերեալ ան ամէն հարկաւոր գիտութիւնները սորվին, որոնք մէկ նաւապետի գիտնալ հարկաւոր է, եւ նաւերու կառավար ըլլալ ուղողները միայն ան ատեն իշխանութիւն առնուն, երբ որ հարկաւոր եղած բաները ստուգիւ սորված են:

Արպէս զի ծովու նաւերը իրենց վախճանին համաձայն շինուին, մասնաւոր նաւերու առանձին հիւսեր կան, որոնք կարգաւորեալ կերպով նաւի ճարտարապետութիւն սորված կ'ըլլան, ու աղէկ փորձերով իրենց հմտութիւնը ցուցնելէն ետքը վարպետ կ'ելլեն, ու անկէ ետքը իրենց գործքը գործելու կը սկսին: Ասարահօրէն նաւ մը գնելու կամ շինել տալու համար շատ անձինք մէկտեղ կու գան ու ընկերութիւն մը կը կազմեն: Ասանկ ընկերութիւնները կառավարութիւնն ալ պէտք է որ պաշտպանէ, վասն զի աղգին կամ տէրութեան յառաջացմանը մէկ հատիկ միջոցներ են, ու պէտք է նայի որ անդամներուն խաբէութիւն եւ կամ անիրաւութիւն մը չըլլայ, ու իրարմէ ալ չվնասին: Ամէն ծով ունեցող տէրութեանց մէջ առանձին ծովու իրաւունք ու կարգադրութիւններ կան, որոնց վրայ առուտուրի իրաւունքը ընդարձակ կը խօսի: Ասեւ ամէն երկիրներու մէջ նաւավարներուն ու նաւապետներուն ալ առանձին կարգադրութիւններ ու կանոններ կան, որոնց պահպանութիւնը խստիւ կը պահանջուի, ու զանցառութեանը երբեմն նաեւ մահուան պատիժ գրուած է:

193. Ան տեղուանքը՝ ուր որ ժայռեր կամ աւազակոյտ, ու ընդհանրապէս խօսելով նաւերուն վտանգաւոր տեղեր կան, կառավարութիւնը զգուշանալու նշաններ գնելու է, եւ թէ որ ասոնք ալ բաւական չըլլան, պէտք է նայի որ ինչպէս վերը ըսինք, առաջնորդներ, այս ինքն անանկ մարդիկ գտնուին, որոնք տեղերուն վտանգներուն աղէկ տեղեակ ու ծանօթ ըլլալով՝ ան տեղերուն մէջ նաւին առաջնորդութիւնը վրանին առնուն, ու անիկայ վտանգէն անցընեն: Աս-

աւարութիւնը նաւերուն ապահովութեանը համար պէտք է որ նաւահանգիստներ ալ շինէ, ուր որ նաւերը մինչեւ նորէն ճամբայ ելլելու ժամանակին կարող ըլլան հանգիստ մնալ, ու իրենց կարօտութեանը հարկաւոր բաները հոգալ: Ասանկ նաւահանգիստներուն վրայ հասարակօրէն զխաւորներ դնելու է, որոնք նաւահանգստին վրայ հսկեն, ստիկանութեան վերաբերեալ գործքերը կատարեն, նաւահանգստին ու անոր վերաբերեալ բաներուն պահպանութեանը նային, մտնող ելող նաւերուն ապահովութիւնը հոգան, ամէն նաւուն իր խարխսխ ձգելու տեղը, ցիցը եւ այլն ցուցնեն, հասնող ու ճամբայ ելող նաւերուն ցանկն առնուն, ու նաւավարներուն եւ նաւապետներուն մէջ կռիւ եղած ատեն՝ մէջը մտնեն ու հանգարտեցնեն:

Նաւահանգիստները միշտ մաքրելու է, ու նաւերուն ապահովութեան եւ ճամբորդներուն դիւրութեանն ու հանգստութեանը հարկաւոր եղած բաները հոգալու է: Պիշերները նաւերուն ներս մտնելը դիւրինցընելու համար լուսատու աշտարակ շինելու է: Ան քաղաքներուն մէջ, որոնք նաւահանգիստներուն քովը շինուած են, ճամբորդները ամէն դիւրութիւնները, պանդոկ, կերակուր ու անուշ ջուր գտնելու են, որով կարենան իրենք զիրենք հոգալ, նաեւ անանկ արուեստաւորներ ալ ըլլալու են, որոնք վնասած նաւերուն կարող ըլլան օգնութիւն ընել: Նաւահանգիստներուն մէջ միջնավաճառներ ալ ըլլալու են, որոնց հետ նաւապետը իր՝ ապրանքը տանելուն հաշիւները ցուցնէ, իրեն տանողէքն առնու, տանելու դաշնագրութիւնը գոցէ:

Գ. Շփեկներ -- շփեկներ:

194. Ասոնք առուտուրը յառաջացընելու ու գործատուներուն կենդանութիւն տալու մէկիկ միջոցներ են, որոնք յառաջացընելու ու շտայընելու

Համար կառավարութիւնը մեծ հոգ պէտք է տանիլ. նայելու է որ այլեւայլ ծովեզերեայ քաղաքներու մէջ շոգենաւներու երթեւեկութիւն հաստատուի, իսկ ցամաքով մեծամեծ քաղաքները երկաթի ճամբաներով իրարու հետ կապուին: Ասիկայ դիւրաւ կը յաջողի, թէ որ ընկերութիւններ կազմուին, ու տէրութիւնն ալ անոնց ձեռք բռնէ: Հիւսիսային Ամերիկայի ու Անգղիայի օրինակներն եղան, որ մէկալ տէրութիւնները բորբոքեցին, ու քանի կ'երթայ ասոնց օգտակարութիւնը աւելի կը ճանչցուի: Անգղիայի մէջ այնչափ շատ երկաթի ճամբաներ շինուեցան ու կը շինուին, որ կը յուսացուի թէ քիչ մը ետքը բոլոր թագաւորութեան մէջ քիչ ժամանակի մէջ ճամբորդութիւն կարող ըլլայ ըլլալ: Վեղդիա, տեսնելով որ երկաթի ճամբաներուն կարգաւորութիւնը վաճառականութեան շատ օգուտ կը բերէ, ցամաքային Եւրոպային մէջ շինելու սկսողներէն առջինն եղաւ. անկից ետքը սկսան Գաղղիա, Հոլանտա ու Գերմանիա: Գերմանիայի եւ մասնաւորապէս Աւստրիայի մէջ երկաթի ճամբաները շատցընելու շատ մեծ ջանք կայ, արդէն շինուած երկաթի ճամբաները ան երկիրներուն շատ վաստակ սկսան բերել, ու աս վերջին խումբութիւններէն յառաջ բաժանորդութեան թղթերը շատ բարձր գին ունէին: Անգլիան բազմապէս խօսելով՝ քանի որ շոգւոյ դօրութիւնը՝ ապրանքները տեղէ տեղ փոխադրելու միջոց առնուեցաւ, առուտունն ու դործատունները աւելի կենդանութիւն ստացան, ու քանի որ շոգենաւները համարձակ ծովու վրայ սկսան երթալ դալ, հեռաւոր ազգերն ալ իրարու հետ կապուեցան, ու օտարականները իրարու երկիր երթալով դալով, իրարու կարօտութեան օգնեցին, ու հանգստութիւնը ընդհանուր տարածեցաւ: Շոգենաւներու երթեւեկութիւնը ամենէն յառաջ Հիւսիսային Ամերիկա սկսաւ, անկէ ետքը եկաւ Անգղիա. հիմա ամէն կողմ թէ ծովերու

եւ թէ գետերու վրայ կանոնաւոր երթեւեկութիւն մը հաստատուած է: Աւտանորդութեան թղթեր ու նեցողները ամէն տարի աղէկ վաստակ կ'ընեն:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ

ՍՏԱԿԻ ՇՐՋԱՆԸ ՅԱՌԱՋԱՑԸՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՆ ՎՄԱՅ

195 ՍՏԱԿԸ բոլոր արուեստները կենդանացընելու ու կենդանութեան մէջ պահելու միջոց մըն է: Առուտուրի ընդհանուր միջնորդ ըլլալով՝ պէտք է որ ամէն մարդ իր աշխատութեանն ու իր գործածին տեղանիկայ առնելու նայի, որ անով թէ իր տանը հարկաւորութիւնը հոգայ եւ թէ առուտուր ընելու համար նորէն ապրանքներ դնէ, եւ կամ նորէն գործք հանելու համար նիւթ պատրաստէ: Այն որ առուտուրի կամ գործքի մը մէջ հարկաւոր եղած ստակը կը պակսի, ան ատեն ամէն բան տակն ու վրայ կ'ըլլայ, աշխատող ձեռքերը անգործ կը մնան, ու ազգային ճարտարութիւնը ոյժ ու զօրութիւն չունենար, որով կարող ըլլայ յառաջանալ:

Ստակը՝ առուտուրի ընդհանուր միջնորդը՝ առուտուրի մասնաւոր միջնորդներէն (ապրանքներէն) բուն անով կը զանազանի, որ անսպառելի նիւթ մըն է, անգամ մը շրջան ընելէն ետքը, դարձեալ նորէն շրջան ընել տալու կրնայ գործածուիլ, ու ամէն մէկ շրջանին նոր գործք կը հանէ: Օրինակի համար անունք շաքարը՝ որ սպառելի նիւթ մըն է. իր սպառելովը՝ այս ինքն բանի մը գործածուելուն պատճառաւ սպառելով, առուտուրին նկատմամբ ալ կ'ոչընչանայ. բայց անոր համար արուած ստակը ասանկ չէ, միշտ շրջանի մէջ կը մնայ, ու նոր նոր գործքերու կը գործածուի: Ինչպէս որ արիւնը կենդանւոյ մարմնոյն երակներուն մէջ շրջան կ'ընէ, շնչերակներէն ելլելով արեան անօթները կ'անցնի, ու անոնցմէ դարձեալ անհամար պղտիկ բարակ երակներէն անցնելով նորէն սիրտը կը դառնայ, ու աս շրջանով իր սահմանին

Մէջ ըլլող կենդանական մասերուն կենդանութիւն կու տայ, ու շարժման մէջ կը պահէ, ասանկ ալ ստակը բոլոր արուեստներու ու առուտուրին մէջ ըրած շրջանովը աս գործողութիւնը կը կատարէ: Թէ որ կ'ուզուի, որ ստակը իր օգտակար ու շահաւոր ազդեցութիւնը ցուցնէ, պէտք է որ առանց արժէքը փոխուելու միշտ շրջանի մէջ մնայ, ու շրջանի մէջ ըլլող ստակին քանակութիւնը այնչափ շատ ըլլայ, որչափի որ ազդային ճարտարութիւնը պէտք ունի, ու միանգամայն հարկ է որ շրջանին արագութիւնն ալ հաստատուն պահուի, որն որ բոլոր ժողովրդեան շատ դիւրութիւն կու տայ իրենց վիճակին ու գործքին հարկաւորութեանն ու համարման ընդունակութեանը չափ ստակ գտնելու: Առավարութիւնն ալ պէտք է որ աղէկ հոգ տանի, որ անանկ միջոցներ բանեցնէ ու կարգադրութիւններ ընէ, որոնցմով ժողովրդեան աս կողմանէ ալ օգնէ, վասն զի ինքը միայն է որ իր իշխանութեամբը զօրութիւն ունի ասոնք կարգի դնելու:

196. Ստակին՝ իբրեւ շրջանի մէջ ըլլող ընդհանուր առուտուրի միջնորդի մը պահանջուած թէութիւնները՝ անոնց ներքին արժէքին, դրսի ձեւին, ասդին անդին տանելու դիւրութեան, պահելու ու վճարելու կողմանէ են: Ստակը պէտք է որ որչափ կարելի է ազնիւ ու զուտ մետաղներէ շինուած ըլլայ, որպէս զի պղտիկ զանդուածի մէջ մեծ արժէք ունենայ: Պէտք է որ անուանական արժէքէն զատ նաեւ դրամներու օրինաց նայելով՝ իրական արժէք ալ ունենայ, որ ամէն տեղ արժէքը հաստատուն ու անփոփոխ ըլլայ: Ան դրամները՝ որոնք որ չափէն քիչ ազնիւ զուտ մետաղ ունին, ան տեղւոյն նախատինք են՝ ուր որ կտրուած են: Ասանկ դրամները օտարականները միայն իրական արժէքին նայելով կ'առնուն, ու անոր հակառակ իրական արժէքով կու տան, եւ կամ անոր նման դրամ կը կոխեն:

Պղտիկ վճարմունքները կատարելու համար նաեւ հասարակ մետաղներէ ալ դրամներ կը կոխուին, ինչպէս են պղնձի դրամները, որոնք գործածուածնուն շափ ներքին արժէք չունին. բայց ասոնք այնչափ միայն կը կոխուին, որչափ որ վախճաններնուն հարկաւոր է: Նաեւ թղթէ ստակներ ալ կան, որոնց վրայ արդէն խօսած ենք Համար 22:

197. Ալ երբ ըսինք, որ այնչափ ստակ շրջանի մէջ ըլլալու է, որչափ որ ազգային ճարտարութեան կարօտութիւնը կը պահանջէ: Թէ որ տեղ մը ստակը աս հարկաւորութենէն աւելի քիչ կ'ըլլայ, ան ատեն ստակը աւելի շատ փնտռուելով՝ մասնաւոր միջոցներուն, այս ինքն թէ բնական եւ թէ արուեստական բերքերուն համեմատութեամբ արժէքը կը բարձրանայ, տեղացիք իրենց ապրանքը բուն արժէքովը չեն կրնար հանել, եղած ապրանքներուն գինը կ'իյնայ, ամէն բանի առուտուրը կը դադրի, վարձուորներուն վարձքը անանկ վար կ'իջնայ, որ բանուորները անով չեն կրնար ապրիլ, ստակ ունեցողները կը պահեն, ու ճարտարութիւնը եւ գործքերը յառաջ տանելու ջանքը կը նուազի, որն որ առուտուր չըլլալէն յառաջ կու գայ. գեղացիք երկիրնին գործելը կը թողուն. իսկ ուրիշ արուեստաւորները ասդին անդին կ'իյնան, դրսի երկիրները կը պանդխտին, ու բոլոր տէրութիւնը մատնիչներու ու խաբեբաներու ձեռք կ'իյնայ: Ասոր հակառակ թէ որ շափէն աւելի առատ ստակ շրջանի մէջ ըլլալու ըլլայ, ան ատեն ամէն բանին գինն ու բանուորներուն վարձքը կը բարձրանայ, օտարական բանուորներ կը մըտնեն. թուլութիւն, ծուլութիւն, բարուց ապականութիւն կը մտնէ. ճարտարութիւնն ու արուեստները յառաջացընելու ջանքը կը նուազի, որով տէրութիւնը ողորմելի վիճակի մէջ կ'իյնայ, ու ստրկի առատութեամբ քաղաքական առաքինութիւնները կը խղզուին. ստակը կամաց կամաց գործասէր ու

աշխատասէր տէրութիւններուն երթալով, քիչ մը ետքը շատ ստակ ունեցող տէրութեան ուրիշ բան չմնար, բայց եթէ անգործ թող տրուած գետին մը, ապականեալ ու զեղծ հպատակներ, ու ամէն բան տակն ու վրայ ընելու հարկաւորութիւն մը: Միայն կառավարութիւնը զօրութիւն ու միջոցներ ունի ասանկ անկարգութիւններուն առջեւն առնելու, ու ստակը ազգային ճարտարութեան կարօտութեանը համաձայն կարգաւորելու: Թէ որ գեղացին շահով իր երկիրը կը բանեցընէ, գործուած ապրանքները կը ծախուին, ու ետեւէ ետեւ եռանդով կը պատարաստուին, արուեստանոցներն ու գործատուները իրենց յառաջ բերած ապրանքներովը դրսի երկիրներուն հետ կրնան մրցիլ ու դրսի երկիրներուն ալ կրնան ծախել, թէ որ հարկաւոր ու նաեւ երեւակայեալ կարօտութեան ապրանքներուն գները ոչ այնչափ բարձր եւ ոչ ալ չափէն աւելի ինկած են, երբ որ փոխանակագրերու ընթացքը առուտուրին կշռոյն մնասովը սաստիկ չբարձրանար կամ չիյնար, թէ որ տոկոսեաց կարգը օրինաւոր չափին մէջ կը մնայ, ու ի վախճանի երբ որ տուրք վճարելու պարտականութիւն ունեցող մարդիկներուն կարողութիւնը չիյնար, ան ատենը ըսել է որ չափաւոր ստակ շրջանի մէջ է: Հիմակուան ատենս բոլոր աս ըսածներնուս հակառակը կ'երեւայ Գերմանիա ու Գաղղիա, որմէ յայտնի կը տեսնենք որ շրջանի մէջ հարկաւոր եղածին չափ ստակ չկայ:

198. Ստակի մեծամեծ դումարներ վճարելը եւ ընդունիլը շատ մեծ դժուարութիւններու տակ ինկած է: Արծաթը ստորին արժէք ունենալով, անով մեծ մեծ դումարներ վճարելը շատ դժուար կ'ըլլայ: Արծաթի դրամով քանի մը հազարներ վճարելու համար շատ ժամանակ կ'ուզէ, ու քսակները կշռելն ալ, ինչպէս որ ամէն օրուան փորձը կը ցուցընէ, խաբէութեան վտանգներու տակ ինկած է: Ասկին՝

արծաթին նկատմամբ շատ մեծ ու բարձր արժէք ունի . բայց շատ կակուղ ըլլալուն համար՝ գործածութեան մէջ միօրինակ ինք իրմէ կը մաշի , նաեւ մասնաւոր շարութեամբ ալ կը մաշեցընեն . եւ որովհետեւ ոսկին կշռոյն մէջէն քիչ մը բան մ'ալ պակսելու ըլլայ , ամէն մէկ կտոր դրամին արժէքին վրայ սաստիկ ազդեցութիւն կ'ընէ , անոր համար ալ հարկ կ'ըլլայ կշռել . ասկից կը հետեւի որ ասիկայ ալ գործածելը վաճառականներուն շատ դժուարութիւններ կու տայ :

Շատ տարիներէ ի վեր մարդիկ աս դժուարութիւնները , ու առձեռնպատրաստ դրամով վճարմունք ընելուն անհանգստութիւնները վերցընելու ու դիւրութիւն մը հոգալու հնարքներ մտածեցին , ու այլեւայլ կերպերու ալ ձեռք զարկին : Ասարակաց զգուշութեան տակ կամ քանի մը երեւելի անձանց երաշխաւորութեամբը ստակի մ'թերքներ դրին , ու հսն տեղը ստակի գումար տուողին հաշուեգլուխ մը բացին , ու աս իշխանութիւնը անոր տունին , որ իր կամքին համաձայն ան ստակը կարգաւորելու ու իր նշանակագրովը ուրիշ տեղ անցընելու իշխանութիւն ունենայ : Ասոնցմէ զատ նաեւ անանկ տեղեր հաստատողներ ալ եղան , որոնք առջիններուն պէս հասարակաց զգուշութեան տակ կամ քանի մը անձանց երաշխաւորութեամբը բուն մետաղ դրամին դիմացը գրով կամ ուրիշ կերպով մը նշաններ (լոմայագիրներ) դուրս կու տան , ու երբ որ ան գիրը իրենց դարձուի կամ ներկայացուի , անոր տեղ մետաղ ստակ կը վճարեն : Աս տեսակ տեղերը կամ շէնքերը Գրամատեղան (դան+) կը կոչուին , ինչպէս հաւանական կերեւայ , սեղանաւորներուն հին ատենները , մանաւանդ Հռոմ ունեցած սովորութենէն , որ վաճառատեղիներուն հրապարակներուն մէջ սեղաններ կը դնէին , ու վրան ստակ կը վճարէին : Արովհետեւ , ինչպէս քիչ մը յառաջ զրուցածներնէս կ'երեւայ ,

գրամասեղանք երկու տեսակ է, անոր համար երկու-
քին ալ զատ զատ անուններ դրուած են, առջինը՝
որով նշանակագրի դիմացը ստակ կը վճարուի Փո-
խանցութեան գրամասեղան (banque à virement) կ'ը-
սուի, իսկ երկրորդը՝ Լումայագրի գրամասեղան (ban-
que à billet):

199. Որովհետեւ ամէն գրամասեղաններուն մէջ
յառաջուրնէ ստակ կը դրուի, ու փոխանցութեան
գրամասեղաններուն մէջ դրուած ստակը միայն կը
պահուի, բայց լումայագրի գրամասեղաններուն մէջ
ներկայացուցած լումայագրին դիմացը ստակ կը վճա-
րուի, ասկից կը հետեւի որ ըստ ինքեան լումայագրի
գրամասեղանները այնչափ պատրաստ գրամ ունենա-
լու են, որչափ լումայագիր կամ թուղթ որ դուրս
տուած են: Բայց որովհետեւ ասիկայ մտածելու բան
չէ, որ ամէն դուրս տրուած թղթերը մէկէն մէկ վայր-
կենի մէջ բերուին ներկայացուին, ու անոնց տեղ
հնչական գրամ պահանջուի. աս գիտնալով ասանկ
գրամասեղաններուն ընկերութիւնները ան պատրաստ
գրամին մէկ մասը գրամասեղանին հարկաւոր ու սրու-
շուած գործքերուն կը գործածեն: Թէ որ իրենց
դաշնագրութեանը կամ սահմանագրութեանը հա-
մաձայն առանձնական մարդիկներու իւրաքանչիւրոց
համարմանը նայելով փոխ տալու ըլլան կամ անշարժ
գրաւներու վրայ անցընեն, ան ատենը ասանկ գրա-
մասեղանները՝ Փոխատու գրամասեղաններ կ'ըսուին,
իսկ թէ որ աւանդի դիմացը ստակ տալու ըլլան,
Աւանդի գրամասեղանք կը կոչուին:

200. Գրամասեղաններու սկիզբը մինչեւ տասն-
ուհինգերորդ դար կը հասնի: Ամենէն հին գրա-
մասեղանը՝ Ճենովայի Ս. Գէորգեան գրամասեղանն
է, որն սր 1407ին հաստատուեցաւ: Ասիկայ լումայա-
գրի գրամասեղան մըն էր, որն որ Ճենովայի հասարա-
կապետութիւնը առանձնական մարդիկներէն պարտք
առնելուն պատճառաւ գրաւ, որուն դիմացը հասա-

րակապետութիւնը տէրութեան մաքսը անոնց ձեռքը
 յանձնեց: Աս դրամասեղանը անամէն սխալմունքները
 գործեց, որոնց մէջ ասանկ ընկերութիւնները անզգու-
 շութեամբ կրնան իյնալ, ու երբ որ 1746ին ճենովա
 Գերմանացիներէն առնուեցաւ, աս դրամասեղանը
 անոնց երկու միլիոն սկուտ վճարելու պարտաւորելով,
 սնանկացաւ ինկաւ: — Աս դրամասեղանէն աւելի
 երեւելի ու անուանի եղաւ Աւենետիկի դրամասե-
 ղանը, որն որ 1587ին դրուեցաւ, ու իրմէ ետքը հաս-
 տատուած դրամասեղաններուն ամենուն ալ օրինակ
 եղաւ: Անոր համարումը ամենուն առջին արտաքոյ
 կարգի մեծ էր. բայց Աւենետիկին ինքնիշխանութիւնը
 կործանելով, ինքն ալ իր համարումը կորսընցուց ու
 1797ին իր վճարմունքը դադրեցընելու պարտաւորե-
 ցաւ. եւ թէպէտ քանի մը տարի ետքը նորէն գոր-
 ծելու սկսաւ, բայց վաճառականներուն առջեւը
 երեւելի համարում մը չունի: — Ամստերտամի դրա-
 մասեղանը 1609ին հաստատուեցաւ: Ասիկայ փոխան-
 ցութեան դրամասեղան է. ամէն տեսակ ընթացիկ
 ստակը կ'առնու, բայց հասարակ շրջանի մէջ գացա-
 ծէն հարիւրին հինգ վարով, ու աս հարիւրին 5ը
 դրամասեղանին լումայաշահը (—ճիւն) կ'ըսուի: Ասեւ
 պահելու համար չկոխուած ոսկի ու գաւազանաձեւ
 կամ գործուած արծաթ ալ կ'առնու ու անոր տեղը
 ընկալագիր կու տայ: Ամստերտամ քաղաքը աս
 դրամասեղանին մէջ դրուած ստակներու գումարին
 պատասխանատուութիւնը իր վրայ առած է, ու զա-
 նոնք ապահով խցերու կամ տեղերու մէջ կը պահէ,
 ուր ամենեւին առանց քաղաքապետին ընկերութեանը
 մէկը չկրնար մտնել: Աս դրամասեղանը չէ թէ միայն
 քաղքին բնակիչներուն, հապա նաեւ գրեթէ հին
 Հոլանտայի հասարակապետութեանը բոլոր սահմանին
 արկղապետ (cassier) մըն է. բայց նոր ատենները
 ժամանակին պարագաները, ու Համպուրկի դրամասե-
 ղանին հաստատուիլը անոր շատ վնաս տուաւ: — Համ-

պուրկի գրամասեղանը՝ որն որ փոխանցութեան գրամասեղան է, 1619ին գրուեցաւ: Ասիկա ուրիշ բան չընդունիր, բայց եթէ արծաթի գաւազաններ, եւ ամէն մէկ մարկը 16 լոթ գրելու տեղ՝ մէջի զուտ (խոս) արծաթը միայն հաշուելով՝ 15 լոթ 12 դարեհատ (կրն) կը դնէ, ու մարկ մը արծաթ տուողին՝ 27 գրամասեղանի մարկ* ու 10 շիլլինկ տալիք կը դրէ: Ասով գրամասեղանի մարկ ըսուած ստակը անփոփոխ արժէք մը կ'ունենայ, ինչու որ աս Համպուրկի գրամասեղանին մէկ մարկի տեղ ընդունած 15 լոթ 12 դարեհատ զուտ կամ ազնիւ արծաթը՝ ամէն պարագայէ անկախ՝ միշտ 4/2 շիլլինկ կ'արժէ, եւ ամէն մէկ 16 շիլլինկը մէկ գրամասեղանի մարկ կ'ընէ:

Անտոնի գրամասեղանը, որ 1694ին գրուեցաւ, լոմայագրի գրամասեղան է. 5 սղերլիննոցէն մինչեւ 1000 սղերլիննոց լոմայագիր կամ սեղանատոմս (billet de banque, գնդ-նոթ, գնդ-նոթ) կը հանէ ու ամէն ատեն զանոնք անգղիական գրամով կը վճարէ: Ամէն մարդ առձեռն պատրաստ ստակի տեղ աս լոմայագիրը ընդունելու պարտական է, ինչու որ խորհրդանոցին որոշմամբը անիկայ իբրեւ Անգղիայի գրամ ու ստակի հաւասար գրուած է: Աս գրամասեղանին վիճակը ծածուկ գաղտնութիւն մըն է. չորս տեսակ գրամասեղանի գործք կը տեսնէ, այս ինքն լոմայագրի, փոխանակագիր կոտրելու, աւանդի ու տէրութեան գրամասեղանի: Աբրեւ լոմայագրի գրամասեղան առձեռն պատրաստ ստակ կ'առնու ու անոնց տեղը լոմայագիր կու տայ: Աբրեւ փոխանակագիր կոտրող գրամասեղան 5 առհարիւր վարով վաճառականներէն փոխանակագրեր կը դնէ. իբրեւ աւանդի գրամասեղան քիչ վարձքով մը առանձնական մարդիկներէն պահպանելու համար գոյք կամ գրամագլուխ կ'առնու, իսկ իբրեւ տէրութեան գրամ-

* Մտրդ գնդ-նոթ կամ գնդ-նոթ մարդ, որն որ մէկաւ մարկէն զատ ստակ մըն է, 7 զուտուշ 35 փարա կ'արժէ:

մասեղան ատեն ատեն իր գոյքէն տէրութեան փոխ
 ստակ տալով տէրութեան կ'օգնէ, բայց աս վերջին
 գործողութիւնը իրեն ամենէն վտանգաւոր գործքն է,
 որն որ գուցէ շատ անգամ դրամասեղանը խախտեց,
 թէպէտեւ անոր կործանումը դեռ շատ հեռու ալ
 երեւայ: — Շ գոթհոլմի դրամասեղանը 1668ին դրուե-
 ցաւ, ու 1726էն լոմայագրի կամ սեղանատոմօի
 դրամասեղան է: Միայն ներքին առուտուրին համար
 հաստատուած ըլլալով, վրան երկայն խօսիլը օգուտ
 մը չունի, ինչպէս նաեւ Գորենհակի լոմայագրի դրա-
 մասեղանը, որն որ 1736ին հաստատուեցաւ, եւ
 իսկզբան մասնաւորի մը ստացուածք էր, բայց ետքէն
 1773ին թագաւորական ստացուածք եղաւ: — 1765ին
 Պէրլինի մէջ փոխանցութեան ու փոխատուութեան
 արքունի դրամասեղանը դրուեցաւ: Ասիկայ մինչեւ
 հիմա կը տեւէ, ու հարիւրին 2, 2¹/₂ ու 3ով փոխ
 կ'առնու, իսկ ուրիշներուն՝ հաստատուն տեղերու եւ
 կամ աղէկ փոխանակագրերու դիմացը հարիւրին 5ով
 փոխ կու տայ. բայց աս դրամասեղանն ալ միայն
 ներսի համար է, անոր համար մեզի շահ մը չունի: —
 Ա իէննա առաջին դրամասեղանը 1703ին դրուեցաւ:
 Ա շոքոլտոս Ա. կէս մը հին պարտքերը վճարելու ու
 կէս մ'ալ նոր համարում մը ցուցնելու համար իր
 անձնական մուտքէն անոր շորս միլիոն ֆիորին պար-
 գեւեց: Ասորը անանկ միտքը դրած էր, որ աս դրա-
 մասեղանը բոլոր իր տէրութեանը ընդհանուր արկ-
 ղապետ ընէ, անոր համար անիկայ փոխանցու-
 թեան դրամասեղան ըրաւ, ու հրամայեց որ բոլոր
 փոխանակագրերուն վճարմունքները աս փոխանցու-
 թեան դրամասեղանին ձեռքովն ըլլան: Բայց իրօք
 երեւցաւ որ ասիկայ ի գործ դնելը անկարելի է, անոր
 համար 1704ին աս բռնադատիչ օրէնքը վերցաւ, ու
 փոխանցութեան դրամասեղանը պարզ աւանդի դրա-
 մասեղանի փոխուեցաւ, ու մէկէն մէկալէն հարիւրին
 մէկ քանի շահով փոխ առաւ, ու ասիկայ աս կեր-

պով յառաջ տարաւ. բայց ետքէն կամաց կամաց սկսաւ լումայագրի դրամասեղանի փոխուիլ: 1763 ին 21, 900,000 Ֆիորինի պարտականութեան դիմացը թղթեր դուրս տուաւ, որոնք ըստ ինքեան խօսելով լումայագիր չէին, ինչու որ միայն տուրք վճարելու ատեն կրնային տրուիլ: Բայց 1771էն Յուլիսի 1էն սկսած աս դրամասեղանը լումայագրի դրամասեղան եղաւ, ու մինչեւ 1811 Փետրուարի 20 տեւեց, որ ժամանակը որ սնանկանալով վերջացաւ: Ա իէննայի լումայագրի դրամասեղանին տեղը 1816ին Յունիսի 1ին Աւստրիական ազգային դրամասեղանը դրուեցաւ, որն որ տէրութեան շատ երկայն ատենի մէջ ըրած փորձառութեամբը դրած կանոններուն վրայ հիմնած ըլլալով, շատ անուանի եղաւ, ու ան ամէն մէկալ դրամասեղաններուն ունեցած պակսութիւններէն քիչ մը ազատ է: Աս դրամասեղանը առանձին մասնաւոր անձինքներու ստացուածք է, որոնք բաժանորդութեան թղթեր հանած են, ու անոնցմէ շահ կ'առնուն: Տէրութիւնը ամենեւին վրան իշխանութիւն չունի, ու միայն անոր առձեռնպատրաստ դրամ տալով օգնութիւն կ'ընէ ու կը պաշտպանէ: Աս դրամասեղանը ըստ մասին լումայագրի, ըստ մասին փոխանցութեան, նաեւ աւանդի ու փոխ տալու դրամասեղան է: Անոր լումայագիրները ներկայացուելուն պէս՝ արծաթի դրամով պիտի վճարուին. ամենեւին մէկը արծաթի դրամի տեղ լումայագիր առնելու պարտականութիւ չունի, բայց տէրութիւնը բոլոր վճարմունքներուն տեղ լումայագիրը կ'ընդունի: Արամասեղանին կառավարները միշտ անոր հոգ կը տանին որ դրամասեղանին ունեցած արծաթի մթերքին երեքպատիկէն աւելի դուրսը լումայագիր չգրտնուի: Աս դրամասեղանը ան փոխանակազրեբը՝ որոնք արծաթի դրամով պիտ'որ վճարուին, կը կոտրէ, դրամներու, եւ տէրութեան ու ապահով մասնաւորներու պարտականութեան թղթերու վրայ փոխ

ալ կուտայ : Աւանդ կ'առնու, ու աւանդին որ-
չափ ըլլալը աւանդատուին վրայ գիւրքը կ'անցընէ, ու
աւանդ դնողը նշանակագիր (assignation) խրկելով
իր աւանդը ուզածին պէս կրնայ տրամադրել :

Հիմակուան ժամանակիս մէջ եղած երեւելի գրա-
մասեղանները դնելէն ետքը, հիմա անցնինք ան ամէն
հանգամանքները դնելու, որոնցմով այլեւայլ տեսակ
գրամասեղանները իրենց վախճանին կրնան հասնիլ :

Ա. Լումայագրի գրամասեղան :

201. Լումայագրի կամ սեղանատոմսի գրամասե-
ղաններուն վախճանը՝ ստակ պահելը, վճարելն ու
փոխադրելը դիւրինցընելն է : Արբ որ լումայագիրները՝
մետաղէ գրամներուն տեղը կրնան բռնել, ան ատեն
յայտնի է, որ առուտուրի ընդհանուր միջնորդը երկու
տեսակ կ'ըլլայ, մէյ մը Բնական, մէյ մ'ալ Արուեստ-
տական, այս ինքն մէյ մը իրական Ստակը՝ իբրեւ
ապրանքներուն արժէքը ցուցընող նշան, ու մէյ մ'ալ
Ստակին տեղը գրուած թղթերը : Իրական ստակին
արժէքը թէ որ ազնուական մետաղին կողմանէ նայե-
լով աղէկ ամբողջ է նէ, ան ատեն ամէն տեղ անփո-
փոխելի ու հաւասար արժէք մը ունի, անոր համար
ալ ընդհանուր ստակ մըն է : Իսկ արուեստական
ստակները շատ պարագաներու մէջ սահմանաւորեալ
են, ու հասարակօրէն իրենց տէրութեան սահմանէն
գուրս չեն ելլեր :

Լումայագիրները կամ սեղանատոմսերը առուտուրի
ընդհանուր արուեստական միջոց են : Ասոնք գրա-
մասեղանին գուրս տուած պարտականութեան թրղ-
թերն են, որոնք երբ որ մէկը գրամասեղանին բերե-
լու ըլլայ, գրամասեղանը թղթին վրայ գրուած գու-
մարը իրական ստակով պիտ'որ վճարէ : Ասոնք ոչ
տոկոսիք ունին եւ ոչ ալ ուրիշ շահ մը, եւ գրա-
մասեղանը ամէն ատեն ուզուելուն պէս՝ պիտ'որ իրա-
կան գրամ վճարէ, եւ ասով տէրութեան թղթե-

րէն ու դրամասեղանի բաժանորդութեան թղթերէն
կը զանազանին :

202. Լոմայագրերուն արժէքը բոլորովին հասարակութեան՝ անիկայ դուրս տուող դրամասեղանին վրայ ունեցած վստահութենէն ու համարումէն կախում ունի : Արչափ որ դրամասեղանը իր պարտաւորութիւնը ճիշդ ժամանակին կը կատարէ, այնչափ ալ հասարակութեան իր վրայ ունեցած վստահութիւնը մեծ կ'ըլլայ, ու լոմայագրերն ալ աւելի արժէք կ'ունենան :

203. Ինչպէս որ 22երորդ համարին մէջ ըսած ենք, լոմայագիրները՝ ստակ վճարելու շատ դիւրութիւն կու տան, ու ստակին շրջանը շուտցընելու պատճառ կ'ըլլան : Թէ որ այնչափ լոմայագիր դուրս տրուի, որչափ որ անոնց տեղը դրամասեղանին արկեղ մէջ ստակ դրուած է, ու աս ստակը անշարժ դրամասեղանին մէջ մնալու ըլլայ, ան ատենը յայտնի բան է որ միայն անով ստակին շրջանը կը դիւրինցուի, որ ասոնցմով վճարմունքները դիւրին կը կատարուին . բայց թէ որ լոմայագիրներուն տեղը եղած ստակի դրամարը դրամասեղանը ապահով ճամբով ըստ մասին շրջանի մէջ խոթելու ըլլայ, ան ատեն շրջանի մէջ կրկին ստակ կ'ըլլայ, ու շրջանը կրկին կը շուանայ : Թէ որ ժողովրդեան մէջ քիչ ստակ կայ, ան ատեն լոմայագիրները շատ օգուտ ունին, բայց թէ որ ստակը արդէն առատ է նէ, ան ատեն ստակին շրջանը շուտցընելը աւելորդ ու փնասակար է :

Թէ որ դրամասեղանը առձեռնպատրաստ դրամ ունեցածէն աւելի լոմայագիր դուրս տալու ըլլայ, եւ կամ թէ որ առանց լոմայագիրներուն դիմացը դրամասեղանին մէջ ստակ պահելու, եղած առձեռնպատրաստ դրամները ուրիշ բաներու գործածուին, ան ատեն կամ կանուխ եւ կամ ուշ դրամասեղանը կրնայ կործանիլ : Աս ըսածներնուս ճշմարտութիւնը կրնանք իմանալ թէ որ անգամ մը աշուրնիս Եւրո-

պայի լումայագրի դրամասեղաններուն պատմութեանը վրայ դարձնելու ըլլանք :

204. Մասնաւոր ընկերութիւն մը, տէրութենէ ալ հաստատուած ըլլայ, լումայագիրները դրամասեղանին գոյքէն աւելի չկրնար շատցնել : Ասոյց ասանկ առանձին ընկերութիւնները, թէ որ դրամասեղան մը յառաջ տանել յանձն կ'առնուն, ու կ'ուզեն որ ամէնքը իրենց վրայ վստահութիւն ցուցնեն, պէտք է որ սահմանադրութիւն մը ունենան : Անկերութիւնը շատ անգամներէ բաղկացած պիտ'որ ըլլայ, որոնք դրամասեղանին շահէն քիչ մաս ունենալու են, որպէս զի դրամասեղանը շահախնդիրներու անձնասիրութեամբը օգտակարութիւնը թող տալով, առուտուրը ու ստակի շրջանը յառաջացնելու տեղ վաշխառութեան (մօտէլէճիո-թեան) շփոխուի, ու իրեն վրան դրուած վստահութեամբ զեղծանելով՝ առուտուրի կործանում ու ճարտարութեան ապականութիւն շրջայ :

205. Այլ լումայագրի դրամասեղանին հաստատութեանը վրայ դատաստան ընելու համար հարկաւոր եղած սկզբունքները կամ հիմունքն ասոնք են :

Ա. Լումայագրի դրամասեղան մը պէտք է որ կատարեալ համարում ունենայ : Աս համարումը դրամասեղանին տիրոջը վճարելու կարողութենէն ու իր պարտաւորութիւնը կատարելու համար զինքը ստիպելու դիւրութենէն կախուած է, որոնք միայն բաժանորդութեան ընկերութեան մը վրայ կրնան ըլլալ, ինչու որ ասոնք մեծ գոյք կը ժողվեն, տէրութեան հաշիւ կու տան, ու անկից պաշտպանութիւն կը գտնեն :

Բ. Շրջանի մէջ խոթուելու լումայագիրներուն գումարը պէտք է որ ներկայ ժամանակին մէջ եղած ստակի շրջանին կարօտութեանը նայելով, եւ ոչ թէ դրամասեղանին տիրոջը պատշաճ տեսնելուն կամ հաճոյքին նայելով որոշուի : Ասիկայ որոշելու կամ կարգի

դնելու համար միայն կառավարութիւնը միջոց կրնայ բանեցընել: Անոր համար դրամասեղանին տէրերը պէտք է որ դուրս տալու լումայագիրերուն գումարին համար կառավարութեան հաւանութիւնն ուզեն:

Գ. Արտիճետեւ դրամասեղանին մէկ վախճանն ան է, որ առուտուրն ու արուեստները կենդանացընելու համար եղած ստակին շրջանը աւելնայ, անոր համար պէտք է որ աւելորդ ունեցած առձեռնպատրաստ դրամը փոխ տայ, ու շրջանի մէջ խոթէ, բայց անանկ կերպով մը որ աս դուրս հանած ստակը վաճառականութիւն ընող մարդիկներու ձեռքն անցնի: Վրամասեղանը կրնայ փոխ տալ Ա. Առանձինն մասնաւոր մարդու համարմանը նայելով, Բ. Շարժական գրաւներու (բէնէնէրս), ու Գ. Անշարժ գրաւներու վրայ (ինչպէս են կալուածներ, տներ, եւ այլն):

Վրամասեղանը առանձնական մարդիկներու համարմանը վրայ վստահանալով, ուրիշ կերպով մը փոխ չկրնար տալ, բայց եթէ ապահով փոխանակազրեր կօտրելով, որն որ թէ դրամասեղանին տէրերուն օգտակար է եւ թէ առուտուրի ճարտարութիւնը կենդանացընելու աղէկ առիթ մըն է: Բայց թէ աս բանիս մէջ որչափ զգուշութիւն ու վաճառատեղւոյն ծանօթութիւն ունենալու է, ամէն մարդ ինք իրմէ կրնայ իմանալ: Ա իէննայի ազգային դրամասեղանը աս գործքիս վրայ առանձինն գործակալ գրած է, ու նաեւ բաժանորդներէն շորս հոգի ալ ընտրած ու աս գործքը իրենց յանձնած է: Շարժական գրաւներու վրայ փոխ տալը՝ առձեռնպատրաստ դրամը շատ օգտիւ գործածելու թէ ապահով թէ դիւրին ու հանգիստ ճամբայ մըն է, միայն թէ պէտք չէ մտնալ որ ասանկ առիթներու մէջ նայելու է որ տրուած փոխը արուեստաւոր ու առուտուրի մարդիկներուն ձեռքը անցնի: Աս ըսելու է նաեւ անշարժ գրաւներու վրայ տրուած փոխին համար:

Գ. Լումայագիրները պէտք է որ անանկ շինուին, որ անոնց համար վճարուելու արժէքը, ու ճշմարիտ կամ շինծու բլլայը գիւրաւ իմացուի, եւ որչափ կարելի է եւ մարդուս կարողութիւնը կը հասնի, անոր նմանը յարմարցընելը անկարելի բլլայ:

Գրեթէ ամէն աս կերպ դրամասեղաններու մէջ լումայագիրները աս կողմանէ անանկ կատարելութեան մը հասած են, որ արտաքոյ կարգի ճարտարութիւն ու վարպետութիւն հարկաւոր է, որ մարդ անոնց նմանցընելու համար ձակի: Անանկ սուտ ու շինծու լումայագիրներ շինել, որ դրամասեղանին արկղապետը կարող չբլլայ ճանչնալ, անկարելի բան է, ինչու որ անոնց մէջը անանկ գաղտուկ նշաններ կան, որ մարդ չկրնար իմանալ: Աւ որովհետեւ աս յանցանքին՝ որն որ ասանկ վարպետութիւն ու ճարտարութիւն կ'ուզէ, նաեւ գրեթէ ամէն տեղ մահուան պատիժ ալ դրուած է, եւ ասանկ սուտ լումայագիրներ շինողը յայանողին շատ մեծ պարգեւներ խոստացուած է, անոր համար գրեթէ անկարելի է որ ասանկ գործք մը ծածուկ մնայ. ի վերայ այսր ամենայնի մարդ չկրնար զարմանալէն գաղբիլ, երբ որ կը տեսնէ որ դեռ ասանկ գործքի ձեռք զարնող մարդիկ կը գանուին:

Ե. Հարկաւոր է, որ երբեմն երբեմն հասարակութեան մէջ պարտող լումայագիրները ետ քաշուին, ու անոնց տեղը նոր շինուած լումայագրեր գուրս տրուին, որպէս զի կէս մը սուտ լումայագիրներուն առջեւն առնուի, ու կէս մ'ալ հինցած ու մաշածները նորերով փոխուին:

Զ. Լումայագիրները միայն այնչափ ատեն կատարեալ արժէք ունին, որչափ որ իրենց ցուցուցած գումարը առ ձեռն պատրաստ դրամով ամբողջ կը վճարուի:

Որովհետեւ չկրնար բլլալ որ բոլոր լումայագիրները մի եւ նոյն ատենուան մէջ աւրելու համար դրամասեղանը բերուին, ու ասիկայ միայն դրամասեղանին

Համարումը կորսընցընելէն կրնայ պատահիլ, որն որ ինչպէս յայտնի է, որչափ որ դրամասեղանը ժամանակին իր վճարմունքները կ'ընէ նէ, չկրնար կորսուիլ, ասկից յառաջ կու գայ, որ դրամասեղանը իր լումայագիրներուն դիմացը դրած առձեռնպատրաստ գրամին մէկ մասը համեմատութեամբ օգտակար ու շահաւէտ գործքերու կրնայ գործածել. բայց միշտ համեմատութեամբ խել մը առձեռնպատրաստ գրամի մթեր քովն ունենալու է, որ արտաքոյ կարգի դէպքի մը ատեն լումայագիրները կարող ըլլայ վճարել:

Է. Թէ որ լումայագիրները՝ դրամասեղանին եղած տեղէն զատ բոլոր տէրութեան կամ երկրին մէջ պիտ'որ գործածուին, ու շրջանի մէջ պիտ'որ մտնեն, ան ատեն երկրին գլխաւոր քաղաքներն ալ հասարակաց արկղներ ըլլալու են, որոնք լումայագիրները կարող ըլլան աւրել ու տեղը իրական ստակ տալ:

Ը. Առձեռն գրամի տեղ լումայագիր առնելու պարտաւորութիւն դնող օրէնքը նոյն իսկ դրամասեղանին շահուն դէմ բան է: Վանի որ դրամասեղանը իր վճարմունքը ժամանակին կը կատարէ, ան ատեն ասանկ օրէնք դնելը աւելորդ է. ինչու որ ան ատենը ամէն մարդ առձեռնպատրաստ գրամին տեղ սիրով լումայագիր կ'առնու: Վայց թէ որ դրամասեղանը իր պարտականութիւնը կատարել չկրնար նէ, եւ կամ իրեն դէմ հիմնական անվստահութիւն ու վախ մը ելլէ, որ իր վճարմունքը պիտ'որ դադրեցընէ, ան ատեն ասանկ ստիպողական օրէնքը համարումը աւելի վար կը ձգէ, ու վախը կ'աւելցընէ:

Թ. Թէ որ լումայագիր մը ապականելու ըլլայ, անոր իրաւունքն ալ կը կորսուի, այս ինքն լումայագրին տէրը դրամասեղանէն բան մը չկրնար պահանջել:

Բ. Փոխանցութեան դրամասեղան.

206. Աս տեսակ դրամասեղանը լումայագրի դրամասեղանէն քիչ վտանգաւոր է: Իրեն սահմանա-

գրութեանն ու կանոններուն նայելով՝ մասնաւոր մար-
գիկներէն ոսկի ու արծաթ կ'առնու, հաշուեգրքին
մէջ գրամասեղանը ստակ դնող ամէն մէկ մարդուն՝
զատ գլուխ մը կը բանայ, ու անոր՝ նշանակագրով
մը հրամայածին նայելով՝ վճարմունք մը բնելու ըլլայ
նէ, անոր հաշուէն վար կ'առնու, եւ կամ գրամ
ընդունելու ըլլայ նէ, անոր հաշուին կ'աւելցընէ,
հաշիւը նոյն հաշուեգլխին մէջ գրելով: Աս տեսակ
գրամասեղաններն ալ մասնաւոր մարգիկներու կամ
ընկերութիւններու գործք է, որոնց վրայ տէրութիւնը
կը հսկէ ու կը պաշտպանէ:

Փոխանցութեան գրամասեղանները այլեւայլ կա-
նոններու վրայ հաստատուած կրնան ըլլալ: Արնայ
ըլլալ, որ քանի մը հոգի մէկտեղ գանձ իրենց հա-
մար միայն տսանկ գրամասեղան մը դնեն, ու իրենց-
մէ զատ մարդ չընդունին. կրնայ ալ ըլլալ որ ամէն
մարդ անոր կարենայ մասնակից ըլլալ: Ամէն մէկ ան-
գամ իր զատ հաշիւը կ'ունենայ. բայց կ'ըլլայ ալ
որ ամէն ստակ դնողներուն ընդհանուր հաշիւ մը բրո-
նուի, ու ամէն մէկուն դարձեալ առանձին հաշիւ ալ
չինուի. եւ աս երկրորդ կերպը աւելի դիւրին է:

207. Արամասեղանին ընելու վճարմունքները կամ
նոյն իսկ գրամասեղանին անդամներուն մէկուն պիտի
ըլլան եւ կամ անոնցմէ դուրս ուրիշի մը: Թէ որ
գրամասեղանը ստակ դնողներէն մէկը՝ գրամասեղանը
ուրիշ մէկ ստակ դնողի մը վճարմունք պիտ'որ ընէ,
ու պարտատէրը առնելու ստակը գրամասեղանէն հա-
նել չուզեր, ան ատեն վճարմունքը կ'ըլլայ կը լմըն-
նայ, երբ որ վճարուելու գումարը պարտականին կամ
վճարողին տետրակէն աւրուի, ու պարտատէրին կամ
ընդունողին տետրակը գրուի: Թէ որ վճարողը գրա-
մասեղանին մասնակից մարդ չէ, ու վճարմունքը գրա-
մասեղանին ձեռքովը կ'ուզուի որ ըլլայ, ան ատեն
գրամասեղանը ստակը պարտականէն կ'ընդունի, ու
առջինին (պարտատէրին) վրայ կ'անցընէ, այս ինքն

կը գրուի որ դրամասեղանը ան մարդուն այնչափ պարտք ունի :

Թէ որ ստակ ընդունողը դրամասեղանին մէջ մաս ուտի եւ իր հաշուին ալ հաշուեղլուի կամ տետրակ չունի, ան ատեն երեք գէպք կրնայ պատահիլ. եթէ կ'ուզէ որ աս ստակը առձեռնպատրաստ դրամով առնու, ան ատենը դրամասեղանը իրեն կը վճարէ, ու անոր պարտապանին հաշուէն վար կ'առնու. թէ որ աս ստակը դրամասեղանին վրայ թողուլ կ'ուզէ, ան ատենը պէտք է որ դրամասեղանին մասնակից ըլլայ, ու իրեն համար տետրակ բացուի ու մէջը գրուի. բայց թէ որ կ'ուզէ որ աս ստակը անանկ մարդու մը յանձնուի, որ դրամասեղանին մասնակից է, ան ատեն դրամասեղանը ստակը ան մարդուն հաշուին կ'անցընէ :

208. Մինչեւ հիմա ըսածներնէս յայտնի է, որ դրամասեղան մը իրեն մասնակիցներուն համար կամ առձեռնպատրաստ դրամով, եւ կամ անոնց հաշուին ուրիշի մը վրայ անցընելով վճարմունք կ'ընէ, ուրեմն պէտք է որ ան մարդը դրամասեղանին մէջ գոյք ունենայ : Ասոր համար ամէն փոխանցութեան դրամասեղաններուն մէջ պատիժ գրուած է, թէ որ մասնակից մը իր ունեցած գոյքէն աւելի տրամագրութիւն մը ընելու ըլլայ : Ամտերտամի ու Համպուրկի դրամասեղաններուն մէջ աս պատիժն է իր գոյքէն աւելի տրամագրածին հարիւրին երեք տոյժ վճարել :

Արովհետեւ դրամասեղանը իրեն մասնակիցներուն համար վճարմունքներ պիտ'որ ընէ, ան պատճառաւ պէտք է որ ինքն ալ իր ապահովութեան համար անոնց հաւանութիւնը յայտնի տեսնէ : Ասոր համար միայն գրով նշանակագիրներուն վրայ դրամասեղանը կրնայ ապահով ըլլալ : Բայց ամէն գրով եղած նշանակագրերուն ճշմարտութիւնն իմանալը գիւրիս բան չէ, մանաւանդ երբ որ ամէն մարդ իշխանութիւն ունի դրամասեղանին մէջ տետրակ կամ անոր հաշուեղլուքին մէջ իրեն համար գլուխ մը ունենալու : Արպէս զի

ասոր կերպով մը ճար ըլլայ, ու որչափ որ կարելի է ստորագրութեանց ճշմարտութիւնը իմացուի, այլեւայլ ճամբաներ գրուած են: Փոխանցութեան գրամասեղանը առանձին մէկ գրքի մը մէջ բոլոր իր մասնակիցներուն ստորագրութիւնները կը պահէ, որպէս զի եկած նշանակագրերուն ստորագրութիւնները անոնց հետ երբ որ ուզէ, համեմատէ: Հատ անգամ մէկ նշանակագիր մը ներկայացընողին, նշանակագիրը գրողին՝ գրամասեղանին մէջ ունեցած տետրակին, անոր գրամասեղանին մէջ ունեցած հաշուին վրայ հարցումներ կ'ընէ. համառօտ ըսենք ամէն կերպով կը ջանայ, որ որչափ կարելի է, խաբէութիւնը անկարելի ընէ, կամ թէ գոնէ դժուարացընէ: Վարձեալ գրամասեղանին ամէն մէկ հաշուներն ալ շատ անգամ ու ստեպ կշռի մէջ խոթելու է, որ գրամասեղանն ու իր մասնակիցները միշտ գրամասեղանին ու իրենց վիճակին վրայ տեղեկութիւն ունենան:

209. Վրամասեղանին մասնակից ըլլող անձինքը գրամասեղանին կամ մէկ տեսակ եւ կամ այլեւայլ տեսակ ստակ կրնան դնել: Թէ որ դրած ստակնին այլեւայլ տեսակ է, ան ատեն գրամասեղանը աս ստակները կամ իրենց ներքին արժէքին նայելով կ'ընդունի, ինչպէս հին քսաննոց ոսկին՝ քսան ու հինկով. եւ կամ անուանական արժէքով (valeur nominale), զոր օրինակ յիսուննոց ոսկին յիսուն զուրուշով: Վրամասեղանը ընդունած ստակին տեսակը կամ հաշուին մէջը կը նշանակէ, եւ կամ որոշած արժէքով մը կ'ընդունի, ու անոր նայելով տուողին հաշուին կ'անցընէ, եւ կամ դարձեալ որոշեալ տեսակ ստակ մը կ'ընդունի, ու անիկա միայն իբրեւ գրամասեղանի ստակ կը ճանչնայ:

210. Թէպէտ ամէն փոխանցութեան գրամասեղաններուն, բայց աւելի մեծ կակններուն մէջ, ամէն մէկ մասնակցին բերած ստակը, իրեն համար պահելը գրեթէ անկարելի բան է, ու թէ որ պահել ալ ու-

զուի, անհնարին մեծամեծ շփոթութիւններ կը ծագին: Ան ատեն դրամասեղանին մասնակից ըլլողը միայն որոշեալ տեսակ ստակի մը վրայ կրնայ տրամադրութիւն ընել, ու ան տեսակ ստակին ընթացիկ գնոյն փոփոխութեանը նայելով՝ իր դրամասեղանին վրայ քաշած նշանակագրերն ալ երբեմն դրամաշահով (agioով) երբեմն ալ շահաթողով (scontoով, rabatով) կ'երթային: Անոր համար ամէն դրամասեղաններուն մէջ, որոշեալ ստակի տեսակներ, որոնք դրամասեղանին դրած հաստատուն արժէքէն կը հեռանան, դրամասեղանին հաշուին մէջ անցընելու թոյլտուութիւն չկայ: Արամասեղանին մասնակից ըլլողներուն՝ որոշեալ տեսակ դրամը անփոփոխ մնալու համար, ուրիշ հնարք մը մտածուած է: Որոշեալ տեսակ դրամներ իբրեւ շարժական գրաւ կ'առնուի, ու քիչ տոկոսիքով անոնց տեղ փոխ ստակ կը տրուի: Ասանկ փոխ տրուած ստակները ատեն ատեն նորոգելու եւ կամ գրաւները ետ առնելու ու առած փոխը ետ դարձընելու է. անոնց տեղը ընկալագիր կը տրուի, ու ան ընկալագիրներով առուտուր ալ կրնայ ըլլալ, ինչպէս Ամստերտամ ու Համպուրկ ընկալագիրներով գրաւ դրուած Ամերիկայի դահեկանին (piastreին) վրայ առուտուր կ'ընեն:

211. Սովորական բան մ'ալ ան եղած է, որ շատ տեսակ դրամներ դրամասեղանին որոշեալ արժէքովը կ'ընդունուին: Անոնց դրամասեղանը Անգղիայի ամէն դրամները իրենց անուանական արժէքին նայելով կ'ընդունի. Ամստերտամի դրամասեղանն ալ ամէն ընթացիկ ստակի տեսակները հարիւրին 5 պակասով կ'առնու, եւ ասանկ ուրիշ դրամասեղաններու մէջ ալ կը տեսնուի:

212. Արամասեղանի մը մինակ մէկ տեսակ որոշեալ ստակ ընդունիլը Աւստրիայի ազգային դրամասեղանին վրայ կը տեսնուի: Աս դրամասեղանը դաշնագրութեան դրամական օրէնքին նայելով կոխուած

արծաթի ստակներէն զատ ուրիշ տեսակ ստակ չըն-
գունիր: Աս դրամներէն քսան ֆիորինին մէջ զուտ
մէկ կողոնիական մարկ արծաթ կայ, ու աս կերպով
դրամասեղանը անփոփոխ արժէք մը դրած կ'ըլլայ.
ինչպէս որ Համպուրկի դրամասեղանն ալ, որն որ
15 լիթ 12 գարեհատի ազնուութեամբ արծաթի
գաւազաններ կ'առնու, ու ասանկ արծաթին ա-
մէն մէկ մարկին տեղ բերողին 27 դրամասեղանի
մարկ 10 շիլլինկ կը գրէ: Արամներու փոփոխու-
թիւնը, ոսկիի դրամաշահը, քանի մը տեսակ դրամ-
ներուն գնոյն երբեմն պատահմամբ բարձրանալը կամ
իյնալը աս երկու դրամասեղաններուն դրամներու
արժէքին վրայ ամենեւին ազդեցութիւն մը չեն կրնար
ընել:

213. Թէպէտեւ փոխանցութեան դրամասեղանի
մը մասնակից ըլլողներուն գլխաւոր վախճանը ուրիշ
բան չէ, բայց եթէ առձեռնպատրաստ դրամով
վճարմունք ընելու դժուարութիւններէն ազատիլ,
բայց փոխանցութեան դրամասեղանը երկրորդական
գործքեր ալ կրնայ գործել, ինչպէս դրամասեղանը
գրուած ստակներուն մէկ մասը փոխ տալ անանկ դա-
շինքներով, որ կամաց կամաց նորէն ետ դարձուելով
դրամասեղանին արկը մտնէ: Արամասեղանին դրած
արժէքով վճարուելու փոխանակազրեքը կուտրելն ու
շարժական գրաւներու վրայ փոխ տալը՝ ստակը աղէկ
ու շահով գործածելու միջոցներ են. ինչու որ ասով
իրբեւ աւելորդ սեպուած գումարը կրկին շրջանի մէջ
կը մտնէ, այս ինքն մէյ մը դրամասեղանին մասնակից
ըլլողներէն դրամասեղանին տետրակը անցնելով, մէյ
մ'ալ իրբեւ փոխ դրամասեղանէն գուրս տրուելով:

214. Մինչեւ հիմա փոխանցութեան դրամասե-
ղանին վրայ ըսածներնէս ետեւէն եկած սկզբունքները
յառաջ կու գան:

Ա. Փոխանցութեան դրամասեղանին վախճանը
վճարմունքները դիւրինցընել է:

Բ. Փոխանցութեան գրամասեղանը մասնաւոր մարդիկներու ընկերութեամբ մը հաստատելը աւելի աղէկ է, որուն կառավարութիւնը հոգ տանի ու պաշտպանէ:

Գ. Այլ որ գրամասեղանին մէջ ստակ կը դնէ նէ, կ'ուզէ միանգամայն որ ուղած ատենը տրամադրելու իշխանութիւն ունենայ: — Արչափ որ գրամասեղանը իր մասնակիցներուն ըրած խոստմունքները կը կատարէ, ու որչափ որ գրամասեղանը գրուած գոյքը ապահով կը համարուի, այնչափ ալ գրամասեղանին համարումը հաստատուն կը մնայ:

Դ. Գրամասեղանին գոյքին մէկ մասը՝ ապահով կերպով մը օգտակար ու շահաբեր գործքերու կրնայ գործածուիլ: Արովհետեւ ատեն ատեն կը պատահի, որ գրամասեղանը ստակ դնողները մեծ գումար մը ետ կ'առնուն, անոր համար մեծապէս զգուշանալու բան է, որ չըլլայ թէ գրամասեղանը վաստակի բաղձանքով մէկուն մէկալին անանկ շատ փոխ տայ, որ ետքէն գրամասեղանին ստակ պակսի. ինչու որ գրամասեղանը նեղութեան մէջ մտնելու ըլլայ նէ, կրնայ ալ կործանիլ:

Ե. Գրամասեղանին ստակը, ընթացիկ ստակէն աւելի արժէք կրնայ ունենալ: Արբ որ շրջանի մէջ շատ տեսակ ստակ գտնուելու ըլլայ, ան ատեն հարկ է որ առուտուրի մէջ աս ամէն այլեւայլ տեսակ գրամաները, որոնցմով մեծամեծ գումարներ վճարելը շատ դժուարին կ'ըլլայ, առնուին. անոր համար գրամասեղանին վճարմունքը որ մէկ տեսակ գրամով գործ կը տեսնէ, շատ կը փնտռուի:

Զ. Գրամասեղանին մասնակից ըլլողները իրենց տրամադրութիւնները միայն գրով կրնան ընել: Արպէս զի որչափ որ կարելի է ստորագրութեանց ճշմարիտ ըլլալն իմացուի, աղէկ է որ միայն անանկ մարդիկներ գրամասեղանին մասնակից ընդունուին, որոնց որ ստորագրութիւնը ծանօթ է:

մաճայն՝ իրեն մասնակիցներուն որչափ շահ պիտի վճարէ նէ, ուրիշներուն անկից քիչ տոկոսիքով չկրնար փոխ տալ, հապա պէտք է որ աս տոկոսիքը ուրիշներուն քիչ մը բարձր բռնէ, որպէս զի գրամասեղանին ծախքերը կարող ըլլայ հոգալ, եւ թէ որ գրամասեղանին տէրերը առանձնական մարդիկ են, անոնց համար ալ քիչ մը վաստակ ձեռք ձգէ: Ասոյց թէ որ ասոր հակառակ գրամասեղանը՝ դուրսը փոխ տալու շափ բաւական գոյք չունի, ան ատեն պէտք է որ ուրիշ տեղէն փոխ առնու, ու աւելի բարձր տոկոսիքով ուրիշներուն փոխ տայ:

Թէ որ փոխատուութեան գրամասեղանը փոխանցութեան կամ լոմայագրի գրամասեղանի մը հետ միացած է, ան ատեն շուտով բաւական գոյք կրնայ գտնել ու իր գործքը յառաջ տանիլ. ինչու որ լոմայագրի գրամասեղանը աղէկ կառավարուելու ըլլայ նէ, գրեթէ միշտ դուրս տուած լոմայագիրներուն արժէքին շափ պատրաստ գրամի մթերք կրնայ ունենալ, եւ որովհետեւ բոլոր լոմայագիրները մի եւ նոյն ատենի մէջ աւրելու համար չեն կրնար բերուիլ, անոր համար պատրաստ ունեցած ստակին մէկ մասը կրնայ փոխատուութեան գործածել: Աս կրնանք ըսել նաեւ փոխանցութեան գրամասեղանին համար ալ: Ասկից զատ աղէկ կարգաւորեալ փոխատուութեան գրամասեղանին շատ մասնաւոր մարդիկ շափաւոր տոկոսիքով ու կարճ ատեն յառաջ ծանուցանելով ստակը ետ դարձրնելու գաշնադրութեամբ փոխ ստակ կու տան, որն որ իր գործքին կրնայ գործածել: Անձ քաղաքներ, ուր որ միայն ասանկ գրամասեղաններ կը գտնուին, շատ մասնաւոր մարդիկն են կան, որոնք շատ կամ քիչ ստակի գումար մը տեղ մը գնել կ'ուզեն, առանց կարող ըլլալու ժամանակը որոշել, թէ երբ աս ստակին կարօտութիւն ունին, ուստի երբ պիտ'որ ետ առնուն: Ասոյանի բան է որ ասանկ գրամագլուխները մասնաւոր

մարդիկներու քով շեն կրնար դրուիլ, ինչու որ մասնաւորները կ'ուզեն որ խել մը ատեն յառաջ ստակին ետ ուզուիլը իմաց տրուի, անոր համար ասանկ մարդիկ իրենց գրամագլուխը սիրով քիչ ու չափաւոր տոկոսիքով փոխատուութեան գրամասեղանին կուտան, որպէս զի նոյն ատենը իրենց հարկաւոր չեղած ստակէն քիչ մը օգուտ ալ ունենան: Աս կերպով գրամասեղանին կը յանձնուին հասարակօրէն մէկուն մահուանէ ետքը թող տրուած եւ կամ որ ինչ եւ իցէ ստակները, երբ որ երկու կողմանց մէջ վէճ կայ, ու իրաւունքը դատաստանով պիտ'որ որոշուի:

217. Արովհետեւ փոխատուութեան գրամասեղանին վախճանն ան է, որ վաճառականներն ու արուեստաւոր մարդիկ իրենց գործքը յառաջ տանելու համար ամէն ատեն չափաւոր տոկոսիքով ստակ կարող ըլլան գտնել, ասկից խնդիր մը յառաջ կու գայ, թէ գրամասեղանը որոնց, ինչ տոկոսիքով, ինչ ապահովութեան դիմացը, որչափ ատենի համար փոխ (կամ համարում) կրնայ տալ, որոնք քննելու ու մտադիր ըլլալու պարագաներ են:

Թէ որ փոխատուութեան գրամասեղանին գոյքը չափաւոր է, ան ատեն գլխաւորաբար վաճառականներու ու արուեստաւորներու փոխ տալու է, ու մինչեւ որ վաճառականներուն կարօտութիւնը չանցնի՞նէ, ուրիշներուն տալու չէ: Ասոց երբ որ վաճառականներուն ու արուեստաւորներուն կարօտութիւնը լեցուելէն ետքը՝ գրամասեղանը դեռ ստրկի շատ առատութիւն ունի, ան ատենը ուրիշ մասնաւոր անձինքները դուրս ձգելու պատճառ մը չկայ:

Տոկոսիքը, որով որ գրամասեղանը փոխ պիտ'որ տայ, չափաւոր ըլլալու է, ինչու որ ինչպէս վերը ըսինք, փոխատուութեան գրամասեղանին վախճանը բարիք ընել, եւ ոչ թէ վաշխով հարստանալ է: Աս բանիս համար հարկ է, որ կառավարութիւնը փոխատուութեան գրամասեղաններուն վրայ հսկէ,

Թէպէտեւ առանձնական մարդիկներու ստացուածք ըլլան: Թէ որ դրամասեղանին ձեռքը անանկ դրամագլուխներ կան, որոնց համար տոկոսիք չվճարեր, ինչպէս կը պատահի երբ որ լումայագրի կամ փոխանցութեան դրամասեղանի մը հետ միացած ըլլայ, ան ատեն ասոնցմով՝ երկրին սովորութենէն վար տոկոսիքով, եւ կամ առանց տոկոսիքի ալ փոխ տալով կրնայ շատ օգտակար գործքեր գործել, ու արուեստներուն յառաջացմանը օգնել:

Փոխատուութեան դրամասեղան մը, ըստ կանոնի միշտ ապահով ճամբով գործելու է: Շատ քիչ կը պատահի որ փոխատուութեան դրամասեղան մը այնչափ շատ գոյք ունենայ, որ առանց վտանգի մը անշարժ գրաւներու դիմացը երկայն ատենուան պայմանաժամով կարող ըլլայ փոխ տալ. բայց թէ որ իր գոյքը անանկ մեծ ըլլայ, որ մեծամեծ գումարներ երկայն ատենուան համար դուրս կարող ըլլայ հանել, ան ատեն աս կերպով փոխ չտալէն ետ կենալու պատճառ մը չկայ: Ամենէն հանգիստ, դրամասեղանին շահուն ալ ամենէն աւելի համաձայն, ու արուեստները յառաջացընելու ջանքին քիչ արգելք դնող փոխատուութեան կերպ մը կայ նէ, շարժական գրաւներու վրայ փոխ տալն է, միայն թէ դրամասեղանը գրաւները արժեցընելու շատ խիստ պիտի չըլլայ: Անոր աղէկ նայելու է որ գրաւները տեւական արժէք ունեցող ու դիմացկուն բաներ ըլլան, ու ան դնով արժեցընելու է, որով որ ապահով է մարդ որ ամէն ատեն կրնան ծախուիլ:

Տրուած փոխին ժամանակին երկայնութիւնը դրամասեղանին հարկաւորութենէն կախում ունի, ու ան փոփոխութիւններէն, որոնք դրուած գրաւներուն արժէքին ժամանակաւ կրնան պատահիլ: Շատ քիչ գրաւներ կան, որոնց արժէքը՝ վրան ժամանակ անցնելով փոփոխութիւն չկրէ: Անոր համար ամէն փոխատուութեան դրամասեղանները մէկ քանի ամ-

սուան, հասարակօրէն երեք ամսուան համար փոխ
կու տան, որն որ անցնելէն ետքը՝ գրան ու փոխը ետ
կը դարձուին, եւ կամ փոխատուութեան դաշինքը
նորոգելու է:

218. Մինչեւ հիմա ըսածներնէս փոխատու-
թեան գրամասեղաններուն վրայ ետեւի սկզբունք-
ները յառաջ կու գան:

Ա. Փոխատուութեան գրամասեղանին գոյքը
քիչ տոկոսիքով առնուած ըլլալու է, որպէս զի գրա-
մասեղանին վճարածէն աւելի տոկոսիք ալ պահան-
ջուելու ըլլայ նէ, աս պահանջուածն ալ նուազ ըլլայ:

Բ. Գրամասեղանին փոխատուութեամբ հասնե-
լու վախճանը՝ առուտուրն ու արուեստները յառաջա-
ցրնել է: Արդաւորեալ փոխատուութեան գրամա-
սեղան մը աժան տոկոսիքով փոխ տուողներուն ու
փոխ առնողներուն կամ ստակի կարօտութիւն ունե-
ցողներուն մէջ աղէկ միջնորդ մըն է: Վայց առանկ
միջնորդ մը տէրութենէն անոր համար պաշտպանու-
թիւն կը գտնէ որ չէ թէ շուայութեան առիթ ըլլայ,
իր ստացուածքը քիչ տոկոսիքով վատնէ, հապա՝
որպէս զի առուտուրն ու արուեստները ծաղկեցրնէ
ու կենդանի պահէ. անոր համար գրամասեղանն ալ
ասոր աղէկ մտադիր ըլլալու է:

Գ. Գրամասեղանը փոխ տալու համար ապահո-
վութիւն փնտռելու է: Աս ապահովութիւնը կ'ըլլայ
երաշխաւորութեամբ, անշարժ ու շարժական գրաւ-
ներով: Փոխատուութեան գրամասեղաններուն մէջ
երաշխաւորութիւնը միայն փոխանակագիրները կո-
տրելու ատեն կ'ըլլայ, որուն մէջ փոխանակագրե-
րուն մասնակից ըլլողներուն անձնական համարմանը
միտ կը դրուի: Իսկ անշարժ ու շարժական գրաւ-
ներու դիմացը ինչպէս ու երբ փոխ տալու է, քիչ
մը յառաջ ըսուած է:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴՐՍԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԿԱՄ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ ԵՂԱԾ ԱՌՈՒՏՈՒՐԸ ՅԱՌԱՋԱՑԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆԵՑԸՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

219. ՄԷԿ երկրի կամ տէրութեան ներքին վաճառականութիւնը որոշեալ սահման ու եզր մը ունի, որն որ ան ազգին ճշմարիտ կամ երեւակայական կարօտութենէն սահմանուած է. բայց դրսի տէրութեանց հետ եղած առուտուրը ասոր հակառակ ամենեւին սահման կամ եզր չձանչնար, ու խոհեմ եւ իմաստուն կառավարութեան մը տակ, մշակուած ու ծաղկած ազգի մը ձեռքով, թէ տէրութեան եւ թէ ազգին մեծամեծ բարիքներ կրնայ բերել. ինչպէս որ ամէն օր աչքերնուս տակը կը տեսնենք:

Արբ որ տէրութիւնները իրարու հետ առուտուր ընել կ'ուզեն, պէտք է որ ամէն բանէն յառաջ փոփոխակի իրարու հրաման տան: Թէ որ երկու տէրութեան մէջ առուտուր ընելու արդէն ազատութիւն կայ, կամ թէ լռելեայն երկու կողման հպատակները իրարու հետ առուտուր կ'ընեն, ան ատեն առանձին մասնաւոր դրով հրամաններ կամ վճիռներ հարկաւոր չէ. բայց թէ որ ասանկ բան չկայ ու նորէն պիտ'որ հաստատուի, ան ատեն երկու տէրութեանց մէջ առուտուրի դաշինք դրուելու է, որ Առեւտրական դաշնագրութիւն կ'ըսուի:

220. Տէրութեան գլխաւոր պարտքն է, որ իր հպատակներուն, քաղաքացիներուն օգուան հոգայ ու անոնց հանգստութիւնն ու երջանկութիւնը բարձրագոյն աստիճանի մը հասցընելու աշխատի: Աս ըսած հանգստութիւննիս ու երջանկութիւննիս անոր վրայ կայացեալ է, որ ամէն քաղաքացի՝ չափաւոր աշխատութեամբ, ամէն վիճակի մէջ իրեն վայել ապրուստը ըստ բաւականին հոգալու ու ձարելու գիւրութիւն ու ապահովութիւն ունենայ:

Պրսի երկիրներու հետ առուտուրի սկսելէն յառաջ, տէրութեան ներքին հանգստութիւնն ու երջանկութիւնը հաստատելու նայելու է: Տէրութեան կարօտութեանը համար պահանջուած ճարտարութեան (industrie) ամէն մէկ մասունքը պիտ'որ յառաջ գացած ըլլան. ինչու որ երջանկութեան ու հանգստութեան միայն ներքին աղբիւրները տեւական, ճշմարիտ ու մշտաբուխ են: Արբ որ կառավարութեան հաստատած տեղերովը, տէրութեան ծաղկելովը, հպատակներուն արուեստներու ունեցած ջանքովը ներքին հանգստութիւնն ու երջանկութիւնը մէյ մը հաստատուի նէ, անկէ ետքը կրնայ կառավարութիւնը արտաքիններուն հետ առուտուր բանալու մտադիր ըլլալ, որն որ այլեւայլ կերպերով կրնայ ըլլալ:

Ա. Օտար ապրանք ներս բերելով կամ վաճառաբերութեամբ (importation):

Բ. Ներսի ապրանքը օտար երկիր տանելով կամ վաճառահանութեամբ (exportation):

Գ. Պրսի երկիրներու ապրանքներու հետ փոխանակութիւն (շրմա) ընելով:

Դ. Իր կամ ուրիշին հաշուին օտար բերք մը մէկ գրսի տէրութենէ ուրիշ տէրութիւն տանելով:

221. Թէ որ կառավարութիւնը գրսի տէրութեանց հետ եղած առուտուրը յառաջ տանիլ ու յաջողցնել կ'ուզէ, ան ատեն պէտք է աս սկիզբը հաստատուն բռնել, թէ աս առուտուրը ան ժամանակը ու այնչափ միայն յառաջացնելու օգնական ըլլալու է, որ ատենը ու որչափ որ անով իր հպատակներուն բարեացն ու երջանկութեանը պատճառ կ'ըլլայ:

Շատերը կան որ կը կարծեն՝ թէ ինչ եւ իցէ օտար ապրանք ներս խօթելը մնասական, ու անոր հակառակ ամէն իրեն տէրութեան բերքը գուրս հանելը տէրութեան օգտակար է: Բայց վաճառաբե-

րութիւնը կամ օտար ապրանք ներս խոթելը շատ անգամ խիստ օգտակար կ'ըլլայ: Թէ որ տէրութեան հպատակները՝ զրսէն ներս խոթուելու ապրանքին ստուգիւ կարօտութիւն ունին, ու ներսը ելած ապրանքը ամենեւին անոր տեղը չկրնար բռնել. դարձեալ թէ որ ներս մտնելու ապրանքը արուեստով բանուելու նիւթեր են, որոնք դարձեալ բանուելէն ետքը զրսի երկիրներ կրնան տարուիլ ու շահով ծախուիլ. եւ կամ ան ապրանքին գնուիլն ու ներս բերուիլը՝ զրսի երկրին հետ ուրիշ օգտակար առուտուրներու պատճառ պիտ'որ ըլլայ, ան ատենը օտար ապրանք ներս խոթելը անտարակոյս օգտակար է: Ասոր նման երբեմն տէրութեան ներքին բերքերը դուրս հանելը կամ վաճառահանութիւնն ալ կրնայ շատ փնասակար ըլլալ: Թէ որ զրսեցին անգործ նիւթ մը մեզմէ առնու, ու անիկա գործէ, եւ գործուածը դարձեալ մեզի եւ կամ ուրիշ օտար երկիրներու ծախէ, ուր որ թէ որ ան նիւթը մենք գործէինք, զրսեցիները ան նիւթին գործուածը մեզմէ գնելու պարտաւորեալ կ'ըլլային, յայտնի բան է որ ասանկ նիւթի մը վաճառահանութիւնը կամ դուրս հանուիլը փնասակար է: Վարձեալ երբ որ մեր բերքերը դուրս հանելով, անոնք մեր երկրին մէջ կը սուղնան ու պակասութիւն կը պատճառեն. երբ որ մեր երկրին մէջ զրսեցիներուն անանկ ապրանքներ կը ծախենք, որոնք ճամբուն ծախքը վաստրկելով անոր կրնայինք տանիլ. երբ որ մէկ տէրութիւն կամ երկիր մը անանկ ապրանքներ կը տանինք, որոնք մեզի գէժ պիտ'որ գործածէ (ինչպէս պատերազմի ատեն զէնք եւ այլն), աս զէպքերուն մէջ վաճառահանութիւնը շատ փնասակար կ'ըլլայ:

Ասոր համար զրսի տէրութեանց հետ եղած առուտուրը ազգի մը այնչափ օգտակար է, որչափ աւելի որ անով առիթ կը գտնէ օտար երկրին ծախքովը իր ճարտարութիւնն ու արուեստները ծաղկեցընելու,

որով իր ապրուստը կրնայ ձարել : Արսի երկիրներուն հետ եղած առուտուրին օգուտը ազգի մը նկատմամբ ան ատեն շատ մեծ կ'ըլլայ, երբ որ իր երկրին մէջ ելած թէ բնական եւ թէ արուեստական բերքերը ան տէրութեանց երկիրները կը տանի, որոնք ամենէն աւելի ու անհրաժեշտ անոնց հարկաւորութիւն ունին : Ա՞ս մեծ օգուտն ու շահը ան ատենը կրնայ ձեռք բերուիլ, երբ որ տէրութիւնը ան բերքէն այնչափ առատ ու շատ ունի, որ իր կարօտութիւնը լեցընելէն ետքը, կրնայ ուրիշ տէրութեանց ալ խաւրել . երբ որ դրսի տէրութիւնը շատ կարօտութիւն ունենալով, ան ապրանքը պէտք է որ գնէ, եւ կամ ան ատենը երբ որ տանողէքը կրնայ վաստակուիլ : Ա՞ս օգուտները կրնան ձեռք բերուիլ, ինչպէս որ ըսինք, բայց շէն կրնար բռնի առնուիլ, անոր համար անխոհեմ պահանջմունքներով ու շահասիրութեամբ կրնան ձեռքէ ելլել : Թէ որ բռնութեամբ գները բարձրացընելու յուսով՝ կարօտեալներուն վաճառք ներս խոթելը կ'արդելուի կամ կը դժուարցուի, ան ատեն ան կարօտութիւն ունեցողները իրենց կարօտութիւնը լեցընելու ուրիշ ձամբայ մը դտնելու կը նային, հարկաւոր բայց սուղ ապրանքներուն տեղ՝ կը սկսին աժան ապրանք մը փոխանակել, ու նաեւ ան չգըտնուած ապրանքն ալ շինելու կ'աշխատին :

222. Թէ որ դրսի երկիրներուն հետ ամենէն աւելի շահաւոր կերպով առուտուր ընելը անկարելի է, ան ատենը պէտք է պարագաներուն համաձայն որչափ կարելի է շատ վաստակ բերող առուտուրի ձեռք զարնելու նայիլ : Ա՞ս շահերն ու օգուտները աստիճան աստիճան են, ու ձեռք կը բերուին :

Ա. Արբ որ ուրիշ տէրութիւնները մեր երկրին արուեստական բերքերը մեզմէ դալու առնելու ըլլան :

Բ. Արբ որ մենք մեր անգործ բերքերը դրսի երկիրներ տանելու ըլլանք :

Գ. Թէ որ գրսեցիները մեր անգործ բերքերը առնելու ու իրենք դուրս տանելու ըլլան :

Գ. Թէ որ մենք մեր արուեստական բերքերը օտար երկիր տանելու ու անոր անանկ անգործ բերքերը առնելու ըլլանք, որոնք մենք կը գործենք ու ետքը նորէն օտար երկիրներ կը խաւրենք :

Ե. Արբ որ մենք օտար երկիրներուն անանկ գործուած ապրանքներ տանինք, որոնց հարկաւորութիւն ունին, ու անոնցմէ մեր գործածութեանը եւ կամ ուրիշ երկիրներ տանելու համար գործուած ապրանքներ առնելու ըլլանք :

223. Աս ըսածներնէս կրնանք հետեւցընել, թէ օտար երկիրներու հետ՝ աւելի որ ապրանքներով առուտուր ընելու ենք : Առուտուրի նիւթերը թէ անգործ եւ թէ գործուած ապրանք կրնան ըլլալ : Անգործ ապրանքները, որոնց օտար երկիր մը իրօք կամ երեւակայութեամբ կարօտութիւն ունի, որոնք մեր երկրին մէջ այնչափ առատ կ'ելլեն, որ մեր կարօտութիւնը լեցընելէն ետքը օտար երկրի պիտոյիցն ալ կրնան օգնութեան հասնիլ, ու շինելու համար ալ շատ մարդիկ պէտք է որ զբաղին, ասանկ առուտուրի մէկիկ են : Ասանկ են ցորենեղէնները, բամբակ, բուրդ, մետաքս, մոմ, մեղր, երկրէն ելած հանքեր եւ այլն : Իսկ գործուած ապրանքները, որոնց գրսի հետ առուտուրը յառաջացընելու նայելու է, գլխաւորաբար անոնք են, որոնց որ անգործ նիւթը շատ քիչ արժէք ունի, ու բանուորի վարձքն է որ անոնց գնոյն մեծագոյն մասը կը կազմէ, ինչպէս են կարելու, բանելու, ներկելու ապրանքներ, արուեստական գործուածներ եւ այլն :

224. Արբ որ գրսի հետ ըլլալու առուտուրը առանձին մէկ մասնաւոր մարդու մը կարողութենէն վեր ըլլալով՝ ընկերութիւններ կը կազմուին, որ ան առուտուրը տէրութեան օգտակար ու պատշաճ կերպով յառաջ տանելու կը բաղձան, ան ատեն կառավարու-

Թիւնն ալ արտօնութիւններ, շնորհքներ ու աղա-
տութիւններ տալով՝ անոնց օգնելու ու զանոնք
պաշտպանելու է: Ասանկ արտօնութիւններով չէ
թէ միայն առանձնական մարդիկներու ան ընկերու-
թեան մէջ մտնելու քաջալերութիւն կը տրուի, հապա
նաեւ ասանկ երեւելի գործքի մը սկիզբը՝ ընկերու-
թիւնը ոյժ կը ստանայ ան ամէն արգելքներուն յաղ-
թելու, որոնք իսկզբան գործքի մը սկսողներուն դի-
մացը կ'ելլեն, որոնց յաղթելու համար զօրութիւն
հարկաւոր է: Ասանկ արտօնութիւններ կը արուին
հասարակօրէն մեծամեծ ընկերութեանց որոշեալ շատ
տարիներու համար, ու երբ որ ատենը լմընայ՝ կը
նայուի որ ան օգնութեան ու պաշտպանութեան դեռ
կարօտութիւն ունին թէ չէ, մանաւանդ թէ որ անոնց
արտաքոյ կարգի առուտուրի իրաւունքներ տրուած
ըլլան:

225. Առուտուր ըրած երկիրներնուս մարդիկը կամ
ան աստիճանի աղէկ կրթուած ու քաղաքականա-
ցեալ են, որ իրենց հետ անարգել առուտուր կրնայ
ըլլալ, եւ կամ կրթուած չեն: Թէ որ ստուգիւ
պէտք եղածին շափ կրթեալ ու քաղաքականացեալ
են, ան ատեն շատ աղէկ է, որ ընկերութիւնը հոն
իր առանձին դիւանն ունենայ, որն որ ընկերութեան
ապրանքները ընդունի, շրջանի մէջ խօթէ, ու նաեւ
խրկուելու հարկաւոր ապրանքներն ալ գտնէ ու խրկէ:
Ասանկ դիւաններ մեծ առուտուրի գործքերուն համար
խիստ հարկաւոր են, ինչու որ ապրանքներ գնելու ու
ծախելու համար յարմար ատենին սպասելու է, որն
որ ան ատեն կրնայ գտնուիլ, երբ որ ընկերութեանէն
որոշուած մարդիկ օտար վաճառատեղւոյն մէջ ներկայ
կ'ըլլան: Արբ որ տէրութիւն մը ուրիշ տէրութեան
հետ մեծ առուտուր ունի, հասարակօրէն քաղաքնե-
րու մէջ հիւպատոսներ (consuls) կը դնէ, որոնք
իրենց թագաւորէն կամ իշխանէն իշխանութիւն ու-
նին, ու դեսպանի տեղ կը բռնեն, ան տեղը իրենց

տէրութեանց առուտուրին շահուն վրայ կը հսկեն, եղած վէճերը կ'որոշեն, տեղացւոց ու իրենց հպատակացը մէջ կռիւ բացուած ատեն՝ իրենց հպատակներուն կ'օգնեն, զանոնք անիրաւութեանց դէմ կը պաշտպանեն, ու երկու տէրութեանց մէջ եղած առեւտրական դաշնագրութիւնները հաստատուն պահելու հոգ կը տանին:

Ան երկիրները, որոնց հետ՝ բնակչացը մէջ քաղաքականութիւն ու կրթութիւն չըլլալուն համար, առուտուր ընելը ապահով չէ, կրնայ տէրութիւնը գաղթականութիւններ հաստատել, պարիսպներ շինել, ու զօրութեամբ ու ղէնքով իրեն ապահովութիւն ձարել:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՏՈՒՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵԼՈՒ
ՀԱՄԵՐ ԲԱՆԵԱՑՈՒՑԱԾ ՄԻՉՈՑՆԵՐԸ

226. ԱՐԵՒԱԿԱՅԵԼՈՒ բան չէ, թէ վաճառականներն ու արուեստագէտները առանց կառավարութեան հոգ ու խնամ տանելու որ դործքերը հաւասար բաժնուին, ու ամենուն օգուտ բերեն, եւ ձարտարութեան ամէն մէկ մասն ալ յառաջ երթայ, կարող ըլլան ծաղկելու ու յառաջացման յարմար միջոցներ գտնել: Առուտուր ընող անթիւ անհամար վիճակի մարդիկներ իրարու հետ անանկ դաշինքներ կը դնեն, որուն մէջ միայն իրենց առանձին արուեստին օգտին, եւ ոչ թէ ընդհանուր տէրութեան բարւոյն մտադիր կ'ըլլան: Կառավարութիւնը, որ բարձր աստիճանի մը վրայ կեցած է եւ ամէն աստիճանի ու կարգի այլեւայլ կարօտութիւնները կրնայ տեսնել, կրնայ նաեւ դատում ընել, թէ ազգային ձարտարութեան որ մասը օգնութեան ու պաշտպանութեան կը կարօտի, ու ինքը միայն առուտուրի վերին առաջնորդութիւնը կրնայ ընել: Մասնաւորներէն մէկը անոր բռնած

ճամբուն վրայ քիչ եւ կամ ոչինչ դատաւորան կրնայ կտրել. բայց թէ որ սոսկական մարդ մը եւ կամ գործաւորներու կամ արուեստաւորներու դաս մը կառավարութեան դրած կարգադրութենէն կը նեղուի, ան ատեն կրնայ իր վիճակը օրինաւոր ճամբով մեծերուն առջեւը դնել, որուն կառավարութիւնը՝ թէ որ իմաստուն կառավարութիւն է նէ, շնորհակալ ըլլալու է, որ հպատակներուն կարօտութեանը օգնելու առիթ կ'ըլլայ:

Կառավարութեան՝ առուտուրի ու արուեստների ու գործքերը յառաջացընելու համար ըրած կարգադրութիւնները պարագաներուն նայելով կրնան փոխուիլ: Անոր համար առեւտրական վերին տեսչութիւնը իրեն կարգադրութիւնները ժամանակին պարագաներուն համաձայնցընելու է, ու իր հրամանները պարագաներուն բերմանը նայելով փոխելու է: Առուտուրի կառավարները շատ կը սխալին թէ որ առեւտրական ու արուեստական ճարտարութիւնը օրէնքներով նեղել ու բռնադատել կ'ուզեն: Առուտուրը ու ամէն տեսակ գործքերը ուր որ պիտ'որ յաջողին նէ, ան տեղուանքը առանց բռնի օրէնքներու կը ծաղկին ու կը յաջողին. բայց ուր որ չեն կրնար յառաջանալ նէ՝ ստուգիւ կը կործանին ու ետ կը մնան, թէ որ վերին տեսուչներու հրամաններն ալ մէջը խառնուելու ըլլան: Կառավարութիւնը բաւական գործ տեսած կ'ըլլայ թէ որ օգտակար տեղերը պաշտպանէ ու պահպանէ, եւ անօգուտները կամ թող չտայ որ դրուին, եւ կամ թէ որ դրուած են նէ, ստուգիւ անոնց անօգուտ ըլլալը աղէկ մը քննելէն ետքը, իրենց բախտին թողու:

Աս համարիս մէջ խօսելու նիւթերնիս հետեւեալներն են. կառավարութեան առուտուրը հաստատուն պահելու համար Ա. Առուտուր ընող ու արուեստագէտ մարդիկներու նկատմամբ բանեցուցած միջոցները. Բ. Մաքսի ու տուրքի վրայ ըրած

կարգադրութիւնները . Գ . Առուտուրի հաստատուն օրէնք դնելը . Գ . Գատաստանական կարգաւորութիւնը հաստատուն պահելն ու շարունակելը :

Ա . Առուտուր ընդնելու ու արուեստագիտներու վրայ եղած դժուարութիւնն :

227 . Թե որ կառավարութիւնը կ'ուզէ որ ամէն առուտուրի վերաբերեալ ապրանք պատրաստող անձինքը ու ամէն վաճառականները իր աչքին առջեւը ու իր զգուշութեանը տակ ըլլան , ան ատեն հարկ է որ ամէն առուտուր ընել կամ արուեստանոց մը բանեցընել ուզող մարդ նախ կառավարութեանէն հաւանութիւն ունենայ , ու իրեն հարկաւոր հրամանն ունենալը կարող ըլլայ ցուցընել :

228 . Կառավարութիւնը վաճառականութիւն ընել կամ գործք մը սկսիլ ուզողներուն ինչպէս իշխանութիւն ու հրաման տալիքը՝ մեր դասագրքքին չվերաբերիր ու անոր վախճանէն դուրս է : Այսին հարկ կը համարինք ծանուցանել որ ասոր մէջ այլեւայլ ատեն եղած գործքերուն ու ժամանակին պարագաներուն վրայ դատաստան ընելն ու կառավարելը վաճառականութեան վերին տեսուչներուն թող տալու է : Ան տեղուանքը ուր որ երկիրը այնչափ պտուղ չբերելով գեղացին ինքը զինքն ու իր ընտանիքը հոգալու համար ուրիշ գործքի մ'ալ ձեռք զարնելու , ինչպէս ըսեմ՝ առած կտաւը պատրաստելու ու գործելու կը հարկադրի , ստայնանկութիւնը ազատ կրնայ թող տրուիլ . բայց ասոր հակառակ աղէկ պտղաբեր երկիրներ , ուր որ երկրագործը իր երկրէն իր յաջողութիւնը կը գտնէ , ստայնանկութիւնը ազատ ըլլայ կամ չըլլայ , երկրագործը ստայնանկութիւն չընէր :

229 . Ան գործքեր , ինչպէս մանել , կարել եւ այլն , որոնք ըստ ինքեան արուեստ մը չեն կացուցաներ . բայց ան ձեռագործները , որոնք ժողովրդեան այլեւայլ կարգերու զբաղմունք եղած են , սովորաբար

արուեստաւորներու դասակներու (Էն-Ֆ) կը բաժնուին, որոնց ամէն մէկը իրենց գլխաւորն ունի, որն որ անոր հոգ կը տանի որ ան արուեստաւորաց դասը յառաջանայ, աշկերաները աղէկ կը թուին, սատարները (Է-Է-Ֆ-Ները) կարգի կանոնի տակ մնան, ու թէ աշկերաները եւ թէ սատարները վարպետներէն անիրաւութեամբ չճշուին: Ան արուեստին վրայ եղած հարկաւոր բանի մը համար ժողովք կը ժողովէ, ու ժողովքին կարծիքը կամ հաւանութիւնը կ'առնու, ու որոշուածն ալ կատարելու ետեւէն կ'իյնայ: Աս արուեստաւորներու դասակները միշտ օգտակար են, թէ որ Փակուած չեն, այս ինքն թէ որ առանց պարագաներուն փոփոխութեան ալ միտ դնելու, վարպետներու որոշեալ թուով մը չափաւորած չեն: Ասանկ արուեստաւորներու դասերու բաժանումը աւելի օգտակար է, քան թէ գործքերը բոլորովին ազատ թող տրուելու ըլլային, որ ուզողը կարող ըլլայ ուզած արուեստը բանեցրնել:

230. Անաւաճառութիւնը, այս ինքն առանձին մէկ անձի մը իրաւունք տալ որ ապրանք մը ինքը միայն ծախէ, հասարակօրէն տէրութեան մէկալ հպատակներուն անիրաւութիւն կը համարուի: Աայց աս ըսելով ան չենք իմանար թէ ճարտարութեան գիւտ մը կամ արուեստները յառաջացրնելու ու օգտակար մենքենաներ գտնողներուն ամենեւին արտօնութիւն մը չտրուի: Ասանկ օգտակար գիւտեր գտնողներու արտօնութիւնները գտնողներուն իրաւունքն են, ինչու որ ասոնցմով իրենց տաղանդին ու ջանքին պտուղը կրնան քաղել: Ատ անգամ կը պատահի որ գիւտին գաղտնիքը գիւրաւ կրնայ իմացուիլ ու նմանցուիլ, մանաւանդ երբ որ բանուորներուն յայտնել հարկ ըլլայ, ստուգիւ գիւտ գտնողի մը շատ մեծ տրտմութիւն է տեսնելը որ ինքը իր գիւտին պտուղը չտեսած՝ օտար մը անիկայ յափշտակեր է: Ասանկ դէպքերու մէջ կառավարութիւնը գիւտը գտնողին արտօնութիւն կու տայ,

որ (հասարակօրէն խել մը ատեն) իր դիւարը ինքը միայն կարող ըլլայ գործածել, բայց ան դաշամբ որ որոշուած ատենը լմրննալէն ետքը դիւարը հասարակութեան յայտնէ :

231. Թէ որ երկրի կամ տէրութեան մը մէջ երկրագործութեան զբաղող շատ մարդ կայ, ան ատեն գործատուներն ու արուեստանոցները խիստ օգտակար կ'ըլլան : Թէ որ գործուելու նիւթը երկրին մէջէն կ'ելլէ, ան ատեն շահը աւելի մեծ է, քան թէ երբ որ դրսէն հարկ ըլլայ բերել տալ . մանաւանդ երբ որ գործուած ապրանքներուն մէկ մասը դրսի օտար երկիրներ տարուելու ծախուելու ըլլայ նէ, ան ատենը ներսի բանուորները սնուցանողն ու պահողը դրսի երկիրները կ'ըլլան :

Ասոր մէջն ալ ամէն բան կառավարութեան իմաստութենէն ու խելացիութենէն կախում ունի : Առավարութիւնը պէտք է որ գործատուն ու արուեստանոց դնելու ու բանեցրնելու համար հրաման ուղղներուն աղերսագիրները քննէ, անոնց ընդունակութիւնն ու ընչից եւ ստացուածոց կողմանէ ունեցած կարողութիւննին, սկսելու գործքին կերպը, անոնց օգտակարութիւնը տեսնէ նայի, նաեւ նոյն իսկ արուեստանոցին դրուելու տեղը . ասոնք ընելէն ետքը տէրութեան քիչ կամ շատ ունեցած օգտակարութեան աստիճանին համաձայն անոնց այլեւայլ շնորհքներ ընէ : Այց որովհետեւ անկարելի բան է, որ աղգային ճարտարութեան վերին կառավարները արուեստներու վրայ անանկ ընդարձակ տեղեկութիւն ունենան, որ ամէն մէկ արուեստանոցի մէջ գործուած գործքերուն մանր մանր մասունքներուն կարող ըլլայ հասնիլ, անոր համար բանէ հասկըցող մարդիկ դնելու է, որոնց պարտքն ըլլայ աս քննութիւնը կատարել, ու աղէկ մը քննելէն ետքը իրենց քննութեան արգասիքը դան կառավարութեան առջեւը դնեն կամ ի նպաստ աղերսագիրը տուողին եւ կամ ընդդէմ :

Ասանձինն վաճառականներու դալով, կառավարութիւնը մէկու մը առուտուր սկսելու հրաման տալէն յառաջ անոր գիտութիւնն ու բարուց կողմանէ ինչ տեսակ մարդ ըլլալը աղէկ քննելու է: Մարդ մը, որ հարկաւոր գիտութիւնն ու ծանօթութիւնները չունի, առուտուրի մէջ թէ իրեն թէ ուրիշներուն վնաս կ'ընէ. բայց անպիտան բարք ունեցող մարդը որ իր անձնական շահուն համար ան մեծամեծ նպատակները կը զոհէ, որոնց որ կոչուած է, վաճառականներու մէջ ժանտախտ մըն է: Ասանկ մարդը առանց տէրութեան եւ իր քաղաքակցացը օգուտը մտածելու՝ մաքսանենդութեան (մաքսէն ապրանք փախցընելու, contrebandid) ձեռք կը զարնէ, ան բանուորները, որոնցմէ որ ապրանք կ'առնու, կը նեղէ ու ստակնին կը կտրէ. իրեն յաճախորդները կը խաբէ. թէ որ իր շահին ձեռք կու տայ նէ, իր պարտատէրները կը խաբէ, ապառիկ ապրանքներ կը գնէ, ու աղէկ մը ասդիէն անդիէն ստակ փրցընելէն ետքը՝ սնանկանալ ձեւացընելով՝ վճարմունքը կը դադրեցընէ: Աս բաները գիտնալով կառավարութիւնը հրապարակական առուտուրի ձեռք զարնել ու զողներուն ընչից կողմանէ ունեցած կարողութիւնը քննելու է, որ չըլլայ թէ ստորին աստիճանի մարդիկ առանց ստացուածքի բանուորներուն քով մեծ համարում ստանան, ու անոնց դրամագլուխը՝ որով որ իրենց գործքը կրնային յառաջացընել, ոչընչացընեն:

Բ. Մտնի իւրիւր-իւրիւնց վրայ:

132. Արովհետեւ տէրութեան մը մէջ պէտք է որ կառավարութիւնը առուտուրին վրայ բոլոր ուժով հսկէ, որպէս զի կարող ըլլայ գիտնալ թէ զանիկա սէր եւ ինչ կերպով պիտ'որ պաշտպանէ. դարձեալ որովհետեւ մեծ տէրութիւն մը իրեն հպատակներուն դրօշներուն հետ, ու նաեւ զաւառներուն իրարու հետ ըրած առուտուրին շարունակ տեղեկութիւն պիտ'որ ունենայ, անոր համար հարկ է որ օտար եր-

կիրներէն եկած ապրանքները ներս մանելու ատեն, դարձեալ ներսէն օտար երկիրներ խաւրուելու ապրանքները դուրս հանելու ատեն, նաեւ օտար երկիրներէն եկող անցաւոր ապրանքները տէրութեան կողմանէ դրուած հրապարակական պաշտօնատէրներու ձեռքով դրուի նշանակուի, ու նաեւ գաւառէ գաւառ թղթակցելով իրարու ծանուցուի: Աւել ընդհանրապէս բոլոր ապրանքներու առուտուրին եւ թէ մասնաւոր ապրանքի մը վրայ կարելի եղածին շափ ասանկ ճիշդ տեղեկութիւն ունենալը ամէն տէրութեանց կառավարութիւններու որչափ հարկաւոր ըլլալը՝ ամէն մարդինք իրմէ կրնայ տեսնել, ինչու որ վաճառականութեան վրայ վերին տեսչութիւն ունեցողներուն պարտքն է որ զիտնան թէ ժողովրդեան զորձքերէն որո՞ւն աւելի շատ կամ քիչ օգնելու են, որ նիւթը, որ զործուած ապրանքը ներս խոթելու կամ դուրս հանելու հրաման տալու են: Ասոյց որովհետեւ առուտուրին վրայ ասանկ տեղեկութիւններ ունենալու համար ի հարկէ ծախք կ'ըլլայ, պէտք է որ կառավարութիւնը աս ծախքերը մէկ կողմանէ դոցելու նայի. ասոր համար ամէն մէկ ապրանքին վրայ տուրքեր կը դնէ, որոնք Մաքս կը զըցուին:

233. Հասոնցուրնէ արդէն երեւելի ու խելացի հեղինակներ ցուցուցին, որ ամենեւին մաքսերուն նպատակ ան չդնելու է, որ հրապարակական մուտքի աղբիւր ըլլան. ան ամէն մաքսի կարգադրութիւնները, որոնց գլխաւոր վախճանը տէրութեան մուտքը աւելցընելն է, գէշ ու փնասակար են:

234. Մաքսերը երեք կողմանէ կրնանք նկատել, Ա. Իբրեւ տէրութեան մուտքի աղբիւր, Բ. Իբրեւ առեւտրական հիմնարկութիւն մը ու Պ. Իբրեւ ստիկանութեան նիւթ, որոնց երեքին մէջն ալ բարձր մաքս դնելէն յառաջ եկած փնասները կը գանուին: Իբրեւ մուտքի աղբիւր մտածելով՝ բարձր մաքսերը օգուտ մը չունին, ինչու որ անստոյգ մուտքեր են,

որուն հակառակը (հաստատուն) ըլլալու է տէրութեան մուտքը. դարձեալ անոր համար ալ որ քաղաքացիներուն տէրութեան նպաստամատոյց ըլլալու կարողութիւնը տէրութեան մուտքին գլխաւոր ու ամենէն մեծ հաստատութիւնն է, ու ամէն բան որ քաղաքացիներուն սա կարողութիւնը կը նուազեցընէ տէրութեան մուտքն ալ կը քիչցընէ: Այլ որովհետեւ բարձր մաքս դնելով ապրանքները կը սուղնան, ու ապրանքները շինողներն ու պատրաստողները աժնութեան կողմանէ դրսեցիներուն դիմացը չեն կրնար ելլել, եւ կամ անոնց հաւասարիլը շատ դժուար կ'ըլլայ, ասկից յառաջ կու գայ որ բարձր մաքս դնելը քաղաքացիներուն կարողութիւնը կը նուազեցընէ, ու մաքսատուններուն արկիներուն մէջ մտած ստակին շատութիւնը երեւակայական եւ ոչ թէ իրական վաստակ է, որով կառավարութիւնը ժողովրդեան գործքերուն շատ մասերը դադրեցընելու պատճառ կ'ըլլայ:

235. Իբրեւ առեւտրական հիմնարկութիւն ալ մտածելով բարձր մաքսերը օգուտ չունին: Ապրանքները՝ մաքսի նկատմամբ մտածելով՝ կամ ներս խոթուելու կամ դուրս հանուելու եւ կամ անցողական ապրանքներ են: Աերս խոթուելու ապրանքները կամ անհրաժեշտ հարկաւոր են եւ կամ այնչափ հարկաւոր չեն:

Անհրաժեշտ հարկաւոր կ'ըսուին ան ապրանքները, զորոնք մարդ իրեն կարօտութեանը պիտ'որ գործածէ, եւ կամ անոնցմէ ուրիշ ապրանքներ պիտի պատրաստէ, եւ կամ դարձեալ որոնք նորէն դուրս պիտ'որ խրկէ, որ օտար երկիրներու հետ եղած առուտուրը ընդարձակէ: Թէ որ ապրանքները իրեն կարօտութեանը գործածելու համար հարկաւոր են, յայտնի բան է որ անոնց վրայ դրուած խիստ շատ մաքսը տէրութեան հպատակներուն, ուստի եւ աշխատաւոր կարգի մարդիկներուն իրենք զիրենք հոգալը շատ կը դժուարցընէ, ինչու որ արդէն ազգի մը

Համար շատ աղէտալի բան է իրեն իրական կարօտութեանը հարկաւոր եղած ապրանքները դրսէն բերել տալը. թէ որ ասոր վրայ բարձր մաքսն ալ աւելնալու ըլլայ, հպատակները ինչ նեղութեան տակ կ'իյնան: — Ան նիւթերուն վրայ, որոնք ազգային բերքեր յառաջ բերելու հարկաւոր են, տէրութիւնը բարձր մաքս դնելու ըլլայ, ներքին գործուածներու յառաջադիմութեան ու դրօշ հետ եղած առուտուրին օգնական ըլլալու տեղ՝ աւելի արգելք դրած կ'ըլլայ: Բայց աս ըսածներնէս դուրս հանելու է ան դէպքը, երբ որ կառավարութիւնը բարձր մաքս կը դնէ, որ ան նիւթը տէրութեան մէջն ալ յառաջ բերելու համար ետեւէն ինկողներ ըլլան: — Ա վախճանի թէ որ ներս բերուելու ապրանքները դարձեալ օտար երկիրներ տանելու համար է, ան ատեն վրան դրուած բարձր մաքսով ապրանքը խիստ սուղնալով՝ աս նպատակին հասնիլը անկարելի կ'ըլլայ, ու վաճառականը շկրնար օտար վաճառատեղեաց հետ դիմացէ դիմաց ելլել:

Այնչափ հարկաւոր չըլլող ապրանքները իրենց քիչ կամ շատ հարկաւորութեան աստիճանին նայելով քիչ կամ շատ մաքսի տակ ինկած են. բայց աս բանիս մէջ կառավարութեան միտքը՝ իրեն մուտքը շատցընել պիտ'որ չըլլայ: Ասոնց վրայ դրուած ծանր մաքսին վախճանը ասանկ ապրանքներուն ներս խութուիլը գծուարցընել, քիչցընել եւ կամ բոլորովին վերցընել է, որպէս զի չըլլայ թէ ասոնցմով ազգային արուեստանոցները դրսիններուն համեմատութեամբ խափանուին կամ իյնան, ճարտարութիւնը նուազի, եւ կամ անոնց պատճառաւ ներսի ստակը սկսի դուրս ելլել: Աուրս հանուելու ապրանքները կամ անգործ բերքեր են, եւ կամ ազգային արուեստանոցներու գործուածներ են: Անգործ բերքերը թէ որ ապրանքներ պատրաստելու համար տեղացւոց հարկաւոր է, ան ատեն դուրս հանելու արգելքը բաւական է, ուս-

տի եւ մուտքի աղբիւր մը պէտք չէ որ ըլլան . իսկ թէ որ տեղացւոց հարկաւոր չէ , ու երկրին մէջ առատ է , ան ատեն վրան շատ մաքս դնելով՝ դուրս հանելը , ուստի եւ անով դրսէն ներս ստակ դալը կ'արդելուի . որն որ արդելելու տեղ՝ յաջողցընելու նայելու է :

Մնցողական կամ անցաւոր (երկրի մը մէջէն անցնող , transit) ապրանքները կամ ուրիշ վաճառատեղիներու համար որոշուած են , ուր որ ան իրենց անցած երկրին ապրանքներուն հետ դիմացէ դիմաց պիտ'որ ելլեն , եւ կամ իրենց անցած երկրին առուտուրին վրայ ամենեւին ազդեցութիւն չունին : (Վ)է որ առջինն է , ան ատեն պէտք է նայիլ որ ասոնք ուրիշ տեղէն աւելի աժան կրնան անցուիլ՝ թէ չէ . թէ որ աւելի աժան գնով ուրիշ տեղէ մը չեն կրնար անցնիլ , ան ատեն անցընելու մաքսը համեմատութեամբ քիչ մը կրնայ բարձր բռնուիլ . բայց զգուշանալու է որ խիստ բարձր չըլլայ , ապա թէ ոչ՝ ասով ապրանքը դրսեցիներուն սաստիկ սուղ դալով , կամ ան ապրանքը ուրիշ կողմանէ մը ճարելու կը նային , եւ կամ քիչ կը դորձած են : Իսկ թէ որ երկրին մէջէն անցնելու ապրանքները անանկ ապրանքներ են , որ ազգին առուտուրին վրայ ազդեցութիւն մը չունին , ու ոչ ուղղակի եւ ոչ ալ անուղղակի ազգային ճարտարութեան զէն մը կրնան հասցընել , ան ատենը անցընելու համար դրուած մաքսը միայն տեսակ մը ճամբաներու ստակի պէս բան մը պէտք է ըլլալ , բայց միշտ չափաւոր , որ չըլլայ թէ մաքսին խիստ շատ ըլլալուն համար ուրիշ կողմանէ խաւրուին , ու շատ վաստրկելու բաղձանքով թէ մաքսը ձեռքէ ելլէ , եւ թէ կառապանները հացերնին կսրսընցընեն :

Աս ըսածներնէս կը հետեւի որ մաքսերն ու տուրքերը իմաստուն կառավարութեան մը ձեռքը սանձ պիտ'որ ըլլան , որով վաճառականութեան տեսչութիւնը տեղւոյն ու համաձայնութեան նայելով կարող ըլլայ դարձընել . թէպէտեւ աս ալ խոստովանելու

ենք որ հիմակուան տէրութիւններէն շատերը կամաց կամաց մաքսերը աւելցուցած են, ու զանոնք իբրեւ տէրութեան մուտքի աղբիւր մը կը մտածեն:

236. Ապրանքները իբրեւ ստիկանութեան նիւթ մտածելով, բարձր մաքսի տակ ձգելը, սահմանի մաքսատուններու մօտ բնակողներուն բարուց ապահանութեան պատճառ կ'ըլլայ: Արշափ որ ապրանքի մը վրայ բարձր մաքս դրուի, խաբէութեամբ անիկաներս խոթելը այնչափ օգտակար ու շահաւոր է: Աւորովհետեւ տէրութիւնները իրարմէ բաժնող սահմանները անանկ շինուած չեն, որ ապրանքը միայն մաքսատան վրայ եղած ճամբէն ներս խոթել հարկը լլայ, անոր համար ալ աս խաբէութիւնը դժուարին բան մը չէ: Մանաւանդ որ մաքսատուններու քով եղած երկու տէրութեանց սահմանակից բնակիչները իրարու ծանօթ ըլլալով, աս փնասակար գործողութեանց մէջ իրարու օգնական կ'ըլլան: Աւելցուց եւ ասանկ մաքսէ ապրանք փախցընելու դիմացը շատ ծարեր հողացուած են, ու տեղ տեղ շատ մեծ կատարելութեան հասած են, բայց հասարակօրէն բաւական չեն ըլլար, ինչու որ կատարեալ նպատակին հասնելու համար ուրիշ կերպ չկայ, բայց եթէ բոլոր սահմանը զօրքով պատել, որուն ծախքը մաքսին բերածէն աւելի կ'ըլլայ:

237. Մաքսատուններուն մէջ վարուելու կերպն ալ, որչափ որ կարելի է պարզ ըլլալու է: Ազտիկ պզտիկ բաներու միտ դնելը, անոնց համար պահանջմունքները թէ ժողովրդեան թէ վաճառականներուն սաստիկ բեռ կ'ըլլան, առուտուրին արդելք են, ու կառավարութիւնը ամենուն ատելի կ'ընեն: Ասեւ մաքսաւորներուն ալ վարմունքը քաղցր ու ամենուն հաճելի պիտ'որ ըլլայ. աւելի պաշտօնը կատարելու պարտաւորութիւն, քան թէ մաքսէ ապրանք փախցընողներու վրայ զգուշութիւն երեւնալու է:

Գ. Առաջինը իրանի հասարակական քննելու վրայ :

238. Թե որ կ'ուզուի որ առուտուրն ու գործքերը խառնաշփոթութեան մէջ չիյնան, ամէն քաղաքացւոյ իրաւունքն ու իրաւանցն ալ սահմանը որչափ որ կարելի է ճիշդ որոշուած ըլլալու է, որպէս զի ամէն մարդ ստուգութեամբ ու ապահովութեամբ իր գործքը կարող ըլլայ յառաջ տանիլ : Տէրութեան քաղաքացի ըլլողներուն ընդհանուր իրաւունքն ու պարտաւորութիւնները առհասարակ տէրութեան օրէնքները կ'որոշեն . բայց որովհետեւ արուեստաւորներու ու վաճառականներու իրաւունքն ու իրարունկատմամբ ունեցած պարտաւորութիւննին կը պահանջեն որ առանձին օրէնքով որոշմունքներ ունենան, անոր համար իմաստուն կառավարութիւնները աս մասնաւոր օրէնքներուն հաստատուելուն հոգ ընելու են : Աս օրէնքներուն կարգաւորեալ հաւաքումը Առեւտրական օրէնք կը կոչուի, որն որ ամէն առուտուրի վրայ դաս արուած դասատուներու մէջ սորվեցրնելու կամ գոնէ կարգալ տալու է :

Դ. Պարզած դասարան հասարակելու ու պահելու վրայ :

239. Որովհետեւ առուտուրին բնութեանը հետ կապուած է, որ վաճառականը երբեմն պարտատէր կ'ըլլայ ու երբեմն ալ պարտական կը մնայ, եւ վաճառականն ու ամէն արուեստաւոր կ'ուզէ որ իր առնելիքը շուտ ու ապահովութեամբ ձեռք կարող ըլլայ ձգել, որն որ ուրիշ կերպով չկրնար ըլլալ, բայց եթէ երբ որ արդարութեան դատաստանը իրեն օգնէ . աս մտածելով ամէն տէրութիւններու մէջ, ուր որ կառավարութիւնը առուտուրին վրայ կը հսկէ, ու ամէն կարելի միջոցներով անիկայ յառաջացրնելու կ'աշխատի, առուտուրի ու փոխանակագրերու վէճերուն համար մասնաւոր առանձին դատաստան դրուած է, որն որ շուտով խնդիրը կ'որոշէ, ու որոշման կա-

տարուճը գլուխ տանելու կը ստիպէ: Ասոնց վրայ
խօսելը աւելորդ կը համարինք, մանաւանդ որ մեր
վախճանէն դուրս է. այսչափ միայն կը զրուցենք որ
տէրութեան մը մէջ որչափ որ փոխանակազրերու դա-
տաստանը խիստ է, այնչափ ալ ան տէրութեան վա-
ճառականներուն փոխանակազրերուն վրայ աւելի
յարգ կը դրուի. նոյնպէս իմացիր նաեւ առուտուրի
ուրիշ մասերու դատաստաններու վրայ ալ, որոնց
խստութիւնը առուտուրին յառաջացման եւ իւրա-
քանչիւր վաճառականին հանդարտութեանը աւելի
օգտակար է, եւ ոչ թէ վնասակար:

Գ Լ Ո Ի Խ Ը

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

240. Այս գլխուն մէջ խօսելիքնիս երկիրը՝ իր ջրի ու ցամաքի մասունքներուն նայելով ստորագրել, կամ թէ աշխարհագրութիւնը սովորականին պէս երեք, այս ինքն Ուսումնական, Բնական ու Քաղաքական բաժնելով քննել չէ. հապա աշխարհագրութեան ան մասը սորվեցընել է, որուն մէջ այլեւայլ երկիրներու բերքերուն, անոնց բնակչացը ճարտարութեանը, եւ ուրիշ ասոնց նման բաներու վրայ կը խօսուի, որն որ Վաճառականութեան աշխարհագրութիւն կ'ըսուի: Աս զաղափարով սկսինք աս վերջին գլուխն ալ աւանդելու, որն որ թէպէտ համառօտ, բայց կատարեալ ալ կ'ուզենք ընել:

241. Ի՞նչոք երկիրը կամ աշխարհքը հինգ գլխաւոր մաս կը բաժնուի: Ասիա, Եւրոպա, Ափրիկէ, Ամերիկա ու Աւստրալիա կամ Ովկիանիա: Աշխարհքիս աս հինգ մասին ու անոր մէջ եղած երկիրներուն վրայ մէկիկ մէկիկ սկսինք խօսիլ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա

Ա Ս Ի Ա

242. Այս ընդարձակ երկիրը հարաւային կողմէն սահման ունի Չինուամաչինի ծովն ու Հնդկաց Ովկիանոր. արեւմուտքէն՝ Պատ ու Մանաէպ նեղուցը, Կարմիր ծովը, Սուէզի պարանոցը, որ անիկա Ափրիկէէն կը բաժնէ, Միջերկրական ծովը, Արքիպելագոսը, Չանագ գալէսին ու Կոստանդինուպոլսոյ նեղուցը. հիւսիսէն՝ Մարմարա ու Սեւ ծովերը, Ռուսի Եւրոպան, Կասպից ծովն ու հիւսիսային սառուցեալ ծովը. իսկ արեւելքէն՝ Պէհլիսիկի նեղուցն ու ծովը, մեծ ովկիանոսն ու Չինուամաչինի ծովը: Իր բոլոր ընդարձակութիւնը 700,000 քառակուսի մղոնէն աւելի է, ու աս գլխաւոր մասերուն կը բաժնուի. Տաճկի Ասիա,

Արարիա, Պարսկաստան, (որուն մէջն են Բուն Պարսկաստանի, Գապուլի, Հերաթի թագաւորութիւններն ու Պէլուճիստանը), Ազատ Թաթարք, Հնդկաստան, Չինուճաշին, Ճեարոն ու Ռուսի Ասիա:

243. ՏԱՃԿԻ ԱՍԻԱ: Ասիայի աս մասը, որ Անատոլու ալ կը զբուցուի, 30,000 քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի: Իրեն սահմաններն են, արեւմտքէն՝ Կոստանդնուպոլսոյ նեղուցը կամ Բոսփորոսը (դռնաշէն) ու Միջերկրական ծովը. հարաւէն՝ Կարմիր ծովն ու Արարիան. արեւելքէն՝ Պարսկաստանը, ու հիւսիսէն՝ Ռուսի Ասիան ու Սեւ ծովը: Աս ընդարձակ երկրին մէջ, կրնանք ստուգութեամբ բտել, որ երկրագործութիւնը խեղճ վիճակի մէջ է. գլխաւոր քաղաքներուն շրջակայ տեղուանքն ու քանի մը տեղուանք դուրս հանելով, մէկալ կողմերը աղէկ մշակուած չեն: Տարազագործութիւնը աւելի ծաղկած է, մանաւանդ մեծ քաղաքներուն մէջ. բամբակէ, մետաքսէ ու բուրդէ նաեւ կաշիէ անանկ գործուածներ դուրս կը հանեն, որ կատարելութեան մէջ Եւրոպացւոցիններէն վեր ալ չեն նէ, զոնէ անոնց հաւասար են: Աս տարազագործութեան գործածուած ու գործատուններուն գործած նիւթերը այլեւայլ տեղերէն կ'ելլեն, մետաքսը՝ Հալէպէն, Գամասկոսէն (Շամէն), Մէրափնէն, Պաղտատէն ու Պուրսայէն. բամբակեղէնը՝ Մոսսուլէն, Գամասկոսէն, Հալէպէն, Աիւզէլ Հիսարէն, Տիարպէքիրէն, Չմիւռնիայէն ու Մանիսսայէն. կտաւը՝ Պուրսայէն, Գոգաղէն, Ամասիայէն, Գրապիզոնէն, Բիզէն, Մէրափնէն, Պաղտատէն ու Տիարպէքիրէն. հասարակ շուխան՝ Չանաք գալէսիէն, Աիւզէլ Հիսարէն, այժեայ կերպաս (շէֆ) ու ցիսի (շու) Էնկիւրիւէն. գորգը՝ Պուրսայէն, Գարահիսարէն, Պերկամոսէն, Հալէպէն, Գամասկոսէն. սերեկը (մուրֆէն կշի)՝ Գոնեայէն, Աեսարիայէն, Տիարպէքիրէն ու Ուռհայէն. կաշին՝ Տիարպէքիրէն ու Գոնեայէն. թամբը (էյէրը)՝ Անդապէն. ծխախոտը՝ Լազաքիայէն.

ափիոնը՝ Գարաճիսարէն, սապոնը՝ Գամասկոսէն, Պաղտատէն, Հալէպէն, շեղբերը կամ սուրի երկաթները՝ Գամասկոսէն, պղնձի ապրանքները՝ Գողագէն ու Վարինէն, իսկ ապակեղէնները Մէրաինէն ու Քերբոնէն:

Աս Տաճկի Ասիային պէս առուտուրի յարմար գիրք ունեցող ու միջավայր բլրող տեղ մը քիչ կը գտնուի: Անոր համար ալ աս տեղս հին ու միջին դարու ատենները աշխրբքիս առուտորին վաճառատեղի մը եղած էր. հիմա ճամբաներու ապահովութիւն, ընդարձակ աղէկ ճամբաներ, աւելի ջրանցքներ, ու կառավարութեան կողմէն ոյժ ու զօրութիւն չըլլալով, առուտորը ան առջի մեծութեան մէջ չէ: Իսկ աս ալ չենք կրնար ուրանալ որ աս երկրին ասանկ Եւրոպայի, Ասիայի ու Ափրիկէի մէջտեղը կենդրոնական գիրք ունենալը, գեանին առատ բերքերը, քանի մը մեծ քաղաքներուն մէջ արուեստով զործուած ապրանքները, ու Գամասկոսին ու Պաղտատին մէջ եկող դացող կարաւանները առուտորը կենդանութեան մէջ կը պահեն: Աս երկրին ցամաքային առուտորը ծովային առուտորէն աւելի ծաղկած է, ու կարաւաններու միջնորդութեամբ կ'ըլլայ Վարին, Գարաճիսար, Գողագ, Էնկիւրիւ, Պուրսա, Չմիւռնիա, Պասրա, Պաղտատ, Տիարպէքիւր, Հալէպ, Մոսսուլ, ու Գամասկոս՝ Պարսկաստանի, Արաբիայի ու Եւրոպայի մէջ բանած կարաւաններուն գլխաւոր քաղաքներն են: Ծովային առուտորը գրեթէ բոլորովին Եւրոպացոց ձեռքն է, ու գլխաւորաբար Անգղիացոց, Գաղղիացոց, Հոլանտացոց, Ռուսաց ու Աւստրիացոց կամ թէ Աննեաիկոց ու Թրեսացոց, ու գլխաւոր առուտորի քաղաքնին են Չմիւռնիա, Լադաքիա (Հալէպի նաւահանգիստը), Գարապուլուս, Աքիա. Գրապիզոնը սեւ ծովուն վրայ ամենէն երեւելի նաւահանգիստն է: Ինակիչներուն մէջ ամենէն աւելի Հայերն ու Յոյները եւ Հրեաները

առուտուրի ետեւէ ինկած են: Ա՛յ՛ աճառահանու-
թեան գլխաւոր նիւթերն են մետաքս, բուրդ, բամ-
բակ, մորթ, ծխախոտ, պղինձ, ուղտի ստեւ, այծի
մազ, ափիոն, քրքում, գղթոր, բեւեկնի խէժ (Բի-
բէ՛ննԲի՛ն), ստաշխ (Գ-ր-ւ Ի-ն-լի-ւ), շամիչ, թուղ եւ
ուրիշ շորցուցած պտուղներ, Ախպրոսի եւ ուրիշ գի-
նիներ, կաշի ու սերեկ, գորգ եւ ուրիշ ներքին գոր-
ծատուններու մէջ պատրաստուած ապրանքներ, նաեւ
այլէւայլ տարազներ, որոնք Հնդկաստանէն, Արա-
բիայէն ու Պարսկաստանէն հոս կը բերուին: Իսկ
վաճառաբերութեան նիւթերն են, մետաքս, չուխայ,
գամ, ժամացոյց, հայլի, Աենետիկի եւ Պոհեմիայի
ապակեղէններ, թուղթ, անագ, նորավաճառի (Բա-
ն-ճճ-լի) ապրանքներ, յախճապակի, գաղթականաց
ապրանք, ու Եւրոպայի ճարտարութեան գործուած-
ներ: Ասեւ Արաբիայէն ու Պարսկաստանէն ալ շատ
բերքեր ներս կը բերուին:

244. Տաճկի Ասիան հինգ գլխաւոր մաս կը բաժ-
նուի. Հայաստան, Փոքր Ասիա, Ասորիք, Միջագետք
ու Իրազ արապի, որոնց բնակիչներն են Տաճիկ, Հայ,
Հոռոմ, Արաբացի, Ասորի, Քաղզէացի, Մարոնիդ,
Արացի, Թիւրքմէն, Քիւրտ, Հրեայ, Չինկեանէ, ու
առուտուրի քաղքըներուն մէջ Եւրոպացիք ալ կան:

245. Հայաստան: Հայաստանը՝ որն որ առջի
Հայոց իշխանութեանը տակ եղած ատեն՝ 25,000
քառակուսի մղոն տարածութիւն ունէր, իրեն
Եփրատ, Տիգրիս, Երասխ, Ճորոխ, Աուր գետերուն
համար շատ երեւելի է (Տես Համար 123). Երկիրը
կէս մը լեռնային ու կէս մ'ալ դաշտային է. գե-
տինը հարուստ ու բերրի է, խոտն ու սէզը կեն-
դանի արածելու համար անբաւ են. իր անհամար
տեսակ պտուղներուն մէջը երեւելի է ծիրանը, խա-
ղողը, սեխը, եւ այլն: Իր առատ արմատացը մէջը
ցորենը շատ աղէկ ու խոշոր է: Անի պատուական
ընդեղէն ու կանանչեղէն, կամ խաւարտ ու բան-

Ջարներ, օգտակար ու համեղ արմատներ, խաշնդեղ (բաժնի) անխոն, ծխախոտ, մեղր, մետաքս, բամբակ, զանազան ներկեր, որդան կարմիր (հրճուշ), մեծ անտառներ, հասարակ ու աղնիւ ծառեր, աղնիւ ու հասարակ հանքեր, աղ, բնտանի ու վայրի կենդանիներ ու թռչուններ, տաճիկ ձի (հեռեյան), դմակաւոր ոչխար (հարման հոյոնոն) եւ այլն: Աս բերքերն շատ բան իբրեւ ապրանք ուրիշ տեղուանք, մինչեւ Կոստանդնուպոլիս, Խրբմ, Զմիւռնիա, Պատրա ու Պաղտատ կը խաւրուին. ինչպէս են չորցած պտուղներ, մեղր, մեղրամամ, ծխախոտ, զանազան ներկեր, ցորեն, գարի, դեղի նիւթեր, ոչխար, տաճիկ ձի, եւ այլն: Ասոնցմով ու քանի մը ուրիշ կտաւեղէն գործուածքներով Հայաստան ուրիշ տեղերու հետ աղէկ առուտուր կ'ընէ, որուն մէջը Հայերուն յաջողակութիւնը ամէն տեղ հռչակած է:

Հայաստանը գլխաւորաբար երկու տէրութեանց տակ ըլլալուն համար՝ երկու կը բաժնուի, Տաճիկ Հայաստան ու Մոսկովի Հայաստան: Տաճիկ Հայաստանին մէջ երեւելի են, Ա. Սարին (Էրզնէ-բէմ) նահանգը իր համանուն քաղաքով, որն որ 100,000 բնակիչ ունի, ու իր արուեստներուն եւ առուտուրին պատճառաւ շատ անուանի է, ու գրեթէ ամէն օր զանազան մեծ քաղաքներէն կարաւաններ կու գան կ'երթան: Օ ինագործները բոլոր տէրութեան մէջ ամենէն աղէկ սուր շինողներն են: Բ. Արզնկայ (Եկեղեաց) նահանգը, որ առողջարար ջրերուն, բնափր ու առատ պտղոյն համար շատ զուարճալի ու իր առուտուրին համար ալ շատ անուանի է: Գլխաւոր քաղաքն է Եզնկայ՝ Եփրատ գետին քով 30,000 բնակիչով, իր մէջը աղբորակ (հեռեյան) շատ ըլլալուն՝ յաճախ գետնաշարժ կ'ըլլայ: Գ. Սարս կամ Ղարս նահանգը համանուն քաղաքովը, ունի աղի հանք, մայր ծառի անտառներ, այգիներ եւ այլն: Գ. Ան նահանգը, որուն գետինը շատ բերրի ու հարուստ է. ունի արմախք, մանուանդ բնափր ցորեն,

առատ բրինձ, ծաղիկ, բնափր պտուղ, առատ խաղող, լիմոն, թուրինջ, գինի, եւ այլն: Աս նահանգին մէջն է Մուշ գաւառը, որուն մէջ ծխախոտ շատ ըլլալուն՝ ծխախոտի առուտուրը շատ ծաղկած է: Է. Տիգրանակերտ (Տիարպէքիը) նահանգը, որ բնափր ցորեն, խաղող ու պատուական սեխ ունի: Ամիթ կամ Տիարպէքիը հաստեղաց գլխաւոր գաւառն է, որն որ պարսպապատ Ամիթ կամ Տիգրանակերտ անունով բերդաքաղաք ունի, Տիգրիս գետին աջ կողմը 60,000 բնակիչով, որուն առուտուրը շատ բանուկ է. իրեն սերեկի գործուածները, կաւէ անօթները, պղնձի ապրանքները, մետաքսի ու բամբակի տարազները ու ուղեւորչութեան եւ անցողական ապրանքներու առուտուրը շատ բանուկ է: Կարբերդ, Ջերմուկ ու Շնքուշ գաւառներն ալ իրենց մէջի ոսկիի ու արծաթի առատ հանքերուն պատճառաւ շատ անուն ունին:

Փոքր Հայաստանն ալ Տաճկի իշխանութեան տակ է. ասոր մէջ երեւելի են, Ա. Սեբաստիա նահանգը իր համանուն Սեբաստիա (Սելուշ) բերդաքաղաքովը՝ որն որ 50,000 բնակիչ ունի: Աս նահանգին մէջ Գողաղ (Եւգոկիա) շատ անուանի է. իր պղնձի գործուածքները, տպածոյն (պասման), ծաղկալաթը (շէնը) ու խատեակը (պողտին), գինին, կապոյտ ու դեղին սեկը աղէկ են: Նաեւ Ամասիա գաւառին համանուն քաղաքն ալ շատ անուանի է, բնակիչքը աղէկ ծաղկալաթ կը գործեն: Բ. Վապագոյվկիա (Գայսեքի) նահանգը, ասոր պարսպապատ բերդաքաղաքն է Գայսերի (Կեսարիա, Մաթաք), որուն բնակիչքը վարպետ ու արհեստաւոր մարդիկ են, մէջերնին երկաթագործ ու կտաւագործ շատ կայ. առուտուրը շատ աղէկ է. իր գլխաւոր ապրանքն են՝ դեղին սեկ, աստառ ու ապուխտ:

Մոսկովի Հայաստանին մէջ, ուր որ առատ արծաթ, բրինձ, մետաքս, խաղող ու գինի կ'եւլեն, երեւելի

ու անուանի է Երեւան քաղաքը, որուն առուտուրը շատ բանուկ է:

246. Փոքր Աւի: Տաճկի Ասիային արեւմտեան մասն է 12,700 քառակուսի մղոն ընդարձակութեամբ: Պետինը առհասարակ բերրի է, բայց թէ որ աղէկ մշակուէր՝ աւելի բերրի կ'ըլլար: Բոլոր փոքր Ասիան այլեւայլ նահանգներ կը բաժնուի. Ա. Անատոլու մասնաւոր, որուն երեւելի քաղաքներն են Քէօթասհեա, Իզնիմիտ, Պուրսա՝ որ բերդաւոր քաղաք է, ուր որ մետաքսի ու այլեւայլ մետաքսեղէնի, թաւիշի, (խորէֆէէ), շղարշի (դի-րի-նէ-ի-ի), գործատուններ կան, ու ամենէն աւելի մետաքսի առուտուրը երեւելի է. Էնկիւրիւ, որուն մեծ բերքն ու շահը բարակ ու սքանչելի այծի մազ է: Չմիւռնիա՝ իր համանուն ծովածոցին մօտ Մէլէս գետին քովը, առուտուրը շատ ծաղկած է, որուն պատճառովը իր նաւահանգիստը ամէն դիպց վաճառականի նաւեր կու գան: Բ. Ատանա նահանգը՝ իր Ատանա, Գարսիս, ու Սիս քաղաքներովը: Գ. Գարաման նահանգը, որուն մէջն է Գոնիա գաւառը իր համանուն քաղաքովը, որ Չմիւռնիայի հետ առուտուր ունի: Դ. Մարաշ նահանգը, որուն երկիրը շատ բերրի է, բրինձը շատ ընտիր է: Ե. Տրապիզոն՝ իր համանուն պարբսպապատ քաղքովը: Ասոր մօտ է Աիւմիւշխանէ գաւառը, որ ոսկիի ու արծաթի հանքեր ունի: Զ. Անատոլուին կղզիները, որոնց մէջ երեւելի են Միտիլի կամ Մետիլինէ կղզին, որուն գլխաւոր քաղաքը Միտիլի երկու նաւահանգիստ ունի, ու բնակիչքը սապոն ու ձէթ կը շինեն: Սաղրղ ատասըն՝ որ ամէն տարի գրեթէ 50,000 կենդինար (խանդ) ծուխ, ու 30,000 կենդինար մետաքս, առատ կիտրոն, ընտիր գինի, եւ այլն կու տայ. համանուն քաղքին բնակիչքը մետաքս ու մետաքսեղէն կը գործեն: Վոդոս մեծ կղզին, որուն համանուն գլխաւոր քաղաքը երկու նաւահանգիստ ու նաւարան մը ունի:

247. Ասորիք: Ասորիք կամ Շամ 2300 մղոն ընդարձակութիւն ունի: Արկրին արեւմտեան կողմերը լեռնային են, ուր են Ղիբանանու լեռները, արեւելեան դիերը գաշտային ու քիչ մ'ալ անբեր անապատներ են: Ղեափնը բերրի է, ունի առատ արմախք, մանաւանդ զարի ու ցորեն, բամբակ, մետաքս, ծխախոտ, առատ պտուղ, գումշ, ոչխար, այծ, ուրիշ կենդանիներ եւ այլն: Առուտուրը աւելի Հայերը, Հռոմէներն ու Եւրոպացիները կ'ընեն: Իր նահանգներուն մէջ անուանի են, Ա. Հալէպ՝ իր համանուն պարսպապատ գլխաւոր քաղաքովը, որ Ասիայի երեւելի առուտուրի քաղաքներէն մէկն է, ու բամբակեղէնի եւ մետաքսեղէնի շատ գործատուներն ունի: Բ. Ղարապուլուս, որուն գլխաւոր քաղաքն է Գարապուլուս (Տրիպոլիս), որուն բնակիչքը անգործ մետաքսով ու բամբակով առուտուր կ'ընեն: Գ. Աքեա՝ իր համանուն պարսպապատ քաղաքովը, որուն բնակիչքը բամբակով առուտուր կ'ընեն: Հոս են Սուր (Ծուր, Տիւրոս), Սայտա (Ծայգան, Սիգոն) ու Պերութ (Բերիտոն) քաղաքները, որ հին ատենները շատ անուանի էին: Դ. Ղամասիոս կամ Շամ նահանգը, որուն մէջն է Սուրբ երկիրը ու Եաֆա (Յոպպէ) քաղաքը:

248. Ալեքսիք: Աս երկիրը, որուն Տաճկները էլ ճեղերէ կ'ըսեն, 2000 քառակուսի մղոն մեծութիւն ունի: Արկրին հիւսիսային դին լեռնային է, զեափնը շատաջուր ու բերրի, իսկ հարաւային դին տեղ տեղ բերրի ու տեղ տեղ անբեր անապատ է: Իր բերքերն են արմախք, բրինձ, առատ խաղող, ձիթենի, մեղր, բամբակ, ու քանի մը տեսակ մետաղներ, մանաւանդ պղինձ: Նահանգներն են Ա. Ուրֆա, ուր է համանուն Ուրֆա (Ուռհա, Եդեսիա) պարսպապատ բերդաքաղաքը, ուր որ 2000 տուն Հայ կայ, որոնց մէջ վարպետ ճարտարապետներ, քարակտիներ, կտաւազործներ ու սեկ շինողներ շատ կան: Բ. Սուսուլ, որուն գլխաւոր պարսպապատ բերդաքաղաքը Սուսուլ, Տիգ-

րիս դեռին քով հին Նինուէ քաղքին տեղը կամ մօտերը շինուած է, եւ գորգի, չուխայի, մետաքսեղէնի ու շղարշի գործատուներ ունի, առուտուրն ալ շատ աղէկ է:

249. Իր-է Ար-ալ, որ Քաղղէացւոց երկիր կամ Աստրեասան ալ կ'ըսուի: Արկիրին արեւելեան ու հիւսիսային կողմերը լեռնային են, իսկ արեւմտեան ու հարաւային դին մեծ դաշտ է, ուսկից Եփրատ ու Տիգրիս կ'անցնին, ու հոն իրարու հետ կը միանան: Ղաւանին մեծ մասը բերրի է: Անապատներու մէջ առիւծ, վարազ (վայրենի խոզ), ինձ (դժուր), ջայլամ (դժուր զոհ) փասիան, եւ այլն ունի: Նահանգներուն մէջ երեւելի են Ա. Պաղտատ, որուն համանուն քաղաքը մետաքսեղէնի ու բամբակեղէնի գործատուներ ունի, ու առուտուրն ալ շատ բանուկ է, մանաւանդ Հընդկաստանի հետ: Բ. Պասրա, որուն համանուն քաղքին առուտուրը շատ բանուկ է, մանաւանդ Արաբիայի ու Հնդկաստանի ապրանքներով (Տես Համար 127):

250. ԱՐԱԲԻԱ: Ասիայի աս մասին, որ 46,700 քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի, արեւելքէն սահման է Իրագ Արապին, Պարսկային ծոցն ու Օմանի նեղուցը, հիւսիսէն՝ Ասորիքը, արեւմուտքէն՝ Կարմիր ծովն ու Եգիպտոսը, ու հարաւէն՝ Պապիւլմանտէպի նեղուցը: Արկիրին մէկ քանի դիւրը լեռնային են, բայց մեծ մասը աւազուտ անապատ է: Արաբիայի մէջ գործատուն ու տարազագործութիւն ամենեւին չկայ. բայց մօտ ատեններս հոն տեղը նստող Հնդկաստանցիք բամբակի գործատուներ դրին: Ղաւանները ընդհանրապէս բերրի է. հասարակ բերքերէն զատ՝ արմաիք, բրինձ, տեսակ տեսակ պտուղներ, մանաւանդ խաղող, առատ արմաւ, նուշ ու մաննա կամ գաղպէն, պալսամի ծառ, ընտիր խիժ, շաքարի եղէգ, բամբակ ու խահուէ, խոշոր ու մանր, ընտանի ու վայրի անասուններ ու թռչուններ ունի: Անուանի են խնկեղէնները, հալուէ, զմուռս, խունկ, հնդիկ

ընդոյզ ու լեղակ (չէ՛վէր) . նաեւ ոսկի, կապար, պղինձ, աղ, ազնիւ քարեր ու մարգարիտ ալ ունի: Աս բերքերով Արաբիան աղէկ առուտուր կ'ընէ, մանաւանդ կարաւաններու ձեռօք ու հոն եկող գացող Տաճիկ ուխտաւորներուն պատճառաւ: Աս առուտուրին շատ կ'օգնեն Եամպոյի, Ճիտտայի, Գամֆիաիայի, Մոքայի, Ատէնի, Մասգաթի, Էլ Խաթիֆի ու Արէնի նաւահանգիստները: Օգետեղէնները Հնդկաստանէն կու գան, իսկ փառաւորութեան ապրանքները՝ Եւրոպայէն, զէնքը Պարսկաստանէն ու Տաճիկի Ասիայէն: Իրեն գուրս խրկած գլխաւոր ապրանքներն են ամենէն աւելի խահուէ, ետքը կու գան մարգարիտ, չոր արմաւ, մորթ, ձի, ածալ (սին-ժէ), լեղակ, խիժ, նաեւ ուպան (սու-դէն), խունկ ու զմուռս, որոնք Ափրիկէն կու գան: Իսկ ներս մտած ապրանքներն են վերջի ըսած երեք նիւթերնիս, շաքար եւ ուրիշ Հնդկաստանի ապրանքներ, պողպատ, երկաթ, կապար, անագ, որդան կարմիր, կտաւ, սուտ մարգարիտ, հրազէնք, եւ ուրիշ արուեստանոցներու ապրանքներ ու տարազներ: — Արաբիան երեք, այս ինքն Ապառատ, Անպատ ու Երջանիկ Արաբիա բաժնելը՝ հին է, հիմա կուանները չորս կը բաժնեն, այս ինքն Ա. Հէճազ, որուն մէջն են Մէքքէ, որ 80,000 բնակիչ ունի. անկից 14 մղոն հեռու է Ճիտտա՝ կարմիր ծովուն քով 40,000 բնակիչով, որոնք երկուքն ալ առուտուրի քաղաքներ են: Բ. Աէմէն, որուն գլխաւոր քաղաքն է Սանա կամ Եէմէն գրեթէ 30,000 բնակիչով. երեւելի է նաեւ Մոքա քաղաքը, որ Արաբիայի առուտուրին գլխաւոր ծովեզերեայ քաղաքն ու նաւահանգիստն է: Գ. Օման, որուն ներսի կողմերը մեզի քիչ ծանօթ է: Ասոր Մասգաթ գաւառաւը իր համանուն քաղաքովը՝ որ ամուր է ու նաւահանգիստ ալ ունի, ամէն տեսակ ապրանքներու վաճառատեղի ու մարգարտի առուտուրին կենդրոնն է, որ նոյն տեղը կ'որսացուի: Անեւ Օման քաղաքն ալ առուտուրի քաղաք

է, ու նաւահանգիստ ալ ունի: Գ. Ահա, որուն
 գլխաւոր առուտուրի քաղաքն է ԷԼ Գադիֆ: Ե.
 Պարր Ապատ, որուն գլխաւոր քաղաքն է Տերրէյէհ:

251. ՊԵՐՍԿԵՍԵՆ: Աս տէրութեան արեւմուտ-
 քէն սահման է Տաճկի Ասիան, հարաւէն՝ Պարսկա-
 յին ծոցն ու Հնդկաց ծովը, հիւսիսէն՝ Մոսկովի Ասիան
 ու արեւելքէն՝ Գապուլիստանն ու Պէլուճիստանը:
 Բոլոր տարածութիւնը 25,000 քառակուսի մղոն կը
 կարծուի: Արկրագործութիւնը ինկած վիճակի մէջ
 է. բայց քանի մը տեղեր տեղացիք մեծ ջանքով եր-
 կիր գործելու ետեւէ են: Բերքերն են ցորեն, գարի,
 բրինձ, տեսակ տեսակ ընդեղէն ու կանանչեղէն, գրե-
 թէ ամէն տեսակ ազնիւ ու հասարակ միրգ, ձիթենի,
 ծխախոտ, կնճիթ (սոսմ), քրքում, մեկոն (խշխշ),
 ուսկից ափիոն կը շինուի, շաքար, բամբակ, այլեւայլ
 դեղերու նիւթեր ու արմատներ, ազնիւ ու հասարակ
 ծառեր, եւ այլն: Հասարակ ընտանի ու վայրի անա-
 սուններն ու թռչունները շատ է, մանաւանդ աղուոր
 ձի, ոչխար եւ ուղտ: Հանքերը քիչ է, եղածն ալ ա-
 դէկ չէ. աղը առատ է, նաեւ քիչ-քիչ անուէնով ազնիւ
 քարի տեսակ մ'ունի: Պարսկաստանի բնակիչները
 մեքենական արուեստներու շատ յարմար են, ու քանի
 մը արուեստներ շատ կատարելագործած են, զոր
 օրինակ սուր ու կաթսայ շինել, հոտաւէտ ջրեր
 պատրաստել, աղաղել, խեցեղէն ամաններ շինել,
 մետաքս գործել, կերպաս (սոսմ) շինել, կաճ (+էշէ)
 պատրաստել, գունաւոր շուխայ ու այծեայ (շալի)
 շինել: Պարսկի տէրութիւնը ցամաքային տէրութիւն
 ըլլալով՝ առուտուրն ալ ցամաքային է, ու միայն ծո-
 վեզերեայ Արաբացիներուն ձեռքով ծովի վրայ առու-
 տուր կ'ըլլայ. բայց ներքին առուտուրն ալ այնչափ
 ադէկ չէ, որչափ որ կրնար ըլլալ, որուն պատճառը
 ճամբաներուն գէշութիւնն ու ապահով չըլլալն է:
 Պարսից ծոցին քովը գլխաւոր նաւահանգիստներն են,
 Ապուշէհը եւ Պէնար-Ապասի. իսկ Ասպից ծովուն

քով՝ Էնդիլի ու Պալֆրուշ: Յամաքային առուտուրը կարաւաններով Տաճկի Ասիայի, Ռուսաստանի, Հընդկաստանի, Թաթարի ու Չինուճաշինի հետ է, որուն գլխաւոր մասնակից ըլլող քաղաքներն են Գաւրէժ, Քիրմանշահ, Եկրատան (Համատան), Քաշան, Սպահան, Շիրաս, Պալֆրուշ, Մէշէտ ու Նիշապուր: Աճառահանութեան ապրանքներն են մարդարիտ, մետաքս, ձի, ուղտ, այծամաղ, գառնըլի մորթ, աւշակ (ammoniac), նաւթ (շէֆէ եւ շը), սաթ (+էհրէդար), պղինձ, ծծումբ, բրինձ, գղթոր, քրքում, շամիշ, արմաւ, պիստակ, ափիոն, բամբակէ ապրանքներ, հաստ չուխայ, գորգ, կաճ, սերեկ, պողպատէ գործուածներ, միւքաշ կամ ծխելու եղէգ, եւ այլն: Իսկ վաճառաբերութեան ապրանքներն են, լեղակ, որդան կարմիր, խահուէ, շաքար, գինեմրուր (գըրճ Բարճար), գեղի անկեր, մուշտակ, անագ, կապար, յախճապակ, թէյ, ադամանդ, սուտակ (rubis, գըրճըլէ եւ գըրճ) եւ ուրիշ ազնիւ քարեր, փղոսկր, բարակ չուխայ, եւ ամէն եւրոպական ապրանքներ:

Բոլոր թագաւորութիւնը այլեւայլ նահանգներ կը բաժնուի, որոնց մէջ երեւելի են, Ա. Իրագ Աճէմի, որուն մէջն է Գէհրան հիմակուան թագաւորանիստ քաղաքը 135,000 բնակիչով, ու Սպահան՝ Պարսից հին մայրաքաղաքը, Զէնտերուտ գետին քով, 200,000 բնակիչով, որուն մէջ տարազագործութեան շատ գործատուներ կան, մանաւանդ բամբակի, մետաքսի, թաւիչի, չուխայի, գունաւոր ապակիներու, ներկարարութեան, շաքարի, կաշիի, հրացանի ու ատրճանակի: Առուտուրը աղէկ է: Երբ Զուղայ Սպահանին գիմացը Հայոց քաղաքը 6000 Հայ բնակիչով, որուն առուտուրը ատեն մը շատ երեւելի էր: Աս գաւառին մէջն է Գաշան 30,000 բնակիչով, որն որ տարազագործութեամբ անուանի է: Բ. Աիլան ու Մազանդարան նահանգը, որուն մէջն են Պալֆրուշ 100,000 բնակիչով, որոնք ամէնն ալ արուեստաւոր

ու վաճառական են, առուտուրը ծաղկած է ու կաս-
 պից ծովուն քով նաւահանգիստ մ'ալ ունի. Աստեր-
 ապատ առուտուրի քաղաքը 40,000 բնակիչով, ու
 Ռէշտ 6000 բնակիչով: Գ. Արարատական, որուն
 մէջն է Գաւրէժ 100,000 բնակիչով: Գ. Խուժաստան,
 ուր է Շուշտար քաղաքը 20,000 բնակիչով, ուր որ
 մետաքսի ու բուրդի գործատուններ կան: Ե. Պարսիս-
 տան կամ Լորաստան, որուն գլխաւոր քաղաքն է Շի-
 րազ Տին ու երեւելի, որ ապակիի, զէնքի, մետաքսի,
 բամբակի եւ այլն գործատուններ ունի, ու բնակիչներն
 ալ աղէկ առուտուր կ'ընեն: Զ. Վապարիստան՝
 Տէմավէնտ քաղ.քով: Է. Վիւրտիստան՝ Քիրմանշահ
 քաղ.քով: Ը. Վերման՝ Համանուն քաղ.քով: Թ.
 Վուրիստան՝ Շէհէրիստան քաղ.քով: Ժ. Խորասան՝
 Մէշէտ ու Նիշապուր քաղաքներով:

252. ՊԵՂՈՒՃԻՍՏԱՆ: Ասիային աս մասը արեւ-
 մուտքէն սահման ունի Պարսկաստանը, հարաւէն՝
 Հնդկաց ծովը, արեւելքէն՝ Հնդկաստանը, ու հիւսի-
 սէն՝ Քապուլիստանը. ընդարձակութիւնը 9554 քա-
 ոակուսի մղոն կը սեպուի: Առուտուր ընող քաղաք-
 ներն են Սարաւան գաւառին Խէլաթ գլխաւոր քա-
 ղաքը, նաեւ Գուրաճի՝ որ Հնդկաց ծովուն քովը ա-
 ռուտուրի քաղաք ու նաւահանգիստ է:

253. ՎԱՊՈՒԼԻՍՏԱՆ: Աստերութեան սահման-
 ներն են հարաւէն՝ Պէլուճիստանը, արեւելքէն՝ Չի-
 նումաշինն ու Հնդկաստանը, հիւսիսէն՝ Հէրաթը,
 Թաթարիստանն ու Չինը, ու արեւմուտքէն՝ Պարս-
 կաստանը: Վոլոր երկրին ընդարձակութիւնը 16,540
 քառակուսի մղոն կը սեպուի: Արկիրը աւելի լեռ-
 նային է, քան թէ շիտակ: Վեանին մեծ մասը
 աղէկ պտղաբեր է. ունի արմախք, բրինձ, եգիպտա-
 ցորեան, առատ միրգ, կանանչեղէն, շաքար, կնճիթ
 (սոսոմ), արմաւ, ծխախոտ, մետաքս, բամբակ, լե-
 ղակ (շիֆթ), առատ աղ եւ ուրիշ հանքեր, ու հա-
 սարակ անասուններ: Բնակիչները աղէկ երկրագոր-

ծութիւնն կ'ընեն, քանի մը արուեստներ ալ գիտեն: Առուտուրնին Պարսկաստանի, Հնդկաստանի ու Թաթարիստանի հետ է: Ղլխաւոր ու երեւելի քաղաքներն են Քապուլ, Խանտահար ու Խասնա:

254. ՀԷՐԱԹ: Հիւսիսէն սահման ունի Թաթարիստանը, արեւելքէն ու հարաւէն՝ Գապուլիստանը, արեւմուտքէն՝ Պարսկի երկիրը: Ղլխաւոր քաղաքն է Հէրաթ, ուր մետաքսի, գորգի, կաշիի, ցփսիի գործատուներ կան: — Աս վերջի երեք տերութեանց վաճառահանութեան ու վաճառաբերութեան նիւթերը Պարսկաստանին հետ նոյն են, եւ արդէն իբրեւ Պարսկաստանի մաս կը սեպուին (տես համար 242):

255. ԱԶԱՏ ԹԱԹԱՐԲ կամ Թաթարիստան: Արեւելքի կողմանէ սահման ունի Չինու մաչինը, հարաւէն՝ Հնդկաստանի ան մասը՝ որն որ Շէյքի ու Գապուլի տակ է, արեւմուտքէն՝ Կասպից ծովը, ու հիւսիսէն՝ Մոսկովի Ասիան: Բոլոր երկրին մեծութիւնը 32,000 քառակուսի մղոն կը սեպուի: Արկրին հիւսիսային գիերը անբեր են, իսկ հարաւային գիերը՝ աղէկ բերրի. Ղլխաւոր բերքերն են արմաիք, բրինձ, գինի, կնճիթ, քրքում, մեկոն, ծխախոտ, միրգ, ընդեղէն, խաշնդեղ, բամբակ, մետաքս, զանազան հանքեր, ոսկի, արծաթ, աղ, ընտանի ու վայրի անասուններ ու թռչուններ: Բնակիչներուն մէկ մասը պուխարացի են, որոնք հոս տեղաց արուեստները կը բանեցընեն, աղէկ բամբակեղէն ու մետաքսեղէն կը գործեն ու կը ներկեն, բարակ թուղթ, երկրթէ, պղնձէ ու արծրթէ ամաններ ու զէնք կը շինեն: Բնակիչներուն մեծ մասը երկրագործութիւն կ'ընեն, ու երկիրնին շատ տեղեր աղէկ մշակուած ու գործուած է: Իսկ թափառական կամ վրանաբնակ ցեղերուն Ղլխաւոր գործքը անասուն պահել ու գողնալ է: Պուխարացիները աղէկ վաճառական մարդիկ են. ասոնք թէ առուտուրի մէջ գործունեայ եւ թէ ապրելու մէջ խնայութիւն սիրող մարդիկ են: Բոլոր Ասիա

ճամբորդութիւններ կ'ընեն, ու Չինուամաչինի եւ Ռուսաստանի մէջ կալուածներ ունին: Երենց գլխաւոր առուտուրը Օրէնպուրկի վրայէն Ռուսաստանի հետ է. բայց Աաշկարի վրայէն՝ Չինի, Պալքային վրայէն՝ Վապուլի, ու Վաշմիրի վրայէն Հնդկաստանի հետ ալ առուտուր կ'ընեն: Վաւրս հանած ապրանքնին են բամբակ թէ անգործ եւ թէ գործուած, մետաքս, ձի, կապուտակ քար, մետաքսի որդի հաւկիթ, ու սսկիի փոշի: Աւրս մտած երեւելի ապրանքներն են թէյ, մետաքս, գինեմբուր, յախճապակի, եւ Չինիամաչինի այլեւայլ ապրանքներ, լեղակ, Վաշմիրի ցփփի, Հընդկաստանի բամբակէ ու մետաքսէ ապրանքներ, Վապուլիստանի, Պարսկի ու Ռուսի արուեստական ու բնական ապրանքներ: Առուտուրի երեւելի քաղաքներն են Պուխարա, Քոքանա, Վաշքէնա, Բալհ, Նոր Ուրկանա ու Քիվա:

256. ՀՆԻԿԱՍՏԱՆ: Աս ընդարձակ երկիրը՝ արեւելքէն սահման ունի Չինուամաչինն ու Պէնկալայի ծոցը, հարաւէն՝ Հնդկաց ովկիանոսը, արեւմուտքէն՝ Պէլուծիստանն ու Քապուլը, ու հիւսիսէն՝ Գիպէթն ու մեծ Պուխարան: Բոլոր երկրին ընդարձակութիւնը 110,000 քառակուսի մղոն կը կարծուի: Վետինը՝ քանի մը անապատ տեղերէն զատ՝ շատ բերրի է. իր բերքերը անթիւ անհամար են: Հասարակ բոյսերէն ու կենդանիներէն զատ՝ ունի առատ բրինձ, շաքար, պղպեղ, բորակ, կասիա, մեկոն, խաշնդեղ, կնճիթ, բամբակ, մետաքս, լեղակ, քրքում, սպնիսղ (սպանող), գոգոյի ծառ, խունկ, հալուէ, սեւին, հնդիկ ընդոյղ, խիթ (շամ), մետաքս, հասարակ հանքեր, առատ սսկի, ադամանդ, եւ ուրիշ ազնիւ քարեր ու մարգարիտ, ձուկ, ինձի մորթ, փիղ, սընդեղջիւր, բէշկ մշկոյ (սէս + քէսիսէ), տեսակ տեսակ կապիկներ, կոկորդիլոս, սիրամարդ, փասիան, քառասուն տեսակէն աւելի պապկայ կամ թութակ, եւ այլն: Հնդկաստան երկայն ատենէ ի վեր արուեստներու

ու ճարտարութեան մէջ շատ յառաջացած է, բամբակէ գործուածները՝ որոնք երկայն ատեն Հնդկաստանի վաճառականութեան գլխաւոր նիւթը եղած ըլլալուն՝ Հնդկական (Indienne) անուամբ կը ճանչցուին, մետաքսէ գործուածները, շուխան, ցփսիները, գորգերն ու փսիաթները (Խէրէրը) գլխաւոր նիւթերն են, որով Հնդկաստանի առուտուրը երեւելի եղած է: Հնդկաստանցիք բամբակի այլեւայլ տեսակները իրարու հետ բաղադրելով ու միաւորելով, պնդութեան, փափկութեան եւ ուրիշ շատ կողմանէ ազնիւ գործուածներ կը հանեն, ու իրենց նախնիներէն ժառանգած արուեստը անանկ կատարելութեան մը հասցուցած են, որ Եւրոպայի ամենէն ճարտար ազգերն ալ հազիւ վերջի տարիներս անոնց հաւասարեցան: 124 այլեւայլ տեսակէն աւելի բամբակէ գործուած նիւթեր կ'ելլեն, որոնք գլխաւորաբար Ալիզակաբաղամ, Մազուլիբագնամի շրջակայ տեղուանքը, Բալիաբաղ, Մատրաս եւ ուրիշ տեղեր, Օրիսսայի շատ քաղաքները ու Պէնկալա կը գործեն: Սուրադին գիպակները (սակով ու արծրթով բանուած կերպասները), Գասըմպաշարի, Մուշիտապատի մետաքսեղէնները, շուխան ու Գաշմիրի ցփսին, Բազնայի գորգը, ղէնքերը, եւ ուրիշ արուեստական գործուածները Հնդկաստանցոց շատ վաստակ կը բերեն: Աս այլեւայլ թէ բնական եւ թէ արուեստական բերքերով հին ատենէ վեր Հնդկաստան առուտուրի միջամայր եղաւ ու շատ ազգեր իրեն ձգեց: Հինտուները, որոնք Պանիան կըսուին, անոնցմէ ետքը Հայերն ու Պարսիկները ներքին քաղաքներու հետ մեծ առուտուր կ'ընեն: Հայերը նաեւ ծովու առուտուրի մէջ ալ կը մտնեն, որն որ հիմա գրեթէ Անդղիացոց ձեռքն է. անոնցմէ ետքը կու գան հիւսիսային Ամերիկացիք, Բորդուէզները, Գաղղիացիք, Հոլանտացիք ու Տանիմարգացիք. իսկ մէկալ եւրոպական տերութիւնները ասոր մէջ քիչ մաս ունին:

Ղլխաւոր գուրս հանած նիւթերն են քթան, մետաքսէ գործուածներ, ցփսի, գորգ եւ այլն, որոնք վերը յիշեցինք: Իսկ վաճառաբերութեան նիւթերն են շուխայ, թաւիշ, երկաթ, կարմիր պղինձ, կապար, հրապէնք, գինի, օղի, հիւսկէն ծոպ (հանիւշ), ոսկեթել (սըրմ), ժապաւէն, բուստ (ճըրճան), թուղթ, չոր ու եփած պտուղներ, գեղազործութեան նիւթեր. իսկ Ամերիկայի ապրանքներէն՝ ժամացոյց, հայլի, որոնք ամէնն ալ Եւրոպացիք ներս կը խոթեն: Արաբացիք՝ խահուէ, խունկ, ուղտ, արմաւ ու ձի կը բերեն: Չինէն թէյ կու գայ, բայց Եւրոպացւոց նաւերով. Մոլուզներէն մեխակ (հարմիւշիւ) ու մշկընկոյզ. Գիպէթէն ու Ափրիկէի ծովեզերեայ տեղերէն շատ սատափներ ու գաղտակուրներ (սէրէֆի նման բաներ), որն որ Հնդկաստանցիք զարդի համար շատ կը փնտռեն: Հնդկաստանի զլխաւոր առուտուրի ծովեզերեայ քաղաքները կալկադա, Պոմպայ, Մատրաս ու Սուրադ են: Գրսի հետ մանաւանդ Գապուլի ու Պարսկի հետ եղած առուտուրը կարաւաններով կ'ըլլայ:

Հնդկաստան այլեւայլ տէրութիւններու կը բաժնուի. կան տեղեր ալ՝ որոնք Եւրոպացւոց ձեռքն են: Ղլխաւոր մասերն են Ա. Իրիտանացւոց մասը, որուն մէջն են կալկադայի, Մատրասի ու Պոմպայի կուսակալութիւններն ու Սէյլան կղզին: Բ. Սինաիայի թագաւորութիւնը՝ կուալթոր, Ուճէյն քաղաքներով: Գ. Շէյքի գաշնակցութիւն, Լահոր, Գաշմիր ու Մուլղան քաղաքներով: Դ. Ալեքալի թագաւորութիւնը՝ Գադմանաու քաղաքով: Ե. Սինաի իշխանութիւնը՝ Չ. Սալտիվներու թագաւորութիւնը: Զ. Գաղղիայի մասը, որուն Փոնդիշէրի ծովեզերեայ քաղաքը իր բամբակեղէնի գործատուներուն ու բանուկ առուտուրին պատճառաւ շատ երեւելի եղած է: Ը. Փորդուկալի տեղերը, որոնց առուտուրի քաղաք է կոս: Թ. Տանիմարդայի երկիրները, որոնց զլխաւոր տեղն է Գրանդեպար գղեկաւոր քաղաքը, որ նաւա-

Հանգիստ, ու բամբակեղէնի գործատուներ ունի: —
 Ա՞ տեղերը Գանգէսին ասդիի կողմի երկիրներն
 են, իսկ Գանգէսին անդիի կողմինները, որ Ստորին
 Հնդկաստան ալ կ'ըսուի, են, Ա. Բրիտանացւոց
 մասը՝ Արագան, Մէրկի, Ամհերստդաւն ճորճդաւն,
 Մալակկա ու Սինկափուր քաղաքներով: Բ. Պիր-
 մանի կայսրութիւնը՝ Ավա ու Բէկու քաղաքներով:
 Գ. Հիամի թագաւորութիւնը՝ Պանկգոգ քաղա-
 քովը, որ նաւահանգիստ ալ ունի: Դ. Աննամի տե-
 րութիւնը: Ե. Անտամանի ու Նիքոպարի կղզիները:

Ստորին Հնդկաստանի կրթեալ ազգերն ալ ա-
 բուեատներու մէջ յառաջացած չեն, այսու ամենայնիւ
 ոսկեզօծելու, սատափ գործելու, մեծ ու պզտիկ
 կուռքեր շինելու, ու տեսակ մը ոսկիէ ու արծաթէ
 գործուածքի, կաւագործութեան ու նաւագործու-
 թեան մէջ բաւական ճարտար են: Պալլոն ըսուած
 նաւերնին, որոնք գետի վրայ նաւելու ու պատերազմի
 կը գործածեն, մէկ կտոր փայտէ շինուած են, ու եր-
 բեմն 16 — 20 ձող երկայնութիւն կ'ունենան: Ա՞
 տեղաց ժողովուրդը բամբակը՝ վերին Հնդկաստանի
 բնակիչներուն պէս, յախճապակին՝ Ճաբոնցոց պէս, ու
 մետաքսը՝ Չինու մաշինցոց պէս գործել չեն զիտեր-
 բայց քթան գործելը իրենց մէջ սկսաւ յառաջ եր-
 թալ: Վանի մը տարի է, որ Եւրոպացիք մանաւանդ
 Բրիտանացիք աս երկիրներու հետ ալ սկսան հաղոր-
 գութիւն ընել, ու 50 տարիէ աւելի է, որ Չինու մա-
 շինցիք Սիամի առուտուրը ձեռք ձգեցին, ու անոնց
 վաճառականներն ու նաւավարները եղան. ամէն տարի
 140էն աւելի 35,000 տակառ բեռ առնող ճուղ նաւեր
 Չին կ'երթան, 40 — 50ի չափ ալ Սինկափուր Անդ-
 զիացւոց մասը, ուր ամէն տարի 30ի չափ ալ Գոքին-
 քինայէն կու գան: Աննամի կայսրը իր հաշուին նաւեր
 կը խաւրէ: Պիրմանի կայսրութեան մէջ Եւրոպացւոց
 նաւերով եղած առուտուրէն զատ՝ Պիրմանցոց նաւերն
 ալ կը բանին. ասոնք տարւոյն աղուոր ատենները

Արագանի ծովեզերեայ տեղերէն կը նաւեն, ու հոնկից աւազակոյտներու մէջէն Աալկադա կու գան: Յամաքային առուտուրի հաղորդակցութիւնը Բրիտանացւոց ու Պիրմանի մասերուն, ու Պիրմանի ու Չինի մէջ է: Իսայց Պիրմանը Սիամի հետ առուտուր չունի, ինչու որ իրարու գէժ սաստիկ ատելութիւն ունենալով՝ իրարու հետ միօրինակ կռուի մէջ են: Իրենց սահմանները անապատներ են ու սվ որ իրարու սահման կը մտնէ՝ գերի կ'իյնայ: Աճառահանութիւնը աս նիւթերու վրայ է. բամբակ, մետաքս, անագ, փայտ, խիժ, ձգական խիժ (香茅), արմտիք, աղ, եղ, շաքար, փղօսկր, պղպեղ, թռչնոյ բոյներ, ազնիւ քարեր, գլխաւորաբար յակինթ ու ակատ, երկաթ (որ Սիամէն կ'ելլէ), ջնարակով գործուածներ եւ այլն: Իսկ ներս բերուած ապրանքներն են, քթան, մետաքսէ գործուածներ, շուխայ, ափիոն, թաւիշ, յախճապակի, թուղթ, թէյ, կտաւ, կորեակ եւ շատ արուեստական ապրանքներ՝ որ Եւրոպայէն ու Չինէն կու գան: Գլխաւոր ծովային առուտուրի տեղուանք են Սինկափոր ու Ճորճգաւն՝ Բրիտանացւոց մասին մէջ, Ռանկուն՝ Պիրմանի մէջ, Պանկոգ ու Չանդիպոն՝ Սիամի մէջ, Սէյկոնկ, Հուէհան ու Գուրոն կամ Հանսան՝ Աննամի մէջ:

Հնդկաստանի կղզիներուն մէջ անուանի են, Սուճադրա, ուր որ պղպեղ ու սսկի կ'ելլէ. Պոունէոյ՝ որուն երեք մասին մէկը Հոլանտացւոց ձեռքն է, որ ադամանդի ու սսկիի հանքեր կը հանեն. Չելեպեան կղզին, ուր սսկիի, պղնձի ու անագի հանք ու բամբակ շատ կ'ելլէ. մէկ մասը Հոլանտացւոց ձեռքն է, ու երեւելի է անոնց Մատակասկար քաղաքը ծովու քով, ուր աղէկ առուտուր կ'ըլլայ. Մոդուլեան կամ Համեմի կղզիները, որոնց մէջ երեւելի են ճիւղոյ ու Ամպոյնա, ուսկից ամէն տարի 7000 կենդինար մեխակ կ'ելլէ: Փիլիպպեան կղզիները, որոնց գլխաւորն է Մանիլա կղզին, որ բանուկ առուտուրին համար շատ անուանի է:

257. ՉԻՆՈՒՄԱՉԻՆ: Չինուժաչինը արեւելքէն սահման ունի արեւելեան Ովկիանոսը կամ Չինաց ծովը, հարաւէն՝ նոյն ծովն ու Հնդկաստանը, արեւմուտքէն՝ Հնդկաստանը, Քապուլիստանն ու ազատ թաթարիստանը, իսկ հիւսիսէն՝ Մոսկովի Ասիան: Գետնին միջին ու հարաւային գիւրը աղէկ բերրի են, բայց հիւսիսային կողմերը այնչափ չէ: Հասարակ բերքերէն զատ՝ ունի առատ բրինձ, բամբակ, շատ մետաքս, տեսակ տեսակ համեմներ, կինամոն կամ գարիճենիկ (բարչին), պղպեղ, գեղի նիւթեր, առատ թէյ, հնդկեղէգ (bambou), ամէն տեսակ հանք ու կենդանի, ռնգեղջիւր, բէշկ մշկոյ, ոսկեգոյն փասիան, ծովային ազուաւ, ընտիր ձուկ եւ այլն:

Չինուժաչինցոց կենաց հարկաւորութեան ու հանգստութեան վերաբերեալ արուեստներու մէջ բրած փոյթը զարմանալի է. շատ արուեստներու սկիզբը ժամանակի մ'թութեան մէջ կորսուած է, ու Չիները անոնց գիւտը անանկ մարդիկներուն կուտան, որոնց գոյութեանը վրայ տարակոյս կայ: Մետաքս յառաջ բերելն ու գործածելը շատոնց իրենց ծանօթ էր, յախճապակի գործուածները անանկ կատարելութեան հասցուցած էին, որ անոնց նմանը Եւրոպայի մէջ քիչ ատեն է որ սկսաւ դուրս հանուիլ: Հնդկեղէգը հազարումէկ տեսակ բանի կը գործածեն. իրենց բամբակէ գործուածները բոլոր աշխարհքիս մէջ անուանի են: Իրենց աներուն կահքը կարասիքը, անօթները, գործիքները գիմացկունութեան կողմանէ շատ զարմանալի են, ու մէկ պարզութիւն մ'ալ ունին: Մետաղներ գործելը երկայն ատենէ ի վեր իրենց ծանօթ է, նոյնպէս խեցեգործութիւնը (չեօ՛ւէ+ճիո-նի-նը), ու կարծր քարեր կտրելն ու փայլեցընելը: Փայտի վրայ քանդակելն ու հաստատատիպը (-դէրէ-դէ՛ւ) 10երորդ դարէն գիտէին: Բանուածնին, նկարնին ու փղոսկրէ գոր-

ծոււածները շատ մաքուր ու աղուոր են, իրենց հովա-
 հարները զարմանալի են, ու թեւէ հիւսուածները մա-
 քուր: Իսկ արուեստական ծաղիկներնուն հաւասարը
 չկայ: Վաղթէ գորգ շինելը Եւրոպացիք անսնցմէ սոր-
 ված են: Իրենց արուեստական ապրանքներէն շատե-
 րը, ինչպէս կենդանի գունով ու անեղծանելի գոյն
 տալը, բարակ ու դիմացկուն թղթերնին, թանաք-
 նին եւ ուրիշ շատ բաներ Եւրոպայի մէջ չեն կրնար
 շինուիլ, ինչու որ ասոնք երկայնատութիւն, զգու-
 շութիւն ու վարժութիւն կ' ուզեն: Չինուամաչինցիք
 դրսի երկիրներուն ապրանքները նմանելով ու ծա-
 աայական ճշդութեամբ կը շինեն: Վէ որ որոշելու
 ըլլաս՝ Եւրոպացւոց ճաշակով ապրանքներ կը շինեն,
 զոր օրինակ նշաններ, ձեւեր, պատկերներ յախճա-
 պակի կամ փայտի վրայ. ու անանկ աժան ալ կը
 հանեն, որ շատ անգամ իրենց անանկ գործքեր
 կրնաս յանձնել, որ Եւրոպացիք շինելու համար շատ
 ստակ կ' ուզեն: Արուեստներու մէջ Գորէացիք Չինու-
 մաչինցոց պէս ճարտար ու գործունեայ են, ամենէն
 աւելի Նանքին ըսուած բուրդէ գործուածքի ու անով
 գրելու թուղթ շինելու մէջ: Վիպեղցիք այնչափ
 չէ, այսու ամենայնիւ իրենց բամբակէ հիւսածները՝
 Չինուամաչինի, Հնդկաստանի ու Մանկոլի մէջ շատ
 յարգի են. բայց մետաղէ գործածներն ու կանանց
 գլխու զարդը Չինուամաչիցոց շինածին նման է: Պու-
 խարացիք Գիանշաննանլու գաւառին մէջ ոսկի ու
 արծաթի գործուածներով ու մետաքսէ բանածնե-
 րով շատ անուն ունին: Արուեստներու կողմանէ
 երեւելի են Բէքին ու Գիանչին քաղաքները՝ Չիլի
 դաւառին մէջ, Քանդոն ու Փուչան՝ Քուանկոունկի
 մէջ, Չանկչու ու Փուչու՝ Փուքիանի մէջ, Հանկչու ու
 Նինկիոյ՝ Չէքիանկի մէջ, Սունկքիանկ ու Եանկչու՝
 Քիանկսուի մէջ, Քինկգէչինկ ու Քանչու՝ Քիանկսիի
 մէջ, Քաշկար ու Եարքանգ՝ Գիանշաննանլուի ու Լաս-
 սա՝ Գիպէթի մէջ:

Չինուճաշինի ներքին առուտուրը դրսի երկիրնե-
 րու հետ եղած առուտուրէն աւելի մեծ է. ինչու որ
 տեղացւոց ջանքէն ու ջրանցներէն շատ յաջողու-
 թիւն գտած է: Աս առուտուրը այլեւայլ գաւառ-
 ներու թէ բնական եւ թէ արուեստական բերքերուն
 փոխանակութեան առուտուր է. եւ ստուգիւ աս ա-
 հագին մեծ երկիրը անանկ բերքեր ունի որ աս
 առուտուրը իր ժողովրդեան պահպանութեանն ու
 ապրուստին բաւական է: Անոր համար ալ Չինուճա-
 շինցիք ծովային առուտուրին անհոգ են, որն որ
 ատեն մը մինչեւ Վարմիր ծով կը հասնէր: Այսու
 ամենայնիւ իրենց վաճառականները Հնդկաց արքի-
 պեղաքոսին (Մալայներու երկրին), Ստորին Հնդկաս-
 տանի, Ճաբոնի ու Նոր Գուինէայի նաւահանգիստ-
 ները կ'երթան կու գան: — Բայց դրսի երկիրնե-
 րուն հետ եղած առուտուրին մէջ ծովային առու-
 տուրն ալ մեծ է, որուն միջավայր է Քանդոն քա-
 ղաքը, ուր Եւրոպայի ամէն ազգերուն ու հիւսիսային
 Ամերիկացւոց նաւերը շատ կը յաճախեն: Աս վաճա-
 րականութեան գործքերուն $\frac{3}{4}$ մասը հիւսիսային
 Ամերիկացւոց ու Անգղիացւոց ձեռքն է: Քանդոնի
 նաւահանգստէն ետքը կու գան Չանկչուինը, Հիա-
 մէնինը, Չասհինկինը ու Նինկփոյինը: Միայն Մա-
 նիլլա կղզւոյն Սպանիացիները Չանկչուի մէջ առու-
 տուր ընելու իրաւունք ունին: — Վրսի երկիրներու
 հետ եղած ցամաքային առուտուրը գլխաւոր հինգ
 սահմանադրութիւններէ կ'ըլլայ. Ա. Միպերիայի սահ-
 մանը Մայմաշին տեղը Քիախոյային գիմացը: Աս տե-
 ղաց առուտուրը շատ մեծ համարուած է. բայց ամէն
 տարի առուտուրի հանուած ապրանքներուն թիւը 8
 միլիոն ֆրանգէն անդին շանցնիր, սովորաբար 6 մի-
 լիոնի առուտուր կ'ըլլայ: Բ. Թուրքիստանի սահմա-
 նը (Պարի մէջ), ուր Եարքանդ գլխաւոր առուտուրի
 քաղաք է, բայց անոր հիւսիսային կողմը սահմանին
 մօտ Քաշկար ու գէպի ներսը Աքսու քաղաքներուն

առուտունն ալ բանուկ է : Գ . Հնդկաստանի սահմանները , ուր գլխաւոր տեղերն են Վեհ կամ Վատաք փոքր Գիպէդի մէջ , Գաքաքոթ ու Վասսա Գիպէթի ներսի կողմերը : Գ . Պիրմանի կայսրութեան սահմանները Հունկիչանկիֆուի մէջ : Ե . Մննամի տէրութեան սահմանը :

Վաճառահանութեան նիւթերն են թէյ , նանքին , յախճապակի , գինեմբուր , ջերմնդեղ ($\frac{1}{2}$ շն- $\frac{1}{2}$ շն), մուշկ , կոճապղպեղ ($\frac{1}{2}$ շն- $\frac{1}{2}$ շն), սնդիկ , զինկ , բորակ , մետաքս , ցփսի , սատափ , կրիայի խեցի ($\frac{1}{2}$ շն- $\frac{1}{2}$ շն) , ու վերը գրած արուեստական գործուածները : Թէյը ամենէն շատ գուրս կը խաւրուի , ու արժէքի կողմէն մեկալ նիւթերէն ամենէն աւելին է . շատը Անգղիայիք կը գնեն : Իսկ վաճառարեւութեան նիւթերն են , շուխայ եւ ուրիշ բրդեաներ , Սիպերիայի ու հիւսիսային Ամերիկայի մուշտակ , ոսկի ու արծաթի թել , Բոհեմիայի ապակեղէններ , կապար , բուստ , որդան կարմիր , Պերլինի կապուտակ գոյն , կոպալտ , Շամբանիայի գինի , ժամացոյց , սպնիազ , պղպեղ , տեսակ տեսակ փայտեր , փղոսկր , անագ , պղինձ , եւ այլն , ու շատ ալ ամփոն , որն որ վաճառարեւութեան գլխաւոր նիւթն է :

258 . ՂԱԲՈՆ կամ ՅԱԲՈՆ : Չինուճաշինի արեւելեան կողմը , իրեն համանուն ծովուն մէջ բոլոր կղզի է . ընդարձակութիւնը 8600 քառակուսի մղոն կը սեպուի : Վետինը թէպէտ քարուտ ու անբեր է , բայց բնակիչները աշխատասէր ըլլալով՝ աղէկ կը գործեն , որով շատ բերք կու տայ , որ են արմախք , բրինձ , տեսակ տեսակ պտուղներ , լիմոն , նարինջ ($\frac{1}{2}$ շն- $\frac{1}{2}$ շն), թուրինջ , ընդոյզ , թութի ծառ , ուսկից շերաս (ապրշումի որդ) ու մետաքս կ'ըլլայ , քափուր ($\frac{1}{2}$ շն- $\frac{1}{2}$ շն), թէյ , բամբակ , թուղթի , նոճի , ու հնդիկ նշենի ($\frac{1}{2}$ շն- $\frac{1}{2}$ շն ծառ) եւ այլն : Ասկի հանքը առատ է , իր արծաթին նմանը ուրիշ տեղ չկայ . պղինձն ալ շատ մաքուր , ընտիր ու առատ է .

նաեւ ադամանդ , ընտիր յախճապակիի հող , ազնիւ քարեր եւ ուրիշ հանքեր ունի : Հասարակ ու վայրի կենդանիները , թռչուններն ու ձուկը առատ է : Ղաբոնի մէջ երկայն ատենէ ի վեր է որ արհեստներու ձեռք զարկած են , ու Չինուժաչինցոց անմտական ամբարտաւանութիւնը չունենալով՝ շատ բան իրենց մէջ կրցան յառաջացընել , ու իրենցմէ չգըտնուած բաներն ալ սորվեցան . բայց կառավարութիւնը դրսեցիներուն հետ հաղորդութեան շատ զգուշութիւն կ'ընէ : Տէրութեան մեծամեծները Հոլանտացւոց լեզուն թէ կը կարդան ու թէ կը գրեն , ու Հոլանտացւոց լրագիրները կարդալով Ներսայի գործքերուն վրայ տեղեկութիւն կ'աւնուն : Ղաբոնցիք արուեստներու մէջ Չինուժաչինցոց ու Հնդկաստանցոց ստիս են , պղինձ , երկաթ ու պողպատ գործել աղէկ գիտեն , իրենց սուրերը Նորասանցիներուն շինածէն վար չեն մնար : Մետաքսէ ու բամբակէ գործածները , յախճապակիէ , խիժէ ու ապակիէ շինած ապրանքնին շատ աղուոր ու վարպետութեամբ շինուած բաներ են . ժամացոյցներ շիտկել , նորոգել , ու նաեւ շինել ալ գիտեն : Բայց ամէն բանէ աւելի իրենք զիրենք երկրագործութեան տուած են , երկիրնին ընդհանրապէս աղէկ մշակած է :

Ղաբոնցիք առջի հին ատենները մեծ նաւատորմիղ ունէին , ու իրենց վաճառականի նաւերը մինչեւ Պենկալները կ'երթային , բայց 1585էն ետքը շատ ետ գացին , ու 1637ին դրսի երկիրներ ճամբորդութիւն ընելը արգելեցին , անոր համար միայն ծովեզերեայ տեղումնք կ'երթան , ան ալ իրենց երկրին մէջ : Միայն Նանկասաքիի նաւահանգիստը դրսեցիներուն բաց է , բայց շատ խիստ չափաւորութիւններով : Չինուժաչինցիք , Գորեացիք ու Հոլանտացիք միայն հոն մանելու իշխանութիւն ունին , բայց Չինացիք 10 ճունդ , ու Գորեացիք ու Հոլանտացիք մէկ մեծ , երկու ալ պզտիկ նաւեր միայն

կրնան ներս խոթել: Անգղիացիք 1811ին Հոլանտացիները ճարձնէն դուրս հանելու աշխատեցան, բայց չկրցան: Հոլանտացուց ներս խոթած ապրանքներն են փշուր շաքար (Բօզ շէ+երէ) ու վանաշաքար (Նէօ-դէթ շէ+երէ), անագ, սնգիկ, հնդկեղէգ, գեղեր, երկաթի գաւազաններ, հայլի, ապակեղէնք, փղոսկր, խահուէ, մուշկ ու քրքում: Իսկ վաճառահանութեան ապրանքներն են պղինձ, քափուր, մեաաքսի ու ջնարակի ապրանքներ: Չինուամաչինցիք աս ապրանքներէն զատ՝ բերած շաքարներնուն, անգղիացի ասուիններուն, թէյին ու դեղերուն տեղ՝ չորցուցած ձուկ ու կէտի (դաշնաշէ) եղ կ'առնուն: Թէպէտ ճարձնի նաւահանգիստները օտարականաց համար գոց են, ի վերայ այսր ամենայնի մեծ ու պզտիկ նաւերով լեցուն են, մթերանոցներու ու վաճառատեղիներու մէջ ուտելու ապրանքներու շատ մեծ առատութիւն կը տեսնուի, ու տօնավաճառներուն անթիւ բազմութիւն կու գայ:

259. ՄՈՍԿՈՎԻ ԱՍԻԱ: Ասիկա Ասիային գրեթէ երեք մասին մէկն է, որուն հիւսիսէն սահման է Սառուցեալ ծովը, արեւելքէն՝ Արեւելեան ովկիանօսը, հարաւէն՝ Չինուամաչինի մէկ մասը, Մանկոլը, Թաթարիստանը, Պարսկաստանը եւ այլն, ու արեւմուտքէն՝ Տաճկի Ասիան, Սեւ ծովն ու Մոսկովի Եւրոպան: Անգարձակութիւնը 277,400 քառակուսի մղսնէն աւելի կը սեպուի: Աս ընդարձակ երկրին հարաւային կողմերուն երկիրները աւելի դաշտային են քան թէ լեռնային, շատ անջուր ու անբեր անապատներ ալ ունի: հիւսիսային դիերուն միջին կողմերը աղէկ ու մշակած երկիրներ կան, ու տաք տեղերը ամէն տեսակ կանանչեղէն, արմախք ու պտուղներ յառաջ կու գան: Միպերիայի մէջ ալ տեղ տեղ զանազան բերքեր ու արմախք կ'ըլլան, բայց մեծ մասը անգործ ու անտառ է, անոր համար առատ փայտ, տեսակ տեսակ վայրի անասուններ ունի, որոնց մորթէն ընտիր մուշտակ

կ'ըլլայ: Աս երկրին մէջ արուեստները յառաջացած չեն. գլխաւորաբար Ուրալ, Գոլիվան, Նէրչինաք լեաներու հանքերը կը գործուին, ու երկաթի, պղնձի, կաշիի ու գորգի գործատուներ, զէնք շինելու դարբիններ, ապակի, պորփիւր ու յասպիս գործողներ, աղի ու բորակի արուեստանոցներ, կուպրի, ձկան սուկրի ու կաճի գործատուներ կան: Միպերիայի կողմերուն առուտուրը երթալով աւելնալու ու Աաւկասեան կողմերուն առուտուրը իյնալու վրայ է. ինչու որ աս (Աաւկասեան) կողմերուն մէջ աղէկ ճամբայ չըլլալը, անոնց անապահովութիւնը, աւելի գետերու պակասութիւնը՝ առուտուրին յառաջ երթալուն մեծապէս արգելք կ'ըլլան. որուն հակառակը բոլորովին կը տեսնուի Սիպերիայի մէջ: Մոսկովի Ասիային առուտուրին մէջ Նւերոպային հետ եղած ներքին առուտուրը՝ Տաճկաստանի, Պարսկի, Չինուճաշինի եւ ուրիշ ան կողմերու հետ եղած արտաքին առուտուրէն զանազանելու է: Միպերիայէն Գոպոլսքին վրայէն Մոսկաւ շատ մուշտակ, երկաթ, մամմութի կմախք, կէտի ակոսայ կը խաւրուի. ասոնց տեղ Սիպերիա Ռուսի եւ ուրիշ տեղերու տարազներ կ'երթան: Իրպիթի տօնավաճառը Բերմի կուսակալութեան մէջ բոլոր Ռուսի Ասիային մէջ ամենէն երեւելին է: Չինուճաշինի հետ առուտուրը Քիաքղա, Իբքուցք, եւ ուրիշ Սիպերիայի քաղաքներուն ձեռօքը կ'ըլլայ, մուշտակ եւ ուրիշ նիւթերու տեղ՝ թէյ, յախճապակի, մետաքս, մուշկ, գինեմրուր, Չինուճաշինի մետաքսէ ու բուրդէ գործուածները կ'առնուն: Պուխարայի ու Թուրքիստանի վաճառականները Ռուսներէն անգործ կաշի, մետաքսէ ու բրդէ ապրանքներ, ազնիւ քարեր կը գնեն: Աս առուտուրին գլխաւոր տեղը Օրէնպուրկ է, անկից ետքը կու գան Դրոսիցքսի ու Բէգրոբաւլովսք: Պարսկաստանի հետ առուտուրը կէս մը ցամաքով ու կէս մ'ալ Ասսպից ծովուն վրայէն Աթաերխանի նաւահանգիստներուն, Պաքուի եւ ուրիշ տեղերու միջնոր-

դուժեամբ կ'ըլլայ: Թիֆլիզ ամենէն մեծ առուտուրի քաղաք է ցամաքի վրայ, անկէ ետքը կու գայ Երեւան: Պարսիկները ծախած անգործ մետաքսին տեղ ասոնցմէ նաւթ կը գնեն: Տաճկաստանի հետ առուտուրը երկու երկիրներուն ապրանքներուն իրարու հետ փոփոխութիւն է. գլխաւոր տեղերն են Թիֆլիզ, Ախրցքա Արաստանի մէջ ցամաքի վրայ, Ռէտուդքալէ նաւահանգիստը ծովու վրայ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ

Ե Ի Ր Ո Պ Ա

260. ԵՒՐՈՊԱ աշխարհքիս ամենէն մշակած ու մարդաշատ մասը նոր քննութեանց նայելով՝ 180,000 քառակուսի մղոն է, 232 միլիոն բնակիչով. ըստ ինքեան մէկ մեծ թերակղզի մըն է, ինչու որ երեք կողմէն ծովով պատած է. արեւելքի կողմէն սահմանունի Միջերկրական ծովը, Արքիպելագոսը, Մարմարա ծովը, Սեւ ծովը, Ազախու ծովը, Ռւրալ լեռները եւ այլն, հարաւէն՝ Ատլանդեան, Միջերկրական ու Սեւ ծովերը, արեւմուտքէն՝ Ատլանդեան ծովը, ու հիւսիսէն՝ հիւսիսային սառնապատ ծովը: Աւրոպայի այսչափ յառաջանալը, մշակուիլը, հարստութիւնն ու զօրութիւնը շատ դարերէ ի վեր ըստ մեծի մասին իր առուտուրին վրայ հաստատուած է, երկայն ատենէ ի վեր աշխրջքիս մէկալ մասերուն վրայ իշխանութիւն ու ազդեցութիւն, ու անոնց գեղեցիկ, հարուստ ու պտղաբեր երկիրներուն մէջ տեղեր, կալուածներ ունի: — Աւրոպայի հարաւային կողմերը աւելի լեռնային, իսկ հիւսիսայինները աւելի դաշտային են: Իրեն ընտիր բերքերը երկրիս ուրիշ մասերէն առած, իր մէջը ընտանեցուցած է: Ասոնց վրայ ամէն մէկ մասին վրայ առանձին խօսած ատեննիս կը խօսինք:

Իսլոր Եւրոպան երկու կը բաժնուի արեւմտեան ու արեւելեան. առջինին մէջն են Լուսիտանիա (Բորգուկալ), Սպանիա, Գաղղիա, Հելլուեսիա (Չուիցցէ-

րի), Իտալիա, Գերմանիա, Հոլանտա, Բեղգիա (Պէլ-
ճիգա), Գանիա (Տանիմարգա), Նորուեգիա ու Սուե-
դիա, Անգղիայի տէրութիւնը. իսկ երկրորդին մէջն
են Ռուսաստան, Լեհաստան, Մաճառիստան, Տաճ-
կաստան, Յոնիական կղզիները ու Յունաստան :
Ասոնց վրայ մէկիկ մէկիկ սկսինք խօսելու :

261. I ՈՒՍԻՏԱՆԻԱ կամ ԲՈՐԴՈՒԿԱԼ : Աս թա-
ղաւորութիւնը 1933 թառակուսի մղոն է գրեթէ 4 մի-
լիոն բնակիչով : Հարաւէն ու արեւմուտքէն սահման
ունի Ատլանդեան ծովը, իսկ հիւսիսէն ու արեւելքէն՝
Սպանիան : Արկիրը թէպէտ լեռնային է ու աղէկ
գործուած չէ, ի վերայ այսր ամենայնի պաղաբեր է :
Հարաւային բերքեր հոս ալ աղէկ կը յաջողին, ինչ-
պէս բրինձ, գինի, հասարակ ու ազնիւ միրգ, շագա-
նակ, ձիթենի, արմաւ, անխոն, աղտոր (սոմաթ) եւ
այլն, ասոնցմէ գինին գլխաւոր առուտուրի մասն է,
որմէ շատ դուրս կը խրկէ. անասուն դարմանելու ու
սնուցանելու ու հանքերու կողմանէ ողորմելի է. աւելի
ձկնորսութիւնը անուանի է : Ղարաարութիւնը այն-
չափ գէշ չէ. Լիսապոնի ղէնքերու գործատուները,
Բորդալէկրին, Բալիլհանի ու Փունտաոյի չուխայի ու
բրգեայներու գործատուները, Լիսապոնի, Բորդոյի,
Գոիմպրայի, Պէյայի, Էսդրէմոսի, Չէրքալի ու Գալ-
տասի գորշաքարէ պնակ (չէնէ Բոպոթ) պատրաստելը,
Լիսապոնի ու Բորդոյի քթան գործելը եւ ուրիշ
ղանաղան բաներու, բարակ սապոնի, ապակեղէնի
արուեստանոցները շատ աղէկ ապրանքներ յառաջ կը
բերեն : Ատեն մը Բորդալիալի առուտուրը մեծ ու
ընդարձակ էր. բայց ուրիշ ազգերը իրենց աշխա-
տասէր, գործունեայ բնութեամբը ասոնք եկան ան-
ցան : Իրեն Լիսապոն մայրաքաղաքէն ետքը՝ որուն
ծովային առուտուրը շատ բանուկ է, գինիի առու-
տուին համար անուանի է Որորդոյ. անկից ետքը կու-
գան Կոիմպրա՝ Մոնտեոյ ղեաին քովը, Պրա, Պրա-
կանցա, Էվորա ու Գալիլրա ծովու քով : Ափրիկէի

Մէջ շատ երկիրներ ունի, նոյնպէս ալ Արեւելեան Հնդկաստանի մէջ (տես Հ. 256). ոսկիի ու ադամանակի կողմանէ հարուստ Պրասիլիան ձեռքէն կորսընցուց:

262. ՍՊԵՆՍԱ: Արեւելքէն սահման ունի Միջերկրական ծովը, հիւսիսէն՝ Գաղղիա ու Ատլանդեան ծովուն մէկ մասը, արեւմուտքէն՝ Ատլանդեան ծովն ու Բորդուկալը, իսկ հարաւէն՝ Բորդուկալն ու Միջերկրական ծովը: Բոլոր ընդարձակութիւնը 8500 քառակուսի մղոն է 14 միլիոն բնակիչով. մայրաքաղաքն է Մատրիտ որ 200,000 բնակիչ ունի: Արկիբը՝ որ թէ լեռնային է եւ թէ դաշտային, շատ բերրի է, եւ թէ որ աղէկ ջանքով գործուելու ըլլայ, հիմակուանէն տասնապատիկ աւելի բերք ու պտուղ կրնայ յառաջ բերել: Գլխաւոր բերքերն են առատ ու սքանչելի գինի, ու հարաւային երկիրներու բերքեր, այս ինքն բրինձ, եգիպտացորեան, ամէն տեսակ հասարակ ու ազնիւ միրգ, արմաւ, ձիթենի, պիստակ, եղջիւր (+էլի պոյն-ըն-ըն-), մազտաքէ կամ ձիւթ (սու-էլը), շաքարի եղէգ, աղտոր, անխոսն, ծխախոտ, քրքում եւ այլն: Նոս տեղաց ոչխարն ու անոր բարակ ու ազնիւ բուրդն ալ շատ յարգի է: Նանքերու կողմանէ գէշ չէ, մանաւանդ որ առատ անագ, սնդիկ ու երկաթ ունի. նաեւ ծծումբ, աղբորակ, պաղլեղ, արջասպ, ազնիւ քարեր, մարմարիոն, ու լնակիձ (սու-Ֆէր-Ֆէրէ): Արուեստներու ու ճարտարութեան կողմանէ շատ վար է. իր առջի ընդարձակ առուտուրը կորսընցուցած է: Ամերիկային գտնուելովը Սպանիա վազած անբաւ գանձերու ու հարստութեանց աղբիւրը՝ ալ հատաւ, ու երկիրը ահագին պարտքերու տակ ճնշուած է. Ամերիկայի մէջ ունեցած հարուստ կալուածները կորսընցուց, ու մնացած քանի մը կղզիները շատ քիչ բան կը բերեն: Սատրիտէն ետքը առուտուրի կողմանէ երեւելի քաղաքներն են Գատից, որ անուանի նաւահանգիստ ունի, Պարչելլոնա, Վալենչիա, Սեփիլլա ու Կիպրալգար: Աւրոպական

երկիրներ խրկած ապրանքներն են գինի ու օղի, եղ, բուրգ, նարինջ ու թուրինջ, կիտրոն, շամիչ, թուզ, նուշ, եւ ուրիշ պտուղներ, մետաքս, աղ, տնկաղ, սնկենի (Բաժնի մանդար), սունկ, աղկեր կամ հրձուկ (սարսէլա), մէրինողի ոչխար, Անտալուսիայի ձի: Իրեն գաղթականութիւններուն շատ կտաւ կը խաւրէ: Իսկ վաճառաբերութեան ապրանքներն են գաղթականաց ապրանքներ, ինչպէս հնդիկ նուշ, շաքար, խահուէ, գարիճենիկ եւ այլն, նաեւ արմաթ, շորցուցած ու աղած ձկեր, բարակ ու հասարակ շուխայ, կտաւ հիւսկէն ծոպ, բամբակէ ու մետաքսէ գործուածներ, նորաձեւութեան ապրանքներ, կանեփ, թուշուններ, աղած միս, կարագ, պանիր, շէնքի փայտ, երկաթ, անագ, պղինձ, աս մետաղներէն կահուց վերաբերեալ ապրանքներ, փայտէ գործուածներ, ապակեղէններ, ու շատ խոզ ու բեռնակիր անասուններ:

263. ԳԱՂՂԱ: Բնդարձակութիւնը 9400 եւ կէս քառակուսի մղոն է. մայրաքաղաքն է Փարիզ Սէն գետին քով մէկ միլիոն բնակիչով: Արեւելքի կողմանէ սահման ունի Գերմանիան, Հելլուէտիան ու Սարդինիան, հարաւէն՝ Միջերկրական ծովն ու Սպանիան, արեւմուտքէն՝ Ատլանտեան ծովը՝ որ հոստեղուանքը Ադուիտանեան ծով կ'անուանուի, իսկ հիւսիսէն՝ Գալէի անցքը, Մանչ ջրանցքը, Գերմանիան, ու Բեղգիան: Արկիրը առհասարակ բերրի ու պտղաբեր է, բայց ամէն տեղ աղէկ գործուած չէ: Արեք ծովերու քով աղէկ դիրք ունենալով, պէտք էր որ Գաղղիա մեծ վաճառական տէրութիւն ըլլար, եւ ստուգիւ իրօք ալ Անգղիայէն ետքը ինքը կու գայ: Իսկ որ երկրին մէջ շատ երկաթի ճամբաներ ու ջրանցքներ շինուած են, որոնցմով ներքին առուտուրը կը յառաջանայ, իսկ բազմաթիւ նաւահանգիստներու ձեռօք ծովային առուտուրը կը դիւրիննայ: Մշակութիւնն ու անասնաբուծութիւնը բոլորը մէկտեղ առնելով երեւելի բան մը չէ. զվսաւոր բերքն է տեսակ

տեսակ գինիներ (Պուրկուհուհայի, Շամբանեայի, եւ այլն), որոնցմով մեծ ու շահաբեր առուտուր կ'ըլլայ: Ասկից զատ Գաղղիայի մէջ յառաջ կու գան առատ արմտիք, եգիպտացորեան, գետնախնձոր, հասարակ ու ընտիր պտուղներ, շագանակի, նուշի, անտառներ, ձիթենի, աղտոր, անխոն, գինձ (+էշ-նէշ), մանանուխ, մատուտակ, քթան, կանեփ, ծխախոտ, գխտոր, տորոն, եւ ուրիշ ներկի նիւթեր: Արեւմտեան մէջ շատ արծաթ ու ոսկի շունի, ու գլխաւորաբար մետաղներ հանելու համար բաւական վայտ շունենալուն պատճառաւ, հանքահանութիւնն ալ մեծ բան մը չէ. առատ երկաթ ու հանքային ածուխ ունի: Իսպանիոյ Գաղղիա ճարտարութեան կողմանէ շատ երեւելի է. անթիւ անհամար գործատուներ կը բանեցընէ, մանաւանդ մետաքսի, բամբակի, կտաւի ու բրդեղէններու (չուխայի եւ այլն), նաեւ կաշիի, թղթի, կարմիրտակէ շաքար հանելու, յախճապակի, հայլի, ապակիի եւ ուրիշ անբաւ գործուածքներու: Նաեւ արուեստական գործուածներու մէջ ալ շատ յառաջ են Գաղղիացիք, մանաւանդ ոսկիով, արծաթով, աղնիւ քարերով ու մարգարտով գործուածներու մէջ, ու իրենց ոսկիէ ու արծաթէ բանուածները աշխարհքիս մէջ մէկ հատիկ են, իսկ իրենց քիմիական արուեստանոցները, եւ զարդի ու նորաձեւութեան ապրանքները՝ բոլոր քաղաքականացեալ աշխարհքիս օրինակ են: Գաղղիա իբրեւ վաճառական տէրութիւն բոլոր աշխրհքիս առուտուրին մասնակից է, ամէն երկիրներու եւ ազգերու յառաջ բերած բերքերն ու նիւթերը Գաղղիա կը մտնեն, կ'ելլեն: Մայրաքաղաքէն ետքը (ուր որ ամէն տեսակ ճարտարութիւնը կատարելութեան բարձր աստիճանի մը հասած է) կու գան Հավրը՝ Փարիզի նաւահանգիստը, Պորտոյ, Մարսիլիա, ուր արեւելքի հետ առուտուր կ'ըլլայ, Սէդ, Լիոն, Սէնդ - Էդիէն, Նանդ, Վէրսայլ, Սէնդ - Օմեր, Տէօնքէրք, Մէս,

Ռուան, Օրլէան, Սդրասպուր, Պոքէր, որոնք ճարտարութեան ու առուտուրին ծաղկելուն շատ օգնած են: Աս ամէն ճարտարութեան ու երկրի բերքերով Գաղղիա աղէկ առուտուր կ'ընէ: Ավաճառահանութեան նիւթերն են գինի, օղի, ծուկեր, ժապաւէններ, շուխայ, բամբակէ ու մետաքսէ ապրանքներ, կտաւ, ճերմակ ու գունաւոր թուղթ, գիրք, պղնձի վրայ փորուած պատկերներ, աշխարհացոյց տախտակ, կահ կարասիք, նորածեւութեան ապրանքներ, աղ, գործուած երկաթ, ոսկեզօծ ապրանքներ, ժամացոյց, յախճապակի, հայլի, խոյր, աղօրիքի քար ու ծխանելիք: Իսկ վաճառաբերութեան ապրանքներն են ձի, անասուն անգործ մետաքս, մոմ, մուշտակ, բամբակ, ծխախոտի թերթեր, գունաւորելու փայտեր, իւղ, երկաթ, անագ, կապար, պղինձ, արծաթ, ոսկի, ծծումբ, կորեակ, բուրդ, լեղակ, շաքար, խահուէ ու արմաթիք: Գաղղիա հիւսիսային Ամերիկայի, արեւմտեան Հնդկաստանի, հարաւային Ամերիկայի ու արեւելեան Հնդկաստանի մէջ ալ գաղթականութիւններ ունի, ու նոր ատեններս Ափրիկէի մէջ ստացաւ Ալճէրի, Օրան, Պոնա ու Կոնստանդին գաւառները:

264. ՀԵԼՈՒԵՏԻԱ (Ձուիցցերի): Աս հասարակապետութիւնը 873 քառակուսի մղոն տեղ է 2,200,000 բնակիչով, ու 23 ազատ տէրութիւն կամ նահանգ կը բաժնուի: Արեւմուտքի կողմանէ սահման ունի Գաղղիան, հարաւէն՝ Իտալիան, ու արեւելքէն ու հիւսիսէն՝ Գերմանիան: Իսլոր երկիրը շատաջուր ու լեռնային է, բայց շատ բերրի տեղեր ունի: Արկրագործութիւնն ու հանքահանութիւնը չափաւոր է, բայց անասնաբուծութիւնը, գործատանց ճարտարութիւնը եւ առուտուրը շատ երեւելի են: Թէպէտեւ շատ մեծ ու նաւագնացութեան յարմար գետ չունի, ու ծովեզերեայ ալ չէ, բայց գիրքը աղէկ է, ինչու որ Գաղղիայի, Իտալիայի ու Գերմանիայի մէջ տեղը կը գանուի, ու իր գործատուներուն ձեռքով իր առու-

տուրը շատ ընդարձակած է: Իր լճերուն մէջ շողե-
նաւեր կը բանին: Վրսի երկիրներ խրկած ապրանք-
ները գլխաւորաբար անասնոց, կարագի, պանիրի եւ
այլն բերքեր են, նաեւ գինի փայտ, տարազներ,
մետաքսէ գործուածներ, մետաքսէ ծոպեր, փայտե-
ղէն, թղթէ ու յարդէ շինուած ապրանքներ, ժա-
մացոյցներ, գոհարի ապրանքներ եւ այլն: Իսկ ներս
բերուածներն են արմախք, բրինձ, աղ, շորցուցած
ու աղած ձուկ, խահուէ, շաքար, տաք երկիրներու
պտուղներ, բամբակ, ներկի փայտեր, գիրք ու փա-
ռաւոր կահ կարասիք: Անցողական (transito) առու-
տուրը շատ մեծ է: Առուտուրի գլխաւոր քաղաք-
ներն են Լուցեոն, Շաֆհաւղէն, Սոլոգուոն, Ճինեւ-
րա, Պաղէլ, Չիւրիհ, Ս. Գաղղոս, Աբբէնցէլ, Պեոն,
Աարաւ, Չուոնախ, Նէօշաղէլ, Լոզան, Աիվի ու
Ֆրայպուրկ:

265. ԻՏԱԼԻԱ: Իտոլոր երկրին ընդարձակութիւնը
5850 քառակուսի մղոն է, ու 22 միլիոնէն աւելի
բնակիչ ունի: Հիւսիսէն սահման ունի Հելուէտիան
ու Գիրոլը, արեւելքէն՝ Լիւրիկէն ու Ադրիական ծովը,
հարաւէն ու արեւմուտքէն՝ Միջերկրական ծովն ու
Գաղղիան: Արկրագործութիւնն ու անասնաբուծու-
թիւնը հոս շատ ծաղկած է. գլխաւոր բերքերն են
առատ արմախք, մանաւանդ աղէկ ցորեն, եգիպ-
տացորեան, որ հացի համար շատ կը գործածուի,
բրինձ, ընդեղէն, ընտիր գինի, նուշ, թուզ, ձիթենի,
կիտրոն, լեմոն, թուրինջ, նուռ, արմաւ եւ այլն,
բամբակ, քթան, կանեփ, մատուցակ, քրքում,
շաքարի եղէգ, ծխախոտ, եւ այլն: Նաեւ աղուոր
ձի, ջորի, էշ, ամեն տեսակ հաւեղէն ու թռչուններ,
մետաքսի թրթուր, մեղու: Չուին ալ առատ է,
աղկեր եւ այլն, նաեւ բուստ ու ոստրէ: Թեպէտ ա-
ղէկ հանքեր ալ ունի, բայց աս մասը աղէկ չգործե-
լէն ետ մնացած է: Նարտարութեան մասին մէջ
Իտալացիք Գաղղիացիներէն, Անգղիացիներէն ու

Գերմանացիներէն եւս մնացած են, բայց ի վերայ
 այսր ամենայնի քանի մը երկիրներ կան, որ անոնց
 հետ ճարտարութեան կողմանէ կը մըցին, ինչպէս
 Լոմպարտեան Աննեաիկը: Աոյն իսկ Հռոմայի ու
 Նէապոլսոյ տէրութիւններուն մէջ, որոնք հասարակո-
 բէն գործատուներու փոյթ շտանելնուն համար կ'ամ-
 բաստանուին, անանկ երկիրներ կան, որոնք ճարտար-
 ութեան կողմանէ յառաջ գացած են: Առանց Լոմ-
 պարտիան ու Աննեաիկը մէջը առնելու, երեւելի են
 Գուրինի, Ճենովայի, Լուզզայի, Նաբոլիի, Բալեր-
 մոյի, Գադանիայի, Անգոնայի, Ֆիորենցայի, Բէզա-
 րոյի ու Պոլոնեայի մետաքսէ գործուածները, Ճե-
 նովայի սել թաւիչը, Բալերմոյի մետաքսէ ձեռ-
 նոցները, Նաբոլիի, Ճենովայի, Հռոմի ու Լուզզայի
 կաշիէ ձեռնոցները, Ճենովայի, Գուրինի, Պոլոնեայի,
 Հռոմի եւ ուրիշ քաղաքներու շինծու ծաղիկները,
 Ռիէզիի, Անգոնայի, Հռոմի, Ճենովայի աղաղելու
 գործատուները, Լուզզայի, Բէշիայի, Գոլլէի, Սեր-
 րավացցայի, Ճենովայի, Գուրինի թուղթը, Հռոմայի
 մազաղաթը, Ֆիորենցայի մրգողին (բողբոջ) ու
 շիգողաղը: Աոյնպէս այլեւայլ տեղերու եփած պտուղ-
 ներն ու անուշեղէնները, սապոնը, Նաբոլիի փողուկը
 (մախաւան), յարդէ շինած գլխարկնին, սուտ մար-
 գարիան ու միւսիոնները (մողայի քաները) շատ գովես-
 տով յիշատակելու արժանի են: Այլսաւոր գուրս
 խրկած ապրանքնին են անգործ մետաքս, իւղ, բրինձ,
 աղ, մետաքսէ ապրանքներ, հարաւային պտուղներ,
 գինի, ու վերը յիշած գործուածները, գեղեցիկ
 արուեստներու ու երաժշտութեան վերաբերեալ
 ապրանքներ, ինչպէս նկարուած պատկերներ, քան-
 դակներ, երաժշտութեան գործիքներ եւ այլն:
 Իսկ ներս մտած ապրանքներն են գաղթականութեան
 ու արեւելեան ապրանքներ, տարազներ, մկրատ,
 դանակ, եւ ուրիշ կարօցեղէններ, կտաւէ, բամբակէ
 ու բուրդէ գործուածներ, շուխայ եւ այլն:

Բողոք Իստալիան այլեւայլ տէրութիւններու կը բաժնուի, Ա. Սարգինիայի Թագաւորութիւն, Բ. Լոմպարտեան Աննեաիկի Թագաւորութիւն Աւստրիայի տակ, Գ. Բարմա, Դ. Մոսկնա, Ե. Մոնպրոյի Իշխանութիւն, Զ. Ս. Մարինոսի Հասարակապետութիւն, Է. Գոսկանայի մեծ դքսութիւն, Ը. Հոմայի տէրութիւն, Թ. Նաբոլիի ու Սիկիլիայի Թագաւորութիւնները, ու ժ. Մալդա կղզին՝ որ Անգղիայի տակ է: Ասոնց մէջ առուտուրի կողմանէ անուանի ու երեւելի քաղաքներն են, Գուրին Բոյ գետին քով, Նիցցա, Ճենովա իր համանուն ծովածոցին քով, Գալեարի, Բարմա, Բիալէնցա Բոյ գետին քովերը, Մոսկնա ջրանցքի մը քով, Լուզզա, Ֆիորէնցա ու Բիզա՝ Աննոյի քով, Սիէնա, Հոմ Տիբեր գետին քով, Բերուճիա համանուն ծովածոցին մօտ, Անգոնա, Փորլի, Ռավեննա, Պոլոնեա Ռենոսին քովը, Ֆերրարա Բոյին քովը, Նէապոլիս Տիւրենեան ծովին համանուն ծովածոցին քովը, Փոճճիա, Պարի ծովի քով, Բալէրմոյ՝ որ երկու նաւահանգիստ ունի, Մէսսինա Փարոսին քով, Գաղանիա ծովու քով, Գալաղանիսէզզա, Դրաբանի, Միլան՝ Օլոնա գետին քով, Աննեաիկ Ադրիական ծովուն քովը, Լիվոնոյ Տիւրենեան ծովուն քովը, Կալլիբոլի, եւ այլն: Ասեւ յիշատակելու արժանի են Իտալիայի քով եղած կղզիները Մալդա, իբրեւ միջավայր Միջերկրական ծովուն մէջ բանոյ շոգենաւներուն, Սարգինեա կղզին ու Քորսիքա՝ որ Գաղղիայի տէրութեան մաս կը սեպուի:

266. ԳՆԵՐՄԱՆԻԱ: Աս երկիրը, որ 11,600 քառակուսի մղոն ընդարձակութիւն ու 35 միլիոն բնակիչ ունի հարաւէն սահմանակից է Ադրիական ծովուն, Իտալիայի ու Հելուէաիայի, արեւմուտքէն՝ Գաղղիայի, Բեզիլիայի ու Հոլանտայի, հիւսիսէն՝ Հիւսիսային ծովուն, Տանիմարգային ու Պալդիկ ծովուն, իսկ արեւելքէն՝ Լէհաստանի, Մաճառիստանի ու Խոսուաթի

երկրին: Ա՞ երկիրը 1815ին խաղաղութեան դաշինքովը 39 ինքնիշխան ազատ տերութիւններու բաժնուած է, որոնց վրայ մէկիկ մէկիկ կը խօսինք:

Ա. ԱՒՍՏՐԻԱ: Ա՞ կայսերութեան գերմանական մասը 4578 քառակուսի մղոն ընդարձակութիւն, ու 12 միլիոն բնակիչ ունի. մայրաքաղաքն է Վիէննա Գանուբ գետին քովը 420,000 բնակիչով: Ա՞ մասին մէջն են, ու Գերմանիայի կը վերաբերին, Աւստրիայի արքիդքսութիւնը, Լիւրիկէի թագաւորութիւնը, Ստիրիայի դքսութիւնը, Թրեստի սահմանը, Գիրոլի կոմսութիւնը Փորալպէրկի երկիրով, Պոճեմիայի թագաւորութիւնը, Մորաւիայի սահմանակալ կոմսութիւնը աւստրիական Սիլեզիայով մէկտեղ: Ի՞նչ Աւստրիա գերմանական մասէն զատ ալ երկիրներ ունի, որ են Մաճառիստանի թագաւորութիւնը, Դրանսիլուանիայի կամ Առտեալի մեծ իշխանութիւնը, Ջինուորական սահմանները, Գաղմատիան ու Լոմպարտեան Աննեաիկի թագաւորութիւնը, Կալիցիայի թագաւորութիւնն ու Գրազաւը: Հատ պտղաբեր ու բերրի երկիրներ ունի, ու ընդհանրապէս գետինը աղէկ մշակուած է: Վլխաւոր բերքերն են արմախք, ամէն տեսակ ընդեղէն, միրգ, գինի, գայլուկ (գարեջուրի մէջ դործածուած խտր), կտաւ, կորեակ, քրքում («ֆրան»), ներկի սնկեր, շատ ատաղձ (+էրէ«է»), այրելու փայտ, ու շատ ծխախոտ ու քթախոտ: Նաեւ պաճարաբուծութիւնը (կենդանի սնուցանելը) շատ յառաջ գացած է, առատ խոտ ունենալուն համար՝ շատ եղ, ոչխար, այծ, խոզ ու իի յառաջ կը բերէ: Արեւելի են Պոճեմիայի փասեանները, սքանչելի են Ստիրիայի որձաանները (շուլֆէլը), ու Մորաւիայի սագերը. շերաս պահելը կամ մետաքսաբերութիւնը հարաւային կողմերը շատ յառաջ գացած է, մեղուաբուծութիւնը այնչափ երեւելի չէ: Անթիւ գետերէն, լճերէն ու Ադրիական ծովէն առատ ձուկ կը հանէ, ու գլխաւորաբար հրձուկ («բրէլ»),

Թիւնոս ($\frac{1}{2}$ լուսնոս), օձաձուկ, ոստրէ ու մեծ Թառափ
 (Տէրտէն). աղէկ հողացուած լեռները լսնոսկիէն կամ
 սպիտակ ոսկիէն ($\frac{1}{2}$ լուսնէն) զատ, առատ մետաղ կու
 տան, ինչպէս ոսկի, արծաթ, պղինձ, կապար, անագ,
 սնդիկ, երկաթ, հանքային ածուխ, աղ, հանքային
 ջուր, եւ պաղ ու տաք առողջութեան աղբիւրներ ալ:
 Աւստրիայի մէջ արուեստներն ու ճարտարութիւնը
 ծաղկած են, Թէպէտ ամէն արուեստները, բայց բամ-
 բակի, բուրդի, մետաքսի, կաշիի, Թղթի, մետաղ-
 ներու ու ապակիի գործատունները, արուեստական
 բանուածները, ու ծխախոտի, քթախոտի եւ շաքարի
 արուեստանոցները, ու մենքենագործութիւնը շատ
 յառաջացած են: Արեւելի են Պոհեմիայի, Մո-
 բաւիայի ու Սիլեզիայի կտաւը. Պոհեմիայի, Գիրոլի,
 Ստորին Աւստրիայի ու Աենեաիկի ծոպերը. Մորա-
 ւիայի, Պոհեմիայի ու Աւստիայի շուխան ու ասուի-
 ները. Ստորին Աւստրիայի, մանաւանդ Աիէննայի,
 Գիրոլի ու Լոմպարտեան Աենեաիկի Թագաւորութեան
 մետաքսէ գործուածները. Աիէննայի յախճապակի
 գործատունները. Պոհեմիայի ապակեղէնները՝ որ
 Անգղիացւոց ու Գաղղիացւոցը շատ կ'անցնին. Աենե-
 աիկի սուտ մարգարիտը. Պոհեմիայի, Մորաւիայի ու
 Աւստրիայի բամբակէ գործուածները. Ստիրիայի, Աիւ-
 ըիկէի, Աւստրիայի, Պոհեմիայի ու Մորաւիայի պող-
 պաակ ու երկրթէ գործուածները. Աւստրիայի, Աիւ-
 ըիկէի ու Պրեշիայի (Լոմպարտիայի մէջ) զէնքերը.
 Աիէննայի, Միլանի, Աենեաիկի ու Բրակայի ոսկի ու
 արծաթի ապրանքները. Ունկարիայի, Գրանտիլուա-
 նիայի, Վալիցիայի ու Ստիրիայի կաշի աղաղելը. Փիու-
 մէի, Լոմպարտեան վենեաիկի ու Ստորին Աւստրիայի
 Թուղթը. Աենեաիկի, Թրեստի, Աերոնայի, Տեպ-
 րեշենի ու Չեկեաինի սապոնը. Աիէննայի հողաթափ-
 ները, որոնցմէ շատը արեւելք կ'երթան: Աոյնպէս
 զանազան գաւանթերու մէջ փայտէ շինած գործքերը,
 Աիէննայի մեծ ժամացոյցն ու ճոճանակը, Թրեստի

ու Չարայի մրգօղին, Աենեաթիկի դաւառին յարդէ
 գլխարկները, Աիէննայի ու Աենեաթիկի գունաւորելու
 գործատունները եւ այլն: Աւստրիա այսչափ առատ
 բերք ունենալով, իր թէ ներքին եւ թէ արտաքին ա-
 ուուտուրը շատ մեծ է, բայց վերջի ատենները աւելի
 եւս մեծցաւ, ինչու որ խիստ մաքսի օրէնքները վեր-
 ցընելով, աղէկ ճամբաներ, երկաթի ճամբաներ շի-
 նելով, ու Էլլպա, Գանուբ, Մոլտաւ ու Բոյ գետե-
 րուն վրայ նաւագնացութիւնը ազատ թող տալով
 առուտուրը դիւրինցաւ ու կենդանացաւ: Օսովային
 առուտուրը կէս մը շոգենաւներու ձեռքով կ'ըլլայ,
 ու կէս մ'ալ թրեւսաի, Աենեաթիկի, Ֆիումէի ազատ
 նաւահանգիստներուն, ու Ռակուզա (Տօպրա Աէնե-
 աթիկ) եւ Չարա քաղաքներուն ձեռքով յաջող կ'եր-
 թայ: Իսկ ցամաքային առուտուրին կողմանէ երեւելի
 են աս քաղաքները, Աիէննա Գանուբ գետին քով,
 Բրակա Մոլտաւ գետին քով, Լէմպէրկ, Պրոտի,
 Արաց Մուր գետին քով, Չէմլին, Էօտէնպուրկ, Լայ-
 պախ՝ իր համանուն գետին քով, Գարլշդատ, Միլան
 ջրանցքի քով, Աենեաթիկ Ադրիական ծովուն ծովա-
 ծոցին վրայ, Գէմէշվար, Օլմիւց Մարշ գետին քով,
 Գրոբբաւ, Լինց Գանուբի վրայ, Պոզցէն Այսախ
 գետին վրայ, Թրեւսա Ադրիական ծովուն ափուն-
 քը: Աւճառահանութեան ապրանքներն են մետաքս
 բրդեաներ, բուրդ, կտաւ, բամբակէ ապրանքներ,
 ապակեղէնք, հողէ ամաններ, երկաթէ ու պողպատէ
 ապրանքներ, փայտ ու փայտէ շինած ապրանքներ,
 արմտիք, պղինձ ու պղնձի ապրանքներ, կապար,
 կարագ, արդար իւղ, պանիր, արծաթի ու ոսկի գոր-
 ծուածներ, հունտեր, ծխախոտ ու անասուններ: Իսկ
 վաճառարներութեան կը վերաբերին շաքար, անգործ
 բամբակ, խահուէ, ներկեր, մորթ ու կաշի, մուշտակ,
 արմտիք, հարաւային պտուղներ: Աս տէրութեան
 ուղեւորչութեան ու անցողական առուտուրն ալ ըն-
 դարձակ է:

Բ. ՊՐՈՒՍԻԱ : Ըս թագաւորութեան գերմանա-
կան մասը 3333 քառաքուսի միոն ընդարձակութիւն
ունի 11 միլիոն բնակիչով, մայրաքաղաքն է Պէրլին,
որ 350,000 բնակիչ ունի: Բողոք երկիրը այլեւայլ
գաւառներու բաժնուած է, որոնք են Պրանտեպուրկ,
Փոմերանիա, Սիլեզիա, Սաքսոնիա, Աեստֆալիա ու
Պրուսիական Ռենոսի կողմերը: Ըսոնցմէ զատ իրեն
տակն են Արեւմտեան Պրուսիա, Արեւելեան Պրուսիա,
Փողըն, (ու Նէօշադէլ,) որոնց մէջ $3\frac{1}{2}$ միլիոն բնակիչ
կայ: Պետինը գլխաւորաբար ցած տեղուանք գե-
տերու մօտերը շատ բերրի է, ամէն տեսակ տունկը կը
յաջողի, ու դուրս խրկելու յառաջ բերած նիւթերն
են, արմախք, ընդեղէններ, եղ հանելու հունտեր,
կորեակ, քթան, ներկի տնկեր, քիչ ծխախոտ, քիչ
գայլուկ, այլեւայլ տեսակ կանաչեղէն ու բանջարե-
ղէն, պտուղներ, պտղէ շինուած գինի, գինի, ու
փայտ: Պաճարաբուծութիւնը իրեն կարօտութիւնը
լեցընելու ալ շհասնիր, ի վերայ այսր ամենայնի վերջի
ժամանակները ոչխարներն ու ձիերը շատ աղնուացու-
ցին: Աւաներէն հանած հանքերն են քիչ ոսկի, ար-
ծաթ, պղինձ, խիստ շատ արուրաքար ($\text{-}\frac{1}{2}$ ԲԻ-ԲԻ-)
ու գինկ, կապար, երկաթ, երկաթի արջասպ, պաղ-
լեղ, կորալտ, զոռիկ, հանքային ածուխ, ասոնցմէ
զատ ունի նաեւ թխագոյն ածուխ ու այրելի հող,
նաեւ եփելու աղ, երկանաքար կամ աղօրեաց քարեր,
իսկ Արեւելեան կամ Պալդիկ ծովուն եղերքներէն
սաթ ($\text{+}\frac{1}{2}$ ԲԻ-ԲԻ) կը հանէ:

Պրուսիայի ճարտարութեան գլխաւոր մասունքն
են, բուրդի, բամբակի, կտաւի ու երկաթի գործա-
տունները, բայց մետաքսի, կաշիի, մոմլաթի (ճ-
շ-ճ-ճ), ծխախոտի, շաքարի, յախճապակի, մե-
տաղներու, ապակիի, տարրալուծական ու ներկի
արուեստանոցներէն շատ վաստակ ձեռք կը ձգէ. ունի
նաեւ օղիի, եղի ու վառօղի գործատուններ, որոնք
շատ շահ կը բերեն:

Պարտէն ներս մանող գլխաւոր ապրանքներն են նիւթավաճառներու ապրանքներ, գինի, ծխախոտի տերեւ, դեղավաճառի ապրանքներ, բամբակ, անգործ մետաքս, համեմեղէններ, գայլուկ, շաքարօղի (բոժ), ցքի, անասուն, մուշտակ, բորակ, անագ, սրնդիկ, մորթ, հարաւային միրգեր, կուպր, կաւաւատ (դէշէր Բ-ի-ո-մ-ն) եւ այլն, ու քանի մը արուեստական գործուածքներ: Աերքին առուտուրը շատ կենդանի է, ու սուրհանգակի կառքերուն վրայ եղած աղէկ կարգադրութիւններու, աղէկ շինուած ճամբաներու, երկաթի ճամբաներու ու ջրանցքներու ձեռքով շատ դիւրինցուցած է, մանաւանդ մօտաւոր երկիրներու հետ դրուած մաքսի գաշնադրութիւնն ալ ասոր շատ օգնած ու խիստ օգտակար եղած է: Պետերու վրայ եղած նաւագնացութեան, որն որ շոգենաւներու ձեռքով մեծցաւ ու ընդարձակեցաւ, հազարներով նաւեր կը գործածուին, ու առուտուրը կը դիւրինցընեն: Յամաքով դրսի երկիրներու, գլխաւորաբար Ռուսաստանի հետ եղած առուտուրը հիմակ յաւաջուան պէս կենդանի չէ, բայց ծովային առուտուրը օրէ օր աւելնալու ու ընդարձակելու վրայ է: Յամաքային առուտուրին կողմանէ երեւելի քաղաքներն են Պերլին մայրաքաղաքը, Շդէդդին Օտեր գետին քով, Տանցիկ Ապքսէլ գետին քով, Գէօնիկսպերկ Բրէկէլ գետին քով, Մէմէլ Պալդիկ ծովուն քով, Էլպինկ, Շդրալսունտ, Ֆրանգֆուրդ Օտեր գետին քով (տօնավաճառի քաղաք է), Պրէզլաւ, Մակտէպուրկ Էլպային մօտը, Վոլոնիա (Քէօլն) Ռենոսի քով, Էլպերֆերտ (ուր շատ արուեստանոցներ կան), Գրէֆէլտ, Աախէն, Էրֆուրդ (ուր շատ արուեստական պարտէզներու պարտէզպաններ կան), Միւնսդէր, Նաւմպուրկ ու Գրիէր: Իսկ ծովային առուտուրի կողմէն անուանի եղած քաղաքներն են Շդէդդին, Տանցիկ, Քէօնիկսպերկ, Բիլլաւ, Սվինէմիւնտէ, Գոլպերկ ու Շդրալսունտ:

Գ. ՊԵՒԻԷՐԱ: Ըս թագաւորութեան երկիրը 1390 քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի $4\frac{1}{2}$ միլիոն բնակիչով: Մայրաքաղաքն է Միւնչէն Իզար գետին քով, որ գրեթէ 100,000 բնակիչ ունի: Թէպէտեւ գետինը շատ բերրի է, ի վերայ այս ամենայնի այնչափ առատ բերք չբերեր, որչափ որ երկրագործութեան, այգիի ու ցորենի մշակութեան հողտանելով կրնար բերել: Արկրին յառաջ բերած պտուղներուն մէջ դուրս գացողներն են կարմրացորեան կամ ձաւար, ծխախոտ, գայլուկ, միրգ, գինի ու փայտ: Պաճարաբուծութիւնը երեւելի է, մանաւանդ ձիու, եղան ու խոզի կողմանէ, նաեւ ձկնորսութիւնն ալ գէշ չէ: Բովագործութիւնը գլխաւորաբար երկաթի, հանքային ածխոյ ու աղի կողմանէ երեւելի ու կենդանութեան մէջ է, բայց ուրիշ մետաղներէն մեծ բան մը չժողվեր. ամենէն աւելի շատ ելածն ու դուրս խրրկուածն է վիմագրութեան քար ու գրափիտ (graphite) որմէ կապարեայ գրիչ կը շինուի: Պաւիէրան արուեստանոցները շատցրնելու ու ծաղկեցրնելու դեռ հարկաւորութիւն ունի. հասարակ կտաւ ու շատ մանած դուրս կը խաւրէ: Վորդի հիւսուածը մանաւանդ միջակ տեսակներունը շատ երեւելի է, ու Գիրոլի բուռած աժան գորգերը շատ հեռու տեղուանք կը խաւրուին: Բամբակի գործատունները շատ են, ու շատ աղուոր գործուածներ յառաջ կը բերեն: Իսկ աղաղելու գործատանց ու թղթի աղօրիքներէն պատրաստուած ապրանքները ըստ մեծի մասին դրսի երկիրները կը խաւրուին, նմանապէս կողովները (տէքսթիլները) ու փայտէ շինուած խաղաղիկները: Իսկ ան աղէկ գարեջուր հանող արուեստանոցները երկրին շատ վաստակ կը բերեն, ինչու որ գարեջրին վաճառահանութիւնը տարուէ տարի շատ աւելնալու վրայ է: Ըսոնցմէ վար չեն մնար նաեւ յախճապակիի, ապակիի, կապարեայ գրչի արուեստանոցներն ու անոնց առոււտուրը: Պաւիէրայի արտաքիններուն հետ ու-

նեցած առուտուրը գլխաւորաբար Աւստրիայի (որուն հետ Գանուբ գետով կը կապուի), վերին Իտալիայի, Հելուէտիայի, Մայն գետին քովի Ֆրանգֆուրդին ու Սաքսոնիայի հետ է: Աւգոսպուրկ Պաւիէրայի առուտուրի քաղաքներէն ամենէն երեւելին է, ու Գերմանիայի եւ Իտալիայի մէջտեղը վաճառատեղի է: Վեղորայք ու գաղթականաց ապրանքները բոլոր Պաւիէրա նիւոնպերկէն կը տարածին. բայց Միւնհէն մայրաքաղաքն ալ ընդարձակ առուտուր ունի, նաեւ Ռէկէնսպուրկ, Քէմիդէն, Հոֆ, Պամպերկ, Աիւրցպուրկ, Փիւրթ եւ այլն: Բասսաւ Պաւիէրայի ազի առուտուրին վաճառատեղին է:

Գ. ԱՆՆՈՎԷՐ: Բոլոր երկրին ընդարձակութիւնը 700 քառակուսի մղոն է 1,800,000 բնակիչով. մայրաքաղաքն է Հաննովէր Այնէ գետին քով 35,000 բնակիչով: Հիւսիսային գերմանական ծովուն քովը աղէկ գիւրք ունենալով, իրեն ապահով ու հանգիստ նաւահանգիստներուն ու գետերուն պատճառաւ առուտուրն ալ յաջողութիւն գտած է: Աս երկրին վաստակը աւելի երկրագործութենէ է քան թէ արուեստներու ճարտարութենէն, անոր համար ալ Հաննովէրին դուրս հանած ապրանքներն են գլխաւորաբար միայն ցորեն, ընդեղէններ, շաղգամատակ (colza), շաղգամի եղ ու փայտ, մուրտ, գի (արդճ) ծառին հունտը, ձի, արջառ ու ոչխար, բուրդ, պանիր, կարագ, փայլունկ (բնիկ-դարձ), մեղր, մամ, այրելի հող, մանած, կտաւ, աղ, խեցեղէններ (շաշիկ չէ՛՛՛) եւ այլն: Իսկ վաճառարեւութեան գլխաւոր մասունքն ասոնք են, գաղթականաց ու գեղագործութեան ապրանքներ, ներկի նիւթեր, բարակ շուխայ, բամբակ, մետաքս, բարակ կտաւ, խաղալիկ, յախճապակի, ասպակեղէններ, նաւ շինելու փայտ, սնդիկ, գինի, շաքարօղի (բոճ), օղի, հանքային ջուր եւ այլն: Իր առուտուրը գլխաւորաբար ծովային է, որն որ Օսգֆրիսլանտ ամենէն աւելի է, ուր Իմաէն

ու Աէէր գլխաւոր վաճառատեղիներ են՝, առ տեղերէն
 ետքը կու գայ Աիւնէպուրկ, որն որ Համպուրկի գլխա-
 ւոր մթերանոց մըն է, ու ամենէն աւելի հոն կտաւի
 առուտուր կ'ըլլայ: Միւնտէն, Համէլն ու Պոտէն-
 վերտէր քաղաքներուն առուտուրն ու նաւագնացու-
 թիւնն ալ աղէկ է, նաեւ Հաննովեր, Յէլլէ ու Օսնա-
 պրիւք քաղաքներուն առուտուրն ալ ետ մնացած չէ:

Ե. ԱՒԻՐԻԷՄՊԷՐԿ: Աս թագաւորութեան եր-
 կրին մեծութիւնը 360 քառակուսի մղոն է 1,600,000
 բնակիչով. մայրաքաղաքն է Շդուդկարդ որ 36,000
 բնակիչ ունի: Արկիրը թէպէտեւ աւելի լեռնային է,
 քան թէ հարթ տափարակ, բայց բերրի է, ու եր-
 կրագործներուն ջանքովը բնակիչներուն սննդեանը
 բաւական պտուղ կը հասցընէ: Անոր համար ալ իր
 առուտուրին գլխաւոր մասունքը բնական բերքեր են,
 ու գլխաւորաբար գիրցուցած եղ, արմտիք (ցորենե-
 ղէն), ոչխարի բուրդ, գինի, միրգ, աղ. իսկ գործա-
 տուններու ապրանքներէն գլխաւորաբար կտաւէ ու
 բուրդէ գործուածներ ու կաշի դուրս կը խաւրուին:
 Վարձեալ երեւելի են կաշիէ գործուածները, թըղ-
 թարանները կամ թղթի գործատունները, ձէթի ա-
 ղօրիքն ու փայտի գործած ապրանքները, որոնց հա-
 ղարաւոր մարդիկ կը զբաղին, ու ասոնց պատճառաւ
 մեծ դումարով ստակ ներս կը մանէ: Աղի առուտուրը
 գլխաւորաբար Հոլանտայի հետ շատ մեծ է. նաեւ
 ամէն տարի անհնարին բազմութեամբ եղելին (շամ)
 ծառեր կը կտրեն, գետերու վրայ լաստեր շինելով
 Հոլանտա կը բերեն, ու հոն նաւագործութեան կը
 գործածուի: Ասկից զատ իր առուտուրը Նէքար,
 Գանուր գետերուն ու Պոտրնի լճին մէջ եղած նաւա-
 գնացութեամբ շատ կը դիւրիննայ, ու նաեւ արուես-
 տական ճամբաներուն ձեռօք, որոնց մաս ունին
 Շդուդկարդ, Հայլպրոն, Գալվ, Ուլմ, Գանշդատ ու
 Փրեգերիկոսի նաւահանգիստ ըսուած քաղաքները:
 Վրսէն կը բերուին գաղղիական գինիներ, հարաւային

երկիրներու պատուհներ, գաղթականաց, նիւթալա-
ճառի ու դեղագործի ապրանք, ձի, բարակ շուխայ,
բամբակէ գործուածներ, մետաքսեայ ապրանքներ,
երկաթ, պողպատ ու զարդի ապրանքներ:

Զ. ԱՆՔՍՈՒՆԻԱ: Աս թագաւորութեան բնակչաց
թիւը 1,650,000 հոգի է, որ միայն 27¹/₄ քառակու-
սի մղոն երկիր ունին. մայրաքաղաքնին է Տրեզտա
կամ Տրեզտէն 70,000 բնակիչով: Թէպէտեւ ասոր
ալ երկիրը աւելի լեռնային է քան թէ դաշտային, ի
վերայ այսր ամենայնի գետինը Վերմանիայի բերրի
ու պտղաբեր տեղերուն կարգն է: Աշակութիւնը
ամէն ջանքով յառաջացընելու կ'աշխատին տեղացիք-
իսկ պաճարաբուծութիւնը, մանաւանդ եզան ու ոչ-
խարի կողմանէ շատ անուանի է: Սաքսոնիայի ոչխար-
ները ամէն կողմ շատ յարգի են: Այնպէս բովազոր-
ծութիւնն ալ հոս բարձր աստիճանի մը հասած է,
ու դրեթէ ազը դուրս հանելով ամէն ծանօթ մետաղ-
ներէն ունի: Ատեւ արուեստներն ու ճարտարու-
թիւնը աս երկրիս մէջ շատ ծաղկած են, ու իրեն
գործատուներուն հարստութեանը Վերմանիայի եր-
կիրներէն մէկը չհասնիր: Քուրդէ ապրանքները, ոս-
տայնանկութեան ու մանելու գործատուները, քը-
թանէ լաթերը, զանկապանի ու անոր նման հիւսուած
ապրանքներու, շուխայի, կտաւի, մետաքսի ու թղթի
գործատուները շատ երեւելի են, եւ մետաքսինն
ու թղթինը դուրս հանելով շատ գործք ունին:
Անուանի ու յարգի են Սաքսոնիայի մէրինսսը, յախ-
ճապակին եւ բուրդը: Ապրանքները տեղէ տեղ փո-
խադրելու խիստ դիւրութիւն կու տան Արիսիայի (Ար-
փիսկայի) ու Տրեզտէնի, Արիսիայի ու Մագտէպուրկի
եւ Արիսիայի ու Պաւիերայի մէջ դրուած երկաթի ճամ-
բաները. ասոնցմէ դուրս ուրիշ արուեստական ճամ-
բաներ ալ կան, որ շատ օգուտ կ'ընեն: Սաքսոնիա իրեն
ձեծութեանը կողմանէ Վերմանիայի մէկալ թագաւո-
րութիւններէն շատ պզտիկ է, ի վերայ այսր ամենայնի

չորս ազատ քաղաքները այս ինքն Համագործակցության, Ախալցխի, Պրեմեն ու Ֆրանգֆուրդ գուբերնի հանելով, ամենէն մեծ ու ընդարձակ առուտուրը իրենն է. Ախալցխի քաղաքը գլխաւոր առուտուրի քաղաք է, ուստի ապրանքները վաճառականներուն ձեռք ամէն կողմ թէ ներսը եւ թէ գուբերնի կը տարածուին: Առուտուրի կողմանէ Ախալցխէն ետքը կու գայ Քէմնից, անկէ ետքը Տրեզան, Պաւլըն (կամ Պուտիսին), Յիդդաւ ու Բլաւէն (որ իր մանածի ու կտաւի առուտուրովը անուանի է), Ֆրայպերկ (որ իր բովազործութեամբը երեւելի է), Բիւնա, Շնէպերկ, Մայոսէն անուանի իր ազնիւ յախճապակիին համար: Յանձնարարութեան, անցողական ապրանքներու, ու ուղեւորչութեան առուտուրի գլխաւոր քաղաքներն են Ախալցխի, Տրեզան, Բիւնա, Յիդդաւ, Քէմնից եւ այլն: Ավաճառարեւութեան գլխաւոր ապրանքն են, ցորենեղէններ, գինի, օղի, ազնիւ ըմպելիք, աղ, փայտ, անգործ ծխախոտի տերեւ, կորեակ, արջառու ոչխար, ձի, մետաքս, սնդիկ, պղինձ, նիւթավաճառի ու գաղթականաց ապրանքներ:

Է. ՊԱՏՏՆԻ մեծ գրքութիւն: Ընդարձակութիւնը 280 քառակուսի մղոն է 1,300,000 բնակիչով. մայրաքաղաքն է Գարլարուհէ, որ 28,000 բնակիչ ունի: Աս գրքութիւնը աղէկ մշակուած, բերրի ու պտղաբեր երկիր մըն է: Արկրագործութենէ յառաջ եկած բերքերն են գլխաւորաբար կորեակ (որ Ռենոսի կորեակ անուամբ կը ճանչցուի), ծխախոտ, գայլուկ, տորոն, շաղգամատակ ու մեկոն (խշխշ), շատ մեկոնի իւղ, միրգ, գինի, փայտ, որմէ գետի վրայէն Հոլանտա շատ կը խաւրուի: Պաճարարութիւնն աղէկ է, ու հանքերն ալ առատ են: Արուեստներն ու ճարտարութիւնը գործատուներուն ձեռքով շատ յառաջ կ'երթան. երեւելի են գոհարեղէններու, փայտէ ժամացոյցներու, թղթի, քթախոտի ու կաշիի արուեստանոցները: Ասոնցմէ զատ նաեւ փայտէ ու

յարդեայ ապրանքներ ալ դուրս շատ կը խաւրուին : Իսկ ներս մտած գլխաւոր ապրանքները Վիւրդէմպերկինին նման են : Գլխաւոր քաղաքներն են Գարլսբուհէ, Ֆորցհայմ, Մաննհայմ, Հայտէլպերկ, Գոնսգանց կամ Գոսգանց :

Ը. ՄԷՔԼԷՆՊՈՒՐԿ ՇՎԵՐԻՆԻ ձեռ գըսութիւնը 228 քառակուսի մղոն տեղ է 500,000 բնակիչով, որուն մայրաքաղաքն է Շվէրին 18,500 բնակիչով : Շատ բերրի երկիր է, ու շատ փայտ ու ցորենեղէն դուրս կը խաւրէ : Պաճարաբուծութիւնը աղէկ վիճակի մէջ է, մանաւանդ ձիու կողմէն շատ երեւելի է. ձիու, գիրցուցած անասնոյ, կարագի, եղուտ սագի կուրծքի, դրշի, բուրդի ու ձուկի առուտուրը շատ մեծ է : Գուրս կը խրկուին գինի, նիւթավաճառի ու գաղթականաց ապրանքներ, աղ, հարաւային երկիրներու միրգ եւ այլն. բայց ասոնցմէ դուրս ելածէն աւելի ներս ալ կը բերուին : Ընուանի են աս քաղաքները Շվէրին, Ռոսգոք ու Վիամար :

Թ. ՄԷՔԼԷՆՊՈՒՐԿ ՇԻՐԷԼԻՑԻ ձեռ գըսութիւն : Արկիրին ընդարձակութիւնը 36 քառակուսի մղոն է, ու գրեթէ 100,000 բնակիչ ունի : Գետինը ըստ ամենայնի Շվէրինի նման է, ու նոյն բերքերու առատութիւնն ունի : Գլխաւոր քաղաքներն են Նոր ու Հին Շգրէլից, ու Նոր Պրանտեպուրկ : Ըռուտուրի գործքերը ամենէն աւելի նոր Պրանտեպուրկ ու Ֆիւրսգենպերկ կ'ըլան, ու Ռադցենպուրկ իշխանութիւնը ցորեն, փայտ, գայլուկ, քթախոտ, շատ կենդանիներ, ձի, մով, մեղր, ձիւթ, կուպր, անկաղ եւ այլն դուրս կը խաւրէ, որոնք ըստ ձեռի մասին Վիւպէք կ'երթան :

Ժ. ՀԷՍՍԷՆ - ՔԵՍՍԷԼԻ կայսրընտրութիւն : Ընդարձակութիւնը 203 քառակուսի մղոն է 700,000 բնակիչով, մայրաքաղաքն է Քասսէլ, Ֆուլտա գետին քով 36,000 բնակիչով : Արկիրը աղէկ մշակուած է. շատ արմտիք ու փայտ յառաջ կը բերէ, նաեւ գինի

ու միրգ, որ դուրս կը խաւրուին . միանգամայն շատ ալ մետաղ : Հաստէնի երկաթեայ ու պողպատեայ գործուածները շատ անուանի են : Հատ մանած ու կառ դուրս կը խաւրէ . իրեն շոր միրգն ալ շատ աղէկ է, մանաւանդ սալորը : Ասոնցմէ զատ Արոսալմէրոտին այրելի հողէն շինուած ապրանքները, նաեւ Ապամարի ու Շմալհայմի հանքային ջուրը շատ յարգի է : Իրեն անցողական ապրանքներու առուտունն ալ կենդանի է : Աւճառաբերութիւնը շատ մեծ է, գլխաւորաբար ան նիւթերը, որոնք քիչ մը յառաջ վերը նշանակեցինք : Ալխաւոր քաղաքներն են Քասսէլ, Հանաւ ու Ֆուլտա :

ԺԱ . ՀԵՍՍԷՆ - ՏԱՐՄՇՏԱՏԻ մեծ գքսութիւնը : Իսկոր մեծութիւնը 185 քառակուսի մղոն է 776,000 բնակիչով, մայրաքաղաքն է Տարմշդատ, որ 36,000 հողի բնակիչ ունի : Արկիրը բերրի է . գլխաւորաբար դուրս կը խաւրէ շատ արմախք, գինի, ընդոյզ, տորոն, տնկազ, կառք, ջնարակած թիթեղէ ապրանքներ, ձաւարի բարակ ալիւր, կորեակ, ընդեղէններ, շաղգամատակի, մեկոնի ու առուդտի հունտ, մեկոնի, ընդուղի, շաղգամատակի ու կտաւատի իւղ, դալար ու չորցած միրգ, մանած քթան, հասարակ կտաւ : Պաճարաբուծութիւնը ձիու ու ոչխարի կողմանէ երեւելի չէ, բայց եզան ու խոզի կողմանէ շատ աղէկ է : Հանքերէն միայն երկաթ ու պղինձ ունի, բայց առատ հանքային ածուխ, այրելի հող, տանիքներու սալաքար, բասալտ ու աղէկ խիճ ունի : Աւճառաբերութեան գլխաւոր ապրանքներն են գաղթականաց, նիւթավաճառի ու գեղագործութեան ապրանքներ, զարդի ու նորաձեւութեան ապրանքներ, զէնք, պղնձի քանդակներ եւ այլն : Արեւելի քաղաքներն են Տարմշդատ, Օֆֆէնպախ ու Մայնց :

ԺԲ . ՀՈՒՇՒՆՏԵՆ - ԼԱԻԷՆՊՈՒՐԿԻ գքսութիւնը : Ասիկա Տանիմարգայի գաւառ է, ու 175 քառակուսի մղոն տեղ է 470,000 բնակիչով, մայրաքաղաքն է

Ալիւքշդատ Էլլպա գետին քով 6000 բնակիչով . երեւելի է նաեւ Ռայեպուկ քաղաքը : Այրեւելի են իրեն ծովային առուտուրին երկու վաճառատեղիները , Ալգոնա Էլլպա գետին քով 30,000 բնակիչով ու Քիէլ Պալլիկ ծովուն քով 15,000 բնակիչով :

ԺԳ . ԱՆՏԵՆՊՈՒՐԿԻ մեծ դքսութիւնը : Առանտական դաւառ է 120 մղոն ընդարձակութեամբ , ու 318,000 բնակիչով . գլխաւոր քաղաքն է Ալիքսէնպուրկ Էլլգ գետին քով , որն որ 15,000 բնակիչ ունի :

ԺԴ . ՕՂՏԵՆՊՈՒՐԿԻ մեծ դքսութիւնը : 120 քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի 270,000 բնակիչով . մայրաքաղաքն է Օլտենպուրկ Հունդէ գետին քով : Թէպէտեւ Օլտենպուրկ Պալլիկ ծովուն քովը վաճառականութեան յարմար դիրք ունի , ի վերայ այսր ամենայնի դրսի հետ առուտուրը ոչինչ բան մըն է , ու նաւագնացութիւն միայն ծովեզերեայ տեղերը կ'ըլլայ : Աուրս հանած քիչ ապրանքներն են , շատ ձի , արջառ ու ոչխար , արմախք , կարագ , պանիր , ընդեղէն , խոզի ապուխտ , ճարպ , միսած օձաձուկ , փայտեայ ապրանքներ ու այրելի հող : Օլարմանալի է Պիրքէնֆէլտի իշխանութեան մէջ եղած քար յղկելը , ուր թէ ազնիւ եւ թէ կէս ազնիւ քարերը կը յղկեն ու այլեւայլ կերպով կը գործեն կը պատրաստեն : Առուտուրի գլխաւոր տեղերն են Օլտենպուրկ , Վիլտեսհաւզէն , Վարէլ ու Եէվէր :

ԺԵ . ԱՆՍՆԻ դքսութիւնը : Ընդարձակութիւնը 90 քառակուսի մղոն է 380,000 բնակիչով . մայրաքաղաքն է Վիսպատըն , որ 9000 բնակիչ ունի , ու մէկ աղուոր , բարեխառն ու հարուստ երկիր մըն է : Աուրս խրկած ապրանքներն են գինի , միրգի քաղցու , հանքային ջուր , քացախ , դալար ու շորցուցած միրգ , բուրդ , արջառ ու ոչխար , գեղմնոտայն (ֆնէլ), բրդէ զանկապան ու անոր նման հիւսած ապրանքներ , հաստ կտաւ , թուղթ , կաշի , մամ , մեղր , ալիւր , ձէթ , երկաթ ու ծխակալի կաւ (Էլ-Էլ Բոֆր-ը) :

Վիսպատրն այնչափ դործատուններով ու առուտու-
րով ծանօթ չէ, որչափ տաք բաղնիքներուն ձեռքով,
ուր ամէն տարի օտարականներ կը յաճախեն: Այր-
կրագործութիւնն ու հանքահանութիւնն ալ բաւա-
կան աղէկ վիճակի մէջ են:

ԺԶ. ՊՐԱՆՆՇՈՒԱՅԳԻ ԴՔՍՈՒԹԻՆԵՐ 73 քառակուսի
մղոն ընդարձակութիւն ունի 261,000 բնակիչով. մայ-
րաքաղաքն է Պրանշուայդ Օքէր գետին քով 38,000
բնակիչով: Այրկրագործութիւնը, անասնաբուծու-
թիւնն ու բովագործութիւնը ծաղկած են: Իսկ
արուեստի ճարտարութիւնը միայն կտաւ մանելու,
հիւսելու, աղաղելու, ջնարակած թիթեղէ ապրանք-
ներու, մենքենայով թուղթ պատրաստելու վրայ է:
Վուրս խրկած ապրանքներն են, արմտիք, շաղգամա-
տակ, բուրդ, կանեփ, մանած, կտաւ, կաշի, թուղթ
եղրգակի խահուէ, գայլուկ, շաղգամատակի, կտաւա-
տի իւղ, երկաթ, կապար, քարմարցանկ (Ֆորտէ-էնկ),
երկաթեղէն, ջնարակած ապրանքներ, փայտ ու խիճ:
Առուտուրը գլխաւորաբար Համպուրկի, Ալպէքի ու
Պրէմէնի հետ է, անկից նաեւ Մեծ Բրիտանիա, Սպա-
նիա ու բոլոր հիւսիսային Աւրոպա կը տարածուի:
Պրանշուայդ բոլոր առուտուրի միջավայր մըն է,
ամէն տարի երկու մեծ տօնավաճառ ունի, ուր շորս
միլիոն թաւերի ստակի շրջան կ'ըլլայ:

ԺԷ. ԺԸ. ԺԹ. Ի. ՍԱՔՍՄԵՆՆԵՐ փոքր տէրու-
թիւնները, այս ինքն Սաքսէն Վայմարի ու Սաքսէն
Մայնինկէնի մեծ դքսութիւնները, եւ Սաքսէն Գո-
պուրկ Կոդայի, ու Սաքսէն Ալդէնպուրկի դքսու-
թիւնները: Առջինը 68 քառակուսի մղոն ընդարձա-
կութիւն ունի 240,000 բնակիչով, երրորդը 43'
140,000 բնակիչով, երրորդը 38' 130,000 բնակիչով, ու
չորրորդը 24' 120,000 բնակիչով: Առջինին մայրա-
քաղաքն է Վայմար, երկրորդինը՝ Մայնինկէն, երրոր-
դինը՝ Գոթա ու չորրորդինը՝ Ալդէնպուրկ: Աղէկ բեր-
քեր ունին, ու անոնցմով ալ աղէկ առուտուր կ'ընեն:

ԻԱ. Ս շալտէքի, ԻԲ. ԻԳ. Երկու Ռայսներու,
 ԻԴ. Լիբբէ - Տեղամուկի, ԻԵ. Շաւենպուրկ - Լիբբէի,
 ԻԶ. Հոհենցոլլեոն - Սիկամարինկէնի, ԻԷ. Հոհենցոլլեոն - Հեհինկէնի, ԻԸ. Շվարցպուրկ - Ռուտտոլշդատի,
 ԻԹ. Շվարցպուրկ - Սոնտերսհաւզէնի իշխանութիւններուն. Լ. ԼԱ. ԼԲ. Անհալդ - Տեսսաւի, Անհալդ - Պեննպուրկի ու Անհալդ Քէդընի դքսութիւններուն,
 ԼԳ. Հեսսէն - Համպուրկի ու ԼԴ. Լիհտենշդայնի իշխանութեան վրայ գիտնալու բան չկայ. առուտուրնին գէշ վիճակի մէջ չէ:

ԼԵ. ՀԱՄՊՈՒՐԿ հանսէական ազատ քաղաքը 6 քառակուսի մղոն ընդարձակութեան վրայ 160,000 բնակիչ ունի, մայրաքաղաքն է Համպուրկ նաւելի Էլպային աջ կողմը ու Ալսդէրին բերանը, 135,000 բնակիչով, Էլպային բերնէն՝ որ Պալդիկ ծով կը թափի, 16 մղոն հեռու: Պերմանիայի երեւելի նաւահանգիստ ու վաճառատեղի է: Իրեն առուտուրին այնչափ ծաղկելուն պատճառը իր սքանչելի դիրքն է, որ թէ ներքին եւ թէ արտաքին առուտուրի համար շատ յարմար է: Համպուրկի առուտուրին գլխաւոր նիւթերը շատ տեսակ են, մէկ խօսքով ըսենք աշխրքիս վրայ եղած ամէն ազգերուն թէ բնական եւ թէ արուեստական բերքերը: Վաճառահանութեան նիւթերն են ամէն տեսակ արմախք եւ հունտ, փայտ, կտաւ, բուրդ, չուխայ, կաշի, ապակի, երկաթ, տորոն, կտրոցեղէններ, ու Պերմանիայի տարազազործութեան ու արուեստանոցներու ամէն ապրանքները: Իսկ վաճառաբերութեան նիւթերն են գաղթականաց ապրանքներ, Անգղիացւոց ճարտարութեան ու արուեստական ապրանքները, եւ ընդհանրապէս բոլոր առուտուրի մէջ եղած ազգերուն բերքերը: Իր դործատուններուն մէջ երեւելի է առագաստի լաթ շինող գործատունները, խարիսխ թափողները եւ այլն: 1619էն մինչեւ հիմա կեցած է Համպուրկի դրամասեղանը, որն որ Համպուրկին ստակի ու փոխանակազրի

գործքերը շատ կը դիւրինցընէ, եւ ծովու ապահովացուցմանց ընկերութիւնները քաղաքին ընդարձակ առուտուրը կենդանացընելու ու աւելի մեծցընելու շատ կ'օգնեն: Համպուրկ քաղաքը այլեւայլ նաւահանգիստներ ունի, որոնք իրեն շատ օգտակար են: 100էն աւելի սեպհական նաւ ունի, անոր համար ալ իր առուտուրը անչափ կրնայ անուանուիլ. ինչու որ միջինը առնելով՝ 2000 նաւ ամէն տարի կու գայ, այնչափ ալ կ'ելլէ: Նաեւ կէտ (պուլշա), փոկ կամ ծովային հորմ ու փայլունկ որսալու համար ալ շատ նաւեր կը խաւրէ:

ԼԶ. Պրեմէն հանսէական ազատ քաղաքը՝ Վեզեր գետին նաւելի կողմը, Համպուրկէն ետքը Գերմանիային երեւելի վաճառատեղին է: $4^{3/4}$ քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի 65,000 բնակիչով, դիտաւոր քաղաքն է Պրեմէն, որ աղէկ նաւահանգիստ ունի: Իրեն առուտուրն ու նաւագնացութիւնը շատ ծաղկած է, մանաւանդ Ամերիկայի Միաբանեալ նահանգաց հետ: Աճառահանութեան գլխաւոր նիւթերն են կտաւ ու արմափք. իսկ վաճառաբերութեանը՝ ամէն գաղթականաց ապրանքներ, գլխաւորաբար ծխախոտ ու խահուէ: Պրեմէն ունի շատ գարեջրոյ գործատուներ, աղէկ ընտանի անասուններ, ու գործատուներ, որոնց մէջ ամենէն աւելի երեւելի են քթախոտ ու ծխախոտի գլանիկ (շէկո) շինելու արուեստանոցները: Նստնցմէ զատ նաեւ բուրգէ ու մետաքսէ ապրանքներու տարազներ կան. գլխարկներ ու առագաստի լաթ ալ կը հանէ: Պինին Պրեմէնի առուտուրին գլխաւոր նիւթ է. հոստեղս յանձնարարութեան, ուղեւորչութեան, ապրանքներու առուտուրը յաճախ է, ու շատ դիտողութեան ձեռք զարնողներ կան:

ԼԷ. Լիթուէի հանսէական ազատ քաղաքը 6 քառակուսի մղոնին վրայ 54,000 բնակիչ ունի. Գրաւէ գետին քովը շինուած է Լիւպէք քաղաքը, որն որ

Գերմանիայի ու Պալդիկ ծովուն քովի երկիրներուն հետ եղած առուտուրին համար երեւելի է: Առուտուրը գիւրիներնելու համար ծովու եւ ուրիշ ապահովացուցմանց շատ ընկերութիւններ կան, նաեւ փոխանակագրեր կոտրելու ու փոխատուութեան արկղ մ'ալ կայ: Առուտատանը Գերմանիայի մէջ շուտով իրարու հետ հաղորդելու համար Աիւպէքի ու Բեդրուպուրի մէջ շոգենաւներու երթեւեկութիւն գրուած է: Աիւպէք գլխարկի, երաժշտական գործիքներու, կաշիի, մետաղէ ապրանքներու, քթախոտի, շաքարի, գործատուներ շատ կան, նաեւ նաւագործութիւն, ու թէ հիւսիսային եւ թէ արեւմտեան Ամերիկայի հետ մեծ առուտուր ունի: Աղէկ նաւահանգիստ մը ունի, գետի վրայ նաւագնացութիւնն ալ ծաղկած է, ու շոգենաւներու երթեւեկութեամբ Գորէնհակի հետ ալ կապուած է:

ԼԸ. ՊԻՐԱՆՔՓՈՒՐԴ Մայն գետին քով աղատ քաղաքը $4\frac{1}{2}$ քառակուսի մղոն ընդարձակութեան վրայ 66,000 հոգի բնակիչ ունի: Համանուն քաղաքը Մայն գետին նաւելի կողմն է, որն որ հոսկից ութը ժամ ետքը Ռենոս կը մանէ: Հատ մեծ հարստութիւն ունի, որն որ առուտուրով ու արուեստներու փութով ժողոված է: Թէպէտ եւ ասիկա աւելի առուտուրի տեղ է քան թէ գործատուներու, ի վերայ այսր ամենայնի քթախոտի, ներկելու, խաղու թղթի, մամլաթի, թղթէ գորգերու, յատակի գորգերու, ոսկեղէն ու արծաթեղէն ապրանքներու եւ ուրիշ շատ գործատուներ ունի, նաեւ գրավաճառութեան ու արուեստական գործուածներու առուտուրն ալ պրղտիկ բան չէ: Աղեւորչութեան գործքերը, փոխանակագրերով ու տէրութեանց թղթերով առուտուրը շատ ընդարձակ է, ու ամէն տարի հոս եղած տօնավաճառները Աիւսիսայիններէն ետքը Եւրոպային մէջ ամենէն հարուստ ու յաճախուած են: Հոս ալ Ռենոսի եւ ուրիշ գինիներու շատ մեծ առուտուր կ'ըլլայ:

Ֆրանգֆուրգ աս կողմէն ալ երեւելի է, որ Գերմանական միութեան կենդրոնն է, ու ազգային ժողովքը հոս կը ժողովի:

Գերմանիայի երեւելի տօնավաճառներն են Լիփսիայինները (3), Մայն գետին քովի Ֆրանգֆուրգինները (2), Օտեր գետին քովի Ֆրանգֆուրգինները (3), Պրաւնշուայգինները (2), Պրեսլաւինները (2): Աւաւհանգիստներն են, Ա. Հիւսիսային ծովուն քով՝ Համպուրկ, Ալդոնա, Պրեմէն ու Էմտէն. Բ. Արեւելեան (Պալդիկ) ծովուն քով՝ Մեմել, Քէօնիկապէրկ, Էլպինկ, Տանցիկ, Շգեդգին, Շգրալսունա, Ռոշգոք, Ախամար, Լիւպէք, Քիէլ. Գ. Ազրիական ծովուն քով՝ Թրեստ:

267. ՏԱՆԻՄԱՐԳԱ (Գանիա): Իսլանտա ու Ֆարոեր կղզիները մէկտեղ առնելով՝ 2700 քառակուսի մղոն մեծութիւն ունի 2,200,000 բնակիչով. մայրաքաղաքն է Քոբէնհաւ. Սունտէ գետին քովը, որ 125,000 բնակիչ ունի: Գերմանիայէն ստացուածք ունի Հոլշտայնի ու Լաւէնպուրկի դքսութիւնները. հիւսիսային Ամերիկա՝ Արոէնլանտիան, Արեւմտեան Հնդկաստան՝ Ս. Խաչ, Ս. Թովմաս ու Ս. Յովհաննէս. Ափրիկէ՝ Քրիստիանպորկ ու Ֆրէտերիկապորկ. Իսկ Արեւելեան Հնդկաստան՝ Թրանքէպար ու Սերամփուր կամ Ֆրէտերիկանակոր: Աշրկրագործութիւնը, անասնաբուծութիւնն ու ձկնորսութիւնը շատ յառաջացած է, բայց հանքերուն կողմանէ շատ սղորմելի է. բնակչացը երեքին երկուքը ասանկ գործքերու կը զբաղին, անոր համար ալ իրենց ճարտարութիւնն ու արուեստները գլխաւոր հագուստի ու տան պիտոյից վերաբերեալ բաներու վրայ է: Տանիմարգայի առուտուրը՝ իբրեւ ծովային տէրութեան, շատ մեծ է, ու գրեթէ ամէն ծովերու վրայ տարածուած է: Արուեստով գործուելու նիւթերէն գլխաւորաբար կաշի, աղուոր ձեռնոցներ, հիւսկէն ծոպ, շաքար ու ծխախոտ դուրս կը խաւրէ, ասոնցմէ զատ նաեւ ար-

Տօժիք, ձի, արջառ ու ոչխար, կարագ, պանիր, ճարպ, աղած միս, մորթ, ձկան ճարպ, փոկի մորթ, ձկան ոսկր, ձուկ, ոստրէ, կուպր, առագաստի լաթ, արոյրի ու երկաթի ապրանքներ: Իսկ ներս բերուած ապրանքներն են գաղթականաց ապրանքներ, գինի, հարաւային տաք երկիրներու միրգեր, անգործ մետաղ ու մետաղէ ապրանքներ, բարակ շուխայ, մետաքսէ ու բամբակէ ապրանքներ, նորածու լուծեան ապրանքներ, բուրդ, կորեակ, կանեփ, կտաւ, օղի, հանքային ածուխ եւ այլն: Արոէնլանտիայի ու Իսլանդիայի հետ եղած առուտուրը փոխանակութեան առուտուր է, ու գլխաւորաբար աս ապրանքներն են մուշտակի ապրանքներ, ձկան ճարպ, ձկան ոսկր, ճարպ, ոչխարի մորթ, ձողածուկ, Իսլանդիայի պրտու, ու ընդհանրապէս հիւսիսային երկիրներու բերքեր: Գլխաւոր երեւելի քաղաքներն են Քոփէնհագ, Հէլսինկէօր, Ալդոնա, Ֆլէնսպուրկ, Ալիքշդագ ու Քիէլ:

268. ՍՈՒԵԴԻԱ ՈՒ ՆՈՐՈՒԵԳԻԱ: Ըս թագաւորու թեան սահման է հարաւէն Պալդիկ ծովը, հարաւային արեւմուտքէն՝ Գադդէկագի ծոցը, արեւմուտքէն՝ Հիւսիսային ծովը, հիւսիսէն՝ սառնապատ ծովը, ու արեւելքէն՝ Ռուսաստանը, Պոթնեան ծոցն ու Պալդիկ ծովը: Իսլոր երկրին ընդարձակութիւնը 13,700 քառակուսի մղոն է 4,500,000 բնակիչով. Սուեդիայի թագաւորանիստ մայրաքաղաքն է Շդոքհոլմ Մէլարի ծովին քով շինած 85,000 բնակիչով, իսկ Նորուեգիայի գլխաւոր քաղաքն է Քրիստիանիա 28,000 բնակիչով, որ ծովային առուտուրի կողմէն անուանի է: Գետինը բարձր լեռներուն ու հիւսիսային պաղ օդին պատճառաւ բերրի չէ, արմաթ բաւական չունի, բայց պաճարաբուծութիւնը, ձկնորսութիւնն ու բովագործութիւնը շատ երեւելի է: Արկու թագաւորութեանց երկիրներուն գլխաւոր բերքերն են փայտ, ձուկ (գլխաւորաբար փայլունկ ու ձողածուկ), սարդիոն

($\frac{1}{2}$), ապազիոն, ահատ, պորփիր, սնդիկ, դու-
նաւորելու հող, թափշի հող, բորակ, արջասպ, ծը-
ծումբ, պաղլեղ, մազնէտ կամ մազնիս, բիւրեղ,
ոսկի, արծաթ, կապար, երկաթ ու պղինձ, որոնք
գետնին անպտղաբերութեան տեղ չափէն աւելի
կը լեցընեն, ու բոլոր աս երկրին հարստութեանը աղ-
բիւրներն են: Արուեստներն ու ճարտարութիւնը այն-
չափ ծաղկած չեն. ի վերայ այս ամենայնի ծովու
քով աղէկ դիրք ունենալով երկրէն հանած բերքերովը
մեծ ու ընդարձակ առուտուր կ'ընէ: Վուրս խրկած
ապրանքներն են երկաթ, պղինձ, արոյր, կոբալտ,
փայտ, ծառի կեղեւ, չորցուցած ու աղած ձկեր, նաւ
շինելու նիւթեր, կաշի, զանազան մուշտակէ ապ-
րանքներ, մարմարիոն եւ այլն: Իսկ ներս բերուած-
ներն են շաքար, ծխախոտ, ու գաղթականաց ապ-
րանքներ, արմտիք, աղ, գինի եւ այլն. իսկ օղի,
շաքարօղի (շոճ), որզօղի (բրնձէ հանուած օղի), ու
բամբակէ ապրանքներ ներս խոթելը արգելուած
է: Վլխաւոր ու առուտուրի կողմանէ երեւելի
քաղաքներն են Օրէպրոյ, Գարլշդատ, Փալուն,
Եէնգէբինկ, Քրիսդիանշդատ (ներսի կողմերը).
իսկ ծովեզերեայ տեղուանք Շդոջոլմ, Աոդէն-
պուրկ, Աէֆլէ, Նիգորինկ, Մալմէն, Գարլսգրո-
նա, Գալմար, Ախսպի, Գարլսհամ, Մարշդրանտ,
Հուտտիկալալ ու Հերնէսանտ: Վորուեգիայի մէջ
անուանի են Պէրկէն, Քրիսդիանիա մայրաքաղա-
քը, Տրամմէն, Լանկէսունտ, Քրիսդիանսանտ, Տրոն-
թայմ, Փրեատերիքշդատ, Արենտալ, Օսդեր-Ռուս-
սէէր, Լաւերվիգ ու Քէօնկսպէրկ: — Սուեդիայի
գաղթականութիւն է արեւմտեան Հնդկաստանի մէջ
Սուրբ Բարթոլոմէոս կղզին, որուն մէջ աղէկ բամ-
բակ կ'ելէ:

269. ԻՐԻՏԱՆԱԿԱՆ պետութիւն, կամ Անգղիայի,
Սկովտիայի ու Իրլանտիայի թագաւորութիւնները:
Ասիկայ Եւրոպայի մեծ ու հարուստ թագաւորու-

Թիւններէն մէկն է, ու առ իր հարստութիւնը բոլոր
 վաճառականութեան ձեռքով ժողոված է, ու բոլոր
 իր քաղաքական վարմունքն ալ վաճառականի վար-
 մունք է. 5516 քառակուսի մղոն ընդարձակութեան
 վրայ 27,000,000 բնակիչ, ունի Լոնտոն Անգլիայի
 մայրաքաղաքով, որն որ 1,900,000 բնակիչ ունի.
 Սկովտիայի մայրաքաղաքն է Էտտինպէօր 230,000
 բնակիչով, իսկ Երլանտայինը՝ Տէօպլին 250,000 բնա-
 կիչով: Վեաինը բաւական բերրի է, ու երկրագոր-
 ծութիւնը աղէկ յառաջանալով՝ բաւական մշակուած
 ալ է. գլխաւոր բերքերն են արմտիք, գետնախնձոր,
 թխան, կանեփ, քրքում, միրգ, գինի քիչ: Պա-
 ճարաբուծութիւնը, բայց մանաւանդ ձի աճեցրնելը
 շատ յառաջացած է, նոյնպէս ձկնորսութիւնը, բայց
 մանաւանդ ձողաձուկի, փայլունկի, կէտի. հան-
 քերը գլխաւորաբար երկաթի, անագի, պղնձի, կա-
 պարի, զինկի կողմէն առատ են, իսկ հանած հան-
 քային ածխոյն շափ չկայ: Արուեստներն ու ճարտա-
 րութիւնը անանկ բարձր աստիճան կատարելութեան
 մը հասած են, որ աշխրբքիս մէջ անոր դիմացը ելլող
 ու հաւասարող տեղ մը չկայ, եւ ասոր վրայ հաս-
 տատուած է Անգլիայի քաղաքական կողմէն ունեցած
 մեծութիւնը: Վամբակի, բուրդի, կտաւի ու մե-
 տաքսի տարազագործութեան գործատուները, կա-
 շիի, թղթի, մետաղներու, ապակիի, խեցեքարի կամ
 քարարդի (էկս-լէի կամ շիւի), ու թխախտաի ա-
 րուեստանոցները խիստ յառաջացած են. նաև
 նաւագործութեամբ ու մենքենագործութեամբ ալ
 Անգլիայիք ուրիշ ազգերէն վեր են: Անչպէս որ
 Անգլիան տարազագործ տէրութիւն է աշխրբքիս
 վրայ, ասանկ ալ աշխրբքիս մէջ առջի վաճառական
 տէրութիւնն է. իրեն դրած իմաստուն առուտուրի
 օրէնքները, մեծ հարստութիւնը, բնակիչներուն ար-
 տաքոյ կարգի գործունեայ բնութիւնը, դիտողու-
 թեան (-բէ+ա-լոցիւնի) անյազ բաղձանքը, ու իրենց

միարան ընդհանուրը յառաջացրնելու ունեցած մէկ միաբը մէկ գիտաւորութիւնը՝ ճարտարութիւնը շատ յառաջացուցին ու վաճառականութիւնը ծաղկեցուցին, ու շատ գիւրութեան միջոցներ հաստատելու պատճառ եղան, կ'ուզեմ ըսել դրամասեղաններու, ապահովացուցմանց ընկերութիւններու, ջրանցներու ու երկաթի ճամբաներու ընկերութեանց ու բաժանորդութեան թղթերու ընկերութեանց: Առուտուրի դործքերնին ու ձեռք զարկած բաներնին, որ աշխարհքիս ամէն կողմը կը տարածին, խիստ մեծ բաներ են. բոլոր ծովերու վրայ բանող նաւերնուն թիւը 28,000ի կը հասնի, որ 1500 միլիոն թաւերի շրջանի պատճառ կ'ըլլան: Ղուրս հանած ապրանքները գլխաւորաբար բամբակէ, բուրդէ, կտաւէ, կաշիէ, երկաթէ, պողպատէ ու մետաքսէ շինուած ապրանքներ են, նաեւ պղինձ, արոյր, զտած շաքար, ապակեղէններ, խեցեքար ու յախճապակի, թուղթ ու հանքային ածուխ ալ գուրս կը խաւրուին: Ասկ վաճառաբերութեան գլխաւոր մասունքն են շաքար, թէյ, բամբակ, քթան, կորեակ, բուրդ, պողպատ, երկաթ ու գաղթականաց ապրանքներ: Առուտուրի ու գործատուններու կողմանէ երեւելի եղած քաղաքներն են Ղոնտոն, Ախլորբուլ, Մանչէսթըր, Պէրմինկհէմ, Շէֆֆիլտ, Պրիստըլ, Էտաինպէօր, Ալէսգոյ ու Տէօպլին: Անգղիա ջրանցներու ու երկաթի ճամբաներու կողմէն ալ շատ հարուստ է, որոնք ներքին առուտուրին խիստ շատ գիւրութիւն կու տան ու բոլոր երկիրը կը կտրեն:

Իր գաղթականութիւնները, որոնց երկիրն ալ ամենաբերրի ու հարուստ երկիրներ են, աշխրեքիս ամէն կողմը կրնաս գտնել, եւ ուրիշ ամէն տէրութիւններու գաղթականութիւններէն շատ են: Հիւսիսային Ամերիկային մէջ ունին Բրիտանական Հիւսիսային Ամերիկան կամ Նոր Անգղիան. Արեւմտեան Հնդկաստանի մէջ Եամաիգան, ու մեծ ու պզտիկ Անտիլեան կղզիները.

Հարաւային Ամերիկա ալ շատ դաղթականներ, նաեւ Ափրիկէ ալ: Ասիայի մէջ գրեթէ բոլոր վերին Հնդկաստանը ու Ստորին Հնդկաստանին մէկ մասը իրենց ձեռքն է, որոնց ընդարձակութիւնը 82,660 քառակուսի մղոնի, ու բնակչաց թիւը 125 միլիոնի կը հասնի: Ասոնցմէ զատ Աւստրալիայի կամ Նոր Հոլանտայի բոլոր ծովեզերեայ տեղուանքը: Աւրոպայի մէջ ունի նաեւ Հելիոլանտ ու Մալդա կղզիները, ու Սպանիայի մէջ Աիպրալդարը: Առանց հակառակութեան Բրիտանացւոց առուտուրը բոլոր աշխարհքիս մէջ ամէն ազգերուն առուտուրէն ամենէն աւելի ընդարձակն է, ու ամէն ծովերուն վրայ կը տարածուի: Արուած առուտուրի ընկերութիւններուն մէջ, Արեւելեան Հնդկաստանի ընկերութեանը հաւասարը չկայ, ինչու որ թագաւորին վերին կառավարութեան տակ 27,563 քառակուսի մղոն ընդարձակութիւն ու 83,530,000 բնակիչ բաղմութիւն ունեցող տեղւոյ մը վրայ կը տիրէ, որն որ 12 միլիոն թալէր մուտք կը բերէ: ասկից զատ 144 հատ ալ պատերազմական նաւ կը պահէ: Անգղիայի առուտուրի երեւելի քաղաքներն ու տեղուանքն են բաց ի Լոնտոն մայրաքաղաքէն նաեւ Գենսինկդըն, Չէլսիա (Թէմս գետին քով), Գոլէտսդըր Գոլն գետին նաւելի կողմերը, Իբովիչ, Նորիչ Եար գետին քով, Եարմալթ Եարին բերանը, Քէմպրիժ Գամին քովը, Օքսֆորդ Իսիսի քով, Վորսդըր, Վարուիք, Պերմինկհէմ (գործատուններու երեւելի քաղաք), Նորթհամբդըն, Պէտֆորդ, Շրուսպուրի Սէվէոն գետին քով, Նոդդինկհէմ Քրէնդին քովը, Պոսդոն, Հուլ՝ Հուլ գետին քով, Լանգասդըր Լոնին գովը, Մանչէսդըր Իրուելին քով, Լիվըրբուլ Մէրսէյ գետին բերանը, Տուրհամ Վիհրին քով երկաթի մեծ կամուրջով, Նիւքեասսլ Թինի քով, Պերուիք Պուիտի քով, Գարլիսդէլ Էաէնի քով, Ռէտինկ Գէննէգի քով, Բորդամալթ եւ այլն: Ակովտիայի երեւելի առուտուրի քաղաքներն

են բաց ի Ետտինպէօր մայրաքաղաքէն նաեւ Ալեքս-
գոյ նաւահանգստի քով, Բէրթ Գայ գետին քով,
Էպրբաին հիւսիսային ծովուն քովը, Ինվէռնէս Մէս
գետին բերանը, Հէպրիտ կղզիները, Ս.քայ ու Ախուիս :
Իսկ Իրլանտայիներն են բաց ի Տէօպլին մայրաքա-
ղաքէն նաեւ Քիլքէննի, Տրոկէտա, Պէլֆէսդ, Լոն-
տոնտէրրի Կալուէյ, Էննիս, Քլոնէզ, Ուոդէրֆորա
ու Գորկ :

270 . ՍՏՈՐԻՆ ՆԱՀԱՆԳՔ կամ Հօլանտայի թա-
ղաւորութիւն : Ալեքսէնպուրկն ալ մէկտեղ առնե-
լով 650 քառաքուսի մղոն ընդարձակութիւն ունի
3 միլիոն բնակիչով : Մայրաքաղաքն է Ամստերտամ՝
Այ գետին ու Ամսդէլին քովը 250,000 բնակիչով :
Արկիբը թէպէտ դաշտային, հարթ ու ըստ մասին
ալ ճախճախուտ է, ի վերայ այսր ամենայնի բնակիչ-
ներուն ջանքովն աղէկ մշակուած բլլալով՝ շատ ալ
պտուղ կը բերէ : Պաճարաբուծութիւնն ու ձկնոր-
սութիւնը շատ երեւելի ու շահաբեր է, իսկ բովա-
գործութիւնը Ալեքսէնպուրկի դ.քսութենէն դուրս
բան չբերեր : Արուեստաներու ճարտարութիւնը միայն
կտաւի գործատուններուն, չուխայի, թղթի, քթա-
խտի ու քիմիական արուեստանոցներուն վրայ է :
Շատ երեւելի ու ընդարձակ առուտուր ունին
կաւէ ծխակալի գործատունները, ձէթի ու տորոնի
աղօրիքը, ու նաւանոցները (Բէր-նէները) : Թէպէտ
եւ 18երորդ դարուն վերջերը Հօլանտայի կամ Ստո-
րին նահանգաց առուտուրը աշխրբքիս վրայ ամենէն
երեւելին էր (Բաղդատէ 113 համարին հետ), բայց
Անգղիա եկաւ անիկա յաղթեց, ու գլխաւորաբար
(1830ին) Բեղգիային իրմէ բաժնուելովը՝ ընդարձա-
կութիւնն ու երեւելութիւնը կորօրնցուց . բայց հիմա
կամաց կամաց դարձեալ կը սկսի ծաղկիլ, ու աշ-
խրբքիս ամէն կողմը կը տարածուի, թէ իր ապրանք-
ներուն եւ թէ յանձնարարութեանց, ուղեւորչու-
թեանց, փոխանակագրերու ու ապահովացուցմանց

առուտութիւնը : Հողանտայիք վաճառական ծնած են : Ա՛յ՛ վաճառահանութեան վերաբերեալ գլխաւոր ապրանքներն են երկրին ամէն բերքերը , Հողանտային ու Գերմանիային բոլոր ճարտարութեան ու արուեստական ապրանքները . իսկ վաճառաբերութիւնը գաղթականաց ապրանքներու վրայ է : Հողանտայի գլխաւոր առուտորի քաղաքներն են իր մայրաքաղաքէն զատ , Հարլէմ համանուն ծովին քով , Ռոդդերտամ՝ Մէրվէցին քովը , Տորդրէհդ , Ախտէլպուրկ , Ալխսինկէն , Ուդրէհդ , Այվարտէն , Յիլլը , Տէվէնդեր , Արէօնինկէն , Անհայմ , Նիմվէկէն , Հերցոկէնպուշ , Մասդրիխդ : Հողանտան՝ արեւմտեան Հնդկաստանի , հարաւային Ամերիկայի , Ափրիկէի , Աուստրալիոսկէղէն ծովեզերքը , ու արեւելեան Հընդկաստանի մէջ գաղթականութիւններ ունի , որոնց մէջ մեծ ու անուանի ու ծաղկած է Եւալա կղզին Բատաւիա մայրաքաղաքովը :

271. ԲՆԵՂԳԻԱ : Բնեղղիացիք 1830ին ապստամբելով՝ Հողանտայէն զատուեցան ու առանձին անկախ թագաւորութիւն մը հաստատեցին , որուն ընդարձակութիւնը 544 քառակուսի մղոն է $4\frac{1}{2}$ միլիան բնակիչով . թագաւորանիստ մայրաքաղաքն է Պրիւսսէլ , Սէնն գետին քով 130,000 բնակիչով : Բոլոր երկիրը ջրանցքներով ու երկաթի ճամբաներով լեցուն է , ու ըստ մեծի մասին առատ , պտղաբեր գետին ունի . պաճարաբուծութեան մէջ Հողանտայէն ետ է , բայց ասոր տեղը կը լեցընեն հանքերը , որ մանաւանդ առատ երկաթ ու հանքային ածուխ կու տան : Բոլոր երկրին խիստ մեծ շահ կը բերէ արուեստներու ճարտարութիւնը , որ գլխաւորաբար կտաւի , բուրդի , բամբակի տարազներուն ու կաշիէ գործուածքներուն մէջ շատ յառաջացած է . նաեւ մետաղի գործատուներն ալ շատ ծաղկած են : Յարդի են Պրապանդեան հիւսկէն ծուկերը , Պրիւսսէլի կառքերն ու փառաւորութեան շատ ապրանք-

ները : Թէպէտ Յեզգիա Հոլանտային նման իր առու-
տուրին կողմանէ շատ դժբախտութիւններ քաշեց ,
այսու ամենայնիւ նոր ատեններս շատ ծաղկեցաւ
• ու առուտուրն ալ յառաջացաւ , ինչու որ արուեստ-
ներն ու ճարտարութիւնը յառաջացրնելու ու առու-
տուրը ծաղկեցրնելու միաբան ջանքն ու աշխատու-
թիւնը խիստ մեծ օգուտ ըրին ու յառաջացման
պատճառ եղան : Ալխաւորաբար դուրս խրկած ա-
պրանքներն են բաց ի վերը ըսած տարազներէն նաեւ
արմաթ , հունտեր , զէնք , շոգեշարժ մենքենաներ
ու հանքային ածուխ . իսկ ասոնց տեղը ներս բերած-
ներն են գաղթականաց ապրանքներ , բուրդ , բամ-
բակ ու դինի : Արիւստէլէն ետքը , առուտուրի
երեւելի քաղաքներն են Անդուերբիա Շէլտէին քով ,
Կէնդ Լէզ գետին Շէլտէ մտած տեղը , Արիւկկ ,
Ջրանցքներու քով , Օսդենտէ ծովու քով , Մոնս'
Ջրանցքներու քով , Նամիւր՝ Սամպրը գետին Մասս
մտած տեղը , Լիւզդիհ ու Լէօվէն :

272 . ՅՈՒՆԵԿԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ , որոնց ընդարձակու-
թիւնը 46 քառակուսի մղոն է , 180,000 բնակի-
չով : Ետնք Միջերկրական ծովուն մէջ Ալպանիային ,
Եպիւռոսին ու Մոռային մէջ տեղը կ'իյնան . ու Անդ-
ղիայի պաշտպանութեան տակ ազատ տէրութիւն , այս
ինքն հասարակապետութիւն մը կը կազմեն . ամենէն
մեծն ու գլխաւորն է Գորֆու , որն որ ազատ նաւա-
հանգիստ ունի , անկէ ետքը կու գան կարգաւ Բաք-
սոյ , Սանդա Մաւրա , Քեֆալոնիա , Չանդա , Թիաքի
(հին Իթակէն) ու Չեռիդոյ որ տաճկերէն Չուխա ա-
տասը կ'ըսուի : Արիւրին գլխաւոր բերքը ըստ մեծի
մասին հարաւային պտուղներն են , իսկ բնակիչները
աւելի նաւուղղութեան ու առուտուրի զբաղած են .
օտար երկիրներ կերթան ձէթ , կորընթոսի շամիչն
ու դինի :

273 . ՅՈՒՆԵՍՏԱՆ : Յոյները քանի մը տարի
Տաճկէն ապստամբ կենալէն ետքը՝ վերջապէս 1830ին

ազատ ազգ եղան ու տէրութիւն մը հաստատեցին, որուն ընդարձակութիւնը 987 ³/₄ քառակուսի մղոն է գրեթէ 1 միլիոն բնակիչով: Աս թագաւորութեան սահման է հիւսիսէն Տաճկի Եւրոպան, արեւմուտքէն՝ նոյն երկիրն ու Յոնիական ծովը, հարաւէն՝ Միջերկրական ծովը ու արեւելքէն՝ Արքիպելագոսը: Մայրաքաղաքն է Աթէնք, որ 16,000 բնակիչ ունի: Արկիրին բերքերն են ձէթ, բամբակ, լեմոն, նարինջ, թուրինջ, թուխ, նուշ, մազտաքէ ու գղթոր: Պաճարաբուծութիւնն ու բովազործութիւնը ողորմելի վիճակի մէջ են, նոյնպէս արուեստներն ու ճարտարութիւնը, միայն Յոյները ի բնէ նաւորդութեան սէր մը ունենալով, նաւազործութիւնը քիչ մը մէջերնին յառաջացած է: Առուտուրնին գլխաւորաբար Եւրոպային հետ է, ու անիկայ ալ փոխանակութեան առուտուր է, այս ինքն Եւրոպա Յունաստանէն առած գինիին, ձէթին, միրգին տեղ, անոնց ցորենի ու հագնելու ու տան հարկաւոր ապրանքները կու տայ: Ապրանք իջեցրնելու տեղերն են Բադրաս, Սիրա, Հիտրա, Նաւփլիա, Նափարին, Գալամադա, Սալոնա, Կալլաքոսիա ու Միսսոլունկի:

274. ՏԱՃԿԻ ԵՒՐՈՊԱ: Աս երկիրը արեւելքէն սահման ունի Ռուսաստանը, Սեւ ծովը, Կոստանդնուպոլսոյ նեղուցը, Մարմարա ծովը, Կելիպոլուի կիրճն ու Արքիպելագոսը, հարաւէն՝ Արքիպելագոսն ու Յունաստանը, արեւմուտքէն՝ Յոնիական ու Ագրիական ծովերը, ու հիւսիսէն՝ Մաճառիստանը, Առտեալն ու Պուզովինան: Ընդարձակութիւնը 8632 քառակուսի մղոն է 9 միլիոն բնակիչով. մայրաքաղաքն է Կոստանդնուպոլիս Բոսպորոսի քով, որ 800,000 բնակիչ ունի: Աս երկիրը շատ պտղաբեր ու բերրի երկիր է, տարակոյս չկայ որ եթէ աղէկ մշակուէր, Եւրոպայի երկիրներուն մէջ ամենէն աւելի բերրին ու առատ երկիրը կ'ըլլար: Այսու ամենայնիւ անբաւ բերքեր ունի. գլխաւորներն են եգիպտացո-

րեն, բամբակ, ծխախոտ, ձէթ, դինի, մազտաքէ ու
 փայտ, հարաւային (տաք երկիրներու) պտուղներ,
 խիժեր ու ամփոն եւ այլն: Պաճարաբուծութիւնը գէշ
 չէ. անուանի է Տաճկի ձին, նաեւ ունի ուղտ, էշ,
 ջորի, դմակաւոր ու բարակ բրդով ոչխար, այծ,
 խոզ, եւ այլն: Հանքերն ալ առատ են, բայց հա-
 նող շատ չկայ, անոր համար ալ բովադործութիւնը
 յառաջ գացած չէ: Թէպէտեւ ընդհանրապէս խօ-
 սելով Տաճկաստանի մէջ արուեստներն ու ճարտա-
 բուծութիւնը դեռ Եւրոպայի մէկալ կողմերուն կատարե-
 լութիւնը չունին, ի վերայ այսր ամենայնի իրենց
 մէջ աղաղելու արուեստը, ներկոցները կամ տորոնով
 ներկելու դործատունները, զէնքերը, պողպատէ դոր-
 ծուածները, մետաքսի, բամբակի ու բուրդէ հիւ-
 սուածները, ծովափրփուր (խֆֆէ) կտրելը, ու վարդի
 իւղ պատրաստելը շատ մեծ կատարելութեան հա-
 սած են, ու ամէն տեղ անուն ունին: Ներքին ա-
 ռուտուրը պզտիկ է. իսկ դրսի առուտուրը թէ-
 պէտ աւելի օտարականներուն ձեռքն է, բայց Տաճ-
 կաստանի համար շատ օգտակար է, ինչու որ եր-
 կրին անգործ բերքերուն դիմացը եւրոպացի տարազ-
 ներ ու արուեստանոցներու ապրանքներ կ'առնու
 կամ թէ ըսենք փոխանակութիւն կ'ընէ: Առս-
 տանդինուպոլսէն ետքը առուտուրի կողմանէ երեւե-
 լի են Էաիրնէ (Ադրիանուպոլիս) Մերիճ գետին քո-
 վը, Սելիմնա (Իզմէնիյէ), Ուզունձովա, Կելիպոլու,
 որ նաւահանգիստ ալ ունի, Սելանիկ (Թեսաղոնիկէ)
 համանուն ծովածոցին քով, Սէվէս ու Օրֆանոյ
 (Մակեդոնիայի մէջ), Եէնիշէհիր (Թեսաղոնիայի
 մէջ), Սոֆիա, Շումլա, Սիլիստրէ Գանուբ գետին
 քով, Առնա Սեւ ծովուն քով Պուլիարիայի մէջ,
 Եանինա համանուն ծովին քով, Էնսս Եգէացոց
 ծովածոցը, Պոսնա-Սերաի Պոսնայի քով, Պանեա-
 լուգա (երկուքն ալ Պոսնիայի մէջ), Եաշ (Մոլտա-
 ւիայի մայրաքաղաքը), ու Կալաս Գանուբի քով

(Մոլտաւիայի մէջ), Պուզրէշտ (Վալաքիայի մայրաքաղաքը, ու Տաճկաստանի Գանտիա ու Գանէա կղզիները :

275. ՈՒՌՍԻ կայսրութիւն : Աս մեծ ու ահագին երկիրը, որ գրեթէ 375,000 քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի, միայն 55 միլիոն բնակիչ ունի : Ռուսի Ասիային վրայ վերը բաւական խօսեցանք, հիմա գանք Ռուսի Եւրոպային կամ Եւրոպէական Ռուսաստանի վրայ : Արեւմուտքէն սահման ունի Նորուեգիան, Սուեդիան, Պոթնեան ծովածոցը Պալդիկ ծովը, Պրուսիայի ու Աւստրիայի երկիրն ու Տաճկաստանը, հարաւէն՝ Կալիցիան, Տաճկաստանը, Գանուբ գետը, Սեւ ծովը, Ազախու ծովն ու Տոն գետը, արեւելքէն՝ Ռւրալ լեռները կամ Ռուսի Ասիան, ու հիւսիսէն Սառուցեալ ծովը : Իր ահագին մեծութեանը մէջ այլեւայլ բերքեր ունի, որոնցմով աղէկ առուտուր կ'ընէ : Գետինը ընդհանրապէս բերրի է. հարաւային կողմերը կ'ելլէ ցորեն, կտաւ ու կորեակ, կտաւատի հունտ, գայլուկ, գինի, փայտ, ընդեզէններ եւ այլն : Պաճարաբուծութիւնը շատ երեւելի է, բայց գլխաւորաբար ոչխարը, եղը, ձին ու խոզը : Մետաքսի ու մեղուի կողմանէ ալ առատ է. Սիպերիայէն սամոյրի, աղուէսի ու ջրային սամոյրի մորթ, շատ ընտանի ու վայրի թռչուններ կ'առնու : Նաեւ ձկնորսութեան կողմանէ ալ առատ բերք ունի մանաւանդ կէտ, ծովացուլ (morse), ծովի շուն, ձողաձուկ, թառափ (Ռըսի) ու փայլունկ : Ղեռները սսկի, լնոսկի կամ սպիտակ սսկի, արծաթ, պղինձ, աղ եւ ուրիշ շատ օգտակար ու շահաբեր մետաղներ կու տան : Արուեստներն ու ճարտարութիւնը տարուէ տարի ծաղկելու վրայ են. բրդի, բամբակի, մետաքսի, կտաւի, կաշիի, մետաղներու ու թղթի արուեստանոցներ շատ ունի. սապոնը, ճրագուն ու ճրագը դրսի երկիրներու հետ բրած առուտուրին գլխաւոր մասունքներն են : Վարսէն ներս մտած ապրանքները

գլխաւորաբար են գաղթականաց ապրանքներ, բամբակ, բամբակէ մանած, թէյ, անգործ մետաքս, գինի, ձէթ, ներկելու նիւթեր, բարակ կտաւ, տարազներ, հանգէսի, նորաձեւութեան ապրանքներ, կտրոցեղէններու ու ակնագործի ապրանքներ, ու յախճապակի: Իսկ վաճառահանութեան ապրանքներն են արմախք, ճրագուն, քթան, կորեակ ու ալիւր, երկաթ, պղինձ, կտաւատ, շէնքի փայտ, խոզանաստեւ (խոզի մաղ), մոմ, կաշի, առագաստի (էէլէէնի) լաթ, անկաղ, կուպր, վառելու եղ, մուշտակ եւ այլն: Փեղրուպուրի՝ Պեարոս մեծին շինած քաղաքը, որ 500,000 բնակիչ ունի, բոլոր Ռուսաց կայսրութեան առուտուրին կենդրոն, ու Եւրոպայի գեղեցիկ ու մեծ քաղաքներէն մէկն է ու իր գործատուններովը շատ երեւելի է. անկից ետքը կու գայ Մոսկաւ բոլոր տէրութեան մէջ ամենէն մեծ, բազմամարդ ու ճարտարութեամբ երեւելի քաղաքը, որ ցամաքային առուտուրին միջավայրն է. նոյնպէս Նիշնէի՝ Նովիկորոս քաղաքը Օքա գետին Վոլկա թափած տեղը, որուն տօնավաճառը աշխարհքիս մէջ ամենէն մեծն է: Ասոնցմէ ետքը կու գան Գալուկա Օգա գետին քով, Օրէնպուրի՝ Սաքմարային Ուրալ գետը թափած տեղը, Քուրսկ, Վոլոկատ, Քերսոն կամ Նիկողայեւ Տնեբերի քով, Դուլա՝ Ուփայի քով, Ռեոգեուք Աէլէքի, Աիլա, Եուքսպուրի, Սամարա՝ Սամարա գետին Վոլկա մանելու տեղը, Դրոբէց, Ռոսդով, Քիէվ՝ Տնեբերի քով, Նէշին, Տուպնոյ՝ Իրվաֆիլ քով, Պերախէվ եւ այլն: Իբրեւ առուտուրի նաւահանգիստ եղած են, Գրոնշդատ Փեղրուպուրիի բուն նաւահանգիստէն ետքը, Ռիկա՝ Լիֆլանտի մայրաքաղաքը Տիւնայի քով, Ապոյ՝ Ֆիննլանտի մայրաքաղաքը, Պիոսնէպորի, Հէլսինկիֆորս, Ռէվալ Էսդլանտի մայրաքաղաքը Պալդիկ ծովուն քով, Բեռնաւ, Լիպաւ, Ուլապուրի, Վաղա եւ ուրիշ Պալդիկ ծովուն քով պղտիկ քաղաքներ, Փեղրուպուրի, Նիշնէի

Նովկորոտ, Գազան, Աժտերխան, Պաքու ու Բիւլար Կասպից ծովուն քով, Օտէսսա աղատ նաւահանգիստ, Գահանրոկ, Քէֆէ (Թէոգոսուպոլիս) ու Գէրշ Սեւ ու Աղախու ծովուն քով: Սուսաստանի հիւսիսային Ամերիկայի մէջ ու հիւսիսային կղզիներու վրայ եղած քանի մը պղտիկ գաղթականութիւնները ջրային սամոյրի մորթ եւ ուրիշ անասուններու ազնիւ մուշտակ կու տան:

276. ՊՈՂՄՆԻԱՆ ԿԱՄ ԱԵԶԵՍՏԵՆԸ 2331 քառակուսի մղոն ընդարձակութիւն ունի $4\frac{1}{2}$ միլիոն բնակիչով. մայրաքաղաքն է Արսաւիա Այքսըրը գետին քով 160,000 բնակիչով: Ունի արմաիք, ընդեղէններ, փայտ, կորեակ ու քթան, շատ ձի, արջառ ու ոչխար: Կողի առուտուրը շատ մեծ է, նոյնպէս մեղրէն, մոմէն ու պողոնիական որդան կարմիրէն ձեռք ձգած վաստակը. բովազործութիւնն ալ երկաթի, զինկի ու արուրաքարի կողմէն շատ աղէկ է: Ղարտարութիւնը աս յետագայ կտորներուն մէջ շատ յառաջացած է, այս ինքն շուխայի գործատուններուն, մետաքս ու կտաւ հիւսելու, աղաղելու, ձեռնոցի ու քթախոտ պատրաստելու գործատուններու կողմանէ: Պուրս հանած ապրանքներն են արմաիք, բուրդ, մոմ, ձի, արջառ ու ոչխար, ճրագու, մորթ, խոզանաստեւ, անկաղ, խիթ, կուպր ու շուխայիսկ վաճառաբերութեան ապրանքներն են գաղթականաց ապրանքներ, աղ, ծխախոտ, զինի, տարազներ ու գործատուններու ապրանքներ: Արսաւիայէն ետքը՝ առուտուրի կողմէն անուանի է Աուպլին:

277. ԱՆԽԱՐՀՔԻՍ աս մասը, որուն ընդարձակութիւնը 530 — 630 հազար քառակուսի մղոն կը սեպուի, արեւելքէն սահման ունի Աարմիր ծովը, հարաւէն ու արեւմուտքէն՝ Եթովպացոց ու Ատլանդեան ծովերը, իսկ հիւսիսէն՝ Միջերկրական ծովը: Վետիւնը շատ պտղաբեր է, բերքերը առատ են, մանաւանդ ցորեն, բրինձ, միրգ, արմաւ, շաքարի եղէգ, խահուէ, ծխախոտ, կնճիթ (— — — — —), լիթան, բամբակ, պղպեղ, լեղակ, հոտաւէտ փայտեր եւ այլն: Արջնպէս անթիւ անասուններ, փիղ, ռընդեղջիւր, առիւծ, ինձ, արջ, ընձուղտ, վիթ, ուղտ, կապիկ, կոկորդիլոս, շատ թռչուններ, ու նաեւ հանքեր ունի: Աս մասին ազգերը ճարտարութեան կողմանէ Ասիայի ազգերէն շատ վար են, բայց կան տեղեր, որոնց բնակիչները արուեստներու ու ճարտարութեան հոգ ունին, ինչպէս Մատակասկարի ու Եգիպտոսի բնակիչները, որոնք իրենց ապրանքները Եւրոպացոց ապրանքներուն նմանցընելու մեծ հոգ ունին: Վորձածնին մաքուր, աղէկ ու գիմացկուն է: Իսկ Պարպարընները, այս ինքն Արտրահի, Տակվումպայի, Աչանդիի, Պոսնուի թագաւորութիւններուն եւ ուրիշ տէրութեանց բնակիչները քանի մը նիւթեր շինելու ու կաշի պատրաստելու կողմանէ քաջ են: Ագիպտոսի մանած բուրդը նոր ատենները շատ երեւելի եղաւ: Վունուղի տէրութեան Զէրպի կըզզւոյն մէջ գործուած ասուիները, կտաւէ ու բամբակէ հիւսածները բոլոր հիւսիսային Ափրիկէի մէջ շատ կը փնտռուին: Ափրիկէի Սեւամորթները սովորաբար քաջ օրսորդ չեն, բայց աղէկ ձկնորս, աղէկ գարբիձ ու սակեգործ են. պողպատին խիստ կարծրութիւն տալ ու խիստ բարակ սակեթել շինել աղէկ գիտին: Պուլահները ու Սուսուները երկաթ ու ար-

ծախք կը հալեցընեն, փայտ ու կաշի գործելու մէջ ու այլեւայլ նիւթեր ստայնանկելու մէջ շատ ճարտար են: Միջին Ափրիկէի մէջ բանիլը, հիւսելը, ստայնանկելն ու դունաւորելը բաւական կատարելութեան աստիճանի մէջ է, որ անկէ աւելի ալ չբաղձացուիր: Աշանդիի, Տակվումպայի, Շէնտիի, Ճիննէի, Գոմպուկուի, եւ Ափրիկէի ուրիշ ներքին քաղաքներու սակեգործները զարմանալի են, հաստ ու անհեղեղ գործիքներով ամենաբարակ գործքեր դուրս կը հանեն, որոնք ըստ ամենայնի արծաթի գրուազներու (չիֆոն էշիներու) կը նմանին: Պէշուանները աղէկ դարբին, սուր շինող, բրուտ ու քանդակիչ են. բայց ասոնցմէ աւելի ճարտար են իրենց մերձաւոր Մաքինինները, որոնք պղինձ, երկաթ ու փղոսկր կը գործեն: Ա՛րսուի որ Հուսսասներն ալ հրացաննին իրենք կը շինեն, նոյնպէս եւ իրենց վառօդը: Հանկոյի ու Աոանկոյի վերի կողմերուն ժողովուրդը պղնձի հանք կը հանեն ու պղինձ կը գործեն. իսկ Քաթրաստանցիք Մոնոմոգաբայի մօտ աղէկ երկաթի արուեստաւորներ են: Ա՛խտահի բնակիչներն ու Մոլուացիները ազնիւ քարերու վաճառական են:

Արդ աս ըսածներնէս կ'երեւայ որ բովազործութիւնը, բանելու, մանելու, ստայնանկելու ու ներկելու արուեստները, խեցեգործութիւնն ու գարբնութիւնը, աղաղելու եւ ընդհանրապէս քաղաքականացեալ մարդու կարօտութեանը հարկաւոր եղած արուեստները ասոնց մէջը կան: Ասեւ երկրագործութիւնն ալ հնուցմէ մինչեւ հիմա Ափրիկէի մէջ յառաջացած է: Ազիպտոս երկրագործութեան դըլխաւոր տեղն եղած է. բայց ասկից զատ նաեւ հիւսիսային կողմերն ալ գետինը մշակելու շատ հոգ կը տարուի, ու անոր ձեռքովն է, որ տեղացիք իրենք զիրենք կրնան հոգալ: Հիւսիսային Ափրիկէի մէջ մարդուս սննդեանը, հագուստին ու հանգստութեանը վերաբերեալ ամէն բերքերը կը տնկուին:

Իսկ Ափրիկէի մէկալ կողմերը թէպէտ գետինը մշակելու կը նային, բայց դեռ իրենց ներկայ կարօտութեանը հարկաւոր եղածէն աւելի բերք յառաջ բերելու ջանք չկայ: Միայն Գուինէայի ծովեզերեայ տեղուանքը իրենց ծովեզերքը եկած վաճառական նաւերուն ծախելու փոյթ կը տանին, ու Սեւաստանի կամ Նիկրիտիայի մէջ մօտաւոր անապատէն աղ կ'առնուն ու տեղը ալիւր կը խաւրեն: Բայց այսու ամենայնիւ միայն Եգիպտոսի ու Մաւրիտանիայի մէջ կարգաւորեալ ու աղէկ մշակութիւն կայ. ինչու որ երկայն ատենէ վեր է որ Եւրոպա ասոնց նաւահանգիստներէն շատ ալիւր կ'առնու կը հանէ: Ագիպտոսցորեն, բրինձ, կանաչեղէններ հոս տեղաց մշակութեան գլխաւոր բերքերն են: Ասոնցմէ զատ արեւադարձի տակ եղած երկիրներու մէջ յառաջ կու գան հարաւային պտուղներ, այլեւայլ տեսակ ազնիւ միրգեր, ինչպէս ադամաթուղ (banane) ու անանաս, նաեւ շաքարի եղէգ, սննդարար արմատներ, ներկիչ տնկեր, ու համեմեղէններ, բայց ասոնցմէ շատ քիչ գրտի հետ եղած առուտուրի կը գործածուի: Թէպէտ գետինը այնչափ պտղաբեր է, ու անբաւ բերքեր ունի, բայց առուտուրի նկատմամբ կրնանք ըսել, որ Եգիպտոսն ու Գաբրոլոնիան գուրս հանելով, Ափրիկէի երկրագործութիւնը դեռ շատ ողորմելի վիճակի մէջ է: Ասիկայ պէտք ենք ըսել նաեւ պաճարաբուծութեան վրայ, որն որ ազգերու բնական ճարտարութեան երկրորդ գլխաւոր մասն է: Հիւսիսային Ափրիկէի Պետուինները ձի յառաջացընելու մէջ շատ արդիւնք ունին, ու անոնց ձիերը աշխարհքիս մէջ ամենէն ազնիւր կը սեպուին: Ագիպտոսի էշերն ալ շատ ազնիւ տեսակ են, անանկ որ ձիերուն հետ կրնան մրցիլ, բայց ասիկայ աւելի բնականին քան թէ ճարտարութեան ու կարգաւորեալ պաճարաբուծութեան վրայ հաստատուած է: Հարաւային բարձր կողմերուն բնակիչները, ինչպէս նաեւ Քաֆրաստանցիք

անասուն աճեցընելու ու սնուցանելու ետեւէ են, ու բոլոր իրենց կեանքն ու գոյութիւնը եղջերաւոր ընտանի անասուններ աճեցընելէն է, որոնցմով նաեւ իրենց երկիրը եկող վաճառական նաւերու հետ առուտուր կ'ընեն: Այսչափս Ափրիկեցւոց ճարտարութեան վրայ խօսելէն ետքը անցնինք քիչ մ'ալ անոնց առուտուրին վրայ խօսինք:

Անոնց երկրին բնական յատկութիւնը, բոլոր ասմասին շէնքը, կլիման ու ձեւը՝ առուտուրին, որ ազգերուն կենդանութիւն ու զօրութիւնն է, շատ արդեւք կը դնեն: Նաւելի դետերու պակասութիւնը, դահաւէժ, ամենեւին ծովածոց ու նեղուց շունեցող ծովեղերքը, բարձր ու ընդարձակ լեռներու շղթաները, անանցանելի անապատները, ու ի վախճանի դրսեցոց համար մահաբեր կլիման, ու ափրիկեցի ազգերուն մէջ տիրած անիշխանութիւնը առուտուրը բոլորովին անկարելի կ'ընեն: Վայց այսու ամենայնիւ ցամաքի վրայ հին ատեններէն մինչեւ հիմա կարգաւորեալ ներքին առուտուր կ'ըլլայ, որն որ բաւական ալ ընդարձակ է: Վոմպուքոու ու Ճիննէ եւ միջին Սեւաստանի ուրիշ քաղաքները ինչպէս Գանոյ, Գուգա եւ այլն կարաւաններու երթեւեկութեան տեղեր են, որոնք հեռաւոր ծովեղերեայ տեղերէն կու գան, ու Եւրոպայի եւ Ափրիկէի ապրանքներ տալով միջին Ափրիկէի բերքեր կ'առնուն կը տանին: Պեզզան գաւառին մէջ Մուրզուք ու Տարֆուրի մէջ Գուպէ Սեւաստանի հիւսիսային ու արեւելեան նաւահանգիստները կրնան զոյգուիլ: Արաւանները հոս կը ժողովին, ու անկից դէպ ի ներսի կողմերն ու ծովեղերեայ տեղուանք ճամբայ կ'ելլեն: Վանի մը տարի կայ որ Աւճելահայիներն ալ արթընցան, ու իրենց հին ատենէ հարաւային ու արեւելեան կողմերու հետ ունեցած առուտուրը նորէն ձեռք առին: Սարոգզոն Գոմպուքոուի վրայ ունեցած ազգեցութիւնը կորսընցընելէն ետքը, Սուսի նոր տէրութիւնն ելաւ, ու

Ափրիկէի հիւօխոսային արեւմտեան եղերքը Սեւաստանի ներքին կողմերուն հետ առուտուրի կապով կապեց : Սենեկամպիայի, Տակվումպայի ու Աշանդիի առուտուրը Փուլասներուն, Սուսուներուն ու Մանտինկոներուն ձեռքն է : Աեղոսի կողմերը եղած երկիրներուն մէջ Գահիրէն Ափրիկէի ու Ասիայի մէջ եղած առուտուրին միջերանոցն է : Աս քաղաքը՝ Ֆեզանի, Աւճէլասի, Տարֆուրի բնակիչներուն ու Շէնտիի ու Տամէրի վաճառականներուն ձեռք իր առուտուրը մինչեւ Պարպարըշներու երկիրը, Միջին Սեւաստան, Նուբիա, Հապէշիստան ու նաեւ Բարձր Ափրիկէ կը տարածէ : Շէնտի քաղաքը նոր ատեններս միջին Ափրիկէի, Հապէշիստանի, Նուբիայի, Եգիպտոսի ու Արաբիայի մէջ կենդրոն մը եղած է . իսկ արեւմտեան Ափրիկէի մէջ Աշանդիներուն մայրաքաղաքը Գումասսսիէ միջին Ափրիկէի ու Գուինէայի ծովեզերեայ տեղերուն մէջ նոր առուտուրի քաղաք եղաւ :

Բնդհանրապէս խօսելով կրնանք ըսել որ առուտուրը Ափրիկէի ազգերուն գլխաւոր զբաղմունքն է . բայց առուտուր ըսելով պէտք չենք ասկից յառաջ խօսած Եւրոպայի ազգերուն բարձր աստիճանի հասցուցած առուտուրը իմանալ, հապա միայն պզտիկ առուտուր կամ փոխանակութիւն մը : Բոլոր Ափրիկէի մէջ սննդեան ամենահարկաւոր նիւթերուն առուտուրը, ու գերիներու անպիտան առուտուրը ամենէն աւելի շատ է : Բայց աւելի փոխանակութիւն է քան թէ առուտուր : Ափրիկէի շատ կողմերը տարածուած Հրեաները եւ քիչ մը յառաջ յիշած Ֆէզզանցիներն ու Մանտիկոցիները զանց առնելով, Սենեկամպիայի Սերակհալցիները պէտք ենք յիշել, որոնք հին ատենէ մինչեւ հիմա ճարպիկ ու զգուշաւոր վաճառականներ ճանչցուած են : Այոնպէս Սոմալիցիները շատ ջանասէր վաճառականներ են, նաեւ ունին, որոնցմով Հապէշիստանի, արեւելեան Ափրիկէի ու Արաբիայի մէջ աղէկ առուտուր կ'ընեն : Արպպէրդիները

մասնաւոր ազգ մը չեն կացուցաներ, այլ Արարացւոց մէկ ցեղն են, ու բոլոր Հապէշիստանի ու Ասիային մէջ եղած առուտուրին միջնորդն են: Մովհիզացիներն ալ Մոնոմոզաբայի ներքին կողմերուն առուտուրը ձեռք ձգած են. իսկ Քրուսոցիները եւ ուրիշ Ս. Աննայի զլխոյն ու Արմաւենեաց հրուանդանին մէջ եղած ծովեզերեայ տեղերուն բնակիչները առուտուրի պատճառաւ երբեմն երբեմն իրենց երկիրը կը թողուն, ու Եւրոպացւոց նաւերուն մէջ նաւավարներու ծառայութիւնը կ'ընեն: Պուլահներն ու Քէնուցիներն ալ շատ անգամ իրենց հայրենիքը կը թողուն Եգիպտոս ու Ափրիկէի ներքին կողմերը կ'երթան գործ գանելու համար, ու շատ հաւատարիմ ու աշխատասէր բունուորներ են:

Առուտուրի նկատմամբ Ափրիկէի մէջ երեւելի քաղաքներն են Փէսի (Մարոզգոյի) կայսրութեան մէջ Փէս, Մարոզգոյ, Մոկատոր ու Գանկէր. Գաղղիացւոց Ալճէրիի գաղթականութեան մէջ՝ Ալճիէր. Գունուղի տէրութեան մէջ՝ Գունուղ, Տրիպոլիս. Փէզզանի ու Պէլատէլճէրիտի մէջ Մուրզուք ու Կատամէս: Տաճկի Ափրիկէի մէջ՝ Գահիրէ, Աղէքսանդրիա, Շէնտի, Տամեր, Սէնաար, Սուաքին, Գոսէիր ու Մասսովահ. Հապէշիստանի մէջ՝ Ատովա. Պոսնուի տէրութեան մէջ՝ Ակոսնու ու Պոսնու. Փէլլազահներու տէրութեան մէջ՝ Գանոյ, Սակկադու ու Գաշէնա. Նիֆֆէի մէջ՝ Գուլֆա. Աշանդիի տէրութեան մէջ՝ Գուամասիէ, Մեծ Պասսան, Գաբ Լահու, Եանտի, եւ այլն. արեւելեան կենդրոնական Սեւաստանի մէջ՝ Գոմպուքդու, Ճիննէ, Սէկոյ, Սանսանտինկ, Գանգան. Գուինէայի մէջ՝ Պոննի ու Գալապար. Ներքին կողմերը Գասսանկէ, Եանվոյ, Պիհէ, Պախլունտոյ, Միասէլ, Հոլոհոյ. ու հարաւային Սեւաստանի եզերքը՝ Գապինտա, Ամպրիզ, Սուրբ Լուդովիկոս Սէնէկալի քով, Պուրպոնի կղզւոյն (Գաղղիայի Ափրիկէի) մէջ Սուրբ Գիսնիսիոս, Մաւրիտիոս կղզւոյն

վրայ անգղիական Ափրիկէի մէջ՝ Ազատ քաղաք (Ֆրի գաւն), Գաբգորդ, Գափշղատ ու Լուդովիկոսի նաւահանգիստը. Սպանիական Ափրիկէի մէջ՝ Օրոգավա, Բորգուկալի մասին մէջ՝ Փունքալ, Բրայա, Ս. Պողոս տէ Լուանտա, Պէնկուէլա, Մոզամպիք. Հոլանտայի մասին մէջ՝ Էլ Մինա. Տանիմարգայի մասին մէջ՝ Քրիստիանսպուրկ: Պէրպէրա Սոմալիններուն առուտուրին զլխաւոր առուտուրի տեղ է, նոյնպէս Գամագավէ ու Փուլէփոէնդ Մատակասկար կղզւոյն վրայ:

Ափրիկէի ներքին կողմերը շատ փնտռուած ապրանքներն են ատրճանակ հրացանն ու վառօդ, Ալենեաիկի ապակեղէններ, որոնցմէ խիստ շատ ներս կը խոթուի, հաստ գեղմնոստայն, մետաքսէ ապրանքներ, խեցեղէն ապրանքներ, արոյրէ անօթներ, տպած բամբակեղէններ, գծաւոր շղարշներ, գրի թուղթ, բուստ, հայլի, ածելի ու դանակներ, կտրոցեղէններ, աղ, տան կարասիք: Իսկ մնացած կողմերը մտած ապրանքները վերը յիշածներնէս զատ նաեւ Հնդկաստանի նիւթեր, ցփսի, օղի, շաքարօղի, եւ եւրոպական գործատուներու ապրանքներ են: Աւաճառահանութեան վերաբերեալ զլխաւոր ապրանքներն են ոսկիի աւաղ, փղոսկր, բրինձ, արմաիք, խիժ, պղպեղ, ջայլամի փետուր, անգործ մորթ ու սերեկ (մորթի), կաշի, բամբակ, լեղակ, արմաւ, աճալ (սիւն-մէր), մոմ, հալուէ, պղինձ, նատրոն, աղ, Մատերայի, Գանարիայի ու Գաբլանտիայի դինի, շատ գաղթականաց ապրանքներ եւ ըստ մեծի մասին Եւրոպացւոց գաղթականութիւններէն:

Ափրիկէն զանազան մասերու կը բաժնուի, 1. Նեղոս գետին քովի երկիրները, որ են Ա. Հապէշիստան, որուն մէջն են Գիկրէի, Գոնատարի, Անգոպէրի, Ամհաուայի, Անկոդի, Նարէայի, Սամհաուայի թագաւորութիւնները. Բ. հիւսիսային արեւմտեան երկիր, կամ Պարէլապիատի քովի երկիրները, որուն մէջն են Տոնկա, Շիլուկներու երկիրը, Տէնքա, Պէրգադ,

Շայպոն, Ֆէրդիդ գաւառները, Գուքլայի երկիրը
 Գորտոֆան գաւառը ու Տարֆուրի տէրութիւնը. Գ.
 Նուբիա՝ որուն կը վերաբերին Սէնաարի թագաւորու-
 թիւնը, Հալֆաի երկիրը, Շէնտիի երկիրը, Տամէր
 գաւառը, Պարպար գաւառը, Շաքիէ Արաբացիներ
 ուն երկիրը, Մահասի երկիրը, Սոքքոզ, Վատի էլ
 Հաճար, Պարապրայի երկիրը, Նեղոսին արեւելեան
 կողմի երկիրը ու արեւմտեան կողմը. Գ. Եգիպտոս
 որ կը բաժնուի Սասրին Եգիպտոս (Պայրի) ու վերին
 Եգիպտոս: 2. Մաղըբայի երկիրը, որուն մէջն են Ա.
 Տրիպոլիսի (Գարապուլուսի), Բ. Գունուզի տէրու-
 թիւնները, Գ. Ալճէրիի (Ճէզայիրի) գաղթականու-
 թիւնը, Գ. Մարոզգոյի, Ե. Սիտի Հէշամի տէրու-
 թիւնները, Զ. Պէլատէլ ճէրիտ ու Սահրա: 3.
 Նիկրիտիա կամ Սեւաստան, ասոր մէջն են Ա. Կեն-
 գրոնական Նիկրիտիա կամ Սուտան, որուն մէջը այլեւ-
 այլ ինքնիշխան երկիրներ կան. Բ. Արեւմտեան Սեւ-
 աստան (Սենեկամպիա) այլեւայլ ազատ երկիրներով.
 Գ. Հիւսիսային արեւմտեան Սեւաստանի ծովեզե-
 րեայ կողմերը. Գ. Հարաւային Սեւաստան: 4. Հա-
 րաւային Ափրիկէ: 5. Արեւելեան Ափրիկէ, որուն մէջն
 են Ա. Արեւելեան Ափրիկէի ցամաք երկիրը, ու Բ.
 Արեւելեան կղզիները: 6. Վրսի տէրութեանց մասերը:
 Ասոնց ամենուն վրայ մէկիկ շէնք խօսիր, ինչու
 որ շահաւոր բաներ մը շէն, վերը ընդհանուր դրած-
 նիս սորվիլ ուղղին քաւականէն ալ աւելի է:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

278. ԱՍ երկիրը որ Նոր աշխարհք ալ կ'ըսուի,
 ամէն կողմէն ծովով պատած է, արեւելքի կողմէն
 Ատլանդեան ծովով, հիւսիսէն՝ հիւսիսային սառու-
 ցեալ ծովով, արեւմուտքէն՝ մեծ ովկիանոսով ու
 հարաւէն՝ հարաւային սառնապատ ծովով: Պետիներ

ընդհանրապէս բերրի է, իր բերքերն են տեսակ տեսակ կանաչեղէններ, արմաթիք, եգիպտացորեան, բրինձ, գետնախնձոր, հնդիկ նուշ կամ վարնգանուշ ադամաթուղ, համեմուկ (շնէլէ), եւ ուրիշ ազնիւ պտուղներ, ծխախոտ, խահուէ, շաքար, բամբակ, լեղակ, որդան կարմիր, այլեւայլ ներկի ու գեղի նիւթեր, ու արմատներ, փայտ եւ այլն, ազնիւ փայտեր, համեմներ: Մտանի անասուններ, այծուղտ (լամ), առիւծ, ինձ, արջ, կապիկ, թռչուններ, հանքեր, զոր օրինակ ոսկի, լանոսկի կամ սպիտակ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, ադամանդ, ազնիւ քարեր, մանաւանդ գեղեցիկ տպապիտոն:

Արկայն ատենէ ի վեր Եւրոպացւոց մէջ սխալ կարծիք մը կար, թէ Ամերիկայի բուն բնակիչները յառաջագոյն թափառական կեանք անցուցած, միայն որսորդութեամբ ու ձկնորսութեամբ ապրած ըլլան, ու ընկերական կենաց հարկաւոր գործքերն ու արուեստները իրենց բոլորովին անծանօթ եղած ըլլան: Քայց Ամերիկայի գիւտին պատմութիւնը մեր առջեւ անանկ գործքեր կը հանէ, որոնցմէ յայանի կը տեսնուի, որ նոյն իսկ ան ատեն հոնաեղաց բնակիչները քանի մը արուեստներու մէջ ու ընկերական կենաց վերաբերեալ կարգաւորութեանց մէջ յառաջացում ունէին. անոնց արձաններն ու այլեւայլ յիշատակարանները աս բանս յայանի կը ցուցնեն: Այսօրուան օրս ալ Ամերիկայի ազգերը առանձին կարգաւորեալ կառավարութիւն ունին, երկիր կը գործեն, ու մարդու հարկաւոր արուեստները իրենց մէջը ծաղկեցուցած են, բայց գլխաւորաբար հողէ ամաններ ու խեցեքարէ (շնէլէ) նկարուած ամաններ շինել ազէկ գիտեն: Տեղացի կանայք մինչեւ հիմա հին ատենէ մնացած անօթներուն նմանը կը շինեն: Ատեղաց ազգերուն մէջ Մափոցիները, Բարեգացիները, Եւալարանացիները, Գուրաչիքանացիները, ու հարաւային Ամերիկայի ուրիշ ազգերը ընդարձակ

երկիրներու վրայ աղամաթուղ, հացապտղի (manioc), եգիպտացորեն ու բամբակ կը անկեն, ու բամբակէ հաստ լաթեր շինել ալ գիտեն: Յուրա երկիրներու բնակիչները կենդանեաց մորթը մուշտակ կը շինեն, որոնք չէ թէ միայն իրենց հագնելուն կը գործածեն, այլ նաև անոնցմով Եւրոպացւոց հետ ալ առուտուր կ'ընեն: Գաղղիացւոց նաւահանգիստ ըսուած տեղերուն բնակիչքը հիւսիսային արեւմտեան ծովեզերքը երկաթ ու պղինձ գիտեն գործել. մէկ տեսակ ասեղով մը գորգեր կը շինեն, աղուոր ու ձեւաւոր գլխարկներ ու կողովներ կը շինեն ու օձակուճէ (երկաճ Բէր-Բէրէ, serpentine) ամէն տեսակ անօթ ու կահուց վերաբերեալ ապրանքներ կը պատրաստեն: Գինքազանի ծոցին մօտ բնակող Հնդիկները աղաղելու, նկարչութեան, պատկեր փորելու, ու ձեռքով գործուելու այլեւայլ բաներու մէջ առանձին ճարտարութիւն ու յաջողակութիւն մը ունին: Իսկ անկիրթ ու չքաղաքականացեալ ազգերուն բոլոր արուեստը սղորմելի խրճիթ մը շինել է. բայց ասոնց թիւը օրէ օր քիչնալու վրայ է, ինչու որ տեսնելով որ քանի կ'երթայ ձերմակները կը շատնան, ու կրթութիւնը յառաջ կ'երթայ, իրենք ներքին անտառներու մէջ քաշուելու կը ստիպուին:

Ճերմակներուն կամ Եւրոպացւոց հաստատած տէրութիւնները՝ Սպանիացւոց Անգղիացւոց, Գաղղիացւոց, Լուսիտանացւոց գաղթականներուն ձեռք ճարտարութեան մէջ կրցան յառաջանալ: Ամենէն երեւելին աս կողմանէ են Միաբանեալ նահանգները, որոնց ապրանքներուն ազնուութիւնը Եւրոպացւոց ապրանքներուն հաւասարած է: Զին ատենի Սպանիացւոց տակ եղած Ամերիկային մէջ նոր հաստատուած հասարակապետութիւններէն, երեւելի են Մէքսիկոյի, Լա Բուէպլայի, Գուէրէզարոյի ու Աուատալաքսարայի տէրութիւնները, որոնք Մէքսիկոյի դաշնակցութեան կը վերաբերին. դարձեալ

Բէրուի հասարակապետութեան մէջ Լիմա, Գուա-
քոյ ու Երակիբա քաղաքները. Գոլոմպիայի մէջ
Աիդոյ, Պոկոչա ու Գարագաս. միջին Ամերի-
կայի մէջ Կուադէմալա, Սան Սալվատոր (Ս. Փրկիչ)
եւ այլն. Ռիոյ տէլա Բլադայի գաւառներուն
մէջ Պուէնոս Այրէս, ու Չիլէի մէջ Սանդիակոյ
(Ս. Յակոբ): Իւրասիլիայի կայսրութեան մէջ մին-
չեւ նոր ժամանակները արուեստներն ու ճարտա-
րութիւնը սպանիական Ամերիկայի տէրութիւննե-
րուն համեմատութեամբ շատ ետ մնացած էին.
Բայց քանի մը տարի կայ որ գլխաւորաբար մեծ
քաղաքները մանաւանդ Ռիոյ տէ Եանէիրոյ, Պա-
խա ու Փեւնամպուքոյ շատ յառաջացան: Ասեւ
Հաւանայի մէջ, Գանատայի գլխաւոր քաղաքները,
նոր Սկովախա ու նոր Պրաւնչուայդ շատ արուեստ-
ներու յառաջացում տեսնուեցաւ: Մէքսիկացիներ
ըր փայտէ, ոսկրէ ու մսմէ ամէն տեսակ խմորալիկ
ու նաեւ տան կարասիք կը շինեն, որոնք իրենց ա-
ղուորութեանը, ձեւին, փայտին ընտրութեանն ու
փայլուն յղկելուն կողմանէ շատ երեւելի են: Իմէ-
պէտեւ ոսկի ու արծաթ հանելը գեռ սպանիական
Ամերիկայի մէջ գլխաւոր արուեստներէն մէկն է,
բայց հիմակ հանուած ոսկին ու արծաթը առ-
ջինին պէս առատ չէ: Քաղաքական պատերազմ-
ներու ժամանակ հանքերը երեսի վրայ ձգուելով,
բոլոր գետնի տակ եղած ջրով լեցուեցան, անոր համար
ալ կամ ամենեւին չեն տար եւ կամ մետաղ հա-
նելու համար շատ ծախքի կը կարօտին: Մէքսի-
կոյին, Կուանախուադոյի, Բուէպլայի, Պոկոչայի,
Աիդոյի, Գարագասի, Լիմայի, Գուաքոյի, Սան-
դիակոյի, Պուէնոս Այրէսի ու Ռիոյ տէ Եանէիրոյի
ոսկեգործներն ու արծաթագործները շատ ճարտար
ու քաջ են: Ասկից զատ աս երկիրներուն մէջ նաեւ
սապոն, վառօդ ալ կը շինեն, որ բովազործութեան
կամ հանքահանութեան շատ հարկաւոր են, նաեւ

տեսակ տեսակ կաշիներ ու քթախոտ, հաստ կտաւ ու հասարակ շուխայ ալ կը հիւսեն: Ամերիկայի տէրութեանց մէջ տպագրութիւնն ազատ ըլլալով՝ շատ լրագիրներ կը հրատարակուին, ու տպագրութեան արուեստը շատ գործք ունի:

*Աւազանացութիւնը, որ առուտուրի հիմն է, Ամերիկայի հին բնակչացը անձանօթ էր. իրենց փոքր նաւակները շինելէն եւ անոնցմով ասդին անդին երթալէն ուրիշ բան չէին գիտեր: Միայն Օմակուացիներն ու Քայակուացիները, որ Ամերիկայի հարաւային մասին մէջն են, քիչ մը աւելի ընդարձակ զաղափար ունէին: Ասոց հիմա ան ազգերը, որոնք Եւրոպացիի սկիզբ ունին, զոր օրինակ Բրիտանական հիւսիսային Ամերիկայի մէջ, անթիւ վաճառականի նաւեր ունին, ու Միաբանեալ նահանգներուն բնակիչները չէ թէ միայն քաջ նաւավարութիւն գիտցող ազգ մը, այլ նաեւ երկրորդ վաճառական տէրութիւն եղան: Աս անգղիացի Ամերիկացիք մեծ պատերազմական նաւատորմիդ ունին, որով իրենց անկախութիւնը մեծին Բրիտանիայի դէմ պաշտպանեցին, ու Բարբարոսներու տէրութիւնները նուաճեցին: Արենց դրօշը ամէն նաւահանգիստներու մէջ կը տեսնուի, ձկնորսներնին աշխարհքիս երկու կիսագնդերուն սառուցեալ ծովերուն մէջ մտած են, ու առուտուրնին անանկ ծաղկած է, որ իրենց վաճառականները հին ու նոր աշխրջքին առուտուրին միջնորդ եղած են:

Վարայիպներուն, աս նոր աշխրջքիս Պալիարացիներուն, առուտուրի մէջ ունեցած գործունեայ ու ճարպիկ բնութիւնը շատ զարմանալի է. Եւրոպացւոց Ամերիկայի մէջ հաստատուիլը աս նոր գանուած երկրին նոր դար մը եղաւ: Արկրին տեսակ տեսակ ու ազնիւ բերքերը քիչ ժամանակուան մէջ առուտուրին ծաղկելուն ու ընդարձակուելուն պատճառ եղան. բայց մանաւանդ 1783ին հիւսիսային Ամերիկայի 13

նահանգներուն Բրիտանացոց իշխանութենէն ելլելը՝
 աս երկրին բերքերն աւելցուց, ու առուտունն ու
 նաւագնացութիւնը յառաջացուց: Ասոց զարմանալին
 ան է որ ան ատենէ ետքը նաեւ Եւրոպայի տարազ-
 ներու գործատուններն ու ուրիշ արուեստանոցները
 աւելի գնողներ ունեցան, ու աւելի եւս յառաջ գա-
 ցին: Աէտի ձկնորսութիւնը, որ երկու սառուցեալ
 ծովերուն մէջ կ'ըլլայ, ու ամէն տարի Ամերիկայէն
 նաւերով Եւրոպա խրկուած անբաւ շաքարը, ծխա-
 խոտը, բամբակը, խահուէն, բրինձը, ցորեանը,
 մորթն ու կաշին, ու նաեւ ճարտարութեան ապրանք-
 ները՝ որ Եւրոպայէն Ամերիկա կ'երթան, աշխրջբիս
 աս երկու մասերը առատութեամբ լեցուցին, ու
 անոնց առուտուրին ու արուեստներուն մեծ կենդա-
 նութիւն մը պատճառեցին, անանկ որ շկրնար ու-
 րացուիլ որ Ամերիկայի հետ եղած առուտուրը ամե-
 նէն աւելի վաստակ բերող առուտուրներէն մէկն է:

Ամերիկային վաճառահանութեան գլխաւոր ա-
 պրանքներն են արծաթ, ոսկի, պղինձ, ադամանդ,
 տպաղիտն, շաքար, խահուէ, բամբակ, ծխախոտ,
 բրինձ, արմախք, համեմուկ ($\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$ —), ջերմնդեղ,
 որդան կարմիր, դարիճենիկ, մում, մուշտակ, մորթ
 ու կաշի, ձողաձուկ, հնդիկ նուշ, լեղակ, մեխակ,
 մշկահոտ ընկոյզ, անահտական արմատ ($\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$ —),
 մաղձարմատ (ipécaeuana), տեսակ մը բալսամոն, գաղ-
 դիական փայտ (gaïac), եւ ուրիշ գեղադործութեան
 ապրանքներ, ներկելու նիւթեր, այլեւայլ տեսակ
 փայտեր թէ շէնքի եւ թէ ատաղձագործի (ճարմն-
 իջի) գործքերու համար: Իսկ վաճառաբերութեան
 գլխաւոր նիւթերն են շուխայ, կտաւ, մետաքսեայ
 ապրանքներ, թաւիշ, գլխարկ, զէնք, ու եւրոպական
 գործատուններուն ու արուեստանոցներուն ամէն ա-
 պրանքները, նաեւ գինի, օղի, աղ, թէյ ու աղած
 ձկեր: Օսովային առուտուրի կողմանէ երեւելի քա-
 ղաքներն են Միաբանեալ նահանգներուն մէջ՝ Նոր

Եորկ, Փիլադելփիա, Պոսդըն, Պալդիմոր, Նոր Օր-
լէան, Չարլզզդաւն, Բրովիտէնս, Սալէմ, Բորդ-
լէնտ, Նորֆոք, Հաւաննա, Պրոսքլին ու Աղէք-
սանդրիա. Մէքսիկացոց տէրութեան մէջ՝ Վերա-
գրուզ, Գամբիջոյ տէ Գամաւիբաս ու Ագաբուլ-
ջոյ. Գոլոմպիայի հասարակապետութեանց մէջ՝ Լա-
կուայրա, Բորդոյ Գապէլոյ, Կուայագուիլ ու Նոր
Կարթեգոն. Լաբլադայի տէրութեանց մէջ՝ Պուէնոս
Այրէս. Բէրուի մէջ՝ Գալլայոյ. Չիլէի մէջ՝ Վալբարաի-
սոյ. Ուրուկուայի մէջ՝ Մոնդէվիտոյ. Բրասիլիայի
մէջ՝ Ռիոյ տէ Եանէիրոյ, Պայիա, Փեռնամպուզոյ.
Հաիդիի հասարակապետութեան մէջ՝ Բորդոբրէնս,
Հաիդիի սար, Լէ Գաի ու Ժագմէլ. Սպանիա-
կան Ամերիկայի մէջ՝ Գուպա կղզոյն վրայ Հաւան-
նա ու Մադանգաս, Բորդոյ Ռիգոյ կղզոյն վրայ
Սան Ժոն. Բրիտանական Ամերիկայի մէջ՝ Եամաի-
զա կղզոյն վրայ Գինկսդոն, Պարպատէոսի վրայ
Պրիճգաւն, Նոր Սկովտիայի մէջ՝ Հելիֆէքս, Գա-
նատայի մէջ՝ Գուիպէք, Կուիանայի մէջ՝ Ճորճգաւն.
Գաղղիական Ամերիկայի մէջ՝ Մարդինիգ կղզոյն վրայ
Ս. Պետրոս, Կուատլուփի վրայ Բոէնդ ա Բիդրը. Հո-
լանտական Ամերիկայի մէջ՝ Կուիանայի մէջ Բարամա-
րիպոյ, ու Ս. Եւստաքէոս ու Վիլլէմշդատ Անդի-
լեան կղզիներուն վրայ. Տանիմարգայի Ամերիկային
մէջ՝ Ս. Խաչ կղզոյն վրայ Քրիսդիանսդէտ, ու Ս. Թո-
մաս կղզոյն վրայ Ս. Թովմաս: Բոլոր աս գաղթա-
կանութեանց մէջ ամենէն մեծ ու ընդարձակ առու-
տուրը Նոր Եորկ, Հաւաննա, Փիլադելփիա, Վե-
րագրուզ, Ռիոյ տէ Եանէիրոյ, Պայիա, Պուէնոս
Այրէս ու Գինկսդոն քաղաքները կ'ընեն: Բայց
առանձինն Նոր Եորկ աշխրջքիս մէջ վաճառականու-
թեան երկրորդ քաղաք կրնայ համարուիլ:

Ամերիկան քաղաքական կողմանէ նայելով երկու
կը բաժնուի, Անկախ Ամերիկա, ու Գաղթականաց
Ամերիկա: Առջինին մէջն են Անգղիայի Ամերիկացոց

դաշնակցութիւնը (որն որ Հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ նահանգք կ'անուանուի), Մեքսիկոյի դաշնակցութիւնը (կամ Մեքսիկոյի Միաբանեալ նահանգք), Միջին Ամերիկայի դաշնակցութիւնը (կամ Միջին Ամերիկայի Միաբանեալ նահանգք), Ռիոյ տէլա Բլադայի դաշնակցութիւնը (կամ Ռիոյ տէլա Բլադայի Միաբանեալ նահանգք), Էգուատորի, Նոր Գրանատայի ու Վէնէզուէլայի հասարակապետութիւնները, Բէրուի, Պոլիվիայի, Չիլէի, Հայիդիի, ու Ուրուկուայի հասարակապետութիւնը, Բարակուայի դիկտատորութիւնը, Բրասիլիայի կայսրութիւնը, ու հին Ամերիկային անկախ մասերը: Իսկ երկրորդին մէջն են Բրիտանիայի, Սպանիայի, Գաղղիայի, Հոլանտայի, Տանիմարգայի, Ռուսիոյ Զուէտի մասերը: Ասոնց ամէն մէկուն արուեստներուն ու առուտուրին վրայ մէկիկ մէկիկ խօսիլը աւելորդ կը համարինք, վերը դրած տեղեկութիւննիս ընդհանրապէս ամենուն վրայ բաւական ծանօթութիւն կու տայ: Իայց հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ նահանգները աս մասին մէջ շատ յառաջացած ըլլալուն ու առուտուրի մէջ շատ մեծ աստիճան բռնելուն՝ պէտք է որ անոր վրայ առանձին խօսինք:

Աս երկրին բնակիչներուն գլխաւոր զբաղմունքը երկրագործութիւն է, որն որ գետինը շատ պտղաբեր ըլլալուն պատճառաւ բնակչացը շատ վաստակ կը բերէ: Քանի որ ժողովուրդը կ'աճի ու կը բազմանայ, այնչափ ալ մշակողները շատնալով, երկիրն ալ կ'ազնուանայ: Ալ որովհետեւ աս Միաբանեալ նահանգներուն ահագին ընդարձակ երկիրը տարազագործութեան ամէն հարկաւոր եղած նիւթերն ունի, անոր համար բնակիչները արուեստները յառաջացընելու ու առուտուրը ընդարձակելու համար ուրիշ բանի հարկաւորութիւն չունին, բայց թէ խաղաղութեան, որն որ Անգղիայէն բաժնուելէն ետքը ձեռք ձգելով, իրենց առուտուրն ու արուեստները զարմանալի կեր-

պով մը կրցան յառաջացընել : 1803ին Միաբանեալ նահանգաց մէջ բամբակ մանելու մենքենայ միայն 4 հատ կար, 1811ին մանելու մենքենաներուն թիւը 80,000ի հասած էր, 1834ին մէկ միլիոն եղաւ, ու հիմա մէկ ու կէս միլիոն եղած է : Մէրինոսին Ամերիկա խոթուելէն ետքը՝ Ամերիկայի բուրդը շատ ազնուացաւ. 1815ին միայն 10 հատ բուրդի գործատուն կար, անկից ետքը խիստ շատցան, ու հանած ապրանքնին Եւրոպացւոց տարազներուն դիմացը կրնան ելլել : Ռոտայլէնտ, Մեսսեչուսէզս, Գոննէկդիքուդ, Բէնսիլուանիա, Տէլավէր, Նոր Եորկ, Նոր Ճէրսէյ ու Օհայոյ նահանգները ամենէն աւելի երեւելիներն են, ուր որ ճարտարութիւնը խիստ յառաջացած է : Ամէն տեղ ուր որ կ'երթաս՝ ամէն տեսակ ապրանքներու գործատուններ ու արուեստանոցներ կը տեսնես . երկաթի, վառօդի, աղ ու շաքար զտելու, քթախոտի, սապոնի, օղիի, գարեջրոյ, գամ շինելու, աղաղելու, թղթի, տարազներու եւ այլն : Նաեւ տպարանները, ձուլարանները, տպելու մենքենաներ շինելը, գործիք շինելը, թնգանօթ թափելը, շոգեշարժ մենքենաներ ու նաւեր շինելը, երկաթի, կապարի ու հանքային անխոյ հանքահանութիւնը շատ մարդիկ կը զբաղեցընէ : Բէնսիլուանիայի, Տէլավէրի, Վիրջինիայի, բայց գլխաւորաբար Պալդիմօրի մէջ վերջի ատեններս շատ ջրաղացքներ շինուեցան, գրավածառութիւնը շատ մեծցաւ : Նարտարութեան կողմանէ անուանի քաղաքներն են, Նոր Եորկէն, Փիլադելփիայէն, Պալդիմօրէն, Նոր Օրլէանէն եւ ուրիշ քաղաքներէն զատ, նաեւ Բիդդսպուրկ, Չինչինադդի, Ռոշէսօգրը, Գրոյ, Ուդիքա, Բագդէրսոն եւ այլն :

Հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ նահանգները ծովային առուտուրի կողմանէ երկրորդ վաճառական տէրութիւն են, ինչու որ միայն Անգլիայի ծովային զօրութիւնը իրենցմէ աւելի է : Ներքին կողմերն ալ անանկ ջրանցքներ ու նաւելի դետեր կան որ աշ-

խրքքիս մէջ նմանը չգտնուիր, որով ներքին առու-
տուրն ալ խիստ կենդանութեան մէջ կը մնայ: Ասոր
կ'օգնեն նաեւ խիստ շատ երկաթի ճամբաները, ու
ամէն կողմ եկող դացող շողենաւները: Մինչեւ 1802
աս անդաց առուտուրը կամաց ու դանդաղ վիճակի
մէջ էր, բայց ան ատենները Եւրոպա կուսի մէջ ըւ-
լալով, Ամերիկացիք անանկ մէկ ճամբայ բռնեցին, որ
իրենց առուտուրը ընդարձակելով բոլոր աշխարհքի
հետ կապ ունեցան, բայց մանաւանդ 1815էն ետքը երբ
որ Անգղիացւոց հետ կուսին դադրեցաւ տարուէ
տարի աս իրենց առուտուրը միշտ ընդարձակելու վրայ
է: — Ա՛յ՛ աճառահանութեան ապրանքները թէ իրենց
եւ թէ օտար երկիրներու բերքերն են, գլխաւորաբար
բամբակ, արմաիք, ալիւր, բրինձ, եգիպտացորեան,
ծխախոտ, կտաւատ, շէնքի փայտ, տնկաղ, աղած
ձկեր, այլեւայլ կերպով պատրաստուած եզան ու
խոզի միս, մորթ, եւ ուրիշ անասնոյ բերքեր: ()տար
բերքերէն դուրս խրկածներն են դաղթականաց ապ-
րանքներ, զոր օրինակ թէյ, շաքար, խահուէ, բամ-
բակ, հնդիկ նուշ, լեղակ, պղպեղ եւ այլն: Քանի մը
տարի կայ որ իր տարազներէն շատ մը դուրս կը խաւ-
րէ, մանաւանդ բամբակէ գործուածներ, գլխարկներ
կաշիէ ապրանքներ, գրքեր, զէնք, վառօդ եւ այլն: Իսկ
վաճառաբերութեան նիւթերն են, վերը ըսած դաղ-
թականաց ապրանքներէն զատ, օղի, աղ ու գինի.
գարձեալ եւրոպական գործատուներու ու արուես-
տանոցներու ապրանքներ, մանաւանդ անոնք, որոնք
Հնդկաստանէն ու Չինուամաչինէն կ'ելլեն: Ասեւ յիշա-
տակելու արժանի է Ամերիկայի ներքին կողմերուն
բնակչացը հետ ըրած փոխանակութեան առուտուր-
նին: Միաբանեալ նահանգաց հետ ամենէն աւելի
առուտուր ընողներն Անգղիացիք են, անոնցմէ ետքը
կու գան Անգղիացւոց դաղթականները, Գաղղիացիք,
Գուպացիք, Մեքսիկացիք, Հոլանտա, Չինուամաչին,
Հանսէական քաղաքները, Տանիմարդա ու Պրասիլիա,

279. ԱՇԽԱՐՀՔԻՍ աս հինգերորդ մասը՝ Ասիայի արեւելեան կողմը ու Ամերիկայի արեւմտեան կողմը մեծ ու պղտիկ կղզիներէ բաղկացած երկիր մըն է, 160,000 քառակուսի մղոն ընդարձակութեամբ, որուն միջին կողմերը դեռ անծանօթ են: Վեափներ ընդհանրապէս բաւական բերրի կ'երեւայ, շատ շորքոտանիներէն զատ ունի զանազան ծառեր, սօսի, հացի եւ այլն, այլեւայլ պտուղներ, արմաւ, շաքարի եղէգ բամբակ, լեզակ, բթան, ծաղիկներ, թռչուններ ու ձկեր: Բնակիչները Անգղիացւոց գաղթականներէն զատ երկու կը բաժնուին, Բաբուս բասձները, որ սեւ գունով Ափրիկեցւոց կը նմանին, ու Մալայեան ցեղիները՝ որոնք աւելի ձերմակի կը զարնեն ու Եւրոպացիներէն շատ տարբերութիւն չունին: Ասոնք ճարտարութեան կողմանէ ալ իրարմէ շատ տարբեր են: Բաբուսի ցեղէն յառաջ եկած ազգերը ամենեւին քաղաքականացեալ չեն, ուստի եւ ճարտարութիւննին ալ ողորմելի է: Ասոր հակառակ Մալայեան ցեղէն յառաջ եկածները չէ թէ միայն կրթութեան առաջին աստիճանը անցած են, հապա նաեւ շատ յառաջացած ալ են. երկրագործութիւն ու նաւազնացութիւն, եւ քաղաքականութեան նշաններ ունին: Աոյնպէս ձկնորսութիւնն ու հանքահանութիւնը, որ Հնդկաց Ափլիանոսին քանի մը կղզիներուն վրայ ծաղկած են, աս ազգերուն ճարտարութիւնը կը ցուցնեն: Խեցեգործութիւնը բոլոր Բազմակղզիներու (Բուլինեզիայի) մէջ ծաղկած է, ու Բաբուսի ցեղէն մարդիկներուն ալ քիչ մը ծանօթ է: Բնդհանրապէս Մալայեանները հիւսող ու ոստայնանկ են, ու իրենց արուեստին մէջ քաջ են: — Արեւմտեան Ափլիանիայի շատ ազգերը՝ Ասիայի ու Ափրիկէի քիչ մը կրթեալ ազգերուն պէս ոսկիէ ու արծըթէ զարդեր

շինելու բերում մը ունին: Սուսմադրա կղզւոյն մէջ Մանատոյի, Աշէմի, Մէնանկապուի, Ռէճանկի ու Բանտանկի բնակիչները մէկալ ցեղերուն ամենէն քաջ են. Տայ պղտիկ կղզւոյն բնակիչներն ալ աս արուեստին մէջ վարժ են, ու մօտաւոր կղզիներուն սսկեգործներն են: Պոռնէոյի ու Եաւլայի Մալայեանները նաեւ աղամանդ եւ ուրիշ ազնիւ քարեր յղկելու ու փայլեցընելու արուեստէն կը հասկընան, ու Եաւլայիները միանգամայն ճարտար փայտ գործող ալ ըլլալով, Հնդկաց արքիպեղապոսին մէջ բնակող Եւրոպացւոց կահ կարասիքը իրենք կը շինեն: Նաեւ աղէկ քանդակող ու փորող են, ինչպէս իրենց զէնքերուն վրայի քանդակներէն կ'երեւայ:

Ովկիանիայի առուտուրին բուն տեղը Հնդկաց արքիպեղապոսն է, հին ատենները հոս տեղաց բնակիչները առուտուրի ձեռք զարկած էին, ու մինչեւ հիմա ալ ասոր կը զբաղին: Բուն Աւստրալիա կամ Նոր Հոլանտա ըսուած մեծ կղզւոյն տեղացոց առուտուրը ոչինչ է: Բայց Բազմակղզիներու մէջ կարողինացիք ու Սանտուիչիք աւելի առուտուրի զբաղած են. Սանտուիչի կղզիներուն վրայ Հանանուրուի նաւահանգիստը՝ Ասիայի ու Ամերիկայի մէջ երթեւեկութիւն ունեցող նաւերուն ժողովարանն եղած է, ու նաեւ տեղացիներէն ճանգան (չինարէն, սանթալ ու ճը) կ'առնուն Չինուսաչին կը տանին: Օտար ազգերէն Չինուսաչինցիք աս տեղաց հետ ամենէն աւելի առուտուր կ'ընեն, իրենց առուտուրը Անգղիացւոց առուտուրէն ալ աւելի է: Հնդկաց արքիպեղապոսին մէջ Չինուսաչինցիք ան են, ինչ որ Հրեաները Եւրոպայի մէջ են, բայց անոնցմէ աւելի ճարպիկ ու ճարտար են, մեծ ու փոքր առուտուրէն զատ, նաեւ պարտիզպանութիւն, դերձակութիւն ու նկարչութիւն ալ կ'ընեն, կառքեր, հողէ ամաններ ալ կը շինեն, եւ ուրիշ այլեւայլ գործքերու մէջ կը մանեն, որոնցմէ երեւելին է հանքերը բանեցընելն ու դրամ հողալը: Ովկիանիայի


բոլոր ազգերուն կղզիական դիրք ունենալուն պատճառաւ՝ տեղացիք աներկիւղ ու յանդուզն նաւաւարներ եղած են, ու նաւագործութիւնը իրենց մէջ յառաջացած է: Ասոր մէջ Մալայեան ցեղինները անուանի են, մանաւանդ Սումատրա կղզւոյն Աշէմ ու Իրաք քաղքրներուն բնակիչները, Չէլէպեան կղզւոյն ու Լիւսոնի բնակիչները, Մինտանեոցիները, Սուլուի ու Պալիի կղզեցիները: Ասոնք իրենց նաւերը թնդանօթներով զինաւորել ալ գիտեն, ու նաւերնին թեթեւ ու արագաշարժ է: Իսկ Ովկիանիայի ան մասին մէջ, ուր որ բոլոր կրթութիւնը Եւրոպացիներէն մտաւ, Գակալէս ու Լիւսոնի կամ Մանիլայի ուրիշ ազգերը բոլոր Մալայայի մէջ աղէկ թնդանօթաձիգ ու ղեկավար են. նոյնպէս Նոր Զելանտիայի ու Սանտուիչեան կղզիներու բնակիչները, որոնք Քանդոնի ու Տիւսիսային արեւմտեան Ամերիկայի մէջ առուտուրի համար, կամ մեծ Ովկիանոսի մէջ ձկնորսութեան պատճառաւ բանող Անգղիացի նաւերուն մէջ նաւաւարութիւն կ'ընեն: Իայց առ քաջ նաւորդ ազգերուն մէջ շատ ալ գողեր ու ելուզակներ կը գանուին, որ ծովու վրայ կը պտրտին. անոր համար ալ Անգղիացիք ու Հոլանտացիք փոփոխակի նաւերով միշտ ծովուն վրայ կը գիտեն, ու ձեռքերնէն եկածը կ'ընեն ձամբաներու ապահովութեան համար:

Ովկիանիայէն դուրս խրկուած գլխաւոր ապրանքներն են մշկընկոյղ, մեխակ, դարիճենիկ, պղպեղ, բրինձ, անագ, ոսկի, ադամանդ, մարգարիտ, փղոսկր, թռչնոյ բոյն, ճանդան, բարակ փայտի տեսակներ, լեղակ, մոմ, շաքար, բամբակ, ծխախոտ, քափուր, բեւեկնի, մսխրագոյն սաթ, հանքային ածուխ, գարի, քթան, բարակ բուրդ, եղ, կէտի եղ, կրիայի խեցի, դրախտահաւ, հնդիկ ընկոյղ, կոճապղպեղ, ուղղալից արմաւենի (sagou), եղէգ, հնդկեղէգ, հացապտղի: Իսկ վաճառաբերութեան վերաբերած ապրանքներն են ափսոն, իւղ,

աղ, հաստ կտաւ, մետաքսէ ու նորաձեւութեան ապ-
 քանքներ, յախճապակի, պղինձ, սապոն, զինի, զօ-
 րաւոր օղի, հրազէնք, կտրոցներ, վառօդ ու եւրո-
 պացւոց դործատուներուն ամէն տեսակ ապրանքնե-
 րը: Առուտուրի կողմանէ երեւելի են աս քաղաքները
 Պաղաւիա, Սամարանկ, Սուրապայա, Ռիոյ, Ամպոյ-
 ինա, Քուբանկ ու Մաքասսար, որոնք Հոլանտայի՝ Ով-
 կիանիային մէջն են. իսկ Սպանիայի մասին մէջ՝ Մանիլ-
 լա. անգղիական Ովկիանիայի մէջ՝ Սիտնէյ, Հոպարդ-
 դաւն ու Սուանրիվէր, անկախ Մալայայի մէջ Պոռնէոյ,
 Աշէմ ու Պէլան: Բազմակողմներու մէջ կղզիներու
 ծոց ու Հուքիանկա՝ նոր Չէլանտիայի մէջ. Մադալաէ
 ու Բաբէյդի Գաիդիի մէջ. Հանարուրու Սանտուի-
 շեան կղզիներու վրայ. Ֆիճի ու Մէնտանա կղզիները
 իրենց ճանգան փայտին համար, Բոմոդու կղզին մար-
 գարտին համար:

Իսկոր Ովկիանիան կը բաժնուի Ա. Արեւմտեան
 Ովկիանիա կամ Մալայա, որուն մէջն են Սումա-
 ղաա կղզին, Եավա կղզին, Սումայավա-Գիմորի ար-
 քիպեղադոսը (Սումայավա քաղքով), Մոլուկեան
 արքիպեղադոսը, Չէլէպեան կղզիները, Պոռնէոյի
 կղզիները, Փիլիպպեան արքիպեղադոսը: Բ. Միջին
 Ովկիանիա կամ Աւստրալիա, որուն մէջն են նոր
 Հոլանտա կամ Աւստրալիա ըսուած մեծ կղզին, նոր
 Գուինէա կամ Բաբուաններու կղզիները, նոր Բրիտա-
 նիայի արքիպեղադոսը, Սողոմոնի արքիպեղադոսը,
 Ս. Խաչի արքիպեղադոսը, Ս. Հոգիի արքիպեղադոսը,
 նոր Գալէտոնիայի կղզիները, նորՓոքի կղզիները,
 նոր Չէլանգիայի արքիպեղադոսը: Գ. Արեւելեան
 Ովկիանիա կամ Բազմակողղէք, որուն կը վերաբերին
 Մակէլլանի արքիպեղադոսը, Մարիանեան, Բալայեան,
 Կարուեան, Լորա Մուլկրավի արքիպեղադոսները, Ֆի-
 ճիի կղզիները, Գոնկայի արքիպեղադոսը, Նաւորդաց
 կղզիները, Քէրմատէքի, Քուքի, Ընկերութեան ար-
 քիպեղադոսները, Բոմոդու կամ տափարակ կղզիները,


Մէնտանայի արքիպեղագոսը, Սանտուիչի արքիպեղագոսը, Սփիռ կղզիները: Աս տեղերէն կան որ Եւրոպացի ազգաց այս ինքն Հոլանտացւոց, Բորդուկալցոց, Սպանիացւոց ու Անգղիացւոց իշխանութեան տակ են, որոնք Եւրոպական Ստացուածք Ռվկիանիայի կրնանք անուանել: Հոլանտայի տակ է Եւպա կղզին Մատուրա կղզւով, Սումադրայի ու Չէլէպեան կղզիներուն մեծ մասը, ու Պոռնէոյի մէկ մասը, Սումպավա-Գիմորի արքիպեղագոսին մէկ մասը, գրեթէ բոլոր Մուլլաքները, Բաբուսիայի մէկ մասը: Սպանիայի տակն են բուն Փիլիպպեան արքիպեղագոսին մեծ մասը, Մինտանեոյին մեծ մասը, Բարանեոնայի մեծ մասը, որոնք Փիլիպպեան արքիպեղագոսին մէջ կը համրուին, Բազմակղզիներու մէջ Մարիանեան արքիպեղագոսը որոնց ամենուն մայրաքաղաք է Մանիլա Լիսոնի վրայ: Անգղիայի տակն են Նոր Հոլանտայի կամ Աւստրալիայի արեւելեան կէս մասը, բայց բուն նայելու ըլլանք, բոլոր Նոր Հոլանտան Անգղիացւոց տէրութեան կը վերաբերի. անկէ ետքը Գասմանիա, Նոր-Ֆոքի կղզիները ու Նոր Չելանդիա: Սիտնէյ, նոր հարաւային Ուելսի ու Հոպարդիան Գասմանիայի վրայ գլխաւոր քաղաքներն են: Բորդուկալի իշխանութեանը կը վերաբերին Գիմոր կղզւոյն արեւելեան մասը, Սապրաոյ ու Սոլոր պղտիկ կղզիները: Գիմորի հիւսիսային եզերքը Տիլէ քաղաքը աս ստացուածքներուն մայրաքաղաքն է:



Յ Ա Ն Կ

Պատրաստութիւն	1
ԳԼՈՒԽ Ա. Առուտուրի միջոցներուն կամ միջնորդներուն վրայ	7
Հատուած Ա. Ապրանքներու վրայ	8
Հատուած Բ. Ստակի վրայ	15
ԴԻՈՒԽ Բ. Ապրանքներուն արժէքը որոշելու վրայ	28
ԳԼՈՒԽ Գ. Առուտուրի ուսման վրայ	45
Հատուած Ա. Առուտուրի վրայ ընդհանրապէս ու առանձինն անոր ճիւղերուն վրայ	45
Ա. Ապրանքներու առուտուր	46
Բ. Փոխանակագրի առուտուր	50
Գ. Յանձնարարութեան առուտուրի կամ ընդհանրապէս յանձնարարութեան գործքերու վրայ	68
Դ. Առուտուրի անյատուկ տեսակներ	76
Ե. Առուտուրի մէջ պահելու պայմանները	83
Հատուած Բ. Գներու վրայ	86
Հատուած Գ. Ծախելու կամ վաճառելու վրայ	96
Հատուած Դ. Վճարելու վրայ	111
Հատուած Ե. Ուղեւորելու վրայ	118
ԳԼՈՒԽ Դ. Վաճառականութեան պատմութիւնը	129
Հատուած Ա. Վաճառականութեան հին պատմութիւնը	134
Հատուած Բ. Վաճառականութեան միջին պատմութիւնը	147
Հատուած Գ. Վաճառականութեան նոր պատմութիւնը	157
Հատուած Դ. Ազգային վաճառականութեան պատմութիւնը	176
ԳԼՈՒԽ Ե. Հաշուեգիտութեան ու գլխաւորաբար թրջութակցութեան վրայ	190
Հատուած Ա. Թղթակցութեան վրայ	192
Հատուած Բ. Առեւտրական ուրիշ գրուածներու վրայ	214
ԳԼՈՒԽ Զ. Դիտողութեան կամ հնարագիտութեան վրայ	227
Հատուած Ա. Առուտուրի հաւանականութեանց վրայ ընդհանրապէս	229
Հատուած Բ. Ապրանքներու առուտուրին մէջ եղած հաւանականութեանց կամ ապրանքներու դիտողութեան վրայ	235
Հատուած Գ. Գործատուներու գործքերուն հաւանականութեանցը վրայ	253
Հատուած Դ. Փոխանակագրերու գներուն հաւանականութեանցը վրայ	255
Հատուած Ե. Տէրութեան թղթերով առուտուրին մէջ եղած հաւանականութեանցը վրայ	260
Հատուած Զ. Բաժանորդութեան թղթերուն բարձրանալուն ու իյնալուն հաւանականութեանցը վրայ	261

	Հատուած Է . Ապահովեցրելու գիտողութեանց վրայ	262
ԳԼՈՒԹ	Տերութեան առուտուրը յառաջացրնելու վրայ	264
	Հատուած Ա . Ապրանքներու առուտուրը յառաջացրնելու միջոցներու ու պատրաստութիւններու վրայ	265
	Ա . Տոնաժամանակներ	266
	Բ . Վաճառականք , Վաճառակալք , Բաժանեղի	268
	Գ . Հասարակաց կշռորդներ	269
	Դ . Չափին ու կշռոյն զգուշութիւն	270
	Ե . Ապրանքներու միջնավաճառներ կամ միջնորդներ	270
	Զ . Քննարան	272
	Է . Հասարակաց Ժաճուրդներ	273
	Ը . Նամակատուն կամ թղթատարութեան տեղեր	273
	Թ . Ակմբանոցներ (պորտ)	276
	Հատուած Բ . Ապրանքները յանձնելու կարգադրութեանց վրայ	276
	Ա . Ապրանքը տանողներ	276
	Բ . Ճամբաներ ու զանանք հոգալու պաշտօնատեղիներ	280
	Գ . Նաւագնացութիւնը դիւրինցրնելու համար կառավարութեան ընելու հոգը	281
	Դ . Հոգեկառքներ ու շոգենաւներ	285
	Հատուած Գ . Ստակի շրջանը յառաջացրնելու միջոցներուն վրայ	287
	Ա . Լումպագրի դրամասեղան	297
	Բ . Փոխանցութեան դրամասեղան	302
	Գ . Փոխատու դրամասեղան	309
	Հատուած Դ . Կառավարութեան գրութեղիքներուն կամ տերութեանց հետ եղած առուտուրը յառաջացրնելու համար բանեցրնելու միջոցները	314
	Հատուած Ե . Կառավարութեան առուտուրը հաստատուն պահելու համար բանեցուցած միջոցները	320
	Ա . Առուտուր ընողներու ու արուեստագէտներու վրայ եղած զգուշութիւն	322
	Բ . Մարտի կարգադրութեանց վրայ	325
	Գ . Առուտուրի իրաւունքը հաստատուն բանելու վրայ	331
	Դ . Պատշաճ դատաստան հաստատելու վրայ	331
ԳԼՈՒԹ Ը .	Վաճառականութեան աշխարհագրութիւն	333
	Հատուած Ա . Ասիա	333
	Հատուած Բ . Եւրոպա	359
	Հատուած Գ . Աֆրիկէ	399
	Հատուած Դ . Ամերիկա	406
	Հատուած Ե . Ովկիանիա կամ Աւստրալիա	416



Գ. ՀԱՇԻ ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ի սկզբանէ Յունուարի 1847 մինչև յ30 Յունիսի 1848:

Թ. թ. զ. հաս.	Ընտանիք Ազնուական եւ Ազգասէր Ընկերացի	Աւարք յորս գրեցանն	Քամին	Գլուխ
				գրամ.
				Արժ. ֆ.
5	Արեւեան Պարոն Գրիգոր . . .	10 Ապրիլ 1843	2	200
7	Ազարեան Պարոն Յովհաննէս . .	1 Դեկտեմբ. 1843	3	300
25	Աշխարեան Միքայէլ Աղա . . .	2 Նոյեմբ. 1845	1	100
21	Ալաշիքեան Արրահամ Ամիրայ . .	11 Ապրիլ 1845	1	100
22	Ալաշիքեան Ընտան Պէյ . . .	11 Ապրիլ 1845	1	100
29	Ալաշիքեան Գրիգոր եւ Յովհաննէս Պէյ	20 Յունիս 1847	1	100
3	Այրօեան Պարոն Արրահամ . . .	10 Ապրիլ 1843	2	200
4	Այրօեան Պարոն Ստեփան . . .	10 Ապրիլ 1843	4	400
20	Բազիլ Պարոն Մկրտիչ	1 Յունուար 1845	1	100
27	Գրիգորեան Վիշէն Աղա	1 Փետրուար 1846	1	100
16	Եղիսարեթուպօլսոյ յարգոյ Հասարակութիւն	8 Յուլիս 1844	1	100
2	Եուսուֆեան Պետրոս Ամիրայ . .	10 Ապրիլ 1843	5	500
23	Չեմպէրեան Պետրոս Աղա	4 Յունիս 1845	1	100
24	Թրնկերեան Յովհաննէս Աղա . . .	24 Յուլիս 1845	1	100
19	Լազարէի Պարոն Խաչատուրներգործ . խորհրդական եւ սենեկասէս Կոյսեր Ռուսաց . .	30 Սեպտեմբ. 1844	3	300
12	Կարապետեան Պարոն Յովհաննէս	14 Դեկտեմբ. 1843	1	100
30	Համազգեսց յարգոյ Ընկերութիւն Ի Կոստանդնուպօլիս . . .	4 Յունուար 1848	1	100
8	Համսոն Պարոն Վիշէն	4 Դեկտեմբ. 1843	2	200
9	Ճէֆահիրեան Պարոն Գրիգոր	10 Դեկտեմբ. 1843	2	200
11	Մանասեան Պարոն Բուզանդ . . .	11 Դեկտեմբ. 1843	1	100
15	Մ. Վ.	18 Ապրիլ 1844	1	100
13	Նիկողայսեան Պարոն Ղազարոս	20 Դեկտեմբ. 1843	1	100
14	Շանչեան Պարոն Նիկողայոս . . .	8 Յուլիս 1845	1	100
1	Ռաֆայէլ Ղարաձեան Պարոն Ազգասէր Ասպետ	4 Մարտ 1843	5	500
18	Սամուել յարու յարգոյ Հասարակութիւն	31 Յուլիս 1844	1	100
6	Սարգսեան Յովհոր Աղա	1 Դեկտեմբ. 1843	2	200
10	Սարգսեան Պարոն Ռատոլֆ	11 Դեկտեմբ. 1843	1	100
28	Տատեան Յովհաննէս Ամիրայ . . .	5 Մայիս 1847	2	200
26	Տէփիշեան Պարոն Աղա	11 Յունուար 1846	1	100
17	Տիգրեան Յովհոր Չէլէպի	27 Յուլիս 1844	2	200

Ե Լ Ք

* Յերկրորդ հաշուէ մնայ
 Վասն կազմից Բ. մատենին վասն ընկերաց .
 " Թղթարերի եւ սյլոց ինչ մանր ծախուց
 " Գրողմելոյ Գիտութեան վաճառականու
 թեան 18 թերթ, 500 օրինակ

Արժաթ Ֆիոր .

64	3		
1	36		
2	32		
372	—	440	11

Մ Ո Ւ Տ Ք

Հաճ 0/04 վերագոյն գրեալ 5200 դրամոյ դրամոց
 մինչեւ ցայսօր
 Ի վաճառելոյ 23 օրինակաց Ա. մատենի
 Ի " 43 " Բ. "
 Պակասի, զոր անցուցանեմք ի Գ. հաշիւն

303	19		
13	48		
30	6		
92	58	440	11

[Faint, illegible text from the reverse side of the page, likely bleed-through from another document.]

